ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

1912–1913 ԹԹ. ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3
Ս 504

Սիմոնյան Հրաչիկ
Ս 504 1912–1913 թթ. ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ / Հ. Սիմոնյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 502 էջ + 8 էջ ներդիր:

Գրքում ներկայացված է Բալկանյան երկու պատերազմների նկարագրությունը և հայերի մասնակցությունը այդ իրադարձություններին՝ գերազանցապես ժամանակի հայկական մամուլի հրապարակումների, հայերեն և ռուսերեն գրականության, բուլգարերեն առանձին հետազոտությունների, Հայաստանի, Ռուսաստանի և Բուլգարիայի արխիվներում պահպանվող փաստաթղթերի ու նյութերի հիման վրա:

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-1910-0

© Սիմոնյան Հր., 2014
© ԵՊՀ հրատարակչություն, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդել են 1912–1913 թթ. Բալկանյան երկու պատերազմները:

Բալկանյան առաջին պատերազմը ծագեց մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Բալկանյան թերակղզու չորս երկրների՝ Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չերնոգորիայի միջև: Հարյուրհազարավոր մարդկային կյանքեր խլած այդ արյունահեղ պատերազմի արդյունքում ազատագրվեցին օսմանյան դարավոր բռնակալության տակ հեծող Մակեդոնիան և նշված երկրների պատմական տարածքները:

Բայց բալկանյան հաղթական երկրների իշխող վերնախավերը չկարողացան դիմակայել թուրքական լծից ազատագրված տարածքներից հնարավորինս մեծ բաժին ստանալու գայթակղությանը: Բալկանյան առաջին պատերազմում ամենաչատ մարդկային և նյութական կորուստներ կրած Բուլղարիայի կառավարողների անհեռատես քաղաքականության պատճառով երկիրը նետվեց նոր պատերազմի մեջ, այս անգամ երեկվա իր դաշնակիցների՝ Հունաստանի, Սերբիայի ու Չերնոգորիայի դեմ և կրեց ծանրագույն պարտություն՝ զրկվելով համարյա բոլոր ձեռքբերումներից:

Բալկանյան առաջին պատերազմին իրենց կամքից անկախ մասնակցություն ունեցան նաև Օսմանյան կայսրության հայերը: Հազարավոր հայ երիտասարդներ զորակոչվեցին զինվորական ծառայության և թուրքական զորքերի կազմում նետվեցին կռվի դաշտ: Հակառակ կողմից՝ բալկանյան դաշնակիցների զորքերի շարքերում նույնպես մարտնչում էին բազմաթիվ հայորդիներ: Բուլղարական բանակի կազմում իր հերոսական գործողություններով հատկապես աչքի էր ընկել Հայկական կամավորական վաշտը:

Գտնվելով միմյանց դեմ խոյացող թշնամական բանակների

չարքերում՝ հայ զինվորները կրում էին անհուն տառապանքներ, իրենց հայրենիքից չատ հեռու տալիս հազարավոր զոհեր:

Շուրջ տասը ամիս (1912 թ. սեպտեմբերի վերջից մինչև 1913 թ. օգոստոս) տևած Բալկանյան պատերազմների մասին առկա է բազմալեզու գրականություն: Հայերեն տպագրվել է երկու աշխատություն՝ Արամ Անտոնյանի «Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն Պալքանեան պատերազմին» (Կ. Պոլիս, 1940 թ.) և Բալկանյան առաջին պատերազմի մասնակից Արմեն Սյունու «Հայկական վաչտը Անդրանիկի առաջնորդութեամբ 1912–1913 թթ. Բալկանեան պատերազմում» (Բաքու, 1914 թ.) գրքերը: Բալկանյան պատերազմներին իրենց աշխատություններում անդրադարձել են Ծատուր Աղայանը, Գևորգ Ղարիբջանյանը, անվանի պատմաբաններ Մակիչ Արզումանյանը, Համբարձում Կարապետյանը, Գալուստ Գալոյանը: Թեմայի մասին ուսումնասիրություն ունի պատմաբան Զոհրապ Ղասաբյանը:

Սույն աշխատության հեղինակն իր առջև խնդիր էր դրել տալ Բալկանյան երկու պատերազմների նկարագրությունը՝ հենվելով զերազանցապես ժամանակի հայկական, հատկապես պոլսահայ մամուլի հրապարակումների վրա: Վերջինիս էջերում օր օրի լայնորեն լուսաբանվել են պատերազմական իրադարձությունները բալկանյան ռազմաճակատներում և դրանց անդրադարձը թիկունքում: Պոլսահայ մամուլի հրապարակումներն անգնահատելի ճշգրիտ աղբյուրներ են, մանավանդ եթե նկատի ունենանք, որ դրա առանձին օրգաններ ունեցել են սեփական թղթակիցներ պատերազմական գործողությունների վայրերում:

Գրքում օգտագործված են նաև հրապարակի վրա եղած խնդրո առարկայի վերաբերյալ հայերեն և ռուսերեն գրականություն, բուլղարերեն առանձին հետազոտություններ, ռուսական մամուլում տեղ գտած հրապարակումներ, Հայաստանի, Ռուսաստանի և Բուլղարիայի արխիվներում պահպանվող փաստաթղթեր ու նյութեր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՑԸ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավումից չատ չանցած՝ խաչնարած ռամիկ Թուրքերը իրենց հայացքն ուղղեցին հեռուները: Հրապարակ էր իջել ռազմականապես ուժեղ պետություն, որ իր հաղթական բանակների ուժգին գրոհներով մխրճվեց Եվրոպայի մարմնի մեջ: 1454–1459 թթ. Թուրքիան վերջնականապես նվաճեց ամբողջ Սերբիան, 1456-ին Մոլդավիան իրեն հարկատու ճանաչեց Թուրքաց սուլթանին, 1460 թ. նրանք նվաճեցին ամբողջ Հունաստանը, երեք տարի հետո (1463 թ.) ընկճեցին Բոսնիայի դիմադրությունը: Հասնելով Վիեննայի պարիսպներին՝ օսմանյան բանակները ռազմակալեցին Դանուբի գետափունքը, ապա Ադրիատիկ ծովի ափերից առաջացան ցամաքի խորքերը:

1471 թվականին Մեհմեդ 2-րդը նվաճեց Փոքր Ասիայում դեռևս անկախությունը պահպանած Կարամանի օղուզաթուրքմենական բեյլիկությունը, 1475 թ. Ղրիմի խանն իրեն ճանաչեց Թուրքական սուլթանի վասալ, մեկ տարի հետո (1476 թ.) Վալախիան ամբողջությամբ միացվեց Թուրքիային: 1516 թ. Թուրքերը գրավեցին Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը, 1517 թ. նրանք մտան Եգիպտոս և մամլուկների ձեռքին խաղալիք դարձած վերջին խալիֆից վերցրին Խըրխա-ի չերիֆը (նահատակի վերարկուն), այն գցեցին Թուրքաց սուլթանի ուսին, և նա հռչակվեց բոլոր մուսուլմանների խալիֆ (կրոնապետ): 1526 թ. Մոխաջի մոտ Թուրքերը ջախջախեցին հունգարական զորքը և հպատա-

կեցրին Հունգարիան: Երեք տարի հետո՝ 1529 թ., նրանք հասան Վիեննա և պաշարեցին Գերմանա-հռոմեական կայսրության մայրաքաղաքը: 1539 թ. Արևմտյան Հայաստանի տարածքի վրա փոփոխակի հաջողություններով չարունակական պատերազմներ սկսեցին Պարսկաստանի դեմ, որոնց հետևանքով Վանը հարակից հողերով մնաց Թուրքերին: 1574 թ. ենիչերիները մտան Թունիս և քիչ ուշ Թուրքաց խալիֆ-սուլթանի հպատակության տակ առան Ալժիրն ու Մարոկկոն: 1672 թ. Լեհաստանը Պոդոլիան և Աջափնյա Ուկրաինան հարկադրված զիջեց Թուրքերին:

Օսմանների նվաճումների անօրինակ ծավալման պատճառները բազմազան էին, որոնցից հատկապես առանձնանում էին երկուսը. 1) Թուրք էթնոսը երիտասարդ էր, Թարմ ու եռանդուն, 2) նվաճվող ազգերի ներքին երկպառակտյալ ու անմիաբան վիճակը:

Ուր որ օսմանները ոտք էին դնում, այնտեղ հաստատում էին իրենց տեսակին հատուկ «օրենքները»՝ ծայրահեղ բռնակալություն, գազանային խստություն ու անգթություն, լիակատար արհամարհանք ու ատելություն պարտվածների, հատկապես քրիստոնյաների նկատմամբ:

Բայց լայնարձակ ու այլազան, բազմակրոն ու բոլորովին տարբեր մշակույթների պատկանող բազմազգ Օսմանյան կայսրությունում, որը մեծ համբավ էր ձեռք բերել աշխարհում ու հասել էր զինական ուժի գագաթնակետին, արդեն այդ ժամանակ նկատվում էին թուլացման, քայքայման և դանդաղորեն մեռնելու սաղմեր: Այլ խոսքով, Թուրքերի ներքին ուժերն ու միջոցները չէին բավարարում նվաճած լայնածավալ տարածքները հսկելու ու կառավարելու:

Իր հզորության գագաթին հասած Օսմանյան կայսրությունը որքան ուժեղ էր ռազմական տեսակետից, նույնչափ և ավելի տկար էր քաղաքակրթապես: Աշխարհակալական նկրտումները մի կողմից, նվաճած երկրները պահելու մտահոգությունները մյուս կողմից խոչընդոտում էին ոչ միայն յուրացնելու անհամեմատ բարձր եվրոպական քաղաքակրթության տարրերը, այլև չենացնելու և բարգավաճ դարձնելու իր գաղութներն ու բուն երկիրը: Եվ քանի որ կայսրության ողջ ընդարձակ տարածքը

հզոր պահելու համար բավարար չէր միայն բիրտ ուժի կիրառումը, ուստի անհրաժեշտ էր յուրացնել նաև համաշխարհային քաղաքակրթական արժեքները: Սակայն վերջինս լիովին անհարիր էր Թուրքերին, ուստի օսմանյան պետության զինական ուժը հետզհետե թուլացավ ու տկարացավ, հիեարխիկ բուրգը քայքայվեց, և աստիճանաբար չքացան այն պտուղները, որ իրենց սրերով քաղել էին հաղթապանծ փաղիչահները:

Պոդոլիան և Ուկրաինան գրավելուց 11 տարի հետո՝ 1683 թ., երբ Թուրքերը կրկին պաշարել էին Վիեննան, և Արևմուտքում հասունացել էր համատեղ ուժերով Թուրքերին վռնդելու միտքը, լեհերի Յան Սոբեսկի թագավորի զորքը Խոտինի ճակատամարտում ջախջախեց Թուրքական բանակը: Դա Թուրքերի առաջին խոշոր պարտությունն էր Արևմուտքում: Դրանից անմիջապես հետո «Սրբազան լիգան» (Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը և Ռուսաստանը) մեկ և կես տասնամյակ (1684–1699) կռիվներ մղեց Թուրքերի դեմ, որոնց շնորհիվ Հունգարիան ազատվեց Թրքական լծից: Սա սկիզբն էր: Օսմանյան ընդարձակ կայսրությունը, որի սահմանները Վիեննայի դարպասներից հասնում էին մինչև Պարսից ծոց, Ատլանտյան օվկիանոսից (Մարոկկո-Ալժիրից) մինչև Պոդոլիա, Ղրիմ, Թաման ու Կուբան, սկսեց երերալ և անկում ապրել:

Եթե տարածքային առումով Օսմանյան կայսրությունը նշանակալից կորուստներ ունեցավ, ապա դրան զուգահեռ զուտ Թուրքական տարրը ուժեղացավ և բավական շահեց, թեև արաբների և եվրոպական ժողովուրդների հետ խառնվելու հետևանքով նա կորցրեց իր նախկին մաքուր մոնղոլական տիպը:

19-րդ դարում աննախընթաց ուժով ծավալվեց ազգային-ազատագրական պայքարը օսմանյան լծից ազատագրվելու համար:

1804–1805 թթ. Թուրք զավթիչների դեմ ապստամբեցին սերբերը, 1821 թ.՝ Հունաստանը, որը 1830 թ. մոտերքը ձեռք բերեց անկախություն: Նույն թվականին Ֆրանսիան գրավեց Ալժիրը: 1861 թ. Օսմանյան կայսրությունը ճանաչեց Ռումինիայի պետությունը, 1862 թ. նորից զենք վերցրին սերբերը, և նրանց ճնշման շնորհիվ 1867 թ. Թուրքական վերջին կայազորները հե-

ռացան Սերբիայից: 1875 թ. ապստամբություն բռնկվեց Բոսնիայում և Հերցեգովինայում, իսկ 1876 թ.՝ Բուլղարիայում, որը Թուրքական ստրկացումից ազատագրվեց 1878 թ.: Ձևական դարձավ Թուրքիայի տիրապետությունը Միջերկրական ծովի աֆրիկյան ափերի երկրների վրա:

Ավելի ուշ եվրոպական երկրները սկսում են ուղղակի խլխլել սուլթանի տիրույթները: 1881 թ. Ֆրանսիան գրավեց Թունիսը: 1882 թ. Անգլիան փաստորեն զավթեց Եգիպտոսը, իսկ 1890 թ.՝ Սուդանը: Այդ նույն ժամանակաշրջանում Թուրքիան Ասիայում ունեցավ մեծ կորուստներ. 1877–1878 թթ. պատերազմից հետո նա ստիպված եղավ ռուսական կայսրությանը հանձնել երկու նահանգ՝ Կարս ու Բաթում քաղաքներով, իսկ Անգլիային զիջեց Կիպրոս կղզու կառավարումը: Կրետեն անցավ հույներին, մեծ ինքնավարություն ձեռք բերեցին արաբական թերակղզու շեյխերը: 1911–1912 թթ. իտալացիները գրավեցին Կիրենեյիկան (Ղարբ Թարապուլուսը–Տրիպոլիսը) կամ Տրիպոլիտիան*:

Այս հաջողությունները ձեռք էին բերվում Ռուսաստանի ուղղակի աջակցությամբ, որը շահագրգռված էր Բալկաններում ամրապնդելու իր դիրքերը: Եվ թեև ցարական Ռուսաստանը այդ դեպքում նախ և առաջ հետապնդում էր իր շահադիտական նպատակները, բայց ռուսական քաղաքականությունը նպաստում էր Թուրք կեղեքիչներին Բալկաններից դուրս մղելուն, այնտեղի ժողովուրդների ազատագրմանը և դրանով իսկ օբյեկտիվորեն խաղում էր խիստ դրական դեր:

Տարեցտարի, Օսմանյան կայսրության սահմանների կրճատմանը զուգընթաց, Թուրքերը աստիճանաբար նահանջեցին և սկսեցին կուտակվել գլխավորապես Փոքր Ասիայի սահմաններում և Կոստանդնուպոլսի շրջանում:

Թուրքիայից Եվրոպային անցած համարյա բոլոր տարածքների բնակչությունը հիմնականում քրիստոնյա էր, իսկ Աֆրիկայինը մեծ մասամբ մուսուլման արաբներ էին, այլ ոչ թե օսմանյան կայսրության հիմքը կազմող Թուրքեր:

Իրենց զավթողական արշավանքների ժամանակ Թուրքերն

---

* Tripolitia (իտալ.) – պատմական ռեգիոն Արևմտյան Լիբիայում:

օսմանյան բռնապետության իշխանությունն ընդարձակել էին աշխարհագրական բոլոր ուղղություններով և զավթած տարածքներում ամենուրեք թողնում էին թուրք ազգի համեմատաբար մի փոքրաքանակ շերտ, որն ապրում էր թեև նվաճված, սակայն առավել քաղաքակիրթ ժողովուրդների հետ կողք կողքի, ուստի, անկասկած, մասամբ ենթարկվում էր վերջիններիս ազդեցությանը:

Օսմանյան կայսրության հոգեվարքային վիճակը երկարաձգվում էր եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի մրցակցության պատճառով. նրանք ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնության գալ օսմանյան կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, «օտոմանյան ժառանգության» բաժանման հարցում: Ցարական Ռուսաստանը նկրտումներ ու հավակնություններ ուներ Ստամբուլի ու նեղուցների նկատմամբ, բայց Անգլիան ու Ֆրանսիան երկյուղ էին կրում նրա ուժեղացումից. ռուսական նավատորմը անարգել ելք կունենար դեպի Միջերկրական ծով: Ուստի երբ հարմար առիթ էր ներկայանում, Անգլիան ու Ֆրանսիան օսմանյան կարկանդակից անմիջապես վերցնում էին ծանրակշիռ կտորը:*

Չնայած այդ ամենին՝ 19-րդ դարի երկրորդ կեսին «օտոմանյան ժառանգության» մի հսկա զանգված՝ Բալկանյան թերակղզու մեծ մասը, դեռ սպասում էր թուրքական բռնակալությունից իր վերջնական ազատագրմանը:

«Բրիտանական քաղաքականություն» հոդվածում Կ. Մարքսը գրել է. «Մենք պետք է համաձայնենք, որ Եվրոպայում թուրքերի մնալը լուրջ խոչընդոտ է այն բոլոր ռեսուրսների զարգացման համար, որոնց տերը պետք է լինի Թրակիական իլիրիական թերակղզին»[1]:

---

* *«Օսման» բառը ֆրանսիացիները տառադարձում էին «օտոման», որը մի ժամանակ ընդունված էր նաև ռուսաց լեզվում՝ «Օտոմանների պետություն», «Օտոմանյան կայսրություն»: Այդ արմատը պահպանվել է նաև «օտոմանկա» բառի մեջ. այդպես էր անվանվում թուրքական ցածր դիվանը՝ բարձերով, բայց առանց թիկնակի:*

[1] ***Կ. Մարքս, Ֆ. Էնգելս,*** *Соч., т. 9, стр. 5, 6.*

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին Եվրոպան կանգնած էր բախտորոշ իրադարձությունների առջև: Մայրցամաքի տերությունները բաժանված էին ռազմաքաղաքական երկու խմբավորումների: Դրանցից մեկը Եռյակ համաձայնությունն էր (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան), մյուսը՝ Եռյակ զինակցությունը (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա), որոնք զինավառ կանգնած էին դեմ հանդիման:

Եռյակ զինակցությունն իր աշխարհագրական դիրքով եվրոպական մայրցամաքի դեմ չարունակական մի պատվար էր, որը Եռյակ համաձայնության երկրները բաժանում էր միմյանցից, այսինքն՝ Անգլիան ու Ֆրանսիան՝ Ռուսաստանից:

Նշված ժամանակաշրջանում եվրոպական քաղաքականության առանցքում ֆրանս-գերմանական, անգլո-գերմանական և ռուս-գերմանական հակամարտություններն էին, որոնցից խորն ու անդիջում էր հատկապես ֆրանս-գերմանականը: Անցյալ դարում Ֆրանսիային պատկանող Էլզաս-Լոթարինգիայի ռազմակալումը Գերմանիայի կողմից ծայրագույն թշնամական հարաբերություններ էին ստեղծել երկու երկրների միջև: Գերմանիայի և Անգլիայի հակամարտության գլխավոր պատճառը հետևանք էր ոչ թե երկու երկրների միջև ռազմական հնարավոր ընդհարման, այլ տնտեսական մրցակցության: Արագորեն զարգացող արդյունաբերական արտադրանքը սպառելու համար Գերմանիան կարիք ուներ նոր չուկաների, որոնք հիմնականում գտնվում էին Ֆրանսիայի և հատկապես Անգլիայի տիրապետության տակ: Այս երկու տիրակալություններն ամեն կերպ ձգտում էին ձեռքից բաց չթողնել իրենց «պատկանող» ոչ մի գաղութ, ավելին՝ մշակում էին գաղութային կայսրություններն ընդարձակելու նոր ծրագրեր:

Ինչ վերաբերում էր ռուս-գերմանական հակամարտությանը, ապա այն արդյունք էր ոչ միայն տնտեսական ու քաղաքական չահերի, այլև ցեղային անտագոնիզմի, հետևապես ավելի

խորն էր: Գերմանացիներն ուզում էին միայնակ տիրել բալթյան նավահանգիստները և դրանով իսկ բացարձակ հսկողություն հաստատել այդ ծովում: Մյուս կողմից՝ հարավային ուղղությամբ (Ավստրիա, Բալկաններ) նրանք ծրագրում էին իրենց ենթարկել ոչ միայն գերմանալեզու, այլև սլավոն ժողովուրդներին, որոնց իրական պաշտպանը Ռուսաստանն էր:

*Եռյակ համաձայնության բլոկի երկրների հետ խոր հակասություններ ուներ նաև **Ավստրիան**: Բայց սրա դրությունը անմխիթարական էր զինուժի և ներքին կայունության տեսակետից: Ավստրո-Հունգարիայի ազգաբնակչության մեծ մասը չեխեր, սերբեր, խորվաթներ և այլ սլավոն հպատակներ էին, որոնք բացահայտ հակագերման տրամադրություններ ունեին: Պատերազմի դեպքում իրենց համացեղ պետությունների հաջողություններից թև առնելով՝ նրանք կարող էին օգտվել պատեհ առիթից և ապստամբել կայսրության դեմ: Բացի դրանից՝ Ավստրիայի հարավային և հարավարևելյան կողմերում սլավոնական պետություններ էին նաև Սերբիան, Չերնոգորիան, Բուլղարիան, որոնք թշնամաբար էին տրամադրված նրա նկատմամբ գլխավորապես նույն պատճառով. իր կազմում նա պահում էր միլիոնավոր սլավոնների՝ իրենց ազգային տարածքներով: Ամեն կերպ խափանելով Ալբանիայի վրայով Ադրիատիկ ծով դուրս գալու Սերբիայի ձգտումները, Ավստրիան բացահայտ հովանավորում և աջակցում էր նրան, հատկապես այնտեղի կաթոլիկներին, որոնցից ավելի հակասերբական տրամադրություն ունեին մալիսորները[1]: Ավստրիան ալբանացիներին զինում էր, որպեսզի նրանք արգելք հանդիսանան իրենց երկիր իտալացիների թափանցմանը:*

*Հանդուրժելով Ալբանիայի նկատմամբ Ավստրիայի բացահայտ ձգտումները՝ **Իտալիան** իր հերթին ամեն ինչ անում էր վերահսկողություն սահմանելու այդ երկրի վրա և դրանով իսկ*

---

[1] *Մալիսորները կաթոլիկ ալբանացիների ճյուղերից էին՝ մոտավորապես 27 հազար հոգի, բոլորն էլ լավ սպառազինված (տե՛ս **Արամ Անտոնեան**, Ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, Պէյրութ, 1940, էջ 400-ի տողատակ):*

Ադրիատիկ ծովը վերածելու ներքին ծովավազանի: Այդ նպատակով նա պատրաստության էր բերել իր բանակն ու ռազմական նավատորմը: Միաժամանակ նա խուսափում էր Հունաստանի հետ հարաբերությունների սրացումից, որը ձգտում էր ընդլայնվել Ալբանիայի հարավային տարածքների հաշվին:

Այս պայմաններում **Ռուսաստանը** շարունակում էր իր ազատագրական պատմական առաքելությունը սլավոնական ազգերի նկատմամբ, որոնք գտնվում էին Ավստրիայի և Թուրքիայի տիրապետության տակ: Այդ էր հիմնական պատճառը, որ վեց մեծ տերություններից Բալկաններում ամենասուր հակասությունը Ավստրիայի և Ռուսաստանի միջև էր: Սլավոնամոլության գաղափարները Պետերբուրգում ոչ միայն չէին մարել, այլև վերազարթոնք էին ապրում:

Ռուսաստանն էր, որ, ժամանակին իր վրա ընդունելով Ասիայի խորքերից եկած մոնղոլների հարվածները, ընկավ նրա տիրապետության տակ և դարեր շարունակ կրեց օտար լուծը՝ դուրս մնալով զարգացման բնականոն ընթացքից: Ռուս ժողովրդի ինքնատիպ մշակույթի զարգացման ճանապարհին կանգնեցին օտարի կառավարչական և մտավոր անկատարությունը, կիսավայրենի բնազդներն ու սովորույթները: Բայց Ռուսաստանն էր նաև, որ 18–19–րդ դարերում մեկը մյուսի հետևից արյունալի պատերազմներ մղեց Թուրքիայի դեմ, աներևակայելի զոհողություններով ազատություն բերեց Բալկանների սլավոնական ժողովուրդներին, դարձավ նրանց պետականության երաշխավորն ու անխորտակելի պատվարը:

Մեծ առաքելություն էր բաժին ընկել նաև հարավային սլավոններին: Նրանք էին, որ Եվրոպայի նախադռանն իրենց վրա վերցրին դեպի մայրցամաքի խորքերն արշավող Թուրք զավթիչների հարվածները, ապա ընկնելով նրանց տիրապետության տակ՝ կրեցին անլուր չարչարանքներ ու անարգանքներ: Նրանց դարավոր տառապանքների գնով պահպանվեցին եվրոպական երկրների ինքնուրույնությունը և ազատությունը, նրանց մշակույթը՝ չքեղ պալատները, գեղարվեստը, գրադարանները, նիստուկացը: Ստեղծվեցին անարգել առաջադիմության պայմաններ, այլապես Եվրոպայի դրությունը կարող էր լինել այնպիսին,

ինչպիսին էին Բյուզանդիան և Հայաստանը անցյալ դարերում:

Բալկանյան պատերազմի նախօրյակին տերությունների ցամաքային ուժերի թվաքանակը հետևյալ պատկերն ուներ:

Ռուսաստանը մշտապես ուներ 1.400.000 զինվոր, որի մի մասը ստիպված էր պահել Հեռավոր Արևելքում, Կովկասում և ընդհանրապես իր ոչ եվրոպական սահմանագծերին[1]:

*Ուժեղ զորաբանակներ ուներ նաև Ռուսաստանի դաշնակից **Ֆրանսիան**: Ըստ զորաբանակի մասին օրենքի՝ այդ երկիրը պետք է ունենար չուրջ 590 հազար զինվոր ու սպա, բայց նրա բանակի թվակազմը 1912 թ. չէր անցնում 460 հազարը[2]: Պատճառը երկրում ծննդաբերության ցածր մակարդակն էր: Չնայած դրան՝ ֆրանսիական բանակը, լավ զինված լինելով, երկար ժամանակ կարող էր դիմագրավել գերմանական հարձակմանը, մինչև որ կբացվեր ռուս-գերմանական ճակատը, ինչպես նաև ռազմական օգնություն կստանար մյուս դաշնակցից՝ Անգլիայից: Այդ երկու հանգամանքների չնորհիվ նա նույնիսկ կարող էր հավասարվել Գերմանիային:*

*Եռյակ զինակցության դաշինքի մյուս երկիրը՝ **Անգլիան,** բուն երկրում Ֆրանսիայից քիչ ցամաքային ուժեր ուներ, բայց գաղութներում տեղակայված զորքերի թիվը՝ ներառյալ նաև հետևակային զինուժը, որոշ չափով գերազանցում էր ֆրանսիականը:*

*Եռյակ զինակցության գլխավոր ուժը՝ **Գերմանիան,** 1912 թ. պահում էր 721 հազար զինվոր: Բալկանյան պատերազմը սկսվելուց հետո՝ 1913 թ. փետրվարին, Ռայխստագը որոշում ընդունեց մինչև 1915 թվականը ցամաքային զորքերը ավելացնել ևս 145.000 մարդով[3]: Այդ ողջ հզորությունը հիմնականում նախատեսված էր երկրի արևելյան (ռուսաստանյան) ուղղության համար:*

***Ավստրո-Հունգարիայի** զինված ուժերը, որոնց թիվը գերմանական ուժերի մեկ երրորդն էր, նույնպես հիմնականում տեղա-*

---

[1] *Տե՛ս **«Նոր հոսանք»** (Թիֆլիս), № 1, մարտ, 1913, էջ 230:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 232:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 230:*

բաշխված էին կայսրության արևելյան սահմաններին:

Գերմանիայի և Ավստրիայի հետ ռազմական նույն դաշինքում էր **Իտալիան**: Թեև 20-րդ դարի առաջին տասնամյակում Իտալիան ձեռք էր բերել տնտեսական տպավորիչ հաջողություններ, բայց այս երկիրը զարգացման աստիճանով դեռ բավական հետ էր մնում իր դաշնակիցներից: Նա նրանց մեծապես զիջում էր նաև զորքերի թվաքանակով: Բացի դրանից, եթե հաշվի առնենք, որ Եոյակ զինակցության մեջ, որի անդամ էր ինքը՝ Իտալիան, նաև գտնվում էր իր դարավոր թշնամի Ավստրիան, ապա պարզ կդառնար, թե որքան անկայուն էր նրա վիճակը:

Այլ հարաբերակցություն էր երկու Եռապետությունների ծովային ուժերի միջև: Եոյակ զինակցության ծովային տորմիղների ուժը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համեմատ բավական թույլ էր, հետևապես այդ տեսակետից Եոյակ զինակցության ծովային ապահովությունը դեռ երաշխավորված չէր: Ահա թե ինչու վերջինս մեծ ջանքեր էր գործադրում մեծացնելու ու ամրացնելու ծովային ուժերը՝ ի հակակշիռ իր հակառակորդների:

Այդ տեսակետից մեծ եռանդով էր գործում Գերմանիան: Սա ծովային ուժերը մեծացնում էր հյուսիսային ուղղությամբ՝ Բալթիկ ծովում և հյուսիսային ջրերում: Գերմանիան, ըստ ծրագրի, հատկապես հսկայական ջանքեր էր գործադրում Հյուսիսային ծոցում Անգլիային հավասարվելու համար: Ինչ վերաբերում է միջերկրածովյան ուղղությանը, ապա Գերմանիան այն թողել էր իր ռազմական դաշնակից Իտալիային: Եոյակ զինակցության շրջանակներում վերջինս պարտավորություն էր ստանձնել Միջերկրական ծովում գերմանական տեխնոլոգիայով ստեղծել մի զորեղ նավատորմ, որը կկարողանար այնտեղ մրցել ֆրանսիական ռազմածովային ուժերի հետ:

Եոյակ զինակցության ցամաքային պատվարը տարածվելու էր հյուսիսից հարավ՝ շարունակվելով ծովերով՝ դրանով իսկ պատերազմի դեպքում ավելի իրատեսական դարձնելով իր ախոյանների ուժերը տրոհելու գաղափարն ու գործը: Միջերկրական ծովի ողջ երկայնքը դառնում էր եվրոպական մեծ տե-

ությունների հակամարտությունների առանցքը: Որքան էլ կարևոր լինեին բալկանյան և ասիական հողային խնդիրները, դարձյալ դրանք երկրորդական տեղ էին բռնում տերությունների ռազմավարական հարաբերություններում: Միջերկրականը, Սև ծովը, նեղուցները, մեծ նավահանգիստները կյանքի ու մահվան խնդիր էին դարձել իմպերիալիստական բոլոր երկրների համար:

Ընդհանրապես տերությունների միջև հակասություններն ու թշնամանքը գնալով խորանում էին, սակայն իրողություն էր, որ կապիտալիզմն իր բարձրագույն աստիճանին՝ իմպերիալիզմին, թեւակոխելուց ի վեր Եվրոպային այնուամենայնիվ հաջողվել էր խուսափել համընդհանուր արյունալի պատերազմից: Եվ դա չնորհիվ այն բանի, որ հակառակորդ ռազմաքաղաքական երկու խմբավորումներն ունեին մոտավորապես հավասարաչափ ցամաքային զինված ուժեր, որը և մայրցամաքում ստեղծում էր հարաբերական դսպող հավասարակշռություն:

ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Զարգացնելով նախորդ ժամանակների ավանդույթները՝ մայրցամաքի մեծ պետությունները շարունակում էին զենքով զավթել ուրիշ երկրներ, կողոպտել տեղացի ժողովուրդների հարստությունները: Բայց այդ նույն տերությունների համար բացառություն էր Օսմանյան կայսրությունը: Նրանք խուսափում էին այդ երկիրը զենքով նվաճելուց՝ գերադասելով այնտեղ թափանցել «խաղաղ» միջոցներով: Տերությունների միջև առկա հակասությունները նույնպես նպաստում էին Թուրքիայի ամբողջականության պահպանմանը:

Իմպերիալիստական որևէ երկրի ձեռքբերումները Թուրքիայում հիվանդագին խանդ էր առաջացնում մյուսների մեջ, և դա էր պատճառներից մեկը, որ նրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին սիրաշահում էր օսմանյան կառավարությանը և կայսրության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու պատրաստակամություն հայտնում:

Անգլիան, *Եգիպտոսի փաստացի տերը լինելով, պինդ ու հարմար նստել էր Սուեզի ջրանցքի վրա: Նա արդեն մտածում էր գրավել Թուրքական հարավարևելյան նահանգները, որոնք Հարավային Պարսկաստանի վրայով իրար պիտի կապեին իր երկու կարևոր տիրույթները՝ Եգիպտոսը և Հնդկաստանը: Անգլիացիները հողեր էին գնում Օսմանյան կայսրության տարբեր կողմերում՝ Բասրայի, Դամասկոսի և Երուսաղեմի վիլայեթներում: 1909 թ. անգլիացի Վիլքոքսը ամբողջ Միջագետքը ոռոգելու արտոնագիր էր ստացել: Անգլիայի միլիոնատերերը 1910 թ. ձեռնարկել էին Տրիպոլիսից Հալեպ երկաթուղու կառուցումը, որը մի հատվածն էր լինելու Միջերկրականի ափերից դեպի Պարսից ծոցը ձգվելիք «Բաղդադի» գծի, մի նախագիծ, որն ավելին էր լինելու, քան գերմանացիների կապիտալով կառուցվելիք Բեռլին-Բաղդադ-Բասրա երկաթգիծը: Փոքր Ասիայի հարավային մասը նույնպես Անգլիայի ազդեցության տակ էր: Նույնիսկ Զմյուռնիայի մերձակայքում կային անգլիական գաղութներ:*

1912 թ. տվյալներով աշխարհի 18 միլիարդ ոսկեդրամից 11 միլիարդը պատկանում էր ***Ֆրանսիային****: Դրա մի մասը Թուրքիայում էր: Սա Եվրոպային պարտք էր 1.204 միլիարդ ֆրանկ, որից Ֆրանսիայի բաժինը 846 միլիոն էր: Բացի դրանից՝ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Սալոնիկում, Երուսաղեմում, Բեյրութում ու կայսրության այլ վայրերում Ֆրանսիան կատարել էր երկու միլիարդ ֆրանկի կապիտալ ներդրումներ[1]: Հենց դա էր պատճառը, որ նա հանդես էր գալիս կայսրության միասնականության օգտին:*

Նույնանման պատճառներով Թուրքիայի տարածքային ամբողջականությամբ չահագրգռված էր ***Գերմանիան****:*

Գաղութներ ձեռք բերելու համար Գերմանիան հրապարակ էր բերել այն պատճառաբանությունը, թե երկրում արագ աճում է բնակչությունը, ուստի նրա ավելցուկը վերաբնակեցնելու համար օդուջրի պես անհրաժեշտ են նոր տարածքներ:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 238, 26 հոկտեմբերի 1912 թ.:*

Գերմանիայի աֆրիկյան ընդարձակ հողերը* գրավիչ չէին գերմանացի գաղթականներին. այդ աշխարհամասի երկրների կլիմայական պայմանները անբարենպաստ ու անսովոր էին նրանց համար: Մինչդեռ շատ հարմար էին Թուրքիայի ազատ հողերը, ուր և իր ուշադրությունն էր բևեռել գերմանական կառավարությունը՝ սկսած 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներից:

Քանի որ Գերմանիան տենչում էր ծովային մեծ տերություն դառնալ, ուստի նախ ձգտում էր ազատ մուտք ունենալ Միջերկրական: Այդ նպատակով նա ամենից առաջ մտադիր էր իր ձեռքը գցել Տրիեստը՝ իբրև վաճառականական դուռ: Ավելին, Գերմանիան նույնիսկ մտածում էր իրեն ենթարկել Ավստրիան, և այդ նպատակին հասնելու համար համագերմանականության գաղափարների կողմնակիցները ուժգին քարոզչություն էին մղում: Բայց Գերմանիայի ախորժակը դրանով չէր սահմանափակվում. նա կուզենար տիրանալ ողջ Բալկանները:

Հաջորդ քայլը լինելու էր Փոքր Ասիան ամբողջովին իրեն ենթարկելը:

Գերմանացիները արդեն կարողացել էին իրենց ձեռքը գցել Օսմանյան կայսրության տնտեսական կյանքի բազմաթիվ լծակներ: Նա Թուրքական իշխանություններից ստացել էր հողային լայնածավալ արտոնագրեր Միջագետքում և մեծ եռանդով ձեռնամուխ եղել ոռոգման մեծ ծրագրերի իրականացման և զուգահեռաբար ոռոգելի հողերի վրա գերմանացի գաղութարարների բնակեցման: Նա իր ձեռքն էր գցել նաև երկրի արդյունաբերության և հանքերի զգալի մասը: Առևտրի բնագավառից աստիճանաբար դուրս էին մղվում հայերն ու հույները:

Վիլհելմ II կայսրի ջանքերով Գերմանիան միաժամանակ կարողացել էր Թուրքական սուլթանից ստանալ Բեռլինից մինչև Միջագետք երկաթուղի կառուցելու իրավունքը:

---

* Այդ ժամանակ Գերմանիայի աֆրիկյան գաղութներն էին Տոգոն, Կամերունը, Գերմանական Արևելյան Աֆրիկան և Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկան:

Երկաթուղին, որ Սկյուտարից պիտի ձգվեր մինչև Պարսից ծոց՝ կտրել-անցնելով ամբողջ Փոքր Ասիան, նպատակ ուներ մի կողմից այդ երկրները դարձնել Գերմանիայի բացարձակ մենաշնորհը, մյուս կողմից գերմանական արշավանքի համար ճամփա բանալ դեպի Միջին և Ծայրագույն Արևելք:

Օսմանյան կայսրության տարածքով անցկացվելիք այս երկաթգիծը, որ հայտնի էր Բեռլին-Բաղդադ-Բասրա անունով, Գերմանիայի ռազմավարական նպատակների իրականացման գլխավոր միջոցներից մեկն էր, որի վրա նա ծախսում էր հսկայական գումարներ: Բեռլինից Միջագետք ձգվելիք երկաթուղին անցնելու էր եվրոպական Թուրքիայի տարածքով, որի քաղաքական կայունությունը երկաթուղու անվտանգության պահպանման երաշխիք էր: Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ Գերմանիան վճռականապես դեմ էր Բալկաններում տարածքային որևէ փոփոխության: Այս երկրի կառավարությունը հայտարարում էր, որ թուրքական տարածքներին տիրանալու բալկանյան երկրների ակնկալիքները երբեք չեն իրականանա, քանի որ կհանդիպեն իր զինված միջամտությանը: Ի դեպ, Բեռլինն արդեն հանգել էր այն տեսակետին, որ թուրքիայում բարեկարգումներ այսուհետև կարող են տեղի ունենալ միայն եվրոպական Թուրքիայում, իսկ նրա ասիական մասում դեռ պետք է սպասել:

Թուրքիայից ձեռք բերելով մեծ առանձնաշնորհումներ՝ Գերմանիան Միջագետքի վերաբերյալ կարող էր կատարելապես հանգիստ լինել միայն այն դեպքում, եթե կարողանար իր ձեռքում պահել Բաղդադի երկաթուղին, որը նրա այդ գաղութը կապում էր մետրոպոլիայի հետ:

Երկաթուղային այդ ճանապարհի վրա կատարելապես իշխելու համար խիստ անհրաժեշտ էր ունենալ Գերմանիայի գերիշխանությունը Թուրքիայի վրա: Հետևապես թուրքական խնդիրը Գերմանիայի համար դառնում էր ներքին պետական առաջնային հարց:

Երկաթուղու կարևոր կետերի վրա, իբրև անառիկ բնական ամրոց, գտնվում էր Հայաստանը, ուր բնակվում էր մի ըմբոստ ժողովուրդ, որը պատրաստ էր դիմելու ամեն զոհողության՝ իր

ստրկությանը վերջ դնելու համար: Ահա թե ինչու Գերմանիան Հայաստանը դիտում էր դեպի Հնդկաստան և Ծայրագույն Արևելք համագերմանականության առաջխաղացման խոչընդոտ, ինչպես որ Մակեդոնիայում Թուրքերի կողմից կատարվող տեղական ջարդերը նրան հարկավոր էին Բալկաններին տիրելու համար: Ահա թե ինչու Գերմանիան օգնում էր Թուրքիային՝ իրականացնելու հայերի կոտորածները, ահա թե ինչու նա հանդես էր գալիս այն պետությունների դեմ, որոնք ուզում էին արգելել այդ ոճիրը:

Հայերը, իսկապես, Փոքր Ասիայի մակեդոնացիներն էին, որոնք նույնպես այն ճամփի վրա էին, որտեղով պետք է անցներ համագերմանական արշավանքը՝ հասնելու Պարսկաստան և Հնդկաստան: Այդ է պատճառը, որ Անգլիան ու Ֆրանսիան և ինչ-որ չափով նաև Իտալիան փորձում էին հայերին օգնել Թուրքական հարստահարումների դեմ իրենց պայքարում: Գոնե փորձում էին ցույց տալ, թե օգնում են:

Օգտվելով Կ. Պոլսի կառավարության տված արտոնություններից՝ գերմանացիները Բաղդադի երկաթգծի չինարարության երկայնքով սկսեցին բնակեցնել հայերին՝ նրանց կտրելով իրենց հայրենի տարածքներից: Դա հետապնդում էր երկու նպատակ. նախ մարդաբնակ դարձնել գերմանական գծի ամայի տարածությունները և չինարարություն ներգրավել էժան աշխատուժ, երկրորդ՝ ստեղծել հայերի նկատմամբ գերմանական հովանավորչության պատրանք:

Այդ քաղաքականությունը նպաստավոր էր նաև Թուրք կառավարության ջանքերին, այն է՝ Թուրքահայաստանի Ռուսաստանին սահմանակից մասերում նոսրացնել հայ ազգաբնակչությունը:

Բայց Փոքր Ասիան իր աշխարհագրական դիրքով, բնականաբար, ավելի հակված էր ենթարկվելու Ռուսաստանի ազդեցությանը. վաղ թե ուշ ռուսները հենց այդտեղ պետք է որոնեին Միջերկրական ծով դուրս գալու ճանապարհը, իսկ դա նշանակում էր, որ Գերմանիայի փոքրասիական գաղութին միշտ սպառնալու էր ռուսական վտանգը:

Թուրքական պետությունը հասել էր քայքայման այնպիսի

աստիճանի, որ նրա բաժանումն առանձնապես արգելքների չէր հանդիպի: Այդ դեպքում Գերմանիան կստանար Միջագետքը, Կիլիկիան և Հյուսիսային Սիրիան, բայց և ստիպված կլիներ Ռուսաստանին զիջել Թուրքահայաստանի մեծագույն մասը, այսինքն՝ ռուսաց ներգործությունը կմոտենար Գերմանիայի ազդեցության տակ գտնվող փոքրասիական հողերի սահմաններին:

Այդ իրադրության մեջ Գերմանիան պետք է գործադրեր ամեն միջոց, որպեսզի Ռուսաստանը չկարողանար կովկասյան սահմաններից դուրս գալ ու տարածվել դեպի հարավ:

Միջագետքին կապող երկաթուղու անվտանգությունը ապահովելու համար Գերմանիան մեծապես շահագրգռված էր մուսուլմանական ամուր պատնեշ ստեղծել Ռուսաստանի կովկասյան տիրույթների և Թուրքիայի միջև, միջնամասի այդ տարածքներից հեռացնել ռուսամետ քրիստոնյա հայերին և նրանց բնակության վայրերում հաստատել քրդերին ու թուրքերին:

Թուրքիայի ամբողջականության պահպանմամբ մեծապես շահագրգռված էր նաև ***Ավստրիան****, որը թեև տնտեսական մեծ շահագրգռություններ չուներ Անատոլիայում, բայց թուրքական ռազմակալումը Եվրոպայի մի մասում՝ Բալկաններում, փրկօղակ էր նրա համար: Ահա թե ինչու այդ պահին Ավստրիան հայտարարեց, թե ինքը չի հանդուրժի, եթե իր կողմից Թուրքիային վերադարձրած Նովի Բազար սանջակի դեմ Սերբիան կամ Չերնոգորիան ոտնձգություն կատարեն[1]:*

Տվյալ ժամանակում Թուրքիայի ամբողջականության խախտումը ձեռնտու չէր նաև պաշտոնական ***Ռուսաստանին****, որովհետև նա շահագրգռված չէր միջազգային մասշտաբով մեծ բարդություններ ստեղծելու:*

Եվրոպական մեծ տերությունները պաշտպանում էին Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, քանզի նրանց հսկայական կապիտալները շրջանառվում էին Օսմանյան կայսրության մեջ, և բնավ մտադիր չէին դրանք վտանգելու: Այդպես էր Բեռլինի դաշնագրին հաջորդած ավելի քան երեք

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1008, 24 սեպտեմբերի (7 հոկտեմբերի) 1912 թ.:*

տասնամյակներում, երբ Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսական շահերը թելադրում էին պահպանել Օսմանյան կայսրության status quo-ն և «կարմիր սուլթանի» իշխանությունը: Այդ շահերից ելնելով է, որ Եվրոպայի մեծերը նկատելու չէին տալիս, թե ինչպես են թուրքերը պարբերաբար հեղում հայերի և մակեդոնացիների արյունը: Վիճակը նույնն էր նաև Բալկանյան պատերազմի նախօրյակին:

Այսպիսով, ծանր, գուցե և անհույս հիվանդի չուրջը զգույշ ու փափուկ քայլերով, իրար հոտոտելով և իրարից սարսափելով՝ պտտվում էին եվրոպական բորենիները, և նրանցից յուրաքանչյուրը կամենում էր որևէ բան «ազատագրել», որևէ մեկին «փրկել», որևէ քրիստոնեական եկեղեցի «հովանավորել», որևէ դժբախտ ազգ «դուրս կորզել իսլամի ճիրաններից»: ... Բայց բոլորի գլխավոր նպատակը մեկն էր. որքան կարելի է շատ բան պոկել Թուրքիայից: Իսկ դա հնարավոր էր, եթե պահպանվեին այդ կայսրությունը, նրա տարածքային ամբողջականությունը:

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

Կարլ Մարքսը գրել է. «...Չորս հարյուրամյակ չարունակ Թուրքերը հիմնականում ապրել են Փոքր Ասիայում և Հայաստանում, որոնք Թուրքական բանակի մշտական համալրման չտեմարան էին ծառայում...»[1]: Այս չորս դարերի ընթացքում նրանք ստեղծել էին մի վիթխարի կայսրություն, որի մեջ բռնափակված ժողովուրդները ենթարկվում էին անմարդկային շահագործման ու դաժան հալածանքների: Եվ դա այն պարագայում, որ Թուրք տարրը գերակշռող չէր կայսրության ո՛չ ասիական և ո՛չ էլ եվրոպական մասերում:

Ասիական Թուրքիայում Թուրքերն ամբողջ բնակչության 43%-ն էին, իսկ մնացած 57 տոկոսը կազմում էին արաբները,

---

[1] ***К. Маркс, Ф. Энгельс**, Соч., т. 9, стр. 5-6.*

քրդերը, հայերը, ասորիները, չերքեզները, հույները և այլք[1]:

Թվական տեսակետից Եվրոպական Թուրքիայում Թուրքական տարրն է՛լ ավելի աննպաստ վիճակում էր: Այստեղ Թուրքությունը կազմում էր ամբողջ ազգաբնակչության 25%-ը, իսկ մնացած 75%-ը հույներ, բուլղարներ, հայեր, ալբաններ, սերբեր, չերքեզներ, հրեաներ էին[2]:

Այսպիսով, ամբողջ պետության մեջ Թուրք տարրը հազիվ 34% էր կազմում, այնինչ հպատակ ազգերի և ազգությունների Թիվը հասնում էր 66%-ի[3]:

Կայսրության ոչ մի ժողովուրդ ցանկություն չուներ ապրելու Թուրքերի հետ: Նրա ասիական մասում արաբները մերթ ընդ մերթ ըմբոստանում էին Թուրքական զորքերի դեմ՝ դրանով ցույց տալով իրենց անհնազանդությունը սուլթանի հանդեպ: Քրդերն ապրում էին ազատ Քուրդիստանի երազանքով: Քրիստոնյաներն է՛լ ավելի ուժգին էին տենչում ազատվել դարավոր անարգ լծից:

Օսմանյան կայսրությունն իսկական դժոխք էր նաև բռնազավթված Բալկանյան թերակղզու սլավոն և հույն ժողովուրդների համար, որոնք դարեր չարունակ կրում էին Թուրք զավթիչների ծանր լուծը:

Բալկանյան թերակղզու հյուսիսային և հյուսիսարևմտյան սլավոնական մասին տեր էր կանգնել Ավստրիան, որին թեև քաղաքակրթական տեսակետից չէր կարելի համեմատել Օսմանյան բռնապետության հետ, բայց նրա լուծը նույնպես դաժան էր ու անտանելի:

Աշխարհը թեակոխել էր 20-րդ դար, սակայն Ավստրիան բալկանյան սլավոններին առաջվա պես դիտում էր որպես

---

[1] *Տե՛ս* ***«Գործ»*** *(Թիֆլիս), № 49, 7 նոյեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում: (Իհարկե, միայն Թվաքանակը չէր կարևոր, այլև զարգացածության աստիճանը: Այդ տեսակետից էլ Թուրքերը բնավ չէին գերազանցում մյուս ժողովուրդներին: Եվրոպական Թուրքիայում նրանցից կուլտուրապես բարձր էին հույները, բուլղարները, իսկ Ասիական Թուրքիայում՝ հայերը):*

պատմական հակառակորդներ: Դեպի Մերձավոր Արևելք գերմանական ռասայի ծավալման, այդ առաջապահ երկրի իշխանության տակ մնացել էին միլիոնավոր սլավոններ, ինչը մշտական ներքին մեծ վտանգ էր[1], որը, գումարվելով հարավից ու արևելքից սպառնացող վտանգներին, կարող էր ճակատագրական լինել կայսրության համար, կասկածի տակ դնել նրա պետական ամբողջությունը: Բնական է, որ այս պայմաններում նա ուժեղացնում էր կապերը սլավոնական ժողովուրդների գլխավոր թշնամի Թուրքիայի հետ, ջատագովում նրա տարածքային ամբողջականությունը:

Բայց Ավստրիայի համար մեծ վտանգ էին ներկայացնում ոչ միայն իր ներսի սլավոն բնակչությունը, այլև Թուրքիայի լուծը թոթափած և զարգացման ինքնուրույն ուղի բռնած սլավոնական անկախ պետությունները և հատկապես Սերբիան ու Բուլղարիան: Հակառակ Թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների status quo-ի քաղաքականության՝ բալկանյան փոքր պետությունները և դրանց ժողովուրդները երազում էին ողջ Բալկանները ազատագրված տեսնել օսմանյան դարավոր լծից, Թուրքերին վերջնականապես դուրս մղել Եվրոպայից:

Հակառակ եվրոպական տերությունների՝ Թուրքիային Եվրոպայից վերջնականապես դուրս մղելուն մեծապես նպաստում էր Ռուսաստանը: Նրան ամենից առաջ հետաքրքրում էր Դարդանելով ու Բոսֆորով հանդերձ Կ. Պոլիսը տիրելը: Ռուսաստանի համար դա «արևելյան հարցի» էությունն էր:

Եվրոպական մեծ տերությունների համեմատ Ռուսաստանը շատ քիչ կապիտալ էր ներդրել Օսմանյան կայսրության տնտեսության մեջ, հետևաբար այնտեղ նրա նյութական շահերը չնչին էին, այսինքն՝ Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում նա այնտեղ քիչ բան ուներ կորցնելու: Բալկանյան պետություններն այդ հանգամանքը համարում էին չափազանց բարենպաստ. գուցե Մեծ Ռուսիան կրկին սատար կանգներ կրտսեր եղբայրներին: Դրսից աջակցության ոչ մի հույս չկար, միակ հույսը ռուսն էր: Հենց այդ երկրի տասնյակ հազարավոր զավակների

---

[1] *Այդ մասին տե՛ս **«Բութանիա»**, № 8 (1054), 9 (22) նոյեմբերի 1912 թ.:*

կյանքի գնով էր թուրքական դաժան լծից ազատագրվել բուլ-գարների, սերբերի, չերնոգորցիների մեծ մասը, իսկ բուլղարա-կան պետությունն ամբողջովին Ռուսաստանի արարած գա-վակն էր: Հիրավի, հանուն հավատակից սլավոն եղբայրների ազատագրության՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատե-րազմում ռուսական կայսրությունը կրել էր մարդկային և նյու-թական ահռելի կորուստներ:

Չնայած այդ ամենին՝ պաշտոնական Ռուսաստանը ստիպ-ված էր եղել միանալու օսմանյան տերության տարածքային ամ-բողջականությունը պահպանելու եվրոպական տերությունների վճռին: Ավելին, ռուսական դիվանագիտությունն ամեն կերպ փորձել էր զսպել Թուրքիան բաժանված տեսնելու բուլղարների եռանդը[1]: Նա մտահոգ էր, որ հօգուտ սլավոնների իր միջամտու-թյունը կարող է առաջ բերել համաեվրոպական պատերազմ, որին ինքը պատրաստ չէր: Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունից հետո երկիրը դեռ ուշքի չէր եկել:

Թուրքերի նկատմամբ է՛լ ավելի արմատական էր տրամա-դրված Ռուսաստանի հասարակական կարծիքը: Ոչ պաշտոնա-կան Ռուսաստանը, ռուս ժողովրդի ամենատարբեր խավերը բալկանյան սլավոնական ազգերի հետ մշակութային, հոգևոր-բարոյական սերտ կապեր ունեին, ուստի չէին կարող իրենց համակրությունը չարտահայտել նրանց ազատագրական պայ-քարի նկատմամբ: Սլավոնամետ շարժումը նոր թափ էր առնում:

1908 թ. Ավստրիան գրավել էր Բոսնիա-Հերցեգովինան, և այդ գործողությունը Ռուսաստանը դիտեց որպես նրա՝ դեպի նեղուցների դարպասներ շարժվելու առաջին քայլ: Պետերբուր-գը չէր կարող անտարբեր մնալ և ստիպված էր այդ շարժման ճանապարհին ստեղծել զանազան արգելքներ: Եվ նա գտավ ամենաբնական, ամենահավանական և ամենադյուրին տարբե-րակը, այն է՝ Ավստրիայի և Սալոնիկի միջև ստեղծել բուլղարա-սերբական պատնեշ: Դա հին ծրագիր էր, որն առաջին անգամ հղացել էր Սան-Ստեֆանոյի նախնական դաշնագրում, որը, սա-

---

[1] *Այդ մասին տե՛ս* ***"Красный архив",*** *том первый (восьмой), Госиздат, 1925, էջ 10:*

կայն, Բեռլինի 1878 թ. վեհաժողովում Ավստրիան ու Անգլիան կարողացել էին ի չիք դարձնել:

Եվ ահա 1910 թ. սկսած, երբ Եոյակ համաձայնության երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, միջազգային ասպարեզում սկսել էին գործել համաձայնեցված ծրագրերով, պատեհությունները Պետերբուրգի համար բարենպաստ հող էին ստեղծել աջակցելու բալկանյան սլավոններին:

Իր կառավարության հանձնարարականով Կ. Պոլսի ռուսաց դեսպան Ն. Զարիկովը 1911 թ. գաղտնի աշխատանքներ էր տանում մի կողմից զինակցություն կայացնելու նախ բալկանյան սլավոն պետությունների, ապա նաև բալկանյան սլավոնների և հույների միջև:

Ավստրիական հետախուզությանը հաջողվել էր բացահայտել Զարիկովի գործունեությունը: Վիեննայի գանգատի համաձայն՝ Պետերբուրգը ստիպված եղավ Կ. Պոլսից հետ կանչել իր դեսպանին: Բայց Զարիկովը Պետերբուրգ չվերադարձավ, այլ հիմնավորվելով Ռումինիայի Քեստենջե քաղաքում՝ այնտեղ շարունակեց իր գործունեությունը՝ գլուխ բերելու համար զինակցություն բալկանյան պետությունների միջև: Նա իրեն գործակից ուներ Բելգրադի ռուս դեսպան Ն. Հարթվինգին, և նրանք համատեղ լարված աշխատում էին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի հրահանգներով:

Դիվանագիտական աշխարհի համար 1912 թ. կեսերին արդեն իրողություն էր, որ Բալկանյան դաշնությունը ստեղծվելու է Ռուսաստանի նախաձեռնությամբ ու գործակցությամբ:

1912 թ. գարնանը Նիկոլայ II ցարի հետ Վիլհելմ կայսրի տեսակցությունը, նույն տարվա հունիսին Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդի այցելությունը Վիեննա և Բեռլին, ինչպես նաև նույն ժամանակ Զերնոգորիայի թագավորի ճամփորդությունը Վիեննա արդեն կապ ունեին Թուրքիայի դեմ ծրագրած գործողությունների հետ: Օգոստոսին Ռ. Պուանկարեի Պետերբուրգ գնալը և Պարմարալում Ս. Սազոնովի ու Էդուարդ Գրեյի միջև տեղի ունեցած երկար բանակցությունները նպատակ ունեին առնելու Բալկաններում Ռուսաստանի վարած քաղաքականության մասին Ֆրանսիայի և Անգլիայի հավանությունը:

Եթե եվրոպական մեծ պետությունների կառավարությունները, բացառությամբ Պետերբուրգի պաշտոնական շրջանների, դեմ էին Բալկաններում որևէ փոփոխության, ապա նույն Եվրոպայի հասարակական տարբեր շերտերում գնալով ուժեղանում էին այդ տարածաշրջանից Թուրքերին վերջնականապես դուրս մղելու տրամադրությունները: Կարլ Մարքսը գրում էր. «Մենք պետք է համաձայնենք, որ Եվրոպայում Թուրքերի մնալը լուրջ խոչընդոտ է ... Բուն Բալկաններում գտնում էին, որ Թուրքերի ծննդավայրն ու հայրենիքը Միջին Ասիայի խորքերում են, իսկ Փոքր Ասիան, առավել ևս Բալկանյան Թերակղզին նրանց համար եղել ու մնացել են լոկ որպես օտար երկրներ, որոնք միայն հարկատուներ են և ոչ Թե հայրենիք, որի հետ կապվեին բարոյապես և որի համար զոհաբերեին իրենց կյանքը»: Մարքսը այնուհետև գրում էր. «Մենք պետք է համաձայնենք, որ Եվրոպայում Թուրքերի մնալը լուրջ խոչընդոտ է այն բոլոր պաշարների զարգացման համար, որոնց տերն է Թրակիական-Իլլիրիական Թերակղզին...»[1]:

Եվրոպայի հասարակական կարծիքում տեղի ունեցող այդ փոփոխությունների հիմնական պատճառն այն էր, որ Բեռլինի դաշնագրից անցել էր չուրջ երեքուկես տասնամյակ, բայց Թուրքիան, այդ Թվում նրա բալկանյան տիրույթները, չնայած Եվրոպայի հետ դարավոր չփումներին, մեծ դժվարությամբ էին կարողացել փոքրիչատե հաղորդակցվել ժամանակի քաղաքակրթական ձեռքբերումներին, խուսափել էին բռնել բարենորոգումների ուղին, որի հետևանքով ընկել էին տնտեսական, քաղաքական ու բարոյական քայքայման ու կազմալուծման մեջ[2]:

Այս պայմաններում եվրոպական հասարակական կարծիքը աստիճանաբար Թեքվում էր Թուրքիայի բաժանման, նրա ավերակների վրա նոր պետություններ ստեղծելու հրամայականին: Շատերը նաև հակվել էին այն մտքին, որ եթե բալկանյան պե-

---

[1] ***Կ. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. 9, стр. 5-6.*

[2] *Այդ մասին մասնավորաբար տե՛ս **«Ուտան»** (Կ. Պոլիս) եռամսյա պարբերականի 1911 Թ. № 2-ի «Թուրքիա. վիճակագրական ճշմարտություններ» վերտառությամբ խմբագրականը (էջ 237-250):*

տություններն անհրաժեշտ կամք դրսևորեն և Թուրքիայի դեմ հանդես գան միասնաբար, ապա օսմաններից կարելի կլինի ազատագրել ոչ միայն նրա վերջին եվրոպական տիրույթները, այլև Թուրքերին վռնդել հեռու՝ Փոքր Ասիայի խորքերը և Հայաստան, ուր նրանք կստեղծեն իրենց ազգային պետությունը: Ավելի ծայրահեղ Թուրքատյացները գտնում էին, որ նրանց պետք է քշել իրենց նախնական հայրենիքը՝ Միջին Ասիա - Ալթայ:

Եվրոպական անկախ մամուլի առանձին օրգաններ, հասարակական ու գիտական գործիչներ առաջարկում էին բալկանյան քրիստոնյա չորս փոքր պետություններից՝ Բուլղարիա, Սերբիա, Ջերնոգորիա, Հունաստան, ստեղծել միապետական կառավարմամբ դաշնային մի պետություն, և նույնիսկ առաջարկներ էին արվում այդ պետության գլուխ ունենալ Հունաստանի Գևորգ Թագավորին, որը սլավոն չէր, որ ցանկանար նոր ստեղծված երկիրը Թեքել Ռուսաստանի կողմը, և ոչ էլ գերմանալեզու էր, որ երկիրը տաներ դեպի Ավստրո-Հունգարիա:

Բայց այդ պետությունը քաղաքական կողմնորոշման առումով ի՞նչ դիրք կարող էր բռնել Եվրոպայում: Հարց էր առաջանում, Թե նման հսկա քաղաքական միավորումը կայունացնո՞ղ դեր կկատարեր մայրցամաքում, Թե՞ ընդհակառակը: Ստեղծված անորոշությունն ավելի տագնապալից էր դարձնում դրությունը մանավանդ այն պատճառով, որ այդ նորաստեղծ պետությունն ամենից շատ կշոշափեր անգիջում հակառակորդներ Ավստրիայի և Ռուսաստանի կենսական, ռազմավարական շահերը: Շատերը գտնում էին, որ եթե Բալկաններում մարմին առներ դաշնային պետության սկզբունքը, ապա նման պետական կազմավորումը իր դիրքով և ռազմական նշանակությամբ կարող էր դառնալ ամենամտահոգիչ խնդիրներից մեկը Եվրոպայի ճակատագրում: Իր ծանրությամբ Թեքվելով Եոյակ համաձայնության (Անտանտա) կամ Եոյակ զինակցության կողմը՝ նա կխախտեր եվրոպական հավասարակշռությունը: Իսկ Թե այդ ռազմաքաղաքական երկու բլոկներից որի կողմը կթեքվեր նա, մնում էր անորոշ: Բայց մի բան պարզ էր. որքան ամրանար ու զորանար բալկանյան ստեղծվելիք այդ պետությունը, այնքան

նա ուժգին պիտի ձգտեր դեպի հյուսիս՝ իր սահմաններում ներառելով իրենից անջատ գտնվող ազգակիցներին: Իսկ հյուսիսում Ավստրո-Հունգարիան էր:

Թե այս տագնապները որքան էին իրական, ցույց էին տալիս այն շարժումները, որոնք արդեն առաջացել էին Բոսնիա-Հերցեգովինայի տարածքի մի մասում՝ Սլովենիայում, ուր բուռն ցույցեր էին տեղի ունենում ի նպաստ Սերբիայի: Նման տրամադրություններ խմորվում էին ոչ միայն հարավային սլավոնների շրջանում, այլև Չեխիայում:

Ավստրիան սկսել էր վախ զգալ նույնիսկ իր բարեկամ Ռումինիայից: Այս երկրի մամուլում և քաղաքական շրջանակներում հետզհետե ուժեղանում էին համակրական արտահայտությունները ի նպաստ բալկանյան դաշնության, ավելին՝ ձայներ էին լսվում ապագա այդ դաշնությանը միանալու անհրաժեշտության մասին: Եվ եթե մի օր Ռումինիան նույնպես միանար բալկանյան մյուս պետություններին, ապա Ավստրո-Հունգարիայի վիճակը կդառնար հուսահատական:

Եվ բնական է, որ ամեն բանից առաջ Ավստրիան ձեռնարկեց թույլ չտալու բալկանյան հնարավոր զինակցությունը: Այդ նպատակով նա առաջին հերթին մեջտեղ նետեց Ալբանիայի ինքնավարության խնդիրը:

Ավստրիան ջանք էր գործադրում Ալբանիայի սահմանները գծել այնպես, որ Սերբիան չկարողանա դուրս գալ մեկուսացումից: Աջակցելով Ալբանիային՝ նա նպատակ ուներ վերջինիս հակադրել Բալկանների սլավոն ժողովուրդներին, որոնց պետական ինքնուրույն կազմավորումները համարում էր իրական վտանգ իր գոյությանը: Ալբանական ինքնավարության դեպքում կփակվեր դեպի ծով ելք չունեցող Սերբիայի Ադրիատիկի ջրերը դուրս գալու ճանապարհը, և նա կմղվեր Էգեյանի ափը, ուր նրա շահերն անխուսափելիորեն կբախվեին Բուլղարիայի և Հունաստանի քաղաքական ձգտումներին և տնտեսական շահերին[1]: Այդ

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»*** *(Թիֆլիս), № 56, 1913 թ.: Այդ մասին տե՛ս նաև Նիկոլ Աղբալյանի հոդվածը (* ***«Լրաբեր հասարակական գիտությունների»,*** *№ 2 (590), մայիս-օգոստոս, 1995, էջ 16):*

ծրագրի շրջանակներում Ավստրիան պատրաստ էր ամեն տեսակ զիջումներ անելու Բուլղարիային. նույնիսկ Կ. Պոլսի խայծն էր նետում նրա առջև՝ պայմանով, որ նա չկանգնի Սերբիայի կողքին:

Բալկանյան և հատկապես սերբ-ավստրիական հակասություններում այդ տարիներին ակամայից վճռական դեր էր բաժին ընկել Ալբանիային:

Անկախ պետականությունից զրկված Ալբանիան բաժանված էր տարբեր ցեղերի ու կրոնների, չուներ ընդհանուր լեզու և գիր: Նրա բազմաթիվ ցեղախմբերը, հին ժամանակներից սկսած, արյան փոխվրեժների մղումով մշտական կռիվների մեջ էին: Այդ ամենը թույլ չէր տալիս ապրել համազգային կյանքով: Ալբանացիների քաղաքակրթական և տնտեսական վիճակը նույնպես շատ խղճալի վիճակում էր: Բայց դրա փոխարեն նրանց առավել կատաղի խմբերը՝ առնաուտները, անհուն նվիրվածությամբ միշտ ծառայում էին Թուրքական պետությանը: Սուլթան-խալիֆները մեծապես վստահում էին նրանց, միայն նրանցից կազմված թիկնապահներին էին անվերապահորեն վստահում իրենց կյանքը:*

Բալկանյան պետությունների, հատկապես Սերբիայի և Հունաստանի կառավարությունները գտնում էին, որ ալբանացիներին պակասում են այն բոլոր նախապայմանները, որոնք անհրաժեշտ են ինքնավար և անկախ պետական գոյության համար, հետևապես արհեստականորեն ստեղծված ալբանական պետությունը անխուսափելիորեն կդառնա չարիքի գործիք Ավստրիայի և Իտալիայի ձեռքին: Ուստի նշված պետությունները հակված չէին թույլ տալու, որ Բալկանյան թերակղզում ստեղծվեր վտանգավոր մի միջնաբերդ, որտեղից Ավստրիան ու Իտալիան կարող էին մահացու դավեր լարել թուրքական բռնապետությունից ազատագրված բալկանյան երկրների դեմ:

Անշուշտ իրավացի չէին սլավոն և հույն այն գործիչները, որոնք ալբաններին մերժում էին ունենալ իրենց պետականու-

---

* *Ալբանիայի բնակչության 70%-ը մուսուլման էր, 20%-ը՝ ուղղափառ քրիստոնյա, 10%-ը՝ կաթոլիկ:*

թյունը: Իրավացի էր «Ազատամարտը», երբ գրում էր. «Ալպանիան իր վերջին արիական և յամառ ապստամբութիւններով յստակօրեն իր կամքն յայտնեց պետական ինքնավար գոյութեան մը համար. հետեւաբար, անիկա նոյնքան իրաւունք ունի ազատ ու անկախ կեանքի մը, որքան միւս պալքանեան ազգերը, ո՛ եւ է բանաւոր հիմ մը չկայ՝ զրկելու զայն այդ իրաւունքէն»[1]:

Ինչպես տեսնում ենք, Բալկաններում ազգային ու քաղաքական հակասություններն այնքան բազմազան էին և այնքան խորը, որ ոչ ոք չէր կարող կանխատեսել դրանց հանգուցալուծման ժամանակը և միջոցները: Դրա պատճառն այն էր, որ այդ հակասությունները ոչ միայն ներքին զարգացումների արդյունք էին: Այդ ընդարձակ տարածաշրջանում ավանդական հակասություններն ու թշնամությունները սնվում էին նաև դրսից: Դրանց բնույթը մեծապես պայմանավորված էր պանիսլամիզմի, պանգերմանիզմի և սլավոնամոլության չահերի կատաղի բախումով:

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Բալկանյան դաշնություն ստեղծելու գաղափարը նոր չէր: Թուրքիայից Բուլղարիայի անկախացումից հետո այն տարբեր առիթներով առաջ էր քաշվում Բալկանների սլավոնական բոլոր երկրներում: Բայց այդ թեման խոսակցական-վերացական մակարդակից այն կողմ չէր անցնում:

Խնդիրն արծարծողների թվում առանձնացավ Սերբիայի վարչապետ **Վլադալեն Գեորգիևիչը**, որը դեռևս 1892 թվականին առաջին անգամ հրապարակ հանեց այդ գաղափարը, իսկ հետագայում իր կյանքի չատ տարիները նվիրեց հարցի հիմնավորմանը և այն համաբալկանյան խնդիր դարձնելուն:

Քննության առնելով բոլոր այն ազգային ու պատմական, միջազգային ու քաղաքական դժվարությունները, որոնք մշտապես կանգնած էին Արևելյան խնդրի լուծման առջև, Վ. Գեոր-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1048, 3 (16) նոյեմբերի 1912 թ.:

գիևիչը հարց էր տալիս, թե արդյո՞ք մի ելք չկա դժբախտ վիճակից դուրս բերելու Բալկանյան թերակղզին: Եվ նա առաջարկում էր այդ միջոցը՝ գտնելով, որ բալկանյան բոլոր երկրները կարող են լինել անկախ, ազատ, քաղաքակիրթ ու երջանիկ, եթե ամբողջ թերակղզին դառնա մեկ հզոր դաշնակցային պետություն Թուրքիայի գլխավորությամբ, իսկ Պոլիսը հռչակվի այդ պետության մայրաքաղաք[1]:

Իր վարչապետության օրերին Գեորգիևիչը նույնիսկ բանակցություններ էր սկսել Աբդուլ Համիդի հետ (1897 թ.), բայց ստացել էր կտրուկ բացասական պատասխան: Սուլթանն ասել էր, թե բալկանյան ազգերի միջև այնքան ուժեղ են հակասությունները, որ ինքը չի հավատում, թե նրանք կցանկանան ընդգրկվել մի դաշնային ընդհանուր պետության մեջ[2]:

Համիդի կողմից մերժում ստանալուց հետո Գեորգիևիչը հույսը կապել էր Ավստրո-Հունգարիայի հետ՝ գտնելով, որ այդ ուղղությամբ կատարվելիք առաջին քայլը պետք է լինի Սերբիայի միացումն Ավստրիային, մանավանդ որ վերջինիս կողմից Բոսնիա-Հերցեգովինայի գրավումից հետո սերբ-խորվաթ ազգի երկու երրորդը արդեն գտնվում է Հաբսբուրգների տիրապետության տակ: Գեորգիևիչի պատկերացմամբ, այդ ընդհանուր պետության մեջ Սերբիան մոտավորապես այն կարգավիճակը պիտի ունենար, ինչպես ինքնիշխան Բավարիան կամ Սաքսոնիան ունեին գերմանական դաշնակցային պետության մեջ: Բայց ավստրիական պետական-քաղաքական գործիչների, այդ թվում Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Էրենթալի հետ հանդիպումները նույնպես ոչ մի արդյունք չտվին[3]:

Արդեն պաշտոնաթող լինելուց հետո Գեորգիևիչը վերջնականապես իր հույսը կապում է Ռուսաստանի հետ՝ հատկապես նկատի ունենալով, որ ռուս ժողովուրդն ազգակից է Բալկանյան թերակղզու ժողովուրդների մեծ մասին: Նրանցից հատկապես Սերբիան՝ Եվրոպայում սլավոնականության գլխավոր սյունը,

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

անվերապահ աջակցություն ցույց կտար Բալկանները միավորելու Ռուսաստանի ջանքերին: Բալկանյան այդ միությունը պատնեշ կլիներ ինչպես հյուսիսային (Ավստրո-Հունգարիա), այնպես էլ հարավային (Թուրքիա) կայսրությունների ագրեսիվ նկրտումների դեմ[1]:

Սլավոն գործիչը գտնում էր, որ, իհարկե, Բուլղարիայի հետ ավելի դժվար կլինի համաձայնության գալ, քանի որ նա ինքն է ուզում տեր դառնալ Մակեդոնիային, որտեղ բնակչության մեծ մասը բուլղար է: Մյուս կողմից բուլղար ժողովուրդը քաջ գիտակցում էր, որ թեև ինքն անկախ պետություն է, բայց նրա առջև մշտապես կանգնած է թուրքական վտանգը, իսկ Ռուսաստանը, ինչպես միշտ, իր հզոր հովանավորն է:

Մնում էր Հունաստանը: Ոմանք համոզված էին, որ նրան կարելի կլիներ Բալկանյան դաշնություն ներգրավել՝ խոստանալով աջակցել Կրետեն և էգեյան կղզիները միավորելու մայր երկրին[2]:

Բալկաններում մնում էր Ռումինիան՝ գերմանական սկզբունքներով միավորված իր մեծ բանակով, որն ըստ էության գտնվում էր Եռյակ զինակցության տրամադրության տակ, և որը կարող էր աղետալի դերակատարություն ունենալ Բալկանյան դաշնակցության համար, եթե դուրս մնար դրանից: Ուստի քանի որ չէր կարելի սպասել, թե Բեսարաբիայի վերքի պատճառով Ռումինիան երբևիցե կմիանար Բալկանյան ստեղծվելիք դաշնությանը, մնում էր հույս փայփայել, որ նա գոնե չեզոք դիրք կբռներ:

Ահա այսպես, հնարավոր էր, որ Բալկանյան դաշնության գաղափարը իրականություն դառնար, բայց այդ նպատակին ուղղված Վ. Գեորգիևիչի ջանքերը այնպես էլ մնացել էին թղթի վրա[3]:

Դարեր չարունակ կպած լինելով Եվրոպային՝ թուրքը եվրոպական մշակույթին մնացել էր անհաղորդ: Փոխարենը նա իրեն

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

անմահացրեց բուլղարական սարսափներով, հայկական կոտորածներով, Լիբանանում թափած արյունով: Զուր չէ, որ մեծ ծերուկ Գլադստոնն ասել էր, թե «Թուրքին քաղաքակրթելու համար պետք է նրանից խլել սուրը կամ Ղուրանը»: Բայց չէր հաջողվել նրանից խլել ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը:

Թեև 19-րդ դարում Օսմանյան կայսրությունը բազմաթիվ ճեղքվածքներ էր տվել, և նրա դժոխային տիրապետությունից ազատագրվել էին մի շարք երկրներ, բայց 20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին նա դեռ կանգուն էր և շարունակում էր պատուհաս մնալ այնտեղ բռնափակված ոչ թուրք ժողովուրդների համար:

20-րդ դարասկզբի Թուրքիան 15-16-րդ դարերի Թուրքիան չէր: Այժմ այդ կայսրության և նրա ավանդական դաշնակիցների (Գերմանիա, Ավստրիա) դեմ Բալկաններում կանգնած էր թափ առնող սլավոնասեր (սլավոնամոլ) շարժումը: Տվյալ պահին **Բուլղարիան** հավակնում էր Բալկաններում դառնալու սլավոնասեր շարժման գլխավոր ուժը՝ երկրորդ գիծ մղելով այդպիսին լինելու Սերբիայի ձգտումները: Զինական տեսակետից նա արդեն դարձել էր ամենաուժեղ պետությունը Բալկանյան թերակղզում և այդ պատճառով նույնիսկ ստացել էր «Բալկանյան Պրուսիա» անվանումը: Հենվելով իր ռազմական և տնտեսական ուժերի վրա՝ Բուլղարիան ի վիճակի էր այդ տարածաշրջանում աննախադեպ սրված հակասությունների հանգուցալուծման գործում գլխավոր դերակատարներից մեկը լինելու: Բայց նա չգնաց այդ ճանապարհով: Հինգ հարյուրամյակների կրած տառապանքներից ու վիրավորանքներից ծնունդ առած վրեժխնդրությունը նրա համար Թուրքիային Բալկաններից վոնդելու կենսական անհրաժեշտություն էր դարձել՝ հենվելով լայն ծավալներ ընդունող սլավոնասեր շարժման վրա:

Բայց Ռուսաստանում կային մեծ թվով հասարակական և քաղաքական գործիչներ, որոնք գտնում էին, որ պետք չէ տուրք տալ բուլղար սլավոնասերների չափազանց ցեղամոլությանը: Նրանցից մեկն արտգործնախարար Սերգեյ Սազոնովն էր, որը շատ զգույշ էր համարյա պաշտոնական դարձած համասլավ քաղաքականություն իրականացնելիս: Սլավոնասիրության

ոլորտում Սազոնովի չափից ավելի զգույշ ու չրջահայաց քաղաքականությունից խիստ դժգոհություն էր առաջացել հատկապես Պետական դումայի աջ խմբակցություններում, որոնք առաջարկում էին անհապաղ հեռացնել նրան և փոխարենը արտգործնախարար կարգել Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկուն, որը համասլավոնականության ջերմ ջատագով էր: Ավելին, Սազոնովի նկատմամբ Մոսկվայում մահափորձ էր նախապատրաստվել, բայց ժամանակին այն բացահայտվել էր[1]:

Այնուամենայնիվ բուլղարների համար միանգամայն պարզ էր, որ թուրքական արյունարբու կայսրության դեմ միայնակ հանդես գալը կարող է անկանխատեսելի ծանրագույն հետևանքների հանգեցնել[2]:

Այդ վտանգավոր հեռանկարը բուլղարական իշխանություններին ստիպեց մտածել Բալկանյան ռազմաքաղաքական դաշնություն ստեղծելու մասին: Այդ ճանապարհին Բուլղարիան, սկսած 1909–1911 թվականներից, ամենից առաջ ստանում էր Ռուսաստանի բարոյական աջակցությունը: Ռուսական դիվանագիտությունը, գաղտնի թե բացահայտ, ջանում էր բալկանյան սլավոն պետությունների միջև զինակցություն գլուխ բերել: Այդ պահին դա էր համագերմանականության առաջապահ Ավստրիայի առաջխաղացման դեմ Եվրոպական Թուրքիայում պատնեշ կանգնեցնելու միակ միջոցը[3]:

Բուլղարիայի երազանքն էր գրավել իր պետական սահմանից հարավ, մինչև Մարմարա ծովի ափերը ընկած, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հողերը: Բայց նրա գերագույն բաղձանքը, այնուամենայնիվ, Կ. Պոլիսն էր:

1911 թ. դեկտեմբերին Սոֆիայի թուրքաց դեսպանությունից չքացել էր դիվանագիտական գաղտնի գրագրությունների տրցակը՝ արժեքավոր փաստաթղթերով, որոնք հնարավորություն էին տալիս ծանոթանալու Թուրքիայի չատ տարիների

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1028, 14 (27) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 1057, 12 (25) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1261, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:

հակաբուլղարական գործունեությանը: Բարձր Դուռը* փաստաթղթերն անհետանալու մեջ մեղադրում էր բուլղար կառավարությանը: Իսկ վերջինս այդ փաստաթղթերից արդեն տեղեկացել էր, որ Թուրքիան պատրաստվում է պատերազմել Բուլղարիայի դեմ[1]:

Թուրքիայի մտադրության մասին տեղեկությունը բուլղարական կառավարությունը չատ հանգիստ ընդունեց: Շատերին նույնիսկ թվում էր, թե Բ. Դոան սպառնալիքը հենց Բուլղարիայի ցանկությունից է բխում:

Հրապարակ էր իջել նաև **Սերբիան**, որը չէր ուզում ճանաչել Ավստրիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի գրավումը: 1908-ին, երբ Թուրքիայում դեռ նոր էր հրատարակվել սահմանադրությունը, Ավստրիան, օգտվելով ստեղծված անորոշությունից, իրեն էր կցել սերբերով բնակեցված այդ երկու տարածքները:

Բոսնիան ու Հերցեգովինան գրավելու ժամանակ Ավստրիան ռազմակալել էր նաև սլավոններով բնակեցված Նովո Բազարի սանջակը, բայց հետո այն վերադարձրել էր Թուրքիային: Շատ չանցած՝ ավստրիական կառավարությունը հայտարարել էր, որ եթե ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ սանջակը Թուրքիայից անցնի սլավոնական որևէ երկրի ձեռքը, ապա ինքը կվերագրավի այն:

Բոսնիան ու Հերցեգովինան գրավելու Ավստրիայի վարչա-

---

* Բարձր դուռ (կամ Ոսկյա դուռ) անվանումը սկիզբ է առել 1326 թվականին, երբ սուլթան Ուրխանը նվաճած Բուրսայում իր համար կառուցել էր տվել մի չքեղ պալատ՝ ոսկեզօծ **բարձր** դարպասներով (**դռներով**): Այդ պալատից էր սուլթանը կառավարում իր տիրույթները: Այդ ժամանակից սկսած՝ թուրքական կառավարությունը ստացել էր Բարձր Դուռ (Ոսկեզօծ դուռ) անվանումը (տե՛ս **А. В. Мезиер**, Турция, С. Петербург, 1907, էջ 20-ի տողատակ): Երբ 1453 թ. թուրքերը գրավեցին Բյուզանդիայի ծիրանածին կայսրերի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, նրանք այն դարձրին Օսմանյան կայսրության մայրաքաղաք: Այստեղ հաստատված թուրքական կառավարությունը չարունակեց կրել «Բարձր դուռ» կամ «Ոսկեզօծ դուռ» անվանումը:

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 285, 22 դեկտեմբերի 1910 թ.:

պետ կոմս Էրենթալի հանդուգն ձեռնարկն այն ժամանակ դիվանագիտական սեղանի վրա էր դրել եվրոպական ընդհանուր պատերազմի հավանականությունը: Այդ երկրների զավթումը վտանգել էր Սերբիայի կենսական շահերը: Նրան ձեռնտու էին, որ նշված երկրները մնային Թուրքիայի կազմում, քանի որ վերջինս մահվան հոգեվարքում էր, և դեպքերի հաջող դասավորության դեպքում կարելի էր նրա ժառանգության մի որևէ կտորի տիրանալ, իսկ Ավստրիայից կամ Գերմանիայից ինչ-որ բան սպասելն անիրական էր: Առայժմ հնարավոր էր համարվում Թուրքիային պատկանող Նովի Բազարի սանջակի գրավումը: Դա սկիզբը կլիներ այն անուրջի իրականացման, որ ուներ Սերբիան: Հոգևոր կապերով իրեն ամենամերձ Զերնոգորիան իրեն միացնելը պետք է լիներ նախերգանքն ամբողջ սերբ ազգի միավորման, որի ընդհանուր թիվը հասնում էր մինչև 10 միլիոնի, և որից սերբական պետության սահմաններից ներս էր միայն 2.5 միլիոնը: Նրա գլխավոր նպատակներից էր ելք ունենալ դեպի ծով: Ժամանակին սերբերը տարածված էին մինչև Ադրիատիկ ծովը: Ալեսիոն (Նախկին Լիեշը) և Այաչը (Տիրացցոն) հին սերբական պետության նավահանգիստներ էին: Եվ ահա այժմ Սերբիան ձգտում էր վերականգնել Հին Սերբիան՝ ազատագրելով Ադրիատիկի ծովափը՝ այդ երկու նավահանգիստներով: Նրան պաշտպանում էին բալկանյան մյուս երեք երկրները: Եվ եթե մի օր իրագործվեր Սերբիայի այս երազանքը, ինչը բնավ անհավանական չէր տվյալ պահին ստեղծված պայմաններում, ապա այդ ժամանակ Ադրիատիկ ծովի ամբողջ Դալմաթիայի ափը պիտի անցներ սերբերի ձեռքը: Պետք չէ մոռանալ, որ Մեծ Սերբիայի ստեղծման և առհասարակ սերբ տարրի քաղաքական ուժեղացման գաղափարը ռուս դիվանագիտության վաղուց ի վեր փայփայած նպատակներից մեկն էր: Ուստի բնական էր սպասել, որ նա իր ձեռքից եկածը պիտի չխնայեր կյանքի կոչելու այդ գաղափարը:

Վճռականապես դեմ կանգնելով դեպի Ադրիատիկ ծով Սերբիայի ձգտմանը՝ Ավստրիան դրանով փորձում էր վերջինիս ուղղորդել դեպի հարավ՝ Էգեյան ծով, իսկ դա դուր չէր գալիս Հունաստանին և Բուլղարիային՝ պատճառ դառնալով բալկան-

յան պետությունների միջև թափ առնող համերաշխության փլուզմանը:

Կ. Պոլսում հրատարակվող «Ժամանակ» թերթը, որպեսզի ցույց տա, որ Սերբիայի ծրագրի իրականացման դեմ կանգնած է Ավստրիան, մեջբերում էր այդ երկրի կառավարության պաշտոնական տեսակետը. «Ադրիականի վրայ սերպ նաւահանգիստ բնաւ չպիտի ըլլայ»[1]:

*Թուրքիայի նկատմամբ պահանջատեր էր նաև **Հունաստանը**: Սա, իր հերթին, սահմանադրության ընդունման օրերին աշխատեց սեփականացնել Կրետեն: Բուլղարիայից և Ավստրիայից բացի՝ Հունաստանը նույնպես աչք էր դրել Մակեդոնիայի վրա: Բայց ամենից շատ նրա հայացքը հառած էր Կ. Պոլսին՝ Բյուզանդիայի երբեմնի հռչակավոր մայրաքաղաքին: Չէ՞ որ նա ժառանգն էր բյուզանդական կայսրության: Հունական թերթերը գրում էին, թե հեռուներից եկած և 1453 թ. Կոստանդնուպոլիսը զավթած Թուրքը, քաղաքը Ստամբուլ վերանվանելով, այնպես տիրաբար ու այնպես ամուր է նստել այնտեղ, կարծես ինքն է կառուցել այն և հավերժ էլ մնալու է իր ձեռքում: Չնայած Կ. Պոլսին տիրանալը և՛ հույնի, և՛ բուլղարի փայփայած իղձն էր, բայց դա չխանգարեց, որ նրանք Թուրքի դեմ հանդես գան համատեղ:*

***Զերնոգորիան** (Գարադաղ, Սև լեռ) Բալկանյան սլավոնների ամենափոքր պետական կազմավորումն էր: Զերնոգորցիները իրենց լեզվով, գրականությամբ, պատմական ավանդույթներով նույն սերբերն էին, ինչպես և՛ բոսնիա-հերցեգովինացիք, խորվաթները, և՛ դալմաթիացիները:*

Չնայած երկիրը փոքր էր և ռազմական տեսակետից թույլ, բայց նրա ինքնակալ Նիկոլա իշխանը լցված էր բուռն ցանկությամբ՝ ժամ առաջ կյանքի կոչելու հակաթուրքական դաշինքը:

Թուրք-իտալական պատերազմից ի վեր Եվրոպայի «զինյալ խաղաղությունն» սկսել էր ենթարկվել ամենօրյա դժնդակ փորձությունների: Երեսուն տարիներ ի վեր արհեստական միջոցներով անշարժ ու անշչուկ պահված Արևելյան խնդիրը

---

[1] ***«Ժամանակ»,*** *№ 1263, 31 հոկտեմբերի (13 նոյեմբերի) 1912 թ.:*

նորից հրապարակ էր գալիս իր հազարումեկ կնճիռներով, և թվում էր, թե այն վերջնական լուծման է սպասում: Այդ նորաստեղծ վիճակը մեծ պետությունների համար հավասարապես վտանգավոր էր դառնում, և նրանք պարտադրված էին վճիռ կայացնելու՝ գործե՞լ, թե՞ ոչ: Վառոդի բլուրների ստորոտներով հոսում էին կրակի գետեր, և նրանք, ովքեր վառոդը չոր պահելը քաղաքական իմաստություն էին նկատում, հիմա լրջորեն խորհելու բան ունեին: Եվրոպական մեծերը տագնապում էին, որ չարժումը կարող է դուրս գալ իրենց վերահսկողությունից և վերածվել Թուրքիայի հետ ընդհարման: Իսկ դա հղի էր համաեվրոպական պատերազմի վտանգով, որից խուսափում էին այդ կայսրությունից բոլոր շահ ունեցողները:

1912 թ. սկզբներից Մակեդոնիան նոր ուժով սկսեց փոթորկվել[1]: Արդեն մայիսին Սոֆիայում սկսվեցին բազմամարդ հանրահավաքներ, որոնց մասնակիցները Թուրքիայից պահանջում էին ինքնավարություն տալ այդ հալածյալ երկրամասին: Դրան զուգընթաց՝ Բալկանյան պետությունները ձեռնարկել էին պատերազմի դիվանագիտական նախապատրաստությունը, որն ամռան վերջերից որոշակի դրսևորումներ ունեցավ[2]:

Բալկանյան մայրաքաղաքներում ծավալվել էր տենդագին գործունեություն՝ փոխայցելություններ, կարծիքների բազմակողմանի քննարկումներ և այլն:

Նկատի առնելով ռուս-բուլղարական ավանդական կապերը և Ռուսաստանի շահերի համընկնումը Բուլղարիայի ձգտումների հետ՝ վերջինիս կառավարությունը պատվիրակություն ուղարկեց Պետերբուրգ՝ Մակեդոնիայի և Արևելյան Թրակիայի հարցերը լուծելու համար ռուսական ցարի օգնությունը հայցելու նպատակով:

Ավստրիայի համար կենաց ու մահու խնդիր էր բալկանյան զինակցության ձևավորումը: Բալկաններում ծագելիք պատե-

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 23 (1101), 1(14) հունվարի 1912 թ.:

[2] Բալկանյան պատերազմների դիվանագիտական նախապատրաստությունների մասին տե՛ս **"Красный архив"**, Том I (VIII), 1925, Госиздат, 1925, Москва-Ленинград, էջ 3-48:

բազմում տուժողը գլխավորապես Ավստրիան էր լինելու: Ուստի պատահական չէր, որ նրա կառավարությունը ամեն ինչ անում էր փոթորկի առաջն առնելու համար՝ ամենից առաջ Ռուսաստանի դիվանագիտական գործողությունները չեզոքացնելու միջոցով: Բայց դա նրան չէր հաջողվում: «Ի՞նչ կլինի Եվրոպական Թուրքիայի հետ» հոդվածում Ֆրիդրիխ Էնգելսը նշել էր, թե եվրոպական տերությունների կողմից իրականացվող status quo-ի քաղաքականությունը սուլթանական իշխանության կողմից Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացում է, որի հետ չէին հաշտվում բալկանյան ժողովուրդները[1]:

«Հորիզոն» թերթի 1912 թ. № 237-ում գրականագետ Նիկոլ Աղբալյանը գրում էր, որ ներկայումս տերությունների մեծ մասն այլևս կասկած չունի, որ հետայդու հնարավոր չէ Բալկաններում «վիճակն անփոփոխ պահել», հետևապես Եվրոպայի այդ մասի քարտեզի վերաձևումն անխուսափելի է:

ՍԵՐԲ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մի շարք կարևոր իրադարձություններ պայմաններ ստեղծեցին, որ թուրքական դարավոր բռնակալությունից ազատագրված Բուլղարիան և Սերբիան 1912 թվականին հակաթուրքական մի նոր շարժում բարձրացնեն Բալկանյան թերակղզում:

Տրիպոլիտանական պատերազմը դեռ չէր վերջացել, երբ թուրքական բռնապետության դեմ ապստամբեցին Սամոս և Իկարիա կղզիների հույները: Միևնույն ժամանակ իրենց գործողություններին նոր թափ հաղորդեցին մակեդոնական չետաները: Հակադարձելով թուրքերը նոր լայնածավալ արյունահեղություններ սարքեցին Մակեդոնիայում, որը մեծ զայրույթ առաջ բերեց բալկանյան ժողովուրդների շրջանում:

Այս պայմաններում բուլղարական կառավարությունը, տոգորված Բալկանյան թերակղզում կայուն և տևական խաղաղու-

---

[1] *Տե՛ս* ***Կ. Маркс, Ф. Энгельс,*** *Соч., I изд., т. IX, էջ 393:*

թյուն հաստատելու ցանկությամբ, դիմեց Թուրքական կողմին՝ առաջարկելով Մակեդոնիային տալ ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում*, որից հետո դաշնակցային սկզբունքով Բալկաններում ստեղծել մի նոր պետություն, որի մեջ կմտնեին Թուրքիան, Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան, Մակեդոնիան և Չերնոգորիան: Բայց Թուրքական կառավարությունը կտրականապես մերժեց առաջարկը:

Ահա այդ պահին էր, որ Բալկաններում պատերազմի նախապատրաստությունը մտավ գործնական փուլ:

Արդեն բավական ժամանակ էր, որ պետությունների դեսպանները և դեսպանախորհրդակցությունները փոխարինվել էին եվրոպական վեհապետների այցելություններով ու հանդիպումներով, որոնք այնքան մեծ ազդեցություն էին ունենում ազգերի ճակատագրի վրա:

1911 թ. ապրիլի 26-ին Սերբիան Բուլղարիային առաջարկեց Թուրքիայի դեմ համատեղ գործողություններ սկսել՝ հայտարարելով, որ «բավականին հարմար են գտնում պահը՝ Մակեդոնիայում ապստամբությանը սատարելու, ստեղծված իրավիճակից օգտվելու և Թուրքիային պատերազմ հայտարարելու համար, ինչով էլ վերջապես կլուծվի արևելյան հարցը»[1]: Սերբիայի այս առաջարկի մասին չուտով տեղեկացան նաև Պետերբուրգում, ինչը առաջ բերեց ռուսական կառավարության խիստ անհանգստությունը:

Բալկանյան դինակցության առաջին գործնական հիմքերը դրվեցին 1911 թ. հոկտեմբերի 11-ին՝ Բուլղարիայի վարչապետ Ի. Գեչովի և այն ժամանակ Սերբիայի վարչապետ Մ. Միլովանովիչի միջև Սերբիա-Բուլղարիա գնացքում տեղի ունեցած տեսակցության ընթացքում:

Նախախնամությունն այդ երկու սլավոն գործիչների վրա էր դրել դեռևս օսմանյան բռնակալ լծի տակ գտնվող բալկանյան

---

* Թուրքերի կողմից 14-15-րդ դարերում վերջնականապես նվաճված Մակեդոնիան բաժանվել էր երեք վիլայեթների՝ Բիտոլիի (ք. Մոնաստիր), Կոսովոյի (ք. Ուսկյուբ կամ Սկոպլե) և Սալոնիկի (ք. Սալոնիկներ կամ Սոլուն)

[3] **Տե՛ս А. А. Могилевич, М. Э. Айрапетян**, *На путях к мировой войне 1914-1918 гг., ОГИЗ, Государственное издательство политической литературы, М., 1940,* **էջ 102:**

ժողովուրդների ազատագրության սկզբնավորումը:

Սերբ և բուլղար կառավարությունների ղեկավարների նպատակն էր վերջ դնել իրենց միջև առկա երկարատև տարաձայնություններին և իրադարձությունների բարեհաջող դասավորության պահին համատեղ ուժերով Թուրքիայի բռնակալումից ազատագրել հիմնականում սլավոններով ու հույներով բնակեցված Մակեդոնիան և այն բաժանել ազդեցության շրջանների: Այդ ժամանակ Միլովանովիչի և Գեչովի մտքով բնավ չէր անցնում, թե չատ չուտով՝ ուղիղ մեկ տարի հետո, իրենց երկրները միասնաբար զենք են վերցնելու Թուրք դավթիչների դեմ: Թեև Սերբիայի և Բուլղարիայի ղեկավարների այդ առաջին հանդիպման ժամանակ չստորագրվեց որևէ փաստաթուղթ, բայց տեսակցությունն ապարդյուն չանցավ:

Հարկ է նշել, որ Գեչովի և Միլովանովիչի միջև բանակցությունները, որոնք տևեցին մոտ վեց ամիս, հարթ չէին ընթանում: Երկու պետությունների կառավարությունների միջև խոշոր տարաձայնություններ կային Թուրքիայից ապագա տարածքային ձեռքբերումների վերաբերյալ: Մասնավորապես և՛ Սերբիան, և՛ Բուլղարիան հավակնում էին ողջ Մակեդոնիային: Բուլղարական կողմը գտնում էր, որ այնտեղ գերակշռում է բուլղար բնակչությունը, իսկ սերբերը հակառակն էին պնդում:

Ի վերջո երկու կողմերը եկել էին այն համոզման, որ իրենց վեճերը կարելի կլինի հարթել Թուրքական լծից Մակեդոնիայի վերջնական ազատագրումից հետո:

Նույն թվականի դեկտեմբերին Գեչովի նախաձեռնությամբ այս անգամ Սոֆիայում տեղի ունեցավ երկու երկրների ղեկավարների երկրորդ հանդիպումը: Տեսակցության ժամանակ նրանք քարտեզի վրա իրարից զատեցին Մակեդոնիայի ծայրամասերի այն տարածքները, որոնք սերբերի և բուլղարների միջև երբեք վեճի առարկա չէին եղել: Այնուհետև դրանց արանքում ընկած լայն երկրամասը, այսինքն՝ Վարդար գետի երկու կողմերը, նրանք բաժանեցին Սերբիայի և Բուլղարիայի միջև: Մի քանի վիճելի տարածքների պատկանելիության հարցը նրանք թողեցին ռուսաց ցար Նիկոլայ II-ի հայեցողությանը:

Քարտեզի վրա Մակեդոնիան ազդեցության շրջանների բա-

ժանելուց հետո սերբ և բուլղար ղեկավարների հրահանգով կազմվեց դաշնագրի մի տեքստ, որը ներառում էր «երրորդ պետության», այսինքն՝ Թուրքիայի դեմ հարձակողական ու պաշտպանական կռիվների ենթադրյալ ծրագրեր:

1912 թ. մարտի 1 (13)-ին Սոֆիայում կնքվեց բուլղար և սերբ, այնուհետև բուլղար և հելլեն զինակցությունը: Դարձյալ Սոֆիայում ստորագրվեց Բուլղարիայի և Չերնոգորիայի միջև զինակցություն: Այստեղ մշակվում էին նաև Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ վարելու մանրամասները[1]:

Բալկանյան երկրների ղեկավարների առանց միջնորդների հանդիպումներն է՛լ ավելի հաճախակի դարձան 1912 թ. երկրորդ կեսին: Մտքեր էին փոխանակվում այն հարցի շուրջ, թե արդյոք հնարավոր է միասնաբար հանդես գալ, եթե համաեվրոպական պատերազմ բռնկվի, և արդյոք նախադրյալներ կան նախաձեռնող քաղաքականություն վարելու Թուրքիայի հանդեպ, որը չարունակում էր մնալ հիմնական վտանգը ողջ Բալկանների համար:

Դեռ նախքան Տրիպոլիտանական պատերազմը երիտթուրքերը ռազմական պատրաստություններ էին տեսնում մեկ Բուլղարիայի, մեկ Հունաստանի, մեկ Սերբիայի դեմ: Երիտթուրք կառավարության ռազմաշունչ տրամադրությունը արագորեն փոխանցվում էր Թուրք զանգվածներին[2]:

Ի՞նչ էին Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը տակավին 25-30 տարի առաջ՝ Թուրքական տիրապետության տակ գտնվող հետամնաց, օգնության կարոտ երկրներ: Բայց այն հանգամանքը, որ նրանք նվիրվեցին չինարար աշխատանքի, նրանց թույլ տրվեց օգտվել եվրոպական առաջադիմության պտուղներից: Անցած տարիներին նրանք կարողացել էին ուժ ամբարել: Նախկինում արհամարհված այդ փոքր պետություններն արդեն հասել էին զարգացման այն աստիճանին, որ ամենքը հարգանքով էին վերաբերվում նրանց: Բալկանյան թույլ երկրներն արդեն զորություն էին ներկայացնում:

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1326, 2(15) Հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Հորիզոն»**, № 128, 13 Հունիսի 1910 թ.:

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ» ՍՏԵՂԾՈՒՄԸ

Այդ ամենից հետո ի վերջո գլուխ եկավ բալկանյան չորս երկրների «Պաշտպանության դաշինքի» ստեղծումը, որի հեղինակներ դարձան բալկանյան երկրների միապետները՝ Ֆերդինանդը (Բուլղարիա), Պետարը (Պյոտր) (Սերբիա), Նիկոլան (Չերնոգորիա), Գևորգը (Հունաստան): Չորս պետություններին միավորում էր Թուրքական դարավոր բռնապետության հանդեպ նրանց այրող ատելությունը: Հույն նախարար Էլեֆտերիոս Վենիզելոսի և բուլղարական բանակի չտաբի գեներալ Իվան Ֆիչևի գլխավորությամբ կազմվեց Թուրքիայի դեմ պատերազմի մանրամասն ծրագիր, որը հավանության արժանացավ Բալկանյան դաշնակից բոլոր չորս երկրների բարձրագույն ղեկավարների կողմից, որոնք պայմանավորվեցին խիստ գաղտնի պահել կնքված համաձայնությունները: Այդ գաղտնի դաշնագրի համաձայն՝ 1) Եթե Թուրքիան այդ երկրներից որևէ մեկի վրա հարձակվեր, մյուս երեքը պարտավոր էին պատերազմ հայտարարել նրան, 2) Պատերազմի արդյունքում Մակեդոնիան պետք է ազատագրվեր Թուրքական լծից, ստանար ինքնավարություն, ունենար իր իշխանն ու սեփական բանակը և վայելեր Բուլղարիայի հովանավորությունը, 3) Եպիրոսը (Յանյան) անցնելու էր Հունաստանին, իսկ Հին Սերբիան բաժանվելու էր Սերբիայի թագավորության և Չերնոգորիայի միջև, 4) 1912 թ. Սերբիան ուներ 2.9 միլիոն բնակչություն, Բուլղարիան՝ 4.3 միլիոն, Հունաստանը՝ 2.6 միլիոն, ընդհանուր առմամբ՝ 10 միլիոն: Դրա դիմաց Օսմանյան տերությունն ուներ 26 միլիոն բնակչություն[1]: Բնակչության թվին համեմատ՝ պատերազմի պարագային Բուլղարիան զենքի էր կանչելու 300.000, Սերբիան՝ 200.000, Հունաստանն ու Չերնոգորիան 80.000-ական մարդ՝ միացյալ ուժերով Թուրքիան կործանելու համար, 5) Սալոնիկն անցնելու էր բոլորի տրամադրության տակ[2]:

---

[1] Տե՛ս **Еджидио Иветич**, Балканските Войн, София, 2012, էջ 35, 69:

[2] Տե՛ս **«Աւետարեր»**, № 41, 12 հոկտեմբերի 1912 թ.:

Բալկանյան զինակցության պայմանագիրը կնքվեց 25 տարով[1]:

«Բալկանյան թերակղզին բալկանյան ժողովուրդներին». այս էր չորս զինակիցներին միացնող հիմնական սկզբունքը: Նրանք միավորվեցին կենաց ու մահու պայքարի մեջ մտնելու օսմանյան լծի տակ տառապող իրենց ցեղակիցների ազատագրության և արժանապատվության համար[2]: Բալկանյան դաշինքի չորս պետություններին միավորել էր դարավոր ատելությունն ամեն ինչ ամայացնող թուրքական տիրապետության հանդեպ:

Ընդհանուր կարծիքն այն էր, որ Բալկանյան դաշնությունը՝ որպես Եվրոպայի կողքին գոյացած ուժ, դառնալու էր եվրոպական մի նոր մեծ պետություն՝ զորավիգ լինելով Եռյակ համաձայնությանը:

Ռուսական դիվանագիտությունը ոչինչ չէր խնայում կյանք առած Բալկանյան դաշնության հիմքերն ամրապնդելու և Բալկանները դաշնային միասնական պետության վերածելու համար: Նրա առջև ուրվագծվում էր ապագա այդ պետությունը՝ իր 16 միլիոնի չափ ազգաբնակչությամբ և ռազմական մեծ ուժով: Թեև Ռումինիան կտրականապես մերժել էր մտնել բալկանյան չորս երկրների դաշնության մեջ, բայց Ռուսաստանն ամեն կերպ փորձում էր նրան վերցնել Ավստրիայի գրկից և մոտեցնել այդ դաշինքին, որի շնորհիվ դաշնության երկրների բնակիչների թիվը կավելանար 8 միլիոնով, և այդ ընդհանուր համախմբումի բնակչության թիվը կհասներ 18 միլիոնի: Այսպիսով Բալկանները կվերածվեր եվրոպական յոթերորդ մեծ տերության: Բայց այդ բանը տեղի չունեցավ:

Մինչև վերջին պահը, այսինքն՝ մինչև զորահավաքի սկսվելը, պետությունների կառավարությունները, բացառությամբ Ռուսաստանի, անտեղյակ էին Բալկանյան զինակցության մասին, որովհետև, ինչպես ասվեց, բալկանյան դաշնային երկրների

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1045, 1 նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս “Вестник Европы”, № 1, январь, 1913, էջ 345:*

ղեկավարները պայմանավորվել էին խիստ գաղտնի պահել իրենց միջև ստեղծված ռազմական դաշինքը և բարեխղճորեն կատարում էին իրենց խոստումը: Նշենք նաև, որ ոչ ոքի մտքով չէր անցնում, թե հնարավոր է որևէ միության ստեղծումը մշտապես միջէթնիկական հակասություններով լի Բալկանյան թերակղզում, ուր բոլորը միմյանց հակառակորդ էին: Նշանավոր տնտեսագետ Ռուբեն Բերբերյանի խոսքերով ասած՝ «Բալկանեան թերակղզին մի տեսակ քաղաքական կաթսա էր դարձած, որտէղ եփւում էին մակեդոնացի, յոյն, բուլգար, սերբ եւ թուրք տարրերը...»[1]:

Բալկաններն անչեջ կրակ էր՝ մերթ մարող, մերթ բոցավառվող: Թուրք դիվանագետներից մեկը բալկանյան պատերազմի սկսվելու լուրն առնելուց հետո ասել էր, թե ոչ մեկը չէր հավատում, որ Հունաստանը երբևիցե կարող է ձեռք մեկնել Բուլղարիային կամ Զերնոգորիային, ուստի երբ եվրոպական թերթերը ծանուցեցին Բալկանյան զինակցության մասին, ամեն մարդ բավականացավ միայն ուսերը թոթովելով[2]:

Թե դաշնակից երկրների ղեկավարներն ինչպես էին կարողացել զինակցությունը գաղտնի պահել, երևում էր թեկուզ նրանից, որ մինչև պատերազմի սկսվելը բուլղարական նախարարներից ոչ մեկը չգիտեր, որ գոյություն ունի ռազմական որևէ պլան: Զորքերի հրամանատար Սավովն արդեն գրպանում ուներ պատերազմ հայտարարելու ժամկետի մասին Ֆերդինանդ թագավորի գրավոր հրամանը, բայց դրանից ոչ մի տեղեկություն չուներ նախարար-նախագահ Գենադիևը: Գեներալ Ֆիչևի և Վենիզելոսի կազմած ռազմական ծրագրի ու պատերազմն սկսվելու ժամկետի մասին տեղեկություն չուներ նաև ռուսական դիվանագիտությունը, որովհետև վախ կար, թե անզգույշ միջամտությամբ նա կարող է վնասել գործին, թեև ռուսական դիվանագիտությունն էր դաշինքի ստեղծման գլխավոր գաղտնի ոգեշնչողը: Առանց Ռուսաստանի բացահայտ թե քողարկված

---

[1] ***«Հայրենիք»***, *№ 6 (210), ապրիլ, 1940, էջ 62:*

[2] *Տե՛ս* ***«Ժամանակ»***, *№ 1261, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:*

միջամտությունների դժվար թե համաձայնություն գոյանար միմյանց նկատմամբ կրոնական և ազգային ատելությամբ լցված բալկանյան ազգերի միջև, որոնք դեռ երեկ, Թուրքերին թողած, բզկտում էին իրար:

Բուլղարիան և Սերբիան իրենց անկախության վաղորդայնին իսկ պատերազմ էին մղել միմյանց դեմ: Հույներն ու բուլղարները տակավին մի քանի տարի առաջ իրար ջարդում էին: Սերբերն ու չերնոգորցիները, հակառակ իրենց արյունակցության, մշտապես միմյանց նեղում էին, անպակաս էին փոխադարձ սպանությունները: Պատահական չէ, որ Բալկանները համարվում էր «Եվրոպայի վառոդե տակառ»: Բայց ինչպե՞ս հնարավոր դարձավ մի նպատակի շուրջ գլուխ բերել այս այլամերժ և իրարատյաց պետությունների միությունը, ինչպե՞ս կարողացան գոյացնել մի միասնական գաղափար՝ մի կողմ դնելով իրենց երեկվա ոխն ու քենը և համախումբ ու միաբան կռվի ճակատ հարդարել: Պատճառը մեկն էր. նրանք բոլորն ունեին ընդհանուր թշնամի:

Ոգեշնչելով բալկանյան դաշնության գաղափարը՝ Ռուսաստանը ցանկանում էր լուծել երկու քաղաքական կարևորագույն խնդիր. 1) Սլավոնական ազգերի մի ուժեղ պատնեշով փակել գերմանական արշավի ճանապարհը դեպի Մերձավոր Արևելք և Թուրքիայի ասիական նահանգները գրավելու համար պատրաստել նախադրյալներ, 2) Բալկանյան դաշնության միջոցով հարավից սպառնալ Ավստրո-Հունգարիային, որը, ինչպես ասվեց, ձգտում էր գրավել Սալոնիկը և դուրս գալ Միջերկրական ծով:

Բնական ծավալման ընթացքում Բալկանյան դաշնությունը իր հերթին, անտարակույս, ի վերջո իրեն դաշնակից պիտի գտներ հանձինս սլավոնական Ռուսաստանի և այն պետությունների (Անգլիա և Ֆրանսիա), որոնք թշնամի էին Գերմանիային: Այդ էին թելադրում թե՛ նրա աշխարհագրական դիրքը և թե՛ քաղաքական նպատակները:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԴԻՐՔԸ

Բուլղարական կառավարությունը Ռումինիային առաջարկեց մտնել Բալկանյան դաշինքի մեջ: Ռումին ժողովրդի մեկ երրորդը գտնվում էր Ավստրո-Հունգարիայի սահմաններում: Այս թիվը թերևս չատ ավելի էր այն ռումիններից, որոնք գտնվում էին Ռուսաստանի սահմաններում՝ Բեսարաբիայում: Եվ եթե Ռումինիան միանար Բալկանյան դաշնությանը, որին պաշտպան էր կանգնած Ռուսաստանը, ապա այդ դեպքում ապագայի լայն հեռանկարներ կբացվեին նրա համար՝ Ավստրիայից խլելու ռումիններով բնակեցված տարածքները:

Որպես «Ազատամարտի» թղթակից Կ. Պոլսից Բալկաններ գործուղված Հակոբ Սիրունին իր թերթին հաղորդում էր, որ ռումինական համարյա բոլոր թերթերը մեծ գովեստով են գրում բուլղար ժողովրդի քաջակորով կեցվածքի մասին, միաժամանակ իրենց կառավարություններին կոչ են անում ամեն տեսակի օգնություն ցույց տալ նրան:*

Ի տարբերություն երկրի հասարակական կարծիքի՝ Ռումինիայի կառավարությունը բռնեց միանգամայն հակառակ դիրք: Նա սկզբից կտրուկ մերժեց միանալ դաշինքին, նաև տեղեկացրեց, թե չի աջակցելու պատերազմող կողմերից ոչ մեկին: Բայց ընդամենը մեկ չաբաթ անց նրա պաշտոնական ներկայացուցիչները բացեիբաց հայտարարեցին, թե պատերազմը սկսվելուն պես Ռումինիան կռվի ճակատ է բացելու Բուլղարիայի դեմ,

---

* *Նշենք, որ այդ ժամանակ Կ. Պոլսում հրատարակվող բազմաթիվ հայկական թերթերից հատկապես առանձնանում էր ՀՅ դաշնակցության «Ազատամարտը», որին վիճակված էր առաջատարի դեր կատարելու Թուրքահայ մամուլի ընտանիքում: «Ազատամարտի» չուրջը համախմբված էին պոլսահայ մտավորականության լավագույն ուժերը: Բայց մայրաքաղաքում՝ Իթթիհադի քթի տակ, թեկուզ նրա «բարեկամ» Դաշնակցության կողմից հրատարակվող թերթը «Ազատամարտ» կոչելը չատերը լրջախոհության պակաս էին համարում: Թուրքերը հարց էին տալիս. օսմանյան ազատ պետության մեջ ո՞ւմ դեմ է ուղղված այդ ազատամարտը, արդյո՞ք այդ պետությունից ազատվելու և անջատվելու խնդիր ունի Թուրքահայությունը, մի բան, որ միաբերան ժխտում էին բոլոր հայ քաղաքական ուժերը և առաջին հերթին՝ Դաշնակցությունը:*

քանի որ նրա հետ ունի տարածքային վեճեր: Նրանք պատմական իրավունք էին առաջադրում Բուլղարիայի կազմում գտնվող հիմնականում ռումին բնակչություն ունեցող Սիլիստրիայի նկատմամբ և վճռականություն հայտնում, որ առիթը ներկայանալու դեպքում իրականացնելու են իրենց այդ իրավունքը[1]:

Եվ հիրավի. ռումինական զորքերը հրաման ստացան դիրքեր գրավելու բուլղարական սահմանին:

«Ազատամարտը» հաղորդում էր, որ Ռումինիան սկսել է իր զորքերը համախմբել ոչ միայն բուլղարական, այլև ռուսական սահմանագլուխներին[2]: Մամուլի ուրիշ օրգաններ նշում էին, որ թեև Ռումինիայի և Թուրքիայի միջև չկա բարեկամության մասին համաձայնագիր, բայց եթե պատերազմ սկսվի, և Թուրքերի գործերը հաջող ընթանան, ապա շատ հավանական է, որ Ռումինիան անգործ չի մնալու և ռազմական գործողություններ է ձեռնարկելու բալկանյան սլավոն երկրների դեմ[3]: Պատահական չէր, որ նա այդ նպատակով վերջին մեկ-երկու ամիսներին հսկայական քանակի զենք (հատկապես թնդանոթներ և գնդացիրներ) էր գնել Գերմանիայից և Ավստրո-Հունգարիայից:

Բուխարեստում Բուլղարիայի դեսպանը Ռումինիայի կառավարության արտգործնախարարությանը հարցում էր արել այդ սպառազինումների մասին: Արտգործնախարարը պատասխանել էր, թե տեսնելով, որ բալկանյան մյուս երկրները զինվում են առանց իր երկրին տեղյակ պահելու, ուստի ինքը նույնպես ձեռնարկել է իր բանակի համալրումն ու զինումը, մանավանդ որ Ռումելիի Թուրքական նահանգներում ունի բազմաթիվ հպատակներ, որոնց պարտավոր է աջակցել պատերազմական ընդհարման դեպքում[4]:

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 54, 12 դեկտեմբերի 1912 թ., նաև՝ **«Բութանիա»**, № 9 (1055), 10(23) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, 20 սեպտեմբերի (3 հոկտեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում, 21 սեպտեմբերի (4 հոկտեմբերի) 1912 թ.:

Ռումինիայի այդ պատասխանից հետևում էր, որ նա բոլոր միջոցներով շարունակելու է Բուլղարիայի դեմ պատերազմի նախապատրաստությունը: Թիկունքում ունենալով լավ զինված նման հավանական հակառակորդ, որի չեզոքության տարտամ հավաստիացումները որևէ վստահություն չէին ներշնչում, Բուլղարիան սրընթաց գնում էր դեպի պատերազմ[1]:

Ռուսաստանն ամեն ինչ անում էր, որպեսզի այդ տագնապալի պահին Ռումինիային մղեր չեզոքության: Բայց Բուխարեստը շարունակում էր չարձագանքել այդ հորդորներին, ուստի Պետերբուրգը սպառնաց պատժամիջոցներով և զորքեր կենտրոնացրեց Ռումինիայի սահմանագլուխներին:

Դա բավական եղավ ջլատելու ռումինական կառավարության կորովը: Ռուսաստանը մի ծանուցագրով Ռումինիայից պահանջեց տեղից չշարժվել և պահպանել կատարյալ չեզոքություն, և եթե ռումինական զորքը մտնի Բուլղարիայի տարածք, այդ ժամանակ ռուսական զինված ուժերը հարկադրված կլինեն արշավելու այդ երկրի սահմանագլխից ներս[2]:

Թղթակից Հակոբ Սիրունին իր թերթին նաև հաղորդում էր, որ սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսից մի պատվիրակություն է հասել Բուխարեստ, որը Ռումինական կառավարությանը հորդորել է միանալ Թուրքիային, բայց նա, ռուսական սպառնալիքից դրդված, պատասխանել էր, որ իրենց դիրքը կախված է Ավստրիայի և Գերմանիայի վճռից, բայց մինչև հիմա նրանք իրենց կարծիքը չեն հայտնել Բալկաններում հնարավոր պատերազմի մասին, ուստի և Ռումինիան պատրաստ չէ որևէ երկրի աջակցության խոստումներ տալու[3]:

---

[1] *Տե՛ս* ***В. А. Жебокрицкий****, Болгария накануне Балканских войн 1912-1913, Киев, 1960, էջ 232:*

[2] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1008, 24 սեպտեմբերի (5 հոկտեմբերի) 1912 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Պատերազմի նախօրերին տեղի ունեցող անցքերին եվրոպական տերությունները առաջին պահին վերաբերվում էին բավական հանգիստ, որովհետև համոզված էին, որ սահմանադրական նոր ռեժիմով ապրող Թուրքիան, որը գերմանացի հրահանգիչների չնորհիվ ունի նաև վերակազմված բանակ, անկասկած կհաղթի իր հակառակորդ բալկանյան դաշնակիցներին, և այն ժամանակ անհրաժեշտ կլինի ջանք գործադրելու հաղթանակած Թուրքիայից վերջիններիս փրկելու և բալկանյան քրիստոնյաների լայնատարած կոտորածները կանխելու համար:

Գերմանական թերթերը գրում էին, որ բալկանյան պատերազմը սանձազերծվել է ռուսական գաղտնի ցանկության համաձայն, ուստի Գերմանիան և Ավստրիան չեն կարող սլավոններին թույլ տալ ոչնչացնել Թուրքիան:

Սլավոն եղբայրների հանդեպ Ռուսաստանում, հիրավի, կար մեծ համակրանք, և այն աստիճանի, որ մինչև իսկ երկրի ազատական տարրերը, որոնք ընդհանրապես հակառակ էին արտաքին նվաճողական քաղաքականությանը, կողմնակից էին Թուրքիայի նկատմամբ ռուսական ազգի զգացմունքները կոնկրետ գործողությունների վերածելու[1]:

Ռուսաստանում բռնկված համասլավոն բուռն շարժումը տագնապի էր մատնել ոչ միայն Եոյակ զինակցության երկրներին, այլև Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիային և Ֆրանսիային:

Բոլոր հինգ տերությունների կառավարությունները Պետերբուրգին հորդորում էին սլավոնամոլ հորձանքի առաջն առնել, քանի որ դա կարող էր պատճառ դառնալ համաեվրոպական պատերազմի:

«Ազատամարտը» գրում էր, որ չնայած Պետերբուրգի հավաստիացումներին՝ Թուրքիան վախ ուներ, թե Ռուսաստանը կարող է հարձակում գործել Կ. Պոլսի ուղղությամբ, մանավանդ

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1004, 20 սեպտեմբերի (3 հոկտեմբերի) 1912 թ.:*

ռուս հասարակության մի մասը համառորեն դա էր պահանջում: Հասարակության այդ հատվածի տրամադրությունների առավել ցայտուն արտահայտիչը "Новое Время" թերթն էր, որը խիստ քննադատության էր ենթարկում արտգործնախարար Սերգեյ Սազոնովին՝ որպես ծայրահեղ խաղաղասերի, և պահանջում էր անհապաղ պատերազմ հայտարարել «չարիքի պետությանը»[1]:

«Դրությունը չափազանց լուրջ է, սլավոնական հոսանքը պետք է կանգնեցնել ինչ էլ որ լինի՝ ճանապարհը դեպի Մեր-ձավոր Արևելք պետք է ազատ լինի»,- այս էր ավստրիական և գերմանական մամուլի հրապարակումների կարգախոսը: Մի-ջազգային խնդիրների գերմանացի տեսաբաններն զգուշացնում էին, որ բալկանյան կռվից կարող է համաշխարհային հրդեհ ծա-գել, ուստի տվյալ պայմաններում Գերմանիայի առաջին խնդիրն է Տրիպոլիտանական պատերազմից անմիջապես հետո Թուր-քիային հաշտեցնել Իտալիայի հետ, որպեսզի միավորված Գեր-մանիան, Ավստրիան, Թուրքիան, Իտալիան և Ռումինիան կարո-ղանան դիմակայել սլավոնների և նրանց համակիր եռակողմ համաձայնության պետությունների (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա) միացյալ ուժին:

Գերմանիան և նրա դաշնակիցները համոզված էին, որ թեև ռուսական կառավարության մեջ տվյալ պահին պատերազմի միահամուռ կոչեր չեն հնչում, բայց երկրում սլավոնասեր հոսանքն այնքան ուժեղ է, որ այդ կառավարությունը չի կարող երկար ժամանակ դիմանալ նրա ճնշմանը:

Հիրավի, ռուսական կառավարության մեջ առանձնանում էր չափազանց զգույշ գործիչների մի փոքր խումբ՝ արտգործնա-խարար Սերգեյ Սազոնովի գլխավորությամբ, որը դեմ էր Բալ-կաններում պատերազմի սանձազերծմանը:

«Ազատամարտը» հաղորդում էր, որ Սերգեյ Սազոնովը Լոնդոնում եղած ժամանակ այնտեղի բուլղար դեսպանին ասել է, թե Ռուսաստանը ոչ մի պատասխանատվություն չի ստանձ-նի, եթե Բուլղարիան որևէ գործողություն ձեռնարկի Թուրքիայի

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1031, 17 (30) հոկտեմբերի 1912 թ.:*

դեմ[1]: Արտգործնախարարի այդ խոսքերը ցասումի իսկական փոթորիկ էին առաջացրել ռուսական աջ մամուլում՝ "Новое Время"-ի գլխավորությամբ:

Սազոնովի տեսակետին, թեև ոչ բացահայտ, համակրում էր Նիկոլայ II ցարը, ուստի սլավոնասերների հարձակումներն ի վիճակի չեղան սասանելու արտգործնախարարի դիրքերը:

Ռուսական կառավարության զգուշավորությունը երկչոտություն դիտելով՝ բալկանյան սլավոնական կառավարությունները դժգոհում էին նրանից: Պետերբուրգին անհամաձայնություն էր հայտնում հատկապես բուլղարական մամուլը՝ քննադատության ենթարկելով առանձնապես արտգործնախարարի բռնած դիրքը: Աջ մամուլը միաժամանակ հիացմունք էր արտահայտում Ռուսաստանում կրկին թափ առած սլավոնասիրական շարժման և նրա ղեկավարների, ռուսական մամուլի գերակշիռ մասի վճռականության հանդեպ:

Բալկանյան դաշնության հիմնական ուժը և Թուրքիայի ամենահետևողական թշնամին Բուլղարիան էր: Որպես մղձավանջ նա նստել էր օսմանյան պետության կոկորդին, որից ազատվելը հեշտ բան չէր: Բուլղարների համարձակությունն ու վճռականությունը թելադրված էին ոչ միայն թուրքական բռնապետության դեմ դարերի ընթացքում նրանց մեջ ամբարված այրող ատելությամբ, այլև նրանով, որ իրենց երկիրն ուներ ոչ միայն պաշտպանության, այլև հարձակողական գործողությունների նպաստավոր պայմաններ: Երկրի գրեթե ամբողջ հարթավայրային սահմանագիծը մի զանգվածային լեռնաշղթա էր, բնական մի պատնեշ՝ մի քանի միջանցքներով միայն: Այդ լեռնաշղթայի առջև փռված էր Արևելյան Ռումելիայի նահանգը՝ մի ընդարձակ զառիթափ:

Ի տարբերություն Բուլղարիայի՝ Թուրքիայի բալկանյան տիրույթների աշխարհագրական պայմանները խիստ աննպաստ էին: Տերության տնտեսական և մշակութային այդ ամենակարևոր հատվածներից մեկը նեղ ու երկարաձիգ երկրամաս էր՝

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1001, 15 (28) սեպտեմբերի 1912 թ.:

ռազմական առումով թույլ պաշտպանված:

Եվրոպական Թուրքիան բաժանված էր 6 վիլայեթների՝ ***Օդրինի*** *(Էդիրնե, Ադրիանուպոլիս), որը ներառում էր ողջ Թրակիան,* ***Սոլունի*** *(ներառում էր Էգեյան Մակեդոնիան և Արևելյան Ռոդոպները),* ***Կոսովոյի*** *(Կոսովոն նրա գլխավոր քաղաք Ուսկյուբով (Սկոպլե) և Վարդարյան (Մակեդոնիան),* ***Մոնաստիրի*** *(ներկայումս՝ Բիտոլիա, որը գտնվում է Մակեդոնիայի և ալբանական հողերի միջև),* ***Շկոդրայի*** *(Թուրքերեն Իսկոդրա), որը համապատասխանում է ներկայիս Հյուսիսարևմտյան Ալբանիային,* ***Յոանխանայի*** *(Յանինա, Յանիյա), որը ներառում էր Հարավային Ալբանիան և Էպիրոսը[1]:*

Ռազմագետներից շատերը գտնում էին, որ Բալկանների բնական պայմանները որքան էլ աննպաստ են օսմանյան զորքի համար, բայց դրությունը Թուրքիայի համար բոլորովին հուսահատական չէ, որովհետև նա ունի բնակչության և զորքի թվական առավելություն: Նրանց կարծիքով, Թուրքերը ուշադրության արժանի միայն մի թշնամի ունեն՝ Բուլղարիան: Բալկանյան թերակղզու մակերևութային մեծ խոչընդոտների պատճառով հունական զորքերը ի վիճակի չեն լինի արագորեն միանալու բուլղար զորքին, հետևապես ուժերի մի փոքր թվով կարելի էր կասեցնել նրանց առաջխաղացումը և բուլղարներին զրկել օգնական ուժերից:

Ինչ վերաբերում էր սերբերին, ապա նրանք կարող էին հաջողություն ակնկալել, եթե ի վիճակի լինեին իրենց ուժերը միավորել բուլղարականին: Իսկ դա շատ դժվար չէր, եթե նկատի առնվեր, որ սերը և բուլղար ժողովուրդները սլավոնամոլության սյուներն էին Եվրոպայում, ինչպես նաև այն, որ երկու երկրները ուղղակի միացված էին երկաթգծով:

Բայց ոմանք կարծիք էին հայտնում, որ այդ երկու հանգամանքները դեռ բավական չեն մի քանի ամիսների ընթացքում նրանց միջև ստեղծված սերտ համագործակցությունը տևական ժամանակ պահելու համար: Սրանք գտնում էին, որ, միանալով

---

[1] ***Տե՛ս Еджидио Иветич****, Балканските Войн, էջ 37:*

բուլղարներին, սերբական զորքը պատերազմական գործողությունների ընթացքում անխուսափելիորեն կդառնա բուլղար զորքի մի մասը, կենթարկվի բուլղարական բանակի հրամանատարությանը թե՛ պատերազմի ժամանակ և թե՛ հաղթանակից հետո՝ ավարը բաժանելիս: Ռազմագետների այս տեսակետը վիճելի էր, քանզի Սերբիան Բալկաններում վարում էր սեփական քաղաքականություն, որը հաճախ հակառակ էր բուլղարականին: Սերբիայի քաղաքական հետաքրքրությունը գերազանցապես ուղղված էր Նովի Բազար սանջակի և Կոսովո վիլայեթի կողմը, որոնց վրա Բուլղարիան որևէ ազդեցություն չուներ:

Դեռևս 1912 թ. օգոստոսի սկզբներին կառավարության հանձնարարականով Բուլղարիայի քաղաքներում և այլ խոշոր համայնքներում հրավիրվեցին ժողովներ, որոնցում ընտրված չուրջ հազար պատգամավորներ մեկնեցին Սոֆիա՝ համաբուլղարական ժողովի: Նրանք այնտեղ կառավարությանը միահամուռ առաջարկեցին նախապատրաստվել պատերազմի՝ մակեդոնական եղբայր ժողովրդին թուրքական դարավոր լծից ազատագրելու համար:

Օգոստոսի 12-ին Սոֆիայում տեղի ունեցավ համազգային հսկա միտինգ, որը նախագահում էր նախկին զորավար Պրոտոգերովը: Նա կառավարությանը համարեց վախկոտ, քանի որ ձեռքի տակ ունենալով 400.000-անոց զորք՝ չի դիմում վճռական քայլերի Մակեդոնիայի եղբայր ժողովրդին ազատագրելու համար: Ինչպես Պրոտոգերովը, այնպես էլ նրան հաջորդած ելույթ ունեցողները դատապարտում էին Ֆերդինանդ ցարին Մակեդոնիայի նկատմամբ անտարբերության համար: Նրանցից ոմանք նույնիսկ առաջարկում էին հարձակվել զորանոցների վրա և զենքերը հափշտակելով՝ գնալ ու ազատագրել Մակեդոնիան:

Նույն ոգով արտահայտվեցին նաև ուրիշ ելույթ ունեցողներ, որոնց կոչերը միտինգի մասնակիցները ողջունում էին խլացուցիչ ծափերով: Հենց միտինգի ժամանակ կազմվեց կառավարությանն ուղղված բանաձևի տեքստ, որը ներառում էր երեք կետ. ա) Անմիջապես արտակարգ դրություն հայտարարել երկրում և բանակը պատրաստել պատերազմի, բ) Մեծ տերություն-

ներից պահանջել ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ ինքնավարություն տալու Մակեդոնիային և Էդիրնեի նահանգին, գ) եթե ամենակարճ ժամանակամիջոցում տերությունները չկատարեն այս պահանջը, կառավարությունը պարտավոր է հռչակել ազատագրական պատերազմ, այլապես անխուսափելի են սարսափելի ցնցումներն ամբողջ Բուլղարիայում՝ ողբերգական հետևանքներով:

Սոֆիայում տեղի ունեցող հանրահավաքներում հնչած կոչերը լայն արձագանք էին գտնում ողջ երկրով մեկ: Մեծաշուքնդ հավաքույթներում ժողովուրդը պատերազմ էր պահանջում: Բուլղարիայում ծավալված հակաթուրքական շարժումները ոգեշնչման նոր առիթ դարձան Մակեդոնիայի ազատագրական շարժման բուն մասնակիցների համար, է՛լ ավելի ակտիվացրին խափանարարական գործողությունները, իսկ Թուրք-բուլղարական սահմանագծերին հաճախակի դարձան ընդհարումները. սահմանի տարբեր հատվածներում տեղի էին ունենում պահակազորքերի ուժգին բախումներ՝ երկուստեք ծանր հետևանքներով:

Սակայն ռազմական գիտության ոչ բոլոր ենթադրություններն էին ճշգրիտ ներկայացնում հնարավոր ռազմական գործողությունների ընդհանուր պատկերը հատկապես զինակցությամբ մղվող պատերազմներում: Ամեն մի պատերազմ ընթանում է իրեն հատուկ կանոններով, այլ ոչ թե քաղաքական թելադրությունների համաձայն: Խիստ հավանական էր, որ Սերբիան իր ռազմական ուժի առնվազն մի նշանակալի մասով սեփական պատերազմը մղեր Կոսովոյի վիլայեթում՝ շատ ավելի ցանկանալով միավորում փնտրել Չերնոգորիայի, քան Բուլղարիայի հետ: Եթե այդպես լիներ, ապա պատերազմի այդ երկրորդ թատերաբեմից հզոր վտանգ չէր սպառնա Թուրքիային: Այդ դեպքում հնարավորություն կստանար արագ և հանդուգն գործողություններով ջախջախելու Բուլղարիային, իսկ դա կկանխորոշեր ողջ պատերազմի ելքը:

Ռազմական տեսաբանները գտնում էին, որ հակառակ աշխարհագրական և այլ պայմանների աննպաստ հանգամանքներին՝ Թուրքիայի շանսերն այնքան էլ վատ չեն, եթե նա կարո-

դանա հրապարակ բերել ներքին ուժ և նյութական միջոցներ:

Հակառակ դեպքում Թուրքիան ստիպված պիտի լիներ սահմանափակվել պաշտպանողական մարտավարությամբ, որը նրան կախման մեջ կդներ հակառակորդի շարժումներից և սպառնալիքներից:

1912 թ. սեպտեմբերի սկզբին Զերնոգորիայի Կոչանա և Բերանա բնակավայրերի թուրքերը տեղի սլավոնների կոտորած էին սարքել, որն ավելի էր բորբոքել տեղի բնակչության հակաթուրքական տրամադրությունները՝ պատճառ դառնալով զինված ելույթների թուրք-չերնոգորյան սահմանագծին:

Այդ դեպքից հետո բալկանյան զինակցության երեք անդամները՝ Բուլղարիան, Սերբիան և Զերնոգորիան, համատեղ վերջնագիր ներկայացրին թուրքական կառավարությանը, որով պահանջեցին վերջ տալ իրենց սահմանագլուխներում շարունակվող խժդժություններին, միաժամանակ կրկին ու կրկին առաջ քաշեցին Մակեդոնիային ինքնավարություն տալու և այն իրենց հովանավորությանը հանձնելու խնդիրը: Առաջադրված այդ պահանջներին զուգահեռ՝ նրանք նաև սկսեցին իրենց ուժերի զորաշարժը և կենտրոնացումը սահմանագլուխներին:

Սեպտեմբերի 15 (28)-ին Բուլղարիան պաշտոնապես շարժման մեջ դրեց իր զորքերը: Զինվորական գնացքներն անընդհատ զենք ու զինամթերք էին տեղափոխում բուլղարա-թուրքական սահմանագլուխ:

Արդեն մի քանի օր շարունակ ժողովուրդը սպասում էր իր կառավարության վճռական հայտարարությանը:

Վերջապես սեպտեմբերի 17 (30)-ին կառավարության երկար տևած նիստում ընդունվեց Բուլղարիայի ցարի ստորագրած մանիֆեստը: Նիստում ընդունվեցին նաև պատերազմական դրության մասին հռչակագիր և զորակոչի մասին հայտարարություն:

Ժողովուրդը ցնծությամբ ընդունեց վաղուց սպասված լուրը: Նույն օրն իսկ Սոֆիայի փողոցներ դուրս եկան տասնյակ հազարավոր մարդիկ: Աղմկալից ցույցեր էին տեղի ունենում թագավորական պալատի և վարչապետության շենքի առջև, քաղաքի հրապարակներում ու գլխավոր փողոցներում: Բնակչությունն

ամենուրեք զինվորականների պատվին խանդավառ ցույցեր էր անում: Մինչև ուշ գիշեր ծովածալ բազմությունը ոգևորված հավաքվում էր նաև իտալական, հունական, սերբական, անգլիական դեսպանատների առջև: Հետևյալ մեկ-երկու օրերին ամբողջ Բուլղարիան պատրաստ էր հրամանի: Բուլղարահայ ականատեսը, նկարագրելով պահը, գրում էր, որ, բացի մայրերից ու քույրերից, բոլոր տղամարդկանց դեմքերը փայլում էին ուրախությունից, կարծես հարսանիքի էին պատրաստվում[1]:

Այդ օրը զորահավաք հայտարարեց նաև Սերբիայի կառավարությունը: Ոգեշնչված էին մեծ թե փոքր: Բազմամարդ ցույցերն ու միտինգները, ծայր առնելով Բելգրադում, տարածվեցին երկրով մեկ:

Զորահավաք տեղի ունեցավ Չերնոգորիայում: Հունաստանը հայտարարեց ցամաքային ու ծովային ուժերի զորահավաք: Այդ երկրներում նույնպես տեղի էին ունենում աղմկալից ցույցեր, որոնք շարունակվում էին մինչև ուշ գիշեր:

Ոգևորության ալիքը տարածվել էր Մակեդոնիայում: Մակեդոնացիները երթեր էին կատարում ազգային ու բուլղարական դրոշներով, արտասանում էին կրակոտ ճառեր, թևածում էին մակեդոնական, բուլղարական, ռուսական ազգային երգեր:

Դրանից բացի՝ Ռուսաստանը գրեթե բալկանյան պետությունների հետ միաժամանակ Ավստրիայի սահմանագլխի լեհական տարածքում գտնվող իր զորքերի մի մասը մարտական պատրաստության բերեց, որպեսզի ոգեշնչի բալկանյան սլավներին՝ դիմելու համարձակ գործողությունների: Եթե Ավստրիան փորձեր արգելք հանդիսանալ բալկանյան սլավոն պետությունների գործողություններին, ապա ռուս զինվորները պետք է շարժման մեջ դրվեին[2]:

Հետևյալ օրը՝ սեպտեմբերի 18-ին, բուլղարական կառավարությունը կոչով դիմեց տարբեր երկրներում ապրող հայրենակիցներին՝ վերադառնալ հայրենիք և համալրել կռվի պատրաստ

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1008, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1388, 6-19 մարտի 1913 թ.:

զորամասերի շարքերը: Կոչը լայն արձագանք գտավ: Սեպտեմբերի 19-ին Ռումինիայում գտնվող բուլղարահպատակները չոգեկառքով մեկնեցին հայրենիք: Նրանց մեջ կային նաև այլազգիներ՝ հայեր, հրեաներ, հույներ և այլք: Սեպտեմբերի 20-ին Օդեսայից հայրենիք մեկնեցին 3000 բուլղար տղամարդիկ: Նույն օրը Սոֆիայում հեռագիր ստացվեց, որ Ամերիկայից դեպի հայրենիք են ուղևորվել 10.000 բուլղարներ[1]:

Բուլղարիայի օրինակին հետևեց Սերբիան: Քանի որ հազարավոր սերբեր աշխատում էին Ռուսաստանի տարբեր նահանգներում, ուստի, ստանալով ռուսական կողմի համաձայնությունը, Սերբիայի կառավարությունը կոչ հղեց նրանց՝ շտապ վերադառնալ հայրենիք[2]:

«Ազատամարտը» հաղորդում էր, որ միայն Մոսկվայում արդեն 22 հազար կամավորներ են անդամագրվել Բալկաններ մեկնելու համար: Իսկ "Русское Слово"-ն տեղեկացնում էր, որ նրանց թվում է նաև հայտնի զորավար Ռեննենկամպֆը[3]:

Իրենց երկրներում պատերազմի տենդագին պատրաստություններ տեսնելով՝ չորս դաշնակիցները, պայմանավորվածության համաձայն, լուրջ աշխատանքներ էին տանում նաև Թշնամու թիկունքում: Հատկապես եռուն գործունեություն էր ծավալվել Մակեդոնիայում՝ պատերազմը սկսվելուց անմիջապես հետո այնտեղ ապստամբություն առաջ բերելու համար: Այդ նպատակով գաղտնի ճանապարհներով Բուլղարիայից այնտեղ էր ուղարկվել 30 հազար հրացան, նույն Բուլղարիայից Մակեդոնիա էր թափանցել չորս տասնյակից ավելի պահեստի սպա՝ մակեդոնական ապստամբական խմբերի ստեղծումը ղեկավարելու համար: Օրինակ՝ նրանցից մեկը՝ Սանդանսկին, 1912 թ. ամռան վերջերին իր հրամանի տակ ուներ 6000 զինված մարտիկ[4]:

Նույնպիսի պատրաստություններ էին տեսնում նաև սլավոնական ուրիշ տարածքներում: Օրինակ՝ Նովի Բազարում

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1008, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1002, 16 (29) սեպտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:

ապստամբության նախապատրաստմամբ զբաղված էր «Նարոդնայա Օխրանա» («Ժողովրդի պահապան») կազմակերպությունը, որի կամավոր մարտիկները զինված էին Սերբիայից ուղարկված «Մաուզեր» տիպի հրացաններով և նռնակներով: Ծրագրված էր, որ պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Նովի Բազարի ապստամբների գործողությունները ղեկավարելու էր սերբ գնդապետ Ֆազիքը[1]*:*

Սեպտեմբերի 18 (31)-ի վաղ առավոտյան ամբողջ Պոլսում մեծ հուզում էին առաջացրել եվրոպական հեռագրական գործակալությունների այն լուրերը, թե Բուլղարիան վերջնագիր է ներկայացրել օսմանյան կառավարությանը, ինչպես նաև այն, որ Հունաստանը և Սերբիան միացել են Բուլղարիայի վերջնագրին:

Թուրքիայի վարչապետի հանձնարարությամբ առավոտյան ժամը 10-ին նախարարները հավաքվեցին արտակարգ նիստի: Ժողովուրդը խոնվել էր կառավարության շենքի առջև՝ սպասելով նիստի ավարտին և որոշմանը:

Նախարարների խորհրդի նիստը տևեց ութ ժամ՝ մինչև երեկոյան ժամը վեցը: Նիստից հետո առաջինը վարչապետարանից դուրս եկավ և մեկնեց ներքին գործերի նախարար Դանիչ բեյը, ապա՝ շեյխ-ուլ-իսլամը, որն իրեն դիմած լրագրողների հարցին պատասխանեց, թե պատերազմ չկա: Մյուս նախարարներն էլ հավաստեցին, թե պատերազմի մասին շրջանառված լուրերն անհիմն են: Հաջորդ օրվա առավոտյան նույնպիսի հայտարարություն արեց նաև արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը, պատասխանելով «Ազատամարտ» թերթի խմբագրի տված հարցին, ասաց. «Մեր առած տեղեկութեանց համաձայն նախարարական խորհուրդը իր երէկուան նիստին մէջ ամբողջութեամբ զբաղած է պալքանեան տագնապին խնդրով, եւ օսմանեան դեսպաններէ հասած տեղեկագիրներու ընթերցումէն ետք, խորհուրդը որոշած է օսմանեան դեսպաններու միջոցաւ խիստ դիմում մը կատարել եւրոպական դահլիճներու մօտ՝ պալքանեան տէրութեանց եւ մասնաւորապէս Պուլկարիոյ գրգռիչ

---

[4] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:*

ընթացքին դէմ բողոքելու համար, ինչպէս նաեւ հրահանգ ղրկուեցաւ Ռումէլիի զինուորական հրամանատարութեանց պատրաստ գտնուիլ ամէն հաւանականութեան դէմ»[1]:

Չնայած թուրքական իշխանություններն արտաքնապես ցույց էին տալիս, թե արտակարգ ոչինչ չի պատահել, բայց նույն օրն իսկ՝ սեպտեմբերի 18-ի կեսին, Մուհամմեդ Ռիշադ V սուլթանը նույնպես զորահավաք հայտարարեց: Նույն ժամերին օսմանյան պառլամենտի նիստում մահմեդական պատգամավորները կառավարությունից պահանջեցին անհապաղ պատերազմ սկսել: Թուրք պատգամավորների շուրթերից թունդ հիշոցներ էին հնչում բալկանյան քառյակի երկրների և ընդհանրապես քրիստոնյաների հասցեին:

Կառավարության ներսում նույնպես հնչում էին նախահարձակ լինելու անզուսպ կոչեր: Թուրքերը կարծում էին, թե վերջապես եկել է ժամանակը ի դերև հանելու «ռուսական մեքենայությունները» և կյանքի կոչելու վաղուց երազած ծրագիրը, այն է՝ 1) Ամեն գնով վերացնել օտարների միջամտությունը օսմանյան գործերին, մեկընդմիշտ թոթափել եվրոպական հսկողությունը, 2) Թուրքացնել կայսրության ոչ թուրք տարրը գորդյան հանգույցը կտրելու միջոցով, այսինքն՝ կայսրությունը վնասազերծել առաջին հերթին «օտար» քրիստոնյաներից և «կարգի բերել սեփական երկիրը»: Անակնկալներով լի 1912 թվականի սեպտեմբերին Իթթիլաֆի կառավարության և Իթթիհադի կոմիտեի ջանքերով երկիրը գլորվում էր դեպի բալկանյան արյունալի պատերազմ:

Այսպիսով, դեռ Իտալիայի հետ պատերազմը չավարտած, Թուրքիան խիզախում էր մի նոր պատերազմի մեջ մտնել: Եթե նկատի առնենք, որ ընդամենը երկու տարի հետո՝ 1914 թ., նա մխրճվելու էր նաև ավերիչ համաշխարհային պատերազմի մեջ, ապա ստացվում է, որ ընդամենը երեք տարում Թուրքիան երեք անգամ պարզել է պատերազմի դրոշը:

Եվրոպական մեծամեծները միջոցներ էին փնտրում՝ «զսպելու» բալկանյան դաշինքի մասնակից երկրների կառավա-

---

[1] ***«Ազատամարտ»**, № 1003, 19 սեպտեմբերի (1 հոկտեմբերի) 1912 թ.:*

րություններին, բայց... անօգուտ: Նրանք տասնամյակներ շարունակ Թուրքական բարբարոս իշխանությանը Թույլ էին տվել մահ ու ավեր տարածելու և անապատ դարձնելու քրիստոնյա ժողովուրդների հայրենիքները: Ոչ ոք չէր զսպել գազազած սուլթանի և Թուրք փաշաների վայրագությունները: Եվ ահա, երբ բալկանյան ազգերը վերջապես միավորվել էին վրեժ լուծելու այդ ամենի համար, եվրոպական իշխանավորները աղաղակում էին. «Կա՛նգ առեք, Թույլ չենք տա»:

Դարերով կուտակված զայրույթի փականն արդեն բացվել էր, և այլևս ոչ մի ուժ ի վիճակի չէր հետ պտտեցնելու այն:

Եվրոպական հասարակական կարծիքին ամենից շատ հետաքրքրում էր այն հարցը, Թե Թուրքերի դեմ սլավոնների հնարավոր պատերազմը արդյոք կմնա որպես տարածաշրջանային կռիվ, Թե, դուրս գալով շրջանակներից, կվերափոխվի համաեվրոպականի: Իսկ այդպիսի վտանգ կարող էր առաջանալ, եԹե մեծ տերություններից մեկը սկսեր օգնել պատերազմող կողմերից որևէ մեկին:

Պատերազմի վտանգը մոտենում էր արագորեն և իսկական մղձավանջ դառնում Եվրոպայի համար: Երկյուղում էին բոլորը՝ Թե՛ պետական պաշտոնյաները, Թե՛ զինվորականները, Թե՛ աշխատավոր զանգվածը, Թե՛ մտավորականները: Տագնապում էին քաղաքական ուժերը:

Սուլթանի կողմից գորահավաք հայտարարվելու օրը՝ սեպտեմբերի 18-ին, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հայազն Գաբրիել Նորատունկյանը նախարարների խորհրդում հայտարարեց, որ Թեև դրությունը լուրջ է, բայց դեռ լիովին սպառված չեն պատերազմից խուսափելու հնարավորությունները: Իմանալով այդ մասին՝ նույն օրվա երեկոյան Կ. Պոլսում անգլիական դեսպանը հանդիպում ունեցավ Նորատունկյանի հետ: Երկու ժամ տևած խոսակցության ժամանակ նրանք քննարկում էին պատերազմից խուսափելու հնարավորության հարցը[1]: Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ պատերազմի

---

[1] *Տե՛ս* ***Արամ Անտոնեան,*** *Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, Կ. Պոլիս, 1912, էջ 429:*

վտանգը կարելի է չեզոքացնել, եթե մեծ տերությունները Թուրքիայից հաստատ երաշխիքներ ձեռք բերեն և բալկանյան պետություններին վստահեցնեն, որ Մակեդոնիայում անհապաղ կատարվելու են բարենորոգումներ:

Անգլիայի դեսպանի հետ ունեցած զրույցի բովանդակության մասին Գաբրիել Նորատունկյանը զեկուցեց նախարարների խորհրդի՝ նույն օրը մինչև ուշ գիշեր տևած նիստում, բայց կառավարությունը մերժեց դեսպանի առաջարկը և հայտարարեց, որ չի հանդուրժի որևէ երկրի միջամտությունը կայսրության ներքին գործերին, այդ թվում՝ պատերազմի ու խաղաղության հարցում: Չի սկսի որևէ բանակցություն բարենորոգումների հարցի շուրջ այնքան ժամանակ, քանի դեռ բալկանյան պետությունները չեն արձակել իրենց բանակները:

Թուրքիայի մի ծայրից մյուսը հնչում էին սպառնալիքներով լի թշնամական աղաղակներ:

Բալկանյան ժողովուրդների հայրենասիրական ընդհանուր վերելքը ուժեղացրել էր պատերազմելու ցանկությունը նաև Թուրքերի մեջ: Սրանք որպես Թուրք ազգին հասցրած անարգանք էին դիտում բալկանյան պետությունների ընդհանուր զորահավաքը:

Սեպտեմբերի 19-ից Կ. Պոլսում սկսվեցին աննախընթաց ցույցեր, որոնց առաջին կազմակերպիչները եղան օսմանյան համալսարանի ուսանողները: Եթե այդ խանդավառ ու պատերազմաշունչ ուսանողական ցույցերի շարժիչ ուժը երիտասարդական ավյունն էր, ապա գոնե համալսարանական Թուրք մտավորականությունը պետք է խորհեր պատերազմի ահավոր հետևանքների մասին: Բայց երիտասարդական հայրենասիրական ալիքը ի չիք էր դարձնում սթափ դատելու նրանց կարողությունը[1]: Ուսանող ցուցարարներն ուղևորվեցին ռազմական նախարարություն, որի դիմացի հրապարակում արտասանում էին խանդավառ ճառեր: Նախարարության խորհրդական Ֆուադ բեյը, գոհունակություն հայտնելով ուսանողների ձեռ-

[1] Տե՛ս «Վերածնունդ» (Կ. Պոլիս), № 5, սեպտեմբեր, 1912, էջ 30:

նարկին, միաժամանակ հայտարարեց, թե կառավարությունն անթերի կկատարի իր պարտականությունը: Ապա համալսարանականները և նրանց միացած խառնամբոխը, դրոշներ բարձրացրած, անցան Պոլսի փողոցներով և ուղղվեցին կայսերական պալատ՝ ճանապարհին անընդհատ գոչելով՝ «Կորչե՛ն չանաք եալայը[*] բուլղարները», «Կեցցե՛ պատերազմը» և այլ կարգախոսներ: Երբ չարքերը մոտեցան Ելդրզ պալատին, սուլթանը մի պահ մոտեցավ պատուհանին և գոհունակություն հայտնեց, որ երկիրն ունի այդպիսի նվիրյալներ[1]: Այնուհետև ուսանողները Պեշիկթաշում հանդիպեցին վարչապետ Քեամիլ փաշային և արտգործնախարար Նորատունկյան էֆենդուն, որոնք գնում էին պալատ՝ շնորհավորելու սուլթանի ծննդյան տարեդարձը: Շրջապատելով նրանց կառքերը՝ ուսանողները սկսում են բարձրաձայնել՝ «Մենք պատերազմ ենք ուզում»: Ծերունի վարչապետը մի քանի հուսադրող խոսք է ասում նրանց, որոնցից մի քանիսը, ի նշան երախտագիտության, բարձրանում են վարչապետի կառքը և համբուրում նրա ձեռքերը: Այդ ժամանակ վրա է հասնում ներքին գործերի նախկին նախարար Թալեաթ բեյը, որին ուսանողները դիմավորում են համակրական աղմուկով և «Կեցցե՛ Իթթիհադը» բացականչություններով[2]: Իթթիհադական վարչապետ Սայիդ փաշայի անկումից ի վեր առաջին անգամ էր, որ Իթթիհադը արժանանում էր խանդավառ ընդունելության:

Դեպի համալսարան վերադարձին ուսանողներն անցնում են Բերայով և բուռն ու աղմկալից ցույցեր անում բալկանյան պետությունների դեսպանատների առջև, քարկոծում ու ջարդում են չենքերի ապակիներն ու դռները: Դրանից հետո անցնում են մայրաքաղաքի կենտրոն և կանգ առնում կառավարության պաշտոնաթերթի՝ «Իգդամի» խմբագրության առջև: Դուրս գալով պատշգամբ՝ թերթի խմբագրապետ Ալի Քեմալ բեյը ցուցարարներին դիմում է ոգեշունչ խոսքերով: «Մենք այսօր պետք է

---

[*] Թուրքերեն – պնակալեզ:

[1] Տե՛ս **Արամ Անտոնեան**, նշվ. աշխ., էջ 431:

[2] Տե՛ս նույն տեղում:

ուրախանանք,- ասում է նա,- որ մեր դեմ ելնողը մեկ թշնամի չէ, երկուսը չէ, այլ չորս թշնամի»: Այս խոսքերն ընդունվում են բուռն ծափահարություններով: Ոմանք գոռում էին. «Եթե մեր դիմաց տասը թշնամի, քսան թշնամի ունենայինք, ավելի գոհ կլինեինք»[1]: Վերջում համալսարանականները ևս մեկ ցույց են անում Պապը Ալիի առջև և ցրվում՝ պայմանավորվելով հանդիպել Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում[2]:

Արամ Անտոնյանը գրում էր. «Երբ համալսարանականներն այս մտայնությունը ունեին, ինչ կրնային ըլլալ հասարակ, ռամիկ ու մոլեռանդ ժողովուրդին սնուցած զգացումները»[3]:

Հանրային բորբոքված կրքերը մեղմելու նպատակով արտգործնախարար Նորատունկյանը պատերազմի նախօրեին մի օտար թղթակցի չտապեց հայտարարել հետևյալը. «Այս պատերազմը չատ կատաղի պիտի ըլլայ, բայց մեր կողմէ ամէն բան պիտի ընենք որպեսզի վայրագ չդառնայ. պիտի կռուինք քաղաքակիրթ ժողովուրդներու պէս, և եթէ թշնամի երկիր մտնենք, օտար տուն մը գտնուող հիւրերու վարմունքը պիտի ունենանք: Եվրոպա կրնայ ապահով ըլլալ, որ ջարդ չպիտի տեղի ունենայ թշնամի երկրի մեջ»[4]:

Պատերազմը սկսելուն վճռականապես դեմ էին եվրոպական և ռուսական սոցիալիստական շարժման ներկայացուցիչները: Սոցիալիստական կուսակցությունների ղեկավար մարմինները դիմումներ էին հղում «բուլղար, սերբ, մակեդոնացի և հայ ընկերներին», նրանց կոչ անում հանդես գալ Բալկաններում, մանավանդ Թուրքական Ասիայում խլրտումների առաջացման դեմ, դրանով իսկ խափանել բալկանյան «խճողված խնդիրներին» իմպերիալիստական կառավարությունների զինու զորությամբ միջամտությունը:

Բուլղարիայի սոցիալիստները Սոֆիայում ցույցի էին դուրս եկել «Կորչի՜ պատերազմի կուսակցությունը», «Մենք ոչ մի պա-

---

[1] Տե՛ս **Արամ Անտոնեան**, նշվ. աշխ., էջ 433:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 434:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Նույն տեղում:

տերազմ չենք ուզում» և նմանօրինակ այլ կոչերով ու լոզունգներով: Սոցիալիստների այդ մեծ հավաքն առաջ բերեց պատերազմի կողմնակիցների խիստ հակազդեցությունը: Բազմաթիվ ուսանողներ ու նրանց համակիրներ չրջապատեցին ցուցարարներին, տեղի ունեցավ կատաղի ընդհարում, որը արյունոտ հետևանք ունեցավ: Պատերազմի հակառակորդները դիմեցին իրենց մոտ եղած ձեռնափայտերի օգնությանը, որն առաջ բերեց հակառակ կողմի ուժգին հակազդեցությունը: Կատաղի իրարանցումի ժամանակ սպանվեց սոցիալիստների ղեկավարներից մեկը: Ոստիկանությունը ստիպված զենքի դիմեց և մեծ դժվարությամբ իրարից բաժանեց հակառակորդներին: Բազմաթիվ ցուցարարներ, որոնք դիմադրել էին ոստիկաններին, ձերբակալվեցին[1]:

Սերբիայի սոցիալիստական կուսակցությունը նախաձեռնել էր հրավիրել բալկանյան սոցիալիստների համաժողով, որին պետք է մասնակցեին Սերբիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և Թուրքիայի սոցիալիստական բոլոր կուսակցությունները: ՀՅ դաշնակցությունը նույնպես տվել էր իր համաձայնությունը այդ հրավերին՝ պայմանով, որ համագումարը տեղի ունենա օսմանյան մայրաքաղաքում: Առաջարկությունն ընդունվել էր, և այդ նպատակով Սերբիայի ու Ռումինիայի ներկայացուցիչները եկել էին Պոլիս և դիմել Բ. Դռանը՝ համաժողովի գումարմանը նպաստելու խնդրանքով: Կառավարությունը, սակայն, հարմար չէր գտել այդպիսի համաժողովի անցկացումը կայսրության մայրաքաղաքում:

Դրանից հետո վերոհիշյալ երկրների սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները պատրաստեցին Բալկանների և Թուրքիայի ժողովուրդներին ուղղված մի կոչ՝ հակապատերազմական բովանդակությամբ: ՀՅ դաշնակցությունը նույնպես ստորագրեց կոչը, որի հայերեն թարգմանությունը լույս տեսավ նրա պաշտոնական օրգան «Ազատամարտ» թերթում[2]:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1014, 30 սեպտեմբերի (13 հոկտեմբերի) 1912 թ.:

Ավելին, ինչպես վկայում էր Ռուբեն Բերբերյանը, եվրոպական թերթերից մեկը մինչև իսկ գտնում էր, որ «ամենաարդար հարցերն իսկ, որպիսին է Հայկական հարցը, պէտք չէ պատճառ դառնայ մեծ պետութիւնների միջեւ համաեւրոպական պատերազմի»[1]:

Բերբերյանը նշում էր, որ այդ տեսակետից Թուրքահայ հեղափոխական գործը, բացի արդեն հայտնի ներքին ու արտաքին խոչընդոտներից, տեսնում էր մի նոր բարոյական պատնեշ: «Նրա անկեղծ բարեկամները խորհուրդ էին տալիս հայ յեղափոխական կուսակցութիւններին չառնել իրենց վրայ համաեւրոպական պատերազմը հրկիզողների դերը: Հայ յեղափոխական գաղափարի համար դա մի նոր (ո՛չ առաջին և ո՛չ վերջին) հարուած էր»[2]:

Բայց համաեվրոպական պատերազմից սարսափած տերութիւնները չկարողացան բեկել իրադարձությունների ընթացքը: Բալկաններից փչող քամիներն արդեն տարածում էին վառոդի հոտը: Բալկաններում հրդեհ բռնկվելուց հետո ոչ ոք չէր կարող երաշխավորել, թե նրա կայծերը մինչև ուր էին հասնելու, ոչ ոք չէր կարող պնդել, թե այդ կայծերը չէին ընկնելու եվրոպական երկրների վառոդի մեծ պահեստների վրա՝ առաջ բերելով աշխարհասասան ավեր ու սարսափ:

Այս մտահոգությամբ մեծ տերությունները հանդես եկան հատուկ հայտարարագրով, որով խոր անհանգստությամբ բալկանյան պետություններին կոչ էին անում հետ կանգնելու վտանգավոր ճանապարհից: Հայտարարության հիմնական իմաստն այն էր, որ հնարավոր պատերազմում բալկանյան պետությունների հաղթության դեպքում նույնիսկ չի փոխվելու իրերի status quo-ն, և նվաճված երկրամասերը վերադարձվելու էին Թուրքիային: Այդ ուղղությամբ ամենից բարձր աղաղակում էր ավստրո-հունգարական կառավարությունը:

Բայց տերությունների «խաղաղարար» ջանքերն ապարդ-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 227, 13 հոկտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 6 (210), ապրիլ, 1940, էջ 62:*

յուն անցան: Բուլղարական կառավարությունը, որին լիազորել էին Բալկանյան դաշինքի մյուս երեք երկրները, իր գրավոր պատասխանում հասկացնել տվեց, թե ինքն անկարող է դեպքերի առաջն առնելու[1]:

Բայց դրանից հետո էլ հատկապես Բուլղարիայի վրա դիվանագիտական կոշտ ճնշումները չէին դադարում:

Այսպես, սեպտեմբերի 22-ին (հոկտեմբերի 4-ին) իր կառավարության անունից Սոֆիայում ֆրանսիական դեսպանը խիստ դիմում հղեց Բուլղարիայի կառավարությանը՝ առաջարկելով անմիջապես ցրել օրերս զորակոչի ենթարկված ուժերը: Գեչովը դեսպանին վճռականապես հայտարարեց, թե իրեն ներկայացրած դիմումն անընդունելի է Բուլղարիայի համար: Նա հիշեցրեց, որ իր երկիրը տարիներ շարունակ մեծ պետություններին խնդրել է ազդել Թուրքիայի վրա՝ վերջ տալու չդադարող բռնություններին Մակեդոնիայում, բայց բոլոր դիմումներն անհետևանք են մնացել: Հետևապես Բուլղարիան այժմ չի կարող հետ կանգնել իր մեկնարկած ընթացքից[2]:

Բալկանյան քաղաքը՝ հանձին Բուլղարիայի կառավարության, վերջնագիր ներկայացրեց Թուրքիային՝ առաջադրելով հետևյալ պահանջները. 1) ազգային ինքնավարություն տալ Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր ազգերին, 2) օսմանյան պառլամենտում բոլոր ազգերից ունենալ համամասնական ներկայացուցչություն, 3) քրիստոնեաբնակ նահանգներում քրիստոնյաներին թույլ տալ ստանձնել հասարակական և պետական ամեն տեսակ պաշտոններ, 4) քրիստոնյաների բոլոր տեսակի դպրոցների իրավունքները հավասար ճանաչել թուրքական դպրոցներին վերապահված իրավունքներին, 5) Բ. Դուռը պիտի հրաժարվի քրիստոնյաների թուրքացման փորձերից և քրիստոնեաբնակ նահանգները թուրք գաղթականներով բնակեցնելու քաղաքականությունից, 6) քրիստոնյա զորակոչիկների համար պետք է կազմվեն առանձին զորամասեր, իսկ մինչ այդ պահան-

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 106, 22 սեպտեմբերի (4 հոկտեմբերի) 1912 թ.:*

ջի իրականացումը դադարեցնել նրանց զինվորագրությունը, 7) վերակազմավորել Թուրքիայի եվրոպական վիլայեթների ժանդարմերիան՝ չվեյցարական կամ բելգիական հրահանգիչների փաստական ղեկավարությամբ, 8) քրիստոնեաբնակ վիլայեթներում նշանակել չվեյցարական կամ բելգիական գեներալ-նահանգապետներ, որոնք պետք է հաստատվեն մեծ պետությունների կողմից. նույն վիլայեթներում ստեղծել բնակչության կողմից ընտրված խորհուրդներ, 9) Մեծ Վեզիրատին կից հիմնել բարձրագույն խորհուրդներ հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից՝ սույն բարենորոգումների ծրագրի իրագործումը հսկելու համար, իսկ մեծ պետությունների և բալկանյան չորս պետությունների դեսպանները իրենց հերթին պետք է հսկեն այդ խորհուրդների գործունեությունը:

Ներկայացնելով այս պահանջները՝ բուլղարական կառավարությունը հույս էր հայտնում, որ Բ. Դուռը դրանք կիրականացնի վեց ամսվա ընթացքում և, իբրև համաձայնության նշան, անմիջապես հրաման կարձակի զորահավաք չկատարելու, պահեստի զինվորներին հանգիստ ձգելու մասին[1]:

Ինչպես տեսնում ենք, չորս պետությունների պահանջները վերաբերում էին ոչ միայն բալկանյան, այլև Թուրքիայի քրիստոնեաբնակ բոլոր, այդ թվում հայկական նահանգներին:

Իսկ Թուրքիան չէր մտածում բալկանյան չորս պետությունների ներկայացրած պահանջներից որևէ մեկն անգամ ընդունելու մասին: Նա նախընտրեց բալկանյան պատերազմ սկսել, քան գործադրել Բեռլինի դաշնագրի՝ Մակեդոնիային վերաբերող 23-րդ և Հայաստանին վերաբերող 61-րդ հոդվածների գոնե տրամադրությունները:

Բեռլինի 1878 թ. կոնգրեսին հաջորդած ավելի քան երեք տասնամյակների ընթացքում Եվրոպան սուլթան Համիդին հորդորել էր Բալկաններում անցկացնել բարենորոգումներ, բայց նա մշտապես մերժել էր բոլոր առաջարկությունները՝ պատճառաբանելով, թե դրանք կարող են պատուհաս դառնալ կայսրության գլխին:

---

[1] ***«Հայրենիք»****, № 6 (210), ապրիլ, 1940, էջ 62:*

1908 թ. օսմանյան հեղափոխության արդյունքում իշխանության եկած երիտթուրքերը նույնպես Բալկաններում բարենորոգումներ կատարելը վճռականապես մերժեցին՝ այն կայսրության համար համարելով կործանարար: Իթթիհադը չդարձավ այն կենսունակ ուժը, որը կարողանար ներքնապես վերանորոգել երկիրը[1], գրում էր «Ազատամարտը»:

Եվրոպայից հնչող կոչերին արձագանքում էին միայն թուրքական մամուլի մեկ-երկու օրգաններ, հատկապես Կ. Պոլսի «Թանզիմաթ» թերթը, որը հանդես էր գալիս Բալկանյան նահանգները բարեկարգելու պահանջով: Բայց թերթերի մեծ մասը չարունակում էր կառչած մնալ այն տեսակետին, թե կայսրության եվրոպական մասում բարենորոգում կատարելու որևէ փորձ կարող է փորձանք դառնալ պետության գլխին:

Մամուլի այդ օրգաններից հատկապես առանձնանում էր իթթիհադական «Թանինը», որը, տարված հակաքաղաքակրթական մոլուցքով և իսպառ կորցրած ներքին հավասարակշռությունը, մեկը մյուսի հետևից հրապարակ էր հանում հոդվածներ, որոնցով փորձում էր ապացուցել, թե կայսրության հողային ամբողջությունը պահպանելու համար, բացի պատերազմից, փրկության ուրիշ միջոց չկա, և որ պետության արժանապատվության առումով որևէ զիջում աններելի է:

Թուրքական համարյա ողջ մամուլը պատերազմ էր պահանջում: «Թանինը» գրում էր. «Կամ կհաղթենք, կամ կձգենք Ռումելին»: Սեպտեմբերի 21-ին նույն թերթը հրապարակել էր հոդված, ուր կային այսպիսի տողեր. «Ոտնահետքերիս ամեն մի մասից արյուն պետք է ժայթքի՛», «Սվինովս վարդաստանները պետք է մեռելաստան դարձնեմ», «Գթությունը պետք է կախեմ յաթաղանիս ծայրին, իմաստությունը՝ հրազենիս փամփուշտին, իսկ քաղաքակրթությունը՝ նժույգիս հետևի պայտին»[2]:

«Թանինից» հետ չէին մնում նաև իթթիլաֆական մամուլի օրգանները: Պատերազմական կրքերը բորբոքելու համար

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1014, 30 սեպտեմբերի (13 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1005, 21 սեպտեմբերի (4 հոկտեմբերի) 1912 թ.:

նրանք մեկը մյուսի հետևից հրատարակում էին կեղծ նամակներ ու հոդվածներ՝ բուլղարների կողմից իրենց երկրում բնակվող թուրքերի դեմ իրականացվող հնարովի բռնությունների մասին, գրում էին, թե քրիստոնյա բուլղարները իբր մզկիթները վերածում են եկեղեցիների, բռնաբարում թուրք կանանց ու աղջիկներին, գանակոծում են մահմեդական կրոնավորներին: Թուրքական մամուլի գրգռիչ հոդվածները փողոցներ և հրապարակներ էին հանում հազարավոր ցուցարարների:

Կ. Պոլսում է՛լ ավելի մեծ հանրահավաքներ և ցույցեր տեղի ունեցան երկու օր հետո՝ սեպտեմբերի 21-ին: Այդ օրը Սուլթան Ահմեդ մզկիթի ընդարձակ հրապարակում առանձին-առանձին հանրահավաքներ կազմակերպեցին Իթթիլաֆն ու Իթթիհադը:

Իթթիլաֆի հանրահավաքը սկսվեց առավոտյան ժամը 10-ին խառնամբոխի մասնակցությամբ: Անթիվ դրոշակներով ու «Կեցցե՜ պատերազմը», «Պատերազմ ենք ուզում», «Կորչի՜ Բուլղարիան», «Թույլ չենք տա, որ Մակեդոնիան հանձնվի թշնամուն» և այլ կարգախոսներով ցուցարարներն ալեկոծում էին հրապարակը: Առավոտյան հավաքվել էր չուրջ 30 հազար մարդ, բայց կեսօրին նրանց թիվը հասավ ավելի քան 100.000-ի: Հավաքվածները, որոնց թվում քիչ չէին հայերը, «Օսմանյան հայրենիքն անարգված» համարելով, պահանջում էին չուտափույթ պատերազմ հայտարարել՝ «ճզմելու համար օձերի գլուխները»: Ֆուադ փաշայի բացման ճառից անմիջապես հետո խոսք առավ «Սաբահ» թերթի խմբագրապետ Տիրան էֆ. Քելեկյանը և, պատերազմի փառաբանություն անելով, հայտարարեց, թե միայն այդ կերպ կարելի կլինի հանդարտություն ստեղծել Բալկաններում, թե «Օսմ[անյան] սահմանագլուխը պետք է լինի Դանուբը»: Այդ պահին նրա մոտ բերեցին զինվորական համազգեստով և փայտե փոքրիկ հրացանով ութ տարեկան մի թուրք տղայի: Ցույց տալով մանուկին՝ Քելեկյանը դիմեց միտինգավորներին այս խոսքերով. «Հայրենակիցնե՛ր, ահա օսմանցի զինուորին մարմնացումը. ես անոր մէջ կը տեսնեմ ամբողջ բանակին հոգին, և ի նշան այն խոր յարգանքին զոր կը տածեմ բանակին նկատմամբ, կը համբուրեմ զայն»: Վերջում մեկ անգամ էլ պատերազմի կոչ ուղղելով՝ նա ասաց. «Ռումելիի մէջ նահատա-

կուած մեր նախահայրերուն հոգիները վրէժի կը կանչեն մեզ»[1]:

Էոմեր Նաջի բեյը, դիմելով մագնիսացած ամբոխին և ցույց տալով բեմում ամրացված դրոշակը, գոչում էր. «Պու օսմանլը չանլը պայրաղը պիր գաչ կյունտեն Սոֆիատա, Աթինատա, Պելկրատա, Զեթինետե բեքզ իտենճեիզ»[*]:

Հաջորդ ելույթ ունեցողները տարակույս անգամ չունեին, որ բալկանյան զորքին ջախջախելու են առավելագույնը 10 օրում: Իսմայիլ բեյ. «Օսմանցիները կամ 30 միլիոն գերեզմաններ պիտի ձգեն և կամ բալկանյան պետությունների գլուխները ճզմելով դրանք պետք է ցույց տան Եվրոպային»: Ալի Քեմալ բեյ. «Թշնամին մեկը չէ, այլ չորսը: Մենք դրա համար պարծենում ենք, որովհետև ոչ թե հազարների, այլ միլիոնների դեմ պատերազմելուն ենք վարժված: Տասնչորս տարի առաջ ինչպես որ ջախջախեցինք հույներին, հիմա էլ նույնը պիտի անենք»[2] և այլն:

Իհարկե եղան եղակի թուրքեր, որոնք, ելույթ ունենալով, չափավոր էին: Նրանցից էր Դերվիշ Հիմա բեյը, որն իր ճառում ասաց. «Այս պատերազմը, որ կմղվի բալկանեան պետութիւններիդեմ, կրոնական պատերազմ չէ, այլ զուտ հայրենիքի ու հայրենասիրութեան պատերազմ է: Մեր երկրի բնակչութիւնը խառն է. իսլամ թէ քրիստոնեա, ապրում ենք մեկ դրոշի տակ, մեկ դրոշով ենք պարծենում և մահիկն ամենքիս համար նվիրական է հավասարապես: Մեզ իրարից թող բաժանեն միայն աղոթատեղիները: Իսլամը թող իր մզկիթը գնա, քրիստոնեան՝ իր եկեղեցին: Մենք բոլորս սրտով, զգացումով, անձնվիրութեամբ մեկ ենք և մեկ պիտի մնանք իբրև միևնոյն հայրենիքի զավակներ, միևնոյն հողի տերը և միևնոյն երկրի պաշտպանը»[3]: Կ. Պոլսի քրիստոնյաները, մասնավորաբար հայերը երախտագիտության զգացումով ընդունեցին Դերվիշ Հիմա բեյի խոսքերը:

---

[1] ***Արամ Անտոնեան***, *նշվ. աշխ., էջ 435:*

[*] *«Այս օսմանյան փառապանծ դրոշը մի քանի օրում մենք բարձրացնելու ենք Սոֆիայի, Աթենքի, Բելգրադի, Յետինեի վրա» (**«Հայրենիք»**, № 12, հոկտեմբեր, 1924, էջ 122):*

[2] ***Արամ Անտոնեան***, *նշվ. աշխ., էջ 436:*

[3] *Նույն տեղում, էջ 436–437:*

Ելույթներից հետո ընդունվեց բանաձև, որով կառավարությանը պահանջ առաջադրվեց պատերազմ հայտարարել բալկանյան պետություններին: Հանրահավաքի մասնակիցները թափոր կազմած անցան մայրաքաղաքի փողոցներով՝ բարձրաձայնելով պատերազմական կոչեր, ապա ցույցեր կատարեցին օտար պետությունների հյուպատոսարանների առջև և համակրանքի արտահայտություններ՝ Թուրքիային բարեկամ պետությունների դեսպանատների մոտ:

Նույն օրը՝ սեպտեմբերի 21-ի երկրորդ կեսից հետո, Սուլթան Ահմեդի ընդարձակ հրապարակում չոնդալից միտինգ կազմակերպեց Իթթիհադի կոմիտեն: Հավաքին մասնակցում էր ավելի քան 50 հազար մարդ՝ հիմնականում երիտասարդներ: Նախագահում էր Թալեաթ բեյը: Նրա բացման խոսքից հետո հաջորդաբար ելույթներ ունեցան Հասան Ֆեհմին (արաբ գործիչ), Ջեմալեդդին Արիֆ բեյը (փաստաբանների ընկերության նախագահ), Ուբահդուլահը (քուրդ գործիչ), Էմանուելիտինը (պառլամենտի նախկին հույն պատգամավոր), Յուսուֆ Աքչուրան (թաթար գործիչ, Թուրքականության տեսաբան), Նեսիմ Մազլիսոհը (պառլամենտի նախորդ հրեա պատգամավոր), Էոմիր Նաջին (իթթիհադական նշանավոր գործիչ): Վերջինս կարճ, բայց հուզախառն ճառով ոգևորում ու հրահրում էր ծովածալ ամբոխին՝ կոչ անելով «գնալ ու կոխկրճել անարժան ցեղերին»: Վերջում նա բազմությանը կոչ արեց չարժվել դեպի Ֆաթիհի գերեզմանը և այնտեղ ուխտել իր վրեժը: Հայերից ելույթներ ունեցան Հակոբ Էֆ. Բոյաջյանը (նախորդ պառլամենտի պատգամավոր Ռոդոսթոյից) և դոկտ. Փաչայանը (ՀՅ դաշնակցության կողմից): Բոյաջյանի ելույթը խիստ ռազմաշունչ էր, որն ընդունվեց հավանության բացականչություններով[1]: Իսկ երբ Թալեաթը ձայնը տվեց դոկտ. Փաչայանին, միաժամանակ նրան ուղղեց մի քանի չոյիչ խոսքեր: «Ազատամարտը» գրում էր. «Թալեաթ բեյ բուռն ծափերու մէջ ներկայացուց Տօքթ. Փա-

---

[1] ***Արամ Անտոնեան***, *Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 438, 439:*

չաեանը՝ իբր Դաշնակցութեան ներկայացուցիչ»:

«Պատիւ ունիմ, ըսաւ Տօքթ. Փաշաեան սկսելով իր թուրքերէն ճառը, մասնակցիլ այս միթինկին յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, այն կուսակցութեան՝ որ իր վրայ մարմնացուցած է եղեր Հայութեան վիշտն ու տառապանքը, ազգի մը՝ որ իր երեք հարիւր հազար զոհերով աշխատած է ապահովելու փրկութիւն մը այս հայրենիքին համար, եւ որ, տակաւին, պատրաստ է իր հայրենասիրական պարտքը կատարելու ամէն անգամ՝ երբ այս դժբախտ հայրենիքն ու սահմանադրութիւնը վտանգի տակ են:

Հ. Յ. Դաշնակցութիւնը առ հասարակ դէմ է պատերազմին, որ ժողովուրդը կ'ենթարկէ թշուառութեան եւ կարօտութեան: Սակայն Հ. Յ. Դաշնակցութիւնը չի կրնար իր համամտութիւնը չյայտնել պայքարի մը, որ նպատակ ունի պաշտպանելու հայրենիքը դուրսէն եկող յարձակումներուն դէմ:

Բայց ինչ որ մեզ կը շահագրգռէ ամէնէն աւելի, այն ալ սա կէտն է թէ հայրենիքը, մանաւանդ տագնապի ներկայ օրերուն, պէտք ունի ներքին անդորրութեան, եւ ահա այդ բանին համար է որ մենք, Դաշնակցականներս, կը հրաւիրենք բոլոր օսմանցիները՝ առանց ցեղի եւ կուսակցութիւններու խտրութեան՝ ձեռք ձեռքի տուած աշխատելու ներքին անդորրութեան պահպանման»:

Ընկեր Փաշաեան իր ճառը վերջացուց բուռն ծափերու մէջ»[1]:

Բոլոր հրահրիչ ելոյթների իմաստն այն էր, որ օսմանյան ցեղը, որը, վեց հարյուր տարի շարունակ հաղթանակից հաղթանակ գնալով, կերտել է իր դյուցազնական պատմությունը, հիմա անկասելի պիտի գնա Սոֆիայի և Բելգրադի վրա: «Պիտի կովենք մինչև վերջին շունչը, որպեսզի օսմանյան փառապանծ դրոշը կրկին փառավորվի»:

Ինչպես տեսնում ենք, ելույթ ունեցողների ցուցակն այնպես էր կազմվել, որ նրանք ներկայացնեին կայսրության բոլոր գլխավոր ազգերը: Ըստ որում, հայերին տրվել էր երկու ձայն:

Հանրահավաքի վերջում Թալեաթը ընդհանուր խանդավա-

---

[1] ***«Ազատամարտ»***, *№ 1006, 22 սեպտեմբերի (5 հոկտեմբերի) 1912 թ.:*

ռության մեջ կարդաց հետևյալ բանաձևը.

«Այսօր Սուլթան Ահմէտի հրապարակին վրայ հաւաքուած ամէն ցեղի եւ կուսակցութեան պատկանող ժողովուրդը. լսելէ ետք զանազան ատենախօսներ՝ որոնք ցոյց տուին ազգին եւ կառավարութեան բռնելիք ընթացքը հանդէպ պատերազմով սպառնացող պալքանեան տէրութեանց՝ կու տայ հետեւեալ որոշումները.

Ա. Արտաքին վտանգին դէմ բոլոր Օսմանցիները միացած են.

Բ. Ամէն Օսմանցի՝ որ կուսակցութեան եւ որ ցեղին ալ պատկանի՝ կողմնակից է կառավարութեան, որ կը պաշտպանէ հայրենիքի շահերը ընդդէմ պատերազմի վտանգին.

Դ. Պատրաստ է ամէն կերպ զոհաբերութիւն ընել երկրին ամբողջութիւնը. փառքն ու պատիւը պահպանելու համար:

Գործադիր մարմինը պաշտօն ունի այս որոշումները հաղորդելու վարչապետութեան եւ բոլոր մամուլին»[1]:

Թալեաթ բեյի առաջարկով հանրահավաքը կարգադրիչ մասնախմբին լիազորեց գնալ սուլթանի մոտ և նրան փոխանցել ժողովրդի զգացմունքները:

Այնուհետև ծովածալ բազմությունը անհամար դրոշներով և ռազմաշունչ բացականչություններով ուղևորվեց դեպի Ֆաթիհ սուլթան Մեհմեդի գերեզման: Բերայով անցնելիս թափորը խոնվեց արտգործնախարար Գաբրիել էֆենդի Նորատունկյանի տան առջև, որը գտնվում էր Թաքսիմի հրապարակի վրա՝ Բուլղարիայի դեսպանատնից ոչ հեռու: Ցուցարարները պահանջեցին, որ նա պատասխանի, թե կառավարությունը և անձամբ ինքը ինչ են մտածում «բալկանյան խաժամուժին պատժելու մասին»: Նախարարն անմիջապես երևաց պատուհանին և արտասանեց այս խոսքերը. «Վստա՛հ եղեք, վստա՛հ եղեք, որ օսմանյան մեծ ազգը չի թողնի, որ իր իրավունքները ոտքի տակ

---

[1] **«Ազատամարտ»**, № 1006, 22 սեպտեմբերի (5 հոկտեմբերի) 1912 թ.:

առնվեն»: Բայց այս պատասխանը չգոհացրեց: Դերվիշ Հիմա բեյը նախարարին ասաց, թե «այստեղ բոլոր հավաքվածները պատերազմ են ուզում»: Հետևեց Նորատունկյանի պատասխանը. «Ամեն բան պիտի կատարվի օրենքի և կանոնի համաձայն և ձեր պահանջները պիտի նկատի առնվեն»: Այս դիվանագիտական պատասխանը չգոհացրեց ցուցարարներին, և նրանք սկսեցին բարձրաձայն դժգոհել: Գաբրիել Նորատունկյանն այս անգամ ստիպված էր ջղերը պրկած ամբոխին հետևյալ բառերով հանգստացնել. «Զավակներս, ապահով եղեք, որ աստված մեզ հետ է, ու մենք պիտի հաջողենք մեր բոլոր ձեռնարկներուն մեջ»[1]:

Ամբոխն արձագանքեց բուռն ծափերով ու բացականչություններով և ոգեմաչունչ երգերով շարունակեց իր երթը: Անցնելով մահմեդական թաղերով՝ նա խմբվեց Ֆաթիհ սուլթան Մեհմեդի գերեզմանի շուրջ, ուր հնչեցին ճառեր ու աղոթքներ:

Սեպտեմբերի 24-ին Կ. Պոլսի մի քանի հազար ուսանողներ, «Մենք վաճառված ենք Եվրոպային», «Ոչ մի ինքնավարություն Մակեդոնիային», «Կեցցե՛ պատերազմը», «Դեպի Սոֆիա՜, դեպի Սոֆիա», «Եթե այսպես շարունակվի, մենք կկորցնենք մեր եվրոպական նահանգները» և նմանատիպ ուրիշ պաստառներով «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ուղարկած գործիչների ղեկավարությամբ մտնում են Բ. Դռան բակը, սպառնում նախարարներին, ապա փորձում խուժել չինությունից ներս: Ոստիկանությունը հետ է մղում ցուցարարներին, որոնք տեղում սկսում են միտինգ: Կրակոտ ճառեր են արտասանում իրադարձություններին եվրոպական միջամտության դեմ, հայհոյում Ռուսաստանին և Ֆրանսիային, պահանջում անհապաղ պատերազմ սկսել: Հայտնվում է ծովային նախարարը և ուսանողներին հանգստացնում, թե սահմանադրական կառավարությունն անվարան կկատարի իր պարտականությունը, եթե պատերազմի խնդիր առաջանա:

Օրեցօր սաստկանում էր գրգռումը մայրաքաղաքում, քանի

---

[1] ***«Ազատամարտ»****, № 1006, 22 սեպտեմբերի (5 հոկտեմբերի) 1912 թ.:*

որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ամենուր պանիսլամական կրակ էր բորբոքում: Մյուս կողմից, երիտթուրքերի աջակցությամբ և կառավարության լուռ համաձայնությամբ մոլլաները իրենց հրապարակային ճառերով գրգռում էին ժողովրդին: Իրենց բոլոր ելույթները նրանք վերջացնում էին «մա՛հ գյաուրներին» կոչերով: Ոստիկանությունն անգործ էր, կառավարությունն իր հեղինակությունը պահելու համար չոյում էր ամբոխի ընազդները և անկարգությունների առաջը չէր առնում: Նա ցուցարարներին հանգստացնում էր, թե ինքնավարություն չի տա Մակեդոնիային և այնտեղ քրիստոնյա նահանգապետ չի նշանակի:

Թուրքերի առավել խոշոր ցույցեր տեղի էին ունենում մայրաքաղաքի հայաբնակ Բերա և Ղալաթիա, ինչպես և քրիստոնեաբնակ ուրիշ թաղերում:

Հակաքրիստոնեական ցույցերի ալիքը, դուրս գալով Կ. Պոլսից, տարածվեց երկրով մեկ՝ Արաբստանից մինչև Ռումելիա, Էրզրումից մինչև Իզմիր[1]: Ամեն տեղ նույն ագրեսիվ լոզունգներն ու կոչերն էին:

Կոսովոյում գումարված միտինգի 40.000 մասնակիցները կառավարչության պաշտոնատան առջև տողանց կատարեցին «Կեցցե՛ պատերազմը» կոչերով: Կեսարիայում 20.000-անոց հանրահավաքում իսլամ և քրիստոնյա ճառախոսները, պատերազմի կոչեր անելով, միաժամանակ չէին զլանում վիրավորական արտահայտություններ անել բալկանյան դաշնակից չորս երկրների, նրանց միապետների ու կառավարությունների հասցեին: Նրանցից մեկը կարդաց բուլղարներին անարգող մի ոտանավոր, որի վերջին տողերն էին.

Տեսա բուլղարական զինվորներ,
Ճակատներին գրված՝ «վախկոտ»:

Միտինգի ավարտին պատերազմի օգտին կատարվեց հանգանակություն, որի արդյունքը եղավ 5000 ոսկի[2]:

---

[1] Տե՛ս **Արամ Անտոնեան**, նշվ. աշխ., էջ 442:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 430:

Յույցերի աղմուկը ծնունդ էր տալիս Թուրքերի և մյուս մահմեդականների համընդհանուր խանդավառությանը: Կամավորներ էին հավաքագրում ոչ միայն Պոլսում, այլև երկրի տարբեր մասերում: Կամավոր էին գրվում Թուրքերը, քրդերը, չերքեզները, նույնիսկ ... հայերից ոմանք: Կամավոր գրվելու համար զինվորական իշխանություններին դիմեց նաև մի կաթոլիկ հայ վարդապետ՝ Հովսեփ Սիրանյանը[1]:

Այդ օրերին մայրաքաղաքում երկու զրույց էր շրջում, թե իբր 1) Եվրոպան որոշել է ավելի վճռական քայլ անել՝ Թուրքիայի ամբողջությունը պահպանելու դիմաց հաստատել եվրոպական հսկողություն, 2) եվրոպական, մանավանդ ռուսական դիվանագիտությունը տոգորվել է բարյացակամությամբ դեպի հայոց ազգը: Ասում էին, թե Եվրոպան պատրաստ է ապահովելու բալկանյան պետությունների խաղաղեցումը, եթե Թուրքիան Մակեդոնիային և Հայաստանին տա ինքնավարություն:

Այդպիսի խոսակցություններին մեծապես նպաստեց այն, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան դը Գիրսը արտգործնախարար Նորատունկյանի բնակարանում բալկանյան խնդրի շուրջ կարևոր տեսակցություն ունեցավ նրա հետ: Հանդիպումը տևել էր երկու ժամ: Թե ինչ էին խոսել դիվանագետները, այդպես էլ մամուլում հաղորդագրություն չեղավ:

Եթե Հայաստանին ինքնավարություն տալու և Թուրքիայի վրա եվրոպական հսկողություն սահմանելու մասին լուրերը ճիշտ լինեին, երկուսն էլ մեծապես նպաստավոր կլինեին հայոց համար. տարբերությունն առանձնապես մեծ չէր: Բայց դրանք լի էին մահացու վտանգներով: Հայերը մեծ վախ ունեին մոլեռանդ, արյունռուչտ ուժերից, որոնք, օգտվելով պատերազմական վիճակից, կարող էին հայոց նոր կեղեքումի ու նոր սպանդների դուռ բանալ, ինչպես դա տեղի էր ունեցել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և դրանից հետո: Այդ դեպքում ոչ ոք չէր կարող զսպել Թուրքերի ու քրդերի եռանդը: Հայը դարձյալ պիտի մնար բախտի քմահաճույքին, իր դառը

---

[1] Տե՛ս **Արամ Անտոնեան**, նշվ. աշխ., էջ 442:

ճակատագրի հետ միայնակ՝ ապավինելով միայն աստծու ողորմածությանը:

Նման վիճակում ժամանակ չէր լինի մտածելու ինքնապաշտպանական միջոցներ ձեռնարկելու մասին, քանի որ դա կդիտվեր որպես պատերազմող Թուրքիայի թիկունքին հասցրած հարված, որպես պետական դավաճանություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Նույն մտահոգությունը հայտնել էր Գաբրիել Նորատունկյանը ''Биржевые Ведомости" թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ընթացքում՝ ասելով, թե ապագա պատերազմը կարող է առաջ բերել կայսրության քրիստոնյաների կոտորած[1]: Իսկ այդ կոտորածից քչերը կփրկվեին, քանի որ Եվրոպայի հետ ամեն տեսակի հաղորդակցություն արդեն կտրված էր:

Մեծ հուզում էր տիրում ոչ միայն Կ.Պոլսի, այլև գավառի հայության մեջ: Արդեն քրիստոնյաների մասնակի ջարդեր էին տեղի ունենում այս կամ այն նահանգում:

Ամեն հայ գիտակցում էր, որ իր ազգը, ի տարբերություն ալբանացիների ու մակեդոնացիների, տվյալ ժամանակում անկախության ձգտելու որևէ հեռանկար չունի: Հայոց միակ իղձը երկրում հավասար իրավունք ձեռք բերելն էր և կյանքի, ինչքի ու պատվի ապահովությունը: Մնացածը հայն ինքը կստեղծեր իր տքնությամբ, իր աշխատանքով:

Շատ չէր անցել այն ժամանակներից, երբ Թուրքահայության վերին ու ստորին հատվածները հակառակ մտածումներ ունեին Թուրքիայի ու Թուրքերի մասին:

Ղրիմի պատերազմի օրերին, երբ Եվրոպան Ռուսաստանին ջախջախելու նպատակով կենտրոնացրել էր իր ողջ զինուժը, թե՛ եվրոպական քաղաքական էլիտան, թե՛ լրագրողները, թե՛ մտավորականության սերուցքը օր առաջ էին ուզում տեսնել Թուրքիայի հաղթանակը՝ գտնելով, որ այդ երկիրն ավելի ընդունակ է յուրացնելու եվրոպական արժեքները, քան Ռուսաստանը:

Կ. Պոլսի հայ ղեկավար շրջանները, մտավորականությունը,

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 207, 20 սեպտեմբերի 1912 թ.:

որոնք սովորել էին եվրոպական լեզուներ, եվրոպական ապրելակերպ, իրենց համարում էին Եվրոպայի աշակերտներ և լիովին ընդունում էին նրա մտածելակերպը: Ճիշտ էր նկատել «Անահիտ» հանդեսի հոդվածագիրը՝ գրելով. «Մեր ազգի մեկ մասը եւրոպական կեանքով կ'ապրի, միւսը՝ ասիական. մեր երիտասարդութիւնը կը կրթուի Արևմուտքի մեջ՝ գործելու համար Արևելքի խորքը: Հակասութիւն մը կայ մեր մտածման ու կեանքին, մեր գաղափարականի եւ իրականութեան, հայ մտաւորականութեան և հայ ժողովուրդին միջև»[1]: Դա էր պատճառը, որ հայ մեծամեծերը նույնպես ուզում էին տեսնել թուրքերի հաղթանակը, ոգևորվում էին նրանց հաջողություններով, որը և լայնորեն արտացոլվում էր հատկապես Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլում: Բանն այնտեղ էր հասել, որ զմյուռնիացի մի հայ հրապարակախոս ռուսների կողմից Կարսի գրավումը համարել էր «բոթ», մեծ դժբախտություն քաղաքակրթությունների համար[2]:

Ռուսական երկրի դեմ արշավանքի նկատմամբ բոլորովին այլ վերաբերմունք էր ցույց տվել իր պատմական հողի՝ Հայաստանի վրա նստած, անհուն տառապանքներ կրող հայ ժողովուրդը, որը ցավով էր ընկալել ռուսաց զորքերի անհաջողությունները:

Կ. Պոլսի հայ վերնախավի և գավառի հայության այս հակասական վերաբերմունքն ավելի ցայտուն էր արտահայտվել 1877-ի պատերազմի ժամանակ: Կ. Պոլսի հայ լրագրությունը գովաբանում էր Իսմայիլ փաշային, որ պատերազմի սկզբին կարողացել էր հատել ռուսական կայսրության սահմանը, գրավել Երևանը և «ազատել» Էջմիածինը, այն դեպքում, երբ թուրքական կողմում նույն փաշայի քրդերն անլուր խժդժություններ էին կատարում հայ բնակչության նկատմամբ*: Վկա՝ Բայազետի քստմնեցուցիչ կոտորածը, չեյխ Ջալալեդդինի և Ուբայդուլլահի

---

[1] **«Անահիտ»,** № 5-6, մայիս-հունիս, 1911, էջ 118:

[2] Տե՛ս **«Հորիզոն»,** № 37, 22 փետրվարի 1912 թ.:

* Հայերի նկատմամբ քրդերի այդ ասպատակությունները և խժդժությունները արտացոլում են գտել Մկրտիչ Խրիմյանի «Հայդույժի» մեջ:

ավերիչ արշավանքները, Ալաշկերտի գաղթականությունը ու նրա սոսկալի վիճակը և այլն: Հայ ժողովրդի մեծ մասը, ընդհանրապես, աղ ու հացով էր դիմավորում ռուսական զորքերին: Հայերը ռուս հրամանատարներին խնդրում էին առաջնորդել իրենց երկրի խորքերը: Այդպես էին վարվում նաև ասորիները, որոնք, բանակցություններ վարելով կովկասյան ռազմաճակատի ռուսաց բանակների հրամանատարների հետ, նրանց խնդրում էին իրենց զորքերը չարժել դեպի Վանա լճից հարավ ընկած տարածքները:

Եվ ահա այժմ՝ 1912 թ., ընդհանուր վախը՝ չնչին բացառություններով, միավորել էր թուրքահայ բոլոր հատվածներին: Հայերը պատերազմ չէին ուզում: «Ազատամարտը» գրում էր, թե այն նոր տառապանքներ է բերելու պատերազմող բոլոր կողմերի ժողովուրդներին: «Բիւրաւոր երիտասարդներ երկու կողմէն իրենց դիակները պիտի թողուն վաղը ճակատամարտի դաշտերուն վրայ: ... Անընդունելի է, որ հինգ ժողովուրդներ պիտի բաղխին մէկ մէկու, վատնելով իրենց երակներուն արիւնը, իրենց տնտեսական ոյժը, իրենց բարեկեցութեան միջոցները... Պիտ չչահին պալքանեան ազգերը, որ «պատերազմ» կաղաղակեն: Պիտի չչահի եւ օսմանեան կառավարութիւնը, ինչքան ալ հերոսական յաղթութեամբ պսակուած ըլլայ իր բանակը: Միակ շահողները պիտի ըլլան անոնք, որ մասնակից չեն պատերազմին»[1]:

Հայերի շահը պահանջում էր խաղաղություն՝ երեսուն տարիների վերքերը դարմանելու համար, այլ ոչ թե պատերազմի պատուհասները: Հայ քաղաքական ուժերը նույնպես դեմ էին (համենայնդեպս՝ պաշտոնապես) մոտալուտ արհավիրքին: «Ազատամարտը» հրատարակեց բալկանյան երկրների սոցիալիստական կուսակցությունների հակապատերազմական կոչը, որի տակ ստորագրել էր նաև Դաշնակցությունը[2]:

Հայ քաղաքական գործիչների ընդհանուր կարծիքն այն էր,

---

[1] ***«Ազատամարտ»**, № 1006, 22 սեպտեմբերի (5 հոկտեմբերի) 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 12, հոկտեմբեր, 1924, էջ 121:*

որ Արշարունի պատրիարքը պետք է կանգնի գործի գլուխ և ներքին հնարավորությունները ի մի բերելով՝ վարի ազգային գործերը:

Իսկ պատերազմը մոտենում էր արագ քայլերով: Այն մոտենում էր մի չարք դրդապատճառների մղումով, որոնցից գլխավորը Մակեդոնիայի քայքայված տնտեսական հանգամանքն էր, որը թե՛ իր զավակների և թե՛ բուլղարների համար ստեղծել էր անտանելի դրություն: Պարբերական ջարդերը կամ ջարդերի ուրվականը, ազատ հողերի բացակայությունը և առհասարակ տնտեսական անապահովությունը հալումաչ էին անում գյուղացիներին, իսկ մտավորական մարդիկ թողնում հեռանում էին Բուլղարիա և Սերբիա, ինչպես որ թուրքահայերը գնում էին Անդրկովկաս՝ իրենց ազգակիցների մոտ:

Մակեդոնացիների ծանր վիճակը բարոյապես կաչկանդում էր բուլղարներին: Վերջիններս ուժից վեր ջանք էին գործադրում, որպեսզի իրենց երկրում բարենպաստ պայմաններ ստեղծեին նրանց համար: 1911 թ. տվյալներով Բուլղարիայում պետական պաշտոնյաների 25 տոկոսը և զորքի 15 տոկոսը մակեդոնացիներ էին[1]:

Բուլղարներն սկզբում քիչ բան էին ուզում Բ. Դուռից՝ քիչ թե շատ տանելի կացության հաստատում Մակեդոնիայում, որպեսզի տեղի բնակիչները մնային իրենց երկրում, այլ ոչ թե ամեն տարի հազարներով մուտք գործեին Բուլղարիա:

Բայց Թուրքիան, ինչպես Բեռլինի դաշնագրից հետո ամբողջ ժամանակաշրջանում, այնպես էլ այժմ ոչ մի ցանկություն չէր ցուցաբերում այդ դաշնագրի 23-րդ հոդվածի համաձայն որևէ բարենորոգում անցկացնելու Մակեդոնիայում, այնպես, ինչպես Հայաստանում չէր կիրառում նույն դաշնագրի 61-րդ հոդվածը: Ուրեմն միակ ելքը թուրքական տիրապետությունից Մակեդոնիայի ազատագրումն էր անցնում կռվի միջոցով, որի չարժիչ ուժը պիտի լիներ անհուն ատելությունը դարավոր ոսոխի նկատմամբ:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 207, 20 սեպտեմբերի 1912 թ.:*

Թուրքական քաղաքական ու պետական վերնախավը, չնայած արտաքնապես իրեն պահում էր անվրդով, ցույց էր տալիս, թե կայսրության, նրա ամբողջականության մասին որևէ երկյուղ չունի, բայց իրականում շատ լավ պատկերացնում էր, թե ինչ իրական վտանգ է կախված երկրի վրա: Վարչապետ Քեամիլ փաշան և կառավարության անդամների մեծ մասը դեմ էին պատերազմին՝ մանավանդ նկատի առնելով Տրիպոլիտանական պատերազմի դասերը: Հակառակ բոլոր ցույցերին և մամուլի հիստերիկ կոչերին՝ կառավարությունը հայտարարեց, թե սպառված չեն պատերազմը կանխելու հնարավորությունները: Այս տեսակետի ջերմ պաշտպանը Գաբրիել Նորատունկյանն էր:

Թուրք կառավարողները լավ գիտեին, որ վերահաս պատերազմը ցանկության դեպքում կարող են կանխել միայն վեց մեծ տերությունները: Բայց տվյալ պահին նրանցից մեկը՝ Ռուսաստանը, ուզում էր այդ պատերազմը, իսկ մյուսները չէին ցանկանում ակտիվորեն միջամտել դեպքերին՝ երկյուղ կրելով, որ դա կարող է վերածվել համաեվրոպական պատերազմի[1]:

Կ. Պոլսից եկած սպառնալիքները ոչ միայն չթուլացրին բալկանյան դաշինքի երկրների կամքը, այլև հրահրեցին դրանց կառավարությունների ու ժողովուրդների ատելության և վրեժխնդրության նոր պոռթկումներ:

1912 թ. սեպտեմբերի 22-ին (հոկտեմբերի 5-ին) բացվեց Բուլղարիայի Սոպրանիեի (Ազգային ժողով) հերթական նիստը, ուր թագավորը կարդաց գահաճառ: Միապետն ասում էր, որ Թուրքիան զորքեր է կուտակել բուլղարական սահմանի մոտ, մի բան, որը «չի կարող հանդուրժել մեր երկիրը»[2]: Իր գահաճառը նա վերջացրեց հետևյալ խոսքերով. «Մեր անելիքը հստակ է. բալկանեան միւս պետութիւնների հետ համախորհուրդ պետք է միջոցներ ձեռք առնենք հաստատելու իսկական խաղաղութիւն Բալկաններում»[3]:

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»**, № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1008, 24 սեպտեմբերի (7 հոկտեմբերի) 1912 թ.:

[3] Նույն տեղում:

Սոպրանեին բուռն ոգևորությամբ ողջունեց թագավորի խոսքերը և երկրում հռչակեց պատերազմական վիճակ:

Ապա հանդես եկավ վարչապետ Գեչովը և հայտարարեց, թե ինքը խաղաղության համոզված ջատագով է, բայց ստիպված է լուրջ պատասխանատվություն վերցնել՝ անսալով իր խղճի ձայնին, և որ իրեն դրդել են երեք հիմնական պատճառներ. 1) բոլոր խաղաղ միջոցները սպառված են, 2) իրականացված է բալկանյան չորս պետությունների ճակատագրական զինակցությունը, 3) ժողովրդի բացորոշ կամքն է մեկընդմիշտ լուծել մակեդոնական խնդիրը[1]:

Բուլղարիային անմիջապես հետևեց Սերբիան: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 23-ին, բացվեց Սերբիայի Սկոպչինայի (Ազգային ժողով) նիստը, որտեղ թագավորը կարդաց գահճառ, որից հետո երկրի վարչապետ Պասիչը հայտարարեց, թե ժողովուրդն անհամբեր սպասում է իր միապետի հրամանին[2]: Փոքր Սերբիան, առանց ուշադրություն դարձնելու Ավստրիայի և նրա զինակիցների սպառնալիքներին, ցուցաբերում էր ապշեցուցիչ հանդգնություն և հաստատակամություն:

Նույն օրը ժողովրդին դիմեց Չերնոգորիայի թագավոր Նիկոլան: Նա ասաց, որ չերնոգորցիները պատրաստ են ամեն զոհողության՝ հանուն սուրբ գործի՝ իրենց արյունակից եղբայրների ազատագրության:

Հունական իշխանությունները և մամուլի օրգանները զորակցություն էին հայտնում դաշնակիցների հայտարարություններին և հավաստիացնում, որ լիովին համերաշխ են նրանց քայլերին[3]:

Պատերազմի սպառնալիքը գրեթե իրականություն էր դառնում:

Անգլիական մամուլը արժանահավատ աղբյուրից տեղեկացել էր, որ Թուրքիան Հունաստանին առաջարկել է նրան հանձ-

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1012, 28 սեպտեմբերի (11 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1008, 24 սեպտեմբերի (7 հոկտեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 1004, 20 սեպտեմբերի (3 հոկտեմբերի) 1912 թ.:

նել Կրետեն՝ պայմանով, որ նա հոժարի հեռանալ Բալկանյան դաշնությունից, բայց նա կտրականապես մերժել է[1]:

«Ռեյտեր» հեռագրական գործակալության հաղորդագրության համաձայն՝ Կրետեն հանձնելու պատրաստակամության թուրքական առաջարկը տեղավորվում է այն տարածքների կորուստների շրջանակում, որ կրել է Օսմանյան կայսրությունը վերջին երեք տասնամյակներին:

Դեռևս Աբդուլ Համիդի* օրոք թուրքական կայսրությունից բաժանվել էին Բուլղարիան, Զերնոգորիան, Բոսնիա-Հերցեգովինան (1878 թ. Բեռլինի դաշնագրով), շատ պետություններ՝ Սերբիան, Ռումինիան, Հունաստանը, Ռուսաստանը, ի հաշիվ Թուրքիայի ընդարձակել էին իրենց սահմանները, 1882 թվականից Եգիպտոսում փաստորեն ձևական էր դարձել թուրքական սուլթանի գերիշխանությունը, 1898 թվականից Կրետե կղզին ստացել էր համարյա անկախ կառավարման իրավունք:

Եվ ահա այժմ Թուրքիան ստիպված էր դիմագրավել ավելի մեծ աղետների: Իսկ դա, բացի Ռուսաստանից, չէր մտնում եվրոպական տերությունների հաշիվների մեջ: Տվյալ պահին նրանցից ոչ մեկը Բալկաններում պատերազմ չէր ուզում: Բայց չուզելը քիչ էր. հարկավոր էր պետությունների միասնական կամք, որը, սակայն, չկար: Եվրոպական տերությունների միջև այն աստիճան սուր էր հակամարտությունը, որ դժվար թե կարելի լիներ նրանց համախմբել ընդհանուր համաձայնության շուրջ՝ Բալկաններում status quo-ն պահպանելու համար:

Բալկանյան պետությունները չատ լավ ըմբռնել էին եվրոպական կառավարությունների այս դիրքը, ուստի և ջանում էին, բնականաբար, օգտվել դրանից: Ակնհայտ էր, որ եվրոպական

---

[1] **«Ազատամարտ»**, № 1034, 20 հոկտեմբերի (2 նոյեմբերի) 1912 թ.:

* Աբդուլ Համիդը օսմանյան 34-րդ սուլթանն էր, սուլթան Աբդուլ Մեջիդի երկրորդ որդին: Նա ծնվել էր 1842 թվականին, գահ էր բարձրացել 1876-ի պալատական հեղաշրջման հետևանքով, երբ սուլթան Մուրադ V-ը (Համիդի մեծ եղբայրը), խելագար հռչակվելով, բռնափակվել էր Զրաղանի պալատում, ուր և վախճանվել էր 1904 թ.: Սուլթան Համիդի կառավարությունը վերջ էր գտել 1908 թ.՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո: Մահացել է Կ. Պոլսում, բնական մահով, 1918 թվականին:

խաղաղության բանալին պետք էր փնտրել ո՛չ թե եվրոպական այս կամ այն մայրաքաղաքներում, այլ Սոֆիայում, Բելգրադում կամ Աթենքում: Բալկանյան այս երկրների կառավարությունները չատ լավ հասկացել էին, որ մեծ պետություններն այնպես են բաժան-բաժան իրարից, այնպես լարված են իրար դեմ, որ բացառվում է նրանց միավորումը՝ հավաքական ճնշում գործադրելու իրենց վրա:

Կացությունը փրկելու համար, այնուամենայնիվ, տենդագին ջանքեր էին գործադրում Ֆրանսիան և նույնիսկ Գերմանիան: Անգլիան երկդիմի դերում էր:

Ընդհանուր տրամադրություն կար ենթադրելու, որ եթե բալկանյան հարցի չուրջ հնարավոր լիներ Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև անկեղծ համաձայնություն ձևավորել, ապա պատերազմի հարցը կարելի կլիներ վերացած համարել: Բայց այդ երկու պետությունների բալկանյան չահերն այնքան հակամարտ էին, և նրանց միջև այնպիսի խոր անվստահություն կար, որ ո՛չ Ֆրանսիային հաջողվեց դրականապես ազդել իր դաշնակից Ռուսաստանի վրա, ո՛չ էլ Գերմանիային՝ իր դինակից Ավստրիայի վրա:

Մեծ տերությունների դիվանագիտական այդ խաղում ամենավարագուրված, ամենաառեղծվածային դերը բաժին էր հասել Անգլիային:

Այդ օրերին Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը Լոնդոնում անգլիական կառավարության կողմից հավաստիացում էր ստացել, թե բալկանյան տագնապի ընթացքում իր երկիրը կգործի Ռուսաստանի հետ համերաչխ: Մյուս կողմից Անգլիան, որ Բոսֆորի ափերին գրեթե տերուտիրական էր, ներկայանում էր իբրև Թուրքիայի ամենալավ բարեկամ ու խորհրդատու: «Ինչո՞վ բացատրել Անգլիայի յանուսեան այս երկդիմի քաղաքականութիւնը,- հարց էր տալիս «Ազատամարտը»,- որո՞ւ կողմն է, իրոք, Անգլիան պալկանեան այս տագնապի ատեն՝ Թուրքիո՞յ, թե պալքանեան փոքրիկ տերութեանց»[1]:

---

[1] ***«Ազատամարտ»****, 30 սեպտեմբերի (13 հոկտեմբերի) 1912 թ.:*

Կասկած չկար, որ ավստրո-ռուսական բալկանյան հակամարտության մեջ Անգլիան Ռուսաստանի պաշտպանն էր, և ինքը նրանից ոչ պակաս էր շահագրգռված՝ ուժեղացնելու սլավոնական տարրը, որը միակ պատնեշն էր համագերմանականության վտանգի դեմ հանդիման: Ուստի նրա համակրանքը, անկասկած, բալկանյան սլավոն ազգությունների կողմն էր:

Բայց մի հանգամանք գալիս էր ծանրակշիռ խոսք ասելու միանգամայն ուրիշ կողմից: Ինչպես վերը նշվել է, Անգլիան ամեն կերպ խուսափում էր Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամական դիրք բռնելուց, քանզի իր կայսրության մեջ հարյուր միլիոնների հասնող մահմեդական բնակչություն ուներ: Այդ իսկ պատճառով նա ամեն ինչ անում էր վարագույրի հետևում մնալու և իր ուզածը ուրիշների (տվյալ դեպքում՝ Ռուսաստանի) միջոցով ի կատար ածելու: Իսկ դա նշանակում էր, որ բալկանյան գործերում Անգլիայի հետաքրքրությունները շատ ավելի նվազ էին, քան Ռուսաստանի և Գերմանիայի:

Գերմանական աջ մամուլն իր կառավարության վրա հարձակումներ էր գործում Ռուսաստանի ճնշման դեմը չառնելու և նրա առջև բացահայտ զիջողական քաղաքականություն վարելու համար: Թերթերը ցավով նշում էին, որ «Թուրք լավ հարևանի» փոխարեն Բալկաններում առաջ են եկել մի շարք պետություններ, որոնք թաքուն կամ բացահայտ աշխատում են իրենց սահմանները ընդլայնել եղբայրական Ավստրիայի հողերի հաշվին: Այդ պետությունները սլավոնական են, հետևապես՝ Ռուսաստանի հենարանները: Չնայած տվյալ պահին ռուս-բուլղարական հարաբերությունները սառն են, չեչտում էին պարբերականները, բայց Բուլղարիան վճռական բոպեին կընդունվի սլավոնական միաբանության մեջ, իսկ սլավոնական մյուս երկու պետությունները՝ Սերբիան ու Չերնոգորիան, կմիանան ռուսական կայսրությանը:

Այդ բոլոր սպառնալիքները առաջին հերթին ուղղված են իրենց գլխավոր բարեկամի՝ Ավստրիայի դեմ, որի թուլացումը իրենց թիկունքի քայքայում է նշանակում, տագնապ էր բարձրացնում գերմանական աջ մամուլը:

Սեպտեմբերի 23 (հոկտեմբերի 6)-ին Անգլիայի և Ֆրանսիայի

կառավարությունները հանդես եկան խաղաղասիրական նոր և վերջին դիմումով՝ ուղղված բալկանյան չորս դաշնակիցներին: Առաջարկվում էր նորից հնարավորություն տալ Թուրքիային՝ Ռումելիում, մասնավորապես Մակեդոնիայում Անգլիայի և Ֆրանսիայի հսկողությամբ չտապ ձեռնարկելու բարենորոգումներ:

Դաշնակիցները պատասխանեցին, որ Մակեդոնիայի մասին 1878 թ. Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածը մինչ այսօր Թուրքիան ոտնահարել է, և ոչ մի երաշխիք չկա, թե նա կձեռնարկի այդ հոդվածի կենսագործումը[1]:

Հետևապես օսմանյան պետության առջև դրված էր երկու խնդիր՝ բարենորոգում կամ պատերազմ, ասվում էր դաշնակիցների համատեղ պատասխանում:

«Ազատամարտը» համոզված էր, որ պատերազմն այլևս անխուսափելի է, որ այն, ըստ էության, լինելու է ժողովուրդների պատերազմ՝ դաժան ու անգութ: Թերթը գրում էր. «Ո՛չ մէկ կայսեր, ո՛չ մէկ թագաւորի, ո՛չ մէկ հանրապետութեան նախագահի, ո՛չ մէկ տէմօքրասիի, ո՛չ մէկ փրօլէթարիաթի ձեռքն է ապահովաբար արգիլել այն ցեղային պայմաններուն՝ ուրկէ կրնայ պատերազմը ծագիլ»[2]:

Թուրք օտար մարմինը խցանվել-մնացել էր Բալկանյան թերակղզու ծայրին: Վերջին ճիգերն էին պետք Թուրքերին այդտեղից վոնդելու համար: Հասել էր ժամը, և եվրոպական դիվանագիտության ոչ մի չանթարգել չկարողացավ խափանել պատերազմը:

Բալկանյան չորս փոքր պետությունները՝ Չերնոգորիան, Սերբիան, Բուլղարիան և Հունաստանը, հաշվի չնստեցին ո՛չ եվրոպական մեծերի հորդորներին, ո՛չ հովանավորչության մասին նրանց հերթական խոստումներին և ո՛չ էլ Թուրքիայի տարածքային ամբողջականության երաշխավոր լինելու մասին նրանց հայտարարություններին: Նրանց կազմած սերտ դաշինքն

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1009, 25 սեպտեմբերի (8 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] **«Ազատամարտ»**, № 1025, 11 (24) հոկտեմբերի 1912 թ.:

արդեն լուրջ գործոն էր Եվրոպայում: Դա մի երիտասարդ, խիզախ ու քաջարի ուժ էր, որը վճռել էր խփել դարավոր ոսոխին, հաղթել կամ ջախջախվել:

ԲԱԽՏԱԿԻՑ ՀԱԼԱԾՑԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Հայ-բուլղարական բարեկամությունը դարերի պատմություն ունի, որի հիմքը երկու ժողովուրդների պատմական ճակատագրի ընդհանրությունն է: Ե՛վ հայերը, և՛ բուլղարները, որոնք ավելի քան հինգհարյուրամյակ տառապում էին Թուրքական դաժան լծի տակ, երբ հնարավոր էր լինում, օգնության ձեռք էին մեկնում միմյանց:

Հայերը Բուլղարիայի հանդեպ իրենց սերն ու անձնազոհության պատրաստակամությունը հայտնեցին հատկապես Թուրքական լծի դեմ բուլղար ժողովրդի ազատագրական պատերազմի տարիներին՝ 1875-1877 Թվականներին: Ապստամբ բուլղարների մարտական ջոկատների կողքին ուս ուսի մարտնչում էին հարյուրավոր հայեր: 1877-1878 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ նրանք ռուսական բանակի շարքերում մաքառել են դարավոր Թշնամու դեմ: Ժամանակին ամբողջ Բուլղարիայում հայտնի էին ռուս-Թուրքական պատերազմի օրերին՝ 1877 Թ., Թուրքերի դեմ հերոսության և անձնազոհության բարձր օրինակներ ցուցաբերած հայերի՝ Պազարճիկ քաղաքի հեռագրատան պաշտոնյա Հովհաննես Սվաճյանի, Բալչիկ քաղաքի հեռագրափոստատան պետ Երանոս Երանոսյանի, Պլովդիվի հեռագրատան հեռագրավար Պողոս Էլմասճյանի, նույն քաղաքից իրավաբան Կարապետ Թագվորյանի, բժիշկ Նշան Թագվորյանի և ուրիշների անունները:

Բուլղարիայի ազատագրումից հետո հայերը սատարեցին երկրի մշակութային և տնտեսական վերելքին, ուժերը ներածին չափով նպաստեցին բուլղարական հայրենիքի վերածնությանը: Ուստի պատահական չէ, որ տարբեր ժամանակների բուլղար պետական, հասարակական, մշակութային գործիչները զանազան առիթներով դրվատել են բուլղարահայության նվիրվածու-

թյունն ու հավատարմությունը, ջերմ զգացմունքներ արտահայտել հայ ժողովրդի նկատմամբ:

«Հայ ժողովուրդը,- գրել է բուլղար մեծ մտածող Լեոն Պլավան,- ամբողջ մարդկության մեջ ունի ամենախորհրդավոր պատմությունը»[1]:

Բուլղար գրող Նիկոլա Աթանասովը նշել է. «Բուլղարացին հայերի մեջ տեսել է ոչ միայն բռնության և անարդարության զոհերի, այլև մի հերոսական ժողովրդի, որ զգետնվել է՝ դյուցազնական մարտնչումներից հետո միայն: Ապա կամքի հսկաներ է կանգնեցրել, մեռնելու պատրաստ՝ իրավունքի և ազատության համար: Ինչպես բուլղար, այնպես էլ հայ ժողովուրդների ամենամեծ արժանիքը ազատության ձգտումն է: Եղբայրացած ազատության գաղափարին, հայերը բարոյապես և նյութապես սատարել են մեզ՝ ազատագրվելու Թուրքական լծից: Եղբայրության մեջ ի՞նչ կա սրանից ավելի մաքուր ու պայծառ, քան ներշնչվել միևնույն գաղափարով և հավատալ այդ գաղափարի իրականացմանը»[2]:

1894-1896 ԹԹ. հայկական կոտորածները ամենուրեք, այդ թվում Բուլղարիայում, առաջ էին բերել համակրանք հայ ժողովրդի նկատմամբ: Բուլղարիա ապաստանած հայ բեկորներին աջակցություն ցույց տալու կոչեր էին արել բուլղարական մտավորականության լավագույն ներկայացուցիչները, պետական ու քաղաքական բազմաթիվ գործիչներ: Հայ ժողովրդի ողբերգական վիճակը, տառապյալ հայրենիքի առևանգված ազատությունը անհավասար պայքարով հետ բերելու նրա անսահման ձգտումն ու կիրքը ոգեշնչման աղբյուր են եղել բուլղար մեծ բանաստեղծներից մեկի համար: Այդ օրերին հայերի նկատմամբ բուլղար ժողովրդի տածած զգացմունքներն առավել ցայտուն էր արտահայտել պոետ Յավորովը (Պեյո Կրաչկալով):

Հայկական կոտորածներից հետո Բուլղարիայի տարբեր քաղաքներում առաջացել էին հայկական համայնքներ: Դրան-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 17:

[2] Նույն տեղը, թ. 19:

ցից մեկը ձևավորվել էր Սկոբելևո կայարանում, որտեղ պաշտոնավարում էր Յավորովը: Այստեղ նա առաջին անգամ չփվեց հայրենազուրկ հայերի հետ, ականատես եղավ նրանց թշվառ վիճակին: 1898–1899 թթ. Յավորովը՝ Ստրալջա կիսակայարանում որպես հեռագրատան պետ, ավելի մոտիկից է հաղորդակից լինում գաղթական հայերի անհուն ցավերին: Հալածական բեկորների հետ մտերմիկ շփումներից նրա մեջ աստիճանաբար հղանում է հայերի գեղարվեստական կերպավորման գաղափարը: 1899 թ. սեպտեմբերին տեղափոխվելով Անխիալո ծովափնյա գյուղաքաղաք՝ Յավորովը գրում է «Հայերը» («Արմենցի») նշանավոր բանաստեղծությունը: Դա նրա ամենաներշնչյալ ստեղծագործություններից մեկն էր, որը բուլղար ժողովրդի ազգային գիտակցության մեջ ավելի խորացրեց հայերի նկատմամբ ունեցած ջերմ զգացմունքները:

Տարագիրներ են նրանք, նրանք բեկոր են չնչին՝
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի,
Եվ զավակներն են զրկված՝ հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ ոճիրի ...:

Օտարներից չատ քչերն են այսքան խոր, սեփականի պես զգացել հայ ժողովրդի անհուն տառապանքը:

Արդյո՞ք բանաստեղծական մի հայտնատեսության ուժով էր, թե հայերի պատմության հետ ծանոթությունն էր, որ Յավորովին մղեցին կերտելու բախտակից ժողովրդի զարկված զավակների կերպարը պարտության օրերին, իսկ հերոսականորեն հպարտ, տանջանքի պահին անգամ գլուխը միշտ բարձր, պատվի զգացումով միշտ պատրաստ դիմագրավելու ճակատագրի նոր հարվածներին:

Նրանց սրտերը ցասման կրակներով են լցված,
Այտերն ի վար արցունքի այրող չիթեր են կաթում,
Որոտի պես է թնդում զայրագին երգը նրանց,
Եվ աչքերում վրեժի կայծակներ են բոցկլտում:

«Հայերը» բանաստեղծությունն առաջին անգամ լույս տեսավ 1900 թ. Բուլղարիայում հայտնի «Միսլ» հանդեսի մարտապրիլյան համարում և անմիջապես հեղինակին բերեց համընդհանուր ճանաչում: Ժամանակի գրական-քննադատական միտքն

այն համարեց Յավորովի և առհասարակ բուլղարական քնարերգության ամենանշանակալից երևույթներից մեկը[*]:

Բուլղարական թերթերից մեկը գրել է. ««Հայերը» բանաստեղծությամբ Յավորովը առհավետ կապեց իր անունն ու անթառամ փառքը հայ ժողովրդի ճակատագրի և անվան հետ: Նույնպես ամուր չաղկապեց մեր ժողովուրդներին»[1]:

---

[*] *Յավորովի «Հայեր» բանաստեղծությունն առաջին անգամ հայերեն լույս տեսավ 1909-ին, Վահան Թեքեյանի խմբագրությամբ հրատարակվող «Շիրակ» հանդեսում, բուլղարահայ անվանի իրավաբան և հասարակական գործիչ Ստեփան Հինդլյանի թարգմանությամբ: Տարիներ անց՝ 1933 թ., Յավորովի ծննդավայր Զիրպան քաղաքում բանաստեղծի հուշարձանի բացման արարողությանը հանդես գալով՝ Հինդլյանը ասել է. «Յավորովը ձերն է, քանզի բուլղարերեն գրեց իր «Հայերը», բայց նաև մերն է, քանզի ներշնչվեց մեր ժողովրդի վշտից ու տառապանքից: Չեմ ուզում յուրացնել նրան, այլ ցանկանում եմ չեչտել նրա մեծության ամենահատկանշական կողմը. Յավորովի մեջ գերիշխում է մարդկայինը, և պատկանելով ձեզ և մեզ, պատկանում է ողջ աշխարհին»:*

[1] *"Яворовъ листъ", 18 օգոստոսի 1935 թ.:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՌՆԿՈՒՄԸ

Առաջինը սուրը պատյանից հանեց փոքրիկ, բայց քաջ լեռնական Զերնոգորիան (Ղարադաղ, Մոնտենեգրո, Սև լեռ)[1]: Արձակելով առաջին կրակը՝ նա բոցավառեց բալկանյան հրդեհը, որից սոսկում էր բովանդակ Եվրոպան:

Բանն այսպես եղավ. Կ. Պոլսում Զերնոգորիայի ներկայացուցիչ Բլամենացը եկավ Բաբը Ալի (Բարձրագույն դուռ) և ներկայացավ արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանին: Կարճ խոսակցությունից հետո չերնոգորցին նրան հանձնեց պատերազմի հայտարարությունը պարունակող ծանուցագիր, ուր մասնավորապես ասված էր.

«Վսեմ. Տեր,

Ցավում եմ, որ Սև-լեռան արքայական կառավարությունը զուր է սպառել բոլոր բարեկամական միջոցները, որոնք նպատակ ունեին հաշտարար կերպով լուծել այն բազմաթիվ թյուրիմացություններն ու վեճերը, որոնք անվերջ ծագում են օսմանյան կառավարության հետ:

Համաձայն Օգոստոսափառ Վեհապետիս՝ Ն. Վ. Նիկոլա Ա-ի արտոնության, պատիվ ունեմ հաղորդելու Ձերդ Վսեմությանը, որ այսօրվանից սկսած չերնոգորյան արքայական կառավարությունը խզված է համարում ամեն հարաբերություն Օսմանյան

---

[1] ***А. А. Могилевич, М. Э. Айрапетян***, *На путьях к мировой войне 1914-1918 гг., ОГИЗ, Госполитиздат, М., 1940, стр. 212.*

կառավարության հետ՝ չերնոգորցիների զենքի բախտին ձգելով որքան իրենց, նույնքան և օսմանյան տիրապետության տակ գտնվող իրենց եղբայրների[*] դարեր ի վեր անտեսված իրավունքների վերականգնումը:

Մեկնում եմ Պոլսից:

Բլամենաց:

25.09 (7.10)

1912 թ.»[1]:

Նորատունկյան էֆենդու համար նորություն չէր այս զեկուցագիրը, որի մասին նախորդ գիշեր նա տեղեկություն էր ստացել Չերնոգորիայում իր երկրի ներկայացուցիչ Մուխտար բեյից:

Այդ պահին Թուրքիայի արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանի պահվածքն այսպես է նկարագրել Արամ Անտոնյանը. «Իր սովորական պաղարիւնութեամբ՝ արտաքին գործոց նախարարը ընդունեց պ. Բլամենացի ծանուցագիրը, յայտարարելով, որ Օսմ. կառավարութիւնը միշտ բարեացակամ եղած է իր դրացիներուն հանդէպ, բայց քանի որ հիմայ Ղարատաղ կը փորձէ թշնամական ընթացք մը բռնել Թուրքիոյ դէմ և նոյն իսկ պատերազմ կը հռչակէ, Բ. Դուռը կը ընդունի այս հրաւէրը և հայրենիքին պատիւն ու Օսմ. ազգին նուիրական իրաւունքները բարձր պահելու համար կը ձեռնարկէ հարկ եղած միջոցներուն»[2]:

Չերնոգորիայի ներկայացուցչի մեկնելուց հետո Գ. Նորատունկյանը չտապեց նախարարների խորհրդի նշանակված նիստին և վարչապետին հանձնեց Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու մասին Չերնոգորիայի հայտարարությունը: Փաստաթղթի բովանդակությունը վարչապետը ներկայացրեց խորհրդի նիստի մասնակիցներին: Այնուհետև կառավարության նիստը լսեց ռազմական նախարարի՝ երկրի զինված ուժերի պատրաստության մասին բացատրություններն ու հավաստիքները, որից

---

[*] *Նկատի ուներ մակեդոնացիներին:*

[1] ***«Ազատամարտ»**, № 1010, 26 սեպտեմբերի (9 հոկտեմբերի) 1912 թ.:*

[2] ***Արամ Անտոնեան**, Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 463:*

հետո որոշում ընդունվեց սկսել ռազմական գործողություններ «չափը կորցրած մանուկի» դեմ:

Բալկանյան պետություններից տարածքով ամենափոքրի և ընդամենը 250 հազար բնակիչ ունեցող Զերնոգորիայի հարձակումը Թուրքիայի վրա սկզբում վերջինիս բավական զվարճություն պատճառեց: Պոլիսը խնդաց, արհամարհեց ու հեգնեց: Մամուլն առաջվա պես բալկանյան սլավոն պետությունների իրական ուժին անտեղյակ Թուրք ամբոխին կերակրում էր սլավոն ցեղի անճարակության մասին ցնորական հեքիաթներով:

Սուլթանի հայտարարությունից անմիջապես հետո Բ. Դոան կարգադրությամբ Զերնոգորիայի դեսպանության չենքի վրայից իջեցվեցին նրա զինանշանը և դրոշը: Կեսօրից հետո Բլամենացը ռումինական չոգենավով մեկնեց Պոլսից՝ նախապես Թուրքիայում իր երկրի հպատակներին հանձնելով Ռուսաստանի դեսպանության պաշտպանությանը:

Նույն ժամին օսմանյան կառավարությունը հեռագրով հրաման հղեց Զերնոգորիայի մայրաքաղաք Զետինեի օսմանյան ներկայացուցչին՝ անմիջապես վերադառնալ Կ. Պոլիս՝ դեսպանության պաշտոնաթղթերը հանձնելով նույն քաղաքի գերմանական դեսպանատանը[1]:

Հաջորդ օրվա «Ազատամարտում» «Արդեն պատերազմ» խորագրով նյութում կարդում ենք. «Կասկած չի կայ որ պիտի չուշանան նաեւ պալքանեան միւս զինակիցներն ալ հետեւելու Գարատաղի:

Հետեւաբար կարելի է ըսել որ պալքանեան հաւաքական պատերազմը ոչ թէ օրուան, այլ ժամերու խնդիր է միայն:

Եւ ինչ տարակոյս որ կռիվը պիտի մղուի մեծագոյն կատաղութեամբ երկու կողմէն ալ...

Նկատի առնելով արդի պատերազմական արուեստի կատարելագործուած զենքերն ու ռազմական գործիքները, կարելի է այժմէն իսկ նախատեսել թէ որպիսի մարդկային աղէտներու ականատես ըլլալ սահմանուած են ճակատամարտի դաշտերը»[2]:

---

[1] ***«Ազատամարտ»**, № 1010, 26 սեպտեմբերի (9 հոկտեմբերի) 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

Զերնոգորիայի հարձակումից ժամեր անց սուլթան Մեհմեդ Ռեշադը հանդես եկավ օսմանցիներին ուղղված հայտարարությամբ, ուր ասված էր, թե իր կառավարությունն ամեն ինչ արել է պատերազմը կանխելու համար, բայց դա չի հաջողվել, ուստի բանակը և ժողովուրդը միասնաբար պետք է պատժեն թշնամիներին: «Այսօր,– ասված էր ուղերձում,– ձեզ վրայ ընկած է սուրբ պարտականությունն՝ պաշտպանել հայրենիքը, որի համար ձեր նախնիներն իրենց թանկագին արիւնն են թափել՝ ապահովելու համար ձեր երջանկությունը: Ուստի ձեր պարտքն է՝ չթողնել, որ թշնամին ոտնակոխ անի այս նուիրական հողը, որի յուրաքանչիւր մասնիկը պահպանում է ձեր նախնիների մասունքները: Համախմբվելով մեր երկրի սահմանագլուխների վրայ, թշնամիներն ուզում են ձեզ ժառանգուած երկիրը խլել ձեր ձեռքից, ուզում են քանդել ձեր զավակների ու թոռների երջանկությունը: Ինչպէս ձեր նախնիները, դուք եւս պէտք է քաջութեամբ պաշտպանեք հայրենի հողը, վազեք դեպի սահմանագլուխ՝ ձեր սրով կտրելու այն ձեռքերը, որոնք երկարուած են ձեր հայրենիքի դեմ... Ես վստահ եմ, որ դուք նոր յաղթանակներ եք ավելացնելու ձեր նախնեաց քաջութիւններու վրայ: Բոլոր օսմանցիներին ուրախացնելու համար Աստուած ձեզ պարգևի նոր պանծալի յաղթութիւններ»[1]:

Առաջին իսկ պահերից Զերնոգորիայի զինված ուժերը իրենց հարվածներն ուղղեցին Տեչիչ և Թարապոչ բերդերի վրա: Կատաղի մարտերի ընթացքում երկու կողմերը տալիս էին ծանր կորուստներ: Կովի դաշտում թուրքերը թողեցին 700-ից ավելի սպանված և ավելի շատ վիրավորներ ու գերիներ: Զերնոգորցիները տվել էին չուրջ 250 զոհ և 800-ից ավելի վիրավոր: Երկու կողմերի վիրավորներն ու թուրք գերիները փոխադրվեցին Զետինե: Քանի որ սննդամթերքի խիստ պակասի պատճառով չերնոգորցիներն ի վիճակի չէին հոգալու բոլոր թուրք գերիների ծախսերը, ուստի Նիկոլա թագավորը խնդրանքով դիմեց հունական կառավարությանը՝ թույլ տալ գերիների մի մասը

[1] **«Ազատամարտ»**, № 1014, 30 սեպտեմբերի (13 հոկտեմբերի) 1912 թ.:

փոխադրել Էգեյան ծովի կղզիներից որևէ մեկը[1]:

Տեչիչը և Թարապոչը գրավելուց անմիջապես հետո չերնոգորցիները կռիվներ սկսեցին Թուզիի և Շքոթրայի ուղղությամբ, բայց չուտով ստիպված էին հարձակումները դադարեցնել՝ ուժերը կարգի բերելու և ընդհանուր զորահավաք կազմակերպելու համար: Այդ դադարից օգտվելով՝ Շքոթրայի Թուրքական հրամանատարությունը կարճ ժամանակում կարողացավ զենքի կոչել 20.000 Թուրք և ավելի քան 10.000 ալբանացի[2]:

Իսկ այդ նույն ժամանակ բալկանյան մյուս սլավոն բանակները տենդորեն վերջին պատրաստություններն էին տեսնում, կառավարությունները բնակչության շրջանում ուժգին քարոզչություն էին մղում և հոգ տանում պարեն ու ռազմամթերք արագ տեղափոխելու դեպի սահմանային գծերի էական կետեր:

Մի քանի օր հետո, իրար հետևից, սրտառուչ նվիրումով Չերնոգորիային միացան Հունաստանը (4 (17) հոկտեմբերի), Սերբիան և Բուլղարիան (5 (18) հոկտեմբերի)՝ շարժելով իրենց բանակները[3]:

Հիլմի փաշան վիեննական թերթերին տված հարցազրույցի ընթացքում հայտարարել էր, թե «պատերազմը Թուրքիային հանկարծակի բերեց»[4]: Միայն օրեր անց Բ. Դուռը մանիֆեստ հրատարակեց բալկանյան չորս երկրներին պատերազմ հայտարարելու մասին[5]:

Այսպիսով, եվրոպական կառավարությունների ոչ մի արգելք ի վիճակի չեղավ կանխելու պատերազմը: Բացի Ռուսաստանից, մյուս մեծ պետությունները պատրաստ չէին նման անակնկալի: Ռումբի պես պայթած պատերազմը հատկապես չփոթեցրել և չշմեցրել էր «խաղաղասեր», եռանդուն դիվանագետներին: Միջպետական նոր հարաբերությունների համար

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1028, 14 (27) հոկտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:*

[3] *Տե՛ս* ***"Вестник Европы"****, № 2, февраль, 1913, էջ 347:*

[4] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1261, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:*

[5] *Տե՛ս* ***В. А. Жебокрицкий****, Болгария во время балканских войн 1912-1913 гг., изд. Киевского университета, 1961, էջ 46:*

պատերազմը դարձավ մի զորեղ առիթ՝ բացելով նոր հեռանկարներ և առավել ևս հարուցելով նոր խնդիրներ:

Թուրքիայի վրա Չերնոգորիայի հարձակման հաջորդ օրն իսկ հետևեց Բալկանյան պետություններին ուղղված Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի համատեղ ծանուցումը, ուր ասված էր. «Տերությունները պարսավում են ամեն մի գործողություն, որը կարող է խանգարել խաղաղությունը, 2) Հիմնվելով Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածի վրա, ժողովուրդների շահերի համար տերությունները ձեռք կառնեն Թուրքիայում բարենորոգումների իրագործմանը, նկատի առնելով, որ դրանք ոչ մի վնաս չպիտի հասցնեն Սուլթանի վեհապետությանը և օսմանեան կայսրության հողային ամբողջականությանը»[1]:

Նույն ժամերին հաջորդեց նաև Գերմանիայի՝ սպառնալիքներով լի նախազգուշացումը բալկանյան դաշնակիցներին: Բեռլինը նրանց սաստում էր, թե «այդ արկածախնդրությունը» կարող է թանկ նստել ոչ միայն Չերնոգորիայի, այլև ողջ տարածաշրջանի համար[2]:

Զուշացավ նաև Իտալիայի կառավարության հայտարարությունը, ուր ասված էր, որ իր երկիրը մեծ անհանգստությամբ է հետևում բալկանյան վտանգի զարգացմանը և վճռել է ամեն բան անել կանգնեցնելու պատերազմը:

Իտալիայի տագնապը հասկանալի էր. պատերազմը անխուսափելիորեն վերջ կտար Բալկաններում հաստատված status quo-ին և նույն պահին հրապարակ կնետեր իտալա-ավստրիական հին վտանգը, այս անգամ նոր՝ թերևս ավելի սուր կերպարանքով: Ավստրիան Բալկանների առաջապահ պետությունն էր և վճռական էր մնալու այդ դերում, այսինքն՝ նա չէր կարող հանդուրժել, որ սերբերը գրավեն Սերբիայի և Չերնոգորիայի միջև ընկած նախկինում Սերբիային պատկանած տարածքը: Հակառակ դեպքում Ավստրիան կբաժանվեր Թուրքիայից, իսկ դա նշանակում է, որ կկտրվեր նաև Էգեյան ծովից: Ուստի պա-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:

[2] Նույն տեղում:

տերազմի պարագային Ավստրիան ստիպված կլիներ դրա առաջն առնելու համար գրավել Նովի Բազարը: Ահա թե ինչու Իտալիան նույնպես սպառնագին դիմեց բալկանյան դաշնակից-ներին՝ խաղաղությամբ վերջացնել գործը:

Բայց դաշնակիցներն անդրդվելի էին: Նրանք սեպտեմբերի 26-ի երեկոյան հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ուր ասված էր. «Տերությունների միջամտությունը չատ է ուշացած: Տասնյակ տարիներ Եւրոպան մեզ խաղաղության կոչեր էր անում, բայց այդ «խաղաղությունը» մեզ համար միայն արիւն է բերել: Մենք այսուհետև Եւրոպայից խաղաղություն չենք պահանջելու, միաժամանակ պահանջելու ենք հարգել մեր իրաւունքը՝ թողնել մեզ մեր ձեռքով մեզ համար հաստատելու իրական խաղաղություն: Մենք կպաշտպանենք մեր շահերը, որոնք չատ ավելի կենսական են, քան [Թիւրքիայում] Եւրոպայի ունեցած շահերը: Մենք կանենք այն, ինչ եւրոպական դիվանագիտությունն անկարող եղավ կամ ավելի չուտ՝ չցանկացավ անել բազում տարիներ: Բալկանեան պետությունները որևէ մեկից օգնություն չեն սպասում և ոչ էլ դրա համար կոչեր են անում: Մենք վճռական ենք ազատվելու ամէն տեսակի խնամակալությունից և մեր իսկ ձեռքով վարելու բալկանեան գործերը»[1]:

Հիրավի, ինչպես հայերը, բալկանյան ժողովուրդները նույնպես իրենց ազատագրությունը անցյալում միչտ փնտրել են դրսում, բայց ոչ մի անգամ օգնություն չէին ստացել: Եվ ահա այժմ նրանք իրենց ձեռքն էին առել սեփական ճակատագիրը. մի կողմ նետելով խնդրագիրը՝ վերցրել էին զենքը: Մնում էր միայն իմանալ, թե որքան հիմնավոր էր նրանց վստահությունը: Մի բան, սակայն, պարզ էր. այս պատերազմի ելքը տակավին կախված էր լինելու ոչ միայն զենքի քանակից, զինվորների թվից ու ռազմական արվեստից, այլև վերջինների տոկունությունից:

Բալկանյան փոթորիկն ամենից առաջ ցույց տվեց հզորների դիվանագիտական խաղերի կատարյալ սնանկությունը: Խաղա-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1011, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) 1912 թ.:

ղության անունից օրնիբուն ճառող եվրոպական կառավարությունները կանգնեցին փաստի առաջ:

Դեռ երեկ բալկանյան քրիստոնյաները հուսահատ ճչում էին. «Կմեռնենք, բայց առաջ կբերենք Եվրոպայի միջամտությունը»: Այժմ նույն ազգերը Եվրոպայից խնդրում էին մի բան՝ չմիջամտել Թուրքիայի հետ իրենց բազմադարյան հաշիվները մաքրելու գործին:

Պատերազմն սկսելու առիթով Սալոնիկի սոցիալիստական-բանվորական ֆեդերացիան, Ռումինիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը, ՀՅ դաշնակցությունը և Պաղեստինի սոցիալ-դեմոկրատական բանվորական հրեա կուսակցությունը հանդես եկան «Բալկանների և Փոքր Ասիայի աշխատավոր ժողովրդի հանրային կարծիքին» ուղղված շրջաբերական-կոչով, որում նրանք իրենց զայրույթն էին արտահայտում պատերազմը սանձազերծողների հասցեին: Կոչում ասված էր. «Կը բողոքենք ու կը հրաւիրենք բանւորական ու գիւղացիական զանգւածները ու բոլոր անկեղծ տէմօքրաթները, որպէս զի մեզի միանան, ուժգին բողոք մը բառնալու համար պատերազմին դէմ, որ ամենէն աւելի աղէտալի հետեւանքներ կը բերէ իր հետ»[1]:

Կոչը պատերազմի հիմնական պատճառ էր համարում Եվրոպայի կապիտալիստական հզոր տերությունների չահադիտական ձգտումները: «Անոնք հրապարակներ կ'ուզեն՝ տեղաւորելու համար իրենց ապրանքները, իրենց դրամագլուխները եւ պիւրօքրաթական պաշտօնեաներու այն մեծ թիւը, որուն համար այլ եւս տեղ չկայ Մայր Երկրին մէջ»[2]:

Փաստաթղթի հեղինակներն աչքաթող էին անում բալկանյան երկրների վրա հարյուրամյակներ ի վեր հաստատված թուրքական բռնապետական լծից ազատագրվելու տեղի բնիկ ժողովուրդների բուռն ձգտումը, ազգային կյանքով ապրելու նրանց տենչը: Շեշտադրելով բալկանյան ժողովուրդների տնտե-

---

[1] **«Դրօշակ»**, № 19, սեպտեմբեր, 1912, էջ 234:

[2] Նույն տեղում:

սական ծանր վիճակը և այն համարելով եվրոպական կապիտալիզմի չահադիտական ձգտումներից հետո պատերազմի երկրորդ պատճառ՝ սոցիալիստական վերոհիշյալ կուսակցություններն այնուհետև արձանագրում էին, որ Թուրքիայում չկան ազգությունների ազատություն, օրենքի առաջ հավասարություն, կյանքի ապահովություն, անկողմնակալ վարչություն, ուստի այդ ամենի համար կարելի է մեղադրել Թուրքական ռեժիմին[1]:

Ընդունելով, որ միայն ժողովուրդներն իրավունք ունեն փոխելու իրենց հարստահարող ռեժիմները և տնօրինելու իրենց բախտը, նշված կուսակցությունները միաժամանակ հայտարարում էին, որ իրենք ամբողջ ուժով դատապարտում են պատերազմի միջոցով քաղաքական ու ընկերային հարցերը լուծելու ձգտումը՝ գերադասելով «գիտակից ու կազմակերպված զանգվածներու բոլոր միջոցներով» կառավարությունների վրա «ներգործելը»: Միայն այդ կերպ հնարավոր կլինի փոխել երիտթուրքերի ռեժիմը և Թուրքիայում հրապարակ բերել մի նոր իշխանություն, որը ներկայացներ «կայսրության բոլոր ազգությունները...»[2]:

Արդյո՞ք արդարացի էր այդ պատերազմը, որ բալկանյան չորս փոքր պետությունները սկսեցին Թուրքիայի դեմ, արդյո՞ք դա պատմական անհրաժեշտություն էր:

Անդրադառնալով այդ հարցին՝ Շուշի քաղաքի մտավորականներից մեկը՝ Հովնան անունով, իր օրագրական նոթերում նկատում էր, որ պատերազմը հնարավոր էր կանխել, եթե Եվրոպան կարողանար Թուրքիային ստիպել բալկանյան ժողովուրդներին տալ կյանքի և գույքի ապահովություն: Բայց Եվրոպան դա չարեց, իսկ Թուրքը չուզեց ճանաչել օրենք ու խիղճ: Ուստի պատերազմի բռնկումը դարձավ անխուսափելի:

Շուշեցի մտավորականը վճռականապես դեմ էր ամեն տեսակի բռնության, առավել ևս ամենամեծ բռնությանը՝ պատերազմին: «Երբ տեսնում ես մի մարտիրոսացում, լինի հայ, ռուս, Թուրք կամ վրացի,– գրում էր Հովնանը,– այդ միևնույն է, ինքնին

---

[1] **«Դրօշակ»**, № 19, սեպտեմբեր, 1912, էջ 235:

[2] Նույն տեղում:

հարց է ծագում, թե ինչու է նա սպանվել, ինչու է զրկվել իր բնական կյանքից: Եվ այս ու սրա նման հարցերը ճնշում են մարդուն մինչև հոգու խորքը»[1]:

Ամեն մի պատերազմ մարդկային մեծ աղետ է, մեծ չարիք: Բայց երբ պատերազմը նվաճողական չէ, այլ հանուն բռնաբարված իրավունքների ու ոտնակոխված արդարության պաշտպանության, ապա այն միանգամայն ըմբռնելի է, նույնիսկ՝ համակրանք պատճառող: Ուստի կարելի է ասել, որ բալկանյան պետությունների կողմից Թուրքիային հայտարարված պատերազմը միանգամայն արդարացի էր, որքան էլ այն լիներ աղետաբեր[2]:

Այդ պատերազմը պատմական անհրաժեշտություն էր, մի կայծակնահար բողոք այն անիրավությունների, հարստահարումների, կոտորածների դեմ, որոնք դարեր ի վեր Թուրքերի ձեռքով տեղի էին ունենում Բալկաններում:

Բալկանյան պատերազմի արդարացի, առաջադիմական և ազատագրական բնույթը ոգևորում էր Բուլղարիայի ժողովրդական լայն զանգվածներին, որոնք պատրաստ էին կռվելու և ազատագրելու Մակեդոնիայի ու Թրակիայի իրենց ստրկացված եղբայրներին:

Սերբ-բուլղարական և հույն-բուլղարական ռազմական կոնվենցիաները Բուլղարիային պարտավորեցրել էին զորակոչել ոչ պակաս 200.000, Սերբիային՝ 150.000, իսկ Հունաստանին՝ 120.000 մարդ: Վերջինս ծովային մարտերի համար պետք է պատրաստեր նաև ռազմական նավատորմը: Պատերազմին նախորդած ամիսներին դաշնակիցների զինված ուժերի թիվը գնալով աճեց:

Քրիստոնյա դաշնակից բանակները հարձակման անցան իրենց բոլոր հնարավորություններով: Այդ բանակներից ամենա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 606, թ. 1:

[2] Մանրամասն տե՛ս՝ **Н. Овачный**, Болгария и болгары, С-Пб, 1900. **В. Якушин,** Балканские войны и их результаты, Москва, 1914. **А. Садомов**, Болгария, Москва, 1915. **С. Сигрист,** У порога великой войны, Петроград, 1924. **А. Тошев,** Балканские войны т-т. 1-2, София-Пловдив, 1929-1931. **И. Фичев,** Балканската война 1912-1913 гг., София, 1940. **Н. Державин,** История Болгарии, т. 4, Москва, 1918. **В. Жебокрицкий,** Болгария во время балканских войн 1912-1913 гг., Киев, 1961 և այլն:

ուժեղը և ամենակազմակերպվածը բուլղարականն էր, որը նաև ամենալավ բանակներից մեկն էր Եվրոպայում: Նախորդ տարիներին երկրի իշխանությունները լրջորեն զբաղվել էին ռազմական պատրաստություններով, և երկիրը պատերազմ էր սկսել մաքառման պատրաստ ու հաղթելու վճռականությամբ:

Բուլղարիան *մոբիլիզացրել էր 420 հազար մարդ: Ռազմուժի 297.000 մարտիկներից կազմվել էր երեք բանակ: Առաջին բանակը (79 հազար մարդ) գլխավորում էր Վասիլ Կուտինչևը, երկրորդը (122.000 մարդ)՝ Նիկոլա Իվանովը, երրորդ բանակը (95.000 մարդ)՝ Ռադկո Դմիտրիևը: Այս երեք բանակների ռազմական գործողությունների վայրը լինելու էր Թրակիան, այսինքն՝ Ադրիանուպոլսի ճակատը: Ռադկո Դմիտրիևի բանակն առայժմ պետք է պահպաներ թիկունքը՝ բացազատվելով Յամբոլի տարածքում: Դրանցից բացի, բուլղարներին օգնության էին գալու 48 հազար մակեդոնացի մարտիկներ, որոնց մի մասը միավորվելու էր Թրակիա հասած սերբական երկրորդ բանակի հետ: Հետևակայիններն ունեին ավստրիական արտադրության «Մանլիխեր» և գերմանական արտադրության «Մաքսիմ» տիպի հրացաններ: Հրետանակազմը բաղկացած էր 720 միավորից: Կար ռուսական, ֆրանսիական և անգլիական արտադրության 5 ռազմական ինքնաթիռ: Ռազմածովային ուժերն ունեին 6 ականակիր և մեկ ռազմանավ (“Надежда”՝ կառուցված 1898 թ.):*

Բանակի ընդհանուր հրամանատարությունն իր վրա վերցրեց ***Ֆերդինանդ ցարը****: Բանակի գեներալիսիմուս (ընդհանուր հրամանատարի տեղակալ) նշանակվեց Ռուսաստանում զինվորական կրթություն ստացած* ***Միխայիլ Սավովը*****, գլխավոր*

---

* *Զորավար Սավովը պատերազմում ցույց տվեց ռազմական ակնհայտ տաղանդ: Բայց նրա խոցելի կողմն այն էր, որ անհուն ատելություն տածելով օսմանյան երկրի նկատմամբ՝ երբեմն իր ենթականերին տալիս էր մարտական անիրագործելի հրամաններ, որոնք հանգեցնում էին բուլղար զինվորների մեծաթիվ անմիտ կորուստների: Նա չտապում էր թշնամուն օր առաջ ջախջախված տեսնել, ուստի չէր խնայում իր զինվորների ու սպաների կյանքը: Ակամայից վերհիշում ես Հին Հունաստանում տարածված այն կարծիքը, թե պատերազմն այնքան լուրջ բան է, որ այն չի կարելի վստահել զորավարներին, որովհետև նրանք միշտ ձգտում են մեծ արյունահեղության:*

չտաբի պետ՝ գեներալ ***Իվան Ֆիչևը***[1]*:*

Սերբիան *ընդհանուր առմամբ զենքի էր կոչել 300.000 մարդ: Առաջին բանակը (132.000 հոգի) գլխավորում էր թագաժառանգ Ալեքսանդր Կարաջորջիևիչը: Այս բանակի մի ծայրը Մորավիայում էր, մյուսը՝ Մակեդոնիայի Նիշ-Վրանիա-Ուսկյուբ (Սկոպլե) գծի վրա: Երկրորդ բանակը (74.000 մարդ) գտնվում էր գեներալ Ստեպա Ստեպանովիչի հրամանատարության տակ: Այդ բանակի կազմում նաև ընդգրկված էր բուլղարական «Ռիլա» զորամասը, որի ստորաբաժանումները ցրված էին Բուլղարիայի հարավարևմտյան սահմանից մինչև սերբական Կյուստենդիլ քաղաք: Երրորդ բանակը (76.000 հոգի) գեներալ Բոժիդար Յանկովիչի հրամանատարությամբ տեղաբաշխված էր Արևմտյան Սերբիայում՝ հսկելով Կոսովոն: Չորրորդ բանակը (25.000 մարդ)՝ ներառյալ «Յավոր» բրիգադը, տեղաբաշխված էր Կրալևո քաղաքի ու սանջակի միջև և գտնվում էր գեներալ Միխայիլ Ժիվկովիչի հրամանի ներքո: Սերբական ուժերը զինված էին գերմանական «Մաուզեր» հրացաններով, ֆրանսիական «Շնայդեր-Կրեզո» տիպի արագահարված 500 հրանոթներով, ունեին երեք ռազմական օդանավեր: Բանակի գերագույն հրամանատարը և գերագույն չտաբի պետը գեներալ Ռադոմիր Պուտնիկն էր:*

Եվրոպական Թուրքիայի սահմաններին տեղաբաշխված ***Հունական զորքը*** *բաժանված էր երկու բանակների: Առաջին կամ Թեսալինյան բանակն ուներ 7 հետևակային դիվիզիա և մեկ հեծյալ բրիգադ՝ թագաժառանգ Կոնստանտինի հրամանատարությամբ: Այս բանակի կազմում կար 100.000 զինվոր ու սպա և 160 հրանոթ: Նրա առաջին խնդիրն էր հարձակում սկսել դեպի հյուսիս և հասնել Մոնաստիր կամ Սոլուն: Երկրորդն Էպիրյան բանակն էր՝ տեղաբաշխված Արտայի շրջակայքում, և ուներ 10.5 հազար զինվոր՝ գեներալ Կոստանտինոս Սապունտզակիսի հրամանատարության ներքո: Այս բանակին էին միացել Կրետե կղզու կամավորների կորպուսը և Իտալիայից եկած գարիբալ-*

---

[1] ***Տե՛ս Еджидио Иветич***, *Балканските Войн, София, 2012,* ***էջ 71:***

դիական կամավորներ՝ Ջուզեպե Գարիբալդիի որդի Ռիչոտի Գարիբալդիի հրամանատարությամբ: Հույները զինված էին ավստրիական «Մնլիխեր-Շոնաուեր» տիպի հրացաններով, ունեին «Շնայդեր-Կրեզո» դաշտային հրանոթներ և չորս ինքնաթիռ: Հունական զինված ուժերում առաջնակարգ նշանակություն էր տրված ռազմածովային նավատորմին, որի կազմում էին իտալական արտադրության «Գեորգիոս Ավերով» հածանավը, 19 ականակիր, մեկ սուզանավ: Ռազմածովային ուժերում հաշվվում էր ընդհանուր առմամբ 4000 նավաստի և սպա՝ ծովակալ Պավլոս Կունդուրիոտիսի հրամանատարությամբ[1]:

Զերնոգորիայի ռազմուժը հաշվվում էր 35 հազար մարդ, որոնք զինված էին ռուսական արտադրության «Բերդան» հրացաններով: Բանակն ուներ իտալական և ռուսական արտադրության 126 թնդանոթ: Զինուժը միավորված էր երեք դիվիզիայի մեջ: Արևելյան դիվիզիան (12.000 հոգի) Յանկո Վուկոտիչի հրամանատարությամբ հրաման էր ստացել գրոհել Սանջակը և Նովի Բազարը, ապա շարունակելով հարձակումը դեպի Պրիզրեն ու Կոսովո՝ միանալ սերբական ուժերին: «Զետա» անվամբ դիվիզիան (15.000 հոգի) գահաժառանգ Դանիլո Պետրովիչի հրամանատարությամբ խնդիր ուներ առաջանալ դեպի Շկոդրա լճի եզերքին գտնվող նույնանուն քաղաքի ուղղությամբ, իսկ «Լիտորանեա» դիվիզիան Միտար Մարտինովիչի հրամանատարությամբ հարձակվելու էր Ադրիատիկ ծովի ուղղությամբ: Զորքերի գլխավոր հրամանատարը Նիկոլա Թագավորն էր[2]:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիայի դեմ զինվորական ամենամեծ ուժ հանել էր Բուլղարիան, այնքան, որքան մյուս դաշնակիցները միասին:

Դաշնակիցներն ընդհանուր առմամբ ունեին մոտ 800.000 զինվոր ու սպա* (ուրիշ աղբյուրի համաձայն՝ 750.000) և 1500 հրանոթ:

---

[12] Տե՛ս **Еджидио Иветич**, Балканските Войн, София, 2012, էջ 71, 72:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 71:

* Համեմատության համար նշենք, որ 1812 թ. Ռուսաստանի վրա հարձակում գործած նապոլեոնյան բանակն ունեցել էր 690.000 հոգի: Երբ 1870

Իր ողջ ուժերը զորահավաքի ենթարկեց նաև Թուրքական կողմը: Կայսրության ողջ տարածքում կար 700.000 զինվոր, բայց նա տվյալ պահին Եվրոպական Թուրքիայում ուներ միայն 290.000 զինվոր ու սպա՝ 115.000-ը Թրակիայում և 175.000-ը Մակեդոնիայում, Ալբանիայում, Էպիրոսում, Կոսովոյում և Սանջակում: Ճակատի առաջին գծում նիզամն էր, նրա թիկունքում՝ իխթիադը (ռեզերվը), իսկ սրա թիկունքում՝ ռեդիֆը՝ պահեստազորը:*

*Սպառազինությունների տեխնիկական մակարդակով նույնպես Թուրքիան զիջում էր բալկանյան դաշնակիցներին. նա զինված էր հին նմուշի գերմանական զենքով, այն դեպքում, երբ դաշնակիցների մոտ հիմնականում ֆրանսիական նոր զենքեր էին**:*

Թ. հուլիսին Պրուսիան հարձակվեց Ֆրանսիայի վրա, ուներ 550.000 ռազմիկ, իսկ Ֆրանսիան պաշտպանվում էր մոտ 550.000 մարդ ունեցող բանակով: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցում էր 200.000 ռուս և 160.000 օսմանցի: 1905 թ. մարտին Մուկդենի մոտ տեղի ունեցած ցամաքային ճակատամարտին մասնակցություն էին ունեցել 330.000 ռուս և 270.000 ճապոնացի (տե՛ս նույն տեղում, էջ 74):

** Թուրքական բանակում իսկական զինվորական ծառայությանը (նազիմ) 3-4 տարի էր, որից հետո զինծառայողները անցնում էին ռեզերվ (իխթիադ)՝ 5-6 տարի, այնուհետև պահեստազոր (ռեդիֆ)՝ 9 տարի և վերջում աշխարհազոր (մուստաֆիս)՝ 2 տարի:*

*** Գրականության մեջ և մամուլում պատերազմող կողմերի ռազմուժի մասին բերված են իրարից խիստ զանազանվող թվեր: Օրինակ՝ մի աղբյուրում (տե՛ս «Ազատամարտ», № 1034, 20 հոկտեմբերի – 2 նոյեմբերի 1912 թ.) թուրքական զինված ուժերի անձնակազմի թիվը պատերազմի սկզբին ցույց է տրված 600.000, մի ուրիշ աղբյուրում (տե՛ս **Х. З. Габидуллин**, Младотурецкая революция. Исторический очерк, Государственное социально-экономическое издательство, Москва, 1936, էջ 159)՝ 350.000: Նույն աշխատության մեջ (էջ 159) պատերազմի սկզբին չորս դաշնակիցների միացյալ ուժերի անձնակազմի թիվը հաշվված է 662.000 մարդ, որից Բուլղարիան ուներ 350.000, Սերբիան՝ 172.000, Հունաստանը՝ 115.000, Չերնոգորիան՝ 25.000 մարդ: Թեոդիկը նշում է հետևյալ տվյալները. Բուլղարիա՝ 205.000 զինվոր և 450 թնդանոթ, Սերբիա՝ 112.500 զինվոր և 250 թնդանոթ, Հունաստան՝ 62.000 զինվոր և 150 թնդանոթ, իսկ Չերնոգորիա՝ 50.000 զինվոր: Ընդհանուր առմամբ դաշնակից քրիստոնյա չորս պետությունները, ըստ Թեոդիկի, ունեին 429.500 մարդ և 850 թնդանոթ՝ Թուրքիայի ունեցած 270 հազար զինվորի և 450 թնդանոթի դիմաց (**Թէոդիկ**, Ամենուն տարեցոյցը. Ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, 1914, Կ. Պոլիս, 1914, էջ 324)):*

Ստանալով գեներալիսիմուսի բարձրագույն զինվորական աստիճան՝ Թուրքիայի ռազմական նախարար Ֆերիզ* Նազըմ փաշան նշանակվեց Թուրքական ռազմուժի ընդհանուր հրամանատար:

Ռազմական գործողությունների թատերաբեմը Թուրքական հրամանատարությունը բաժանեց երկու ճակատի՝ Բուլղարիայի ու Սերբիայի և Հունաստանի ու Զերնոգորիայի ուղղություններով: Առաջին ուղղությանը, ուր գործելու էր «Արևելյան զորաբանակը», ավելի կարևոր դեր էր հատկացված, քանի որ այն ներառում էր նաև մայրաքաղաք Կ. Պոլիսը: Այս ռազմաճակատի հրամանատար էր նշանակվել Աբդուլլահ փաշան: Երկրորդ ռազմաճակատում գործելու էր «Հարավային զորաբանակը», որի հրամանատար կարգվեց Ալի Ռիզա փաշան, որ մինչ այդ զբաղեցնում էր հրետաձիգ զորաց հրամանատարի պաշտոնը: Այս երկրորդ ռազմաճակատի հունական հատվածի զորքերի հրամանատար կարգվեց նախկին ռազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշան, որն անմիջականորեն ենթարկվում էր Ալի Ռիզա փաշային[1]: Ռազմածովային նավատորմի հրամանատար նշանակվեց Մահմուդ Մուխտար փաշան[2]:

Մինչ այդ որոշ զսպվածություն հանդես բերած Բ. Դուռը նույնպես հակվեց չուտափույթ պատերազմ հայտարարելու կողմը, թեև հաշտության բանակցություններ էր վարում Իտալիայի միջոցով:

Տրիպոլիտանական պատերազմում հաղթանակ տարած Իտալիան Թուրքիային ստիպեց համակերպվել իր կորուստներին, և 1912 թ. հոկտեմբերի 2 (15)-ին Ուշիում (Լոզանի մոտ, Շվեյցարիա) հաղթած կողմի հետ նա ճարահատյալ կնքեց խաղաղության պայմանագիր՝ նրան զիջելով համարյա ամբողջ Լիբիան**:

---

* Բրիգադի գեներալ:

[1] Տե՛ս **«Վեմ»**, № 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1933, էջ 91:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1005, 21 սեպտեմբերի (4 հոկտեմբերի) 1912 թ., **«Մշակ»**, № 216, 30 սեպտեմբերի 1912 թ.:

** Իտալիայի հետ կնքած հաշտությունը թեև մի քիչ թեթևացրել էր Եվրոպայում տիրող քաղաքական ծանր մթնոլորտը, բայց դրանով չվերացավ մայրցամաքում ընդհանուր պատերազմի մղձավանջը: Ամբողջ Եվրոպան մատնվել էր սարսափի: Եվ զարմանալի չէ, որ ահարկու վտանգը ստիպում էր զինվել նաև այն երկրներին, որոնք չահագրգռված էին խաղաղություն պահպանելու:

Ազատվելով Տրիպոլիտանական պատերազմի ծանր հոգսից, նաև հաշվի առնելով, որ Բալկանների սլավոն մյուս երկու պետությունները՝ Սերբիան ու Բուլղարիան, անմիջապես չեն հետևել Չերնոգորիայի օրինակին, և նրանք նույնպես իրեն պատերազմ չեն հայտարարել, ու դա համարելով նրանց թուլության նշան՝ **հոկտեմբերի 4 (17)-ին Թուրքիան ինքը պատերազմ հռչակեց Սերբիայի, Բուլղարիայի և Չերնոգորիայի դեմ:** Այդ պահին նա ձգեց Հունաստանը՝ հույս ունենալով, որ սպառված չեն նրան իր կողմը գրավելու բոլոր միջոցները: Բայց այդ հույսը չարդարացավ: Հունաստանն ինքը նույն օրը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Հոկտեմբերի 5 (18)-ի վառ առավոտյան բուլղարական, սերբական և հունական բանակները հատեցին Օսմանյան կայսրության սահմանները: Բալկանյան մայրաքաղաքների փողոցներում և հրապարակներում բնակչությունը տոնում էր ցանկալի պատերազմը:

Սկսվեց մարդկային պատմության դաժան ու արյունահեղ պատերազմներից մեկը: Երկու կողմերը կռվի դաշտ հանեցին հարյուրհազարավոր զինվորներ:

Էրզրումից «Ազատամարտ» թերթի թղթակիցը գրում էր, որ քաղաքի բնակչությունը վստահ է, որ օսմանյան բանակը մեկերկու շաբաթում ցաքուցրիվ է անելու բալկանյան «գաճաճ ազգերի» խաժամուժ զինված խմբերին: «Խանդավառ միթինկներով ու ցույցերով «պատերազմ» գոռացող էրզրումցիները հայ թէ թուրք, այո չընկրկեցան և զոհողութեան առջև. զոհաբերեցին նիւթապէս, այնքան, որքան կրնային, համոզուած որ օսմանեան քաջարի բանակը պիտի առաջանայ սրարշաւ, յաղթանակներով պիտի պսակուի ան...»[1]:

Թուրքական բանակի շարքերում կռվում էին Օսմանյան կայսրության բոլոր ազգերի զինվորներ, ինչպես նաև մեծ թվով մահմեդական կամավորներ Բոսնիայից և Հերցեգովինայից: Ավստրիայում և Գերմանիայում թուրքասիրական տրամադրու-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1080, 20 դեկտեմբերի 1912 թ.:

թյունների վերելքի պայմաններում զինվորականներից շատերը, թողնելով ծառայությունը, գնում էին մարտնչելու թուրքական զորքերի շարքերում: Թուրքիայի կողմից կռվում էին նաև մեծ թվով գերմանացի և ավստրիացի հրահանգիչ-սպաներ, որոնք տարիներ շարունակ մարզել էին օսմանյան բանակը:

Ուշադրության էր արժանի մինչ այդ Թուրքիայի դեմ ապստամբած ալբանացիների բռնած դիրքը: Նրանց այն մասը, որ քրիստոնյա էր, համակրանք էր տածում դեպի բալկանյան պետությունների վարած դատը, իսկ մեծագույն մասը, որ դավանում էր մահմեդականություն, հարել էր թուրքական զորքերին և կտրականապես հայտարարել, թե ինքը թշնամի է բալկանյան քառյակին: Թուրքիան իր հերթին արտոնություններ էր տվել ապստամբ ալբանացիներին և ձեռնարկել էր նրանց պահանջների գլխավոր կետերի կատարումը:

Երբ առաջին անգամ Բալկաններում որոտացին թնդանոթները, Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդը պատերազմն անվանեց **«Խաչի և Կիսալուսնի (Մահիկի) պատերազմ»**: Նույն կարծիքը տարածված էր Ռուսաստանով մեկ: ''Церковный Вестник'' թերթը (№ 41, 1912 թ.) ազդարարում էր, թե «պայքարը, որ մղում է քրիստոնյա Բալկանը մահմեդական թուրքերի դեմ ..., բացի քաղաքական և տնտեսական պատճառներից, ստանում է գերազանցորեն կրոնական բնույթ: Քրիստոնեությունը կարծես խաչակրաց արշավանք է կազմակերպել օսմանյան պետության դեմ՝ ի պատասխան այն անլուր տանջանքների ու հարստահարությունների, որ «գյաուրները» կրում են մահմեդական թուրքերի ձեռքից: Հույն և սլավոն աշխարհը մահմեդական ռեժիմի անտանելի լծի տակ վերջապես խաչանիշ դրոշակով դուրս եկավ կռիվ հայտարարելու մահմեդական կիսալուսնին: Կատարվեց այն, ինչ վաղուց սպասվում էր»:

Բուլղարիայի թագավորի արտահայտությունը բուռն դրական արձագանք գտավ ռուսական մամուլի էջերում: Խաչի և կիսալուսնի միջև պատերազմի թեման առանձնապես հետևողականորեն էր զարգացնում ''Русское Слово'' թերթը, որը տպագրեց հայտնի լրագրողներ Դորոշևիչի, Ֆիլոսոֆովի, Միխայլովսկու և ուրիշների բազմաթիվ հոդվածներ: Ֆիլոսոֆովը թերթում

տպագրել էր «Կիսալուսինը» վերնագրով մի հոդված, որով սլավոններին կոչ էր անում չխնայել Թուրքերին և նրանց քշել Բալկաններից:

Բուլղարիայի թագավորի պատեհ կամ անպատեհ արտահայտած խոսքը թուրքական կառավարությունը և մուսուլմանական կրոնապետները լայնորեն չարաշահեցին՝ ողջ մահմեդական աշխարհը քիստոնյաների դեմ տրամադրելու համար:

Ֆիլոսոֆովի հոդվածի կապակցությամբ Ռուսաստանի 37 մտավորական թուրքեր բողոքի նամակ ուղարկեցին "Русские Ведомости" թերթին, որը տպագրեց նամակը, բայց այն ուղեկցեց խմբագրության մեկնաբանությամբ՝ ըստ էության պաշտպանելով Ֆիլոսոֆովի հոդվածում առաջ քաշված մտքերն ու դրույթները: Բանը հասավ նրան, որ ''Русские Ведомости"-ն լռությամբ անցավ ''Русское Слово"-ի՝ Կարմիր խաչին և գթության քույրերին ուղղած կոչին՝ չօգնել վիրավոր թուրքերին՝ դա պատճառաբանելով այն բանով, որ հակառակ դեպքում առանց վիրակապի և առանց բժշկական օգնության կմնան բուլղար, սերբ, չերնոգորցի կամ հույն վիրավորները: Դա նշանակում էր, որ "Русские Ведомости"-ն հավանություն էր տալիս իր գործընկերոջ այդ ծայրահեղ տեսակետին անգամ[1]:

"Русское Слово", "Русские Ведомости" թերթերի նորանոր հոդվածները բուռն բողոքներ էին առաջ բերել Ռուսաստանի մուսուլման գործիչների մոտ:

Նշված և ուրիշ սլավոնամոլ մամուլի օրգաններին անդադար նամակներ էին հղում ռուսաստանցի թուրքերը՝ Սիմֆերոպոլից, Տոմսկից և այլ վայրերից: "Русское Слово" թերթի խմբագրությունը նամակ էր ստացել նաև Բաքվի թուրքերից, որը զանազան խավերի կողմից ստորագրել էր 54 հոգի, այդ թվում՝ երդվյալ հավատարմատարներ Ալի Մարդան բեկ Թոփչիբաշիևը և Ֆաթալի խան Խոյսկին*, ինժեներ-տեխնոլոգ Մեշադի բեկ

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 251, 10 նոյեմբերի 1912 թ.:

* Հայտնի մուսաֆաթականներ, Ադրբեջանի առաջին Հանրապետության նշանավոր գործիչներ:

Ազիզբեկովը*, բժ. Բ. Ախունդովը, հանքային ինժեներ Բեյբութ խան Ջիվանշիրը**, լրագրող Մեհթի բեկ Հաջինսկին, նավթարդյունաբերող Ահմեդ Ասադուլաևը և ուրիշներ[1]:

«Խաչի և կիսալուսնի պատերազմի» մասին ռուսական թերթերում տպագրված հոդվածների առթիվ Կովկասի մահմեդականներն աներկբայորեն հայտարարում էին, որ եթե, օգտվելով առիթից, Ռուսաստանը պատերազմ սկսի Թուրքիայի դեմ, ապա իրենք պատրաստ են առաջին իսկ հարմար պահին անցնել օսմանցիների կողմը[2]:

Հայ հասարակությունը, հայոց եկեղեցին, հայկական մամուլի օրգանները Կ. Պոլսում, Անդրկովկասում և այլուր խիստ քննադատում էին խաչը մահիկի դեմ հանելու գաղափարը, վճռապես մերժում բալկանյան պատերազմը որպես այդ երկու խորհրդանիշների պատերազմ ներկայացնելու տեսակետը, գտնում էին, որ քրիստոնյաների համար գոյություն չունի նման հարց, այլ միայն կա թուրքական բռնակալությունից կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազատագրության խնդիր:

«Կրոնքի չահագործությունը» վերնագրով հոդվածում «Ազատամարտն» աններելի էր համարում բուլղարների ցարի կողմից խաչի և կիսալուսնի հակամարտությունը՝ այն համարելով «անպատուաբեր ներկայ դարու քաղաքակրթական ոգիին եւ ըմբռնումներուն»: Թերթը նշում էր, որ Ֆերդինանդ ցարի կոչ-հայտարարությունը թերևս ունենար գոյության իրավունք միջին դարերում, երբ կրոնական զգացումը կույր ատելությամբ ժողովուրդներին հանում էր իրար դեմ՝ երբեմն հանուն խաչի ու մահիկի, երբեմն հանուն կաթոլիկության կամ բողոքականության:

---

* Հետագայում բոլշևիկ, Բաքվի 26 կոմիսարներից մեկը, որը գնդակահարվեց անգլիացիների և էսէռների կողմից 1918 թ. սեպտեմբերին Ախչա-Կումայի ավազուտներում (Թուրքմենիա):

** Հետագայում մուսաֆաթական կառավարության ներքին գործերի նախարար, սպանվել է հայ վրիժառուի ձեռքով:

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 251, 10 նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Թերթը գրում էր, թե չկա մի կրոն, որն ավելի հարգելի լինի մյուսի նկատմամբ: Բոլոր կրոնները՝ որպես անհատական խղճի խնդիր, հավասարապես հարգելի են և գրեթե համազոր են, համազոր՝ իրենց առավելություններով ու պակասություններով, իրենց բարոյական սկզբունքներով կամ նախապաշարումներով:

Կրոններով չէ պայմանավորված, որ ազգերի մի մասը հասել է առաջադիմության բարձունքների, իսկ մյուս մասը մնացել է հետամնաց ու տվայտում է մտավոր խավարում:

«Պուլկարիոյ թագաւորը կրնար թերեւս աւելի կամ պակաս իրաւունքով, ամբաստանել օսմանեան կառավարութիւնը՝ որ բարեկարգութիւն գործ չէ դրած Մակեդոնիոյ մէջ, որ արդարութեամբ չէ վարուած պուլկար տարրին դէմ, կրնար այդ ամէնը՝ իբրեւ թերութիւն ու նոյն իսկ քաղաքական յանցագործութիւն զարնել օսմանեան կառավարութեան երեսին. բայց երբեք իրաւունք չունէր կառավարութիւն մը մեղադրել այն բանին մէջ՝ որ իր դաւանանքէն տարբեր դաւանանք, իր կրօնքէն տարբեր կրօնք ունի. երբեք իրաւունք չունէր ատելութեան եւ արիւնահեղութեան հրաւիրելու իր ժողովուրդը՝ այլ ժողովուրդի մը դէմ, անոր համար՝ որ մէկը ***քրիստոնեայ*** *է, միւսը* ***իսլամ****»*[1]:

Կրոնները չեն, որ ազգերը բաժանում են իրարից, դժբախտության ու ատելության սերմեր ցանում, այլ նրանք, ովքեր, չահագործելով կրոնական զգացումը, քողարկում են իրենց քաղաքական նպատակները կամ չահադիտական բազմատեսակ ձգտումները: Կրոնը չահագործողները իշխող դասակարգերն են, նրանց ներկայացուցիչները, որոնք աթոռներ են զբաղեցնում կառավարություններում ու պառլամենտներում, նրանց հաջորդում են իշխանավորների նետած փչրանքներով կերակրվող ծառաները՝ լրագրողներ, հանրային գործիչներ, պաշտոնյաներ, ամեն դասի ու ամեն արհեստի ստրուկ պորտաբույծներ:

Ֆերդինանդ ցարի ուղերձը բուլղար ժողովրդին ամենուր բացասական արձագանք գտավ: Քչերը եղան Բուլղարիայից դուրս, որ հավանություն տային ցարի կոչին, լինեին նրանք

---

[1] ***«Մշակ»,*** *№ 251, 10 նոյեմբերի 1912 թ.:*

մահմեդական թե քրիստոնյա: Բ. Դոան պաշտոնական տեսակետը իր մի ճառում արտահայտեց Նազրմ փաշան, որը, օգտվելով Ֆերդինանդ ցարի սխալից, իր ճառում թույլ չէր տվել ոչ մի վիրավորական խոսք, ոչ մի նախատական բառ, ոչ մի անպատշաճ ակնարկություն թշնամի երկրի կրոնական հավատամքին:

«Ազատամարտի» խմբագրությունը չեշտում էր. «Մենք չենք արդարացներ ոչ ոք: Մեզի համար հավասարապէս նախատինքի ու դատապարտութեան արժանի է այն կրոնական զգացումը, որը դուրս գալով իր դերէն կմտնէ քաղաքական գործերու մէջ եւ անով կը զինէ ազգը ազգի դէմ, անհատը անհատի դէմ:

Ո՛չ, Խաչի ու Մահիկի պայքար չէ այն պատերազմը, որ այս պահուս տեղի կունենայ Պալքաններուն մէջ:

Ոճիր է՝ քսաներորդ դարու երեսին, ազգերու կամ դասակարգերու քաղաքական վէճերը փոխադրել կրօնական հողի վրայ, Մահիկը Խաչին կամ Աւետարանը Գուրանին դէմ հանելով, եւ այսպէս մարդկային խիղճը դարձեալ, Արեւելքի մէջ, վերածել այն սպանդանոցին՝ ուրկէ վաղուց ազատած ըլլալ կը թուի գոնէ Արեւմուտքի մէջ»[1]:

«Ժամանակ» թերթը, իբրև այդ ճշմարտության ապացույց, վկայակոչում էր մի շարք օրինակներ. «Եթե Եվրոպայի դիւանագէտներուն համար Քրիստոնէի ու Իսլամի հարց գոյութիւն ունենար, թոյլ կուտայի՞ն որ իսլամ վեհապետի մը մէկ քմահաճոյքին համար 300.000 անմեղ հայեր ջարդուէին:

Եթէ Խաչի ու Մահիկի գաղափարը գոյութիւն ունենար, հաւատացեալ Վիլհէլմ կայսրը Երուսաղէմ սուրբ քաղաքը այցելելու միջոցին 300 միլիոն իսլամներու պետին, Համիտին կենացը բաժակ կը պարպէ՞ր:

Եթէ Եւրոպայի դիւանագէտները կրօնքի խտիր դնէին, Համիտ պիտի կրնա՞ր իր դատը Եւրոպայի առջեւ պաշտպանելու համար աշխարհի ամենէն ազատական երկրին՝ Ֆրանսայի նախարարները, Հանօթօ եւ ուրիշներ, իրեն փաստաբան գտնել:

Անվիճելի է, եւ նոյնիսկ այս րոպէիս մեր չուրջը անցած դար-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.:

ձածները կը հաստատեն թէ, Թուրքիա իր գոյութիւնը Եւրոպայի քրիստոնեայ տէրութեանց բարեացակամութեան կը պարտի:

Թուրքիոյ դէմ օտարներուն կողմէ գործուած արարքներուն մէջ կրոնական նկատում տեսնել ու այդ գաղափարով չարժիլ ո՛չ միայն սխալ է այլ եւ մեր երկրին գոյութեան համար աղիտաբեր»[1]:

Հայերի միջավայրում չրջանառվում էր նաև այն կարծիքը, թե Բալկանյան պատերազմն ըստ էության պայքար է համասլավության և համագերմանականության միջև: Եվ ընդհանրապես Թուրքիայի հայկական մամուլի բոլոր օրգանները անվերապահ դատապարտում էին պատերազմը, թեև թվում էր, թե հայերը պիտի որ կողմ լինեին դրան: Դատապարտում էին, քանի որ հակառակ տեսակետ արտահայտելու հնարավորություն չունեին: Նրանց մի մասը հավանական էր համարում, որ սկսված կռիվը չուտով վերջանալու է Թուրքիայի հաղթանակով: «Ազատամարտը» գրում էր. «Զէնքի բաղդը, այսօր վաղը, կրնայ այնպիսի վիճակի մը մէջ դնել անխոհեմ փոքր պետութիւնները, որ պէտք կ՚ըլլայ մտածել ո՛չ թէ իրենց ընդարձակման, այլ գիրենք փրկելուն վրայ...»[2]:

Բայց պատերազմը և նրա ելքն այլ կերպ էին պատկերացնում Թուրքիայից դուրս գտնվող հայկական թերթերն ու հանդեսները: Դրանք սկսված պատերազմը համարում էին կռիվ քաղաքակրթության և բարբարոսության միջև, գտնում էին, որ դա Թուրքիայի համար ճակատագրական կռիվ է ոչ միայն եվրոպական հողի վրա իր վերջին կռվանը հաստատելու առումով, այլև իբրև ասիական պետություն՝ իր ուժն ու դիրքը պահպանելու տեսակետից:

Զնայած տարբեր վայրերի հայերի տեսակետների տարբերությանը, սակայն, նրանց զգալի մասը գուչակում էր, թե դրամի պակասի և վերահաս ձմռան պատճառով պատերազմը շատ կարճատև կլինի՝ մեկ-երկու ամիս տևողությամբ:

---

[1] **«Ժամանակ»**, № 1279, 16 (29) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Ազատամարտ»**, № 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.:

Սկսված պատերազմի դեմ չարունակում էին անզիջում հանդես գալ միջազգային երկու խոշոր ուժեր՝ Ֆրանսիան և եվրոպական սոցիալիստական շարժումը:

Նախկինում Ֆրանսիայի կատարած դիվանագիտական ջանքերն ի դերև էին ելել: Բայց անգամ դրանից հետո նա չէր դադարում պատերազմը կասեցնելու միջոցներ խորհել: Փարիզն առաջվանից ավելի տենդագին աշխատանք էր տանում համաեվրոպական պատերազմի առաջն առնելու, իսկ դա գուցե հնարավոր լիներ, եթե նա գործեր իր զինակից Ռուսաստանի ձգտումներին հակառակ: «Ազատամարտը» գրում էր. «Ֆրանսիայի խաղաղարար քաղաքականութիւնը այժմ ամէնամեծ զօրութիւններէն մեկն է, որ ռուս համասլաւականութենէ առաջ եկած ընդհանուր բարդութիւնների դեմ կը կռուի: Արդի ֆրանսիական քաղաքականութիւնը աւելի մեծ կշիռ մը կը ստանայ մանաւանդ այն պատճառով, որ կը յենուի իր երկրին բովանդակ հասարակական կարծիքին վրայ եւ կը ներկայանայ իրօք ժողովրդական կամքի արտայայտութիւնը»[1]: Թերթը Ֆրանսիան անվանում էր խաղաղության միակ վստահելի պատվար ոչ միայն Եվրոպայում, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհում:

Մամուլն արդեն հաղորդում էր, որ չնայած պատերազմի բռնկումով կատարյալ անհաջողության են մատնվել Ֆրանսիայի խաղաղասիրական անկեղծ ջանքերը, բայց Պուանկարեն նոր ծրագիր է հղացրել, այն է՝ պատերազմը դադարեցնելու համար հրավիրել համաեվրոպական դեսպանաժողով: Նրա այս նոր նախաձեռնությունը մեծ արձագանք էր գտել եվրոպական բոլոր երկրների, հատկապես ազատական տարրերի շրջանում: Ավելին, տրամադրությունների այդ ալիքի վրա գերման ազատական տարրերի մեջ գնալով ուժեղացել էր այն համոզումը, որ իրենց երկիրը ի վերջո պետք է դաշնություն կազմի Ֆրանսիայի հետ: Իսկ դա նշանակում էր, որ կարող էր վտանգվել Եռյակ համաձայնության դաշինքը:

Անդրադառնալով եվրոպական մամուլի այսպիսի լավատե-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.:

սական տրամադրություններին՝ «Ազատամարտը» դրանք համարում էր ոչ իրատեսական. «Ինչ ալ ըլլա սակայն, հազիւ թէ Փուանքարե յաջողի իր այդ նոր ծրագիրը **այժմ** իրագործել: Ճիշդ է որ առանց եւրոպական համաժողովի մը կարելի չպիտի ըլլայ կարգաւորել պալքանեան հարցը – եւ վաղ թէ ուշ՝ անիկա պէտք է գումարուի: Սակայն մեզի կը թուի թէ այդ գումարումը անհնար պիտի ըլլայ **մինչեւ այն ատեն**, երբ պալքանեան պատերազմը վարող կողմերէն մէկը կամ միւսը **վճռական յաղթանակ** մը չէ տարած: Պարզ այն պատճառով՝ որ եթէ մեծ պետութիւնները իրօք համաձայն ըլլային պահպանելու Եւրոպայի քաղաքական արդի հաւասարակշռութիւնը եւ իրերու գոյութիւն ունեցող վիճակը Պալքաններու մէջ, այն ատեն անպայման պիտի կարենային եւ յաջողէին պալքանեան պատերազմին առաջքն առնել»[1]:

Եթե պատերազմի անիվը Ֆրանսիան ձգտում էր շրջել՝ օգտագործելով դիվանագիտական հնարավորությունները, ապա միջազգային սոցիալիստական շարժումը դա փորձում էր անել հարկադրանքով՝ աշխատավոր զանգվածներին և առաջին հերթին բանվորությանը փողոցներ ու հրապարակներ հանելու, հանրահավաքներ, ցույցեր, գործադուլներ կազմակերպելու, իշխանություններին չենթարկվելու, զորահավաքները խափանելու և այլ ձեռնարկումներով պատերազմող կողմերի և նրանց հովանավոր պետությունների վրա ճնշում գործադրելու միջոցով:

Արդեն 1912 թ. հոկտեմբերի սկզբներից աշխատավորական հսկայական ցույցեր ու բազմամբոխ հանրահավաքներ սկսվեցին ինչպես պատերազմող բալկանյան երկրներում, այնպես էլ եվրոպական մայրաքաղաքներում ու արդյունաբերական խոշոր կենտրոններում:

Սոցիալիստները մեծ տագնապ էին բարձրացնում մամուլի էջերում և պառլամենտներում: Այսպես, Սերբիայի Սկուպչինայում (Ազգային ժողով) հոկտեմբերի 10-ին սոցիալիստ պատգա-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.:

մավորներ Լյապոչևիչը և Կասլերովիչը խիստ բողոքեցին «բուրժուազիայի ծնունդ» պատերազմի դեմ:

Այդ օրերին Բուլղարիայի Սոպրանիեում (Ազգային ժողով) միակ սոցիալիստ պատգամավոր Սագրզովը նույնպես խիստ քննադատության ենթարկեց բուլղարական բուժուազիային՝ պատերազմի նախաձեռնությամբ հանդես գալու համար: Եվ երբ պատգամավորը դուրս էր գալիս խորհրդարանից, նրան ատրճանակի հարված հասցրեց բուլղար ազգայնականներից մեկը:

Սերբ և բուլղար պատգամավորների այդ ելույթների կապակցությամբ 1912 թ. հոկտեմբերի կեսին Երկրորդ ինտերնացիոնալի սոցիալիստական բյուրոն հանդես եկավ «Բոլոր երկրների աշխատավորներին» ուղղված կոչով, որով խորին սոսկում էր արտահայտում Բալկաններում տեղի ունեցող զանգվածային զարհուրելի սպանությունների համար և սրտագին ողջույններ հղում Բալկանի սոցիալիստներին, որոնք նման դժվարին պարագաներում անգամ հանդես էին գալիս պատերազմի դադարեցման պահանջով: Բյուրոն ողջույն էր հղում «սերբ և բուլղար մեր ընկերներին, որոնք իրապես արժանի նվիրյալներ են բանվորական գործին»[1]:

Շեշտելով, թե բալկանյան ժողովուրդները կատարելապես իրավունք ունեն պահանջելու իրենց անկախությունը, ինչպես նաև իրենց ազգային հատվածների միացման երաշխիքներ ստանալու, միաժամանակ Միջազգային սոցիալիստական բյուրոն համոզմունք էր հայտնում, թե այդ մեծ նպատակին կարելի էր հասնել առանց պատերազմի, առանց արյուն թափելու և առանց տնտեսական ավերման: Նշվում էր, որ պատերազմը հետևանք է մեծ տերությունների խարդավանքների, բալկանյան տարածաշրջանի պետությունների վեհապետների փառասիրության և բոլոր երկրների չահագործող դասակարգերի ագահության[2]:

---

[1] **«Ազատամարտ»**, № 1025, 11 (24) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Սոցիալիստական բյուրոն պատերազմող երկրների ժողովուրդներին հորդորում էր զանգվածային բողոքի գործողություններով պահանջել արյունահեղության դադարեցում: Բյուրոն նաև բալկանյան բազմազգ աշխատավորությանը տեղեկացնում էր, որ մոտ ժամանակներս կգումարի միջազգային արտակարգ համաժողով, որտեղ քննության կառնվեն պատերազմը խափանելու հնարավորությունները[1]*:*

Մարդկանց մոտ հարց էր առաջանում, թե ինչպես է հնարավոր խաղաղ ճանապարհով լուծել Թուրքիայի հետ բալկանյան ժողովուրդների հակասությունները, արդյո՞ք հնարավոր է կանգնեցնել «անմիտ պատերազմը» և հասնել մակեդոնական ժողովրդի ազատագրությանը: Այդ հարցերի պատասխանը չկար Սոցիալիստական բյուրոյի կոչում:

Միջազգային սոցիալիստական բյուրոն տվյալ պահին փաստորեն հանդես էր գալիս Եվրոպայում status quo*-ի պաշտպանությամբ՝ որպես փրկօղակի: Բայց չէ՞ որ հատկապես Բալկանների հարցում այդ սկզբունքի ջերմեռանդ կողմնակիցներն էին առաջին հերթին իմպերիալիստական Գերմանիան ու Ավստրիան, ապա նաև՝ Անգլիան ու Ֆրանսիան:*

Ստատուս քվոյի պահպանումը բոլոր պետություններից ավելի դժվար էր Ռուսաստանի համար: Մի կողմից նա հայտարարում էր, թե ինքը կողմ է Բալկաններում եղած վիճակի պահպանման, մյուս կողմից հավատարիմ էր մնում այնտեղ իր ավանդական քաղաքականությանը, այն է՝ Բալկաններից Թուրքերին վռնդելուն: Նա կարծես թե ուզում էր անհնարին մի բան՝ հակասականությունը ձուլել մի ամբողջության մեջ, մինչդեռ այդ երկու ձգտումները տրամագծորեն հակառակ էին: Չէ՞ որ Բալկանների, Ռուսաստանի ավանդական քաղաքականության նպատակը միշտ եղել էր այնտեղից Թուրք զավթիչներին վռնդելը և սլավոն ժողովուրդներին ազատություն բերելը: «Եւ եթէ այս պահուս Ռուսիա հավատարիմ է իր այս աւանդութեանց, այն ատէն կարող չէ անկեղծօրեն պահպանել ուզել Պալքաննե-

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:*

րու քաղաքական գոյավիճակը»[1],- գրում էր «Ազատամարտը»:

Որքան էլ տարօրինակ է, Միջազգային սոցիալիստական բյուրոյի տրամաբանությունը հանգում էր նրան, որ եթե բալկանյան երկրների զորքերը Եվրոպական Թուրքիայից գրավեն տարածքներ, ապա, միևնույնն է, խաղաղության դաշն կնքելիս դրանք պետք է վերադարձվեն իրենց տերերին, մի բան, որ անտրամաբանական էր, անիրականանալի:

Անդրադառնալով այդ հարցին՝ Վիեննայի "Neue Fraje Press" թերթը գրել էր. «Մինչև այժմ ոչ ոք չի կարողացել պատասխանել այն հարցին, թե ով պիտի առնի բալկանյան պետությունների կողմից Թուրքիայից նվաճած հողերը, եթե այդ պետությունները հաղթանակ տանեն»[2]: Թերթը նաև համոզմունք էր հայտնել, որ Ռուսաստանը երբեք թույլ չի տա, որ սլավոն պետությունների հաղթանակի դեպքում նրանցից հետ խլվեն գրաված տարածքները, որովհետև ռուս ժողովուրդը այդ բանը երբեք չի հանդուրժի: Թերթը նաև չեշտում էր. «Պալքանեան ազգութիւններու բարգաւաճումը կասեցնելու համար թափուած ջանքերը մինչեւ հիմա ամուլ մնացած են: Եւ եթէ Թուրքիա բաւական զօրաւոր չէ իր ստացուածքները պահպանելու համար, Եւրոպան պէտք է հաշուի գոնէ այս փոփոխութիւնը»[3]: Թերթը նաև չեշտում էր, որ եթե պատերազմն անհնար է կանգնեցնել ցույցերով ու լոզունգներով, ապա գոնե պետք է հասնել նրան, որ այն չդառնա գաղանաբարո: Ուստի տերությունների կառավարությունների գլխավոր պարտականությունը պիտի լինի հակառակորդ կողմերից պահանջել, որ նրանք կռիվը վարեն գոնե պատերազմի միջազգային կանոնների համաձայն, այսինքն՝ խնայեն ծերերին, կանանց, երեխաներին[4]:

---

[1] ***«Ազատամարտ»**, № 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.:*

[2] *"Neue Fraje Press" սույն հոդվածը թարգմանաբար արտատպված է «Ազատամարտ» թերթում (№ 1022, 8 (21) հոկտեմբերի 1912 թ.):*

[3] ***«Ազատամարտ»**, № 1028, 14 (17) հոկտեմբերի 1912 թ.:*

[4] *Նույն տեղում, № 1025, 11 (24) հոկտեմբերի 1912 թ.:*

1912 թ. աշնանը սկսված բալկանյան պատերազմին Բուլղարիայի հայ զանգվածների ակտիվ մասնակցությունը բնավ պատահական չէր: Դրան նպաստում էր նաև այն, որ պատերազմն արդար և ազատագրական էր:

Բուլղարական բանակի կողքին սկիզբ առավ կամավորական մեծ շարժում, որը ծավալվեց ոչ միայն բուն Բուլղարիայում, այլև Մակեդոնիայում և Թրակիայում: Այն լայն արձագանք էր գտել նաև Եվրոպայում և Ռուսաստանում: Կամավորական հզոր շարժման արդյունքում ստեղծվեց աշխարհազոր: Քանի որ այնտեղ մեծ մասամբ ընդգրկված էին Մակեդոնիայի և Օդրինեի (Էդիրնիե, Ադրիանուպոլիս) բուլղար կամավորներ, ուստի այն պաշտոնապես կոչվեց Մակեդոնա-Օդրինյան աշխարհազոր (Македоно-Одринское ополчение): Ստեղծված աշխարհազորի հրամանատարությունը ստանձնեց զորավար Նիկոլա Գենևը, որի տրամադրության տակ կար 16 հազար զինված կամավոր: Նրանցից ստեղծվեց կամավորական երեք բրիգադ: Դրանցից մեկը 3-րդ կամավորական բրիգադն էր՝ փոխգնդապետ Ալեքսանդր Պրոտոգերովի հրամանատարությամբ: Նա մակեդոնական ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկն էր, որը վայելում էր հսկայական ժողովրդականություն թե՛ Մակեդոնիայում և թե՛ Բուլղարիայում[1]: Բրիգադները իրենց հերթին կազմված էին ջոկատներից, վերջիններս՝ վաշտերից: Պրոտոգերովի հրամանատարության տակ գտնվող բրիգադի կազմում կար 29 վաշտ: XII ջոկատի կազմում էր քաջաց քաջ Թորգոմի հրամանի տակ գտնվող III վաշտը[2]:

Պատերազմի հենց սկզբից բուլղարական բանակին աջակից լինելու պատրաստակամություն հայտնեցին բուլղարահայերը: Դա պատահական չէր: Զէ՞ որ բուլղար ժողովուրդը և կառա-

---

[1] Տե՛ս Ծ. Աղայանի նշված աշխատությունը, էջ 304:

[2] Централен държавен архив (София), фонд 1к, опис 3, АЕ 93, лист 1 (կրկնօրինակը պահպանվում է ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 45, թ. 1):

վարությունը Թուրքիայից փախած հալածական հայերի նկատմամբ հանդես էին բերել բարեգթություն, պայմաններ ստեղծել, որ նրանք արմատներ ձգեն բուլղարական հողում: Բուլղարահայերն իրենց երկրորդ հայրենիքին ծառայում էին հավատարմությամբ ու ազնվորեն: Բուլղարների նման նրանք էլ սիրել ու թանկ են գնահատել բուլղարական հողը, և պատահական չէ, որ նրանցից շատերի անունները սերտորեն միաձուլված են բուլղար ժողովրդի պատմությանն ու մշակույթին:

Բուլղարահպատակ այն զինապարտ հայերը, որոնք վաղուց էին ապրում այդ երկրում և նրա օրինական քաղաքացիներն էին, կանչվեցին բանակ՝ կատարելու իրենց քաղաքացիական պարտքը. նրանք մտան բուլղարական գնդերի մեջ: Բայց երկրում ապրող հայերի մի զգալի մասը դեռևս Բուլղարիայի քաղաքացիություն չուներ. նրանք հիմնականում 90-ական թվականներին Թուրքերի սանձազերծած ջարդերի ժամանակ կամ դրանից հետո ծավալված հալածանքների պատճառով Բուլղարիա անցած հայերն էին, որոնք գերազանցապես կենտրոնացել էին Վառնայում և շրջակա գյուղերում: Քաղաքացիություն չունեցող հենց այս հայերի շրջանում նույնպես ծնունդ առավ կամավորական շարժումը: «Նրանց ոչ ոք չէր պարտադրում գնալ արյունոտ խնջույքին, բայց հասել էր այնքան երկար սպասված հատուցման օրն ընդդեմ իրենց տանջող դարավոր թշնամու»[1],- գրել է բուլղար գործիչներից մեկը:

Ռոդոսթո - Գալիբոլուի՝ այն ժամանակվա բուլղարական առաջին և վերջին նահանգապետ Իվան Դիմիտրովը գրում էր. «Այս պատերազմը մի արշավանք է եղբայրների ազատության համար, և տարօրինակ կլիներ հայերի բացակայությունն այդ արշավանքից: Եվ դարեր շարունակ Թուրքական լծի տակ ճնշված նրանց համար Բալկանյան թերակղզու չորս քրիստոնյա ժողովուրդների պատերազմը հարմար առիթ էր»[2]:

Պատերազմի նկատմամբ հայերի վերաբերմունքի մասին

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 19:

[2] *"Яворовь листь", 18 оградоноѣ 1935 թ.:*

բուլղար մի ուրիշ գործիչ՝ բուլղարական բանակի գնդապետ Ս. Ֆիլիպովը, Սոֆիայում լույս տեսնող «Բալկանսկա տրիբունա» թերթում նկատում էր, որ նրանք մասնակցեցին այդ պատերազմին այն գիտակցությամբ, որ Թուրքիայի դեմ ամեն մի պատերազմ տկարացնում է նրան[1]:

Պատերազմին մասնակցելու բուռն ցանկություն էին հայտնում ոչ միայն Բուլղարիայի հայ երիտասարդները, այլև գալիս էին Կովկասից, Պարսկաստանից, Թուրքիայից և այլ երկրներից: Նրանք անվերապահ խանդավառությամբ անդամագրվում էին Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորին:

Մասնակցելով բալկանյան պատերազմին, ինչպես նկատել է Իվան Դիմիտրովը, հայերը ուզում էին նաև փոխհատուցել բուլղար բանաստեղծ Յավորովին: Նրանք պատրաստ էին «թանկագին զոհեր տալու ազատության խորանի առջև, արյուն թափելու Մակեդոնիայի, Թրակիայի ազատության համար, որոնք այնքան մոտ էին Յավորովի և բուլղար ժողովրդի սրտին»[2]:

Հայերը ցանկություն հայտնեցին ունենալու նաև մի առանձին ստորաբաժանում և այդպիսի խնդրանքով դիմեցին բուլղարական կառավարությանը: Նախաձեռնությունը գալիս էր ՀՅ դաշնակցության Բալկանյան կենտրոնական կոմիտեից:

1907 թ. վերջերին երիտթուրքերի ու ՀՅ դաշնակցության բանակցությունները և դրանց արդյունքում «եղբայրական դաշինքի» ստեղծումը սառնությամբ էին ընդունվել բուլղարական կառավարության և մակեդոնական շարժման ղեկավարության կողմից: Ի վերջո սրանք հրաժարվել էին Դաշնակցության հետ վաղուց հաստատված համագործակցությունից: Բայց իրադարձություններն այնպես դասավորվեցին, որ հինգ տարի հետո բուլղարա-մակեդոնական շահերը նորից համընկան Դաշնակցության շահերին: Բուլղար և մակեդոնացի քաղաքական գործիչները անվերապահ ողջունում էին Դաշնակցության կատա-

---

[1] Տե՛ս "Балканска трибуна", № 1413, 25 օգոստոսի, 1914 թ.:

[2] "Яворовъ листъ", 18 օգոստոսի 1935 թ.:

բած քայլը, որը մեծ աշխուժություն էր առաջացրել հատկապես բուլղարահայ բազմամարդ համայնքում:

Այդ ժամանակ Բուլղարիայում էին Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, Լիպարիտ Նազարյանը (Ռ. Լեռիյան), Միքայել Վարանդյանը, Թորգոմը, Ռիլսկի վանքի հայկական զինվորական դպրոցն ավարտած բազմաթիվ հայորդիներ:*

Բուլղարական բանակի սպա Կարապետ Վարդազարյանը դեռ բալկանյան պատերազմի նախօրյակին Սոֆիայում խորհրդակցության էր հրավիրել Անդրանիկ Օզանյանին և հայկական կուսակցությունների՝ Բուլղարիայում գտնվող ներկայացուցիչներին, ուր քննարկվել էր այն հարցը, թե արդյոք հնարավոր է կազմակերպել հայկական կամավորական մի առանձին խումբ՝ Թուրքիայի դեմ սկսվելիք պատերազմին մասնակցելու համար: Որոշ ժամանակ անց՝ պատերազմը սկսելուց հաջորդ օրն իսկ, այս անգամ արդեն Պլովդիվում հրավիրվում է երկրորդ խորհրդակցությունը, որտեղ Կարապետ Վարդազարյանը, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, Լևոն Ֆեներճյանը և Աստուր Պետիկյանը որոշում են ընդունում հիմնել հայկական կամավորական ռազմուժ: Կամավորների ցուցակագրման աշխատանքը հանձնարարվում է հասարակական գործիչ Ղուկաս Մինասյանին: Որոշումն ընդունելուց հետո խորհրդակցության մասնակիցները դիմում են բուլղարական կառավարությանը՝ խնդրելով ընդառաջել իրենց ցանկությանը:

1912 թ. սեպտեմբերի վերջերից բալկանյան պատերազմական ճակատներից թուրքական թերթերի էջեր էին թափանցում տեղեկություններ այն մասին, որ հայերը Բուլղարիայում ձեռնարկել են ստեղծել մի ազգային զորամաս, որը բուլղարական կողմից կռվելու է օսմանյան զորքերի դեմ: «Այս պատերազմը մի արշավանք էր եղբայրների ազատության համար: Եվ տարօրինակ կլիներ հայերի բացակայությունը այս արշավանքում: Դարեր չարունակ ճնշված թրքական լծի տակ, նրանց համար բալ-

---

* *Ռիլսկի վանքի հայ զինվորական դպրոցի մասին մանրամասն տե՛ս մեր «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատության II գրքի 493-502 էջերում:*

կանյան թերակղզու չորս քրիստոնյա ժողովրդների պատերազմը հարմար առիթ էր: Եվ երբ կազմվեց մակեդոնական աշխարհազորը, նրանք էլ կազմեցին իրենց՝ հայկական բազմամարդ վաշտը»[1],- տարիներ անց (1935 թ. օգոստոսի 18-ին) գրել է բուլղար նշանավոր պետական հասարակական-քաղաքական գործիչ, գոկտ. Իվան Դիմիտրովը: Շուտով հայ ազգային զորամասի ստեղծման մասին լուրերը հաստատվեցին: Բուլղարիայի վերին իշխանություններն ընդառաջ գնացին «տանջված, բայց հպարտ ու հերոսական Հայաստանի զավակներին» և որոշում ընդունեցին թույլատրել նրանց կազմելու իրենց ստորաբաժանումը:

Բոլորի հայացքներն ուղղվեցին Վառնայում հաստատված Անդրանիկը: Բուլղարիայում նա ծանոթացել էր և ջերմ հարաբերություններ էր պահպանում մակեդոնական ազատագրական շարժման նշանավոր մի շարք գործիչների հետ, որոնց թվում հատկապես առանձնանում էր Բորիս Սարաֆովը[2]: Շատ չանցած՝ Անդրանիկը եկավ մայրաքաղաք Սոֆիա[3]: Նա անմիջապես բանակցություններ սկսեց բուլղար Մակեդոնա-Օդրինյան երկրապահ զորքերի կամավորական երրորդ բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ալեքսանդր Պրոտոգերովի հետ: Համաձայնություն ձեռք բերվեց, որ բրիգադն ունենալու է բացառապես հայերից կազմված կամավորական մի խումբ՝ հայ հրամանատարներով: Անդրանիկը լինելու էր խմբի վոյեվոդան, նրա*

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93:

[2] Տե՛ս **Աղայան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1976, էջ 999:

[3] Տե՛ս **Ա. Մարմարեանց**, Անդրանիկը և իր պատերազմները, Կոստանդնուպոլիս, 1920, էջ 195 (Ա. Մարմարյանցը Վահան Թոթովենցի կեղծանուններից է):

* Մակեդոնա-Օդրինյան երկրապահ զորքերի զորաշարժային մասի սպայակույտի № 3483 վկայականում նշված է. «Մակեդոնա-Օդրինյան երկրապահ զորքերի կազմության ժամանակ նկատի առնելով հայերի համակրանքը Բուլղարիայի հանդեպ, նրանց անցյալը և կարևորությունը, առանձին զորամասով պատերազմին մասնակցելու իրենց բուռն ցանկությունը, թույլատրվեց կազմել հայկական մի զորամաս հայկական ազգային դրոշակով. հայ սպաներով և խմբապետներով» (վկայականը պահվում է մեր անձնական արխիվում: - Հ. Ս.):

ոգի-հերոսապետը: Բայց անհրաժեշտ էր ունենալ նաև պաշտոնական հրամանատար, և Պրոտոգերովը Անդրանիկին խնդրեց գտնել մի երիտասարդ սպայի և նրան՝ որպես հրամանատարի ներկայացնել բրիգադի ղեկավարության հաստատմանը: Անդրանիկը երաշխավորեց այդ ժամանակ նույնպես Բուլղարիայում գտնվող, այդ երկրի պահեստի ենթասպաների դպրոցն ավարտած և նոր պոդպորուչիկ կարգված 26 տարեկան Գարեգին Նժդեհին[1]: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ այդ երկու խիզախ մարդիկ պետք է կանգնեին հայ կամավորական շարժման գլուխ:

Տեղին է նշել, որ Նժդեհն անմար հիացում ուներ ազգային

---

[1] *Տե՛ս **Արմէն Սիւնի**, Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդութեամբ 1912-1913 թթ., Բալքանեան պատերազմում, Բաքու, 1914, էջ 25: Այս գրքի հեղինակ Արմեն Սյունին (Արշակ Մնացականյան) մասնագիտությամբ բժիշկ էր: Նա ծննդով Սյունիքի Ագրակ (հավանաբար Մեղրու շրջանի Ագարակ) գյուղից էր: «Դաշնակցության գործով» հարյուրավոր դաշնակցականների հետ 1911 թ. բանտարկվում է, բայց մինչև Պետերբուրգում դատավարության սկսվելը երաշխավորությամբ ազատ է արձակվել և անցել Կ. Պոլիս: Բալկանյան պատերազմի առաջին օրերին իսկ մեկնել է Սոֆիա և մտել Անդրանիկի խմբի մեջ որպես բժիշկ: Բայց չուտով՝ հայկական վաշտի կազմավորումից հետո, III բրիգադի հրամանատար Պրոտոգերովի խնդրանքով նշանակվում է ամբողջ բրիգադի բժիշկ՝ նույն պարտականությունը կատարելով նաև հայկական վաշտում: Սյունին ենք պարտական Անդրանիկի և Նժդեհի գլխավորած հայկական վաշտի կազմավորման ու մարտական գործողությունների, հայ մարտիկների ցուցաբերած անօրինակ խիզախումների մասին խիստ արժեքավոր նշված գրքի (149 էջ) համար: Բալկանյան պատերազմի ավարտից անմիջապես հետո, իրադարձությունների թարմ հետքերով ձեռնարկելով իր տեսածի ու զգացածի մասին հուշագրության ստեղծմանը, հեղինակն այն ավարտել է 1913 թ. դեկտեմբերին, որը լույս է տեսել հաջորդ տարի: Արմեն Սյունիի գիրքը ըստ էության Բալկանյան պատերազմին հայկական կամավորական վաշտի մասնակցության մասին առաջին հրատարակումն է: Հետագայում՝ 1926 թվականին, հիմք ընդունելով նշված հուշագրությունը, Սյունին Սոֆիայում բուլղարերեն տպագրության է հանձնում իր երկրորդ աշխատությունը, որը, թարգմանվելով հայերեն, դարձյալ լույս է տեսնում Սոֆիայում՝ «Հայկ. զօրամասը պալքան-թուրք պատերազմին մեջ» վերնագրով (111 էջ): Պատերազմից հետո Արմեն Սյունին անցնում է բուլղարական պետական ծառայության՝ Խասքովո քաղաքում աշխատելով որպես բժիշկ: Նրա կյանքի հետագա տարիների մասին տեղեկություններ չունենք:*

հերոսի հանդեպ: Անդրանիկը իր հերթին գնահատում էր երիտասարդի նվիրվածությունը ռազմական գործին:

Եվ նրանք երկուսով ձեռք ձեռքի տված սկսեցին հայկական զորամասի ստեղծումը Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի կազմում: Հայ երիտասարդները խումբ առ խումբ չտապում էին Սոֆիա՝ նշանակված վայրը:

Հայ կամավորների հիմնական մասը եկել էր Կովկասից, Պարսկաստանից և Թուրքիայից:

Ինչպես չահագրգիռ բոլոր պետությունների, այնպես էլ Ռուսաստանի հետախուզությունները ակտիվ գործունեություն էին ծավալել իրենց գործակալների միջոցով տեղեկություններ հավաքելու դաշնակից երկրներում և ընդհանրապես Բալկանների չուրջ ընթացող զարգացումների մասին: Մեր ձեռքի տակ են Օդեսա քաղաքի ժանդարմերիայի վարչության պետի 1912 թ. հոկտեմբերի 8-ի գաղտնի զեկուցագիրը Թիֆլիսի գավառային ժանդարմերիայի վարչության պետին Սոֆիայում հայկական վաշտի կազմավորման մասին. «Բալկանյան գործակալների տեղեկությունների համաձայն՝ ս./թ. սեպտեմբերի 25-ին Սոֆիայում կայացել է բազմամարդ հավաք, որի ժամանակ քննադատության են ենթարկվել Կոստանդնուպոլսի դաշնակցության գործողությունները՝ համարելով նրանց ազգային գաղափարների և ավանդույթների դավաճաններ, քանի որ նրանք Թուրքիային օգնելու նպատակով Կոստանդնուպոլիս քաղաքում հավաքագրել են կամավորական մարտական ջոկատ: ... Այդ ժողովի ժամանակ որոշում է կայացվել, ի հակադրություն Կոստանդնուպոլսի դաշնակների, Բուլղարիայում հավաքագրել կամավորական մարտական դրուժինա, որի կազմում հենց տեղում ցուցակագրվել է 800 մարդ: Ժողովին մասնակից բոլոր հայկական կոմիտեները որոշեցին մեծ գումարներ տրամադրել այդ գործին:

Կազմակերպված դրուժինայի անդամների մի մասը մակեդոնացի կամավորների հետ օրերս մեկնում է Թուրքիա կառավարական հիմնարկները, զորանոցները և վառոդի չտեմարանները ավերելու և հրկիզելու նպատակով:

Նույն տեղեկությունների համաձայն՝ երկու հայեր՝ Փոլ Ասկերյանը և Սարգիս Մեկասյանը, օրերս Սոֆիայից մեկնել են

Համբուրգ 1500 միավոր զենք ձեռք բերելու նպատակով, որը պատվիրված էր նախօրոք, և որը նրանք պետք է Վառնա տեղափոխեն Ռիգա-Օդեսայով»[1]:

Մի քանի օր հետո հաջորդում է նույնաբովանդակ, սակայն փոքր-ինչ մանրամասն մեկ այլ զեկուցագիր, որտեղ արդեն հայերի՝ Համբուրգից զենք ձեռք բերելու մասին տեղեկությունը հաղորդելիս օգտագործված է «իբր» վերաբերականը, որ երկբայական, թերահավատ երանգ է հաղորդում նախադասությանը[2]:

Այս փաստաթղթում կա նաև երկու մեջբերում հանրահավաքի մասնակից երկու ուսանողի ելույթներից, որ, կարծում ենք, կանխակալ վերաբերմունք առաջացնելու միտում ունի: Առաջինը նշել է, որ «Ռուսաստանն էլ Թուրքիայից ավելի լավ չի վարվում, և վերջերս փակել է մեր եկեղեցիները և ուսումնական հաստատությունները, իսկ վիթխարի թվով մեր հայրենակիցներ տառապում են աքսորավայրերում և տաժանավայրերում»[3], իսկ երկրորդը իր ելույթն ավարտել է «մահ մեր բազմաչարչար ժողովրդի թշնամիներին՝ Թուրք լինեն դրանք, թե քրիստոնյա»[4]:

Այս տեղեկություններից հետո զեկույցի հեղինակը գրում է, որ «հայերը Բուլղարիայում պատերազմի ավարտից կամ զինադադարից հետո մտադիր են լիակատար ինքնավարություն պահանջել իրենց համար, իսկ այդ պահանջները չհաջողվելու դեպքում նրանք որոշել են ամենուրեք, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում անկարգություններ և խռովություններ կազմակերպել»[5]:

«Ըստ ստույգ տեղեկությունների՝ հիշյալ կուսակցությունը (փաստաթղթերում՝ դաշնակցությունը: – Հ. Ս.) դուրս է բերել 800 մարդուց բաղկացած մեկ դրուժինա հայտնի ահաբեկիչ Անդրանիկի գլխավորությամբ...»:

---

[1] ГАРФ, ф. 202 ДОО, оп. 242, 1912 г., д. 14, л. 262.

[2] Նույն տեղում, թ. 266:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թ. 267:

[5] Նույն տեղում:

«Դրուժինայի և Կարմիր խաչի ջոկատի կարիքների համար «Դաշնակցություն» կուսակցությունը մեծ գումարներ է ծախսում...»:

««Դաշնակցություն» կուսակցության նման վերաբերմունքը Բուլղարիայի կառավարության և բուլղար ժողովրդի հանդեպ պայմանավորված է բացառապես շնորհակալական զգացումներով՝ այն աջակցության և լիակատար ազատության համար, որ մշտապես վայելել է այս կուսակցությունը Բուլղարիայում (Բուլղարիայում է գտնվել կուսակցության ռազմական դպրոցը, գլխավոր զինապահեստը, ռումբերի պատրաստման լաբորատորիան...)»[1]:

Այդ մասին նույնպես ռուսական գործակալները հարկ են համարել հաղորդել իրենց անվտանգության ծառայություններին. «Հայ կամավորների և դրուժինաների հետ պարապմունքները տարվում են ամեն օր և մեծ ինտենսիվությամբ: Որպես հրահանգիչներ հանդես են գալիս հիմնականում հայերը՝ Ռուսաստանի համալսարանների ուսանողներ և պահեստազորի հայ սպաներ: Ռազմական տեսական առարկաներից բացի՝ նրանց դասավանդվում են Հայաստանի պատմություն՝ ժողովրդի կյանքի տարբեր դրվագների մանրամասն նկարագրությամբ, որոնցում գովաբանվում են հայերի ինքնազոհաբերումը, արիությունը և քաջությունը: Հատկապես լուրջ ուշադրություն է դարձվում ողջ Բալկանյան թերակղզու և Կովկասի երկրամասի աշխարհագրական դիրքի ուսումնասիրությանը»[2]:

Բուլղարիայում հայ կամավորական շարժման ակունքներում առաջին հերթին կանգնած էր Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: Շարժման նախաձեռնողները և առաջնորդները լուրջ տարաձայնություններ ունեին Պոլսի իրենց կուսակիցների հետ, որոնք ստիպված էին սատարել Թուրքիային: Վերջիններիս վիճակը բավականին բարդ էր. փաստորեն նրանք երկու կրակի արանքում էին: Հարկավոր էր խոհեմ քայլեր ձեռ-

---

[1] *ГАРФ, ф. 202 ДОО, оп. 242, 1912 г., д. 14, л. 268.*

[2] *Նույն տեղում:*

նարկել՝ չվտանգելու Թուրքահայոց առանց այդ էլ օրհասական վիճակը: Իսկ Թուրքիայից դուրս գործող դաշնակցականները Բալկանյան պատերազմը հարմար առիթ էին համարում՝ լուծում տալու հայոց բազմաչարչար հարցին: Այս առիթով ահա թե ինչ է գրում Լ. Տրոցկին.

«Ականատեսը գրում էր, որ նրանք թխամազ տղամարդիկ էին՝ 19-45 տարեկան, տարբեր անցյալ ունեցող: Ահա հին ռազմիկը, որը վաղուց ի վեր բնավորվել էր Սոֆիայում, ձեռք էր բերել փոքրիկ սրճարան: Այժմ նա թողնում է ընտանիքն ու սրճարանը և գնում Անդրանիկի հետևից: Այդտեղ էր և 22-ամյա մի երիտասարդ, որն իր գիտակցական կյանքը ապրել է Լոնդոնում: Տղան մերվել է Անգլիային, հազիվ է խոսում հայերեն, բայց նրա հոգում ամուր նստած մանկական աղոտ հույսերը հավանաբար հանկարծ արթնացել էին և ստիպել նրան ուսին գցելով քաթանե պարկը՝ մեկնել Անգլիայից և գնալ Թուրքերի դեմ: Նրա կողքին էր ընտանիք չունեցող պանդոկապանը, որը խնամքով վարում էր իր ոչ մեծ տնտեսությունը, բայց ահա կանչում է իր վարձու օգնականին և ասում. «Տե՛ր կանգնիր, մինչև իմ վերադարձը, իսկ թե չգամ՝ թող քեզ լինի»:

Ջոկատում կային առևտրականներ, ուսուցիչներ, բազմաթիվ բանվորներ ու արհեստավորներ, գերազանցապես կոչկակարներ Ռումինիայից: Ճակատագիրը նրանց բոլորին ժամանակավորապես կապել էր պինդ հանգույցով»[1]:

Բուլղարիայի հայ համայնքը իր վրա վերցրեց վաշտի կազմավորման ծախսերի մի մասը՝ թեթևացնելու համար կառավարության հոգսը[2]: Վաշտի կազմավորմանը զուգընթաց Սոֆիայի հայ հասարակությունն ընտրեց մի մարմին, որը սկսեց դրամ ժողովել և հագուստի ու կոշիկի պատրաստություններ տեսնել: Կանայք քաշում էին սպիտակեղենի հոգսը, իսկ օրիորդները վաշտի համար ձեռագործում են մի ազգային դրոշակ[3]:

Կազմավորումից հետո վաշտը սկզբում ընդգրկվեց Մակե-

---

[1] **Л. Троцкий**, Сочинения, том VI, Балканы и Балканская война, Госиздат, Москва-Ленинград, стр. 238.

[2] Նույն տեղում, էջ 111:

[3] Տե՛ս **Արմէն Սիւնի**, Հայկական վաշտը..., էջ 26-28:

դոնա-Օդրինյան աշխարհազորի (հրամանատար՝ գեներալ-մայոր Գենով, գլխավոր շտաբի պետ՝ մայոր Դրվինգով) 6-րդ Օդրինյան ջոկատի կազմի մեջ, ապա Կոստուրինյան ջոկատի և ի վերջո հոկտեմբերի 16-ի հատուկ հրամանով ընդգրկվեց փոխգնդապետ Պրոտոգերովի հրամանի տակ գտնվող երրորդ բրիգադի «Լոզենգրադյան» անվանյալ 12-րդ դրուժինայի (հրամանատար՝ Կոնև) մեջ: Դրուժինայի կազմում կար 29 վաշտ[1], որոնցից մեկը հայկականն էր: Վաշտն ուներ 230[2] կամավոր, իր վոյեվոդան (Անդրանիկ) և մեկ սպա-հրամանատար (Նժդեհ)*: Հետո՝ Թրակիայի արշավանքի ժամանակ, վաշտին միացան նոր հայ երիտասարդներ, և մարտիկների թիվը հասավ 273-ի[3]: Վաշտը այնուհետև տեղափոխվեց 10-րդ Պրիլեպյան դրուժինայի կազմ:

Թեև կամավոր գրվողների թիվը շատ էր, բայց նրանցից շատերը «բախտ չունեցան» ընդգրկվելու վաշտի կազմում, որովհետև բուլղարական բանակի կանոնադրության համաձայն՝ կամավորական վաշտը պետք է ունենար 150-160 հոգի, բայց բացառության կարգով հայկական վաշտին թույլատրվել էր ունենալ կրկնակին: Վաշտի կազմավորումն ավարտվեց հոկտեմբերի 8-ին[4]:

Ձևավորվեց մի փոքր զորախումբ, որն անվանում էին և՛ վաշտ, և՛ գումարտակ, երբեմն էլ՝ գունդ: Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի շտաբի 1912 թ. հոկտեմբերի 3-ի N 2 և N 8 հրամաններով կարգավորվում էին վաշտի ստեղծմանը վերաբերող հարցերը:

Հայկական վաշտի (գումարտակի) կազմում առաջին հերթին ընդգրկվել էր Ռիլսկի վանքի հայ զինվորական դպրոցն ավարտածների մեծ մասը:

---

[1] Държавен военноисторически архив Велико Търново, ф. 435, оп. 1, е. 1, л. 192. Սույն և այնուհետև հիշատակվող բուլղարական արխիվների՝ հայկական վաշտին վերաբերող փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՀՀ ազգային արխիվում, որոնցից էլ օգտվել է հեղինակը:

[2] **"Балканска трибуна"** (София), № 1413, 25 августа 1914 г.

* Գարեգին Նժդեհին հայկական վաշտի հրամանատար նշանակելու մասին հրամանագիրը պահպանվում է. Държавен военноисторически архив Велико Търново, ф. 422, оп. 1, е. 6, л. 24.

[3] Տե՛ս **"Походъ"**, София, № 59/63, 21 ապրիլի 1941 թ., էջ 8:

[4] Տե՛ս **Андраник Озанян,** Документы и материалы, Ереван, 1991 г., стр. 117.



Հայկական վաշտը բալկանյան պատերազմի սկզբին, 1912 թ.
Հոկտեմբերի վերջ, առջևում Նժդեհն ու Անդրանիկը:



I Офицери:

Подпоручикъ Гарегинъ Нѣждехъ, родомъ отъ Нахчеванъ, Еривańска губерния (Русия), съ висше образование – юристъ, основатель на Еременската рота – 15 Септември 1912; по длъжность ротенъ командиръ.

ДЪРЖАВЕН ВОЕННОИСТОРИЧЕСКИ АРХИВ
ВЕЛИКО ТЪРНОВО
ВЯРНО С ОРИГИНАЛА
ф. 437 оп. 1 а. е. 2 л. 71
Директор: Изготвил:

II. Отделения:

Другонижестоящи Командири
Под въпроса:

12-рд դրուժինայի հրամանատար Կոնևի ստորագրությամբ վերադասին ուղարկած տեղեկագրությունը Գարեգին Նժդեհին հայկական վաշտի հրամանատար նշանակելու մասին:

Արխիվային փաստաթղթերը մեզ են հասցրել վաշտի մարտիկների անունները: Ահա նրանցից մի քանիսը՝ Պարույր Էքմեքչյան, Հովհաննես Ասլանյան, Գևորգ Պետրոսյան, Ասլան Մուրադյան, Գրիգոր Ավետիքյան, Զաքար Խաչատրյան, Սողոմոն Մարտիրոսյան, Արտաշես Մինասյան, Տրդատ Նշանյան, Մկրտիչ Մարգարյան, Արամ Ղարաբեկյան, Սարգիս Մանգասարյան, Նիկողայոս Կարապետյան, Գառնիկ Ստեփանյան, Արամ Խաչատրյան, Մարգար Գևորգյան, Կարապետ Անտինյան, Մանուկ Հարությունյան, Բարունակ Ազաբյան, Մուշեղ Բաղդասարյան, Հովհաննես Պետրոսյան, Գառնիկ Հայրապետյան, Վարդան Ներսիսյան և այլք[1]:

Այն ազգային դրոշը, որի ներքո հայկական վաշտը կռվում էր Թշնամու դեմ

---

[1] **Տե՛ս** *Централен държавен архив (София), ф. 1к, оп. 3, АЕ 93, л. 3:*

Վաչտի ստեղծումը նոր երևույթ էր հայ ազգային-ազատագրական պայքարի ողջ ընթացքում. այն ընդգրկվեց բուլղարական կանոնավոր բանակի կազմի մեջ՝ կրելով նրա համազգեստը և զինվորական տարբերանշանները: Բայց դրա հետ միասին զորամասի դրոշը հայկական էր, ազգային:

Բաժանվելով փոքր խմբերի՝ վաչտը ռազմական գործին տեղյակ կամավորների ղեկավարությամբ սկսեց մարզումները: Ռազմական անհրաժեշտ վարժանքներից հետո հայ կամավորները պատրաստվում էին մարտական գործողությունների:

Այդ օրերին, որպես ռուսական մի չարք թերթերի զինվորական թղթակից, պատերազմի թատերաբեմում էր գտնվում Ռուսաստանում հեղափոխական շարժման ականավոր գործիչ, 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման գլխավոր կազմակերպիչներից ու ոգեշնչողներից, Կարմիր բանակի տաղանդավոր կառուցողներից մեկը՝ Լ. Դ. Տրոցկին (Բրոնշտեյն, 1878-1940), որը Բալկաններում մնաց մինչև պատերազմի ավարտը: Լինելով Սոֆիայում և Բուլղարիայի այլ վայրերում, ինչպես նաև Բալկանյան ուրիշ տարածքներում՝ Տրոցկին մոտիկից չփվեց նաև տեղի հայերի հետ, հաղորդակից եղավ նրանց տրամադրություններին, ականատես եղավ հայ կամավորական վաչտի կազմավորման ընթացքին, հանդիպեց նրա մարտիկներին, հրամանատարներ Անդրանիկին և Նժդեհին:

Պատերազմի ընթացքում Տրոցկին գրեց Հայկական հարցին և հայ կամավորական վաչտին նվիրված հոդվածներ: Առաջին հոդվածը, որ նա գրել էր 1912 թ. նոյեմբերի 12-ին, լույս տեսավ միայն 14 տարի հետո՝ նրա երկերի բազմահատորյակի VI հատորում[1]: Հոդվածը վերնագրված է «Թուրքիայի քայքայումը և հայկական հարցը»: Դրանում հեղինակը հանդես է գալիս որպես հայ ժողովրդի անկեղծ բարեկամ և Հայկական հարցի ջերմ պաշտպան*:

---

[1] Տե՛ս Л. Троцкий, Сочинения, т. VI, Балканы и балканская война. Государственное издательство, Москва-Ленинград, 1926, էջ 225-235:

* Լև Տրոցկին ամենևին էլ համարժեք գնահատվող մարդ չէր, ուստի պատմության մեջ նրա դերի գնահատականներն էլ միշտ տրամագծորեն հակասա-

Հայերին վերաբերող Լև Տրոցկու երկրորդ հոդվածը նվիրված է Հայկական կամավորական վաշտին և վերնագրված է «Անդրանիկը և նրա ջոկատը»*:

Մինչև հայ կամավորների հետ հանդիպելը պատերազմական այդ օրերին Տրոցկին բազմիցս լսել ու կարդացել էր Անդրանիկի և նրա կամավորների մասին: Նա նկարագրում է, թե ինչպես է ինքը Սոֆիայում 1912 թ. հոկտեմբերի կեսերին հանդիպել հայկական կամավորական վաշտին, որը պատրաստվում էր մեկնել ռազմաճակատ: Նա մեծ համակրանքով ու վառ գույներով է նկարագրում վաշտի զինվորներին, հիանում նրանց պահվածքով և խանդավառությամբ: «Կամավորները,- գրում էր Տրոցկին,- քաղաքացիական հագուստներով են, բայց զինվորական վարի կոկ ու հավաք են, շատերը ոտքերին կապել են փաթաթաններ, մեջքներին՝ քաթանե պայուսակ ու գլխանոց ունեն, կողքից՝ փամփշտակալ: Մեծ մասն ունի սեփական ատրճանակ: Ծաղիկներով զարդարված են գառան մորթուց բարձր գդակներն ու գոտիները: Ահա այս ամենը՝ գառան մորթուց գլխարկ-

---

կան են եղել: Բայց մի կետում բոլորի կարծիքները համընկնում են. Տրոցկին փայլուն մտավորական էր: Դա ցայտուն երևում է նաև նրա «Թուրքիայի քայքայումը և հայկական հարցը» հոդվածից: Ավելի քան մեկ դար է անցել այն գրելուց, բայց հեղինակի շարադրած շատ դրույթներ ու մտքեր, բացարձակապես ճիշտ լինելով, այսօր էլ այժմեական են:

* Լ. Ն. Տրոցկու «Անդրանիկը և իր ջոկատը» վերնագրով հոդվածթղթակցությունը լույս տեսավ բալկանյան երկրորդ պատերազմի օրերին *"Киевская мысль"* թերթի 1913 թ. հուլիսի 19-ի համարում (№ 197)՝ Անտիդ Օտտո կեղծանունով: Սակայն, ինչպես տեքստից երևում է, հոդվածը գրվել է դրանից ամիսներ առաջ՝ բալկանյան առաջին պատերազմի ժամանակ՝ հավանաբար 1913 թ. գարնան սկզբին: Անդրանիկին, Նժդեհին, հայկական կամավորական վաշտին նվիրված Լ. Տրոցկու հոդվածը հետագայում զետեղվել է նրա երկերի VI հատորում (տե՛ս **Л. Троцкий**, Сочинения, т. VI, Балканы и балканская война. Госиздат. Москва-Ленинград, 1926, էջ 235-243): Հոդվածը մեր թարգմանությամբ առաջին անգամ հրապարակել ենք «Գարուն» ամսագրի 1990 թ. № 1-ում՝ համապատասխան առաջաբանով:

ներ, ձգված գոտիներ, գլխանոցներ, մաքուր պարկեր և ծաղիկներ,- ջոկատին ոչ միայն մարտական, այլև տոնական տեսք են տալիս»[1]:

Տրոցկին ընթերցողներին է ներկայացնում «երգի ու առասպելի հերոս» Անդրանիկի անձը, տալիս նրա՝ որպես մարդու և մարտիկի կերպարի խտացած բնութագրությունը, բարձր գնահատում հերոսի մարդկային և քաղաքացիական բարեմասնությունները: Այնուհետև հերոսի կյանքից բերում է կենսագրական տեղեկություններ, ցույց տալիս, թե Անդրանիկն ինչպես է հաղորդակցվել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը, մտել նրա հորձանուտի մեջ: Ըստ որում, Տրոցկին հերոսի կյանքին քաջատեղյակությամբ է ներկայացնում նրա մարտական գործողությունների մանրամասները, նկարագրում նրա անցած հեղափոխական-մարտական ուղին, այնուհետև հետևում է հերոսի կյանքի հետագա ընթացքին: Անցնելով Կովկաս, ապա Եվրոպա՝ Անդրանիկը, վերջապես հիմնավորվում է Բուլղարիայում:

Հիմա նա ջոկատի ոգին է, գրում էր Տրոցկին: «Նա հոյակապ է իր մուգ գորշավուն կոստյումով, կարակուլե բարձր գլխարկով և լավ կարված զինվորական երկարաճիտ կոշիկներով, որոնցից դուրս ցցված մտրակը ոչ պաշտոնական իշխանության խորհրդանիշ է: Կողքից կախված են հեռադիտակը և բրաունինգը, կրծքին՝ մի ամբողջ ծաղկեփունջ, ժապավենին մակագրություն. «Ազատություն կամ մահ»: Դա կարմիր խաչի կոմիտեի հայուհիների նվերն է... Վաշտի առջևից ջահելի հստակ քայլվածքով լուռ գնում է Անդրանիկը: Նրա մեջ ամեն բան՝ փայլատակող հայացքը, ծակծկող բեղերը և նույնիսկ ոսկեծոպ գլխանոցը, վկայում են, որ նա կրկին իր տարերքի մեջ է»[2]:

---

[1] *Л. Троцкий*, *Сочинения, т. VI, стр. 243.*

[2] Նույն տեղում, Հայաստանում Թուրք-քրդական հարստահարիչների դեմ մղված ֆիդայական պայքարի շրջանում Անդրանիկին նվիրված հուշերում և նրա մասին ժողովրդի կողմից հյուսված երգերում ազգային հերոսը ներկայաց-

Իսկ ջոկատի հրամանատար Նժդեհին բոլորը պարզապես դիմում էին «ընկեր Գարեգին»: «Նա պոետ է, հռետոր և ռազմիկ՝ ամբողջովին խանդավառված իրեն բաժին ընկած առաքելության կարևորությամբ»[1],- նշում էր հոդվածագիրը և ավելացնում, որ նա «պահ անջկոտ էր, ամեն ինչ անում էր, որպեսզի մարտիկները օր առաջ տիրապետեն ռազմական արվեստին: Զուր չէ, որ Գարեգինը տասն օր չարունակ օրական տասը ժամ նրանց ուսուցանում էր շարային արվեստի գաղտնիքները»[2]:

Զորավարժություններից և անհրաժեշտ այլ նախապատրաստություններից հետո հայկական վաշտը Լոզենգրադյան 12-րդ դրուժինայի կազմում Սոֆիայից պետք է մեկներ ռազմաճակատ:

Հոկտեմբերի 24-ի առավոտյան բոլորը կազմ ու պատրաստ շարվեցին: Նրանք հայկական ազգային դրոշակով էին: Վերջին ստուգումներն էին կատարվում: Եկավ Անդրանիկը՝ կտրուկ ու վճռական: «Ոոպեն պատմական էր և փառահեղ,- գրում էր Արմեն Սյունին:- Տղերքը, գեղեցիկ շարուած, խսկական զինուորների պէս լուրջ եւ հաստատ՝ կատարում էին իրենց հրամանատարի հրամանները, որը նրանց շարում էր «պոխոդնակոլոնայի» համար: Եւ վերջապէս, երբ հնչեց վերջին կոմանդան՝ «ձախ թեւդ առաջ – մարշ»,- կեցցէները թնդացրին օդը, ծաղիկները թափուեցին տղերանց գլխին, «ցտեսութիւն», «բարի ճանապա՛րհ», «բարով յետ գաք» բացականչութիւնները խառնուեցին,

---

ված էր այսպիսին՝ միջահասակ, առույգ ու գեղեցիկ, գլխի փափախը միշտ աջ թեքված, լանջին խաչաձև և մեջքին երեք-չորս փամփշտակալներ, ձախ կողքից կախված տասնոց ատրճանակ: Անդրանիկի արտաքին տեսքի Տրոցկու նկարագրածը չէր համապատասխանում ժողովրդական երգերի և հուշերի ավանդական նկարագրություններին: Եվ դա բնական է, քանզի նոր միջավայրը և մարտական նոր խնդիրները առաջադրել էին հագուստ-կապուստի նոր պահանջներ:

[1] *Л. Троцкий, Сочинения, т. VI, стр. 243.*

[2] *Նույն տեղում:*

կորան տղերանց ներդաշնակ, քաղցր քայլերգի մէջ... Ուրախ, զարթ, քայլում էին տղերքը երգելով հայկական երգեր, իսկ ժողովրդի խուռն բազմությունը հետևում էր նրանց դեռ երկար ժամանակ, մինչեւ որ արդէն քաղաքը մնաց նրանց յետեւում...»[1]:

Առջևում դաժան փորձություններ էին, զոհեր ու հերոսացում:

ԴԱՇՆԱԿԻՑ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչ որ չի կարելի պատերազմում անակնկալ համարել, դա, անշուշտ, արյունն ու տառապանքն է: Պատերազմը արդարացի է, թե անարդարացի, անհրաժեշտություն է, թե ոչ, միևնույնն է, անխուսափելիորեն շաղկապված է կյանքի ու մահվան երկընտրանքի հետ: Դրոշակների հպարտ ծածանումը, զորավարների ծրագրած հարձակումներն ու նահանջը, զենքերի ահարկու շաչյունները, դյուցազունների անդիմադրելի խոյանքն ու հաղթության աղաղակները, որ սուրալով անցնում են ռազմադաշտերի վրայով, իրենց հետևից, ավա՜ղ, թողնում են հերոսական կամ անարգ մահեր, փայփայած իղձերի խորտակում, ապրողների հոգու անանց ցավ: Այլ խոսքով՝ մարդիկ պատերազմի մեջ են մտնում հոծ շարքերով ու ռազմաշունչ երգերով, փողահարումներով ու թմբուկների զարկերով, բայց գեհենից դուրս են պրծնում անդամահատված ու մունջ՝ այնտեղ թողնելով իրենց զենքի անշնչացած ընկերներին, իրենց երիտասարդությունը: Հենց այդպիսին էր վիճակը բալկանյան պատերազմի ռազմի

---

[1] ***Արմէն Սիւնի***, *Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդութեամբ 1912-1913 թթ. Բալկանեան պատերազմում, էջ 34:*

դաշտերում 1912 թ. հոկտեմբերի երկրորդ և նոյեմբերի առաջին կեսերին:

Պատերազմի բոլոր ճակատներում, ուր կռվում էին բալկանյան չորս դաշնակիցների բանակները, ընթանում էին կատաղի մարտեր: Բալկանյան դաշնակիցներն ունեին ոչ միայն թվական և նյութական առավելություն, այլև այն չրջանների բնակչության զգալի մասի համակրանքը, որտեղ տեղի էին ունենում պատերազմական գործողությունները: "Церковный Вестник" ռուսական թերթը (№ 41, 1912 թ.) գրում էր. «Վերջապես բալկանյան քրիստոնյաներն այսօր կռվի դաշտ են նետվում առանց ազգի խտրության այնպիսի ցնծագին աղաղակներով և հանդիսավոր տրամադրությամբ, որ կարծես տոնի են գնում: Ամբողջ սրտով ցանկանում ենք նրանց հաջողություն»:

Կռվի հիմնական ծանրությունը, այնուամենայնիվ, ընկած էր **բուլղարական բանակի** ուսերին: Ինչպես նչվեց վերը, այդ բանակը զինվել էր նոր տեխնիկայով, պահունակատուփավոր հրացաններով, հաստոցավոր գնդացիրներով, արագաձիգ հրետանիով և նույնիսկ ուներ ռազմական ինքնաթիռներ: Այդ նոր սպառազինությունը ավելացնելու էր զորքերի կրակային հզորությունը, բարձրացնելու էր մարտական գործողությունների արդյունավետությունը: Հենց այդ պատճառով պատերազմի բոլոր ճակատներից Թուրքերի համար ամենակենսականը բուլղարական սահմանագլխի պաշտպանությունն էր: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ բալկանյան չորս պետություններից Բուլղարիան էր ամենասպառազինվածը և ռազմունակը, այլև մանավանդ այն պատճառով, որ եթե բուլղարները կարողանային իրենց ձեռքն առնել Բաբանեսքիի գիծը, այն ժամանակ Թուրքական արևմտյան բանակի հետ ռազմաճակատի հաղորդակցությունը բոլորովին կխզվեր, և Կ. Պոլսի ճամփան մինչև Զորլու և Հատրմքեո հակառակորդների առջև բաց կմնար: Այդ պատճառով օսմանյան բանակի համար կենսական պահանջ էր Դիմոթեքս-Ադրիանուպոլիս-Քըրք-Քիլիսե գծի ամեն գնով պաշտպանությունը: Եթե բուլղարներին հաջողվեր ճեղքել այդ պաշտ-

պանական գիծը, ապա Ադրիանուպոլսի (Էդիրնե) շրջապատումը և չեզոքացումը կլինեին անխուսափելի:

Ռազմական պլանները կարողանալով գաղտնի պահել՝ ռազմաճակատի բոլոր հատվածներում բուլղարներին հաջողվում էր հանկարծակիի բերել հակառակորդին: Նախօրոք մանրազնին մշակված ռազմական պլանի համաձայն՝ բուլղար հրամանատարությունը մեծ վարպետությամբ կատարում էր հմուտ զորաշարժեր: Նա առերես ցույց էր տալիս զորքերի շարժման մի պլան, բայց կատարում էր մի ուրիշը: Օրինակ՝ ցերեկով զորքի մի մասը երկաթուղով տանում էին որևէ մի ուղղությամբ՝ իբրև դեպի Թիկունք, բայց գիշերը նույն զորամասը հետ էր բերվում և ուղղվում դեպի ռազմաճակատ: Շնորհիվ զորքերի արագ տեղաշարժերի, վերադասավորումների ու գաղտնապահության՝ հնարավոր էր լինում բռնել ամենահարմար դիրքերը:

«Աւետարեր» թերթի տեսարան Հ. Մամիկոնյանը գտնում էր, որ եթե օսմանյան զորքերը կարողանան կանոնավոր հետքաշվել ամբողջ գծով, ապա մոտ ապագայում մղվելիք ճակատամարտերում կունենան առավելություն, որը թույլ կտա ժամանակ շահելու միջոցով գոնե մեկ շաբաթով կասեցնել բուլղարների առաջխաղացման թափը: Այդ դեպքում թուրքերն ի վիճակի կլինեին պատերազմի դաշտ բերել օրական 20-30.000 զինվոր, որը և կապահովեր օսմանյան բանակի հաջողությունը[1]:

Բայց բուլղարները հասկացել էին թուրքական հրամանատարության այդ մտադրությունը և, օգտվելով տվյալ պահին իրենց թվական առավելությունից, ամեն զոհողություն հանձն առնելով, փորձում էին արգելել օսմանյան զորքերի կենտրոնացումը, միաժամանակ պաշարել Ադրիանուպոլիսը և կտրել քաղաք տանող բոլոր ուղիները:

Բուլղարական 2-րդ բանակը գեներալ Ն. Իվանովի հրա-

---

[1] *Տե՛ս* ***«Աւետարեր»*** *(Կ. Պոլիս), № 44, 2 նոյեմբերի 1912 թ.:*

մանատարությամբ, որը զբաղեցրել էր ռազմաճակատի աջ հատվածը, պետք է հարձակում գործեր Ադրիանուպոլսի վրա:

Ռազմաճակատի ձախ թևը զբաղեցրել էր գեներալ Վ. Կուտինչևի 1-ին բանակը, որը պետք է ջարդեր հակառակորդի դիմադրությունը և մտներ Ադրիանուպոլսի ու Լոզենգրադի միջև ընկած հատվածը:

3-րդ բանակը գեներալ Ռադկո Դիմիտրիևի հրամանատարությամբ, որն իր ուժերը կենտրոնացրել էր ձախ թևում, խնդիր ուներ թշնամուն կործանիչ հարված հասցնելու այդ ուղղությամբ[1]:

Մինչև հոկտեմբերի կեսերը պատերազմի բախտը դեռ հեղհեղուկ էր: Բուլղարները և նրանց դաշնակիցները պետք է գոհ լինեին իրենց հաջողություններով, բայց առայժմ չէին կարող հպարտանալ ձեռք բերածով, քանի դեռ չէին ունեցել մեծ ճակատամարտեր, իսկ մինչ այդ եղած կռիվները վճռական դերակատարություն չէին ունեցել պատերազմի վախճանի տեսակետից: Իսկ օսմանցիները առանց մեծ ճակատամարտ տալու երբեք իրենց թշնամիներին չէին զիջի Ադրիանուպոլիսը (Էդիրնեն) և Կրկլարելիի (Կըրկ-Քիլիսեի) գիծը:

Ուրեմն ամենաարյունալի կռիվները դեռ առջևում էին:

Բուլղարների տարած առաջին խոշոր հաղթանակներից մեկը Թրակիայում **Կըրկ-Քիլիսեի** գրավումն էր 60 կիլոմետրանոց ճակատով մեկ:

Քաղաքում բնակվում էր 16.000 մարդ, որի կեսը հույներ էին, մնացածները բուլղարներ, թուրքեր և հրեաներ:

Եվրոպացի բոլոր մասնագետների վկայությամբ Կըրկ-Քիլիսե գյուղաքաղաքի ամրությունները խիստ մեծ ու էական կարևորություն ունեին և օսմանյան արևելյան բանակի խա-

---

[1] **В. А. Жебокрицкий**, *Болгария в период балканских войн 1912-1913 гг. Изд. Киевского университета, 1961, стр. 40, 41.*

ըիսխն էին: Այս ամրությունները Ադրիանուպոլսի (Էդիրնեի) բերդապարիսպների հետ այն ռազմական հզոր պատնեշներն էին, որոնց հանձնված էր բուլղարական բանակի առաջխաղացումը կասեցնելու գործը:

*Դրանից զատ՝ **Կրկլարելին**՝ որպես ռազմական պատնեշ, Ադրիանուպոլսի զորավիգն էր ու թևարկուն: Այնպես որ, թշնամու կողմից սույն ամրությունների գրավումը թուրքերի համար մեծ կորուստ կլիներ նաև պատերազմի ողջ ընթացքը վճռելու տեսակետից: Այս էր պատճառը, որ Եվրոպայում բուռն ուշադրությամբ և սպասումով հետևում էին, թե ինչպես կվերջանա ճակատամարտը[1]:*

Կրրխ-Քիլիսեի պաշտպանությունը հանձնված էր մի զորաբանակի, որի հրամանատարը Մուխթար փաշան էր: Նրա տրամադրության տակ կար 25-հազարանոց զորք: Հարձակվողը բուլղարական 30-հազարանոց բանակն էր՝ զորավար Ռադկո Դիմիտրիևի հրամանատարությամբ[2]: Կրկլարելիի համար ճակատամարտը սկսվեց հոկտեմբերի 9 (22)-ին և տևեց մինչև հոկտեմբերի 11 (24)-ը: Արյունալի կռիվներ ծավալվեցին քաղաքի մատույցներում, իսկ հաջորդ օրը տեղի ունեցան վճռական մարտերը:

Արագորեն կտրելով 420 կիլոմետր՝ բուլղարական առաջին բանակին օգնության հասավ երրորդ բանակը:

Կրկլարելիի վրա թնդանոթային հուժկու ռմբակոծությունից հետո թուրքական զորքի առավել մարտունակ մասերը բնաջինջ եղան: Դրանից անմիջապես հետո բուլղարական հետևակը հարձակման անցավ և հոկտեմբերի 11 (24)-ի ժամը 11-ին խուժեց քաղաք:

Բուլղար զինվորները, որոնք հայտնի էին իրենց զարմանալի տոկունությամբ ու սակավապետությամբ, անօրինակ սխրանքներ էին գործում: Նրանց ոգևորությունը հասել էր հանդգնության: Սվինամարտում բուլղարները ցույց էին տալիս խելահեղ

---

[1] *Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Առաջամարտ»**, № 3 (1030), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:*

քաջություն: Մարտիկները սվիններով առաջ էին խոյանում՝ չսպասելով նույնիսկ, որ հրետանին իրենց համար ճամփա բացի: Շատ անգամ թշնամուց 300-400 մետրի վրա ամբողջ գնդեր կրակի գծից բարձրանում էին առանց որևէ պաշտպանական միջոցի և կատաղաբար նետվում թուրքերի վրա: Սպաներն անզոր էին զսպելու իրենց զինվորների խելահեղ խոյանքը: Դա էր պատճառը, որ այս կռվում բուլղարները տվեցին 1700 սպանված և 4000 վիրավոր, իսկ թուրքերն ավելի քիչ՝ 1500 սպանված ու վիրավոր[1]:

Կրկլարելիի արյունալի կռիվներում աննախադեպ քաջագործություններ կատարած բուլղարական զորամասերից մեկի հրամանատարն էր 15 տարուց ի վեր ընդհատակում գործած, Մակեդոնական հեղափոխական կազմակերպության նշանավոր գործիչներից մեկը՝ Միխայել Կերճիկովը: Նրա բազմամարդ զորամասի մարտիկներն առաջնորդվում էին իրենց հրամանատարի «Մեռնե՛նք, բայց թող ազատ լինի մեր Մակեդոնիան» կոչհորդորով[2]:

Բուլղարներն անխնա էին թուրք զինյալների հանդեպ և դրանով իսկ սարսափ էին ազդում թշնամու զորամասերի վրա: Բոլոր մարտիկները կռվում էին անձնուրացաբար, որովհետև գիտեին, որ եթե չհաղթեն, կվտանգեն բալկանների ամբողջ գործը: Զլատելով թուրքական ուժերը՝ նրանք փառավոր հաղթանակներ էին տանում բոլոր տեղերում: Զունենալով կազմակերպված մատակարարում և որակյալ ղեկավարություն՝ թուրքական բանակը կրում էր ծանր պարտություններ: Թշնամու ուժերը արագորեն կազմալուծվում էին: Ահաբեկված թուրքերը փախչում էին՝ թողնելով զենքի և ուտեստի առատ պաշարներ: Հաղթահարելով թուրքերի դիմադրության վերջին օջախները՝ բուլղարները գլխովին ջախջախեցին նրանց:

Կրկլարելիի (Կրրխ-Քիլիսեի) անկումը տեղի ունեցավ սպասվածից շատ չուտ: Թուրքերը քաղաքի բերդում միայն երեք օր

---

[1] *Տե՛ս* ***Еджидио Иветич****, Балканските войни,* *էջ 81:*

[2] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 3 (1030), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:*

դիմադրեցին, թեև 25.000-անոց բերդապահ զորքը կարող էր երկար դիմանալ: Քաղաքի արագ անկման պատճառներից մեկը զինվորների սննդամթերքի պակասն էր: Թուրքական հրամանատարությունը անհոգ էր գտնվել ժամանակին համալրելու զորքին անհրաժեշտ պարենը կամ գոնե կազմակերպված բաժանելու եղածը:

Մեծ կորուստներ տված թուրք զորամասերը, այլևս չդիմանալով բուլղարների կատաղի գրոհներին, խուճապով ու խառնիխուռն փախչում էին արևելյան ուղղությամբ՝ ձգելով վիրավորներին: Թուրք բնակչությունը նույնպես լքում էր իր բնակավայրերը: Մի շարք գյուղերում բուլղար զինվորները հավաքում էին ծնողների կողմից լքված մանուկներին[1]:

Բուլղարների ձեռքն անցան բազմաթիվ գերիներ, թնդանոթներ, ռազմամթերքով լի պահեստներ, 16 վագոն զինվորական պարեն, դրոշակներ և այլն:

Կռիվների ընթացքում ցուցաբերած անկարողության համար թուրքական արևելյան ռազմաճակատի հրամանատարությունը պաշտոնանկ արեց զորավար Մահմուդ Մուխթար փաշային[2]:

«Ազատամարտը» գրում էր, որ եթե մեծ տերությունները չկարողանան խաղաղություն հարկադրել բալկանյան չորս պետություններին, ապա այն, ամենայն հավանակությամբ, կվերածվի համաշխարհային հրդեհի, որի բոցերում կարող է ոչնչանալ եվրոպական քաղաքակրթությունը[3]:

Կրկլարելիից նահանջած թուրքական զորքը դիրքեր բռնեց Փունար Հիսարի մատույցներում:

Կատաղի կռիվները շարունակվում էին:

Մխրճվելով Կրկլարելիի (Կրրկ-Քիլիսեի) և Ադրիանուպոլսի (Էդիրնեի) ամրությունների մեջտեղը, բուլղարական զորքը թուրքական արևելյան բանակը բաժանեց երկու մասի: Թուրքե-

---

[18] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:

[18] Տե՛ս նույն տեղում, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[18] Տե՛ս նույն տեղում, № 1020, 6 (19) հոկտեմբերի 1912 թ.:

ը նախապատրաստվում էին պաշտպանական կռիվների:

Բուլղարական Առաջին բանակը առաջ էր գնում մեկը մյուսին հաջորդող գրոհներով: Այդ ժամանակ երկրորդ բանակը շրջապատեց Ադրիանուպոլսը: Մեկ օր հետո նրան միացավ երկրորդ բանակը: Թուրքական ուժերը խուճապի էին մատնվել: Թեև նրանք նոր, թարմ համալրում էին ստացել Կ. Պոլսից, բայց վիճակը փոխել չկարողացան և հետ չպրտվեցին պաշտպանական երկրորդ գիծ՝ Էգենի գետի և Լյուլե-Բուրգազ ու Փունար Հիսար բնակավայրերի միջև: Դրանով Թրակիայի օսմանյան բանակը բաժանվեց երկու մասի. առաջինը բացազատվեց Լյուլե-Բուրգազի, երկրորդը՝ Փունար Հիսարի մատույցներում: Թուրքական հրամանատարությունը կարգադրություն էր իջեցրել այլևս չնահանջել: Այս երկու բնակավայրերի ուղղությունների վրա օսմանյան ուժերը հաշվվում էին 130.000, իսկ բուլղարներինը՝ 110.000 հոգի[1]:

Արդեն առաջին շրջանում պատերազմը Թուրքիային ծանր կորուստներ պատճառեց, ավելին, քան Տրիպոլիտանական պատերազմը:

"Berliner Tagesblat" Թերթից «Ազատամարտում» Թարգմանաբար տպագրված հոդվածում կարդում ենք. «Տասնըհինգ օրէն աւելի պակաս ժամանակամիջոցի մը մէջ պալքանեան փոքր պետութիւնները տապալեցին 1829էն ի վեր եւրոպական դիւանագիտութեան կողմէ ա՛յնքան ճարտարօրէն կառուցուած չէնքը: Այլեւս ո՛չ մէկ համաժողով կրնայ արգիլել Արեւելեան խնդրին հաշուեյարդարութիւնը: 1878ին երբ Ռուսերը մինչեւ Պոլսոյ դուռները հասան, Թուրքիան կրցաւ անդամահատութենէ մը ազատիլ: Այսօր քիչ հաւանական է որ նոյնը պատահի»[2]:

*Պատերազմական գործողությունների առաջին տասնօրյակը դեռ չբոլորած՝ օսմանյան կառավարությունը դիմեց Ֆրանսիային, որ սա մյուս տերությունների հետ համախորհուրդ **ստիպի** բալկանյան դաշնակիցներին՝ դադարեցնելու կռիվները բոլոր*

---

[1] *Տե՛ս Эджидио Иветич, էջ 81:*

[2] ***«Ազատամարտ»**, № 1026, 12 (25) հոկտեմբերի 1912 թ.:*

ճակատներում և նախապատրաստվելու հաշտության բանակցությունների: Ֆրանսիական կառավարությունը պատասխանեց, որ ընդունելի չէ Բ. Դոան առաջարկը, որովհետև 1) այն կարող է դիտվել իբրև ոտնահարում մարդկային իրավունքների, 2) վստահ չեն, որ բալկանյան պետությունները չեն մերժի զինադադարի առաջարկությունը: Փարիզը միաժամանակ տեղեկացնում էր, որ մյուս մեծ պետությունների համաձայնության դեպքում ինքը պատրաստ է քննելու Կ. Պոլսից եկած միջնորդության հարցը, եթե այդ մասին թուրքական կողմից դիմում արվի[1]:

Առջևում Եվրոպական Թուրքիայի ամենամեծ քաղաքն էր՝ օսմանյան կայսրության երբեմնի (երկրորդ) մայրաքաղաք **Ադրիանուպոլիսը (Էդիրնե)**՝ իր հռչակավոր ամրություններով, որոնք կառուցվել էին ժամանակի պատերազմական պահանջներին համաձայն: Բերդերը բետոնապատ էին, ապահովված չերտավոր ծածկույթներով: Դա իրականացվել էր 1905 թվականից սկսած: Հին ամրոցների մեծ մասը վերակառուցվել էր ժամանակի ամրաշինության բոլոր պահանջներին համապատասխան: Բալկանյան պատերազմին նախորդած երեք տարիներին կառուցվել էին մի շարք նոր ամրություններ: Կառուցվել էր մարտկոցների և դաշտային պաշտպանության հզոր շղթա, որն է՛լ ավելի էր հզորացրել բերդապարիսպների դիմադրողականությունը: Այդ ամենը հնարավորություն էր տալիս կոտրելու օսմանյան տարածքներ խուժած թշնամու հարձակման առաջին թափը և օսմանյան դաշտային զորամասերին ժամանակ տալ համախմբվելու և դյուրացնելու իրենց հարձակողական գործողությունները: Ադրիանուպոլիսն իր այս դերը կատարեց փայլուն կերպով:

Բրիտանացի հայտնի զինվորական մասնագետների խմբի հաշվարկներով բերդաքաղաքը պաշտպանող զորքը բաղկացած էր հետևյալ ստորաբաժանումներից. հիզումիե երկու զորաբա-

---

[19] **Արամ Անտոնեան**, Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 981, **«Հայրենիք»**, № 12, հոկտեմբեր, 1924, էջ 122:

ժին (ֆբրջու), նիչանճի III և IV գնդեր (ալաք) և ռեդիֆ պա-հեստայինների զորաբաժին: Այդ բոլորը միասին կազմում էին 60-հազարանոց զորք: Բերդապարիսպներից ներս Թուրքերն ունեին 300 դաշտային թնդանոթակազմ և 45 արագահարված՝ իրենց համակարգերով: Դրանից զատ բերդաքաղաքի ամրությունները պաշտպանում էին հրետանաձիգների 60 գումարտակ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին 250 ծանր թնդանոթ[1]:

Բերդաքաղաքի պաշարման, ապա և գրավման գործը հանձնարարվեց բուլղարական II բանակի ընդհանուր հրամնատար զոր. Իվանովին: Այդ բանակը բաղկացած էր 8-րդ և 9-րդ զորաբաժիններից, որոնց միացվել էր I բանակի 3-րդ զորաբաժինը:

Հոկտեմբերի 5 (18)-ին բուլղարական զորքը հարձակման անցավ քաղաքի վրա: Թեթև դիմադրությունից հետո Ադրիանուպոլսի մատույցներում գտնվող թուրքական զորամասերը քաշվեցին ու փակվեցին ամրոցների գծից ներս: Հոկտեմբերի 9 (22)-ին թուրքական երկու մեծ զորաբաժիններ դուրս եկան ամրոցների շրջագծից և հարձակում գործեցին բուլղարական 3-րդ զորաբաժնի վրա, բայց վերջինիս հաջողվեց շատ արագ կանգնեցնել հակառակորդի հարձակումը և նրան կրկին սեղմել բերդապարիսպներից ներս:

Եթե բուլղարները կարողանային գրավել այդ բերդերի գոնե մի մասը, ապա Էդիրնեի անկումը կանխորոշված կլիներ, մանավանդ որ լայնածավալ սովի ուրվականն արդեն սավառնում էր քաղաքի վրա:

Այն պահին, երբ բուլղարական զորքը գնում էր Ադրիանուպոլսի վրա, Բ. Դուռն առաջին փորձն արեց դիվանագիտական միջոցներով կանգնեցնելու նրա հարձակումը: Բուլղարները ընդունեցին առաջարկը, բայց պահանջեցին, որ Թուրքերն առանց կռվի հանձնեն քաղաքը, այլապես կսկսեն մարտական գործողությունները: Մեծ պետությունները Կ. Պոլսին խիստ ազդու համատեղ առաջարկ արեցին՝ ընդունել բուլղարների պահանջը:

---

[1] Տե՛ս Լոնդոնի «Թայմս» թերթից արտատպված հոդվածը «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս) թերթի 1913 թ. մարտի 20 – ապրիլի 2 համարում (№ 4998):

Բ. Դուռը պատասխանեց, թե դա անհնարին է, որովհետև երբ Ադրիանուպոլիսն իր անառիկ բերդով հանձնվի հակառակորդին, նույն րոպեին Կ. Պոլսում արյունալի հեղաշրջում կսկսվի[1]:

Դրանից հետո բուլղարներն ավելի մոտեցան Ադրիանուպոլսին, թեև ամրոցների մարտկոցները դեռ կարողանում էին նրանց պահել որոշ հեռավորության վրա: Բուլղարների վրա անընդհատ ուժգին կրակ էր տեղում հատկապես Առնաուտքեո կոչված դիրքից[2]:

Քանի որ շրջապատված Ադրիանուպոլիսը թուրքերը պաշտպանում էին մեծ ուժերով, ուստի բուլղարական զորքերը, ստանալով նոր համալրումներ, ավելի ամրապնդեցին քաղաքի օղակումը:

Ռուսները բուլղարներին փոխանցել էին 5 օդանավ, որոնք հիմնականում կատարում էին հետախուզական թռիչքներ ռազմաճակատի տարբեր հատվածներում և հատկապես Ադրիանուպոլսի ուղղությամբ: Օդաչուներն օդից նետում էին թռուցիկներ, որոնցով թուրք զինվորներին ու սպաներին կոչ էր արվում անձնատուր լինել՝ տեղիք չտալով նորանոր արյունահեղությունների[3]:

Հոկտեմբերի 11 (26)-ի երեկոյան Ադրիանուպոլսի առջև բուլղարական երկրորդ բանակը օսմանյան զորքերին մղեց ամրոցների շրջանակի մեջ և հաստատվեց պաշարման այն գծի վրա, որին կարողացել էր տիրանալ[4]: Որոշ ժամանակ անց քաղաքը բոլոր կողմերից առնվեց ամուր օղակի մեջ[5]: Սկսվեց երկարատև պաշարում: Քաղաքի հզոր ամրություններն իրենց մատույցներին էին գամել բուլղարների բազմահազարանոց զորքը:

Այս պայմաններում բուլղարական հրետանին համառորեն անընդհատ ռմբակոծում էր Ադրիանուպոլսի և՛ բերդը, և՛ քա-

---

[1] Տե՛ս А. Ф. Миллер, Оттоманская империя (Султанская Турция), М., 1946, էջ 36:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1026, 12 (25) հոկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[5] Տե՛ս նույն տեղում:

ղաքը, որի հետևանքով մեծապես տուժում էր նաև խաղաղ բնակչությունը: Ուստի բուլղարական զորականները Թուրք հրամանատարությանը հայտարարեց, որ Ադրիանուպոլսի բոլոր ոչ զինվորական բնակիչներին թույլ է տրվում անարգել մեկնել քաղաքից: Թուրք հրամանատարը, սակայն, պատասխանեց, թե ինքն այդ առաջարկը կընդունի միայն այն դեպքում, եթե բուլղարներն իրենց հերթին դադարեցնեն գրոհներն Ադրիանուպոլսի վրա: Բայց բուլղարական կողմը մերժեց այդ պայմանը:

Քանի որ քաղաքն ամբողջովին շրջապատված էր բուլղարական զորքերի կողմից, այդ իսկ պատճառով Թուրքական հրամանատարությունը չէր կարողանում օգնություն հասցնել քաղաքին: Ընդհակառակը՝ բուլղարական բանակի հրամանատարությունը նորանոր ռազմական ստորաբաժանումներ էր ուղարկում էդիրնեն օղակի մեջ առած զորքին:

Բայց բուլղարները քաջ գիտակցում էին, որ որքան ուշանար Ադրիանուպոլսի գրավումը, այնքան պիտի ավելանար օսմանյան բանակի հաջողության հասնելու հնարավորությունը, քանի որ իրենց բանակի հիմնական ուժերը սահմանագլուխներին էին, մինչ օսմանյան բանակն ամեն օր նոր համալրում էր ստանում Անատոլիայից:

Հոկտեմբերի 13 (26)-ին Թուրքիայի նախարարական խորհուրդը ռազմաճակատի կացությունը երկար քննարկելուց հետո որոշեց տերությունների օսմանյան դեսպաններին ուղարկել շրջաբերական՝ հանձնելու համար այդ երկրների կառավարություններին. այնտեղ ասված էր, որ Թուրքիան, հանուն իր արժանապատվության, շարունակում է պատերազմել, բայց ինքը, լինելով խաղաղության անկեղծ կողմնակից, ընդունում է հաշտության գաղափարը, եթե ողջամիտ առաջարկ լինի[1]:

Հոկտեմբերի 15 (28)-ին և 16 (29)-ին Կոստանդնուպոլսից ողջ անձնակազմով իրենց երկրները հեռացան բալկանյան երեք երկրների դեսպանները: Հունաստանի դեսպան Կրիփարիսը մեկնեց հոկտեմբերի 15-ին, Սերբիայի և Բուլղարիայի դեսպան-

---

[1] ***Տե՛ս В. А. Жебокрицкий**, Болгария во время балканских войн 1912-1913 гг., էջ 112:*

ներ Ներատովիչը և Սարաֆովը՝ հոկտեմբերի 16 (29)-ին[1]:

Պատերազմների տարեգրության մեջ բացառիկ երևույթ էր մի ուժգին հարվածով թուրքական բանակին ծնկի բերելը: Թուրքական զորքերը բերդերում երկար դիմացան, բայց բաց դաշտում բախումների երկու չաբաթվա ընթացքում կրել էին ջախջախիչ պարտություններ:

Ռազմաճակատներում կրած այդ պարտությունների պատճառով Թուրքիայում սուր քննադատություն էր ծավալվել Բ. Դռան նկատմամբ՝ առաջ բերելով վարչապետի փոփոխման պահանջը: Պատերազմի չունչը արդեն լսվում էր Կ. Պոլսում, երբ 1912 թ. հոկտեմբերի 16 (29)-ին հանկարծակի փոխվեց օսմանյան կաբինետը: Մեծ վեզիր Ղազի Ահմեդ Մուխտար փաշան հրաժարական տվեց, և սուլթանը վարչապետության կոչեց Քեամիլ փաշային՝ 80-ամյակին մոտեցող մի ծերունու: Թեև նախորդ կառավարության մեջ նա որևէ պաշտոն չէր զբաղեցրել, բայց դա չէր խանգարել, որ այդ գործիչը Ղազի Մուխտար փաշայի գլխավորած նախարարների խորհրդում ամենաազդեցիկ անձը լիներ: Երկրի կառավարման ղեկը Քեամիլ փաշան իր ձեռքն էր առնում խոր ճգնաժամի պահին: Ջեմալէդդին էֆենդին վերահաստատվեց Շեյխ ուլ իսլամի պաշտոնին:

Հոկտեմբերի 18-ին Քեամիլ փաշան կազմեց նոր կառավարություն, որում իրենց պաշտոնները պահեցին ռազմական նախարար Նազըմ փաշան, արտաքին գործերի նախարար Գաբրիել էֆ. Նորատունկյանը և ներքին գործերի նախարար Ռեշիդ փաշան: Նախարարական մնացած պաշտոններին նշանակվեցին նորերը[2]:

Կաբինետի փոփոխությունը, սակայն, չէր կարող արմատական բեկում առաջ բերել ռազմաճակատներում: Իր խմբագրականում «Ազատամարտը» գրում էր, որ «Դահլիճին արդի փոփոխութիւնը լաւ խորհուած եւ լաւ կշռուած քայլ մը չէ: ... Իթթիհատականները համարած են միշտ Քեամիլ փաշան իրենց

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Աւետարեր»**, № 44, 2 նոյեմբերի 1912 թ.:

ամէնէն ոխերիմ, եւ թերեւս ամէնէն ազդեցիկ քաղաքական հակառակորդը: ... Դահլիճին փոփոխութիւնը ո՛չ միայն ո՛եւէ առավելութիւն չի բերեր, այլ, ընդհակառա՛կը, թերեւս կոչուած ըլլայ տեղի տալու քաղաքական աւելորդ թիւրիմացութեանց եւ կնճիռներու: ... Անհրաժեշտ է հնար եղածին չափ ներքին ուժերու համախմբում, քաղաքական հոսանքներու մերձեցում առաջ բերել»[1]:

Բուլղարների առաջխաղացումը դանդաղեցնելու համար մինչև Անատոլիայից նոր համալրում ստանալը Սև ծովի թուրքական ռազմանավերը հրաման ստացան հարձակումներ գործել Բուլղարիայի սեւծովյան նավահանգիստների վրա: Հոկտեմբերի 26-ին ուժգին ռմբակոծության ենթարկվեցին Բուլղարիայի Վառնա և Բուրգազ քաղաքների նավահանգիստները: "Новое Время" թերթը ռուսական կառավարությունից պահանջում էր խստորեն պատժել թուրքերին, քանի որ այդ երկու քաղաքներում մեծապես վնասվել են նաև ռուսական շահերը: Ի պատասխան ռուսական թերթերի հրապարակումների՝ Պոլսի «Սարահ» թերթը գրում էր, թե բուլղարական նավահանգիստների և Ռուսաստանի միջև առևտրական հարաբերությունները շատ աննշան են, և եթե 10-15 օրը մի անգամ ռուսական մի շոգենավ է մտնում Վառնա կամ Բուրգազ, ապա դա ավելի շատ հետապնդում է քաղաքական, քան առևտրական նպատակներ[2]:

Թուրքական ռազմանավերի արևելյան ուղղությամբ այդ հարձակումը Ադրիանուպոլիսը շրջապատած բուլղարական զորքին հնարավորություն տվեց ժամանակավոր դադար առնել, որպեսզի կարգի բերվեն շարքերը, վիրավորները թիկունք ուղարկվեն, կարգավորվի պարենավորման գործը, ստորաբաժանումները համալրվեն նոր զինակոչիկներով ու զենք-զինամթերքով:

Նույնիսկ Ադրիանուպոլսի ուղղությամբ կարճատև դադարի ժամանակ չէր թուլացել Արևելյան ռազմաճակատի մյուս

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1034, 20 հոկտեմբերի (2 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս Նույն տեղում, № 1028, 14 (27) հոկտեմբերի 1912 թ.:

հատվածներում թուրքերի վրա բուլղարների ճնշումը:

Այդ ընթացքում բուլղարական զորքը առաջանում էր **Ռոդոսթո** քաղաքի ուղղությամբ: Թուրքական սակավ զինվորական ուժերը համարյա առանց դիմադրության նահանջում էին դեպի Ռոդոսթո, որի բնակիչների չուրջ կեսը քրիստոնյաներ էին, հիմնականում՝ հույներ և հայեր: Տեսնելով թուրքական զորքի արագ նահանջը՝ քաղաքի թուրք բնակչության չրջանում սկսվեց խուճապ, և ծայր առավ նրա մի մասի փախուստը: Սրա մի զգալի հատվածն ուղղվեց դեպի Էրեյլի՝ այնտեղից չոգենավով Անատոլիա գաղթելու համար:

Հոկտեմբերի 18 (31)-ին Ռոդոսթոյում արդեն լսվում էին բուլղարական թնդանոթների ձայները: Նույն օրը բուլղար բանակին ուղղված հայտարարության մեջ Ֆերդինանդ թագավորն ասել էր. «Մեր բանակին հրաման տվեցինք սահմանն անցնել և թշնամու դեմ կռվել, որովհետև սպառվել էին բոլոր այն խաղաղ միջոցները, որոնց նպատակն էր կարելին եղածի չափ, որքան հնարավոր է չուտ բարվոքել արյունի և կրոնի մեր եղբայրների կյանքը: Այն գործը, որ մենք հետապնդում ենք, մարդասիրական և նվիրական գործ է: Մենք վստահ ենք, թե մեր զորքը կարդարացնի ազգի կողմից իր վրա դրած հույսերը: Հառաջ Խաչի ու Զենքի օգնությամբ: Թո՛ղ արդարության Աստվածը պինդ բռնի մեր աջ բազուկը»[1]:

Պատասխանելով նախարարական խորհրդից ստացված մի նամակի՝ թագավորը հոկտեմբերի 20-ին հետևյալ հեռագիրը հղեց Գեչովին. «Այժմ ես համոզված եմ, որ մեր քաջարի ու անսնման բանակը, որը ծնունդն է բուլղար ժողովրդի պես ժողովրդի և որի անձնազոհությունը ազգային գաղափարների հաղթանակի համար պատմության մեջ իր օրինակը չունի, պիտի կռվի և վերջնականապես պիտի կործանի բուլղար ցեղի հավիտենական թշնամուն:

Ռիլոյից և Ռոդոսթոյից անդին մեր եղբայրները, վերջապես, պիտի լուսավորվեն ազատության արշալույսով»[2]:

---

[1] **«Ազատամարտ»**, № 1033, 19 հոկտեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում, 20 հոկտեմբերի, 1912 թ.:

Հոկտեմբերի 20 (նոյեմբերի 2)-ին Թուրքերը՝ քաղաքացի թե զինվոր, սկսեցին փախչել Ռոդոսթոյից: Իսկ Թուրքական 7.000-ի չափ զինվորներ, լքված հրամանատարների կողմից, դեգերում էին քաղաքի շրջակայքում: Նրանց մեծ մասը նույնպես միացավ հեռացող քաղաքացիական բնակչությանը: Բուլղարներն արդեն քաղաքից երկու ժամ հեռավորությամբ էին: Մահմեդական հազարավոր ընտանիքներ փախչում էին Թուրք զորքի մնացորդների հետ: Ռոդոսթոյի հայերը տեղի իսլամ բնակչությանը հորդորում էին չգաղթել: Քաղաքում մնացած չատ իսլամ կանայք և ընտանիքներ ապաստանել էին հայերի տներում, ուր գտնում էին ամեն հոգածություն:

Արագ ռազմերթով Ռոդոսթոյին մոտեցող բուլղարական զորքը հոկտեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը դաղար առավ հանգստանալու: Օգտվելով դրանից՝ քաղաքի Թուրքական իշխանությունները ձեռնարկեցին դատարկելու ռազմամթերքի պահեստները, և դա նրանց հաջողվեց: Առավոտյան Ռոդոսթոյում արդեն մեկ Թուրք զինվոր անգամ չէր մնացել: Քաղաքի կառավարումը փաստորեն անցել էր հայերի և հույների ձեռքը:

Հոկտեմբերի 21-ին քաղաքի հունաց և հայոց առաջնորդները, ինչպես նաև Թուրք, հայ, հույն հասարակությունների անվանի դեմքեր գումարեցին համատեղ ժողով՝ խորհելու, Թե ինչպես դուրս գան ստեղծված կացությունից: Որոշվեց քաղաքն առանց արյունահեղության հանձնել բուլղարներին: Քրիստոնյա բնակչությունը սպասում էր բուլղար զորքի մուտքին: Բուլղար զորքը առանց դիմադրության հանդիպելու մտավ Ռոդոսթո:

Այդ օրերին բուլղարական զորքերը փայլուն հաղթանակներ տարան նաև Վիզայի ճամփի վրա, տիրացան Մուստաֆա-Փաշա քաղաքին, ուր հակառակորդը Թողել էր ցորենի մեծ պաշարներ: Այդ ամենով հանդերձ նույն ժամանակ բուլղարները Պոլիս-Սալոնիկ երկաթուղու գծի վրա գրավել էին բազմաթիվ կետեր և Թուրքերի համար անկարելի դարձրել Կ. Պոլսից օգնական ուժեր հասցնելը շրջապատված Ադրիանուպոլսին[1]:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 Թ.:

Գաբրիել Նորատունկյանի հանձնարարությամբ հոկտեմբերի 22-ին (նոյեմբերի 5-ին) Փարիզի Թուրքաց դեսպանը դիմել էր Ֆրանսիայի վարչապետ և արտգործնախարար Ռայմոն Պուանկարեին՝ նրան խնդրելով Անգլիայի հետ համախոհ միջամտել դադարեցնելու պատերազմական գործողությունները, կռվող բոլոր կողմերին պարտադրել զինադադար, որից հետո նպաստել նրանց միջև հաշտություն կնքելուն: Անմիջապես հետևել էր Պուանկարեի պատասխանը. նա առաջարկությունը բացարձակապես անընդունելի էր համարել: Պուանկարեն չեշտել էր, որ իր կառավարությունը չի կարող պատերազմող կողմերին զինադադար հարկադրելու պատասխանատվություն ստանձնել:

Ֆրանսիական կողմը հավանաբար եզրահանգել էր, որ Նորատունկյանի առաջարկի արդյունքն ուրիշ բան չի կարող լինել, եթե ոչ կանգնեցնել բալկանյան դաշնակիցների բանակները իրենց կատարյալ հաջողությունների պահին, միաժամանակ Թուրքական հրամանատարությանը ժամանակ տալ վերակազմելու բանակը:

Թուրքերի առաջարկության և իր տեսակետի մասին ֆրանսիական կառավարությունը տեղեկացրեց մյուս հինգ տերություններին: Անմիջապես ձայնակցեցին Պետերբուրգն ու Լոնդոնը, որոնք հայտնեցին, թե լիովին համակարծիք են Փարիզի հետ:

Բ. Դոնից ստացված հեռագրում ասված էր, որ ներկա պայմաններում կարող է միայն խոսք լինել միջնորդության, այլ ոչ թե միջամտության մասին: Դա նշանակում էր, որ անգլիական կառավարությունը բնական ու տրամաբանական էր համարում տվյալ պահին զինադադար հաստատելու Թուրքական առաջարկի մերժումը բալկանյան դաշնակիցների կողմից, քանի որ սրանց բանակների առաջխաղացումը տեղի էր ունեցել այնպիսի արագությամբ, որի նմանը չէր եղել 1877 թվականից ի վեր: Ուստի չէր կարելի հուսալ, թե նրանք սուրը պատյան կդնեն՝ համոզված չլինելով, որ Թուրքերը չեն հավաքի իրենց ցաքուցրիվ վաշտերը՝ Զաթալջայի գծերի վրա վճռական դիմադրություն ցույց տալու համար:

Պետերբուրգից Փարիզ հասած հեռագրում նշվում էր, որ

պատերազմի հենց սկզբից Ռուսաստանը հայտարարել է, թե Բալկաններում ինքը հողային ոչ մի պահանջ չի հետապնդում, բայց դեմ չէ, որ վերջապես լուծում ստանան թերակղզու պետությունների տարածքային կնճռոտ խնդիրները, և մեկընդմիշտ վերջ տրվի Մակեդոնիայի տանջանքներին: Նաև չեշտվում էր, որ Ռուսաստանը հակված չէ ճնշում գործադրելու պատերազմող որևէ կողմի վրա:

Յուրօրինակ էր Ավստրիայի կառավարության դիրքը, որը կարելի է ամփոփել այսպես. չրջանցել խնդիրը՝ առանց կարծիք հայտնելու: Կոմս Բերթիսոլդը Փարիզ ուղարկած հեռագրով հայտարարում էր, թե Գ. Նորատունկյանի առաջարկի նման ձեռնարկը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, եթե պատերազմող երկու կողմերից որևէ մեկը զինադադար խնդրի ոչ թե միջնորդի միջոցով, այլ ուղղակի դիմում հղելով: Ավստրիական արձագանքին հար և նման էր Գերմանիայի պատասխանը:

Ծանոթանալով Բեռլինից ստացված հեռագրին՝ Ֆրանսիայի արտգործնախարար Քամպոնը Գերմանիայի արտգործնախարար Վեխտերին հեռագրով հարցապնդում արեց. «Բայց Դուք չեք պատասխանել Ձեզ ուղղված խնդրանքին»: Հետևել էր գերմանացու պատասխանը. «Շատ պարզ է: Դուք էլ գիտեք, թե դեպքերն ինչ արագությամբ են հաջորդում իրար»:

Ինչ վերաբերում է Իտալիային, ապա նրա պատասխանը հնարավորինս անորոշ էր: Հռոմից ստացված հեռագրում նշված էր, որ Գ. Նորատունկյանի առաջարկին իտալական կառավարությունը սկզբում դրական էր տրամադրվել, բայց հետո հարմար գտավ միանալ իր երկու զինակիցների (Գերմանիա, Ավստրիա) տեսակետին[1]:

Մինչ քաղաքական գործիչներն ու դիվանագետները խորհում էին պատերազմը դադարեցնելու հարցի չուրջ, հոկտեմբերի 16 (29)-ին ծայր առան ***Լյուլե-Բուրգազի*** *և Փունար Հիսարի դաժան կռիվները:*

Այս ուղղությամբ օսմանյան ուժն ուներ 120.000 հետևակ,

---

[1] ***«Ազատամարտ»****, № 1043, 29 հոկտեմբերի (31 նոյեմբերի) 1912 թ.:*

հեծելազորի 65 ստորաբաժանում (էսկադրոն) և 300 թնդանոթ: Բուլղարներն ունեին 110 հազարի հասնող զորք: Կռվին մասնակցում էր բուլղարական երրորդ բանակը՝ Ռադկո Դիմիտրիևի հրամանատարությամբ: Ճակատամարտը տևեց հինգ օր: Առաջին երկու օրերին բուլղարները հետ մղեցին թուրքերի բոլոր հարձակումները: Վերջիններիս օգնության չտապեցին Կրրխ-Քիլիսեի օգնական ուժերը, բայց բուլղարները կարողացան նրանց կանգնեցնել և հետ մղել ելման դիրքերը: Հետագա մի շարք ընդհարումները բարվոքեցին բուլղարների դիրքերը հատկապես ռազմաճակատի աջ թևում, ուր ամրակայվել էին թուրքերի առաջապահ ընտիր ստորաբաժանումներ:

Լյուլե-Բուրգազի համար ճակատամարտը աչքի ընկավ սրընթացությամբ, հանդուգն գործողություններով ու քաջագործություններով, որոնք թուրքերին դույզն-ինչ հնարավորություն չէին տալիս կշռադատելու և ծրագրելու հետագա քայլերը: Ամենահմուտ ու հեռատես զինվորական մասնագետներն իսկ զարմացած ու բերանբաց էին մնացել մարտադաշտերում ծավալված անօրինակ զարգացումներից:

Կռվի երկրորդ օրը բուլղարական բանակի կենտրոնի ուժերը թնդանոթային փոթորկալի կրակի ուղեկցությամբ անցան վճռական հարձակման օսմանյան բանակի պաշտպանական գծերի ուղղությամբ: Բուլղարական գնդերի մարտիկները հերոսության ու անձնազոհության աննախընթաց օրինակներ էին ցույց տալիս: Սլանալով դեպի Լյուլե-Բուրգազի ամրոցները՝ նրանք դիմեցին սվինամարտի և թուրք զորամասերին դուրս մղեցին դիրքերից:

Հետևյալ երկու-երեք օրերին ահարկու կռիվը շարունակվում էր: Այս ճակատագծի բազմաթիվ հատվածներում թուրքերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս: Զնայած նրանք հսկայական մարդկային կորուստներ էին կրում, բայց չատ զինվորներ, սպաներ ու զորավարներ տալիս էին համառ դիմադրության փայլուն օրինակներ: Բուլղարների շարքերում մեծ ավերներ էին գործում Աբդուլլահ փաշայի հրետանային մարտկոցները, իսկ Սալիհ փաշայի հրամանատարության տակ գտնվող հեծելազորն այնպիսի կատաղի գրոհներ էր կատարում, որ բուլղար-

ների ամբողջ չարքեր բառի բուն իմաստով հնձվում էին: Այս կռվում բուլղարների առաջնագծերում լուրջ ավերներ էին գործում պատերազմի սկզբին Թուրքիայի կողմից Գերմանիայից վարձակալված ռազմական 8 օդանավերը՝ օդաչուներով հանդերձ[1]:

«Թայմսի» հատուկ թղթակից, համաշխարհային համբավ վայելող զինվորական տեսաբան գնդապետ Լիոնելը, որն այցելել էր ռազմաճակատի տարբեր հատվածներ, «Ռայխսփոստ» գործակալությանը հաղորդել էր, որ Լյուլե-Բուրգազում բուլղարները չկարողացան օգտվել իրենց առավելություններից, մանավանդ հրետանու գերազանցությունից: Մյուս կողմից նա հիացած էր Թուրքերի քաջությամբ, որոնք այդ պայմաններում կարողացան համառ դիմադրություն ցույց տալ Լյուլե-Բուրգազում[2]:

Լյուլե-Բուրգազի արյունալի կռիվների երրորդ օրը բուլղարները ի վերջո գերազանց կատարեցին իրենց գործը: Ամեն ժամ թուրքական բանակը կորցնում էր հարյուրավոր զինվորներ, իսկ բուլղարական հրետանին ճիշտ նշանառությամբ քարուքանդ էր անում թշնամու դիրքերը[3]:

Չնայած այդ ամենին՝ թուրքական հրամանատարությունը Լյուլե-Բուրգազի ճակատագիծ ուղարկեց նորանոր թարմ զորամասեր, որոնց մեծ մասը կռվի դաշտ էր հասել Ասիական Թուրքիայից և անմիջապես մտել մարտի մեջ: Իր հերթին բուլղար հրամանատարությունը կռվի նետեց Էդիրնեի պաշարման գծերից հանված մեծաթիվ ուժեր: Բանակի առջև խնդիր էր դրված սրընթաց արագությամբ ճեղքել օսմանյան դիրքերի կենտրոնը: Ռազմական պլանի համաձայն՝ բուլղարական զորքերի հիմնական մասը կենտրոնացավ Կըրխ-Քիլիսեից Վիլե տանող ճանապարհի հարավային հատվածում գտնվող անտառային զանգվածում, իսկ մյուս մասը՝ Լյուլե-Բուրգազի հյուսիսարևմտյան կողմի օսմանյան դիրքերի ուղղությամբ: Անտառում ծայր

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1020, 6 (19) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

առած կատաղի կռիվներից հետո, որոնք ընթացան նաև սվի-նային հարձակումներով, բուլղարները կեսօրվան դեմ կարողա-ցան ճեղքել Թշնամու շարքերը: Այդ նույն ժամանակ հյուսի-սարևելյան կողմից Լյուլե-Բուրգազի վրա կատաղի հարձակման անցան նաև հետնագծում հրամանի սպասող բուլղարական զորքերը:

Այն ժամանակ, երբ դեռ ընթանում էր Լյուլե-Բուրգազի համար ճակատամարտը, այդ նույն ժամանակ՝ հոկտեմբերի 17 (30)-ին, բուլղարական բանակի ձախ թևը, անջատվելով հիմ-նական ուժերից, հարձակում սկսեց ռազմավարական կարևո-րագույն նշանակություն ունեցող ***Փունար Հիսարի*** *վրա:*

Պաշտպանելով քաղաքը՝ թուրքերը միաժամանակ կորովի հարձակումներ էին գործում բուլղարների առաջապահ զորա-մասերի վրա, որի արդյունքում նրանց նույնիսկ հաջողվեց հա-կառակորդին Փունար Հիսարից բավական հեռու շպրտել:

Ի վերջո բուլղարների հիմնական ուժերը կարողացան խրվել թուրքական զորքերի ձախակողմյան բնակավայրերի՝ Սկյուդի, Հաջի-Ֆաքրլի, Մանասթր-դաղի տարածքներ, որի հետևանքով թուրքերի առաջացած մասերը կտրվեցին զորքերի հիմնական զանգվածից և ստիպված հանձնվեցին: Թուրքական ուժերի հիմ-նական մասը խուճապահար նահանջեց և մտավ Փունար Հիսար: Այդ ընթացքում քաղաք մտավ նաև Կ. Պոլսից հասած մի խոշոր զորամաս և միացավ կռվողներին: Այդ համալրման շնորհիվ պաշարված թուրքական զորքը շարունակեց կռիվը ամբողջ օրը, մինչև որ ծվեն-ծվեն եղած զորամասերի մնացորդները, կռվի դաշտից փախուստ տալով, ուղղություն վերցրին դեպի հարավ:

Փունար Հիսարի գծի վրա էր գտնվում Իզզետին-Քեռ գյուղը, որտեղ տեղակայված էր Ասիական Թուրքիայից եկած կամավոր քրդերի մի քանի հազարի հասնող ջոկատը: Քրդերը թուրք հրա-մանատարին փափագ հայտնեցին գրավել բուլղարական զորքի՝ գյուղի դեմ շարված թնդանոթները: Հրամանատարը խորհուրդ էր տվել նման փորձ չանել, բայց նրանք պնդել էին իրենցը և գի-շերը զանգվածաբար առաջացել էին դեպի բուլղարների դիրքե-րը: Վերջիններս, թողնելով, որ քրդերը մոտենան, որից հետո թնդանոթներից փոթորկալի կրակ էին բացել և գրեթե բոլորին

գետին փռել: Հազիվ ողջ էր մնացել մի քանի հոգի[1]:

Այդ նույն օրերին քուրդ կամավորները զգալի կորուստներ ունեցան նաև ռազմաճակատի ուրիշ հատվածներում: Բացի դրանից՝ քուրդ կամավորների մի մեծ խմբի կռվի դաշտ տանող «Ասարի» հածանավը խորտակվել էր Ռոմելիայի ափերին:

Իսկ Լյուլե-Բուրգազի համար կռիվները դեռ չարունակվում էին: Ճակատամարտը սկսվելուց չորս օր հետո՝ հոկտեմբերի 29-ին, այն թևակոխեց վճռական փուլ:

Ինչպես Փունար Հիսարի, այնպես էլ Լյուլե-Բուրգազի կռիվներում բուլղարները հրաշքներ էին գործում: Թշնամական դիրքերից 300-400 քայլ հեռավորությունից ամբողջ գնդեր ոտքի էին կանգնում և անդիմադրելի խոյանքով սուրում դեպի հակառակորդը: Բուլղար հրամանատարներն այլևս անկարող էին զսպելու իրենց զինվորների՝ պատերազմական կանոններին ոչ հարիր հանդգնությունը:

Հոկտեմբերի 15 (28)-ին բուլղարների աջ թևի զորամասերը կատաղի հարձակումով Էսկի-պապա և Ենի-քեո բնակավայրերից դուրս մղեցին հակառակորդին՝ նրան նետելով Լյուլե-Բուրգազի պաշտպանական ամրությունների կողմը: Բայց նահանջող թուրքերի զգալի մասը ոչնչացավ բուլղարական հրետանու փոթորկալի կրակից՝ չհասնելով Լյուլե-Բուրգազի մատույցներին:

Լյուլե-Բուրգազի դեմ երկու ուղղություններով նույնժամյա գրոհող բուլղարական ուժերը արյունալի կռիվներից հետո՝ հոկտեմբերի 29-ին, ամբողջովին քայքայեցին օսմանյան ճակատը:

Լյուլե-Բուրգազի և Փունար Հիսարի երկու ռազմաճակատներում բուլղարական առաջին և երկրորդ բանակները հոկտեմբերի 28-ին և 29-ին գլխովին ջախջախել էին թուրքական 100-հազարանոց բանակը:

Թուրքական ստորաբաժանումները համառ դիմադրության փայլուն օրինակներ էին տալիս բոլոր ռազմաճակատներում: Այդ տեսակետից Ադրիանուպոլսի պաշտպանության գլուխ կանգ-

---

[1] Տե՛ս **Արամ Անտոնեան**, Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 987-999: Տե՛ս նաև՝ **«Ժամանակ»**, № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

նած Շուքրի փաշայի օրինակը եղակի չէր: Այսպես, օրինակ՝ պաշարված Յանիա բերդաքաղաքի օսմանյան զորքի հրամանատար էսադ փաշան կարողացել էր այնպես կազմակերպել քաղաքի պաշտպանությունը, որ բալկանյան դաշնակիցների զորքերն ավելի քան հինգ ամիս, հսկայական զոհեր տալով, չէին կարողանում գրավել այն:

Այդպիսի զինվորական գործիչների թվում էր «Համիդիե» փոքրիկ մարտանավի երիտասարդ հրամանատար Ռաուֆ բեյը: Այդ նավի մարտական գործողությունների մասին պատերազմի օրերին գրվել են հարյուրավոր հոդվածներ հատկապես եվրոպական մամուլում:

1912 թ. հոկտեմբերի կեսերին աննկատ ճեղքելով Դարդանելի շրջափակումը՝ «Համիդիեն» դուրս է գալիս Էգեյան ծով, ուղղություն վերցնում դեպի Եգիպտոս, Ալեքսանդրիայում վերցնելով ածուխի պաշար՝ Սուեզի ջրանցքով[1] մտնում է Կարմիր ծով[2], ապա, Պորտ-Սայիդով դուրս գալով Միջերկրական ծով[3], մեկնում է Մալթա, մտնում Ադրիատիկ ծով[4], ակոսում Միջերկրականի ողջ արևելյան ավազանը[5]՝ սարսափ տարածելով ամենուր:

Այդ ամբողջ ընթացքում «Համիդիեն» հարձակվում ու խորտակում է բազմաթիվ հունական, բուլղարական, սերբական նավեր, այդ թվում՝ բաց ծովերում գտնվող կամ նավահանգիստներում խարիսխ գցած խոշոր ռազմանավեր:

Հոկտեմբերի վերջերին՝ բուլղարների տարած փայլուն հաղթանակից հետո, կարելի էր պատերազմը վերջացած համարել,

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 51, 6 մարտի 1913 թ., նույն տեղում № 21, 26 հունվարի 1913 թ., **«Ժամանակ»**, № 1388, 6 (19) մարտի 1913 թ., նույն տեղում, № 1389, 7 (20) մարտի 1913 թ., նույն տեղում, № 1416, 3 (16) ապրիլի 1913 թ., նույն տեղում, № 1425, 12 (25) ապրիլի 1913 թ., նույն տեղում, № 1437, 25 ապրիլի (8 մայիսի) 1913 թ.:

[2] **«Հեռաձայն»**, № 2, 24 հունվարի (6 փետրվարի) 1913 թ.:

[3] **«Ժամանակ»**, № 1416, 3 (16) ապրիլի 1913 թ.:

[4] **«Կովկասի լրաբեր»**, № 48, 2 մարտի 1913 թ.:

[5] **«Ժամանակ»**, № 1381, 22 փետրվարի (12 մարտի) 1913 թ.:

բայց հաղթանակը կատարյալ լինելու համար պակասում էր Ադրիանուպոլսի անկումը:

Ոչ միայն Թուրքերի ու բալկանյան դաշնակիցների, այլև ողջ Եվրոպայի ուշադրությունը կենտրոնացած էր Ադրիանուպոլսի վրա: Բոլորի համար պարզ էր, որ բերդաքաղաքի գրավումը ծայրաստիճան դժվար է: Ռազմական տեսաբաններն այն կարծիքին էին, որ բերդաքաղաքը ի վիճակի է պաշտպանվելու ամիսներ չարունակ: Իսկ բուլղարական բանակի հրամանատարությունը համոզված էր, որ իր զորքերն ունակ են հաղթահարելու քաղաքի ամրությունները, ուստի և նորանոր զորամասեր էր ուղարկում Ադրիանուպոլիս: Արդեն հոկտեմբերի 20-ի կողմերը Ադրիանուպոլսում և շրջակա մակեդոնական տարածքներում ծայր առած կռիվներին երկու կողմից մասնակցում էր 400 հազար մարդ[1]: «Ազատամարտը» գրում էր, որ բուլղարների ինքնավստահությունը կարող է թանկ նստել նրանց վրա, քանզի բոլոր ռազմագետների կարծիքով Ադրիանուպոլսի ամրոցներն ի վիճակի են դիմակայելու բուլղարական բանակի հարվածներին: Միաժամանակ թերթը նշում էր, որ եթե բերդաքաղաքի թուրքական զորքը նույնիսկ չկարողանա կասեցնել բուլղարների ուժերը, ապա, միևնույնն է, նրանց կստիպի երկար ժամանակ գամված մնալ բերդապարիսպներին[2]:

Հոկտեմբերի 29-ին թուրքական կառավարությունը հայտարարեց, թե Ադրիանուպոլիսը գերեզման է լինելու բուլղարական բանակների համար, և որ այդ բերդաքաղաքի ամրություններից է սկսվելու թշնամու գրաված մակեդոնական հողերի ազատագրումը և Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայի գրավումը:

Չնայած այդ սպառնալիքին՝ քաղաքում պարփակված թուրքական զորքը ստիպված էր ջանքերի գերագույն լարումով

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1031, 17 (30) հոկտեմբերի 1912 թ.: Այդ տեսակետից նշված կռիվները գերազանցում էին 19-րդ դարում Եվրոպայում տեղի ունեցած բոլոր մեծ ճակատամարտերին: Օրինակ՝ Նապոլեոնի դեմ կռվող դաշնակիցները Լայպցիգի մեծ ճակատամարտում ունեին 200 հազար զինվոր (նույն տեղում):

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1028, 14 (27) հոկտեմբերի 1912 թ.:

պաշտպանվել՝ ուժ չունենալով ճեղքել շրջապատման օղակը:

Հոկտեմբերի 30-ին կռիվները նոր ուժով ծավալվեցին, և ինչպես սպասելի էր, Թուրքերը նոր ծանր կորուստներ ունեցան: Բուլղարական հրետանին շարունակում էր մեծ ավերածություններ գործել՝ ամեն րոպե Ադրիանուպոլսի բերդերի վրա տեղալով տասնյակ ռումբեր: Ահավոր խառնաշփոթ էր սկսվել բերդապահ Թուրք զորամասերում: Բուլղարները սոսկալի ռմբակոծում էին նաև քաղաքի ոչ բնակելի շինությունները (վարչական շենքեր, զինապահեստներ, ուտեստեղենի պահեստներ և այլն): Այդ սոսկալի ռմբակոծությունների հետևանքով Թուրքերը մեծ կորուստներ կրեցին:

Հոկտեմբերի 31-ին Ադրիանուպոլսում (Էդիրնե) շրջապատված Թուրքական զորքի հրամանատարությունը փորձեց ճեղքել թշնամու օղակը: Նրա հրամանով Թուրքական զորքը, դուրս գալով ամրություններից, երեք կողմից հարձակումներ սկսեց բուլղարական զորամասերի դեմ: Սկսվեցին արյունալի մարտեր, որոնք չարունակվեցին ամբողջ օրը: Կռվի ընթացքում Թուրքերը մեծ կորուստներ ունեցան, գերվեց նաև օսմանյան բանակի հայտնի զորավարներից մեկը՝ Նայիլ բեյը: Միայն մութը վրա հասնելուց հետո նորսացած Թուրքական զորամասերը քաշվեցին բերդերից ներս[1]:

Հոկտեմբերի վերջին օրերին Ադրիանուպոլիսը պաշարած բուլղարական զորքերին օգնության հասան սերբական բանակի մի քանի խոշոր զորամասեր, որոնք ընդհանուր առմամբ ունեին 65 հազար զինվոր ու սպա[2]: Այդ հսկա զինուժը մեծապես բարձրացրեց Ադրիանուպոլիսը շրջապատած բուլղարական բանակի մարտական ոգին: Ենթադրվում էր, որ այդ ժամանակ քաղաքը պաշարած սերբ-բուլղարական միացյալ զորքն ուներ 170 հազար զինվոր ու սպա[3]: Այդ ահռելի ուժի դիմաց Ադրիանուպոլսի ամրությունների Թուրքական պահակազորքը մոտավորապես ուներ 40 հազար զինվոր:

---

[21] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[21] Տե՛ս նույն տեղում, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.

[21] Տե՛ս նույն տեղում:

Բուլղարական զորագնդերը իրար հաջորդող հարվածներով ջանացին կտրել նահանջի գիծը: Այս պայմաններում թուրքական բանակի միայն մի քանի բեկորներ կարողացան ապաստանել Չաթալջայի ամրությունների գծերից ներս:

Դեպի Չաթալջա ուղղություն էր վերցրել նաև Լյուլե-Բուրգազի կռիվներում պարտված թուրքական բանակի փախուստի մատնված զորամասերի հարավային թևը՝ փորձելով հաստատվել այդ պաշտպանական գծի ամրացված դիրքերում: Լյուլե-Բուրգազում պարտություն կրած թուրքական բանակի հյուսիսային թևի բեկորները խառնաչփոթ նահանջով կարողացան հասնել Սերայ-Սթրանջայի գծի վրայի ամրացված դիրքեր և, վերախմբավորելով ուժերը, պատրաստվեցին դիմադրության: Բայց բուլղարական բանակն այնպիսի արագությամբ էր հետապնդում թշնամուն, որ անհնարին էր թվում, թե սրանց կհաջողվի ապաստանել Չաթալջայի պաշտպանական գծերից ներս: Այսպես մտածողներն իրավացի էին, որովհետև բուլղարները ջանում էին կտրել թուրքերի նահանջը դեպի Սթրանջա և Գարաճաքեո, և դա նրանց հաջողվում էր[1]:

Արյունն առատորեն թափվում էր այն լայնատարած երկրամասի վրա, որ երեկ Եվրոպական Թուրքիա էր:

Կ. Պոլսի դիմաց՝ Տերքոսի մոտ, բուլղարական առաջապահ ստորաբաժանումների դիրքավորման պահին Սոֆիայում հրատարակվող կիսապաշտոնական «Բուլղարիա» թերթը «Մի անակնկալ» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Կոստանդնուպոլսի առջև բուլղարների հայտնվելը անակնկալ է լինելու իրենց նախնիների հոգիների համար: Այդ պահին է, որ զինակից հաղթական բանակները Մարմարայի ափերից թուրքերին պիտի բարձրաձայնեն, թե Բալկանյան ողջ թերակղզում այլևս տեղ չկա Մահիկի համար»[2]:

Էդիրնեից մինչև Չաթալջայի մատույցներն ընկած նահանջի

---

[22] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:*

[22] *«Բուլղարիա» թերթի հոդվածի նշված հատվածի հայերեն թարգմանությունը տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:*

ճանապարհին Թուրքերը նորանոր կորուստներ էին կրում: «Reichspost» թերթի ռազմաճակատային թղթակից Վագները, նկարագրելով իրավիճակը, գրում էր. «Զորս կողմն աննկարագրելի պատկերներ կը ներկայացնե. ճամբարները լքված թնդանոթներ, վերիվայր չրջած ռազմամթերքի կառքեր, կոտրտված սայլեր, մեռած ձիեր կը տարածուին...»[1]:

Այդ ճանապարհին ավելի քան 100.000 զինվորներ տանջվում էին սովից: «Էքմեք. էքմեք» (հաց, հաց) գոռալով՝ Թուրք զորամասերը ցրվել էին դաշտերում: Հրամանատարներից մեկի այն հարցին, թե «Ինչո՞ւ եք փախչում», զինվորները պատասխանել էին. «Փախչում ենք, որովհետև սոված ենք»: Ռազմական նախարար Նազրմ փաշան և իր ամբողջ սպայակույտը գերագույն ճիգեր արեցին Զորլու-Վիզե-Միտե գծի վրա հակառակորդին կասեցնելու, բայց դա նրանց չհաջողվեց[2]:

Էդիրնեի, առավել ևս Լյուլե-Բուրգազի և Փունար Հիսարի կռիվների ընթացքում Թուրքերը ռազմադաշտում թողել էին 40 հազար սպանված ու վիրավոր, մյուս 60 հազար Թուրք զինվորներն ու սպաները, բաժանված խմբերի, փախչում էին դեպի Զաթալջա: Բուլղարները գերել էին թշնամու 9000 զինվոր և սպա, նրանց ձեռքն էր անցել 42 արագաձիգ թնդանոթ, 15 վագոն ռազմամթերք, մեծաքանակ պարեն և այլն[3]:

Թրակիայի դաշտերում Թուրքական բանակի կրած դժվարություններն առաջ էին գալիս երկու ազդակներից՝ ցեխ և հաց: Ընդհանրապես հացի պակասության խնդիր չկար, սակայն ցեխի պատճառով Թուրքերը չէին կարողանում հացը փոխադրել կարիքավոր տեղեր ու զորքը մնացել էր անոթի: Ամեն տեղ սայլերը մխրճվում էին ցեխի մեջ: Նույն պատճառով հնարավոր չէր լինում հրետանին տեղից տեղ փոխադրել:

Նոյեմբերի սկզբին Թրակիայի և Մակեդոնիայի միջև ընկած

---

[1] "Reichspost"-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Ժամանակ»,** № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»,** № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

[3] **«Ազատամարտ»**, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:

տարածքում Թուրքերի կացությունը դարձավ հուսահատական: Մուստաֆա-Փաշայի և Զորլուի միջև երկաթուղային գիծն արդեն բուլղարների ձեռքին էր՝ բացի Էդիրնեի ամրոցների պաշտպանության տակ գտնվող մի քանի կիլոմետրի, որոնք արդեն հարում էին բուլղարների ձեռքում գտնվող Ստրումիցային և Մելինիքիին:

Սպասվում էին էլ ավելի արյունալի ու հոգեմաչ կռիվներ Էդիրնեի համար, մի բան, որ ընավ ձեռնտու չէր բուլղարական կողմին, որի հնարավորությունները գնալով նվազում էին, իսկ Թուրքական բանակը դեռ հսկայական պահեստի ուժեր ուներ Անատոլիայում:

Հոկտեմբերի 29 (նոյեմբերի 11)-ի հետմիջօրեի առաջին ժամերին բուլղարական զորքերի ճնշման տակ սկսվել էր Թուրքական զորքերի ընդհանուր նահանջը Բուրգաս-Բենդեմքենդ գծի երկայնքով ի վար՝ դեպի Զորլու: Օգտագործելով իրենց առավելությունը՝ բուլղարները խոյացան նահանջող Թուրքերի վրա և այնպիսի ուժով ճնշեցին նրան, որ իրիկնամուտին նահանջը փոխվեց անկարգ փախուստի:

Այլևս չկարողանալով դիմակայել բուլղարների ճնշմանը՝ կազմալուծված Թուրքական զորքը, բոլորովին սպառած հետագա դիմադրական կորովը, հոկտեմբերի 31-ի արևածագին խառնիխուռն փախուստով ուղղություն վերցրեց դեպի օսմանյան մայրաքաղաք*: Առջևում, սակայն, ոչ Թե Կոստանդնուպոլիսն էր, այլ մայրաքաղաքը պաշտպանող Զաթալջայի հզոր ամրությունների գիծը և դրան հարող լայնանիստ տարածքները:

Զաթալջայի** ամրությունները ձգվում էին Սև ծովից մինչև

---

* Մինչ այդ այն տեսակետն էր իշխում, Թե բուլղարական բանակը Զաթալջայի ամրությունների վրա վճռական գրոհ է սկսելու Սև ծովի մոտերքից՝ Տերքոս գյուղի կողմերից, ուր արդեն զգացվում էր ահաբեկված Պոլսի չնչառությունը:

** Զաթալջան բնակավայր է Ստամբուլից 43 կմ դեպի արևմուտք: Դերկոր-Զաթալջա-Զեկմերդչե ամրացված գոտին Մարմարա ծովի և Հունաստանի կողմից պաշտպանում էր Ստամբուլ-Ադրիանուպոլիս երկաթուղին: Զաթալջայի գլխավոր դերը Կ. Պոլսի պաշտպանությունն էր:

Մարմարա: Այն բուլղարական մակընթացության դեմ վերջին թումբն էր: Արդյո՞ք կդիմանար հետագա հարվածներին: Եթե բուլղարներին հաջողվեր գրավել Զաթալջայի բարձունքները, ապա, շատ չանցած, նրանք կմտնեին Պոլիս: Մասնագետներից ոմանք կարծում էին, որ դրա համար բավական կլինի երկու օր[1]: Այդ էր պատճառը, որ «Զաթալջա» բառը այդ օրերին Պոլսի 1.5 միլիոն բնակիչների շուրթերին էր:

Ստանալով համալրում՝ հոկտեմբերի 29 (նոյեմբերի 11)-ին թուրքերը հարձակում ձեռնարկեցին բուլղարական զորքի կենտրոնի վրա, բայց հետ մղվեցին մեծ կորուստներով: Դրանից հետո բուլղարները Զաթալջայի դիրքերին մոտեցրին 450 թնդանոթ՝ հակառակորդի դիրքերն ավերելու համար[2]:

Հոկտեմբերի 30 (նոյեմբերի 12)-ին բուլղարները հարձակում գործեցին և հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, հասան Գալֆաքեոյի, Զաթալջայի և Առնաուտքեոյի ճակատային հատվածներ և նույն օրը սկսեցին գրոհել Զաթալջայի ամրությունները: Շատ բուռն եղավ կռիվը: Նոյեմբերի 1 (14)-ին նրանց հաջողվեց խորտակել Զաթալջայի պաշտպանական գծի կենտրոնը և գրավել Հատեմքեոն, որը գտնվում էր Պոլսից 21 մղոն հեռավորության վրա:

Այդ երկու օրերին բուլղարները գրավեցին Դիմոթեկան, որի հետևանքով կտրվեց հաղորդակցությունը Էդիրնեի և Պոլսի միջև: Հաջորդ օրը թուրքական հրամանատարությունը կացությունը փրկելու հուսահատական մի ճիգ արեց և այդ նպատակով Զորլուի ու Սթրանջա գյուղի միջև գտնվող տարածք նետեց Պոլսից հենց նոր ժամանած մի մեծ զորաբաժին, բայց բուլղարական զորքը կարճ ժամանակում հզոր հարվածով ջախջախեց հակառակորդին ու գրավեց թե՛ Զորլուն և թե՛ Սթրանջան:

Նոյեմբերի 1 (14)-ին և 2 (15)-ին, ջախջախելով թշնամու զորքը, բուլղարներն իրենց ձեռքը գցեցին Զաթալջայի ամրոցների ամբողջ առաջին գիծը և սկսեցին հետապնդել թուրքական

---

[1] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

զորքի մնացորդներին: Փաստորեն Նազըմ փաշայի բանակը, որի վրա էին դրված Բ. Դռան բոլոր հույսերը, ջախջախված էր, Զաթալջա-Պոլիս հաղորդակցության բոլոր ուղիները կտրված էին, Էդիրնեն՝ մեկուսացված: Կարծես դեպի մայրաքաղաք բուլղարների առաջխաղացման դեմ այլևս չկար ոչ մի արգելք: Առջևում Պոլիսն էր: Շատերը մտածում էին, որ բուլղարական զորքը չուտով կհայտնվի օսմանյան մայրաքաղաքում:

Թուրքիայի ռազմական նախարար Նազըմ փաշան հոկտեմբերի սկզբներին կռվի մեկնող թուրք սպաներին ասել էր. «Սիրելի եղբայրակիցներս, չմոռանաք ձեզ հետ վերցնել ձեր պաշտոնական համազգեստները: Սոֆիայում զորահանդես կատարելիս պետք կգա»: Իսկ հիմա թուրք սպան ու զինվորը մոռացել էին Սոֆիա մտնելու մասին, իսկ բուլղարը պատրաստվում էր գրավել Պոլիսը:

Այնուամենայնիվ, թուրքական հրամանատարությանը գերագույն լարումով հաջողվեց քիչ թե շատ շտկել գործերը ռազմաճակատում: Թուրքական բանակը, որ հոկտեմբերին լիակատար պարտություն էր կրել Թրակիայում, նոյեմբերի սկզբներին կարողացավ ամրանալ Զաթալջայի դիրքերում: Հոկտեմբերի 29-ի նիստում Բ. Դուռը որոշում ընդունեց վճռական հակահարձակման անցնել բուլղարական զորքերի դեմ՝ հնարավոր բանակցությունների ընթացքում նպաստավոր դիրքեր ունենալու համար: Գործի դրվեց բանակի նոսրացած շարքերը համալրելու մանրամասն մշակված ծրագիրը:

Ամբողջ Ասիական Թուրքիայով մեկ սկսվեց արական բնակչության զորահավաք: «Առաջամարտը» գրում էր. «Փոքր-Ասիոյ գիւղացին խլեցին իր կնոջմէն ու իր մանուկէն, եւ մէկ ժամուայ մէջ զինք զինուոր դարձուցին անծանօթ թշնամիի մը դէմ, ու ահա այժմ անղեկ բազմութեան անօթի մնացորդները պիտի հրդեհեն ու թալլեն՝ իրենց թշուառ գոյութիւնը քարշ տալու համար»[1]:

«Ժամանակ» օրաթերթը Մարաշից ստացած մի անհատի

---

[1] **«Առաջամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

նամակից տպագրել էր հետևյալ քաղվածը. «Ամբողջ Հալէպի և Ատանայի կուսակալութեանց մեջ ռետիեֆ, իհթիյաթ և մուստահֆըզ զինուորները զենքի տակ կոչուեցան: Երկու օրէ ի վեր տեղւոյս 19 տարեկաններու արձանագրութիւն կը կատարուի, կ'ըսուի թէ ասոնք ալ զենքի տակ պիտի առնուին»[1]: Սիրիայից Զաթալջա հասան ռեդիֆներ, Իզմիրից՝ նիզամիե զինվորներ, Էրզրումից՝ զգալի թվով հայեր, մեծ թվով քրդեր, հիմնականում՝ համիդիե հեծյալներ: Ավելի քան 100 ուլեմ ուղարկվեց պատերազմի դաշտ՝ քարոզելու[2]: Կայսրության ասիական մասից ամեն օր ռազմաճակատ հասնող թուրքական զորամասերի շարքերում կային հազարավոր հայ երիտասարդներ, որոնք կոչված էին պատերազմելու ի շահ այն երկրի, որն իրենց ազգի համար դժոխք էր[3]:

Արդեն նոյեմբերի 2 (15)-ին ասիական մասից կռվի դաշտ հասան թուրք-քրդական չուրջ 40 հազարի հասնող զինվորներ և բացազատվեցին Զաթալջայի երկրորդ պաշտպանական գծի վրա:

Երկու բանակները՝ թուրքականը և բուլղարականը, խմբավորված լինելով այդ գծի դեմ դիմաց կամ նրա չուրջը, ժամեժամ սպասում էին նոր ընդհարման, որը վերսկսվեց նոյեմբերի 3-ին:

Բուլղարական բանակը, որի երկու թևերը խիստ վնասվել էին օսմանյան նավատորմի թնդանոթաձգությունից, չկարողանալով նպաստավոր դիրք բռնել պաշտպանության երկրորդ գծի վրա, ստիպված նահանջեց: Բուլղարները զգալի հետ քաշվեցին հատկապես Չորլուի ուղղությամբ:

Զինվորական տեսաբան Լիոնելը թուրքերի գործողությունը այդ պահին և կռվի այդ հատվածում համարում էր «սքաչելի»[4]:

Բոլոր ռազմաճակատներում կրած ջախջախիչ պարտություններից հետո այդ առաջին նկատելի հաջողությունները

---

[1] **«Ժամանակ»**, № 1304, 11 (24), դեկտեմբերի 1912 թ.:

[2] **Արամ Անտոնեան**, Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 1012:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 216, 30 սեպտեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

ոգեշնչել էին Թուրքական կառավարությանը և ընդհանրապես Թրքությանը:

Նոյեմբերի 6-ի վաղ առավոտյան սուլթանը հետևյալ հեռագիրը հղեց ռազմաճակատում գտնվող ռազմական նախարար և օսմանյան բանակի ընդհանուր հրամանատար Նազըմ փաշային. «Այն դիմադրությունը զոր մեր բանակը, Աստուծոյ օգնությամբ, կրցաւ ցոյց տալ թշնամիին յարձակումներուն դէմ, զիս կ'ուրախացնէ բոլոր օսմանցիներուն հետ:

Այն ջանքերը, զորս դուք կը թափէք մեր հայրենիքը փրկելու համար, պիտի ուրախացնեն հոգիները մեր նախնիքներուն եւ նահատակներուն, որոնք իրենց արիւնով ոռոգած են մեր երկրին հողը, զոր այսօր թշնամին ոտքի կոխան կ'ընէ: Ձեր վեհապետը եւ ամբողջ ազգը ձեզի հետ են: Ձեզմէ, ձեր հրամանատարներէն եւ զինուոր զաւակներէս կը սպասեմ հաստատակամութիւն եւ յարատեւութիւն: Ասիկա այն վայրկեանն է ուր մեր քաջարի զինուորները պէտք է ցոյց տան իրենց հաւատքին ամբողջ եռանդը եւ իրենց բոլոր հայրենասիրական անձնուիրութիւնը:

Պարտականութիւն կը դնեմ ձեր վրայ հաղորդելու համար մեր ներկայ հեռագիրը ամբողջ բանակին եւ Բարձրեալն Աստուծոյ կամոք կը վստահիմ ձեզ»[1]:

Մի քանի ժամ հետո հետևեց Նազըմ փաշայի հետևյալ պատասխան հեռագիրը ռազմաճակատից. «Երէկ մեծ կորուստներով յետ մղուեցաւ թշնամին, որ կը յառաջանար դէպի աջ թեւում գտնուող մեր զօրաց վրայ: Այս առտու եւս մեծ կորուստներով ետ մղուեցաւ թշնամիին հետեւակազօրքը, որ յարձակում գործած էր մեր ձախ թեւում: Այսօր եւս թնդանոթի կռիւը կը շարունակուի բոլոր թեւերուն վրայ»[2]:

Իհարկե, եթե բուլղարներն իրենց մեջ բավարար ուժ զգային, ապա Թուրքերին ժամանակ չէին տա թարմ ուժերով լրացնելու իրենց բանակը[3]:

---

[1] ***«Բուլթանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս **«Աւետաբեր»**, № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:*

Այս վտանգավոր պահին բուլղարական կառավարությունը դիմեց Սերբիային և Հունաստանին՝ խնդրելով որքան կարելի է մեծ թվով զորք ուղարկել Զաթալջայի գիծը: Վերջիններս, հատկապես Սերբիան, լարում էին իրենց ուժերը կռվի իրենց հատվածներում թուրքերին վճռական հարված հասցնելու համար, ուստի օգնության գալու հնարավորություն չունեին: Այդ պայմաններում բուլղարական զորքի 1-ին և 3-րդ բանակները, նոյեմբերի 4-ին գրոհ սկսեց Զաթալջայի ամրությունների վրա[1]: Գրոհը կատարվում էր ռազմագիտական կանոններին հակառակ, առանց հրետանային նախապատրաստության: Հետևակը, գրավելով թուրքերի առաջնային ամրությունները կենտրոնում և ձախ մասում, այնուհետև չկարողացավ առաջ շարժվել, իսկ հետո՝ ստիպված նահանջեց[2]: Ճակատամարտը տևեց երեք օր՝ նոյեմբերի 4-6-ը: Թուրքերին հաջողվեց զգալի կորուստներ պատճառել բուլղարներին և անառիկ պահել Զաթալջան: Բուլղարների մարդկային կարուստներն այստեղ կազմել էր 10.000 մարդ[3]:

Բուլղարական զենքի փայլուն հաղթանակների կողքին անբնական էր թվում թուրքերի հաջողությունը ռազմաճակատի Զաթալջայի հատվածում*: Բուլղարների անհաջողությունը Զաթալջայի մատույցներում հետևանք էր պատերազմի ամբողջ ընթացքում նրանց տված մեծաթիվ զոհերի: Բուլղար մարտիկների խելահեղ անձնազոհությունների պատճառներից մեկն էր, որ բանակը կրեց մեծաթիվ անդարմանելի կորուստներ: Միայն Լյուլե-Բուրգազի և Փունար Հիսարի հինգ օր ու գիշեր տևած կռիվների ընթացքում նրանք ունեցել էին 15 հազար սպանված ու վիրավոր, իսկ պատերազմի սկզբից կորուստները կազմում

---

[1] **Արամ Անտոնեան,** Պատկերազարդ..., էջ 1012:

[2] Տե՛ս **В. Жебокрицкий**, Болгария во время балканских войн 1912-1913 гг., էջ 77:

[3] Տե՛ս նույն տեղում:

* Մինչ այդ, պատերազմը սկսվելուց ի վեր, թուրքական զորքերի միակ փայլուն էջերը եղել էին Շքոթրա քաղաքի քաջարի պաշտպանությունը սերբական բանակից և Էդիրնեի պահակազորքի հանդուգն հարձակումները ամրություններից դուրս:

էին 100.000, այսինքն՝ բանակի 1/3 մասը: Ոչնչացված էր զորքերում գտնվող մտավորականությունը: Հեծելազորում մնացել էին էսկադրոնների փոքր մնացորդներ: Մարտական դրոշի տակ էին կանչվել 16–17 տարեկան պատանիներ: Ադրիանուպոլսի մոտերքից սկսած՝ զորքը համարյա չէր ստանում թնդանոթներ և ռումբեր: Մեծ ընդհատումներով էր կատարվում պարենի մատակարարումը: Բուլղար բժիշկները չէին հասցնում անհրաժեշտ խնամք տանել Սոֆիա հասած հազարավոր վիրավորների նկատմամբ: Այստեղ հանրային բոլոր հաստատությունները, ինչպես նաև բազմաթիվ մասնավոր բնակարաններ վերածվել էին հիվանդանոցների: Վիրավորներին չէին բավականացնում անկողինները, ուստի նրանցից շատերը պառկում էին մերկ տախտակամածների վրա:

Թուրքերի ուրախությունը, սակայն, երկար չտևեց: Զնայած կրած մեծ կորուստներին՝ բուլղարական զորքերի մարտական ոգին ու կորովը առաջվա պես շատ բարձր էին: Զարմանալի է, բայց փաստ. նրանցից ոչ մեկը գերի չէր ընկել:

«Բութանիա» թերթի թղթակցի՝ ռազմաճակատից ուղարկած տվյալների համաձայն՝ Զաթալջայի վրա հարձակման համար բուլղարական բանակն ուներ 280.000 զինվոր ու սպա: Նրանցից Էդիրնեի շուրջ տեղաբաշխված էր 100.000 հոգի՝ զորավար Իվանովի հրամանատարությամբ, Տերքոզեից մինչև Էգեյան ծով բռնած էր Դմիտրիևի հրամանի ներքո գտնվող 125-հազարանոց զորքը, Կուտնիչևի 60.000-ի հասնող զորքը տեղաբաշխված էր Մարմարա ծովից մինչև Էգեյան ծով տարածքի վրա: Նրանցից բացի՝ բուլղարներն ունեին 70.000 պահեստի զինվորներ և 150.000 մակեդոնացի կամավորներ[1]:

Մամուլը հաղորդում էր, որ Զաթալջան պաշտպանող թուրքական զորքերի թիվը հասնում էր 100.000-ի:

Նոյեմբերի 7 (20)-ից բուլղարական բանակը, վերադասավորելով ուժերը, նոր հարձակում սկսեց Զաթալջայի ամրությունների երկրորդ գծի ուղղությամբ: Վերսկսված արյունալի

---

[1] **«Բութանիա»,** № 28 (1106), 9 (22) հունվարի 1913 թ.:

կռիվները օրեր չարունակ ընթանում էին տեղատարափ անձրևների տակ:

Տարափոխիկ հիվանդությունները չարունակում էին լայնածավալ ավերներ գործել թուրքական բանակում: Հիվանդություններից մահացած կամ սպանված զինվորների դիակները երկար ժամանակ մնում էին անթաղ, իսկ վիրավորների փրկությունը նրանց մի կերպ Պոլիս հասցնելն էր, որը միշտ չէ, որ հաջողվում էր[1]:

Զդիմանալով բուլղարների ճնշմանը՝ թուրքական զորքերը, մեծ կորուստներ տալով, քաշվեցին Զորլուից: Վիրավորներն ու ռազմական պիտույքները մնացել էին պատերազմի դաշտում՝ անձրևներից գոյացած ցեխաջրափոսերի մեջ: Հազարավոր հիվանդներ փոխադրվել էին Պոլիս կամ դեռ մնում էին պատերազմական վայրերում[2], իսկ բանակի ցրված մասերը թափառում էին լեռներում: Նրանց հավաքելն ու ի մի բերելը կապված էին մեծ դժվարությունների հետ, քանի որ բուլղար զինվորներն ամեն կողմ էին[3]:

Թուրքական բանակի հրամանատարությունը քաջ գիտակցում էր, որ Զաթալջայի հանձնումը կնշանակեր բուլղարական բանակի առջև անարգել ճանապարհ բացել դեպի Կ. Պոլիս, որն անհնարին կլիներ պաշտպանել: Բ. Դուռը հույսը դրել էր այդ ամրությունների վրա: Թուրքական զորքը պետք է փորձեր այդտեղից հետ մղել բուլղար բանակի գրոհները և դրանով իսկ ինչոր չափով վերականգնել իր ռազմական պատիվը:

Օսմանյան մայրաքաղաքին բուլղարական զորքի մոտենալը եվրոպական կառավարություններում առաջ էր բերել իսկական դիվանագիտական իրարանցում[4]: Եթե բուլղարները կարողանային Զաթալջայի ամրությունները հաղթահարելով Կ. Պոլիս մտնել, դա չատ սուղ կնստեր նրանց վրա: Պոլիս մտնելուց առաջ

---

[1] *Տե՛ս* ***«Բուլթանիա»****, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 2 (1049), 4 (17) նոյեմբերի 1912 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:*

[4] *Մեծ տերությունների միջև դիվանագիտական պայքարի մասին տե՛ս "Красный архив", № 2 (15), 1926, էջ 1–29, № 3 (16) 1926, էջ 1–24:*

նրանք կտային հազարավոր, գուցե տասնյակհազարավոր զոհեր: Ինչո՞ւ այդչափ զոհեր տալ, երբ հենց իրենք՝ բուլղարները, շատ լավ գիտեին, որ, միևնույնն է, Պոլիսը չի մնա իրենց ձեռքում: Դրա դեմ Սերբիան ու Չերնոգորիան որևէ բողոք չէին ունենա, բայց Հունաստանը հաշտ աչքով չէր նայի, թե բուլղարներն ինչպես են մտնում երբեմնի Բյուզանդիայի մայրաքաղաքը: Պոլիսը կովախնձոր պիտի դառնար Հունաստանի և Բուլղարիայի միջև: Պատահական չէ, որ բալկանյան զինակցության պայմանագրային փաստաթղթերից ոչ մեկում օսմանյան մայրաքաղաքի մասին որևէ խոսք չէր եղել: Եվրոպական մեծ տերությունները և հատկապես Անգլիան չէին հաշտվի Պոլիսը Բուլղարիային անցնելու մտքի հետ: Պոլսի «Ժամանակ» թերթը բերել էր Լոնդոնի «Թայմս» թերթի կարծիքը, թե «Պոլսոյ գրաւումը Պուլկարիոյ զորութեան անկումը պիտի ըլլայ»[1]: Նույն թերթը, իր մի ուրիշ հոդվածում անխոհեմություն համարելով Կ. Պոլիսը գրավելու բուլղարների մտադրությունը, համոզմունք էր հայտնում, որ այդ քայլով Բուլղարիան իր դեմ կհանի ողջ Եվրոպան, և դրանով ոգեշնչված՝ մայրաքաղաքի ողջ բազմազգ քաղաքացիները դուրս կգան կռվի՝ պաշտպանելու իրենց քաղաքը: «Պոլիս մուտքը տարբեր է Թրակիոյ դաշտերուն յաղթանակներուն,- նկատում էր թերթը: - Խնդիրը շատ կը տարբերի: Պէտք է մտածել մեծ բնակչութիւն մը ունեցող և պարտուած զինուորներ ու փախստականներ պարունակող մայրաքաղաք մը մտնելէ առաջ»[2]:

Ֆրանսիացի բարձրաստիճան զինվորականներ Պոմանը և Ստրուվեն, որոնք պաշտոնավարում էին թուրքական անվտանգության մարմիններում, Չանաքկալեի (Դարդանելի) նեղուցի մոտերքը գտնվող ֆրանսիական ռազմական նավատորմի ծովակալ Տարթիժ դը Ֆուրնեի հետ համագործակցած՝ խնդիր ունեին բոլոր միջոցները ձեռք առնել Սան-Ստեֆանոյի գծի վրա գտնվող 20.000 թուրք զինվորների պարտության դեպքում

---

[1] **«Ժամանակ»** (Կ. Պոլիս), № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Ժամանակ»**, № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

նրանց թույլ չտալ դիրքերը թողնելով խուժել մայրաքաղաք: Դեպի Պոլիս փախչող զինվորների հոսքի դեմն առնելու համար թույլատրված էր նրանց ենթարկել ամենադաժան պատիժների: «Նոյնիսկ կը լսեմ,- գրում էր ականատեսը,- որ խռովութիւն յարուցանող և բռնի Պոլիս մտնել փորձողները հրացանի պիտի բռնուին»[1]:

Եվրոպացիների բռնած դիրքը ոգեշնչել էր թուրքական կառավարությանը, որը կայսրության մայրաքաղաքը պաշտպանելու համար զորահավաքի էր ենթարկել հնարավոր բոլոր միջոցները: «Աւետաբերը» գրում էր. «Ներկայ դահլիճն արդէն չաբաթներէ ի վեր ապահովութեան խնդրով զբաղեցաւ և լուրջ կարգադրութիւններ եղան մայրաքաղաքին մէջ անդորրութիւնը պահպանելու համար: Ամէն հայրենասէր Օսմանցիի պարտքն է այս տեսակէտով օժանդակել կառավարութեան»[2]: «Ժամանակ» թերթը մեջբերել էր 85-ամյա վարչապետ Քեամիլ փաշայի հայտարարությունից մի հատված: Նա ասել էր. «Մի՛ յուսաք, որ ես կամ սուլթանը Պոլիսը թողունք: Հարկ պիտի ըլլայ Վեհապետս իր պալատին եւ զիս ալ իր այս սենեակիս մէջ սպաննել»[3]: Թերթի թղթակիցը շարունակում էր. «Քեամիլ փաշա կը յուսայ որ Եւրոպա՝ իր երկրին մայրաքաղաքը պիտի փրկէ, որովհետև բանաստեղծներ Սթամպուլի մինարէներուն մարմարի սպիտակութիւնը և Մարմարայի վրայ մայրամուտը երգած են»[4]:

Բուլղարական բանակի կողմից օսմանյան մայրաքաղաքը գրավելուն դեմ էր ոչ միայն ողջ Եվրոպան, այլև Ռուսաստանը: Շատերն էին համոզված, որ զորավար Սավովի ծրագրի իրականացումը Բուլղարիայի դեմ կհանի ոչ միայն Պետերբուրգի կառավարությանը, այլև ռուս հանրային կարծիքը, իսկ դա կնշանակեր բուլղար զորության վախճանը: Նրանք քաջ գիտակցում էին, որ միայն ռուսական ցարի վճռական «ոչ»-ն է, որ ստիպեց բուլղարներին ամբողջ ամիսներ շարունակ կանգ առնել

---

[1] **«Ժամանակ»,** № 1269, 6 (20) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Աւետաբեր»,** № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

[3] **«Ժամանակ»,** № 1264, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

[4] Նույն տեղում:

Զաթալջայի ամրությունների մոտ: «Ժամանակը» համոզված էր, որ Ռուսաստանը «պատրաստ է նույն իսկ իր արիւնովը պաշտպանելու Սերբիոյ պահանջները, բայց չպիտի թոյլատրէ որ Պուլկարիա Վոսֆորի ափերուն վրայ երեւնայ»[1]:

Թերևս վտանգի այդ զգացողությունն էր պատճառը, որ Բուլղարիայում, հատկապես Սոֆիայի մտավորական շրջաններում տեսակետ էր շրջանառվում, թե ճիշտ կլիներ՝ Պոլիսը գրավելուց հետո երկրի կառավարությունն այն նվիրեր Ռուսաստանին՝ «ի փոխարէն Պուլկարիոյ ազատութեան համար այս վերջինին ըրած զոհողութեանց»[2]: Իսկ «Ժամանակ» թերթը վկայակոչել էր «Քեոլնիշե Ցայթունկ» թերթի տեղեկությունն այն մասին, թե բուլղարները դեմ չեն, որ իրենց կողմից Պոլիսը գրավելուց հետո այն հռչակվի միջազգային քաղաք[3]:

Ռուսաստանի տեսակետը ջերմորեն պաշտպանում էր Բալկանյան դաշնակից երկրներից միայն մեկը՝ Հունաստանը: Հույները գտնում էին, որ իրենք են Բյուզանդիայի օրինական ժառանգները, և եթե օսմանյան մայրաքաղաքը գրավվի բուլղարների կողմից, միևնույնն է, այն պետք է հանձնվի իր իսկական տիրոջը՝ հունական թագավորությանը:

Հույներին ոգի էր տալիս այն, որ իրենց երկրի կառավարությանը հաջողվել էր պատերազմը սկսելուց ի վեր մեծապես ուժեղացնել բանակը: Նոյեմբերի սկզբներին հունական բանակում ուներ 203 հազար մարդ՝ չհաշված 1912 թ. նորակոչիկներին: Օտար երկրներից շարունակում էին հայրենիք վերադառնալ մեծ թվով կամավորներ, որոնք անմիջապես ընդգրկվում էին զորամասերի մեջ: Միայն հոկտեմբերի վերջին շաբաթում այլ երկրներից վերադարձել և զինվորագրվել էր 1100 կամավոր[4]:

Բանակի անընդհատ համալրումը հույներին հնարավորություն էր տալիս լուրջ հաջողություններ արձանագրել բալկան-

---

[1] **«Ժամանակ»,** № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Լուսաբեր»,** № 1263, 31 հոկտեմբերի (13 նոյեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1264, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1284, 21 նոյեմբերի (4 դեկտեմբերի) 1912 թ.:

յան ռազմաճակատի իրենց հատվածում[1]:

Ինչ խոսք, բուլղարների կողմից օսմանյան մայրաքաղաքի գրավումը փորձաքար էր, որն ընդունակ էր պառակտելու բալկանյան դաշինքը՝ իր բոլոր անկանխատեսելի հետևանքներով հանդերձ:

Բուլղարիայի կամ Հունաստանի կողմից Կ. Պոլսի գրավելուն դեմ էին նաև հայերը, հատկապես պոլսահայերը: Այդ սարսափելի հեռանկարը մեծ մտատանջություն էր առիթել մայրաքաղաքի բոլոր հայերին՝ ահ ու դողի մեջ գցելով նրանց: «Բոլոր աչքերը մեկ կողմ միայն ուղղված են՝ Էյուպի բարձունքները: Նույն կողմերու հորիզոնը երկու-երեք վայրկեանը (բոպեն: – Հ. Ս.) մէյ մը կը ծածկուէր մուխի և թանձր քօղով մը, որ քիչ քիչ կ'նոսրանար և այսպէս շարունակաբար գրեթէ մինչեւ իրիկուն»[2]: Նրանք երկյուղում էին անհանգիստ տարրերի և Կ. Պոլիս վերադարձած զորքի հնարավոր բարբարոսական արարքներից: Նրանց սպառնական հայացքներից ու կերպարանքից երևում էր, որ խռովարարները ուր որ է նոր փորձանքների էին մատնելու քրիստոնյաներին, առաջին հերթին՝ հայերին:

Օսմանյան արտաքին գործերի նախարար հայազն Գաբրիել Նորատունկյանը նոյեմբերի սկզբներից անանուն նամակներ էր ստանում, որոնցով նրանից պահանջում էին հրաժարական տալ: Նամակներից մեկի հեղինակը գրում էր. «Քրիստոնյա մինիստրը չի կարող մահմեդական պետության քաղաքականությունը վարել և մանավանդ այնպիսի մի ժամանակ, երբ քրիստոնյաները խաչի պատերազմ են հայտարարել մահիկի դեմ, իսկ շեյխ ուլ-իսլամը՝ սրբազան պատերազմ գյաուրների դեմ»:

Թերթերը հաղորդում էին, որ Բ. Դռան նիստում Լոնդոնից ստացված հեռագրերը քննելու ժամանակ շեյխ ուլ-իսլամը նույնպես քար էր չպրտել Նորատունկյան էֆենդու կողմը՝ մեղադրելով նրան երկերեսանության մեջ: Այդ բոլորը Նորատունկյանին ստիպեցին հրաժարական տալ, բայց այն մերժվեց:

---

[1] *Հույների հաջողությունների մասին տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»****, № 52, 7 մարտի 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1268, 5 (18) նոյեմբերի 1912 թ.:*

Հետևյալ օրը արտգործնախարարին ընդունեց սուլթանը և նրան հայտնեց իր կատարյալ վստահությունը[1]:

Գաբրիել Նորատունկյանի նկատմամբ Թուրքերի սպառնալիքները հոգեկան նոր ալեկոծումներ ու տագնապ էին առաջ բերել պոլսահայության մեջ: Ռ. Զարդարյանն այդ օրերին Ս. Վրացյանին գրում էր. «Եթե պուլկար բանակը յամառի պնդել Պոլսոյ վրայ քալելու – ինչ որ ստույգ կը թուի գէթ մինչեւ այս ժամը, այն ատէն պէտք է ընդունիլ, որ այս տաճիկները պիտի փորձեն վերջին գաղանութիւننին ու պիտի դիմեն ջարդի եւ արիւնահեղութեան Եւրոպայէն վերջնապէս հեռանալէ ետք:

Պատրաստութիւններ տեսած ենք ու կը տեսնենք չան սատակ չ'ըլլալու համար. եթէ մեռնինք՝ կը մեռնինք դիմադրութեամբ»[2]:

Հոգեկան սոսկալի տագնապի մեջ գտնվող հայերն իրենց փրկությունը տեսնում էին միայն իրադարձություններին Ռուսաստանի միջամտության մեջ և աստծուց օգնություն էին աղերսում: Նրանք ասում էին, թե բավական է՝ ռուսը ձեռք մեկնի, բավական է՝ սևծովյան նավատորմի մի փոքր խմբով երևա Բոսֆորի ջրերում, որ մահմեդական խուժանը զսպվի:

Բայց հայերը հաշվի չէին առնում մի կարևոր հանգամանք: Թուրքերը սովորաբար հանդուրժում էին եվրոպական ռազմանավերի ցույցերը Կ. Պոլսի մատույցներում: Նրանք չատ անգամներ էին այդ բանը տեսել: Եվրոպացիների ռազմանավերը երկար չէին մնում նրանց ջրերում. հեռանում էին առանց Բ. Դռան հետ բարդություններ ստեղծելու:

Այլ էր Ռուսաստանի պարագան, մի երկրի, որին Թուրքիան համարում էր դարավոր ոխերիմ թշնամի: Ռուսների կողմից նավատորմ ուղարկելը, իհարկե, ծայրահեղ միջոց էր, և այն համազոր կլիներ պատերազմի հայտարարության, մի բան, որ պաշտոնական Ռուսաստանը չէր ուզում:

Ինքնըստինքյան հասկանալի էր, որ Ռուսաստանը չէր կա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 281, 18 դեկտեմբերի 1912 թ.:

[2] **«Վեմ»**, № 1, հունվար-փետրվար, 1935, էջ 90, 91:

րող կատարվող դեպքերին անտարբեր հանդիսատեսի դերում մնալ: Նրա ամենակենսական շահերն առնչվում էին նեղուցների խնդրին: Ինչ էլ որ լիներ, Բոսֆորն ու Դարդանելը պետք է բաց լինեին ռուսական նավատորմի համար[1]: Ռուսաստանը չէր կարող թույլ տալ, որ որևէ ուրիշ պետություն կանգնի իր ճանապարհին, նույնիսկ եթե դա լինի իր ավանդական հովանավորյալ պետությունը: Պարզ էր, որ Բուլղարիան չէր կարող ընդդիմանալ սլավոնական հանրության գլխավոր հովանավորին: Ավելին, Սոֆիայում չատերը գտնում էին, որ եթե բալկանյան զինակից պետությունները կատարյալ հաջողության հասնեն, ապա Բուլղարիան Պոլիսը պիտի մատուցի Ռուսաստանին որպես նվեր[2]:

Կ. Պոլսի և Դարդանելի պատկանելիության խնդիրը որքան կարևոր էր Ռուսաստանի, այնքան էլ Եվրոպայի համար: Եվրոպական բոլոր պետությունները՝ մեծ թե փոքր, հայտարարում էին, որ իրենց համար Դարդանելի հարցը չատ ավելի կարևոր է, քան նույնիսկ ողջ Մակեդոնիայի բաժանման հարցը: «Բոսֆորի նեղուցի մուտքը պետք է բաց լինի բոլորի համար, ուստի և անհրաժեշտ է այնտեղ նավարկության ազատություն հռչակել, այսինքն՝ միջազգայնացնել նեղուցները»,- այս էր Եվրոպայի կտրուկ պատասխանը: Նրա համար Պոլիսը և նեղուցները որևէ պետության վերահսկողության հանձնելը վճռականապես անընդունելի էր: Պարզ էր, որ այս և նման հայտարարությունները ոչ այնքան ուղղված էին Բուլղարիային, որքան Ռուսաստանին: Այնպես որ, եթե նույնիսկ բուլղարական զորքը գրավեր Պոլիսը, ապա եվրոպական ոչ մի պետություն չէր հաշտվի օսմանյան նեղուցները Թուրքիայից օտարելու մտքի հետ: Կարելի է ասել, որ հենց նեղուցները փրկեցին Պոլիսը: Իհարկե՝ այս ամենը քաջ գիտակցում էին Սոֆիայում, ուստի բուլղարական զորքը վարանում էր մտնել Պոլիս[3]:

Բայց, հակառակ իշխանությունների, ռուսական թերթերը

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1046, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] ***«Վեմ»****, 1, հունվար-փետրվար, 1935, էջ 90, 91:*

կաչկանդված չէին. նրանք գրում էին, որ չի կարելի 20-րդ դարում թույլ տալ բարդուղիմեոսյան գիշերվա միջնադարյան սարսափները, որ Ռուսաստանը բարոյական իրավունք չունի սառնասիրտ մնալու քրիստոնյաների աղաչանքների նկատմամբ, որոնք միանգամայն անպաշտպան են մոլեռանդ ու վայրենի ամբոխի առաջ, մինչև օրս չտեսնված մարդկային մի տեսակի առաջ, որն ամեն րոպե պատրաստ է բզիկ-բզիկ անելու այլադավաններին:

Կ. Պոլսի թերթերը ներկայացնում էին ռուսական հասարակական կարծիքը, որի պատճառով ավելի էին բորբոքվում թուրքերի հակառուսական տրամադրությունները:

Իսկ բուլղարների թնդանոթների ահեղամռունչ որոտումներն արդեն լսվում էին ոչ միայն Կ. Պոլսի մատույցներում, այլև նրա թաղերում: Զաթալջայի դիմաց կանգնած բուլղար բանակի առաջապահ զորամասերն ամեն րոպե կարող էին մտնել մայրաքաղաք:

Բուլղարական բանակի տարած փառավոր հաղթանակների առթիվ երկրի վարչապետ Գեչովը, դիմելով ժողովրդին, ասել էր. «Այլևս ի՞նչ ասենք այսօր, մեծ գործը աւարտելուց յետոյ եւ ի տես քաղաքացիական այն քաջութեան, որ ցոյց տին մեր մարտիկները զարմացնելով աշխարհը եւ ստեղծելով մի փառք, որ նրանք կաւանդեն ապագայ սերունդներին: Շնորհակալութիւն յայտնենք այս էպոպէյան կերտողներին եւ ցաւակցութիւն այն ընտանիքներին, որոնք ողբում են հերոսների մահը»[1]:

Այդ հաղթանակների համար Ռուսաստանի վարչապետն իր խորին համակրանքն էր հայտնել, որին ի պատասխան՝ Բուլղարիայի ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ նամակով արտահայտել էին իրենց երախտագիտությունը Ռուսաստանին, նրա կայսրին ու կառավարությանը[2]:

Այս պայմաններում չեյխ ուլ-իսլամը մահմեդականներին սրբազան պատերազմի կոչ ուղղեց: Ուլեմները Կ. Պոլսում և գավառներում սկսեցին տարածել հոգևոր առաջնորդի հորդորները:

---

[1] **«Կովկասի լրաբեր»,** № 39, 13 դեկտեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

Շեյխ ուլ-իսլամի սրբազան պատերազմի կոչը ուժգին տպավորություն գործեց հատկապես Թուրքիայի մահմեդական ստորին խավերի, նավաստիների, նավահանգստային բանվորների ու բեռնակիրների, նաև ուսուցիչների, դպրոցականների և ուսանողների վրա[1]:

Ալեկոծվեց նաև երկրից դուրս գտնվող մահմեդական աշխարհը: Ալժիրում արաբները պատերազմի առթիվ մեծ շարժում էին ծավալել՝ Թուրքիային ամեն ինչում աջակցելու կարգախոսներով: «Եթէ Թուրքերը յաջողին անոնք ալ (արաբները:- Հ. Ս.) կ'ուրախանան եւ Թուրքիոյ սեւ օրերուն խորապէս կտխրեն»,- գրում էր Կ. Պոլսի «Ժամանակը»[2]:

Բազմաթիվ ճավացի իսլամ երիտասարդներ ճանապարհ էին ընկել Կ. Պոլիս՝ օսմանյան բանակին միանալու համար: Սրանց միացել էր կարմիր մահիկի մի խումբ: Բացի դրանից, Ճավայի իսլամները հանգանակել էին մի քանի հազար ոսկի և հիշյալ երիտասարդների խմբի հետ ուղարկել Պոլիս[3]: Փեշավարի (Հնդկաստան) ուլեմները հոկտեմբերի 29-ին տեղի մզկիթում աղոթել էին օսմանյան բանակի հաջողության համար, այնուհետև հանրահավաք էին գումարել, որի ընթացքում որոշել էին կազմել կարմիր մահիկի մի մարմին և նրա միջոցով հավաքած գումարներով ձեռք բերել բժշկական պիտույքներ և ուղարկել Կ. Պոլսի հիվանդանոցներ: Կալկաթայի իսլամները հավաքել էին 10.000 ռուպի և շարունակում էին այդ գործը՝ օսմանյան բանակին դեղորայք գնելու նպատակով: Կարաչիի իսլամները ևս, մի հսկա հավաքույթ կազմակերպելով, հենց տեղում անցկացրել էին դրամահավաք: Կ. Պոլսի «Զի Մուհամեդան» պարբերականը հաղորդում էր, որ միտինգին մասնակից յոթ տարեկան մի աղջիկ իր մատանին նվիրել էր կարմիր մահիկի հանձնախմբին[4]:

Մահմեդական հոգևորականության կողմից այդ ծայրահեղ միջոցին դիմելը, քրիստոնյաների համար վերին աստիճանի օր-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 242, 31 հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1289, 26 նոյեմբերի (9 դեկտեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1334, 13 (26) հունվարի 1913 թ.:

[4] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

հասական լինելով, ոչ պակաս վտանգավոր էր նաև օսմանյան պետության համար: Եթե ուլեմների քարոզները միայն զորքերի կամ այն մարդկանց խմբերի համար լինեին, որոնք կարող էին զորքերին միանալով նրանց հետ կռվի դաշտ դուրս գալ՝ մաքառելու «գյավուրների» դեմ, հասկանալի կլիներ: Բայց զորքի ոգին մեծապես ընկած լինելով՝ սրբազան պատերազմի կոչերն այլևս անզոր էին ազդելու նրա վրա: Թուրքական բանակն օրեցօր նոր պարտություններ էր կրում:

ԿՌԻՎՆԵՐԸ ՄՅՈՒՍ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Ահռելի արյունահեղ պատերազմը շարունակվում էր Բալկանյան թերակղզու բոլոր սահմանագլուխներին: Թուրքերը ջախջախիչ պարտություններ էին կրում ռազմաճակատների բոլոր հատվածներում:

Պատերազմի առաջին իսկ օրերից մեծ եռանդ դրսևորեց Թուրքիայի մյուս դարավոր թշնամի **Սերբիան**:

Զնայած սերբական ռազմաճակատում թուրքական բանակն ուներ 100.000-ից ավելի զինվոր ու հրետանու հզոր համակարգ, բայց սերբական բանակը, մինչև որ թուրքերը սահմանագլուխներ կհասցնեին բազմաքանակ ուժեր, արագ ռազմերթերով և թշնամուն հասցրած ուժգին հարվածներով կարողացավ օսմանյան դարավոր ռազմակալումից ազատագրել տասնյակ սերբական բնակավայրեր:

Սերբական զինված ուժերը անկասելի հարվածներով առաջանում էին դեպի արևմուտք՝ դուրս գալու համար Ադրիատիկ ծով:

Ադրիատիկի ափին մեկ կամ ավելի նավահանգիստ ունենալու Սերբիայի պահանջը չատ թթու վիճաբանությունների նյութ էր դարձել եվրոպական բոլոր երկրների մամուլի էջերում: Այնուամենայնիվ, պետությունների մեծ մասը, այդ թվում նույնիսկ Գերմանիան, գտնում էր, որ Սերբիայի այդ պահանջն օրինական է: Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ պետք է ստեղծվի ինքնավար Ալբանիա, և նրա միջով ձգվի չեզոք մի ճանապարհ

դեպի Ադրիատիկ: Այն պետք է դրվեր Սերբիայի բացարձակ տիրապետության տակ՝ նրան կապելով ծովի հետ:

Ադրիատիկի վեճը ոչ այնքան Սերբիային նավահանգիստ տալուն կամ չտալուն էր վերաբերում, որքան այն բանին, թե որ նավահանգիստը պիտի տրվեր: Ավստրիան ուզում էր, որ Սերբիան այնպիսի մի նավահանգիստ ունենար, որ Ալբանիան չբաժանի երկու մասի[1], ուստի կտրուկ դեմ էր Տիրացցո նավահանգստի գրավմանը: Դա կենտրոնն էր ծովափնյա բավական ընդարձակ մի շերտի, որը, Բելգրադի հայտարարության համաձայն, պետք է միացվեր Սերբիային՝ «Ծովափնյա զինվորական շրջան» անվանումով[2]:

Մեծ պետություններից միայն Ավստրիան էր, որ հանդես էր գալիս դեպի Ադրիատիկ Սերբիայի ձգտումների դեմ, և վերջինիս համար պետությունների կողմից նախատեսված ճանապարհին ինքն էր ձգտում տեր դառնալ:

Գերմանացի նշանավոր քաղաքական հրապարակագիր Մաքսիմիլիան Հարտեն Վիեննայում տեղի ունեցած մի կոնֆերանսում, անդրադառնալով ավստրո-սերբական վեճին, ասել էր. «Զափազանց սխալ կլիներ, եթե Ավստրիան իր թշնամության սլաքն ուղղեր հարևան սլավոնական պետությանը, որն այս պահին արբեցման մեջ է տարած հաղթանակների պատճառով»: Նա շեշտում էր. «Ավստրիայի շահը չի պահանջում, որ Սերբիան որևէ նավահանգիստ չստանա Ադրիատիկի վրա»[3]:

Ադրիատիկում Սերբիայի նավահանգիստ ունենալը Ավստրիան առաջվա պես դիտում էր որպես սերբ-ավստրիական վեճի ամենակնճռոտ պատճառը և պատրաստ էր ամեն գնով խափանել այդ ծրագիրը, միաժամանակ անում էր խաղաղության կոչեր:

Չնայած Ռուսաստանը խիստ շահագրգռված էր Սերբիայի՝ դեպի Ադրիատիկ ծով ելքով, բայց միաժամանակ վախենում էր բալկանյան պատերազմում Ավստրո-Հունգարիայի միջամտությունից, ուստի ստիպված էր զսպել սերբերի գնալով աճող

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[3] **«Ազատամարտ»**, № 1047, 2 (15) նոյեմբերի 1912 թ.:

ախորժակը: Ռուսաստանը վախենում էր, որ բալկանյան պատերազմին Ավստրո-Հունգարիայի միջամտությունը կարող է հանգեցնել Գերմանիայի զինված հարձակմանը, իսկ դա նշանակում էր համընդհանուր պատերազմ, որին այդ պահին ռուսական երկիրը բավարար պատրաստված չէր:

Ի պատասխան ռուսական սլավոնամոլ մամուլի մեղադրանքին, թե բալկանյան ողջ ճգնաժամի սկզբնավորողը Ավստրո-Հունգարիան է եղել, Հունգարիայի հայազգի վարչապետ Լ. Լուկաչը "Neue freie Press"-ի թղթակցին հայտարարել էր, թե ինքը վճռականապես մերժում է այդ տեսակետը: «Մենք խաղաղութեան կուսակից ենք, բայց չենք ուզեր որ Աւստրիա նուաստանայ»[1],- ասել էր նա:

Սերբիայի ու Ավստրիայի ձգտումները տրամագծորեն հակընդդեմ էին նաև դեպի հարավ, դեպի Էգեյան ծով դուրս գալու հարցում: Ավստրիան երազում էր Էգեյան ծովում հաստատվել մշտապես՝ այնտեղ ստեղծելով Porto-Franco (ազատ նավահանգիստ): Ավստրիայի այդ ցանկությանը մեծ տերություններից միայն Գերմանիան էր կիսաձայն հավանություն տալիս: Ակնհայտ էր, որ այդ ծրագիրն անիրականանալի էր ամենից առաջ այն պատճառով, որ դեպի Էգեյան Ավստրիայի ուղին պիտի անցներ այնպիսի երկրամասերով, որոնց բնակչության մեծ մասը բուլղարներ և հույներ էին: Ավստրիայի մուտքն Էգեյան հակառակ էր բոլոր մեծ պետությունների շահերին, բացի Գերմանիայից: Դա վճռականապես անընդունելի էր հատկապես Ռուսաստանի համար, որը մեծապես շահագրգռված էր, որ Եոյակ զինակցությունը չկարողանա ամրապնդվել Բոսֆոր-Դարդանելի հարևանությամբ:

Էգեյան դուրս գալու Սերբիայի ձգտումն ավելի մշուշոտ էր, քան նույնիսկ այնտեղ հաստատվելու Ավստրիայի բուռն ցանկությունը: Էգեյան դուրս գալու համար Սերբիան ստիպված էր լինելու կտրել-անցնել Մակեդոնիայի այն տարածքները, ուր գերակշռում էր հույն բնակչությունը: Բայց դա անհնարին էր: Դա

---

[1] ***«Ժամանակ»**, № 1429, 17 (30) ապրիլի 1913 թ.:*

կարող էր նաև սկիզբ դնել Բալկանյան հակաթուրքական զինակցության արագ քայքայման:

Ռուս նշանավոր ռազմագետ-գրող Միխայլովսկին սերբերին խորհուրդ էր տալիս սահմանափակել ախորժակը, հաշվարկել սեփական ռազմական հնարավորությունները, մշտապես հիշել իրենց հյուսիսային հարևան Ավստրիայի նկրտումները և սահմանի վրա մշտական զորք պահել դիմագրավելու համար հավանական բարդությունները: Նա հատկապես վտանգավոր էր համարում այն, որ Սերբիան իր ռազմուժի մի խոշոր մասը փոխադրել է Թրակիայի թատերաբեմ: Անդրադառնալով այդ մտավախությանը՝ սերբական պաշտոնաթերթերից մեկը հավանական չէր համարում, որ Ավստրիան հարձակում կգործի Սերբիայի վրա, որովհետև նա չէր ցանկանա գործ ունենալ Ռուսաստանի սպառնալիքի հետ[1]:

Ձայնակցելով Միխայլովսկուն՝ «Առաջամարտը» գրում էր, որ Ավստրիան ամեն պարագայում Գերմանիային շատ ավելի մոտ է ու հարազատ, քան Սերբիան, ուստի նրա պարտությունն այս վեճում դյուրությամբ կարող է մեծ ձախողանքներ բերել նաև Եռյակ զինակցությանը, ուրեմն և՝ Գերմանիային[2]:

Ի վերջո Ավստրիան հաշտվեց այն մտքի հետ, որ Սերբիան դեպի Ադրիատիկ ծով կարող է մի փոքր հողաշերտ ունենալ, բայց միայն այն պայմանով, որ դրա վրա երկաթուղի չկառուցի[3]:

Բայց մյուս կողմից, եթե կարելի լիներ արգելել Սերբիայի մուտքը Ադրիատիկ, այդ դեպքում Իտալիան իր դեմ կունենար Սերբիայից ավելի հզոր Ավստրիային, որն անխուսափելիորեն իր ազդեցությունը կտարածեր Ադրիատիկի արևելյան մասերի վրա, մի բան, որը, անշուշտ, նույնքան (եթե ոչ ավելի) վտանգավոր էր Իտալիայի շահերի համար, որքան եթե վերջինս իր դեմ ունենար Սերբիան կամ նույնիսկ Ռուսաստանը:

Ահա թե ինչու Ադրիատիկի խնդիրը ինքնին չափազանց կնճռոտ մի հանգույց էր, որի շուրջը խաչաձևվում էին զանազան

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1046, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

պետությունների խոշոր շահերը: Բայց նաև ակներև էր, որ դեպի Ադրիատիկ ծով Սերբիայի ճանապարհը փակելու միջոցով ալբանական հողերով նույն ծով դուրս գալը Ավստրիայի համար հրատապ անհրաժեշտություն չէր: Ֆրանց Յոզեֆի կայսրությանը դեպի Ադրիատիկ և Էգեյան ծովեր էին մղում ոչ թե տնտեսական շահերը, այլ հեռուն գնացող նպատակները՝ կայսրության տարածքների ընդլայնումը: Բարեբախտաբար նա այժմ հրաժարվել էր Էգեյան ծով իջնելու անիրականանալի ծրագրից և այդ կերպ կարող էր վարվել նաև ալբանական տարածքներով Ադրիատիկ մտնելու գաղափարից, եթե դա նույնպես թելադրված չէ տնտեսական նպատակներով: Որ դա այդպես է, վկայում էր այն հանգամանքը, որ Ավստրիան իր տիրապետության տակ ուներ Ադրիատիկի ահագին ծովափեր և հիանալի նավահանգիստներ, որոնց չնորհիվ համաշխարհային չուկան միշտ անարգել բաց էր իր ապրանքների համար:

Ադրիատիկի խնդրի նկատմամբ ավելի սպառնական էր Ֆրանսիայի դիրքը: «Թան» թերթը գրում էր, որ եթե Ավստրիան ուզում է պահպանել գործելու ազատություն, ապա նույն իրավունքն ունեն նաև Ադրիատիկ ծովին հարող մյուս պետությունները: Ուստի եթե նա ճնշում գործադրի վերջիններիս վրա, ապա Եոյակ համաձայնությունը չի լքի նրանց:

Ինչպես ցույց էին տալիս վերջին հեռագրերը, Անգլիան նույնպես տրամադիր չէր Ավստրիային թույլ տալ կասեցնելու Սերբիայի առաջխաղացումը դեպի Ադրիատիկ:

Բելգրադում Գերմանիայի և Իտալիայի դեսպաններն իրենց կառավարությունների հրահանգով Սերբիայի կառավարությանը հայտարարեցին, թե Եոյակ զինակցության տերությունները համերաշխ են այն հարցում, որ Սերբիայի ներկայությունը Ադրիատիկի վրա իրենք կդիտեն որպես թշնամական գործողություն[1]:

Դրան ի պատասխան՝ հոկտեմբերի 6 (19)-ին սերբական առաջին բանակը, Վրանյա քաղաքից հարավ հատելով օսմանյան սահմանը, մտավ Մակեդոնիա: Երկրորդ բանակը, անցնելով

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 1042, 28 հոկտեմբերի (10 նոյեմբերի) 1912 թ.:*

սահմանը, հարձակում սկսեց բուլղարական Կյուստենդիլ քաղաքից հյուսիս՝ նպատակ ունենալով փակել Վարդարի հովտում տեղակայված օսմանյան բանակի նահանջի ճանապարհը: Այդ բանակում կարևոր ուժ էին ալբան (առնաուտ) ստորաբաժանումները: Բանակի հրամանատարն էր տաղանդավոր զորավար Զեքի փաշան, որն ուներ ալբանական արմատներ:

Սերբական երրորդ բանակը հոկտեմբերի 7-ին շարժվեց դեպի Կոսովո՝ նպատակ ունենալով գրավել Պրիշտինան և նպաստել Վարդարում ծավալված ռազմական գործողությունների հաջողությանը:

Սերբական բանակի մյուս զերամասերը շարժվում էին Շկոդրա, Պրիշտինա և Իոնինա քաղաքների ուղղությամբ:

Հոկտեմբերի 8 (21)-ին սերբական «Արևմտյան բանակը» Թուրքերի դեմ կատաղի կռիվներ էր մղում Վելիա-Կլավարի և Նովի Բազարի շրջանում: Այս ուղղության վրա գործող Թուրքական զորքերում հաշվվում էին 40 հազար առնաուտ և 10 վաշտ նիզամիե զորք:

Հոկտեմբերի 8 (21)-ին մեծ կռիվ տեղի ունեցավ նաև Մերտադի մատույցներում, որտեղ Թուրքերի դաշնակից ալբանացիները դիրքավորվել էին անտառապատ տարածքի շատ հարմար տեղում: Սերբերը բուռն հարձակումով ալբաններին դուրս մղեցին անտառից և ստիպեցին կռիվ մղել բաց դաշտում: Զդիմանալով մեկը մյուսին հաջորդած գրոհներին՝ ալբանները, մեծ կորուստներ կրելով, ցրվեցին տարբեր ուղղություններով: Սերբերը գրավեցին Մերտադը: Սերբական բանակի չտաբը հաստատվեց Վրանիայում:

Կատաղի կռիվներից հետո՝ հոկտեմբերի 9 (22)-ին, սերբական զորքը զորավար Զիվկովիչի հրամանատարությամբ գրավեց Կոսովոյի Պրիշտինա քաղաքը: Նույն օրը սերբերը գրավեցին նաև Կրատովո քաղաքը և Նովի Բազար սանջակի կենտրոն Նովի Բազար քաղաքը[1]: Դրանով մի կողմից դյուրացավ սանջակում Թուրքերի դեմ կռվող սերբ-չերնոգորյան զորքերի գործակ-

---

[1] Տե՛ս **«Ազդարար»,** № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:

ցությունը, մյուս կողմից ձեռք բերվեց կարևոր հենակետ թուրքական հետագա հարձակումները հետ մղելու համար:

Բայց Նովի Բազարի սանջակի գրավումով չերնոգորցիների և սերբերի միացումը դեռ գլուխ չեկավ: Այն տեղի պիտի ունենար դեռևս Կոսովոյի մոտ, այլ ոչ թե սանջակում[1]:

Ավելի կատաղի եղան հոկտեմբերի 9 (22)-ին Լապ գետի հովտում ծավալված մարտերը, որոնց ընթացքում սերբերը փայլուն հաղթանակ տարան և ոտք դրին Կոսովո դաշտ: Այստեղ էր, որ հինգ դար առաջ սերբերը թուրքերից ծանր պարտություն էին կրել և կորցրել իրենց ինքնիշխանությունը: Հիմա նրանք կրկին տերն էին պատմական ազգային տարածքին: Այս նշանակալի հաղթանակը տեղի սերբ բնակչությանն առիթ տվեց անկարագրելի խանդավառ տեսարանների:

Ռազմաճակատի մյուս հատվածներում նույնպես սերբերը հաղթական էին: Հոկտեմբերի 10 (23)-ի կեսօրից հետո նրանց բանակի ձեռքն անցավ Նովի Բազար սանջակի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Սենիցա քաղաքը: Դա հնարավորություն էր տալիս տիրանալու ամբողջ սանջակին:

Սենիցայի անկումից հետո թուրքական նոսրացած զորքը արագ նահանջեց դեպի ուժեղ ամրացված Կումանովա քաղաքը: Նահանջի ճանապարհն անցնում էր Մորավա գետի վրայի կամրջով: Երբ նահանջող բոլոր թուրք զորամասերն արդեն անցել էին գետի մյուս ափը, զորքի հրամանատարի կարգադրությամբ այն պայթեցվեց՝ ժամանակ շահելու և զորքի շարքերը կարգի բերելու համար: Թշնամին ծանր վնասներ հասցրեց նաև երկաթգծերին՝ շատ տեղերում պայթեցնելով դրանք:

Բայց սերբական գնդերի սլացքն անկասելի էր, թշնամուն հետապնդելու նրանց կորովն՝ անսահման: Միայն քսանչորս ժամ տևած տաժանելի աշխատանքից հետո սերբ ամրաչեն զորքին հաջողվեց վերականգնել կամուրջը: Գնացքներն արագորեն սկսեցին զորք տեղափոխել առաջադիրք գծեր: Իսկ թշնամին շարունակում է անկանոն նահանջել՝ մեծաքանակ ռազմավար թողնելով սերբերին:

---

[1] *Տե՛ս* ***«Ազդարար»,*** *№ 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:*

Առջևում Կումանովան էր: Թուրքերը մտադրվել էին ամրանալ այդտեղ, քանի որ քաղաքը պաշտպանված էր ամրակուռ բերդով ու բազմատեսակ այլ ամրություններով: Բայց այդ ամենն ի վիճակի չեղան կանգնեցնելու Թշնամու նկատմամբ անհուն ատելությամբ լցված սերբ զինվորին: Կարճատև, բայց արյունալի ընդհարումից հետո բերդը պաշտպանող Թուրքական երեք զորաբաժինները, մեծ կորուստներ տալով, բռնեցին նահանջի ճանապարհը: Հոկտեմբերի 11 (24)-ին՝ կեսօրից հետո, սերբական առաջին բանակը մտավ Կումանովա:

Այդ կռվից հետո Կումանովա եկած Ֆրանսիացի մի լրագրող իր Թերթում այսպես էր նկարագրել տեսածը. «Ահա գտնվում եմ կրակի լքված Թնդանոթների մեջտեղում: Թուրքերը նույնիսկ չեն կարողացել դրանք գործածել: Ռումբերն ու հրացանները գետնին ցաքուցրիվ էին՝ ֆեսերի, արյունոտ ճերմակեղենի, հուշատետրերի, Թնդանոթների գործածության մասին գերմաներեն հրահանգների հետ: Ավելի հեռվում սպանված ձիերի շուրջ հավաքված էին շները: Սերբ հասարակ քաղաքացիները պատմում էին, որ Թուրք հրամանատարներն իրենց ենթականերին խելացնոր կարգադրություններ էին անում: Օրինակ՝ նման հրամաններով Թուրք հրետանաձիգներն իրենց մարտկոցները հաստատել էին բաց դաշտում, իսկ լեռների վրայից սերբերի Թնդանոթներն անարգել ոչնչացնում էին հակառակորդի հրետանին»: Ապա՝ «Այս ճակատամարտի տեսարանը սրտաճմլիկ էր. ամեն տեղ դիակներ էին, դիակներ և դարձյալ դիակներ էին: Ամեն տեղ միևնույն ահռելի տեսարանը: Ագռավները մշտապես աղիողորմ, դժոխային կռինչներով Թռչում էին գլխավերևս՝ սարսափ ազդելով վրաս: Նրանք անթիվ էին, լցված չորսբոլորը...»[1]:

Կումանովայի անկումը խիստ բացասական ազդեցություն Թողեց Վարդարի օսմանյան զորքերի վրա: Այս կռվում սերբերը տվեցին 1200 սպանված և 3200 վիրավոր, իսկ Թուրքերը՝ 12.000 սպանված ու վիրավոր:

---

[1] Ֆրանսիացի լրագրողի հոդվածի արտատիպը տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 Թ.:

Նույն օրերին սերբական երկրորդ բանակը, անցնելով սահմանը, հարձակում սկսեց բուլղարական Կյուտենդիլ քաղաքից հյուսիս՝ նպատակ ունենալով փակել Վարդարի հովտում Զեքի փաշայի հրամանատարությամբ տեղակայված օսմանյան բանակի նահանջի ճանապարհը:

Հոկտեմբերի 10 (23)-ին Սերբիայի Պետեր թագավորը Բելգրադից ժամանեց Նիշ: Նրա հետ էին վարչապետ Պասիչը, Սկուպչչինայի նախագահ Յովանովիչը, արդարադատության նախարար Նիկովիչը: Թագավորը ողջունեց հավաքված բազմությանը, ապա խոստացավ, որ սերբական տիրապետության ներքո միևնույն ռեժիմից պիտի օգտվեն ու միևնույն հարգանքը պիտի վայելեն ինչպես սերբ, այնպես էլ թուրք հպատակները[1]:

Երկաթուղու բոլոր կայարաններում խոնված մարդիկ նրան ընդունում էին այնպիսի ջերմագին ողջույններով, ինչպիսին երբեք չէր եղել Սերբիայում: Դա նշանակում էր, որ ի նպաստ պատերազմի ժողովրդական խանդավառությունը երկրում չարունակում էր աճել:

Թագավորի ժամանումը Նիշ առաջ էր բերել տեղի սերբերի հակաթուրքական զգացումների իսկական պոռթկում: Հազարավոր նիշեցիներ և շրջակա բնակավայրերի բնակիչներ, զենք վերցնելով, միացան զորքին:

Այստեղից թագավորը մի կոչ հղեց Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին՝ թոթափել թուրքերի դարավոր լուծը և ստեղծել մի հասարակություն, որտեղ պիտի իշխեն խիղճն ու ազատությունը[2]:

Հոկտեմբերի 11 (24)-ին սերբ հեծելազորային ջոկատները թշնամու համար անսպասելի մտան Թեթովո: Շուտով քաղաք մտան նաև սերբ հետևակ զորքերը: Քաղաքը գրավելուց հետո սերբական մի պահակազորք թողնվեց այդտեղ, իսկ զորքի հիմնական մասն ուղղվեց դեպի Կոսթիվար: Այստեղի թուրք զորամասը կարճատև դիմադրությունից հետո փախավ խելահեղ

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»,*** *№ 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ազդարար»,*** *№ 1025, 11 (24) հոկտեմբերի 1912 թ.:*

վազքով: Հաջորդ օրը սերբերը գրավեցին Փերլեփե քաղաքը, ուր նրանց գնդերին միացան հույների առաջապահ զորամասերը և միասին ուղղություն վերցրին դեպի Հյուսիս[1]:

Այդ արյունալի կռվում մեծ էին սերբերի կորուստները՝ ավելի քան 1000 սպանված և ավելի շատ վիրավոր: Է՛լ ավելի մեծ էր հակառակորդի կորուստը՝ շուրջ 2000 սպանված և նույնքան վիրավոր[2]:

Սերբերի կողմից Նովի Բազար սանջակի նույնանուն կենտրոնի գրավումից հետո 3-4 օր սերբ-թուրքական կռիվներն ընթանում էին փոփոխակի հաջողություններով. երկու կողմերը շարունակում էին կրել մեծ կորուստներ:

Ստանալով նոր համալրում՝ սերբական բանակն իր հարվածն ուղղեց Սկյուպե քաղաքում կենտրոնացած թուրքական զորքերի վրա: Ծավալված կատաղի կռիվներում վերջիններս չկարողացան դիմանալ քաջարի սերբ գնդերի հարվածներին: Հոկտեմբերի 13 (26)-ին սերբերը հաղթականորեն մտան Սկյուպե (Ուսկյուբ), որը դարեր առաջ եղել էր Մեծ Սերբիայի մայրաքաղաքը: Քաղաքի գրավումը ցնծություն առաջ բերեց ողջ սերբական աշխարհում: Ամենուրեք թնդում էին «Կեցցե՛ թագավորը», «Կեցցե՛ Մեծ Սերբիան» աղաղակները: Սկյուպեն գրավելու առթիվ հսկա հանրահավաք տեղի ունեցավ Բելգրադում՝ վարչապետ Բուչիչի տան առջև: Լսվում էին խանդավառ բարձրագոչեր. «Աստծո կամքով նոր հաղթանակներ պիտի տանենք», «Եթե պետք լինի, թշնամու գլուխը կճզմենք Պոլսում» և այլն[3]:

Հոկտեմբերի 13 (26)-ին սերբական երկրորդ բանակը գեներալ Ստեպանովիչի գլխավորությամբ գրավեց Շիպ (Իստիբ) և Ագրումիցա քաղաքները: Վերջինս սլավոնամետ հայտնի կենտրոններից մեկն էր ողջ Բալկաններում:

Հոկտեմբերի 15 (28)-ին սերբական և չերնոգորական զորամասերը գրավում են սանջակը:

---

[1] *Տե՛ս* ***«Ազդարար»****, № 1039, 25 Հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1043, 29 Հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 1030, 16 (29) Հոկտեմբերի 1912 թ.:*

Շարունակելով հարձակումը դեպի արևմուտք՝ սերբական առաջին բանակը և նրան միացած «Մորավիա» դիվիզիան նոյեմբերի 3 (16)-ից 5 (18)-ն ընկած օրերին Մոնաստիրի (Բիտոլիա) մոտ վճռական ճակատամարտ տվեց Թուրքերին, որոնք ունեին 80.000 կանոնավոր զորք՝ հզոր թնդանոթակազմով: Զնայած Թուրքերի թվական գերազանցությանը՝ նրանք չդիմացան սերբերի իրար հաջորդող գրոհներին և, կռվի դաշտում թողնելով 20 հազար սպանված ու վիրավոր, նահանջեցին հարավային ուղղությամբ: Սերբերը վերցրին 50.000 գերի, գրավեցին 250 թնդանոթ, ավելի քան 100.000 հրացան, ռազմամթերքի տարբեր տեսակներ, սայլեր, վրաններ, սննդամթերք[1]: Դա մեծ հաղթանակ էր: Դրան զուգահեռ՝ սերբերը հսկողություն սահմանեցին Օխրիդի վրա:

Բոլոր այդ կռիվներում երկուստեք մեծ կորուստներ էին լինում, բայց հատկապես անհամեմատելի էր Թուրքերի զոհերի թիվը: Պատճառներից մեկն այն էր, որ հետևակ զորամասերը և հրետանային հաշվարկները հաճախ չէին կարողանում ճիշտ համագործակցել: Նույնիսկ դեպքեր էին եղել, երբ Թուրքական հրետանին կրակ էր բացել յուրային հետևակի վրա:

Սերբական բանակի աննախադեպ հաղթանակները, որ ճանապարհ էին բացում դեպի Ադրիատիկ ծով, տագնապի էին մատնել Ավստրո-Հունգարիային և Իտալիային, որոնք Սերբիայի թիկունքում տեսնում էին ահարկու Ռուսաստանին: Համաձայնության երկրներն արդեն հակված էին այն տեսակետին, որ Սերբիան պետք է դուրս գա Ադրիատիկի ափերը, իսկ Բուլղարիան՝ Էգեյան ծով՝ ստանալով այնտեղի նավահանգիստները[2]: Այդ ամենից բոլորից չատ երկյուղում էր ավստրիական կայսրությունը, որը գիտակցում էր, որ Սերբիայի չափից ավելի ուժեղացումը կարող է անհաղթահարելի ձգողական ուժ դառնալ իր ներսում ապրող 6 միլիոն սերբախոս հարավային սլավոնների համար:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 233, 20 հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Հոկտեմբերյան կռիվների ընթացքում Թուրքերը սերբական ճակատում թողել էին 35 հազար սպանված ու վիրավոր: Թուրքերի մի մասին էր հաջողվել հասնել Կ. Պոլիս:

Խոշոր էին նաև սերբերի կորուստները՝ 8 հազար մարդ: Պատերազմի սկզբից նրանց ընդհանուր կորուստներն արդեն կազմում էին 16.000 սպանված և վիրավոր[1]:

Հարկ է նշել, որ վիրավորների բուժման գործը ծայրահեղ վատ էր կազմակերպած Թուրքերի մոտ: Նույնն էր նաև բուլղարների մոտ: Ընդհակառակը՝ սերբերի սանիտարաբժշկական սպասարկումը գործում էր անխափան: Սերբ վիրավորներին հիմնականում փոխադրում էին Բելգրադ: Սանիտարական ջոկատների տրամադրության տակ նորագույն բժշկական սարքավորումներ էին: Կարմիր խաչի շարժակազմերի վագոններից հանվել էին բաժնյակների միջնորմները և դրանք վերածել շրջիկ հիվանդանոցների՝ իրենց պարագաներով:

Ամեն օր Բելգրադի երկաթուղային կայարան էին ժամանում 5-6 շարժակազմեր՝ հարյուրավոր վիրավորներով: Օրինակ՝ միայն հոկտեմբերի 25-ին պատերազմի վայրերից Բելգրադ էր հասել 62 վագոն՝ ամբողջովին լցված վիրավորներով[2]:

Ռազմաճակատում սերբական բանակի հաջողություններին մեծապես նպաստել էին **Ջերնոգորիայի** մարտական ջոկատների ռազմական գործողությունները: Պատերազմի դաշտում չերնոգորցիները ցույց էին տալիս անձնազոհ հերոսականություն՝ ապշահար անելով թշնամուն: Նրանք մեկը մյուսի հետևից թուրքերից ազատագրեցին Դեչիչը (սեպտ. 26-ին), Շեպչանիկը (սեպտ. 28-ին), Տուզին (հոկտ. 1-ին), Բերանան (հոկտ. 3-ին), Հուսեյնին (հոկտ. 6-ին), Լոզենգրադը (հոկտ. 11-ին)[3]: Սերբական մի քանի խոշոր ստորաբաժանումներ միացել էին նրանց: Հաղթահարելով ալբանացիների դիմադրությունը՝ սերբ-չերնոգորյան միացյալ ուժերը շարժվեցին Ադրիատիկ ծովի ուղղու-

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1043, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 237, 25 հոկտեմբերի 1912 թ.:

թյամբ: Որքան նրանք առաջանում էին, այնքան կատաղի էր դառնում ալբան զինյալ ջոկատների դիմադրությունը: Հատկապես արյունալի եղավ չերնոգորցիների կողմից Պլավա քաղաքի գրավման գործողությունը: Կռվի ընթացքում մեկ օրում սպանվեց չուրջ 1000 ալբանացի, որոնց թվում՝ զենքը ձեռքին կանայք ու երեխաներ: Անողոք էր կռվի աստվածը: Շքոթրա լճի վրա չերնոգորցիները գրավեցին թուրքական մեկ չոգենավ և հինգ առագաստանավ, որոնք բեռնված էին զենքով ու պարենով[1]: Հոկտեմբերի 17 (30)-ին Չերնոգորիայի զորքը զորավար Վուքովիչի հրամանատարությամբ գրավեց Իփեկը[2]:

Թուրքերը մեծ կորուստներ էին կրում նաև ռազմաճակատի մյուս հատվածներում: Մալկուչի քաղաքի և շրջակա գյուղերի դեմ կռվում չերնոգորցիները կարողացան այնտեղից քշել թուրքերին, որոնք ունեցան բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ: Այդ հարձակման շնորհիվ թուրքերը հանձնեցին բազմաթիվ գյուղեր[3]:

Թուրքական զորքերի դեմ ծանր կռիվների մեջ էր նաև Բալկանյան դաշինքի մյուս անդամը՝ **Հունաստանը**:

Հունական կառավարությունները վերջին տասնամյակի ընթացքում մեծ աշխատանք էին տարել բանակի վերակազմության ուղղությամբ: 1905-ից սկսած՝ հետևազորքը ստացել էր առաջնակարգ սպառազինություն, 1907-ից բանակը համալրվել էր ֆրանսիական ընտիր հրետանիով ու ռազմանյութերով: Բանակի անձնակազմի թիվը 100.000-ից 1911-1912 թվականներին հասցվել էր 170.000-ի[4]:

Հույն ժողովուրդն իր անկախ պետականությունը ձեռք էր բերել հայրենիքի մի հատվածի վրա միայն: Պատմական Հունաստանի մեծ մասը շարունակում էր մնալ օսմանյան բռնակալման տակ: Բալկանյան պատերազմը հույն ամենալայն զանգվածների

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

մեջ առաջ էր բերել հայրենիքն ամբողջական տեսնելու անկասելի ձգտում:

«Ազատամարտը» գրում էր, որ կամավոր զինվորագրվող հույների բազմություններն այնքան շատ են, որ ցուցակագրողները երբեմն մերժում են կատարել նրանց խնդրանքը: Դա ցույց էր տալիս հույն ազգի կենսունակությունը և միաբանությունը: Ժողովուրդն ու բանակը հոգեբանորեն լավագույն վիճակում էին՝ հանդարտ ու մտազբաղ[1]:

Հույն երիտասարդությունը ձգտում էր օր առաջ իրեն տեսնել ռազմաճակատում:

Իսկ ռազմաճակատում հարձակման անցած հունական բանակը սկսել էր լայնածավալ գործողություններ:

Հենց առաջին օրերին հունական բանակի զորամասերի հարձակումներից հանկարծակիի եկած թուրքական զորամասերը բռնեցին փախուստի ճանապարհը, թեև չուտով վերագտան իրենց և սկսեցին ցույց տալ կատաղի դիմադրություն: Բայց հույների մարտական ոգին անկոտրում էր, թշնամու նկատմամբ ատելությունը՝ անսահման: Հունական զորամասերը անակնկալ գրոհներով բարոյալքեցին թշնամուն և, չնայած մեծ կորուստներին, հասան Սերֆիչե, ապա գրավեցին Կուլինան: Վերիայում (Գարաֆերիա) տարած փառավոր հաղթանակից հետո նրանք չարունակեցին իրենց հարձակումը դեպի Սալոնիկ: Թափանցելով Մակեդոնիայի տարածք՝ հունական զորքը գրավեց Վոտինա-Մանաստրը տանող ճամփի վրա գտնվող Ենիջե քաղաքը, որը Սալոնիկից հեռու էր ընդամենը 50 կիլոմետր[2]:

Հույները որոշ հաջողությունների հասան նաև Էգեյանի ծովամարտերում: Հոկտեմբերի 12 (25)-ի վաղ առավոտյան հունական մի զորաջոկատ ափ իջավ Լեմնոս կղզում և կարճատև գրոհով նվաճեց նրա կենտրոն Լիմնին: Թուրք զինվորներն ու սպաները համարյա առանց դիմադրության գերի հանձնվեցին[3]:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 1027, 13 (26) հոկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 1042, 28 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:

Զնայած հունական ռազմաճակատում գործող թուրքական զորքերի չարքերը համալրվել էին օգնական ուժերով, բայց հույներին հաջողվել էր նրանց սեղմել խալամների կողմից սուրբ քաղաք համարված Ենիջե-Վարդարում: Նոյեմբերի 1 (14)-ի առավոտյան կատաղի կռիվ սկսվեց Վարդարի համար, որը տևեց երկու օր՝ մինչև նոյեմբերի 3-ի վաղ առավոտ: Թուրքական զորքը պարտվելով քաշվեց ու սեղմվեց Փերևազայում[1]: Հույների հետևակին ծովից աջակցում էին ռազմանավերը: Հույները առանց կանգ առնելու գրոհեցին ու մտան քաղաք: «Ազատամարտը» գրում էր, որ «Թուրք զինուորներ և պաշրպոզուկներ» հանկարծակիի եկած սրընթաց փախչում էին Սալոնիկի ուղղությամբ, որը ռազմաճակատից ոտքով մի քանի ժամվա ճանապարհ էր: Փերեվազայում հույների ձեռքն անցան զինապահեստներ, թնդանոթներ, պարեն, հարյուրավոր գերիներ[2]:

Դա այն պահն էր, երբ հույն դաշնակցին օգնության չտապող սերբական առաջապահ զորքերը Սալոնիկից արդեն 40-50 կիլոմետր էին հեռու:

Բայց Սալոնիկը գրավելը հեշտ չէր. գրավված Վերիայից դեպի Սալոնիկ տարածվում էր մի ընդարձակ ճահճային դաշտագետին: Քաղաքը ցամաքի երեք կողմերից պաշտպանված էր հզոր ամրություններով, իսկ Յանիցա-Սալոնիկ հատվածն ակոսված էր արհեստական հսկա հողակույտերով, որոնք, ենթադրաբար, հռոմեական ժամանակներից մնացած արգելապատնեշներ էին: Բայց հունական բանակի հրամանատարության գերազանց մշակած ռազմական պլանի կենսագործումը խոստանում էր կատարյալ հաջողություն:

Այդպես էլ եղավ: Արդեն հոկտեմբերի 20-ի կողմերը Սալոնիկը մեկուսացված էր քաղաքի հյուսիսային գավառներից: Հույների ձեռքում էր Սալոնիկ-Մոնաստիր երկաթգիծը: Քաղաքը պաշտպանող թուրքական զորքը նրանց անընդհատ հարվածներից ուշքի չէր գալիս:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

Մակեդոնիայի առևտրական կենտրոն և օսմանյան կայսրության երկրորդ մայրաքաղաք Սալոնիկի մոտալուտ անկումն առաջ բերեց մեծ հուզում եվրոպական բոլոր մեծ երկրներում: Երեք ժամ տևած հրետանային կործանիչ հարվածներից հետո հունական զորքը հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 9-ին) արյունալի մարտերով վերջապես ներխուժեց Սալոնիկ: Թուրք զինվորները մտածում էին միայն կյանքը փրկելու մասին. նրանք խմբերով փախուստ տվեցին քաղաքից կամ հանձնվեցին հաղթողների ողորմածությանը: Քաղաքի հանրային բոլոր հաստատությունների, բյուզանդական հին եկեղեցիների վրա պարզվեցին հունական դրոշներ: Քաղաքում հաստատվեց արտակարգ դրություն:

Մակեդոնիայի բոլոր խնդիրներից Սալոնիկի հարցը ամենասուրն էր, ամենախնդրահարույցը: Բանն այն էր, որ Սալոնիկը հունա-հրեական քաղաք էր: Թուրքերն այդ երկու ազգային խմբերին միշտ հանում էին իրար դեմ՝ խորացնելով հակասությունները հասարակական և առավելապես առևտրական մրցակցության բնագավառներում: Ահա թե ինչու քաղաքը գրավելուց անմիջապես հետո հունական կառավարությունը իր զորքերի հրամանատարությանը անմիջապես հրահանգեց Սալոնիկի հրեա բնակչությանը համոզել, որ նրանք հունական իշխանության պայմաններում վայելելու են կատարյալ ազատություն և հավասարություն: Միաժամանակ հունական թագավորության հրեական համայնքները Սալոնիկի իրենց ազգակիցներին ուղարկեցին համակրական հեռագրեր՝ նրանց կոչ անելով հաշտ լինել հունական նոր իշխանությունների և քաղաքի հույն բնակչության հետ[1]:

Սալոնիկի գրավումը ստրատեգիական խոշոր նշանակություն ունեցավ Հունաստանի համար, դրանով նաև խափանվեցին բալկանյան դաշնակիցների պարտության դեպքում այդ նավահանգստի նկատմամբ հավակնություններ ունեցող Ավստրիայի նկրտումները[2]:

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 16 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

Հունական զորքերը համարյա միաժամանակ գրավեցին Կարաբուրունի բերդը: Երբ հակառակորդի զինվորների զինաթափումը վերջացավ, մի խումբ թուրք զինվորներ օգ հանեցին հրետանու զորանոցի մոտ գտնվող ռազմամթերքի պահեստները, որպեսզի դրանք չընկնեն հակառակորդի ձեռքը: Այս պայթյունին զոհ գնացին կամ վիրավորվեցին պահեստների մոտերքում գտնվող հարյուրավոր թուրք զինվորներ[1]:

Հունական բանակը ութ ժամ տևած կռվից հետո՝ նոյեմբերի 1 (14)-ին, գրավեց Յանինայից հյուսիս գտնվող Մեցովո քաղաքը[2]: Նույն օրը Հունաստանի թագավոր Գեորգ Ա-ն ճանապարհ ընկավ դեպի հունական բանակի կողմից ազատագրված Մակեդոնիայի հունաբնակ տարածքներ: Լարիսայից մինչև Սերֆիչե, Էլասոնիայից մինչև Քոզանիա ճանապարհների ամբողջ երկայնքով նրան՝ որպես ազատարարի, դիմավորում էին խանդավառ ցույցերով, կեցցեներով ու օրհնություններով:

Եթե ռազմաճակատում հունական զորքերի հաղթանակները եվրոպական տերությունների կառավարական շրջանների խիստ անհանգստության պատճառ էին դարձել, ապա, ընդհակառակը, դրանք առաջ էին բերել բալկանյան դաշնակիցների, եվրոպական առաջադեմ հասարակայնության, ռուսական պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջանների և նույնիսկ Եոյակ զինակցության անդամ հարևան Իտալիայի հասարակական լայն շերտերի ջերմ համակրանքը: Զէ՞ որ իր իսկ արյան գնով օտարի ծանր լծից վերջապես ազատագրվում էր հույն ժողովրդի մի մեծ հատվածը, այն ժողովրդի, որը հեռավոր ժամանակներում գիտության ու կրթության փարոս էր եղել մոտիկ և հեռու շատ ժողովուրդների համար:

Պատահական չէր, որ հույն ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին նրան շատերն էին օգնության հասնում՝ դրամով, ռազմամթերքով, կամավորներով: Այսպես, Իտալիայում հույն ժողովրդին օգնելու շարժման մեջ ընդգրկվել էին

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

երկրի հասարակական ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներ: «Ազատամարտ» թերթը հաղորդում էր, որ հունական բանակում ծառայելու համար Իտալիայից Աթենք են հասել 1500 գարիբալդիական կամավորներ, որոնց թվում է զորավար Ռիչոթթի Գարիբալդին՝ իր կնոջ և աղջկա ընկերակցությամբ[1]:

Թուրքիային պատերազմ հայտարարելիս բալկանյան միացյալ պետությունները չէին կարող նույնիսկ ենթադրել, թե իրենք այդպիսի արագությամբ, մեկ ամսից մի քիչ ավելի ժամանակահատվածում կարող են այդքան փայլուն հաղթանակներ տանել: Հակառակորդի զորքերը նահանջում էին խուճապահար: Այրված գյուղերը և հազարավոր դիակներն էին սփռված թուրքերի նահանջի ուղիներին: Թուրքերի ոգևորությունը արդեն չքացել էր. Կ. Պոլսի բնակչությունն այլևս հավատ չէր տածում Նազըմ փաշայի հաղթանակների մասին հեռագրերին[2]:

Պատերազմի տխուր երևույթներից էր այն, որ Թուրքիայի հասարակությունը սկզբից ի վեր դրվել էր անգետ վիճակում՝ ինքնագոհ, ինքնավստահ, անտարբեր ու արհամարհող: Եվ զարմանալի չէր, որ թուրքական բանակի այս հերթական խոշոր պարտությունից հետո հիասթափությունը եղավ կատարյալ:

Թուրքիան, որ վաղուց կորցրել էր գերտերության իր համբումը, օսմանյան հեղափոխությունից հետո տակավին կարողացել էր պահպանել անցյալից մնացած մի կարևոր ժառանգություն, մի հանգամանք, որ այս կամ այն չափով նրան հնարավորություն էր տալիս Եվրոպայի առջև հեղինակություն ունենալու: Դա, այնուամենայնիվ, զինական ուժն էր:

Բայց հիմա պատերազմի քմահաճ աստվածը, ինչպես ուրիշ շատ դեպքերում, այս անգամ նույնպես դրսևորեց իր անկանխատեսելի կամքը. «հիվանդ մարդը» կորցրեց նաև իր միակ նեցուկ զինվորական ուժը, որի վրա նա ամեն անգամ կարողանում էր հենվել, երբ հարկ էր լինում մտնել եվրոպական պետությունների քաղաքական շահերի հավասարակշռությունը պահ-

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1042, 28 հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 242, 31 հոկտեմբերի 1912 թ.:

պանելուն ուղղված դժվարակնճիռ ոլորտը: Կասկած չկար, որ զինվորական ուժի անկման հետ Թուրքիան արագորեն մոտենալու էր քաղաքական սնանկության վերջաբանին:

Հակառակ դրան՝ Քառյակ դաշինքի երկրները ցնծում էին եղակի հաղթանակների գինովության մեջ: Սվինների ուժով նրանք արժանացել էին մոտիկ ու հեռու բարեկամների ծափերին: Դա հատկապես վերաբերում էր բուլղար զինվորին, որն անմահացրել էր իր զինվորական տաղանդը:

Պատերազմական գործողությունները լայնորեն նկարագրվում էին Թուրքիայի մամուլի օրգաններում, այդ թվում՝ հայ մամուլի էջերում: Հատկապես պոլսահայությունը չունչը պահած ռազմադաշտից ժամ առ ժամ տեղեկությունների էր սպասում: Պոլսահայ թերթերի՝ «Բյուզանդիոնի», «Ժամանակի», «Արևելքի», «Ազատամարտի» օրինակները ձեռքից ձեռք էին անցնում, մեծապես աճել էին դրանց տպաքանակները: Ռուբեն Զարդարյանը Ամերիկայում գտնվող Սիմոն Վրացյանին գրում էր, որ եթե պատերազմից առաջ «Ազատամարտի» տպաքանակը մոտ 1700 էր, ապա «այսօր Պոլսո մեջ կը ծախուի 6000»[1]:

Թուրքական բանակի աներևակայելի պարտությունների մասին «Դրօշակը» գրում էր. «Տասնհինգ օրւայ մէջ ահռելի արագութեամբ փուլ եկան Թիւրքի վաղեմի ռազմիկի համբաւն ու վերջին չորս տարիների մէջ վերակազմւած բանակի կարողութեան ենթադրութիւնները, նրա վրայ դրւած յոյսերը:

Կազմալուծումն՝ իր բոլոր ճիւղերի մէջ...

Փախչում է թշնամու առջեւից քաղցած, անվարժ, հայրենիքի պաշտամունքից զուրկ, պետութեան վրայ հաւատքը կորցրած զինւորը. փախչում է փափկասուն, անփորձ ու այլասեռւած սպան»[2]:

Բալկանյան պատերազմը լայն արձագանք էր գտնում ոչ միայն Թուրքահայ թերթերում, այլև հայ գաղթաշխարհի և Կովկասի մամուլի հայ օրգաններում: Կովկասահայ թերթերն իրենց

---

[1] ***«Վեմ»**, № 1, հունվար-փետրվար, 1935, էջ 90, 91:*

[2] ***«Դրօշակ»** (Ժնև), № 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1912, էջ 280:*

էջերում բացել էին հատուկ սյունակներ՝ նվիրված ռազմաճակատից ստացած լուրերին, մեկնաբանություններով հանդես էին գալիս հասարակական-քաղաքական նշանավոր գործիչներ: Իր խորհրդածությունները ընթերցողների հետ «Մշակում» կիսում էր պատմաբան Առաքել Բաբախանյանը (Լեո), «Հորիզոնի» էջերում պատերազմի ընթացքը լուսաբանում էր գրականագետ Նիկոլ Աղբալյանը:

Առաջին օրերին օսմանյան կայսրության արևելյան շրջանների քրիստոնյաների մտահոգությունը մեկն էր՝ սկսված պատերազմը կսահմանափակվի Մակեդոնիայի ժողովուրդների խնդրով, թե՞ կվերաճի Արևելյան հարցի: Բալկանյան փոքր ժողովուրդների հերոսական հաղթարշավը նրանց ապագայի հույսեր էր ներշնչում: «Մի քանի օրից հետո մենք ականջալուր վկա կլինենք նշանավոր դեպքերի, որոնց վիճակված է մեծ դեր խաղալու Թուրքահպատակ քրիստոնյաների ճակատագրի որոշման մեջ»[1],- խոր լավատեսությամբ նշում էր Նիկոլ Աղբալյանը:

Ավետիք Իսահակյանը 1912 թ. նոյեմբերի 4-ին Ցյուրիխից (Շվեյցարիա) Ամերիկայում գտնվող Սիմոն Վրացյանին գրում էր.

«... Տեսա՞ր Թուրքիոյ գլխին ինչ պայթեց. կործանվեց, գնաց, խայտառակվեց: Այժմ էլ չկա Թուրքիա, այլ Մարոքի, Պարսկաստանի նման մի երկիր: Խնդիրը մեր դրությունն է - հայերիս: Մակեդոնացի, բուլղար, հույն, սերբ և ալբան կազատվեն, և մնում ենք մենք: Երևի ամբողջ ուժով Թուրքը մեր վրա է ընկնելու...»[2]:

Բալկանյան չորս դաշնակիցների հաղթանակները հեշտությամբ չէին ձեռք բերվել: Պատերազմող երկու կողմերն էլ տվել էին մարդկային հսկայական կորուստներ: Արժանահավատ աղբյուրները հաղորդում էին, որ բուլղարական բանակը կռիվների երեք չաբաթների ընթացքում կորցրել էր 100.000 զինվոր,

---

[1] **«Լրաբեր հասարակական գիտությունների»**, № 2 (590), մայիս-օգոստոս, 1995, էջ 18:

[2] **Սիմոն Վրացեան**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 121:

ներառյալ վիրավորները: Սերբերի կորուստները նույն ժամանակ կազմում էր 20.000, հույներինը՝ 12.000, չերնոգորցիներինը՝ 3000 մարդ: Այլ խոսքով՝ կռիվների առաջին երեք շաբաթների ընթացքում բալկանյան դաշնակիցների կորուստները մոտենում էր 150.000-ի[1]:

Զնայած այդ հսկայական կորուստներին՝ բալկանյան միությունն այդ պահին ուներ 700.000 զինվոր ու սպա[2]:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

Ռազմաճակատի բոլոր հատվածներում ինչպես Թուրքական, այնպես էլ բալկանյան դաշնակիցների բանակներում կռվում էին հազարավոր հայ զինվորներ:

ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Օսմանյան բանակի զինված ուժերում հայերի թիվը կազմում էր զինվորների ընդհանուր թվի 4%-ը, որոնց չուրջ 60%-ը նետված էր կռվի դաշտ:

Եվ այսպես՝ ճակատագրի հեգնանքով Թուրքական բանակի շարքերում գտնվող հայերը կռվում էին նաև դաշնակից բանակների կազմում գտնվող հայերի դեմ: Նրանք դեմ հանդիման գնդակներ էին արձակում միմյանց վրա՝ ակամայից դառնալով եղբայրասպաններ: Ով գիտե, թե մարտերի ընթացքում քանի հայ է զոհվել հայի գնդակից:

Հայերը և ընդհանրապես քրիստոնյաները ծառայում էին Թուրքական բանակի տարբեր զորամասերում, բայց հատկապես հետևազորում (յայա): Եթե մարտերից առաջ Թուրք զինվորները զբաղված էին զենքերը կարգի բերելով, հայ զինվորները կա-

---

[1] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 9 (1055), 10 (23) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

տարում էին խրամատ փորողի (լաղրմջե) ծանր աշխատանքը, իսկ մարտից հետո՝ գերեզմանափորի (մեզարջը) պարտականությունը: Հակառակ պոլսահայ թերթերի պատկերացումների՝ ռազմաճակատում հայ զինվորների վիճակն անտանելի էր. նրանք ենթակա էին ազգայնամոլական խտրականության ու արհամարհանքի: Բալկանյան դաշնակիցների ամեն մի հաղթանակ նրանց վրա էր թափում խլամ զինվորների նախատինքի ու հայհոյանքների տարափը, ավելին՝ հաճախ հնչում էին քրիստոնյա և առաջին հերթին հայ զինվորներին կոտորելու կոչեր:

Պատերազմի սկզբին թուրքերից շատերը մտավախություն ունեին, թե հայ զինվորները ռազմաճակատում չեն ցուցաբերի հայրենասիրական եռանդ և հարմար պահերին կանցնեն հակառակորդի կողմը, քանի որ դաստիարակված են թուրքերի նկատմամբ ատելության ոգով, և ինչպես բոլոր հայերը, նրանք նույնպես երազում են կործանված տեսնել օսմանյան միասնական պետությունը և դրա փլատակների վրա ունենալ սեփականը:

Հայկական մամուլն այդպիսի մտավախությունը համարում էր անտեղի և վնասակար: «Ասիկա անարդար կարծիք մըն է»[1],- գայրացած էր «Ժամանակ» թերթի հոդվածագիրը:

Դաշնակցության «Բութանիա» թերթը գրում էր. «Շնորհիւ իրենց թէ՛ հոգեկան, թէ՛ զինուորական ընդունակութիւններուն՝ հայերը ի վիճակի են մեծ չափերով նպաստելու օսմանեան կայսրութեան քաղաքակրթութեան եւ զինուորական ուժին: Հայերը՝ մանաւանդ այն պատճառով որ չունին իրենց սեփական պետութիւն մը, ուեւէ առանձին շահ չեն կրնար ունենալ անջատման ձգտելու օսմանեան պետութենէ: Բաւական է որ անոր մէջ ստեղծուին իրենց ազգին անարգել զարգացման համար հաւասարութեան ու արդարութեան վրայ հիմնուած պայմաններ»[2]:

Թուրքահայ շատ գործիչներ և մամուլի համարյա բոլոր օրգանները սին հույսեր էին փայփայում, որ եթե հայ զինվորները լավ կռվեն և արժանանան թուրք զինվորական ու քաղաքացիա-

---

[1] **«Ժամանակ»**, № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Բութանիա»**, № 10, 11 (24) նոյեմբերի 1912 թ.:

կան իշխանությունների գովեստներին, ապա դա արմատապես դեպի դրականը կփոխի հայության նկատմամբ նրանց վերաբերմունքը:

Կ. Պոլսի հայ ազգային իշխանությունների ու մամուլի կարծիքով թուրքահայությանը օդի ու ջրի պես պետք էր ռազմաճակատում հայ զինվորների քաջությունը: Նրանք չարունակում էին հայ հասարակությանը համոզել, թե ռազմաճակատներում հայորդի զինվորները պարտավոր են թուրքական իշխանություններին ցույց տալ, թե իրենք որքան նվիրված են օսմանյան հայրենիքին, այսինքն՝ նրանք կյանքի գնով պարտավոր են ապահովել թիկունքում գտնվող հարազատների անվտանգությունը: «Ո՞վ գիտէ որքան նահատակներ իրենց կեանքը զոհած են այն հայրենիքին համար, որ իրենց ազգակիցները երջանիկ ապրելու յոյս ունին միշտ»,- գրում էր «Աւետաբերը» և չարունակում, թե ռազմաճակատներում հայ զինվորների կռիվը և օսմանյան հայրենիքի համար զոհվելը կբարձրացնեն հայության արժեքը թուրքական կառավարության և թուրք հասարակության աչքում: «Հայ ազգը թող իր բոլոր միջոցներով մշակե իր զինուորական կարողութիւնները ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան համար... Երբ մենք ամէն բան մոռնալով միմիայն ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան կը նուիրուինք, կարծեմ թէ մեր այս ծառայութիւնն ալ չեչտելու եւ անոր համաձայն մեր վիճակին բարւոքում պահանջելու իրաւունք կունենանք»[1]:

«Աւետաբերը» գրում էր. «Օսմ[անեան] կայսրութեան դէմ մղուած ներկայ պատերազմին հայերուս մասնակցութիւնն ամէնէն փայլուն ապացոյցներէն մէկն է պաշտպանելու համար այն սկզբունքը թէ հայերը ո՛րչափ անկեղծութեամբ եւ իրենց տրամադրելի բոլոր ոյժերով այս կայսրութեան սերտիւ կապուած են: Իրաւ է թէ բոլոր եղբայրներուն ցուցադրած զինուորական ընդունակութիւնները այնքան գնահատուած են, որ մենք ալ անոնցմէ պէտք չէ ետ մնանք»[2]:

---

[31] ***«Աւետաբեր»***, *№ 45, 9 նոյեմբերի 1912 թ.:*

[31] *Նույն տեղում:*

Եվ որպես ընդօրինակման արժանի՝ հայ մամուլը մատնացույց էր անում Հայաստանի հայերին պատուհասող քրդերին: Սրանց համար բալկանյան պատերազմը լավ առիթ էր մեկ անգամ ևս ցույց տալու իրենց ջերմեռանդ նվիրվածությունը մահմեդականությանը, նրա առաջնորդ սուլթան-խալիֆին, իրենց հավատարմությունը Թուրքական իշխանություններին: Օսմանյան պառլամենտի սենատի անդամ, քրդական հայտնի շեյխ Աբդուլ Գատերը իր ազգակիցներին դիմում էր հետևյալ խոսքերով. «Հայրենիքը վտանգի տակ է, կրոնքի թշնամին մոտեցել է: Նրա նպատակն է խալիֆայութեան աթոռին վերջին հարուածը տալ: Համոզուած եմ, որ քիւրտերը, որոնց սիրտերը հայրենասիրութեամբ կը վառին, որոնց քաջութիւնը հանուր աշխարհի ծանոթ է եւ որոնք կրօնքի համար պատրաստ են զոհուիլ, պիտի փութան իրենց հայրենակիցներուն հետ իբր մէկ մարդ, սահմանագլուխ վազելու»[1]:

Բայց միշտ չէ, որ օսմանյան բանակի հրամանատարները գոհ էին լինում իրենց կրոնակիցներից: Թուրքական մամուլի շատ հրապարակումներից երևում էր, որ ռազմաճակատում քրդերն իրենց այնպես խրոխտ չեն պահում, ինչպես Հայաստանի նահանգներում:

Ռազմաճակատի բոլոր հատվածներում հայ զինվորները օրինակելի կատարում էին օսմանյան քաղաքացու իրենց զինվորական պարտքը, ցույց էին տալիս խիզախության բազում օրինակներ: Ամեն օր նրանցից շատերը քաջի մահով ընկնում էին հանուն Թուրքիայի, որը չարունակում էր տանջարան մնալ իրենց ազգի համար:

«Բիւզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչեյանը թերթի № 5018-ում տպագրած ընդարձակ հոդվածում ցույց էր տալիս պատերազմում Թուրքական բանակի հայ զինվորների անկոտրում մարտական ոգին, անձնազոհությունը հանուն օսմանյան հայրենիքի:

Կռիվների ընթացքում Թուրք հրամանատարները կրկին տե-

---

[1] **«Ժամանակ»,** № 1343, 19 հունվարի (1 փետրվարի) 1913 թ.:

սան ու համոզվեցին, թե ինչպիսի քաջ զինվորներ են հայերը, քանզի նրանք ցույց տվեցին, որ զենք գործածելու իրենց հմտությամբ, խիզախությամբ ու անձնազոհությամբ ոչ միայն չէին զիջում թուրք զինվորներին, այլև մեծապես գերազանցում էին նրանց: Հօդս ցնդեց թուրքերի այն կարծիքը, թե հայերը՝ «արևելքի այդ հրեաները», անընդունակ են մեծ կռիվներում իրենց որպես լիարժեք զինվոր դրսևորելու:

Պատերազմի ռազմաճակատներում թուրքական բանակի քրիստոնյա և առանձնապես հայ զինվորների քաջագործությունների մասին իր ընթերցողներին պարբերաբար տեղեկացնում էր ***Թուրքահայ մամուլը****:*

Կ. Պոլսի հայկական թերթերն օրեցօր տպագրում էին հեռագրական գործակալությունների հայթայթած լուրերը, թուրքական, եվրոպական և ռուսական մամուլի արժեքավոր հրապարակումները: «Ազատամարտը» պարբերաբար լույս էր ընծայում նաև ռազմաճակատում գտնվող իր սեփական թղթակիցների հաղորդումները: Իսկ Բուլղարիայում և Սերբիայում հավատարմագրված էին կովկասահայ «Մշակ», «Հորիզոն», «Կովկասի լրաբեր» թերթերի թղթակիցները: Բազմաթիվ հայ հասարակական-քաղաքական գործիչներ ռազմաճակատներից ստացված լուրերի հիման վրա օրեցօր հանդես էին գալիս մեկնաբանություններով: Կովկասում, օրինակ՝ հատկապես աչքի էր ընկնում Նիկոլ Աղբալյանը, որը պարբերաբար տպագրում էր փաստարկված ու տրամաբանված հոդվածներ, որոնք մեծ հետաքրքրություն էին առաջացնում ընթերցողների մեջ: 1912 թ. հոկտեմբերի կեսերից սկսած «Հորիզոն» թերթում «Թուրքիան և հայերը» խորագիրը կրող հոդվածաշարով նա համակողմա-*

** Պատերազմի առաջին չաբաթներին Պոլսի թերթերից ոչ մեկը իրավունք չէր ստացել ռազմադաշտում թղթակից ունենալու: «Ազատամարտը» առաջինն էր, որ կարողացել էր բացառիկ արտոնությամբ թղթակից ունենալ ռազմաճակատում՝ հանձին թերթի աշխատակից Հակոբ Սիրունու (Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 12, հոկտեմբեր, 1924, էջ 123): Որոշ ժամանակ անց կառավարության թույլտվությամբ «Ազատամարտը» Բալկաններում ունեցավ երկրորդ թղթակիցը՝ հանձին Մ. Փափազյանի:*

նիորեն քննում էր սկսված պատերազմի հնարավոր հետևանքները Թուրքահայության կյանքի վրա, հայերի ու քրդերի նկատմամբ Թուրքական կառավարության ընտրողական մոտեցումները, առաջիկայում Թուրքերից ու քրդերից սպասվող հակահայկական գործողությունների հետևանքները:

«Ազատամարտի» Թղթակիցներից մեկը հանդիպել էր պատերազմի դաշտից Կ. Պոլիս վերադարձած վիրավոր Թուրք սպաների հետ և նրանց շրջանում հարցապնդումներ անցկացրել՝ պարզելու համար, Թե ռազմաճակատում իրենց ինչպես են դրսևորում օսմանյան բանակի քրիստոնյա զինվորները: Համարյա բոլորի պատասխանը մեկն էր եղել. կռվի ընթացքում նրանք ընդհանուր առմամբ ցուցաբերում են անձնվիրություն և պարտաճանաչություն: Սպաներից մեկը հիացմունքով էր խոսել Թուրքական զորամասերից մեկի Յուվան անունով բուլղար զինվորի մասին, որը «օսմանեան անԹերի հայրենասիրությամբ» կռվում էր Թուրք-բուլղարական ճակատում: Նա պատմում էր, որ այս բուլղար զինվորը հրաման էր ստացել զինամթերքով լի սնդուկները հասցնել կրակի գիծ: Գնդակների տարափի տակ նա կատարել էր առաջադրանքը: Երբ նա արդեն ուժասպառ էր եղել, վերջին սնդուկը Թոկերով կապելով մարմնին՝ սողալով քարշ էր տվել կրակի գիծ: Մի ուրիշ Թուրք սպա հայտարարել էր, որ իր հրամանի տակ գտնվող բոլոր հույն զինվորները կռվել են արիաբար, շատերն էլ ընկել են քաջի մահով: Ուրիշ սպաներ ռազմաճակատում Թուրքական բանակի հույն և բուլղար զինվորներին անդրադառնալիս ասել էին, որ, այնուամենայնիվ, նրանց Թվում քիչ չեն նաև դասալիքները[1]:

Իսկ Թուրքական բանակի հայ զինվորնե՞րը: «Նրանք բանակի քրիստոնյա զինվորներից ամենաքաջերն են, ամենապարտաճանաչները»,- ասել էին Թուրք հրամանատարները: «Նրանց բոլորի մասին կը խոսին մեծ գովեստով և զմայլանքով»[2],- գրում էր «Ազատամարտը»:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 Թ.:

[2] Նույն տեղում, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 Թ.:

Ով ճակատագրի հեգնանք: Հայը ստիպված էր իրեն հոչոտող Թուրքերի շարքերում կռվել ազատարարների դեմ, որպեսզի հետո արդեն գթություն աղերսեր և ազատություն մուրար նույն բռնադատողներից:

Իրենց քաղաքացիական պարտքն անթերի էին կատարում նաև Թիկունքի հայ զինապարտները:

Երամյանը վկայում է, որ Թիկունքում գտնվող օսմանյան բանակի հրամանատարներից ոմանք նույնպես երբեմն-երբեմն գովեստի խոսքեր էին հնչեցնում ռազմաճակատ գնալու իրենց հերթին սպասող հայ զինակոչիկների հասցեին: Նա գրում էր. «Ես իմ ականջներովս լսեցի անկեղծ գովեստներ Վանի զինուորական հրամանատար Ճապիր փաշայի բերնեն..., որը մեր դպրոցի հիւրասրահին մէջ տեսնելով տասնեակ մը հայ զինուորներ, ոմանք տասնապետ եւ յիսնապետ, հրապարակաւ եւ ի ներկայութեան այլ հիւրերու եւ իրեն ընկերացող Թուրք սպայից, յիշեց հայ զինուորներու հաւատարիմ ծառայութիւնները, քաջութիւնները եւ մասնաւորապէս թնդանօթաձիգներու ճարտար նշանառութիւնները՝ ամիս մը առաջ տեղի ունեցած մէկ ռազմափորձին մէջ՝ ի ներկայութեան Երզնկայի Դ. զօրաբաժնի գերագոյն հրամանատար՝ Թաթար Օսման փաշայի»[1]:

*Հայ զինվորների սխրանքների մասին բազմիցս անդրադարձ է եղել **Թուրքական մամուլում:***

Լոնդոնում Թուրքիայի դեսպան Իսմայիլ Հաջի բեյի որդին, գերմանական «Օսմանիչեր Լլոյդ»-ում անդրադառնալով հույների կողմից Յանինայի (Յանյա) պաշարմանը, գրում էր, որ ի հակադրություն Թուրքական զորքերի շարքերում գտնվող ալբան ջոկատների վախկոտության՝ հայերը այդտեղ դրսևորեցին քաջություն ու հաղթելու մեծ կամք: «Յանինայի համար կռվում,- չեչտում էր նա,- օսմանյան գնդերում մի քանի հարյուր հայեր կային, որոնք կռվում էին անվեհերաբար: Պահակ կանգնած մի հայ զինվոր սպայի առաջ ողջույն տալիս հոգնածու-

---

[1] ***Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, Բ հատ., էջ 154:*

թյունից երերաց, հենվեց հրացանին և հառաչեց: Թեև ծնկները դողացին, բայց նա **ոգի ի բռին** իրեն կանգուն պահեց: «Զե՞ս կարող ավելի ուղիղ կանգնել»,- հարցրեց սպան: «Ուժերս ինձ դավաճանել են,- եղավ պատասխանը: - Բայց փույթ չէ: Ես գետին փովելով թող կործանվեմ, միայն թե կանգուն մնա մեր տերությունը»: Մի ուրիշ հայ զինվոր, արդեն չորս տարի ծառայած, ինձ ասաց, որ էլի չորս տարի կուզենար ծառայել, միայն թե տերության թուրը միշտ սուր և կտրուկ մնար: Պահեստի մի հայ սպա՝ Օհանես էֆենդին, որը մինչ այդ երկու անգամ կռվում վիրավորվել էր, մարտի ժամանակ ալբան ռեդիֆներին զայրացած ասել էր. «Տեսեք, ես մի հայ եմ և այստեղ եմ եկել հեռվից, որպեսզի պաշտպանեմ ձեր երկիրը, իսկ դուք վախկոտաբար փախչում եք»: Ապա մարտի էր նետվել՝ գոչելով. «Դե՛հ առաջ: Կեցցե՛ օսմանյան տերությունը»: Ընկածների ցանկում կային բազմաթիվ հայ անուններ, դրանց թվում նաև Օհանես էֆենդու անունը: Հայերն իրենց փառքով պսակեցին Յանինայի կռիվները: Մենք այդ քաջերին չպետք է մոռանանք: Այդ չարաբաստիկ կռիվների պատմության մի քանի պատվավոր էջը նրանց է պատկանում: Իրենց մահմեդական զինեղբայրներից արիության ու տոկունության տեսակետից նրանք հետ չմնացին: Նրանց հետ իրենք էլ սով ու տառապանք կրեցին և նրանց տանջանքին եղան մասնակից: Հայ ազգին վայել է ամենամեծ պատիվը»[1]:

Հունական զորքերի դեմ Յանինայի պաշտպանության կռիվներում իր քաջությամբ ամբողջ ռազմաճակատում հայտնի դարձավ մի ուրիշ հայ սպա՝ Էսկիշեհիրցի Տիգրան էֆենդին, որը ալբաններից կազմված մի գումարտակի հրամանատարն էր[2]: Անձնական քաջությամբ նա զարմացրել էր իրեն ենթակա զինվորներին:

Այս ճակատում իրենց անձնազոհությամբ առանձնապես աչքի էին ընկել հայ թնդանոթաձիգները[3]:

---

[1] **«Օսմանիշեր Լլոյդ»**-ում լույս տեսած այդ հոդվածի հայերին վերաբերվող մասի թարգմանությունը տե՛ս **«Մշակ»** № 198, 20 հուլիսի 1912 թ.:

[2] Տե՛ս **Արամ Անտոնեան**, նշված աշխ., էջ 891:

[3] Նույն տեղում, էջ 892:

Մի ուրիշ հայտնի թուրք գործիչ՝ Համդուլլահ Սուբհի բեյը, «Իկդամ» թերթում գրում էր, որ ռազմաճակատում «մեր բանակի հայ զինուորներն ամենամեծ դիւցազնութեամբ կը կռուեն...»[1]:

Նույն «Իկդամ» թերթում թուրք հեղինակներից մի ուրիշը նշում էր. «Այսօր հայոց իբրեւ զինուոր ցոյց տուած դիւցազնութիւնը եւ պատերազմելու եռանդը, իբրեւ դարերէ ի վեր հաւաքուած ոյժ մը, որ չէ սպառած, լաւագոյն արդիւնքներ կուտայ՝ գործածուելով ի նպաստ»[2]:

Թուրքական մամուլի առանձին օրգաններ տպագրում, իսկ հայկական թերթերն արտատպում էին հայ զինվորների մարտական սխրանքների մասին հաղորդումներ: Օրինակ՝ «Ժամանակում» կարդում ենք, որ երբ թուրք զորավար Մահմուդ Մուխտար փաշան կռվի ընթացքում ծանր վերք էր ստացել և ձիուց վար ընկել, առաջինն անմիջապես վրա էր հասել Հակոբ անունով մի հայ զինվոր և վիրավորին չալակն առած՝ տարել էր 500 մետր և ապահով մի վայրում կապել նրա բաց վերքը[3]:

Մակեդոնացիների և բուլղարների կողմից գերի վերցված թուրքական բանակի երկու հայ զինվորների՝ Գասպար Կավինճյանի և Գրիգոր Դավթյանի մարտական սխրանքների և ոդիսականի մասին ընդարձակ ներկայացրել էր «Դեյլի Տելեգրաֆի» շրջիկ թղթակից Մ. Ա. Պոմոնը[4]:

Արշակ Զոպանյանի արխիվում պահպանվում է մի թուրք սպայի «Հայն անպարտելի է» վերտառությամբ անտիպ հոդվածը, ուր նա տեսակետներ էր հայտնում հայ ժողովրդի մասին: Սպան գրում էր, որ հայ մարդն անընկճելի է, նրա պայքարող ոգին՝ անկոտրում: Իր միտքը հաստատելու համար նա բերում էր մի շարք օրինակներ բալկանյան պատերազմից[5]:

---

[1] Թարգմանությունը տե՛ս **«Ժամանակ»**, № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1278, 15 (28) նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում, № 1266, 3 (16) նոյեմբերի 1912 թ.:

[5] Տե՛ս ԳԱԹ, Արշակ Զոպանյանի ֆոնդ, թղթ. 550, բաժին X, թ. 8:

Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթը տեղեկացնում էր, որ Մեզիրեում տեղի ունեցած հրապարակային մի բանախոսության ժամանակ Իթթիլաֆի նշանավոր գործիչներից Մեհմեդ Ալի բեյը ուշագրավ ճառ էր արտասանել, որի ընթացքում գովաբանական խոսքեր էր հնչեցրել հայության հասցեին: Նշված թերթը թարգմանաբար մեջբերել էր այդ ճառից հատվածներ:

Դիմելով ներկաներին՝ Մեհմեդ Ալի բեյն ասել էր. «Օսմանցիներ, հայրենիքը ճգնաժամի մէջէն կ'անցնի, պատերազմը կը շարունակուի: Սուրին բախտը չժպտեցաւ մեզի: Մեր արհամարհած թշնամիները, մեր անհոգութենէն օգտուելով, մեր քաղաքները իրարու ետեւէ գրաւեցին եւ մայրաքաղաքին կ'սպառնան...: Բոլոր այս չարիքը մեր անխոհեմ ընթացքէն եւ ցեղային անհամերաշխութենէն առաջ եկան: Մենք չյարգեցինք տարբեր ցեղերու իրաւունքներն ու օրինաւոր պահանջները»: Այնուհետեւ ճառախոսն ասում է, որ այսօր զրույցներ են շրջում, թե թուրք հասարակությունը պատրաստվում է հայ ցեղը ջարդելու ու թալանի մատնելու: Դա համարելով խելագար մտքերի արդյունք՝ նա շեշտում էր, որ այդպիսի մարդիկ կարող են երկիրն առաջնորդել դեպի լիակատար կործանում[1]:

Հայերին համարելով օսմանյան երկրի ճշմարիտ հայրենասերներ՝ բանախոսը շեշտել էր, որ նրանք տառապած ժողովրդի զավակներ են: Չնայած դրան, չնայած կրած մեծ անարդարությունների, «հակառակ մեր ապերախտ վարվելակերպին»՝ նրանք միշտ եղել են իրենց անձնուրաց հայրենակիցները:

*«Իրենց զինուորները օրինակելի անձնաւորութիւն մը եւ քաջութիւն ցոյց տուին բանակին մէջ: Պատերազմի ամէնէն կատաղի կռիւներուն մէջ անոնք չընկրկեցան, ոչ ալ նահանջեցին, այլ արիաբար դիմադրեցին թշնամիին եւ իրենց **կուրծքէն վիրաւորուած** ինկան: Հայրս եւ եղբայրներս պատերազմի դաշտէն գովեստներ կ'գրեն միշտ հայերու մասին այս անօրինակ քաջութեան համար: Մենք կոյր պէտք է ըլլանք չտեսնելու ասոնք, եւ չգնահատելու անոնց մատուցած ծառայութիւնները: Երէկ մու-*

---

[1] *Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 4945, 16 (29) հունվարի 1913 թ.:*

նետիկը **Կարմիր մահիկի** նպաստի համար կոչ մը կ'ուղղէր հասարակութեան, որպէս զի հագուստեղէններու, վիրակապերու նուէրներով եւ դրամական նպաստներով օժանդակենք կատարուելիք հանգանակութեան: Մեր հարուստները, մեր **պեյերը** խուլ ու անկարեկիր մնացին այդ կոչին: Առաջին նուէրը որ այս առտու կուսակալին յանձնուած էր՝ **Հայ ծեր կնոջ մը կողմէ էր**. ան էր որ ծրար մը հագուստեղէն եւ ոսկի մը նուէր տալով ըսած էր, Փաչա հաճեցէք ղրկել այս չնչին նուէրը մեր վիրաւոր զաւակներուն եւ հայրենակիցներուն: Փոքր նուէր մը այո՛, բայց այս աղնուասիրտ նուէրը ամբողջ ցեղին զգացումներուն արտայայտութիւնն էր: Այս ցոյց կուտար մեր կորուստներուն համար մեզի հետ վշտակցող ազնիւ հայ հոգիներ..., մենք պէտք է **երախտապարտ ըլլանք հայոց**, որոնք իրենց դրամով, կեանքով եւ զգացումներով Օսմանցիութիւնը ցուցնելու մէջ չեն թերանար...»[1]:

Թուրքական մամուլի առանձին օրգաններ բարձր էին գնահատում նաև ռազմական գործողությունների վայրերում ապրող հայերի կեցվածքը, որոնք չէին օգտագործում թուրքերի անհաջողությունները՝ բանակի թիկունքում իրականացնելու խափանարարական աշխատանքներ: Ռազմաճակատում կռվող հայ զինվորների նման հայ քաղաքացի ազգաբնակչությունը նույնպես բարեխղճորեն կատարում էր օսմանահպատակի իր պարտականությունները:

Օրինակ՝ «Աւետաբեր» թերթը տպագրել էր ռազմական մի հաղորդագրություն, ուր ասված էր, որ երբ բուլղարական զորքը հարձակում էր սկսել Կըրխ-Քիլիսե քաղաքի վրա, և բնակչությունը խուճապով հեռանում էր, տեղի հեռագրատան պաշտոնյան, իր կոչմանը հավատարիմ, քաղաքից հեռացավ վերջինը, երբ արդեն հեռագրաթելերը կտրվել էին: Հաղորդագրության մեջ ասված էր, որ «կարելի է հարյուրավոր այդպիսի օրինակներ բերել հայ պարզ պաշտօնեաներու կեանքէն, որոնք հերոսաբար իրենց պարտականութիւնը կատարած են»[2]:

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 4945, 16 (29) հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, 7 նոյեմբերի 1912 թ.:

Թուրքական մամուլից «Ազատամարտում» թարգմանաբար արտատպված հոդվածներից մեկում ասված էր, որ բուլղարների կողմից գերի վերցված 70 հայ զինվորները, որոնք բանտարկված էին Ստարա-Զագորայում, բացահայտորեն ասել էին, որ իրենք կռվել են ուժերի գերագույն լարումով: «Կը ցաւինք որ չկրցանք աւելի երկար դիմադրել պուլկար բանակին»[1],- հայտարարել էին նրանք: «Ազատամարտը» տպագրել էր այդ բոլոր հայ գերիների անուն-ազգանունները, ինչպես նաև ծննդավայրը, որպեսզի նրանց «մտատանջ և յուսակտոր ծնողները ոգի առնեն»[2]:

Մի ուրիշ առիթով թուրքական մամուլը վկայում էր, որ օսմանյան բանակի մեծ թվով քրիստոնյա զինվորներ զանգվածաբար լքում են դիրքերը և գերի հանձնվում հակառակորդին, բայց նրանց թվում չկան հայ զինվորներ[3]:

Հայ զինվորների անձնազոհ պահվածքն արժանացավ թուրքական բարձր հրամանատարության դրվատանքին: Նրանց մասին մեծ գովասանքով էր արտահայտվել նաև զինվորական նախարար Նազըմ փաշան: Արշարունի պատրիարքը դիմել էր նրան և շնորհակալություն հայտնել հայ զինվորներին տված բարձր գնահատականի համար[4]:

Ինչպես հաղորդում էր «Բիւզանդիոն» թերթը, Մեզիրե քաղաքի գլխավոր չենքի՝ նամակատան դիմահայաց պատին փակցվել էր օսմանյան բանակի հրամանատար Նազըմ փաշայի ծանուցագիրը, ուր գովեստի խոսքեր էին ասված հայ զինվորների մասին: Նշված էր, որ նրանք կռվում են անկեղծորեն, քաջաբար ու անձնվիրաբար: Երբ թուրքերը կարդում էին ծանուցագիրը, «Կեցցե՛ք, կեցցե՛ք» էին ասում հայերի հասցեին և նրա բովանդակության մասին պատմում ուրիշ թուրքերի: «Հիմա Մեզիրեի մեջ հայեր դրամ կ'հավաքեն՝ մեկնելու պատրաստ զինուորներուն համար հագուստ գնելու որ ճամբուն ցուրտէն

---

[1] **«Ազատամարտ»**, № 1042, 28 հոկտեմբերի (10 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[4] **«Աւետաբեր»**, № 48, 30 նոյեմբերի 1912 թ.:

չմրսին»,- ավելացնում էր «Բիւզանդիոնը»[1]:

Օսկան Հալաճյանի այն գրավոր հարցմանը, թե ռազմաճակատում ինչպես են կռվում հայ զինվորները, Նազըմ փաշան պարծանքով պատասխանել էր, թե նրանք իրենց զինվորական և հայրենասիրական պարտականությունը կատարում են կատարյալ հավատարմությամբ և հնազանդությամբ[2]:

«Ժեոն Թուրք» թերթը հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 2-ին) հրատարակել էր Ռազմական նախարարության հետևյալ նամակը՝ ուղղված «Ազատամարտի» խմբագրությանը. «Թուրքերը հպարտ կրնան ըլլալ հայ եղբայրներուն համար, որոնք կը գտնուին պատերազմի դաշտին վրայ: Ամենքը, առանց բացառութեան, թշնամիին վրայ կը յարձակին առանց ընկրկելու, և կը կռուին առյուծի պես»[3]:

Հայ զինվորների հասցեին դրվատանքի խոսքեր էին ասվում նաև Օսմանյան խորհրդարանում: Այնտեղ ունեցած ելույթում Թուրք պատգամավորներից մեկը ռազմաճակատում հայ զինվորների պահվածքի մասին ասել էր, թե նրանք կրկին ցույց տվեցին, որ անվերապահ նվիրված են օսմանյան հայրենիքին: «Երբ մեր զինուորներու յաջորդական պարտութիւնը լսեցինք,- ասել էր նա,- բնականաբար մեր անյաջողութեանց պատճառները գտնելու հետամուտ եղանք: Եւ որովհետեւ զրոյց կը շրջէր թէ մեր պարտութեան պատճառը բանակին մէջ քրիստոնեայ զինուորներու ներկայութիւնն է, մանրազնին քննութիւն մը բացինք այս մասին: Մեր կատարած քննութենէն սա եզրակացութեան յանգեցանք թէ «նիզամիէ»ի, այսինքն գործոն բանակին զինուորները լաւ կռուած են: Ըէտիֆներն են որ տեղի տուած են: Արդ, ոչ-իսլամ զինուորները նիզամիէ գունդերու մէջ միայն կը գտնուէին: Միւս կողմէ, գիտենք, որ ոչ-իսլամ զինուորներուն մէջ գտնուեցան այնպիսիներ, որոնք փառաւոր կերպով կատարեցին իրենց պարտքը, ասոնց կարգէն են ի մէջ այլոց հա-

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 4945, 16 (29) հունվարի 1913 թ.:

[2] **«Աւետաբեր»**, № 45, 9 նոյեմբերի 1912 թ.:

[3] Նույն տեղում:

յերը եւ հրեաները: Ուրեմն կրնանք ըսել որ բանակին մէջ քրիստոնեաներու ներկայութիւնը ոեւէ կապ չունի մեր պարտութիւններուն հետ... «Այս խօսքերը կարծեմ կը բաւեն Մ. Ժան Ռօտի ըսածները հերքելու համար»[1],- գրում էր «Ժամանակը»:

Պատերազմի առաջին իսկ օրերից զորահավաքի ենթարկված կայսրության մեջ մեծ համարում ունեցող հայ բժիշկները, որոնցից շատ-շատերը կրթություն էին ստացել եվրոպական համալսարաններում, մեծ պատասխանատվությամբ էին կատարում իրենց գործը: Նրանց մեծ մասն ուղարկվել էր ռազմաճակատի առաջին գծեր՝ վիրավորներին տեղում առաջին օգնությունը ցույց տալու համար: Օրինակ՝ զինվորական գնացքով առաջիններից մեկը բանակատեղի մեկնեցին դոկտ. Անիկտոս Զոպանյանը, Երվանդ Մ. Սվաճյանը, Հովհաննես Աչըքյանը և անմիջապես ձեռնարկեցին վիրաբուժական գործողություններ հենց խրամատներում: Այդ մասին դրվատանքի խոսքեր էին լսվել օսմանյան խորհրդարանի նիստերից մեկում[2]:

Պատերազմի ընթացքում թուրքական բանակի հայ զինվորները և ռազմական գործողությունների վայրերի հայ բնակիչներն իրենց քայլերում չափազանց զգուշավոր էին, որպեսզի մահմեդական զինվորներին առիթ չտան հերթական անգամ իրենց ստորացնելու կամ վտանգելու կյանքը: Բայց ռազմաճակատում հայ զինվորների հերոսական պահվածքը նրանց չէր փրկում հերթական զրպարտություններից, ստորացումներից և հալածանքներից: Որքան էլ անձնազոհությամբ կռվեր հայ զինվորը, միևնույնն է, նա համարվում էր անարգ էություն, որն ամեն րոպե պատրաստ է դավաճանության: Թուրք հրամանատարների ու զինվորների մեջ սկսել էին չրջանառվել լուրեր այն մասին, թե հայերի հոգևոր առաջնորդը, նրանց ղեկավարները Ռուսաստանի առջև բարձրացրել են օսմանյան հայրենիքից նրա արևելյան նահանգներն անջատելու և այնտեղ հայկական ան-

---

[1] ***«Ժամանակ»**, № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

կախ պետություն ստեղծելու հարցը: Թուրքերից ոչ ոք չէր ուզում ստուգել այդ լուրերը, բայց հայ զինվորների շուրջ գնալով խտանում էր ատելության մթնոլորտը:

Հայերի հանդեպ Թուրքերի ատելության բորբոքմանը նպաստում էին եվրոպական Թուրքամոլ շրջանակները:

Իր հակահայ գործողությամբ վաղուց հայտնի ֆրանսիացի բանաստեղծ Պիեռ Լոթին հոդված էր գրել և Կըրխ-Քիլիսեի ու Լյուլե-Բուրգազի կռիվներում Թուրքերի պարտության բուն պատճառը համարել էր օսմանյան բանակի քրիստոնյա զինվորներին: Հոդվածում նա մեկը մյուսից լպիրշ վիրավորանքներ էր հասցրել հատկապես հայ զինվորներին՝ նրանց համեմատելով նապաստակների հետ, այպանել էր տարբեր ժամանակների և տարբեր վայրերի հայ հերոսներին, այդ թվում իր կյանքը պարսիկ ժողովրդի ազատությանն ու առաջադիմությանը զոհաբերած Եփրեմ խանին:

Մերժելով ֆրանսիացի բանաստեղծի զրպարտությունները՝ Կ. Պոլսի հայկական մամուլը ցույց էր տալիս, որ Կըրխ-Քիլիսեի և Լյուլե-Բուրգազի կռիվներում Թուրքական զորքերի պարտության պատճառները բնավ հայերը և մյուս քրիստոնյաները չեն եղել, երկրորդ՝ Թուրք սպաների միահամուռ վկայության համաձայն՝ հայերը լավագույն ռազմիկներն են հանդիսացել ամբողջ պատերազմի ընթացքում:

«Աւետաբերը» նկատում էր, որ Պիեռ Լոթին հայերին նապաստակներ է համարում՝ նկատի առնելով 1909 թ. ապրիլյան աղետը Ադանայում, ուր «անոնք բացարձակապէս անզէն ըլլալով ոչխարի պէս մորթուեցան ...»[1]: Բայց եթե ֆրանսիացի բանաստեղծը ուսումնասիրած լիներ հայերի հին պատմությունը, «եթե ան ռուսաց պատմութեան վերջին դարու շրջանին եւ մանաւանդ կովկասեան պատերազմներու պատմութեան ծանօթ ըլլար երբեք այսքան ցնորամիտ ամբաստանութիւններ չէր գրեր ազգի մը մասին, որուն զինուորները դարերով պայքար մղած են Մոտաւոր Արեւելքի ամէնէն հզոր դրացի ազգերուն դէմ եւ

[1] **«Աւետաբեր»**, № 48, 30 նոյեմբերի 1912 թ.:

որուն զինուորական զաւակները ռուս բանակին ամէնէն տաղանդաւոր հրամանատարները եղած են Կովկասի մէջ: Փիէր Լոթի իր հանգստաւէտ սենեակին մէջ նստած երբեք իրաւունք չունէր իր վառ երեւակայութեան ոյժ տալով անարգելու Եփրեմ խանի պէս զօրավարի մը յիշատակը, որ պարսից ազատութեան համար իր կեանքը զոհեց եւ Պարսկաստանի ամէնէն տաղանդաւոր հրամանատարը հանդիսացաւ՝ իր նեղութեան եւ տագնապի օրերուն: Անոր յաջորդը Քեռին նոյնպէս հայ մըն է եւ մեծ եռանդով կը շարունակէ Պարսկաստանի ազատագրութեան պայքարը»[1]:

Թուրքահայ մամուլի օրգանները հիշեցնում էին, որ օսմանյան բռնակալության լծից ազատվելու համար հայերը հարյուր-հազարավոր զոհեր են տվել, բայց նրանք ուրիշների պես երբեք ցանկություն չեն ունեցել օգտվելու կայսրության ճգնաժամային վիճակներից: «Աւետարերը» այդ առնչությամբ գրում էր. «Միթէ չէի՞ն կրնար հայեր ալ իրենց ոյժերը վերապահելով եւ աւելի եւս զօրացնելով Թուրքիոյ այսպիսի ճգնաժամերէն օգտուելով: ... Արդեօք մեր մինչեւ այժմ հարիւր հազարներով տուած զոհերը եւ միւս կողմէն ալ մեր պատերազմին բոլոր հոգւով ու մարմնով մասնակցութիւնը, ապացոյց չե՞ն Փիէր Լոթիներու համար թէ հայը այս կայսրութեան մէջ օսմանցիներու օսմանցին է: Ո՞ր տարրը ըլլար հայոց տեղ, այսքան կոտորուելէն եւ ջարդուելէն եւ իր սեփական հայրենիքին մէջ ալ տնտեսապէս եւ նիւթապէս փճանալէն ետքը դեռ այսքան օրինակելի հայրենասիրութիւն, այսքան անձնուիրութիւն եւ հաւատարմութիւն կրնար ցուցնել պետութեան եւ պետական գաղափարին»[2]:

Կարծես ի պատասխան Պիեռ Լոթիի զրպարտության՝ թուրքական «Միլլի Մեչրութիեթ» ազգայնական կուսակցության օրգան «Իֆհամ» թերթը, որը հաճախ էր անդրադառնում հայկական գործերին, 1912 թ. նոյեմբերի 13 (26)-ին «Հայերը և նրանց կացությունը» խորագրով խմբագրականում գրում էր, թե

---

[1] **«Աւետարեր»**, № 48, 30 նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

Բալկանյան պատերազմը Թուրքիայում ապրող քրիստոնյաների համար փորձաքար է, և նրանց մասին երկրում տարաձայնվում են ամենատարբեր տեսակետներ: Խմբագրականում նշվում էր, որ մասնավորաբար եվրոպական թերթերն են դիտումնավոր կերպով լուրեր տարածում, թե քրիստոնյաների մոտ մարած է հայրենասիրական եռանդը, որը իբր պատճառ է դարձել օսմանցիների պարտությունների: «Մեր քրիստոնյա հայրենակիցների հայրենասիրական զգացմունքների վրա տարակուսելը մեղք է,- գրում էր «Միլլի Մեչրութիեթը»: Թշնամիներն աշխատում են անջատողական որոմ ցանել, հատկապես փորձում են գրգռել Թուրքիայի «հայրենասեր ու եռանդուն» հայ ժողովրդին: Բայց «օսմանեան մամուլն այս հարցում խիստ չափաւոր ընթացքի մը հետեւեցաւ եւ այդ լուրերը չարտատպեց», «որպեսզի օսմանցիութեան շահերը քիչ – շատ վնասելիք ծանր կացութիւն մը առաջ չգայ: Բնաւ տարակոյս չկայ, որ մեր հայ հայրենակիցներուն մեջ հրապարակագիրներէն շատեր միշտ չրջահայեաց եւ խոհեմ ընթացքի մը կը հետեւին եւ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան այսօրուան վիճակին հասնելուն համար ցաւ կ'զգան»[1]:

Պատերազմում հայ զինվորների «դավաճանության» մասին լուրերը թափանցում էին գավառներ:

1912 թ. հոկտեմբերի 31-ի թվով Կ. Պոլսից Լոզան հղած նամակում Ակնունին (Խաչատուր Մալումյան) Ավ. Ահարոնյանին գրում էր. «Պատերազմը վատ է գնում շատ Թուրքերի համար, հետեւաբար միջամտութիւնը մօտիկ է եւ մեր անելիքը շտապողական: Ի նկատի ունեցէք:

Երկու օր առաջ քուրդերը այստեղ մտադիր են եղել հակաքրիստոնէական «ցոյց» անել՝ ոստիկանութիւնը այս անգամ սանձեց: Ի՞նչ պիտի լինի ներսը»[2] (նկատի ուներ Հայաստանը: - Հ. Ս.):

---

[1] Հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Ժամանակ»,** № 1277, 14 (27) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Հայրենիք»,** № 1 (276), Հունվար, 1949, էջ 16:

Իսկ «ներսում» առաջվա պես անտանելի էր հայերի դրութիւնը: Թեև ռազմաճակատներում հայ զինվորը թուրքական բանակի շարքերում կռվում էր առանց կյանքը խնայելու, բայց այնտեղ՝ Հայաստանի գավառներում, շարունակում էին հալածվել նրա հարազատները, չէին դադարում սպանությունները[1]:

Ռազմադաշտերում հայ զինվորների սխրանքները սովորաբար ներբողող «Աւետաբերը» հիմա զայրույթով արձանագրում էր, որ տականքները սկսել են սրել իրենց ժանիքները: «Այն ատեն, երբ մեր զավակները պատերազմի դաշտին վրայ իրենց միւս եղբայրակիցներուն հետ արիւն կը թափեն մայր հայրենիքը պաշտպանելու համար եւ մյուս կողմէն ալ հայկական նահանգներու մէջ ալ սովորական դարձած Հայահալած Հայաջինջ աւազակային բռնակալութիւնը կը շարունակուի, դեռ կը գտնուին անխիղճ մարդիկ, որոնք չեն դադրիր հայերը ստապատիր զրոյցներով մեղադրելէ...»[2]:

Կարինից «Ազատամարտին» գրում էին. «Պատերազմի չարագուշակ բախտը մեզի չժպտեցաւ, եւ ահա ամէն կողմէ մեր թուրք հայրենակիցները սկսան վատաբանել բանակին մէջ հերոսաբար կռուող հայերը... «Քրիստոնեայ զինուորներն են մեր պարտութեան գլխաւոր պատճառները», այսպէս կը խօսին այժմ, մեր քաղաքին անկիւններուն մէջ մեր թուրք հայրենակիցներէն շատեր, թերեւս գրագէտ ու անգրագէտ անուսները. իսկ ժողովուրդներու տականքը կազմող տարրերը ինչ որ խորհրդաւոր կացութիւն մը կը մատնեն...»[3]:

«Ազատամարտի» թղթակիցը հիշեցնում էր, որ պատերազմը սկսվելուց մի քանի օր հետո Բ. Դուռը հանդես էր եկել երկրի բնակչությանն ուղղված հատուկ կոչով, ուր նաև ասված է, որ յուրաքանչյուր օսմանյան քաղաքացի սառնասրտությամբ պետք է ընդունի ստեղծված վիճակը և պատրաստ լինի հաղթահարելու բոլոր դժվարությունները: Բայց այդ կոչը չի ընկալ-

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 47, 23 նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում, № 48, 30 նոյեմբերի 1912 թ.:

[3] **«Ազատամարտ»**, № 1080, 20 դեկտեմբերի 1912 թ.:

վել քաղաքի Թուրք բնակչության մեծ մասի կողմից: «Եւ մինչ-դեռ Թուրք երեւելիներու խումբ մը չնորհաւորելու կուգայ հայ զինուորներու հերոսական քաջութիւնը,- նշում էր Թղթակիցը,- անդին սրճարաններու անկիւնները և գիշերուան լռութեան մէջ, կարգ մը մութ ուժեր դիւային ծրագիրներ կ'որոճան...»[1]: Նրանք չէին հավատում, թե հայը կարող է նվիրված լինել օսմանյան երկրին:

«Հայերը ուրախ են մեր պարտությունները տեսնելով»,- իրար փսփսում էին Թուրքերը: «Հայի երեսին նայի՛ր, եթե ուրախ է, ուրեմն, մենք պարտված ենք, եթե տխուր է՝ հաղթական ենք»[2],- ասում էին նրանք:

«Աւետաբեր» Թերթի աշխատակիցը վկա էր եղել, թե ինչպես մի խումբ Թուրքեր ոխակալ հայացքներ էին նետում փողոցով անցնող հայերի վրա: Նրանցից մեկը բարձրաձայնել էր, թե որքան էլ սրանք երդվեն, թե իրենք օսմանյան զորքերի հաղթանակի ջատագովներն են, իրականում երազում են Թուրքիան տեսնել ջախջախված ու կործանված[3]:

Եվ դա այն դեպքում, երբ «գյավուր» հայ ժողովուրդն իր արյան տուրքն էր տալիս՝ ի պաշտպանություն օսմանյան երկրի, որում ինքը կրում էր անլուր տառապանքներ:

Եվ դա այն դեպքում, նկատում էր պարբերականը, որ ամեն օր ռազմաճակատում կյանքից զրկվում են տասնյակ հայորդիներ, իսկ Կ. Պոլսի հիվանդանոցներում ու հիվանդանոցների վերածված շինություններում հայ վիրավորների թիվն արդեն հազարներով է հաշվվում: Իրենց անորոչ ճակատագրին էին սպասում բազմաթիվ հայ գերիները:

Կ. Պոլսի հայկական մամուլը սպանված հայ զինվորների մասին հազվադեպ էր տեղեկություններ հաղորդում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ արյունալի կռիվներից հետո սպանվածների դիակները թաղում էին տեղում, քանի որ դրանք թի-

---

[1] ***«Ազատամարտ»,*** *№ 1080, 20 դեկտեմբերի 1912 թ.:*

[2] ***Գաբրիել Թազորեան****, Երազանքի և տառապանքի տարիներ (1908-1915), Գահիրէ, 1961, էջ 111, 112:*

[3] *Տե՛ս* ***«Աւետաբեր»,*** *№ 46, 16 նոյեմբերի 1912 թ.:*

կունք տեղափոխելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Բացի դրանից, այդ տեղափոխությունը կնպաստեր երկրում պարտվողական տրամադրությունների ուժեղացմանը: Սպանվածները սովորաբար ներկայացվում էին որպես անհայտ կորածներ:

Կ. Պոլսի հայկական մամուլում պարբերաբար տեղեկություններ էին երևում հայ գերիների, նրանց վիճակի, նրանց ազատելու հնարավորությունների մասին: Օրինակ՝ «Ժամանակ» թերթը նոյեմբերի 14-ին տեղեկացնում էր. «Այս պահուս Սոֆիա կը գտնուին հետեւեալ պոլսեցի հայ գերիները.- Արշակ Յովսէփ Յովսէփեան (Գումգաբու), Կարապետ Խաչիկեան (Կէտիկ-Փաշա), Գր. Դաւիթեան (Գանտիլլի), Արթին Ստեփանեան (Գումգաբու), Հայկ Մկրտիչեան (Ֆէրիտիէ), Յակոբ Նշանեան (Ֆէրիտիէ): Ուրիշ 20 գերիներ արսլանպեկցի, պարտիզակցի, զմիւռնիացի և պրուսացի են: Հայ գաղութը կազմած է մասնաւոր յանձնախումբ մը՝ որ հայ գերիները խնամելու պարտականութիւնը ստանձնած է»[1]:

Թերթի մի ուրիշ հաղորդման մեջ կարդում ենք. «Սպանճաքցի հետեւեալ հայ զինուորներուն մասին տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի որ խմբագրութեանս լուր տան, յիշեալներուն ընտանիքները մտահոգութենէ ազատելու համար.- Սէլպի Աղասիեան, Ստեփան Աղասիեան, Յովսէփ Զաքրեան, Պօղոս Ճանքեան»[2]:

Այսպիսի հայտարարություններ հայկական թերթերը տպագրում էին ամեն օր:

Ռազմաճակատում թե թիկունքում հայերի կողմից օսմանյան քաղաքացու պարտքի անթերի կատարումը նրանց նկատմամբ առաջ էր բերել բալկանյան դաշնակիցների, հատկապես Հունաստանի իշխանությունների որոշ շրջանների հակակրանքը: Նրանց համար միանգամայն անըմբռնելի էր, թե ինչու օսմանյան կայսրության ամենահալածված տարրը այդպիսի բարեխղճությամբ աջակցում է իր թշնամուն:

---

[1] ***«Ժամանակ»,*** *№ 1277, 14 (27) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

Ուստի բալկանյան զորքերի կողմից գերված հայ զինվորները չատ հաճախ ավելի խիստ պատիժներ էին կրում, քան նույնիսկ Թուրք գերիները: Առանձին դեպքերում չհիմնավորված հալածանքների էին ենթարկվում նաև հայ խաղաղ քաղաքացիները:

Օրինակ՝ ի պատասխան «օսմանյան հայրենիքին» հայերի ցուցաբերած հավատարմության, իբր Թուրքերի օգտին լրտեսություն կատարած լինելու մեղադրանքով, հոկտեմբերի 27-28-ին Հունաստանում ձերբակալվում են այդ երկրի մոտ 100 հայ քաղաքացիներ, ուղարկվում Նեապոլիս քաղաք և նետվում տեղի բանտը: Հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13-ին) այդ մասին հեռագիր է հասնում Կ. Պոլսի հայոց պատրիարքարան:

Լուրը մեծ հուզում էր առաջ բերել մայրաքաղաքի հայության մեջ: Հայոց Արշարունի պատրիարքը, Գրիգորիս վրդ. Պալաքյանին հետն առնելով, դիմում է հունաց դեսպանատուն, բայց այցը վերջանում է անարդյունք: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 1-ի առավոտյան, Հայոց ազգային ժողովը քննության առավ պատահածը[1]: Ամբաստանյալ հայերի ազատմանը նպաստելու խնդրանքով Արշարունի պատրիարքը դիմում է Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Մ. Պոնբառին և խնդրում, որ նրա կառավարությունը հարկ եղած միջոցներ ձեռնարկի Հունաստանում ձերբակալած հայերին ազատ արձակելու համար: Դեսպանն իր կարգին դիմել էր Ֆրանսիայի արտգործնախարարություն՝ Աթենքի կառավարությանը դիմում կատարելու համար:

Ընդունելով Արշարունի պատրիարքի խնդրանքը՝ ֆրանսիական կառավարությունը հեռագրով դիմում է Հունաստանի արտաքին գործոց նախարարություն, որն իր հերթին պատասխանում է, թե «ձերբակալված հայերի կատարած լրտեսությունը փաստ է, հետևապես նրանց ազատելն անկարելի է»:

Հունական կողմի այս պատասխանը Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանը հանձնում է Արշարունի պատրիարքին: Վերջինս, չնորհակալություն հայտնելով ֆրանսիական կառավարությանը, միաժամանակ բուռն կերպով բողոքում է հայոց վերա-

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1263, 31 հոկտեմբերի (13 նոյեմբերի) 1912 թ.:

գրված երևակայական հանցանքի դեմ, որը ոչ մի հիմք չուներ և արդյունք էր թյուրիմացության[1]:

Հունական կառավարության գործողությունների նկատմամբ հայկական շրջաններում մեծ դժգոհություն էր առաջացրել նաև մի ուրիշ դեպք:

Անտեղյակ բալկանյան պատերազմի բռնկման մասին՝ 49 հայ պանդուխտ երիտասարդներ սեպտեմբերի վերջերին ամերիկյան նավով մեկնել էին Կ. Պոլիս՝ այնտեղից Հայաստան անցնելու համար: Մինչև Դարդանել մտնելը նավը մի քանի ժամով կանգ էր առել Պիրեայում: Տեղեկանալով, որ նավում մի խումբ հայ երիտասարդներ կան, հունական իշխանությունների կարգադրությամբ ոստիկանությունը խուզարկում է նրանց: Հայ երիտասարդները նետվում են բանտ: Մեղադրանք է առաջադրվում, թե նրանք Պոլիս են գնում, որպեսզի կամավոր մտնեն թուրքական բանակ և կռվելու մեկնեն թուրք-հունական ռազմաճակատ: Շաբաթներ չարունակ գտնվելով բանտում՝ նրանք ենթարկվում են երկարատև հարցաքննությունների:

Պոլսի հայկական ազգային իշխանությունները և հայ մամուլը զարմանք են հայտնում այդ անսպասելի դեպքի առնչությամբ: Տեղի ունեցածը որակելով որպես «քաղաքակիրթ երկրի մը կողմէ անմեկնելի ու անորակելի ընթացք, որը հակառակ է միջազգային օրենքներու և սովորութեանց», «Առաջամարտը» գրում էր. «Այս տեսակ բարբարիկ բրտութիւն մը թերեւս ներելի ըլլար սպասել ո եւ է կիսակիրթ կամ բռնակալ կառավարութենէ. բայց ոչ Յունաստանէն՝ որ ազատութեանց ու քաղաքակրթութեան հին խանձարուրն է եղած, որ պատմական վեհ ու ազնիւ աւանդութիւններով կը պարծի, եւ որ վերջապէս, ներկայիս ալ, կը կարծենք թէ հեռու է ինքզինք կամայական ու **պաշիպոզուգ** կառավարութիւն մը համարելէ»[2]:

Հունական կառավարությանը հղած իր նամակ-բողոքով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը պահանջում էր անհապաղ

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1274, 11 (24) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Առաջամարտ»**, № 15 (1075), 29 նոյեմբերի (12 դեկտեմբերի) 1912 թ.:

ազատ արձակել պանդուխտ հայ երիտասարդներին, որոնք Ամերիկայից ուղևորվել էին Հայաստան՝ տեսակցելու հարազատներին: Նամակում նշվում էր, որ Ամերիկայից եկած նավը Պիրեա է հասել հոկտեմբերի 4-ին, իսկ Նյու Յորքից Հունաստան հասնելու համար պահանջվում է չուրջ երկու շաբաթ:

«Ազատ երկրի մը վարիչներուն համար պատուաբեր բան չէ անմեղ քաղաքացիներ չարչարել նկուղներու մէջ եւ նկատի չառնել այն սրտմտութիւնը, որ կը լեցնէ ամբողջ հայ ժողովուրդի սիրտը, ներկայ առիթով,- գրում էր պատրիարքարանը իր նամակում:- Մենք խստօրէն կը բողոքենք յոյն կառավարութեան այն անիրաւ եւ անթոյլատրելի վարմունքին դէմ, հրաւիրելով որ Պոլսոյ յոյն մամուլին լաւագոյն ներկայացուցիչները իրե՛նք եւս արտայայտիչն ըլլան, այս հարցին մէջ, հայ ժողովուրդի զգացած դառն զգացումներուն ու բողոքին»[1]:

Կ. Պոլսի հայկական թերթերում տպագրված Արշարունի պատրիարքի նշված նամակ-բողոքը արձագանք էր գտել հունական թերթերի էջերում: Մի շարք նշանավոր հույն գործիչներ անհեթեթություն էին համարել իրենց իշխանությունների անմտածված քայլը: Նավը անօրինական խուզարկելու համար վրա էր հասել նաև ամերիկյան կողմի բողոքը: Հասարակական դժգոհության և ամերիկյան իշխանությունների ճնշման տակ հայ երիտասարդներն ազատվել էին բանտից՝ մինչև պատերազմի վերջը Հունաստանում մնալու պայմանով:

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒՄ

Բալկանյան քրիստոնյա պետություններում բնակվող հայերը չահագրգռված էին իրենց ապաստան տված երկրների բանակների հաղթանակներով: Նրանցից շատերը Բուլղարիայի, Սերբիայի և Հունաստանի զինված ուժերի շարքերում բարեխղճորեն կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը՝ իբրև զինվոր կամ զորական:

---

[1] **«Առաջամարտ»**, № 15 (1075), 29 նոյեմբերի (12 դեկտեմբերի) 1912 թ.:

Մենք տվյալներ չունենք, թե բալկանյան դաշնակիցների բանակներում որքան է եղել հայերի թիվը: Հասկանալի պատճառներով այն շատ ավելի փոքր է եղել, քան թուրքական բանակի հայ զինվորների քանակը: Բայց դրա փոխարեն ամենուր բարձր է եղել նրանց մարտական ոգին:

Անցել էին օրեր, բայց հայկական վաշտին դեռ ոչինչ չէր բաժանվել այն պատճառով, որ դրուժինան պարզապես ոչինչ չուներ: Միայն տվել էին տրեխներ, որոնք այնքան վատն էին, որ շուտով ծակծկվում ու շարքից դուրս էին գալիս[*]*: Ինչպես բուլղար զինվորների մեծ մասը, այնպես էլ հայ կամավորները քայլում էին կիսաբոբիկ, բայց առաջ էին գնում՝ ուշադրություն չդարձնելով ոչ մի բանի:*

Բուլղարական զորքի հետ հայկական վաշտը կրում էր մեծ զրկանքներ: Չնայած դրան՝ հայ մարտիկների տրամադրությունը շատ բարձր էր: Արմեն Սյունին գրում էր, որ նրանք «ցամաք հաց ունենալուց էլ իրենց երջանիկ էին զգում... Բայց դժբախտությունը կայանում էր նրանում, որ այդ ցամաք, սև հացն էլ էր շատ անգամ բացակայում: ... Տրտունջ, դժգոհություն չէր լսվում»[1]*:*

Հաշվի չառնելով մեծ դժվարությունները՝ վաշտն անցավ Սամկով-Դոլն-Բանիա -Տրնովո-Սեյմեն քաղաքներով: Հոկտեմբերի 27-ին Տրնովոյում հայ մարտիկներին բաժանվեցին հրացաններ՝ 150-ական փամփուշտներով: Շարունակելով ճանապարհը՝ վաշտը, սաստիկ ցրտից տառապելով, հոկտեմբերի 30-ի գիշերը հասնում է Խասքով քաղաք, ուր հաջորդ օրը տեղի է ունենում մեծ զորահանդես: Ոգեշունչ ճառով հանդես է գալիս Պրոտոգերովը: Ապա երեկոյան նրա մոտ նեղ շրջանակներում տրվում է ճաշկերույթ, որին հրավիրվել էր նաև Անդրանիկը:

---

[*] *Բուլղարական բանակի զինվորների մեծ մասը տրեխ էր հագնում (տե՛ս **Արմէն Սիւնի**, Հայկական վաշտը..., էջ 36-ի տողատակը): Հայ կամավորները ռազմաճակատ մեկնելիս հագել էին Սոֆիայի հայերի նվիրած կոշիկները, բայց երկարատև ռազմերթերում և կռիվներում դրանք մաշվել էին, որի պատճառով նրանք նույնպես տրեխներ էին ստացել:*

[1] *Նույն տեղում, էջ 40:*

Նոյեմբերի 1-ին վաչտը զորքի հետ մեկնում է Խասքովից և նույն օրն անցնում բուլղար-թուրքական սահմանը, մտնում թուրքաբնակ Այդուրմուշ գյուղը, որի բնակիչները նախօրոք փախել էին:

Անցնելով թալանված ու դատարկված գյուղերի միջով՝ նոյեմբերի 2-ին վաչտը հասնում է Արդա գետի ափին գտնվող Կոջալի թուրքական քաղաք, որի ունևոր բնակիչները, ամեն ինչ թողնելով, նախօրոք փախել էին:

Նույն օրը վաչտը հրաման ստացավ լեռնային թնդանոթաձիգ զորամասի հետ մասնակցել Աղրիանուպոլսի (Էդիրնեի) վիլայեթի գրավմանը՝ թուրքական զորքը քշելով մինչև Մարմարա ծով:

Կամավորական զորքը բաժանվեց երեք սյունի: Հայկական վաչտը 12-րդ դրուժինայի հետ մտավ ձախակողմյան սյունի մեջ:

Նոյեմբերի 3-ին դուրս գալով Կոջալի քաղաքից և անցնելով Արդա գետը՝ վաչտը հաջորդ օրը հասավ Մաստանլու քաղաքի մատույցները: Իսկ կամավորական զորքի մյուս մասերն արդեն մտել էին քաղաք և արյունալի մարտեր էին մղում թուրքական զորքի դեմ: Հայկական վաչտի տղաները լուռ ու մունջ, շարանշարան գնում էին առաջ: Վաչտի հետ գրոհի գնացող Արմեն Սյունին հետագայում վերհիշել է. «Երկար ժամանակ լուռ դիտում էի նրանց և քիչ էր մնում արտասուէի: Ո՞ւր են գնում այդպիսի պատրաստակամութեամբ, առանց տրտունջի, առանց ափսոսանքի...»[1]:

Անդրանիկի վաչտը առջապահ էր: Նա նույնիսկ այդ դժվարին պահին տղաներին անընդհատ ոգեշնչում էր՝ չմոռանալով կրկնել. «...Կուի մէջ մարդ իւր անձի մասին չէ, որ պետք է մտածի»[2]:

Կամավորական զորքը մտել էր Ռոդոպյան շրջանը: Նրա ամենաբարձր՝ Ուզուն-Համիդլեր անվանյալ լեռնաշղթան իչխում էր մոտակա բարձունքների վրա՝ հսկելով բոլոր ճանապարհներն ու լեռնային շավիղները:

---

[1] **Արմէն Սիւնի,** Հայկական վաչտը..., էջ 57:

[2] Նույն տեղում:



Հայկական վաշտի տեղագրությունը Ուզուն-Համիդլեր լեռնաշղթայի փեշերին ծավալված մարտերի ժամանակ: Կազմվել է III բրիգադի շտաբում, մարտերից անմիջապես հետո (պահպանվում է Բուլղարիայի Վելիկո Տըրնովո քաղաքի Պետական ռազմապատմական արխիվում, ֆ. 437, ց. 1, գ. 1, թ. 72, պատճենը գտնվում է ՀՊԱ-ի 370 ֆոնդում):

Ուզուն-Համիդլերի կռվին Անդրանիկի գլխավորությամբ հայկական վաշտի մասնակցության և կրած կորուստների մասին վերադասին հղած Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի շտաբի զեկուցագրից մի հատված

и сериозната въ лявата половина на позицията ни. За тази цѣль къмъ 2 часътъ сутринта хвърлихме заповѣдь на 2-а армянска рота да пръкне единъ взводъ въ вертога и да обстрѣля непріятеля. Сѣща такава заповѣдь получи и 3-а рота. Положението на ротите отъ 12-а дружина въ 12 ч. 30 м. сутринта е показано въ Схема № 2.

Болта, все така силенъ, се продължаваше. Къмъ 5½ часа, обаче, се чуха звуковетѣ на „Ще, ли Марица". Това бѣше музиката на VI дружина. Едно общо „ура" огласи цѣлата позиция. Тереката артилерия мълчеше. Подполковникъ Великовъ заедно съ 1-а рота отъ дружината си и армянскія войвода Антониусъ съ 15 отбрани свои момчета отъ 2-а рота на 12-а Загградска дружина бѣха сѣдналъ въ дола между нашата и турска позиция.

Нощната атака.

Чувахме се рѣдки изстрѣли. Въ 6 ч. и 30 м. сутринта ротите тръгнаха да поведа дружината си въ атака. Изпратихъ адютанта да предадѣ заповѣдта ми за атаката на 3-а рота, а самъ поведохъ втората армянска рота, като тръгнахъ тръгъ салиня врѣхъ № 4 на Узунъ Хамитлеръ. Нѣмнинаки, общо 50–100 крачки по скатѣ, ний бѣхме забѣлѣзани отъ турцитѣ, тѣй като лунната освѣтяваше като денемъ буквално бѣдахми заслѣпени съ куршуми. Сѣдъ петь-минутенъ огнъ, тръгъ вратие на които бѣхма залѣгнали, отъне отслабна и ний успѣхме да излѣземъ на шосето, дѣто ни

настигнаха... останалитѣ дружини, които бяхме въ вечеръ на атака бригаденъ командиръ подполковникъ Дротоговъ.

Слѣдъ едно усилие отъ 3 часа, непріятелскитѣ позиции бидоха взети, безъ да се чръмне нито веднажъ отъ наша страна.

Въ скица № 3 е показано разположението на XII дружина на 8 Ноемвр. сутринта, слѣдъ като набирахме атаката частитѣ се приведоха въ ред.

Времето на 7 Ноемвр. бяше ясно и топло.

Убити и ранени.

Убити на 7 Ноемвр. имаме 7 души — всички отъ армеенската рота, а ранени 22, отъ които 1 умрѣ отъ раната си.

Списъкъ на убититѣ и раненитѣ.

I рота

1 Иванъ Ив. Власовъ — раненъ

II рота

Убити: 1 Агопъ Зорабянъ
2 Гарникъ Гарабедянъ
3 Галустъ Жобелянъ
4 Мирранъ Керовянъ
5 Арменакъ Асланянъ
6 Бояджи Биталишуи
7 Оганесъ Авдисянъ

Ранени: 1 Тануетъ Вонецъ умрѣ на II р. въ Кръдмали
2 Саркисъ Едикордашянъ
3 Оникъ Сарафянъ
4 Агопъ Гарабедянъ
5 Галтаръ Шомасянъ
6 Ереванъ Анеурянъ
7. Нигохосъ Гарабедянъ
8. Хачикъ Аракелянъ *

---

* *Փաստաթուղթը պահպանվում է Վելիկո Տրրնովո քաղաքի Պետական ռազմապատմական արխիվում, ֆ. 437, ց. 2, գ. 1, թ. 18–19:*

Հենց այստեղ նոյեմբերի 6-ին հայկական վաշտին վիճակվեց մակեդոնացի կամավորների շարքերում կատաղորեն ընդհարվել դարավոր թշնամու հետ: Թուրքական զորքը, սարերի վրա խրամատներ փորած, սպասում էր բուլղարական զորքին:

Արեգակի առաջին ճառագայթները նոր էին շողացել լեռների վրա, երբ որոտացին երկու կողմերի թնդանոթները: Հրետանային նախապատրաստությունից հետո երկու կողմերը շարժվեցին միմյանց դեմ: Սկսվեց մի սոսկալի ընդհարում: Ռազմադաշտում մի կատարյալ քաոս էր ստեղծվել. միմյանց կոտորում էին հազարավոր մարդիկ:

Թեև թշնամին Ուզուն-Համիդլերում գլխովին ջախջախվեց և ցաքուցրիվ եղավ լեռնամասերում, բայց բնաջնջվեցին նաև կամավորական բազմաթիվ ստորաբաժանումներ:

Զգալի կորուստներ էր ունեցել նաև հայկական վաշտը*:

1912 թ. նոյեմբերի 4-ին բուլղարական բանակի Կոջալիի զորախումբը սկսեց հետապնդել գեներալ Մեհմեդ Յավեր փաշայի կորպուսը: Զորախմբի մեջ էր մտնում 3-րդ բրիգադը, որի Լոզենգրադյան 12-րդ դրուժինայի կազմում էր հայկական վաշտը:

Նոյեմբերի 9-ին զորախումբը գեներալ Գենևի հրամանատարությամբ հարձակման անցավ Արդա գետի վրայի Կոջալի քաղաքի՝ թուրքերի ամրացած դիրքերի վրա: Հայկական կամավորական վաշտին վիճակված էր մարտի մեջ մտնել ամենադժվարին տեղամասերից մեկում**: Տեղի է ունենում արյունալի մարտ Մոմչիլգրադի մոտ:

Ճակատամարտի մասնակիցներից մեկը հետագայում՝ 1941 թվականին, գրել է. «Հայկական վաշտը հպարտորեն ծածանում

---

* Ուզուն-Համիդլերի կռվի նկարագրությունից հետո Արմեն Սյունին նշված գրքում այլևս չի անդրադարձել հայկական վաշտի հետագա ռազմական գործողություններին:

** Բալկանյան առաջին պատերազմում հայ կամավորական վաշտի մարտական գործողություններին հանգամանորեն անդրադարձել ենք մեր՝ «Անդրանիկի ժամանակը» աշխատության մեջ (տե՛ս գիրք Ա, Երևան, «Կախսա» հրատ., 1996, էջ 342-365), ուստի այստեղ հարկ չենք համարել ծավալվելու:

էր իր դրոշը: Նրա մոտ կանգնած էր փառապանծ հայ ազգային հերոս, հին հեղափոխական Անդրանիկը: ... Նա առաջինն է կրակում և, զայրույթից գոռալով, բյուրավոր սպառնալիքներ է ուղղում հայ ժողովրդի թշնամիների հասցեին: Վաշտի կորուստներն այնքան մեծ էին, որ նա ամեն բոպե ենթակա էր վտանգի: Հասավ ամենակրիտիկական պահը, և մարտիկները ցույց տվեցին, որ իրենց համար հայրենիքի* պատիվն ավելի բարձր է, քան իրենց կյանքը...»[1]: Նրանցից շատերն ընկնում են քաջի մահով: «Հայերը շատ ծանր զոհեր են տալիս,- այնուհետև նշել էր հեղինակը: - Նրանց դիմաց սեպ զառիվերով կտրված մի փոքր հովիտ լիքն էր սպանվածներով ու վիրավորներով: Համենայն դեպս, նրանք երջանիկ էին, որ գտնվում էին այն վաշտերի թվում, որոնք արդեն թշնամու խրամատների առջևում էին: Առանց հաշվի առնելու զոհվելու վտանգը, բոլորը նետվում են առաջ և կատաղի ձեռնամարտից հետո գրավում թշնամու դիրքը»[2]:

Հայկական վաշտի կամավորները նույնպիսի քաջությամբ կռվեցին Մաստանլու քաղաքի մոտերքում տեղի ունեցած արյունալի ընդհարումներում (նոյեմբերի 4): Այստեղ վաշտը բռնել էր ճակատի ամենավտանգավոր տեղը, կռվում էր քաջությամբ և տալիս շատ զոհեր: Իսկ Անդրանիկը կատարյալ հանգստությամբ առաջ էր գնում սաստիկ հրացանաձգության գնդակների տարափի տակ[3]: Մարտիկների խիզախությունն առաջ էր բերել մերձակա դիրքերի բոլոր կամավորների հիացմունքը: Նրանց հասցեին ամբողջ դիրքերի վրա բերնից բերան անցնում էին շնորհավորական աղաղակներ. *"Браво арменци, браво!"* (**«Կեցցե՛ք հայեր, կեցցե՛ք»**):

---

* Նկատի ուներ Թուրքահայաստանը:

[1] **Արմէն Սիւնի**, Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդությամբ 1912-1913 թթ. Բալքանեան պատերազմում, էջ 66:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Հետապնդելով թշնամուն՝ Լոզենգրադյան ջոկատը նրա հետ կռվի բռնվեց Բալկան-Դերեսիի մերձակայքում (նոյեմբերի 7): Այստեղ էլ հայ կամավորներն աչքի ընկան իրենց խիզախությամբ: Ընդհուպ մոտենալով թուրք ասկյարներին՝ նրանք առանց երկմտելու ձեռնասվինամարտի էին բռնվում: Վաչտն այստեղ էլ զգալի կորուստներ տվեց:

Հաջորդ երկու օրերին (նոյեմբերի 8-9) հայկական վաչտը մասնակցում էր Գյումյուրջինե քաղաքի գրավմանը: Տեղի հայ համայնքը ցնծությամբ դիմավորեց քաջազուն կամավորներին[1]:

Հայ կամավորները հաջորդ անօրինակ սխրանքը կատարեցին Ֆերայի մոտ, Մեհրամլի գյուղի տարածքներում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում (նոյեմբերի 15)[2]: Այստեղ աշխարհազորայինների դեմ կանգնած էին Մեհմեդ Յավեր փաշայի կորպուսի հիմնական ուժերը: Թուրքերը ամրացել էին լայնատարած Մարիցա վարարած գետի ափին և հրետանային ու հրացանային գնդակոծության տակ էին առել աշխարհազորայինների դիրքերը: Թվում էր, թե անհնար է թշնամուն դուրս չպրտել պաշտպանական ամրություններից: Բայց բուլղարական «Շումի Մարիցա» («Հուզվի՛ր Մարիցա») քայլերգի հնչյունների տակ:

Լոզենգրադյան ջոկատի մարտիկները նետվեցին առաջ: Քաջարի հայ կամավորներն Անդրանիկի գլխավորությամբ առաջինը սկսեցին վճռական գրոհը: Իրենց խիզախությամբ ու հնարամտությամբ հայ մարտիկներն ուղղակի հրաշքներ էին գործում:

Շատ տարիներ անց Լոզենգրադյան ջոկատի զորամասերից մեկի հրամանատար, հետագայում «Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի միության» նախագահ Միլան Դամյանովը Սոֆիայում տպագրվող "Походъ" թերթի 1941 թ. ապրիլի 27-ի համարում (№ 59/63) լույս ընծայած հոդվածում մանրամասն նկարագրել է հայկական վաչտի հերոսական մաքառումները ռազմաճակատի այդ հատվածում:

---

[1] **Արմէն Սիւնի**, Հայկական վաչտը Անդրանիկի առաջնորդութեամբ 1912-1913 թթ. Բալքանեան պատերազմում, էջ 79, 80:

[2] Տե՛ս **Աստուր Մակարեան**, Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 534-539:



Մեհրամլի գյուղի մատույցներում տեղի ունեցած արյունալի կռվի տեղագրությունը: Հայկական վաշտը կռվի ամենաթեժ կենտրոնում էր (տեղագրությունը կազմված է III բրիգադի շտաբում և պահպանվում է Բուլղարիայի Վելիկո Տըրնովո քաղաքի Պետական ռազմապատմական արխիվում, ֆ. 437, ց. 1, գ. 1, թ. 81):



Մաստանլու քաղաքի մատույցների լեռնազրգում տեղի ունեցած ընդհարումը Թուրքական զորքի հետ: Կենտրոնում հայկական վաշտի դիրքերն են (տեղագրությունը կազմվել է III բրիգադի շտաբում), ընդհարումից անմիջապես հետո (պահպանվում է Վելիկո Տըրնովո քաղաքի Պետական ռազմապատմական արխիվում):

«Հայկական վաշտին վիճակվեց գրավել Թշնամու ամենադժվարամատչելի տեղամասերից մեկը,- գրում էր Մ. Դամյանովը:- Կռիվը հետզհետե թեժանում էր և ժամը 3-ին կեսօրից հետո՝ ավելի սաստկանում: Թշնամու հրետանային և հետևակազորային արտակարգ ուժեղ կրակը կանգնեցնում է մեր առաջխաղացումը, իսկ մեր առաջ պարզվում են Թրքական խորունկ խրամատները, որոնք վերջանում են մի գահավեժ մերկ բարձունքով:

Մեր կորուստները մեծ են: Հայկական վաշտը խճուղու եզերքումն է: Վաշտի հրամանատար պարուչիկ Նժդեհը ատրճանակը ձեռքին վազում է մարդուց-մարդ և նրանց քաջություն ներշնչում: Թշնամու կրակն այնքան ուժեղ է, որ դրուժինաները հազիվ են դիմանում:

«Սվինամա՛րտ, սվինամա՛րտ...» լսվում է պարուչիկ Նժդեհի ձայնը, նա առաջ է ընկնում և մեկ մարդու պես նրան են հետևում հայ քաջերը»:

Այնուհետև Միլան Դամյանովը նշում էր, որ «այսօր էլ դեռ տեսնում եմ սպանված հայերի չիրիմներն այն հովտում, որտեղից խճուղին կտրում-անցնում է բուլղար-հունական սահմանագիծը: Այս տեղամասում կանգնած է մի համեստ հուշարձան՝ նույն ճակատամարտում ընկած զինվորների հիշատակին: Սահմանապահ զինվորները հաճախ նստում են նրա պատվանդանին և զարմանքով կարդում սպանվածների անունների մեջ նաև ոչ-բուլղարական օտար անուններ: Ու մտածում են.

- Ի՞նչ գործ ունեն նրանք այստեղ...

Ո՛չ, զինվո՛ր, մի քայլ նահանջի՛ր և զինվորական պատիվ տո՛ւր նրանց: Այդ անունները օտար չեն, այլ մե՛րը, մեր զենքի եղբայրների՛նը, որոնք իրենց երիտասարդ արյունն են թափել հայրենիքի ազատության համար, և ճակատագրի եղբայրներ՝ Մակեդոնիայի և Թրակիայի ազատության համար:

Հարգա՛նք՝ զոհված հերոսների պայծառ հիշատակին:

Փա՛ռք հայկական վաշտին»[1]:

Այդ կռվում ծանր վերք ստացած հայերից մեկը, որն ամիս-

---

[1] *"Поход", № 59/63, София, 27 апреля 1941.*

ներ անց բուժվում էր Սոֆիայի հոսպիտալներից մեկում, "Киевская мысль" թերթի թղթակից Լև Տրոցկուն պատմել է. «Մենք (Հայ կամավորները: – Հ. Ս.) կռվի պահին չէինք վախենում: Ես առաջ էլ մահ էի տեսել: Քրդերը հորս ու մորս իմ աչքի առաջ մորթեցին, իմ աչքերով եմ դա տեսել: Մեր մեջ կային այնպիսիները, որոնք, թվում էր, վախից կմեռնեն: Բայց իրենց պահում էին հերոսի նման: Մի տղա կար՝ Պողոսը, 16 տարեկան, Ռոդոսթոյից: Ես նրան հարցրի՝ դու ինչու ես այստեղ: Հա, ասեմ նաև, որ նա առաջավոր դիրքերում 15 ժամ սոված էր մնացել: Յավուր [փաչային] հետապնդելիս Պողոսն առջևում էր և ամենավտանգավոր տեղերում: Բոլորն էլ լավ էին կռվում... Անդրանիկը հրացանը ձեռքին կռվում էր մեզ հետ հավասար, բայց մարտի ժամանակ իսկական հրամանատար էր: Գարեգինը շատ խիզախ է, կռվի դաշտում երբեք ծնկի չի եկել, թուրը ձեռքին դիրքից դիրք էր անցնում: Մեզ հետ Գարեգինը կիսում էր վերջին պատառը: Երբ մեզանում ընկավ առաջին մարտիկը, Գարեգինը մոտեցավ, համբուրեց ճակատը և ասաց. «Ահա առաջին նահատակը»: Եվ այսպես էլ հետագայում: Ով ընկնում էր՝ Գարեգինը մոտենում էր, համբուրում և կանչում. «Կարմի՛ր խաչ»: Հայտնվում էին սանիտարները և տանում վիրավորներին...»[1]:

Թուրքերի կատաղի դիմադրությունը նրանց չփրկեց գլխովին ջախջախվելուց: Հայերեն, ռուսերեն, բուլղարերեն մարտական կոչերով՝ «Առա՛ջ», "На пред!, на нож!", նրանք ներխուժեցին Թշնամու դիրքերը և նրան պարտադրեցին ձեռնասվինամարտի: Թուրքերը, անսպասելի հզոր հարվածից չչմած, սասանվեցին[2]: Բայց նահանջելու տեղ չունեին. ճանապարհը կտրում էին Մարիցայի ջրառատ ալիքները: Նրանք ստիպված անձնատուր եղան Լոզենգրադյան քաջերին: Այնուհետև մի քանի ժամ անընդմեջ գերի թուրքերի շարանը գլխահակ անցավ վեհապանծ հաղթողների շարքերի առջևով: Գերի էին ընկել 10 հազար զինվոր և 242 սպա, այդ թվում՝ Մեհմեդ Յավեր փաշան և

---

[1] **"Киевская мысль"**, № 197, 19 июля 1913 г.

[2] **Արմէն Սիւնի**, Հայկական վաչտը Անդրանիկի առաջնորդութեամբ 1912-1913 թթ. Բալկանեան պատերազմում, Բաքու, 1914, էջ 63, 66, 68:

երեք գնդապետ: Յավեր փաշայի Կոջալիի բանակի ջախջախմանը՝ որպես ռազմական արվեստի փայլուն օրինակի, իր հուշերում անդրադարձել է Խորհրդային Միության մարշալ Հովհ. Բ. Բաղրամյանը[1]:

Երբ արդեն սկսված էր հիտլերյան Գերմանիայի հարձակումը Խորհրդային Միության վրա, բուլղարական մի ուրիշ պարբերական՝ Սոֆիայում լույս տեսնող «Բալկանսկա տրիբունա» թերթը, 1941 թ. օգոստոսի 25-ին (№ 1413) տպագրել էր գնդապետ Ս. Ֆիլիպովի հոդվածը, որը նույնպես նվիրված էր բուլղարական բանակի կազմում հայկական վաշտի մարտիկների առասպելական քաջագործություններին[2]:

Բանակի, աշխարհազորի և ժողովրդական զանգվածների հայրենասիրական խանդավառությունը, թուրք ստրկացնողների դեմ պայքարելու դրոշի ներքո նրանց մարտական միախմբումը տասնապատկում էին ազատարարների ուժերն ու հարձակողական պոռթկումը: Թուրքական զորքերը, դաժան պարտություն կրելով, ամենուրեք խուճապահար նահանջում էին: «Թուրքերի նահանջը,- նշել է Վ. Ի. Լենինը,- վերածվել էր խենթացածների, սովյալների, տանջահարների, խելագարների ամբոխի անկարգ փախուստի»[3]:

Փառահեղ հաղթանակից հետո Մեհրամլիի շրջանում աշխարհազորի զորամասերը, այդ թվում հայկական վաշտը, սլացան առաջ և գրավեցին քաղաքներ Սոֆլուն (նոյեմբերի 19-ին), Ուզուն Ֆյուփրին (նոյեմբերի 21-ին), Քեչանը (նոյեմբերի 23-ին) և մի շարք ուրիշ բնակավայրեր*:

Դրանք Բալկանյան պատերազմի առաջին շրջանի վերջին ռազմական գործողություններն էին:

Հայ մարտիկների ուրախությունը մթագնում էր այն տխուր իրողությունից, որ զենքի իրենց քաջարի ընկերներից շատերը

---

[1] Տե՛ս **И. Х. Баграмян,** *Мои воспоминания, Ереван, 1979,* էջ 19:

[2] ՀԱԱ, ֆոնդ 370, ց. 2, գ. 94:

[3] **В. И. Ленин,** *Полн. собр. соч., т.* **22,** *стр.* **160.**

* Նշված քաղաքների և շրջակա բնակավայրերի գրավման նկարագրությունը տրված է նաև հայկական վաշտի օրագրում:

սպանվել էին կատաղի կռիվներում, որոնք մղվել էին Հայաստանից հազարավոր մղոններ հեռու՝ օտար մի երկրում: Հայկական վաշտում քաջաբար կռված ու զոհված մարտիկների թվում էին Գալուստ Թեփելյանը, Գառնիկ Կարապետյանը, Միհրան Կորովլյանը, Հովհաննես Ավետիսյանը, Հակոբ Սոխրապյանը, Արմենակ Ասլանյանը, Գրիգոր Մարտիրոսյանը, Արշակ Կարապետյանը, Կարո Պողոսյանը և ուրիշներ:

Շատ էր նաև հերոսության բարձր օրինակներ տված վիրավորների թիվը, որոնց ճակատից ուղարկել էին թիկունք՝ բուժվելու: Նոյեմբերի վերջերին Սոֆիա բերին առաջին հայ վիրավորներին՝ մոտ 20 մարդու: "Киевская мысль" թերթի թղթակից Լև Տրոցկին այցելում է նրանց և ընթերցողների հետ կիսում իր տպավորությունները: Իր հոդվածում նա վերարտադրում է առանձին վիրավոր կամավորների պատմածները մարտական գործողությունների մասին, պատերազմի դաժանությունները և նրանց կրած տառապանքները, միաժամանակ շեշտում «մարտիկների բարոյական և մարտական բարձր ոգին, դժվարություններ հաղթահարելու զարմանալի կամքը և տոկունությունը»[1]:

Հայ վիրավորների մի մասին Սոֆիա էին բերել տարբեր հոսպիտալներից: Ֆիլիպոպոլ քաղաքից բերված վիրավորներից մեկը Լև Տրոցկուն պատմել էր, որ երբ Թագուհին այցելել էր հոսպիտալ և հարցուփորձ արել նաև իրեն, ինքը ասել էր. «Դուք արդեն լավ եք, Թուրքերին Ասիա եք քշում, իսկ դրանից Հայաստանի վիճակը կրկնակի կվատթարանա»: «Համբերեք, ձեզ համար էլ լավ կլինի»,- փորձել էր համոզել Թագուհին: «Այս բացիկն էլ նվիրեց իբրև մխիթարություն...»,- Տրոցկուն ցույց տալով բացիկը՝ հեգնել էր վիրավոր մարտիկը[2]:

Հայկական վաշտի մարտիկներից բացի՝ թշնամու դեմ հերոսաբար կռվում էին հարյուրավոր ուրիշ հայորդիներ՝ բալկանյան դաշնակիցների բանակներում, բուլղարական բանակի ուրիշ զորամասերում և պարտիզանական ջոկատներում:

---

[1] **"Киевская мысль"**, № 197, 19 июля 1913 г.

[2] Տե՛ս նույն տեղում:

Հայկական վաշտի օրագրի առաջին էջը

Արխիվային փաստաթղթերը մեզ են փոխանցել Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի ուրիշ զորամասերում կռվող հայ զինվորների անուններ: Այսպես, 8-րդ վաշտում կռվում էին 5 հայեր[1]: 17-րդ վաշտի զինվորներից 4-ը ստացել էին քաջության խաչեր, որոնցից երկուսը՝ հայեր՝ Արշակ Կարապետյանը (Էրզրումցի) և Սիմոն Հասրաթյանը (մշեցի)[2]:

26-րդ վաշտի կազմում թշնամու դեմ կռվում էին Բաբկեն Մարտիրոսյանը (սիվասցի), Հովհաննես Զոհրաբյանը (բոզարջիկցի), Կարապետ Համբարձումյանը (նախիջևանցի), Դանիել Զորմիզյանը (վանեցի), Գեղեոն Միրզոյանը (երևանցի)[3]: Մակեդոնիայում փառաբանվում էր Հովհաննես Զաուշի անունը, կռիվներում հռչակված հերոսներ էին 12-րդ Լոզենգրադյան ջոկատի 3-րդ վաշտի հրամանատար պոդպորուչիկ Թորգոմը՝ շատ խստապահանջ ու ջղային մի երիտասարդ, կամավորներ Ասլանը, Գավրոչը, Արամը, Բալբխչին և շատ ուրիշ հայեր[4]:

Բալկանյան փոքր պետությունները 1912 թ. միացյալ ճակատով գրավել էին համարյա ամբողջ եվրոպական Թուրքիան: Նա Բալկանյան թերակղզում կորցրեց Մարիցա գետից արևմուտք գտնվող իր բոլոր տարածքները: Երկրի սահմանները հաստատվեցին Էնոս-Միդիա գծով: Բալկանյան թերակղզու ամբողջ տարածքը՝ ներառյալ Ալբանիան, Մակեդոնիան, Հին Սերբիան և Արևմտյան Թրակիան, պետք է իրար մեջ բաժանեին հաղթողները: Թուրքիան կորցրեց նաև Էգեյան ծովի Կրետե, Խիոս, Միտիլենա, Սամոս և ուրիշ ավելի մանր և ավելի պակաս կարևորություն ունեցող կղզիներ: Մի ժամանակ աշխարհին ահ ու սարսափի մատնած ահարկու կայսրությունն անզոր եղավ պաշտպանվելու բալկանյան փոքրիկ պետություններից, որոնց ժողո-

---

[1] Տե՛ս Държавен Военнополитический архив Велико Търново, ф. 423, оп. 3, е. 11, л. 142.

[2] Տե՛ս նույն տեղում, е. 41, л. 94:

[3] Տե՛ս նույն տեղում, е. 82, л. 63:

[4] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (83), 1989, էջ 209:

վուրդներին նա դարեր շարունակ ստրկացրել էր:

Թուրքահայերը, նրանց մամուլի օրգանները գտնում էին, որ վերը նշած տարածքների կորուստը բնավ էլ ողբերգություն չէ Թուրքիայի համար: «Ժամանակը» չեշտում էր, որ որևէ ժողովրդի մեծությունն ու ազդեցությունն իր սահմանների ընդարձակության մեջ չէ. օրինակ՝ Թուրքիային դժվար է Շվեյցարիայից մեծ պետություն համարել, որն իր տարածքի մեծությամբ նրա մի նահանգն է լոկ: «Ներկայ դարուս մէջ ժողովուրդները, պետութիւնները այնչափ աւելի մեծ են եւ յարգուած՝ որչափ մեծ է իրենց ճարտարարուեստը, իրենց գեղարուեստը, իրենց գրականութիւնը, մէկ խօսքով իրենց քաղաքակրթութիւնը: Ներկայ դարուս մէջ ապրելու, իրենց գոյութիւններին տեւականացնելու իրաւունքը ունին միայն այն ազգերը, այն պետութիւնները՝ որոնք ըմբռնած են ներկայի պահանջքները, որոնք կրցած են իւրացնել քաղաքակրթութեան պտուղները: Թուրքիան անկարելի է որ չըմբռնէ այս իրականութիւնը, առանց դիմելու կորըստեան անդունդը...: Թուրքիայի սահմանները կրնան կրճատուիլ, կրնան աւելի մօտենալ Պոլիսին, եւ սակայն անիկա կրնայ աւելի մեծնալ, աւելի յարգելի դառնալ»: ... Թուրքիան շատ բան է կորցրել ընդարձակվելով և հիմա պիտի շահի փոքրանալով: «Բաղդատաբար նեղ սահմաններով Թուրքիա մը,- շարունակում էր թերթը,- աւելի հնարաւորութիւն պիտի ունենար իր երկիրը պահելու ներդաշնակ անդորրութեան մը մէջ՝ որ միակ պայմանն է տնտեսական, քաղաքական եւ բարոյական բարգաւաճման, մէկ խօսքով քաղաքակրթութեան տարածման: Անատոլուի այն բոլոր նահանգները՝ ուր մինչեւ այսօր գրեթէ կիսավայրենի ցեղեր եւ քաղաքակրթապէս չա՛տ ետ մնացած տարրեր միշտ աւեր ու կողոպուտ են գործեր, ոչնչացնելով լոյսի, քաղաքակրթութեան այն բոլոր ծիլերը՝ որոնք հազիւ ուրեմն առաջ են եկեր այդ մռայլ միջավայրերուն մէջ... Այն ատեն [ավելի նեղ սահմաններով] Թուրքիան պէտք չունենար իր հասոյթները մսխելու զինուորական խոշոր պիւտճէներու մէջ, եւ այսպէս մինչեւ վիզը խեղդուելու խոշոր պարտքերու մէջ, որոնք օրէ օր կը ծանրանան, աւելի՛ կքելով աշխատաւոր ժողովուրդի մեջքը ընդհակառակը երկրի բոլոր ուժերը կը յատկացուին հանրային

կրթութեան, հանրօգուտ չինութիւններու»[1]:

Կ. Պոլսում հրատարակվող «Հեռաձայն» թերթի հոդվածի հեղինակը նույնպես գտնում էր, որ Բալկաններում Թուրքիայի կրած տարածքային կորուստները սարսափելի չեն, «եթէ մենք գիտնանք արդար, անաչառ և ուղղամիտ վարչութեամբ մը կառավարել երկիրը: ... Փառք Աստուծոյ, Ռումէլիին և ամբողջ Եւրոպիոյ թագուհին՝ Պոլիսը, մերն է... Անատոլուն ունինք մեր առջեւ, այն հայաշատ եւ լայնածաւալ երկիրը՝ որ ամբողջ Եւրոպիոյ կեսին մոտ է: Միջագետքը ունինք ... որ անցեալին ամէնէն հսկայ կայսրութիւններն ու թագաւորութիւնները ուռճացուցեր է իր մէջ եւ գիտութեանց ու արուեստից օրրանը եղած է. Կիլիկիան, Սուրիան ունինք փառաւոր, յուռթի վաճառաշահ երկրներ, որոնք անդորրութեան, արդարութեան ու հեղինակաւոր վարչութեան մը կ'սպասեն մէկ քանի տարուան մէջ փայլելու եւ ամէնէն զարգացած քաղաքներուն հաւասարելու համար:

Ամէն չարիքէ բարիք մը կը ծնի...»[2]:

Ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ բալկանյան ժողովուրդները հայոց բախտակիցներն էին: Հայերը և բալկանյան ազգերը դարավոր տառապանքի եղբայրներ էին, միասին էին տվայտում նզովյալ դժոխքում, որի անունն էր թուրքական բռնապետություն: Բայց միասին տանջվածները միասին չփրկվեցին: Բալկանն ազատագրվեց, բայց խոշտանգված ու արյունաքամ հայաշխարհի վրա շարունակում էր նստած մնալ թանձր խավարը:

Վրա է հասնում 1912-ի դեկտեմբերը: Քրքրված կոշիկներով ու թրջված հագուստներով, երկարատև ռազմերթերից* տան-

---

[1] **«Ժամանակ»,** № 1280, 17 (30) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Հեռաձայն»,** № 24 (1369), 15 (28) փետրվարի 1913 թ.:

* Հոկտեմբերի 23-ին՝ Սոֆիայից դեպի ռազմաճակատ շարժվելուց հետո, հայկական կամավորական վաշտը պատերազմի առաջին շրջանում (մինչև 1912 թ. նոյեմբերի 20-ի զինադադարի հաստատումը) անցել էր մի երկար երթուղի՝ Սոմակով-Կոստենեց- Բանսկո-Տրրնովո-Պլովդիվ-Սեյմեն-Խասկովո-Կոջալի-Մաստանլու-Գյումուրչինե-Ֆերե-Սոֆլու-Դեմոտիկա-Ուզուն Կեպրու-Կեչան-Մալկարա-Ռոդոսթո (տե՛ս **Андраник Озанян,** *Документы и материалы*, էջ 111):

ջահար հայ կամավորները չէին կորցրել իրենց մարտական ոգին և պատրաստ էին նոր առաջադրանքներ կատարելու: Քեչան քաղաքում մեկշաբաթյա հանգստից հետո հայկական վաշտը III բրիգադի կազմում շարժվեց դեպի հարավ և դեկտեմբերի 13-ին հասավ Մալկարա գյուղաքաղաք: Խոլերայի համաճարակի պատճառով հրաման եղավ քաղաքում կանգ չառնել: Բայց հայ համայնքի խնդրանքով հայկական վաշտին թույլատրեցին մեկ ժամ մնալ այդտեղ՝ հայրենակիցների հետ հանդիպելու համար: Ջերմ և հուզիչ հանդիպումից հետո[1] զորասյունը շարունակեց իր ռազմերթը և դեկտեմբերի 15-ին մտավ հունաբնակ Պանադոս գյուղը[2], որը գտնվում էր Մարմարա ծովի գեղատեսիլ ափին՝ Ռոդոսթո քաղաքից 8 կիլոմետր հեռու: Այստեղ աշխարհազորայիններն ստացան սպիտակեղեն, տաք հագուստ, կոշկեղեն, դեղորայք, որ բերել էին Կարմիր խաչի Ռուսաստանի կազմակերպության (ՐՕԿԿ) անունից: Ավարտվեց հաղթական պատերազմի առաջին փուլը:

Վաշտը կոչված էր թուրքական ներխուժումից պաշտպանելու Մարմարայի ծովեզերքը:

ՀԻԱՑԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Տարիներ հետո վերհիշելով հայկական վաշտի քաջագործությունները՝ բուլղարական բանակի սպա Կոնևը գրում էր. «Ո՜, առյուծներ են, կատարյալ առյուծներ: Ինչպիսի՜ քաջ տղաներ կան, մարդ ուղղակի զարմանում է, գնդակների տարափի տակ չատերը երգով էին կռվում...»: Այնուհետև Կոնևը նկարագրում է բազմաթիվ մարտերից մեկը, երբ հայ կամավորները «մեզ ազատեցին անխուսափելի պարտությունից և, գուցե կործանումից»[3]: «Այդ օրը թշնամին բնական ամրությունների ետևում պատսպարված անընդհատ ռմբակոծում էր բուլղարական

---

[1] Տե՛ս **Վարդան Ց. Խաչիկեան,** Մալկարայի հայ գաղութը (1610-1922 թուականներ), Փլովտիվ, 1943, էջ 81:

[2] Տե՛ս **Արմէն Սիւնի,** Հայկական վաշտը..., էջ 99, 100:

[3] «Վիդուչ-Արարատ» պուլկարահայ տարեգիրք, էջ 191, 192:

դիրքերը, անշարժության դատապարտելով բուլղար զորամասը, փոքրիկ մի շարժումը կարող էր մահացու հարվածով վերջանալ: Կովի այդ թեժ միջոցին Անդրանիկը, իր հետ ունենալով միայն անձնուրաց կտրիճներ, գնդակների տարափի տակ մոտենում է Թշնամու դիրքերին և 2,5 ժամ տևող սաստիկ հրաձգությունից հետո նրան ստիպում է նահանջել»[1]: Այդ հաղթությունից անմիջապես հետո հայ կամավորները օգնության են չտապում հարևան բուլղար զորամասին: Կոնևը շարունակում է իր պատմությունը. «Հայկական զորամասը մարտ է սկսում գրավելու համար այն բլուրը, որտեղ ամրացել էր հակառակորդը: Մյուս վաշտերը հեռու էին մնացել, Թշնամին իր կրակի ամբողջ ուժը կենտրոնացրել էր հայերի վրա: Ի վերջո հակառակորդը տեղի տվեց, և ամբողջ մի օր այդ ամուր դիրքը մնաց հայերի ձեռքին, մինչև որ վրա հասավ բրիգադը»[2]:

Մակեդոնա-Օդրինյան երկրապահ զորքերի հրամանատար, զորավար Գենևի, սպայակույտի ներկայացուցիչ մայոր Դրվինգովի, համհարզ կապիտան Նիքոլովի՝ հայկական վաշտի մասին տված ընութագրական վկայականում ասված էր. «Ընդհանրապես հայկական զորամասը, հակառակ հագուստի չգոյության, միշտ եղած է ուժեղ իր **չարքաշությամբ, կարգապահությամբ, տոկունությամբ եւ արտակարգորեն քաջ կռիվներում**: Այդ զորամասի բոլոր մարտիկները կարող են հպարտանալ իրենց քաջ գործերով, իսկ Հայաստանը պետք է վստահ լինի, որ այսպիսի զաւակներով, որոնք ընդունակ են մեռնելու օտար դատի համար, մոտ ապագային պիտի ձեռք բերէ երջանիկ եւ տեւական ազատութիւն»[3]:

Ահա և հայ կամավորներին տրված բազմաթիվ գնահատականներից մի ուրիշը. Հայկական վաշտի սանիտար Դիմիտր Կոստանտինովը 1914 թ. հրատարակած իր հուշ-հոդվածում նշում էր, որ պատերազմում հայ զինվորները երբեք խուճապի չէին մատնվում, չէին նահանջում նույնիսկ այն ժամանակ, երբ դրա

---

[1] «Վիդուշ-Արարատ» պուլկարահայ տարեգիրք, էջ 191, 192:

[2] Նույն տեղում:

[3] Փաստաթուղթը պահպանվում է մեր անձնական արխիվում:

անհրաժեշտությունը կար: Եվ որտեղ հայտնվում էր հայկական վաշտը, ամենուրեք լսելի էին ողջույնի բացականչություններ:

Մինչ Թուրքերը մեկ գովաբանում, մեկ էլ դավաճան էին համարում հայերին, բուլղար հասարակական միտքը միանշանակ արտահայտում էր իր համակրանքը օսմանյան բռնապետության տակ հեծող հայ ժողովրդի և հիացումը պատերազմի ռազմաճակատներում մաքառող նրա զավակների հանդեպ:

Այդ օրերին բուլղարական թերթերում հայկական խնդրի մասին լույս էին տեսնում բազմաթիվ հոդվածներ՝ բոլորն էլ մեծ համակրանքով դեպի հայ ժողովուրդը: Դրանցից երկուսը հեղինակել էր Բուլղարիայի Առաջադիմական կուսակցության ղեկավար, երկրի Սոպրանիեի նախագահ, հաշտության բանակցությունների Բուլղարիայի կողմից առաջին պատվիրակ դոկտ. Տանևը: Նրա մի հոդվածը թարգմանաբար տպագրել էին Կ. Պոլսի «Առաջամարտը» (11 դեկտեմբերի 1912 թ.) և Թիֆլիսի «Հորիզոնը» (№ 19, 25 հունվարի 1913 թ.):

Առաջին հոդվածում Տանևը գրում էր, որ ներկայումս, երբ Թուրքիայի դեմ տարած հաղթանակների չնորհիվ փաստորեն Եվրոպայում ստեղծվել է յոթերորդ մեծ պետությունը, իրենց վրա սրբազան պարտականություն է ընկնում ամեն գնով պաշտպանել այդ ազգը, որն ունակ է ուրիշի ցավերը ամոքելու համար նվիրաբերել իր զավակների կյանքը:

Տանևի մյուս հոդվածում ասված էր. «... Յիշենք մինչեւ վերջ, որ մենք ազատարարներ ենք եւ իբր այդպիսիներ մեր վրայ պարտականութիւն է դրուած ձեռք կարկառել մեր հայ եղբայրներուն, որոնց ցաւերն ու տառապանքները աւելի մեծ են քան մերինները: Հիմայ մեզի սրբազան պարտականութիւն մը կիյնայ. պաշտպանենք այդ ազգը, բարձրացնելով Պերլինի դաշնագրով խոստացած բարեկարգութիւններուն հարցը, կամ գոնէ պահանջենք Լիբանանի նման վարչութիւն մը. Ռուսիան ալ ամբողջովին մեզի հետ պիտի ըլլայ: Միթէ՞ այս կենսունակ, եռանդուն, ընդունակ, կենդանի, աշխատասէր, նախաձեռնող, խնայող արթուն եւ համեստ ազգը արժանի չէ՞ աւելի լաւ վիճակի մը: Ո՞վ կրնայ ասոր մասին կասկածիլ»:

Անդրադառնալով վերջին դարերում օսմանյան բռնակալու-

թյան տակ հեծող հայ ժողովրդի անհուն տառապանքներին՝ հոդվածագիրը նկատում էր. «Եթէ ճակատագիրը խորթ մայր չըլլար ազգին, ան պիտի ըլլար մեծ ազգ մը եւ Աստուածաշունչի Արարատին շուրջ հիմա պիտի ունենայինք խիստ առանձնայատուկ մշակոյթ մը, ու իմացական նոր արժէքներով պիտի հարստանար մարդկութիւնը: Հայերն ունեն արտակարգօրէն առանձնայատուկ լեզու մը, լեցուն յստակ դարձուածքներով, որոնց չէք կրնար հանդիպիլ ուրիշ լեզուներու մէջ: Ով ճանչցած է հայերը, միշտ ապշած է շուտ ստեղծագործելու եւ կառուցանելու անոնց ընդունակութիւններուն վրայ»:

Այնուհետև Տանևը շարունակում է. «... Հայ ժողովուրդն ալ կը պայքարէր Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածին համար. այդ յօդուածը կերաշխաւորէր Հայաստանի, ամբողջ ազգի մը ինքնավարութիւնը: Բայց, աւա՜ղ, անոր, Հայ ազգին համար ո՛չ մէկ անգամ լուրջ խօսք չէ եղած: Մինչեւ այսօր ազատ ապրելու համար բարձրացուած ամէն ձայն խեղդուած է հայ արիւնին մէջ: Իսկ այս ազգին զարգացումը, ազգային գիտակցութիւնը եւ թիւն կարեւոր են: Ահա թէ ինչո՛ւ վաղը, երբ Պուլկարիա եւ Պալքանեան դաշնակցութիւնը պիտի աւարտեն իրենց ազատարարի գործը, պէտք է պահանջեն այս ազգին իրաւունքները, 61-րդ յօդուածին գործադրութիւնը: Ասով մենք մեր անկեղծ ազատարարի գործը աւելի պիտի ժողովրդականացնենք աշխարհի առջեւ»:

Տվյալ պահին հայության գլխավոր թշնամին Տանևը համարում էր կիսավայրենի քրդությանը՝ նշելով. «Կենդանի ազգ մը, ինչպես են հայերը, ձգել որ ոչնչանա, քիւրտերէն իսկ անդին անգոյն Ալպանիա մը անբնական բարձրացման մեջ է: ... Թղթակցութիւնները հայ ազգին վիճակին մասին հետզհետէ աւելի վրդովիչ լուրեր կը հաղորդեն, մինչ քիւրտերը իրենց ակռաները կը սրեն: Հազարաւոր նոր մարդիկ գազանաբար պիտի մորթոտուին: Ալպանական խնդրէն առաջ պէտք է դրուի Հայկական հարցը կամ գոնէ ալպանական հարցին դէմ Ռուսիան պիտի դնէ Հայկական հարցը: Հայաստան ունի իր պատմութիւնը, իր լեզուն: Բոլոր զարգացեալ ազգերու կողքին ալ երկար եւ յամառ պայքարներ է մղած իր ազատագրման համար եւ եւրոպական քաղաքակրթութիւնը Արեւելքի մէջ մտցնելու նպաստած: Անոր

չի պակսիր ազգային գիտակցութիւն, գրականութիւն: Ան կենդանի է, ան պէտք է ապրի: Հակառակ պարագային՝ «քրիստոնեայ» Եւրոպան անգամ մը եւս հանդիսատես պիտի ըլլայ անոր նոր հերոսական պայքարներուն, բայց այն ատեն անոնք սուգի պիտի նստին Եւրոպայի համար ալ: Ատանան պէտք չէ կրկնուի: Սինէմաներու լուսանկարները երկար ժամանակ «Քրիստոնեայ» Եւրոպային թոյլ պիտի տան, որ զբօսնու Պալքանեան պատերազմին արիւնալի պատկերներով...»:

Եվ Տանները բուլղար ազգի և նրա պետության պարտականությունն էր համարում՝ ուժերը և հնարավորությունները ներածին չափով աջակից լինել Թուրքիայի հայ ժողովրդին, նրա ազատագրական տենչանքներին: Նա գրում էր. «Մենք որ մեր մորթին վրայ զգացած ենք հալածանքները, միթէ չպիտի՞ փութանք ամէնէն առաջ օգնութեան հասնելու այդ հալածեալ ազգին: Ամբողջ իմացական աշխարհը, որ, կը յուսանք, խիղճ, հոգի եւ սիրտ ունի, մեր մարդասիրական գործին պիտի նպաստէ: Ասիկա մեր պարտականութիւնն է. քայլ մը, զոր կը պարտաւորէ մեր պատիւը: Եւ այսպէս,- Mementa Armenia – յիշենք Հայաստանը»:

Տարիներ անց՝ 1935 թ. օգոստոսի 18-ին, դոկտ. Իվան Դիմիտրովը "Яворов лист" թերթում գրում էր. «Հիրավի, հայերը փոխհատուցին բուլղար բանաստեղծ Յավորովին, որն իր ստեղծագործության մեջ չէր մոռացել նաև Հայաստանի դժբախտ ճակատագիրը և երգել էր այդ ճակատագիրն՝ իր «Հայեր» անունով հռչակավոր բանաստեղծության մեջ: Հայերը ոգևորված նրանից և իրենց ազատության գաղափարից, կատարեցին իրենց պարտականությունը Յավորովի և Բուլղարիայի հանդեպ: Նրանք զոհեր տվեցին նաև Մակեդոնիայի և Թրակիայի ազատության համար, որոնք այնքան մոտիկ էին Յավորովի և ամբողջ բուլղար ժողովրդի սրտին: Նրանք կատարեցին նաև հայ հայրենիքի հանդեպ իրենց պարտականությունը՝ թանկագին զոհեր տալով ազատության խորանի առաջ:

Սակայն, մենք կատարեցի՞նք արդյոք մեր պարտականությունը [հայերի հանդեպ] մինչև վերջ և հարկավոր զգուշավորությամբ:

Այն հայերը, որոնք մասնակից էին հայկական վաչտին, և

նրանք, ովքեր վաչտից դուրս էին, ամբողջովին նվիրված Բուլ-ղարիայի ազատագրական պայքարին, արժանի փոխհատուցում էին բանաստեղծ Յավորովին և նրա հիանալի «Հայեր» եղերեր-գին: Այդ բանաստեղծությամբ Յավորովը առհավետ կապեց իր անունը և իր անթառամ փառքը՝ հայ ժողովրդի ճակատագրի և անվան հետ: Նույնպես նա իրար չաղկապեց մեր երկու ժողո-վուրդները: Հայերն այսօր մի անգամ ևս հատուցում են բանա-ստեղծին, կանգնեցնելով նրա հուշարձան-կիսանդրին Բուլղա-րիայի մայրաքաղաքում»[1]:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Թուրքահայ հասարակական-քաղաքական գործիչների և Կ. Պոլսի հայ մեծահարուստների մի մասը, հայ եկեղեցու սպասա-վորները և մամուլի պահպանողական օրգանները հակված չէին արդարացնելու քառյակ դաշինքի զորքերի կազմում իրենց ազ-գակիցների մասնակցությունը պատերազմին:

Պատերազմի դեմ հանդես եկող հայկական մամուլի օրգան-ներում տպագրված հոդվածների հեղինակները զարմանք էին արտահայտում հանուն ուրիշ երկրի շահերի բուլղարական բանակի շարքերում կռվող հայ մարտիկների ցուցաբերած այդ-աստիճան անձնուրաց պահվածքի համար:

Բուլղարական բանակի կազմում Անդրանիկի և Նժդեհի գլխավորած վաչտի գործողությունների մասին քաջատեղյակ էին Կ. Պոլսում: Թուրքական մամուլի առավել ազդայնամոլ օր-գանները հայկական վաչտի գոյության փաստը օգտագործում էին հայության նկատմամբ թշնամական նոր գործողություններ հրահրելու համար: Կային նաև համեմատաբար «մեղմ» հրա-պարակումներ: Այսպես՝ անդրադառնալով վաչտի մարտական գործողություններին՝ «Իֆհամ» թերթը իր խմբագրականում գրում էր, թե դա դավաճանություն է առաջին հերթին թուրքա-հայ ազգի շահերին: Նա միմյանցից առանձնացնում էր Թուր-

---

[1] ***"Яворовь листь"***, *18 августа 1935 г.*

քիայում և արտասահմանում ապրող հայերին և վերջիններիս համարում երկրորդական կարգի[1]:

Եթե հայկական վաչտի կատարած հերոսությունների մասին լուրերը ոգեշնչում էին Թուրքիայից դուրս գտնվող հայերին, հատկապես հայ երիտասարդությանը, ապա Թուրքահայերի մեջ դրանք նոր տագնապներ էին հարուցում, քանզի համոզված էին, որ իշխանությունները դա հեշտությամբ չեն մարսի, և որ Թուրքերն անպայման նոր վրեժխնդրությունների կդիմեն:

Սահմանադիր ռամկավարների օրգան «Ազգ» (Բոստոն) թերթի Թղթակիցը Կ. Պոլսից գրում էր. «Անչուշտ քաջութեան հինչպիսի ապացոյցներ ալ տուած ըլլան Անդրանիկ և իրենները, պատերազմին բախտն ու ելքը իրենք չվճռեցին և ոչ իսկ կարելի է ըսել, թե ավազի հատիկի մը չափ ազդեցութիւն ունեցան դեպքերու ընթացքին վրայ, որոնք նոյնը պիտի ըլլային, ինչ որ եղան ու են այսօր, բայց չմոռնանք, որ իրենց անխորհուրդ ու յիմարական ձեռնարկը, եթե բան մը չչահեցուց պուլկարներուն, շատ բան կորսունել տուավ մեզի:

Մեր հերոսները, երբ Գրրգ Քիլիսեէն մինչև Տետե Աղաճ իրենց քաջագործութիւնները կը ցուցադրին, մոռցած էին թերևս որ ատոնց հաշիվն՝ իր տոկոսովը մեկտեղ, Թուրքիոյ մէջ ապրող իրենց երկու միլիոն անզեն ու անպաշտպան արիւնակիցներէն կրնար պահանջուիլ»[2]:

Այնուհետև հոդվածագիրը նշում էր, որ իրենց հավատակից-ներին քրիստոնյաների դեմ գրգռելու համար մահմեդական կրո-նավորները դիմում են ամեն տեսակի սադրանքների, հայտարա-րություններ են անում, թե պատերազմը սկսած քրիստոնյաների նպատակներից մեկը մզկիթները եկեղեցիների վերածելն է և իսլամության բնաջնջումը: «Ճիհատի կոչին հետ եթէ այս հե-քիաթներն ալ հասնին գավառի վայրագ խուժանին ականջնե-րուն, ինչ կըլլայ տպավորութիւնն ու հետևանքը:

Կարելի չէ մտածել, թէ հայկական դատը որևէ կերպով կրնայ նպաստավորուիլ այսպիսի արկածախնդրութիւններէ:

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»*** *(Բոստոն), № 38, 5 մարտի 1913 թ.:*

[2] ***«Ազգ»*** *(Բոստոն), № 38, 5 մարտի 1913 թ.:*

Պուլկարին, սերպին ու հելլենին խուսափուկ համակրութիւնը կուտի մը չափ իսկ արժեք չունի, անոնք հազիվ իրենց պահանջ-ները կրնան ապահովել ու անկե անդին փոյթերնին իսկ չէ եթէ հայաբնակ նահանգներուն մէջ քար քարի վրայ չմնայ»[1]:

---

[1] **«Ազգ»** *(Բոստոն), № 38, 5 մարտի 1913 թ.: Բալկանյան պատերազմում բուլղարական բանակի կազմում հայկական կամավորական վաչտի մասնակ-ցության մասին հաճախակի անդրադառնում էին Կ. Պոլսի Թուրքական թեր-թերը: Այդ հրապարակումները գայրույթ էին առաջ բերում ոչ միայն փողոցում, այլև Բ. Դռան աչխատասենյակներում: Զայրույթի կենտրոնում Անդրանիկն էր: Շապին-Գարահիսարի թուրք իշխանությունները պատրաստվում էին վրե-ժի: Անդրանիկի վաղամեռ կնոջ՝ Վերոնիկայի քույր Ազնիվ Թաչճյանը վերհիչել է. «Թուրքերը կատաղած կուգեին մեզ կոտորել, եթե պզտիկ հրաման մը տա-յին: Ան ատեն արդեն մենք ալ հարաբերութիւններս կտրեցինք Անդրանիկի հետ. երևի ինքն ալ գուչակած էր այս եղելութիւնը և ինքն ալ չէր գրեր մեզ նա-մակ» (ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 4, թ. 45): Սակայն որոշ ժամանակ անց թուրքերը առիթը գտան և գործի անցան: Քաղաքից դուրս մի քանի երիտասարդներ կանգնեցնելով՝ ոճրագործները, «Թող Անդրանիկը գա ու ձեզ փրկի» ասելով, սպանում են նրանց, ապա իբրև պատասխան Անդրանիկի գործողությունների՝ սրի են քաչում քաղաքի մոտ գտնվող Համզալու հայկական գյուղը (տե՛ս նույն տեղում): Երբ 1915 թ. սկսվեց հայերի ցեղասպանությունը, թուրքերը դաժան դատաստան տեսան Անդրանիկի հայրենի քաղաքի՝ Շապին-Գարահիսարի հայության հետ: Դահիճներն առանձնակի դաժանությամբ հաչվեհարդարի են-թարկեցին նրա հարազատներին ու ազգականներին: Նրանք ոչնչացրին Անդ-րանիկի եղբորը և նրա ողջ ընտանիքը, հորեղբոր բոլոր զավակներին՝ իրենց ընտանիքներով, այդ թվում հորեղբոր որդուն՝ գրականագետ Գագիկ Օգան-յանին: Թուրքերն առիթը բաց չէին թողնում ասելու, որ քաղաքի հայերին ջար-դելով՝ նաև լուծում են իրենց վրեժը Անդրանիկից, որ «նրանից չառած վրեժը առնում են նրա համաքաղաքացիներէն և ազգ ու ազգականներէն, քանի որ չեն կարող հաչտուիլ անցած-դարձած դեպքերուն հետ» (ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 4, թ. 47): Թուրքերը «կ՚ըսեին թե ի՞նչ գործ ուներ Անդրանիկ Պալքաններուն մէջ և պուլկար բանակին միացած իր հայ խումբերով նոյնիսկ հանդգնեցավ առաջինն ինքը մտնելու Էտիրնե քաղաքը ... Թուրքեր անչափ գաղազած էին և երկու խոսքէ մեկը կը պոռային և կ՚ըսեին «Թող ձեր Անդրանիկը գա և ձեզ փրկէ»: Նրանք բորբոքուած անխնայ կոտորեցին բոլոր ձեռքն ընկած տղա-մարդկանց, որոնց գերեզմաններն անհայտ եղան, իսկ երեխաները, աղջիկ, կին, քչեցին, տարին հոս, հոն, իրարմէ բաժանեցին, ցիր ու ցան ըրին և մեկզմեկէ անտեղեակ պահեցին» (նույն տեղում):*

Արյունահեղ կռիվները չատ ծանր էին նստում Բալկանների քաղաքային բնակչության վրա: Մեծ կորուստներ էին կրում նաև հայ խաղաղ բնակիչները՝ սպանվածներ, վիրավորներ, թալանվածներ: Թուրքահայ մամուլի օրգանները Կ. Պոլսի հայկական իշխանությունների ուշադրությունը հրավիրում էին Եվրոպական Թուրքիայում ծավալված արյունահեղ կռիվների հետևանքով այնտեղի հայերի ծանրագույն պայմանների վրա: Հայոց պատրիարքարանը չէր կարողացել օգնության ձեռք մեկնել իր հոտին: Քննադատելով պատրիարքին՝ հայկական մամուլը չեշտում էր, որ նա նույնիսկ ստույգ տեղեկություններ չունի բալկանյան հայերի մասին, որի պատճառով չի կարողացել կազմել մի հանձնախումբ՝ հետին թշվառության ենթարկված հայերին ինչ-որ չափով օգնություն ցույց տալու համար: Թերթերը հայկական պատասխանատու մարմինների ուշադրությունը հրավիրում էին պատերազմի արհավիրքներին ենթակա ազգակիցների նվազագույն կենսական պահանջներին բավարարություն տալու խնդրի վրա[1]:

Անկախ ամեն ինչից՝ հայությունը խաղաղություն էր ուզում, իսկ պատերազմը համարում էր համամարդկային չարիք: «Աւետաբերի» հոդվածագիրը նկատում էր. «Մարդիկ պատերազմի միջոցին կատարելապէս վայրի գազաններու պէս գիրար բզկտելու կը ձգտին և տասնեակ հազարներով կ'իյնան մահաստիւռ ռումբերու և գնդակներու միջոցով: Ո՞րքան ընտանիքներ իրենց միակ նեցուկներէն կը զրկուին, ո՛րքան մարդիկ դժբախտութեան յետին անդունդը կը գլտորին, ո՛րքան նիւթական կորուստներ ուրախութեամբ կը տանին մարդիկ իրենց նմանները կոտորելու համար»[2]:

Բալկանյան առաջին պատերազմի նկատմամբ բուլղարահայության ակտիվ վերաբերմունքը, հայկական վաչտի գործողությունները եվրոպական հասարակական կարծիքը միանշանակ չընդունեց. ընդհանրապես զուսպ լինելով իր գնահատականնե-

---

[1] **«Աւետաբեր»,** № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

ում՝ այս դեպքում չէր արդարացնում հայերի բռնած դիրքը: Հատկապես դա վերաբերում էր եվրոպական սոցիալիստներին, որոնք ավանդաբար կողմնակից էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը՝ այն դիտելով որպես հուսալի պատվար դեպի Եվրոպա ռուսական առաջխաղացման դեմ: Ֆրանսիացի հայտնի սոցիալիստ Ժորեսի օրինակով Միքայել Վարանդյանը նույնպես քննադատաբար էր գնահատում պատերազմի օրերին հայերի մեծ մասի հակաթուրք կեցվածքը: «Ամէն պարագայի իրողութիւն մըն է,- գրել է նա,- որ բալկանեան պատերազմէն ի վեր Ժորէս ի սպառ պաղեցաւ մեզմէ. վասնզի տեսաւ, որ ամբողջ հայութիւնը, մասնաւորապես թուրքահայերն իրենց պատրիարքով, Ազգային ժողովով և բոլոր քաղաքական կուսակցութիւններով բացարձակապես թշնամական դիրք էին բռներ հանդեպ Թրքութեան և նեստուեր էին Ռուսիոյ գիրկը...

Էլ այնուհետև չէինք լսեր Ժորէսի ձայնը հայ դատի մասին, էլ նա չէր երեւար մեր մտերմական հավաքոյթներու մէջ, էլ չէին ազդեր անոր վրայ մեր և անգամ Պրեսանսէի թախանձանքներն ու յորդորները - Պրեսանսէի՝ որ այդ միջոցներուն վերսկսեր էր «Պրո Արմենիայի» հրատարակութիւնը Վիքտոր Բերարի և մեզի (ՀՅ դաշնակցության: - Հ. Ս.) հետ... Ջեմ մոռնար Salle Wagram-ի հոյակապ միթինկ մը, ուր հրաւիրուած էին Ժորէս, Վայիան և Պրեսանսէ խոսելու արեւելեան տագնապի մասին: Խօսք տրուեցաւ նախ Պրեսանսէի, որ ամէնէն հմուտն էր օրուան հրատապ միջազգային խնդիրներու մէջ: «Պրо Արմենիայի» (եւ երբեմն Temps-ի) խմբագրապետը աննման վարպետութեամբ վերլուծեց բազմահազար ժողովրդի առջեւ բալկանեան, թուրքական կնճիռները և անցնելով հայկական խնդրին, ըսաւ ի միջի այլոց հետեւեալը. «Մեր ամէնէն պերճախօս ձայները, որոնք վաղուց ի վեր այնքան եռանդով պաշտպանել են հայ դժբախտ ժողովրդի դատը, այսօր տարաբախտաբար լռութիւն կը պահպանեն այդ դատի հանդէպ»:

Շեշտակի ակնարկ մըն էր Ժորէսին: Մեծ հռետորը ելաւ իր հերթին խօսելու արեւելեան տագնապի շուրջը և կը սպասէինք, որ գէթ քանի մը խօսքով պիտի յիշատակեր Հայկական հարցը.

բայց եւ ոչ մի խօսք չարտասանեց... Այդպէս – յամառ լռութիւն մինչեւ իր մահը: Ժողէս վչտացեր ու երես դարձուցեր էր մեզմէ ... Խորունկ ցաւ մըն էր մասնաւորապես այն հայ մտաւորականներու համար, որոնք դեռ 1896-ի թուականէն ճիգեր ըրեր են գրաւելու այդ մեծ ֆրանսացին մեր բարեկամներու շարքը»[1]:

Այո՛, կարծիքները հակասական էին, մեկը մյուսին ժխտող: Դա հետևանք էր ոչ միայն հայկական վաչտի գործունեությունը գնահատողների սուբյեկտիվ ընկալումների, այլև Թուրքիայում ապրող հայ բնակչության դժխեմ կացության:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ընդամենը մեկ ամսից մի փոքր ավելի ժամանակահատվածում Թուրքական բանակները բալկանյան պատերազմի բոլոր ճակատներում կրել էին ջախջախիչ պարտություններ: Դիվանագետներն ու մամուլը վկայակոչում էին հետևյալ պատճառները.

1) Բուն պատճառը ներքին տնտեսականն էր: Թուրքիայով ճանապարհորդած եվրոպացիներից մեկը երկիրն անվանել է «աղքատ հարուստ»: Հիրավի, նման բնութագրումը չատ դիպուկ էր: Բնական հարստությունների տեսակետից Թուրքիան առավել ինքնաբավ երկրներից մեկն էր, հողի պտղաբերության տեսակետից աշխարհում առաջիններից էր, տաք և խոնավ կլիմայի շնորհիվ ուներ փարթամ և բազմատեսակ բուսականություն: Երեք կողմից շրջապատված լինելով ծովերով՝ ուներ բացառիկ բարենպաստ հաղորդակցության ուղիներ աշխարհի երկրների մեծ մասի հետ: Թուրքիայի ափերի բազմաթիվ նավահանգիստները հարմար կայաններ էին ապրանքների ներմուծման ու արտահանման համար: Չնայած այդ ամենին՝ երկիրն ընդհանուր առմամբ հետամնաց էր, արտադրողական ուժերը քիչ թե չատ զարգացում էին ապրել վերջին 20-30 տարիներին,

---

[1] **«Սիմոն Զաւարեան»**, Ա հատ., Պէյրութ, 1983, էջ 52, 53:

այն էլ հիմնականում մայրաքաղաքում և ծովափնյա շրջաններում: Երկրագործության մեջ դեռևս իշխող էին ծայրահեղ հետամնաց արտադրական միջոցները, ուստի արտադրողականությունը քիչ արդյունավետ էր: Մահմեդական զանգվածների մեջ չարունակում էր տիրել միջնադարյան խավարը, եվրոպական քաղաքակրթության տարրերը դեռևս սաղմնային վիճակում էին:

2) Մյուս պատճառը տնտեսականից բխող սոցիալականն էր: Չնայած բացառիկ բնական պայմաններին՝ Թուրքիայի բնակչությունը համարվում էր ամենաաղքատներից մեկը: Նա չէր օգտվում այն բոլոր բարիքներից, որ նրան կարող էին տալ հողն ու ընդերքը: Ինչպես գյուղացիությունը, այնպես էլ քաղաքային բնակչությունը մշտական կարիքի մեջ էին, պետական գանձարանը դատարկ էր, պետական ծառայողներն իրենց աշխատավարձն ստանում էին մեծ ուշացումներով:

3) Հաջորդը կառավարման անարդար համակարգն էր: Անդրադառնալով այդ հարցին՝ Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթը գրում էր. «Երկրին մէջ տիրող ապօրինութեան, անարդարութեան հետեւանքով ամէն ոք դժգոհ է... Օս[մանեան] կայսրութիւնն առանց հիմնական բարեփոխումներու չի կրնար գոյութիւն ունենալ: Եթէ մենք ալ աշխարհի մէջ իբր քաղաքակիրթ պետութիւն մը պիտի ապրինք, պէտք է որ ամէնէն առաջ ամբողջ կայսրութեան մէջ հիմնական բարեփոխութիւն ներմուծենք: Միջնադարեան ըմբռնումներով եւ կազմակերպութեամբ այլեւս ոչ միայն չենք կրնար մեծ ազգերու շարքը դասուիլ, այլ նոյն իսկ մեր գոյութիւնն ու անկախութիւնը չենք կրնար պաշտպանել: Այս բարեփոխութեան հարցին նշանակութիւնը մեր Կայսրութեան համար նոյն իսկ այս պատերազմէն աւելի կարեւոր է: Վարիչ շրջանակները վերջապէս պիտի հասկնա՞ն արդեօք այս ճշմարտութիւնը»[1]:

4) Վճռորոշ էր բանակի անբավարար զինվածությունը, զինվորների ու սպաների ռազմական ցածր պատրաստվածությու-

---

[1] **«Աւետաբեր»**, № 44, 2 նոյեմբերի 1912 թ.:

նը, նրանց շարքերում անհրաժեշտ կարգապահության պակասը, անձնակազմի բարոյահոգեբանական անմխիթար վիճակը:

Սուլթան Աբդուլ Համիդի 35 տարիների գահակալության պայմաններում անդամալուծվել էր բանակի կառավարման համակարգը, նրա վարչական բովանդակ մեքենան, սպառնագին պակասել էր վարժ ու կարող հրամանատարների թիվը: Երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած տարիներին զինվորականներն ավելի շատ զբաղվում էին քաղաքական խնդիրներով, քան զինավարժություններով: Մոռացության էին տրված թուրքական զինվորականության հին ու եզակի ռազմական ավանդույթները: Զորամասերում մեծ թիվ էին կազմում ռեդիֆները (պահեստի զինվորները), որոնք հակառակորդի հետ առաջին իսկ ընդհարման ժամանակ խմբերով լքում էին կռվի դաշտը: Այնինչ 21-29 տարեկան կանոնավոր զինվորները մինչև վերջ մնում էին իրենց դիրքերում: Այդ էր պատճառը, որ վիրավոր թուրք զինվորների թվում համարյա չկային ռեդիֆներ: Թեև թուրք սպաները կարծիք էին հայտնում, որ կոպիտ սխալ է իրենց զինվորական ունակություններն արդեն կորցրած ռեդիֆներին կռվի դաշտ հանելը[1], բայց վերին հրամանատարությունը կտրականապես հերքում էր սպաների այդ տեսակետը:

Բալկանյան ռազմաբեմում թուրքական զորքերի առաջին լուրջ պարտություններն առիթ դարձան, որ Իթթիլաֆի կառավարությունը և մամուլը նորանոր մեղադրանքներ ներկայացնեն Իթթիհադին: Շեշտվում է, որ իտալական պատերազմից և ներքին բազում խնդիրներից առանց այն էլ նեղն ընկած երիտթուրքերի կառավարությունը, միամտաբար հավատալով մեծ պետությունների խոստում-երաշխիքներին, թե Թուրքիայի դեմ այլևս պատերազմ չի լինելու, ցրեց իր զորքերի մեծ մասը: Այդ պահից «մենք խաբուեցանք, յանկարծակիի եկանք եւ կործանուէցանք»[2],- նշում էր իթթիլաֆական բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը:

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Առաջամարտ»*** *(Կ. Պոլիս), № 1072, 28 նոյեմբերի (10 դեկտեմբերի) 1912 թ.:*

Վարչապետ Ահմեդ Մուխթար փաշան «էքո դը Պառի» պարբերականին տված հարցազրույցում ասել էր, որ երիտթուրքերն իրենց կառավարման տարիներին բանակում ամեն ինչ տակնուվրա են արել: Ամենից առաջ նա չեչտադրում էր սպայական կազմում տեղի ունեցած աննպաստ փոփոխությունները: Մինչև 1908-ի օսմանյան հեղափոխությունը թուրքական բանակի սպայակազմի մի մասը համալրվում էր զինվորական ծառայությունից, մյուս մասը՝ զինվորական վարժարաններից: Դա հաճո չթվաց երիտթուրքերին, որոնք նախկին սպայության մեծ մասին հանգստյան կոչեցին, շատերն էլ կամավոր թողեցին բանակը, և երեք տարվա ընթացքում զորամասերը համալրվեցին ավելի քան 1500 երիտասարդ անփորձ սպաներով: Նախկինում 800 զինվորից կազմված գումարտակն ուներ 16-17 սպա, իսկ հիմա՝ ավելի քան կրկնակի պակաս՝ 7 սպա: Սպաները սերտ հարաբերությունների մեջ չէին իրենց ենթակա զինվորների հետ: Մուխթար փաշան շարունակում էր. «Մեր բոլոր քաջ զինուորները առանց գլխի մնացած էին, ինչ կ'ուզէիք որ ընէին: Եւ յետոյ, հին թուրքերուն ատեն սպան միշտ իր զինուորներով կ'զբաղէր, անոնց համար ամէն բան կ'ընէր: Մինչդեռ մեր երիտասարդ սպաները Պէրլինի պէս կ'ուզէին ընել: Մարզանքէն վերջ սուրը պատեանը կը դնէին եւ այլեւս գործերնին վերջացած էր»[1]:

Ֆոն դեր Հոլց փաշան, «Ասիական-գերման ընկերության» հրավերով այնտեղ ունեցած ելույթում անդրադառնալով թուրքական բանակի կրած պարտություններին և կարծես անհամաձայնություն հայտնելով Ահմեդ Մուխտար փաշային, բայց փաստորեն հաստատելով նրա ասածը, նշել էր. «Պէտք է գիտնալ, որ մինչեւ 1909, Թուրքիա նոր մեթոտով բանակ մը չունէր: 1909էն ետք ձեռնարկեց բանակին վերակազմութեան, սակայն այդքան կարճ ժամանակամիջոցի մէջ ան չկրցաւ իր բանակը վերակազմել, ինչ որ չպիտի կրնար ընել ուրիշ ոեւէ տէրութիւն: Պուլկարիա 27 տարիէ ի վեր պատրաստուած էր այս պատե-

[1] **«Ժամանակ»**, № 1264, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

բազմին: Թուրքիա, նոյնիսկ Անատոլու վերջին տասը տարուան միջոցին անվերջ կռիւներով հիւծեցաւ: Պետութիւնը կանգուն պահելու համար անլուր զոհողութիւններ պահանջուեցան, ու հիմա եւրոպական նահանգները կը կորսուին եւ Թուրքիոյ ձեռքը մնալիք միւս նահանգներն է որ պիտի կրեն ծանրութիւնը»[1]:

Բայց Իթթիլաֆը չարունակում էր բացահայտել գերմանացիների և անձամբ գերմանացի զորավար ֆոն դեր Հոլց փաշայի օգնությամբ Իթթիհադի կողմից թուրքական բանակի վերակառուցման ճակատագրական արատները: Անդրադառնալով բանակի աններելի թերություններին՝ իթթիլաֆական վարչապետը չեշտադրում էր, թե իր կառավարությունը որքան մեծ ջանքեր է գործադրել բանակը լիակատար ջախջախումից փրկելու համար: «Պուլկարիոյ դէմ կրցայ 200.000 զինուոր հաւաքել պատերազմի սկիզբները: Յունաստան և Գարատաղ ինձ մտահոգութիւն չէին պատճառեր: Ամէն բանէ առաջ պէտք էր պուլկարները կեցնել»[2]: Նա չեշտում էր, որ օսմանյան ձախողումներից հատկապես աններելին այն է, որ բոլորովին բարձիթողի է զորքի կերակրման հարցը: Զինվորներն օրերով տառապում են սովից, այն դեպքում, երբ ռազմաճակատ հասած վագոնները լիքն են հացով ու այլ սննդամթերքով: Անկազմակերպվածության և ուտելիքի բաշխման անկանոնության պատճառով նրանք օրերով մնում են առանց ուտելիքի: «Ի՞նչ կ'ուզէիք որ ընէին. սպա չունէին, անօթէ էին, փախան»[3]:

5) Մեծ էին Թուրքիայի և բալկանյան դաշնակից բանակների զորքերի ու զենքերի որակների տարբերությունները: «Ազատամարտը» թարգմանաբար արտատպել էր Փարիզում հրատարակվող երիտթուրքական «Ժեոն Թյուրք» թերթում իթթիհադական գործիչ Հակոբ Շերբեթճյանի հոդվածը, որտեղ նա գրում էր, որ թուրքական բանակի խոչոր պարտությունների գլխավոր պատճառներից մեկն այն է, որ նա առաջնորդվում է պրուսական ռազմական արվեստով և գործածում է համարյա միայն

---

[1] **«Ժամանակ»**, № 1264, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

գերմանական գենք: «Այժմէն կը թուի որ կարելի է դաս մը առնել այն տխուր դէպքերէն, որոնք սուգի մատնեցին մեր հայրենիքը,- գրում էր նա: - Այս դասը այն է որ մարաջախտ ֆօն տէր Կօլցի եւ Փրուսիացի մարզիկներու ա՛յնքան գովաբանուած զինուորական կազմակերպութիւնը սնանկացած է Թուրքիոյ մէջ: Այդ անբաւականութեան ապացոյցը ձեռք բերուած է, ու գերման թերթերը իրենք ալ հաստատած են այս բանը, ո՛չ առանց դառնութեան: Գերմանական կազմակերպութիւնը ձախողեցաւ հաւանաբար անոր համար որ չէր հարմարեր օսմանցի զինուորին նկարագրին, բայց նաեւ եւ անտարակոյս այն պատճառով որ կարծուածին չափ կատարեալ չէր: Մեր հայրենիքին ի մեծ դժբախտութիւն, փորձառութիւնը հաստատեց այն թէզը զոր միշտ պաշտպանած ենք հոս, հրաւիրելով մեր կառավարութիւնը որ զգուշանայ գերմանական բարեկամութենէն, գերմանական մարզանքէն, գերմանական յորդորներէն, գերմանական ապրանքներէն»[1]: Ռազմաճակատում Թուրք հրետանավորները մշտապես բողոքում էին, որ իրենց տրամադրության տակ գտնվող հիմնականում գերմանական հրանոթները չեն կարողանում դիմանալ թշնամու բանակների ֆրանսիական «Շնեյդեր-Կրեզո» նորագույն հրանոթների հարվածներին[2]: «Քրուփի թնդանօթներուն վարնոցութիւնը պատճառ եղաւ որ մեր հրետանին քանդուի Քրէօզէի գործարաններուն պատրաստած թնդանօթներէն: Ամէն կողմ կ'երեւայ այն աղետալի ազդեցութիւնը զոր Քայզէրին հպատակները ունեցած են մեր հայրենիքին վրայ»[3]:

6) Թուրքերը աներևակայելի դանդաղկոտությամբ էին ընդօրինակում եվրոպական առաջավոր գիտությունն ու տեխնիկան, պատերազմելու արվեստը:

Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը թարգմանաբար արտատպել էր Ալի Քեմալ բեյի «Իկդամ» («Խիզախություն») թերթում տպագրված հոդվածը, ուր հեղինակն անդրադառնում էր պա-

---

[1] **«Ազատամարտ»**, № 1030, 16 (29) հոկտեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

տերազմում Թուրքական բանակի պարտության հենց այդ պատճառին: «Արեւելքի եւ Արեւմուտքի հակառակութիւնները յավիտենական են,- գրում էր Քեմալ բեյը:- Այսօր սակայն այս կռիւին մէջ Արեւմուտքն է որ կը յաղթէ, մինչ Արեւելքը կը պարտուի: Որովհետեւ ան գիտութիւն է, ուսում է, քաղաքակրթութիւն է, մինչ ասդիինը անոր հետ բաղդատմամբ տգիտութիւն է, ուսման չգոյութիւն է, քաղաքակրթութեան պակաս է: Այս ճշմարտութիւնը չի հասկնալ մտաւորապէս իյնալ կը նշանակէ: Այս տեսակէտով Արեւելքին եւ Արեւմուտքին միջեւ Եւրոպայի մէկ անկիւնը սեղմուած Թուրքերուն քաղաքակրթական պարտականութիւն մը կ'իյնար, որ էր ազգային բարքերը պահպանելով հանդերձ տրտմաբանութեամբ, ուսումով եւ քաղաքակրթութեամբ կարելի եղածին չափ Արեւմուտքի մօտենալ, արեւմտեան քաղաքակրթութիւնը իւրացնել... Մասնաւորաբար Եւրոպացիներուն համար արեւելեան ազգերը մեծ խնդիր մը կը կազմեն: Այս ազգերը կարելի չէ անկեալ վիճակի մը մէջ թողուլ: Բիրտ ուժով զանոնք ջնջելն ալ հակամարդկային է...»[1]:

7) Նշենք նաև, որ օսմանյան կայսրությունն ընդարձակածավալ էր, միաժամանակ նրա հաղորդակցության միջոցները շատ թերի էին, որի պատճառով Թուրքական կառավարությունը մեծ ուշացումով էր կարողանում զորքերը հասցնել պատերազմի դաշտ և դրանք կենտրոնացնել ռազմաճակատի առավել վտանգավոր հատվածներում: Անատոլիայից եկած օգնական զորքի մի մասը ստիպված էր եղել հետիոտն երկար տարածություն կտրել և Փոքր Ասիայից պատերազմի դաշտ էր հասել հոգնած ու վհատված: «Ազատամարտը» գրում էր, որ մասնավորապես բուլղարների հաջողությունների հիմնավոր պատճառներից մեկը նրանց երկրի տարածքի փոքրությունն է, որը զորահանությունը դարձնում է ավելի դյուրին ու արագ, քան Թուրքիայում[2]:

8) Բալկանյան դաշնակից երկրների հաղթանակներին նպաստում էր նաև այն, որ նրանց երկաթուղիներն ու ճանա-

---

[1] Տ'ես **«Ժամանակ»**, № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե'ս **«Ազատամարտ»**, № 1028, 14 (27) հոկտեմբերի 1912 թ.:

պարհները եվրոպական Թուրքիայի համեմատ ավելի կատարելագործված էին, գործում էին ավելի կանոնավոր, որի շնորհիվ կարողանում էին կարճ ժամանակի ընթացքում գլուխ բերել զորքերի տեղափոխումը ռազմաճակատներ:

9) Մամուլը նշում էր նաև թուրքերի պարտության ոչ էական պատճառներ ևս. օրինակ՝ թուրք զինվորին երբեք չէր հետաքրքրում, թե ինքն ինչու է կռվում: Նա պարզապես կռվում էր Ալլահի և Փադիշահի համար:

10) Վերջապես, ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Տրիպոլիտանական (Իտալական) պատերազմում կրած ծանր պարտությունից հետո թուրքական բանակը պատրաստ չէր մի նոր, է՛լ ավելի արյունահեղ պատերազմի, որպիսին Բալկանյանն էր:

ՊՈԼԻՍԸ ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ՄԵՋ

Կ. Պոլսին բոլորը նայում էին նախանձով: Դիվանագիտական շատ խարդավանքներ էին հյուսվել նրա շուրջը, և շատ սրեր խաչվել նրա մատույցներում, բայց երկար դարեր ի վեր ոչ մեկին չէր վիճակվել տիրանալ օսմանյան մայրաքաղաքին

Նոյեմբերի 4 (17)-ի առավոտյան բուլղարական մի քանի զորամասեր արդեն օսմանյան մայրաքաղաքի դռների առջև էին: Քաղաքն արթնացավ թնդանոթաձգության գոռ որոտմունքներից, որոնք լսվում էին առավելապես Բերայի բարձունքներում և արձագանքում Շիշլիում, Թալիմհանեում, Թաթավլայում, Մաքրիգյուղում, Խասգյուղում և մայրաքաղաքի ուրիշ մասերում: Հեռագրերը հաղորդում էին, որ արդեն հետևակի ընդհարումներ են սկսվել Հատեմ Քեոյի և Տերքոսի կողմերում: Այստեղ էին կենտրոնացել բուլղարական բանակի առաջապահ ուժերը, որոնք խնդիր ունեին Քեաղըտհանեի վրայով առաջանալ դեպի Շիշլի: Այդ ուղին ընտրվել էր խուսափելու համար օսմանյան մարտանավերի ռմբակոծությունից:

Բայց բուլղարական հետևազորը, որ փորձում էր առաջանալ

Թուրքական բանակի աջ թևով և կենտրոնով, հետ մղվեց հրետանու զորավոր կրակով:

Բուն մայրաքաղաքում տիրում էր սոսկալի տրամադրություն: Օսմանցիների օրոք այն երբեք այդպիսի ընկճված ու խուճապահար վիճակի մեջ չէր եղել: Նախկիններում Բ. Դուռը եվրոպական այս կամ այն խոշոր պետությունից երկյուղներ էր ունեցել, ընկրկել էր նրանց ռազմական ուժի առջև: Բայց որ Թուրքական կառավարությունը վախ ունենար, թե բալկանյան փոքր պետությունները կարող են վտանգ սպառնալ կայսրության մայրաքաղաքին, ոչ ոքի մտքով չէր անցել: Կ. Պոլսի ամրացումը Պապը Ալիում (Կ. Պոլիս) հիմնական մտահոգություն էր դարձել: Այդ ուղղությամբ ուժերի գերագույն լարումով աշխատում էր մայրաքաղաքի մուհաֆըզը*:

Այս պայմաններում Պոլսի նավահանգստում գտնվող օտար մարտանավերից զորախմբեր դուրս եկան՝ մայրաքաղաքի իրենց դեսպանատների ապահովությունը հսկելու համար: Դրանք ստանձնեցին նաև քաղաքի տարբեր հատվածների պաշտպանությունը:

Պոլիսը բուլղարներից պաշտպանելու համար կարծես միավորվում էին բոլոր երկրները: Նրանցից ոչ մեկը չահագրգռված չէր, որ բուլղարները տեր դառնան օսմանյան մայրաքաղաքին և վերահսկեն Դարդանելը: Նրանք բոլորը լավ էին հասկանում, որ Կ. Պոլսի և նեղուցների status quo-ի խախտումն անխուսափելիորեն առաջ կբերի այնպիսի թնջուկներ, որոնք ոչ ոք այլևս չի կարող միայնակ հաղթահարել:

Արագ կազմվեց մայրաքաղաքի պաշտպանության հատակագիծ, որի համաձայն՝ ֆրանսիական զորքը պիտի պաշտպաներ Բերայի, Պանկալթիի և Շիշլիի կողմերը, իտալական զորքը՝ Իշխանաց կղզիները, ռուսականը՝ Ֆեներն իր շրջաններով, անգլիականը՝ Ղալաթիան, ավստրիականը՝ Թոփխանեն, գերմանական նավաստիները պաշտպանելու էին Սկյուտարի կողմը, իսպանացիները և հոլանդացիները պիտի իրենց պաշտպանու-

* Պաշտպան բանակի հրամանատարությունը:

թյան տակ առնեին Գում-Գափուն, Ենի-Գափուն և Սամաթիան, ռումինացիները՝ Բոսֆորը[1]:

Մեծ ուժեր էր Պոլիս հանել հատկապես Գերմանիան: «Բուլթանիա» թերթը հաղորդում էր, որ գերմանական «Գեոբեն» զրահապատ հածանավը ցամաք է նետել 470 նավաստի և 11 սպա, արագահարված երկու թնդանոթ, բազմաթիվ գնդացիրներ: Նավաստիները պաշտպանում էին գերմանական դեսպանատունը, հյուպատոսարանը և հիվանդանոցը: Թերթը նշում էր, որ Պոլսում ափ հանված ավստրիական նավաստիների թիվը կազմում է 300, ֆրանսիականը՝ 250, իտալականը՝ 200[2]: Քաղաքի պաշտպանության համար խստագույն միջոցներ էր ձեռնարկել Թուրք ժանդարմների գերմանացի հրամանատար Պաումանը՝ Պոլսում խարիսխ նետած եվրոպական մարտանավերի ընդհանուր հրամանատարը: Բ. Դուռը հույս ուներ, թե Եվրոպան վերջին րոպեին պատժամիջոցներով կսպառնա բալկանյան քառյակին: Չնայած տերությունները դեռ շարունակում էին հայտարարել, թե իրենք երաշխավոր են Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմանը, բայց իրականում պատրաստ չէին կատարելու իրենց խոստումը: Նույնիսկ նախորդ՝ 19-րդ դարում, ռուսական սպառնալից գրոհները Թուրքիայի վրա անկարելի էր համեմատել նրա ներկա ճգնաժամի հետ, որովհետև եթե այն ժամանակ արևմտաեվրոպական պետությունները իրենց ռազմական ուժով ու խորհուրդներով կանգնած էին Թուրքիայի կողքին, ապա այժմ վիճակը բոլորովին այլ էր: Նրանք հիմա գործնականում չեզոք էին:

Այնուամենայնիվ, մայրաքաղաքի պաշտպանության գլխավոր ուժը շարունակում էր մնալ թուրքական զորքը: Քաղաքի բոլոր շրջաններում տեղակայված թուրքական զորամասերին հայտարարված էր, որ նահանջող զինվորներն ու սպաները կգնդակահարվեն տեղում: Իսկ Սան-Ստեֆանոյի բարձունքների վրա բացազատվել էր թուրքական 20-հազարանոց զորաբա-

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

նակ, որի խնդիրն էր թույլ չտալ պարտված զորամասերի մուտքը Կ. Պոլիս, այլ նրանց ուղղորդել Փոքր Ասիա[1]: Բ. Դուռը միաժամանակ հայտարարել էր, որ եթե թշնամին մտնի Պոլիս, ապա քաղաքի բնակիչները պարտավոր են կռվել մինչև վերջին շունչը: Իբր իրեն նույնպիսի զոհողության էր պատրաստում նաև Իթթիլաֆի կառավարության կազմը, համենայնդեպս՝ խոսքով: «Առաջամարտ» թերթը հաղորդում էր. «Քեամիլ փաշա մեծ տէրութիւններու դեսպանները հավաքելով, անոնց յայտարարած է թե այն պարագային, երբ պուլգարները Պոլիս մտնեն, սուլթանն ու ինքը որոշած են մեռնիլ»[2]:

Կ. Պոլսի վրա բուլղարական զորքերի մոտալուտ հնարավոր հարձակումը տագնապ ու խուճապ էր առաջ բերել ոչ միայն Բ. Դռան, այլև Կ. Պոլսի դիվանագիտական բոլոր շրջաններում: Սկսվեցին վախվորած դիվանագետների փոխայցելություններ: Այդ օրվա առավոտյան Թուրքիայի արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը գնաց ռուսական դեսպանություն՝ բանակցելու դեսպան դը Գիրսի հետ, որից հետո եղավ վարչապետի մոտ: Անգլիական դեսպանատան առաջին թարգման Ֆիցմորիսը չտապեց Նորատունկյանի բնակարան և տեսակցեց նրա հետ, որից հետո երկուսով մեկնեցին Բ. Դուռ՝ խորհրդակցելու վարչապետի հետ: Օրվա ուշ ժամերին ավստրիական դեսպան Պալավիչինը, գալով Բ. Դուռ, տեսակցեց Քեամիլ փաշայի և Նորատունկյանի հետ[3]:

Նոյեմբերի 5-ի առավոտյան լուրեր հասան Պոլիս, որ տերությունների սպառնալիքներով բուլղարները դադարեցրել են հարձակումը մայրաքաղաքի վրա, միաժամանակ հայտարարվեց, որ այդ դադարը ժամանակավոր է: Հակասական լուրերը շատերի մեջ համոզմունք էին ստեղծել, թե, այնուամենայնիվ, բուլղարները մտնելու են Պոլիս և հենց այնտեղ են թելադրելու զինադադարի իրենց պայմանները: Նրանք համոզված էին, որ

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Առաջամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

[3] Նույն տեղում:

միայն այդ գնով է հնարավոր փակել պատերազմի արյունոտ էջը և ձևափոխել Եվրոպայի քարտեզը:

Այն ժամանակ, երբ Կ. Պոլիսն անկման նախօրյակին էր, երբ կենաց ու մահու կռիվ էր ընթանում բալկանյան դաշնակիցների և Թուրքիայի միջև, այդ նույն ժամանակ ՀՅ դաշնակցության օրգան «Առաջամարտում» տպագրվում է զարմանալի կարճատեսությամբ, իրականությունից բոլորովին կտրված «Մեծ երազի սկիզբը» վերտառությամբ հոդվածը, որի հեղինակը է. Ակնունին էր (Խաչատուր Մալումյան)[1]:

Ակնունին նշում էր, որ մի քանի տարի առաջ, երբ բուլղարական զորքը գրոհում էր Սերբիայի վրա, կամ երբ Սոֆիայի ազգայնամոլները «Կորչեն հույները» աղաղակներով նրանց դուրս էին քշում իրենց մանուկ պետությունից, և կամ երբ բալկանյան չորս պետությունները նույնքան կասկածամիտ էին միմյանց նկատմամբ, որքան այսօր Թուրքն է դեպի հույնը կամ քուրդը՝ դեպի հայը, ով կարող էր երևակայել, թե կգա մի օր, երբ այդ երկրները կկանգնեն համատեղ պայքարի դրոշի տակ, կողք կողքի՝ ծառայելով քաղաքական և քաղաքակրթական նույն իդեալին:

Հոդվածագիրը գտնում էր, որ մի օր բալկանյան չորս երկրներին կմիանան նաև Ալբանիան ու Ռումինիան, և դրանով իսկ նախադրյալներ կստեղծվեն, որ ժամանակի ընթացքում դաշինքի բոլոր անդամ պետությունները միավորվեն՝ ստեղծելով բալկանյան համադաշնային մեկ միասնական պետություն, որի շնորհիվ Բալկաններում ընդմիշտ կվերանա թշնամությունը, տարածաշրջանի բոլոր ժողովուրդները կապրեն համերաշխ, եղբայրաբար:

Ավելին, Ակնունին չէր բացառում, որ բալկանյան երկրներին մի օր կարող է հետևել նաև օսմանյան կայսրությունը, որ համերաշխության և համադաշնության գաղափարը կարող է խթան հանդիսանալ Մերձավոր Ասիայի համար, որը նույնպես ձգտում է ձերբազատվել դարերի տանջանքներից և ապրել նոր կյանքով՝ համատեղ ու համերաշխ: Նա գրում էր. ««Աներևակայելի երազների» այդ առաջին իրականացումը զորեղ ու յուսաբեր՝

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

նեցուկ է աւելի մեծ երազների յաղթանակին. այն, որ կը գայ մի օր, եւ ո՛վ գիտէ, գուցէ նոյնքան արագ որքան առաջինը, երբ համաձայնակցութեան սքանչելի գաղափարը սարչաւ կ՚անցնի Բոսֆորի վրայով, որպէս զի Եւրոպայից մուտք գործէ Ասիա, եւ Փոքր-Ասիական գետնի վրայ տնկէ այն ծառը, որ արդէն այս-քա՛ն համով պտուղներ է տալիս բալկանեան հողի մէջ...»[1]:

Իր պարզամտութեամբ հայտնի հեղինակը չէր բացառում, որ Օսմանյան կայսրությունը ոչ միայն կդառնա եղբայրական ժողովուրդների Արևելյան համաձայնություն, այլև վաղ թե ուշ նա կմիանա Բալկանյան համաձայնությանը, և կստեղծվի մի հզոր ու միասնական պետական օրգանիզմ, որը կձգվի Սերբիայից մինչև Մերձավոր Արևելքի խորքերը՝ մինչև մահմեդականների կրոնական կենտրոն Մեքքա, մինչև Եմեն:

«Քաղաքական թշնամութիւնները անցողական են եւ մոռացուկ,- նշում էր հոդվածագիրը:- Եւ ո՛չ մի լուրջ, տեւական պատճառ չկայ որ արգիլէ օսմանեան կայսրութեան Փոքր-Ասիական հատուածին, ցնցուած պատերազմի տխուր դասով, հաշտութեան ձեռք մեկնել այսօրուան թշնամուն, ու մոռացած ծանր վէրքէրը, քայլել դէպի դրացիական նոր կեանքը, որ սերտ ու ամուր պիտի լինի Բոսֆորի այս ու այն կողմը, թէ՛ տնտեսական տեսակէտից, թէ՛ քաղաքական հողի վրայ, եւ թէ նոյնիսկ երկու կողմերը ապրող ազգութիւնների պատմական կապերի պատճառաւ»[2]:

*Եվ այսպես, ըստ Ակնունու՝ «**Բալկանյան դաշնություն**, բոլոր ազգերի ինքնավար, անկախ կենցաղով,- ահա այսօրուան փաստը:*

***Փոքր-Ասիական Դաշնութիւն**, բոլոր ազգերի ինքնավար կեանքով, շաղկապուած պետական ազգահաւասար կազմի մէջ,- ահա այսօրուան տենչանքը:*

***Բալկանեան այսօրուան** Դաշնութեան եւ Փոքր-Ասիական վաղուան Դաշնութեան միացումը, մէկը իբրեւ դրօշակիր եւրոպական քաղաքակրթութեան, միւսը իբրեւ յառաջապահ ասիա-*

---

[1] ***«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Նույն տեղում:*

կան վերածնութեան:- Ահա մեծ երազը, երազների երազը, որին պէտք է ձգտին ու ծառայեն բոլոր նրանք, որոնք միտք ունին, որոնք առօրեայ մանրացնող յոռետեսութեան գերին չեն, այլ նախակարապետները վաղուան մեծ յեղաշրջումին եւ ազգերի դաշնութեան հոյակապ գաղափարին»[1]:

Իսկ դրությունը Պոլսում ժամ առ ժամ վատթարանում էր:

Եվրոպական Թուրքիայի տարբեր հատվածներից, հատկապես ռազմաճակատի բուլղարական հատվածից հեռացել և մայրաքաղաք էին լցվել շուրջ 25 հազար խլամ բնակիչներ, որոնք հիմնականում տեղավորվել էին պետական չինություններում: Պատերազմի դաշտից Պոլիս էին վերադարձել տասնյակ հազարավոր օսմանյան զինվորներ, որոնք երեկ տուն ու տեղ թողած գնացել էին մահվան դաշտ և այժմ մայրաքաղաքի վրայով վերադառնում էին կայսրության ասիական մասի իրենց բնակավայրերը՝ անդամալույծ, դառնացած հոգով ու հացի կարոտ[2]:

Նկատի ունենալով ծայրահեղ լուրջ կացությունը Կ. Պոլսում՝ քաղաքի ողջ քրիստոնյա բնակչությունը հույսը դրել էր եվրոպական մեծ պետությունների պաշտպանության վրա: Նրանք սարսափով սպասում էին, որ ռազմաճակատից վերադարձած թուրքաց զորքերը, պարտությունից գազազած, կարող էին խոշոր ջարդեր կատարել: Տագնապն ուժեղանում էր մանավանդ այն պատճառով, որ տարբեր պատրվակներով ամեն օր ձերբակալվում էին մեծ թվով քրիստոնյաներ: Զանգվածային շուրջկալներ ու կալանավորումներ էին տեղի ունենում մերձքաղաքային բնակավայրերում՝ Վոդենում, Ֆլորինում, Գևգելում, Սալոնիկում և այլուր[3]:

Մայրաքաղաքում պարենային ճգնաժամ էր: Հատկապես խիստ էր վերահսկվում հացի բաշխումը: Մեկ այստեղ, մեկ այնտեղ բռնկվում էին տարափոխիկ հիվանդություններ՝ հիմնականում տիֆ ու խոլերա: Նման հիվանդություններով վարակվածներն անմիջապես մեկուսացվում էին: Ի պատիվ բժիշկների՝

---

[1] **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 234, 21 հոկտեմբերի 1912 թ.:

առայժմ հաջողվում էր զսպել վտանգավոր հիվանդությունները, արգելափակել դրանց լայն տարածումը: Մամուլը գրում էր, որ որքան էլ տարօրինակ է, այս երկու հիվանդությունները ինչ-որ չափով զսպիչ դեր են խաղում դեպի բուն մայրաքաղաք բուլղարական զորքի առաջխաղացմանը՝ վարակի երկյուղի պատճառով:

Օրվա տարբեր ժամերի ռազմաճակատից գնացքներով Կ. Պոլիս էին բերվում հարյուրավոր վիրավորներ՝ զինվորներ ու սպաներ: Օրինակ՝ հոկտեմբերի 24-ին Պոլիս հասավ 500 վիրավոր, հաջորդ օրը՝ 720[1]: Նոյեմբերի սկզբին մայրաքաղաքում կուտակվել էր 20 հազար վիրավոր: Վիրավորների մի մասը լցվել էր տեղի հիվանդանոցները, այդ թվում հայկական Սբ. Խաչ հիվանդանոցը[2]: Քանի որ դրանք այլևս ի վիճակի չէին ընդունելու նոր վիրավորների, ուստի իշխանությունների հրամանով ժամանակավոր բուժատների վերածվեցին նախ հունական և եվրոպական, ապա և հայկական վարժարանները: Վերջիններից առաջինը փակվել էր Եսայանը, ապա՝ Գրիգոր Լուսավորիչը: Փակվել էին նաև մանկապարտեզները, որբանոցները*, հյուրանոցները, այդ թվում լավագույն հյուրանոցներից մեկը՝ մայրաքաղաքի գլխավոր փողոցի՝ Բերայի վրա գտնվող Թոքաթլյանը**:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 233, 20 հոկտեմբերի 1912 թ.:

* Այդ ժամանակ մայրաքաղաքում գործում էին Գալֆայան, Գարակեոզյան, Սբ. Փրկչի երկսեռ և Շիշլիի Տիկնանց Միության որբանոցները: Հայ կաթոլիկ համայնքն ուներ Անարատ Հղիության որբանոցը:

** Հյուրանոցը պատկանում էր հայտնի ձեռներեց ու բարեգործ, համեստ խառնվածքի տեր Մկրտիչ Թոքաթլյանին: Ծննդավայր Փոքր Ասիայի Թոքաթ քաղաքից գալով Կ. Պոլիս՝ նա իր հյուրանոցը կառուցել էր հայոց եկեղեցու տարածքում, և որպես փոխհատուցում այն պետք է մի քանի տարի պատկաներ եկեղեցուն: Հյուրանոցը կահավորվել ու կարգավորվել էր եվրոպական վերջին նորաձևություններով, բոլոր հարմարություններով ու հարմարանքներով: Առաջին հարկում տեղավորված էին Կոստանդնուպոլսում լավագույն ռեստորանն ու սրճարանը, որոնք գրավում էին մայրաքաղաք եկած բոլոր ազգությունների մարդկանց, տեղի հասարակության բարձրագույն խավին, հատկապես մտավորականությանը:

Վիրավոր հայ զինվորները Թուրք վիրավորների հետ տեղավորված էին քաղաքի զանազան հիվանդանոցներում: Օրինակ՝ հոկտեմբերի 15-ին ռազմաճակատից Պոլիս բերված բոլոր հայ վիրավորները տեղավորվել էին գերմանական հիվանդանոցում: Նրանցից չատերը ծանր վիճակում էին: Նրանց Թվում էին տիգրանակերտցի Ֆարչըն գավառի Սուր գյուղացի Գրիգոր Գալբյանը, պահեստի սպա Գրիգոր Մոճիկյանը (պանդրմացի), Մինաս Թերզյանը (գանճըլարցի), Արթինի որդի Հովհաննեսը (սեբաստացի) և այլք: Սրանց բախտակից հայերից մի քանիսը արդեն մեռել էին ծանր վերքերից[1]:

Հոկտեմբերի 24-ին «Ազատամարտ» Թերթի խմբագիրներից մեկը այցելել էր «Նուրը Օսմանիե» ակումբում բացված հիվանդանոց, ուր վիրավորների Թվում կային 40-ի չափ հայ զինվորներ[2]:

Նոյեմբերի 4 (17)-ին Կ. Պոլսի Գյումուչսուի հիվանդանոցում պառկեցրել էին մի մեծ խումբ հայ վիրավորների, որոնց Թվում էին ինեկեսլցի Զատիկ Հակոբյանը, ագչեհիրցի Գարեգին Եղիայանը, պրուսացի Մթեմեն Գևորգյանը, պանդրմացի Սամվել Մանուկյանը, աֆիոն-գարահիսարցի Կարապետ Հարությունյանը և ուրիշներ[3]:

Վիրավորների բուժման գործին հիմնականում լծված էին եվրոպական պետությունների Կարմիր Խաչի ընկերությունների կողմից ուղարկված բժիշկները[4]:

Հիվանդանոցներում մեծ աշխատանքով, իրենց մասնագիտական բարձր որակներով հայտնի բազմաթիվ հայ բժիշկներ կային: Նրանցից մի մեծ խումբ առանց հանգստի լարված աշխատում էր Մաքրիգյուղում, ուր բազմաթիվ չինություններ վերածվել էին հիվանդանոցների: Օրինակ՝ ռազմական վարժարաններից մեկում տեղավորված վիրավորների բուժմանը լծված էին 9 հայ բժիշկներ՝ Խանջյանը, Էմիրզեն, Ալլահվերդին, Պալ-

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1045, 31 հոկտեմբերի (13 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[3] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

Թազարը, Մութուֆյանը, Զոհրապը, Սերթյանը, Գարեգին Քյուրքչյանը, Ֆնտգյանը[1]:

Մաքրիգյուղի բոլոր հիվանդանոցների ընդհանուր բժշկապետ, դեր-հազարապետ Ալի Իսմայիլ բեյը «Ժամանակ» թերթի խմբագրություն ուղարկած չնորհակալագրում մեծ գովեստով էր խոսել հիշյալ հիվանդանոցներում անձնվիրաբար աշխատող հայ բժիշկների մասին, որոնց թվում հատկապես չեշտել էր Զիլյան և Շերիտճյան բժիշկների անունները, բարձր էր գնահատել հայտնի վիրաբույժ Իփլիքչյանին, որը հաջողությամբ կատարում էր ծայրահեղ դժվարին վիրահատություններ և մահից փրկում օրական 5-6 ծանր վիրավոր[2]:

Վիրավոր զինվորների խնամքի գործը մեծապես դժվարացել էր այն պատճառով, որ մայրաքաղաքում բռնկված խոլերայի համաճարակը թափանցել էր զինվորական հիվանդանոցներ: Խոլերայի զոհ էին գնում Երկրաչափական վարժարանի, Սելիմիեի համալսարանի, Գյուլհանեի՝ հիվանդանոցների վերածված շինությունների վիրավոր զինվորները, թեև դրանցում նախապես խիստ միջոցներ էին ձեռնարկվել վարակի տարածման դեմ[3]:

Բժիշկները չէին կարողանում օգնության հասնել բոլոր վիրավորներին, չէին բավականացնում դեղամիջոցներն ու բժշկական սարքավորումները, և որ հատկապես անտանելի էր, բժշկական անձնակազմերը գաղտնի հրաման էին ստացել առաջին հերթին ուշադրություն դարձնել թուրք, ապա մահմեդական ոչ թուրք վիրավորներին: Իսկ դա նշանակում էր, որ քրիստոնյա վիրավոր զինվորները պետք է սպասեին՝ տանջվելով ցավերի մեջ: Եվ դա այն դեպքում, երբ հայոց պատրիարքարանի կողմից հիվանդանոցներ ուղարկած սփոփիչ խմբերն այցելում էին ոչ միայն հայ, այլև տվյալ հիվանդասենյակի բոլոր վիրավորներին: Թերթերը հաղորդում էին, որ պատրիարք Հովհ. Արշարունին այցելել է մայրաքաղաքի հիվանդանոցներում բուժվող թուրք,

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1269, 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

հայ և այլ ազգերի վիրավոր զինվորներին, նրանց մաղթել չուտափույթ ապաքինում:

Հիվանդանոցներում տիրող վայրենի խտրականության պայմաններում Կ. Պոլսի հայկական իշխանությունները, հասարակական ու քաղաքական կազմակերպությունները մայրաքաղաքի հիվանդանոցներին աջակցելու լայն գործունեություն էին ծավալել:

Հենց այդ օրերին էր, որ կազմակերպվեց Հայ կարմիր խաչը, որն իր ծնունդն ավետեց մի մարդասիրական կոչով, ուր մասնավորապես ասված էր. «Բոլոր քաղաքակիրթ աշխարհն օգնութեան փութաց այս դժբաղդներուն (վիրավորներին: – Հ. Ս.)՝ առանց ցեղի ու կրօնի խտրութեան: Հայ ազգն եւս, որ իր ծոցէն հազարաւոր զինուորներ տուաւ, որոնք այս պահուս կը գտնուին պատերազմի դաշտին վրայ, պարտաւոր էր հոգածու ըլլալ անոնց վիճակին եւ ջանալ իւր ովսանն օժանդակել օգնութեան ընդհանուր գործին»[1]:

Հայ կարմիր խաչի ընկերության բժշկական մարմինը, հոկտեմբերի 15 (28)-ի նիստում բազմակողմանի քննության առնելով վիրավոր հայ զինվորների խնամքի հարցը, կազմել էր լայնածավալ ծրագիր և հետևողականորեն իրականացնում էր այն[2]:

Հայ կարմիր խաչը մեծ աշխատանք ծավալեց. հավաքագրեց երիտասարդ հայ աղջիկների, որոնք խնամում էին վիրավորներին, անցկացրեց հանգանակություն Կ. Պոլսի հայոց շրջանում, որից ստացված գումարներով գնեց մեծ քանակությամբ դեղորայք, վիրակապեր, բժշկական զանազան պարագաներ:

Հոկտեմբերի 26-ին Հայ կարմիր խաչի ընկերությունը Դուրյան արքեպիսկոպոսի նախագահությամբ Աշխատանքի տանը գումարած նիստում որոշեց հաջորդական վիճակագրություններ պատրաստել Պոլսո հիվանդանոցներում դարմանվող վիրավորների մասին, որպեսզի համակարգվի նրանց ցուցաբերվող օգնությունը: Իր գործունեությունն ընդլայնելու համար Հայ կար-

---

[1] **«Աւետաբեր»**, № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1091, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

միր խաչը ամուր կապեր էր հաստատել Ամերիկյան կարմիր խաչի Կ. Պոլսի մասնաճյուղի հետ և հայ վիրավորների համար նրանից օգնություն էր ստանում[1]:

Հոկտեմբերի 28-ին հայոց պատրիարքարանը մայրաքաղաքի հայ ունևորներին կոչ արեց օգնության ձեռք մեկնել բուժման կարիք ունեցող հայորդիներին: Կոչում ասված էր, որ մարդկային պարտականություն է կարեկցության և օգնության ձեռք մեկնել բոլոր նրանց, ովքեր ստիպված են եղել գնալ մահվանն ընդառաջ և այժմ կարոտ են հանրային հոգածության: Մամուլը ողջունեց պատրիարքարանի նախաձեռնությունը: «Աւետարերը» խորհուրդ էր տալիս չտապ «մասնախումբ մը կազմել ունևոր և բանիմաց անձերէ», որը պետք է հոգար վիրավորների օգնության ամբողջ գործը: Առաջարկվում էր առաջին հերթին կազմակերպել դրամահավաք: Հավաքված գումարներով պետք է վարձվեին մասնագետ հիվանդապահուհիներ, և ձեռք բերվեին դեղամիջոցներ: Բացի դրանից՝ պատրիարքարանը մայրաքաղաքի բարեսեր ունևոր անձանց կոչ արեց հայ վիրավոր զինվորների մի մասին ընդունել իրենց տները և հոգալ նրանց սննդի ու բուժման ծախսերը[2]:

Հայ կարմիր խաչին օգնություն էին ցուցաբերում հիմնականում Կ. Պոլսի հայ բնակչության ներքին խավերը: Դրան հակառակ՝ քաղաքի հայ հարուստները խուսափում էին նորաստեղծ մարդասիրական կազմակերպությանը դրամական միջոցներ տրամադրելուց, որի պատճառով ենթարկվում էին հայկական մամուլի բուռն քննադատությանը[3]: «Դառը ճշմարտութիւն մըն է,- գրում էր «Առաջամարտը»,- որ մեր բարեկեցիկ դասը գրեթէ սառն անտարբերութեամբ դիտեց ներկայ անցուդարձերը, ո՛չ հետաքրքրուելով Կարմիր Խաչի գործունէութեամբ կամ անձնուիրութեամբ, և ոչ ալ տարուելով Հայուն առասպելական քաջութեան դերակատար՝ հայ զինուորներու ներկայ կացութեամբ:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1091, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Աւետարեր»**, № 45, 9 նոյեմբերի 1912 թ.:

[3] Նույն տեղում, № 46, 16 նոյեմբերի 1912 թ.:

Պատերազմը իրմէ վերջը կը բերէ սղութիւն՝ անօթութիւն և հիւանդութիւն, ինչ որ ամէնուս ծանօթ է»[1]:

Ինչևիցե, հրապարակ հանելով կամավոր աջակցություններ՝ հայերը հույս ունեին չահելու Թուրքերի հանդուրժողականությունը և ցրելու քրիստոնյաների հանդեպ նրանց զայրույթը: Բայց դա չէր օգնում, և օրեցօր ավելի վտանգալից էր դառնում հայերի դրությունը: Մայրաքաղաք հասած տեղեկությունները վկայում էին, որ հատկապես գավառներում է գնալով է՛լ ավելի անտանելի դառնում հայերի վիճակը:

Պատրիարք Արշարունին Թուրքահայ բոլոր թեմերին շրջաբերական ուղարկեց, ուր խոսվում էր ոչ միայն Կ. Պոլսի, այլև մյուս քաղաքների հիվանդանոցների անբավարար վիճակի, վիրավորների բուժման ու խնամքի համար անհրաժեշտ դեղամիջոցների ու այլ պարագաների, ինչպես նաև պարենի մեծ պակասի մասին:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և հայ մամուլի մտահոգություններից էր նաև ***զոհված հայորդիների ընտանիքներին օգնելու*** *հարցը: Հայությունը ազգովի պարտավոր էր հոգալու կարիքներն այն խեղճ ընտանիքների, որոնք զրկվել էին իրենց տնտեսական նեցուկներից՝ մատնվելով նյութական դառն կացության: Պատերազմն աննպաստ վիճակի մեջ էր դրել հատկապես ռազմաճակատից չատ հեռու գտնվող գավառները, որոնք խոշոր վնասներ էին կրում ամենից առաջ տնտեսական տեսակետից. այստեղ ժողովուրդը հյուծվում էր ամենաանհրաժեշտ պետքերի պակասից: Քանի որ պետությունը չի կարող զբաղվել այդպիսի բոլոր ընտանիքների կարիքները հոգալով, ասված էր լրագրական մի հրապարակման մեջ, ուստի անհրաժեշտ է, որ դրանով զբաղվի ազգը: Առաջացել էր հասարակական պահանջ՝ այդ նպատակով ստեղծելու մի հատուկ կազմակերպություն: «Եթե այդպիսի կազմակերպութիւն մը չունենանք,- գրում էր «Աւետարերը»,- [ապա] արիւնոտած սրտով պիտի երթան մեր զինուորները պատերազմելու, որովհետեւ անոնց գիտակցու-*

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»*** *№ 1072, 28 նոյեմբերի, (11 դեկտեմբերի) 1912 թ.:*

թեան մէջ միշտ ներկայ պիտի ըլլայ իրենց սիրելիներուն նիւթական թշուառութեան գիտակցութիւնը»[1]: Ապա՝ «Այս առթիւ ոչ միայն կամաւոր նուիրատուութիւններ պէտք է հաւաքել, այլեւ հանդէսներ և ներկայացումներ սարքել և հնար եղածին չափ փութալ ապագայ թշուառութեան առջեւն առնել: Կը յուսանք թէ այս զուտ մարդասիրական գործին մեր Կովկասի և արտասահմանի եղբայրներն ալ կը մասնակցին»[2]:

Կ. Պոլսի հայոց իշխանութիւնները և հայկական մամուլի օրգանները մտահոգված էին **նաև բանակից արձակված հայ զինվորների ճակատագրով:**

Ակնհայտ էր, որ եթե նույնիսկ պատերազմն առաջիկայում վերջանար, տուն վերադարձած հայ զինվորներից չատերը պարապ պիտի մնային, որովհետև բանակ զորակոչվելիս ձգել էին իրենց գործերը, և իրենց տեղը զբաղեցրել էին ուրիշները: Ուստի առաջարկներ էին արվում կազմել մի մասնախումբ ևս՝ իր գավառային ճյուղերով հանդերձ, որը պետք է զբաղվեր աշխատանք չունեցողների համար գործ հայթայթելով: «Աւետաբերը» գրում էր. «Սուրբ պատրիարքը, որ վիրաւորները կը մխիթարէ իր այցելութիւններով, կը յուսանք թէ անոնց վիճակին ճշմարիտ և իրական դարման մը տանելու հոգածութեան նախաձեռնարկութիւնն ալ կ՚ստանձնէ և ապագային բոլոր Հայ զինուորներուն երախտագիտութեան կ՚արժանանայ: Այսպիսի մասնախումբ մը այժմէն կազմակերպութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ պատերազմը վերջանալէն ետքը բոլոր զինուորները կը ցրուին և կարելի չըլլար անոնց մասին ստոյգ տեղեկութիւններ քաղել»[3]:

Ռազմաճակատում ստեղծված ծանր դրությունն ընդդիմադիր իթթիհադականների համար բարենպաստ պայմաններ էր ստեղծել խստիվ քննադատելու կառավարող Իթթիլաֆի գործունեությունը: Դա արվում էր ոչ թե երկրի ցավերն ամոքելու, այլ իրենց քաղաքական հակառակորդին վարկաբեկելու համար: Նրանք ջանք չէին խնայում ժողովրդին համոզելու, թե Թուր-

---

[1] **«Աւետաբեր»,** № 45, 9 նոյեմբերի 1912 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

քիայի բոլոր դժբախտությունների գլխավոր պատճառը երկիրը կառավարելու Իթթիլաֆի անկարողությունն է: Ամեն ինչ արվում էր խարխլելու Քեամիլ փաշայի կաբինետի դիրքերը՝ վարչապետին մեղադրելով ոչ միայն անգործության, այլ նույնիսկ դավաճանության մեջ:

Իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի ռազմաճակատում իրենց բանակների ծանր պարտությունների մասին լուրերը չթափանցեն մայրաքաղաք, բայց դա նրանց չէր հաջողվում: Իթթիլաֆին թշնամի ուժերը՝ իթթիհադական երիտթուրքերը, ամեն ինչ անում էին իշխանություններին հարվածելու համար, այդ թվում՝ ռազմաճակատից եկած լուրերը տարածում էին մայրաքաղաքի բնակչության բոլոր շերտերում:

Վարկաբեկելով գործող կառավարությունը՝ իթթիհադականները ծրագրել էին իշխանությունից հեռացնել քաղաքական հակառակորդներին և երկրում վերահաստատել իրենց մենատիրությունը: Այդ նպատակով նրանք եռանդով ձեռնարկեցին առաջ բերելու անկարգություններ ինչպես թիկունքում, այնպես էլ բանակում, կազմակերպելու հակաիթթիլաֆական դավադրական գործողություններ: Իթթիհադականները հատկապես խլուրդի աշխատանք էին տանում սպաների շրջանում, նրանց գրգռում զինվորական հրամանատարության դեմ՝ վերջիններիս մեղադրելով ռազմաճակատում կրած խայտառակ պարտությունների համար: Երիտթուրք պրոպագանդիստները կամավորների անվան տակ ուղարկվում էին ռազմաճակատ՝ պղտորելու զինվորների մտքերը: Նպատակն էր բանակը գործիք դարձնել Իթթիհադի ձեռքին:

Անդրադառնալով Իթթիհադի կոմիտեից թելադրված այդ դավաճանությունը՝ նշանավոր երիտթուրքական գործիչներից Մելան Զադե Ռիֆաթը տարիներ հետո վերհիշել է, որ բանակում կարգապահության հետքն իսկ չէր մնացել: Իթթիհադ կուսակցությանը պատկանող սպաները զինվորական գործը վարում էին վտանգավոր մեթոդներով, իթթիհադական քարոզիչները, մտնելով զինվորների շարքերը, բարոյալքում էին նրանց: Հայրենիքի փոխարեն նրանց ուղեղում կուսակցական փառասիրություն էր: «Նազրմ փաշան ալ ակնկալուած հեղի-

նակութիւնը եւ հմտութիւնը չէր կրցած ցոյց տալ. ո՛չ բանակին վրայ կրցած էր իշխել եւ ո՛չ ալ զինուորական առաքումները կանոնաւորել: Բոլոր գործերը «Իթթիհատ Թէրագգրին» պատկանող սպաներուն ձգուած էին»[1]:

Մայրաքաղաքում խառնաշփոթ առաջացնելու համար նրանք Թուրք-մահմեդական ամբոխին գրգռում էին Կ. Պոլսի բուլղար, հույն և սերբ բնակիչների դեմ:

Սկյուտարի գիշերային Հոմ քոլեջում նոյեմբերի 2-ին տեղի ունեցան ընդհարումներ իսլամ և բուլղար ուսանողների միջև, որի հետևանքով փակվեց վարժարանը: Հաջորդ օրը երկաթուղային կայարանում ամբոխը հարձակվեց Պոլիս բերված 30 բուլղար գերիների վրա, բայց պահակախումբը կարողացավ փրկել դրությունը:

Երկյուղ կրելով Իթթիհադի կողմից իշխանությունը զավթելուց՝ Իթթիլաֆի կառավարությունը դիմեց կտրուկ միջոցների: Նախ բանակում պաշտոնազուրկ արվեցին իրենց իթթիհադական հայացքներով հայտնի մի շարք բարձրաստիճան զինվորականներ, որոնց տեղերը զբաղեցրին կառավարությանը հավատարիմ սպաներ: «Ժամանակ» թերթը գրում էր, որ այդ «հայրենասեր սպաները այս անգամ ալ բանակին պատիւը փրկեցին, երևան հանելով [Իթթիհադի] թաքուն և եղեռնական ծրագիրը»[2]:

Այնուհետև կառավարությունը որոշում ընդունեց վճռական գործողություններ ձեռնարկել Իթթիհադի պարագլուխների դեմ: 1912 թ. նոյեմբերի կեսերին ձերբակալվում են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի մի ամբողջ շարք գործիչներ, որոնց թվում էին վակուֆների նախկին նախարար Հայրի բեկը, ներքին գործերի նախարար և Իթթիհադ կոմիտեի գլխավոր քարտուղար Հաջի Ադիլը, լուսավորության նախկին նախարար Ամրուլլա բեկը, Կ. Պոլսից ընտրված նախկին պատգամավոր Հալաճյան էֆենդին, այլ տեղերից ընտրված նախկին պատգա-

---

[1] **Մկլան Զադէ Ռիֆաթ,** Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհադի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 53, 54:

[2] **«Ժամանակ»,** № 1267, 4 (17) նոյեմբերի 1912 թ.:

մավորներ Իսմայիլ Ջամփոլադ բեյը, Ռիզա փաշան, Շևգաթի էֆենդին, Ահմեդ Նեսիմը, Մազլիահ Նեսիմը, սենատի քարտուղարներ Էդհեմ, Իփեկչի և Ջեմիլ էֆենդիները, Սալոնիկի նախկին կուսակալ Քեազիմ բեյը, Տրապիզոնի նախկին կուսակալ և իթթիհադական «Հագգ» թերթի խմբագրապետ Սուլեյման Նազիֆը, «Գալեմ» երգիծաթերթի խմբագիր Սելահ Ջիմջոզը, հրապարակագիր Աբդուլլահ Ջևդեթը, կենտրոնական հեռագրատան նախկին վարիչ Ֆազլը Նաջիբը, Էդիրնեի համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախոս հաջի Իբրահիմը՝ որպես ուսանողների ցույցի դրդիչ, և շատ ուրիշներ: Բացի դրանից՝ կառավարությունը հեռագրեր հղեց Կարին, Գոնիա, Էնկյուրի, Տրապիզոն և Իզմիր՝ հրամայելով հակակառավարական քարոզները կանխելու համար որևէ մեկին թույլ չտալ մուտք գործել նշված վայրերում տեղակայված զինվորական մասեր: Կառավարության մասնավոր հրահանգի համաձայն՝ նոյեմբերի 10-ին ոստիկանությունը, խուզարկելով «Թանինի» խմբագրությունը, այնտեղ իթթիհադականներին պատկանող 10.000 թռուցիկ բռնագրավեց, որոնցում ամբաստանություններ կային Քեամիլ փաշայի, Գաբրիել Նորատունկյանի և կառավարության մյուս անդամների հասցեին:

Իթթիհադի կոմիտեի անդամներ, այդ թվում ֆինանսների նախկին նախարար Ջավիդ բեյը, ներկայացուցիչների պալատի նախկին նախագահ Ահմեդ Ռիզա բեյը, «Թանին» թերթի նախկին խմբագիր Հուսեին Ջավիդ բեյը նախապես հեռացել էին արտասահման և փրկվել ձերբակալությունից:

Երիտթուրքերի ձերբակալման ձևական պատճառ էր համարվել նրանց հակակառավարական քարոզչությունը: Հակաիթթիհադական մամուլը երիտթուրք կուսակցությանը մեղադրում էր, որ նա սրել է մուսուլմանական-քրիստոնեական թշնամությունը, վանել է Թուրքիայի նկատմամբ Եվրոպայի համակրանքը և, վերջապես, եղել է իտալա-թուրքական ու բալկանյան պատերազմների դրդապատճառներից մեկը:

Արդեն մի քանի օր իթթիհադական առավել ակտիվ մի շարք գործիչների ձերբակալություններով զբաղված ոստիկանությունը նոյեմբերի 4 (17)-ին կատարեց նոր լայնածավալ ձերբա-

կալութիւններ և հարցաքննութիւններ: Այդ օրը կալանվեցին նաև Պոլսի և Սալոնիկի նախկին կուսակալ Հուսեին Քյազիմ բեյը, պառլամենտի նախկին պատգամավոր Ջամբոլաթ բեյը, նախորդ նախարար Թալեաթ բեյը, չարունակվում էին նախկին նախարար Հուսեին Ջավիդ բեյին և այլոց ձերբակալելու փնտրտուքները[1]:

Ոստիկանությունը ձեռք էր գցել Իզմիրից, Սալոնիկից, Էդիրնեից, Գարահիսարից ընտրված նախկին պատգամավորներ Նեսիմ և Քարասու էֆենդիներին, Ֆայիզ բեյին, Ռիզա փաշային, Մահմուդ Շևքեթ փաշայի երկու թիկնապահներին և այլոց[2]: Նոյեմբերի սկզբին ձերբակալված երիտթուրք նշանավոր գործիչների թիվը հասել էր 40-ի[3]:

Երիտթուրքերին համակիր «Թասվիրը էֆքեար» թերթը գրում էր, որ ձերբակալված անձինք նվիրյալ հայրենասերներ են, որ նրանք ներկա իշխանության դեմ հանդես են գալիս ռազմաճակատներում օսմանյան բանակների կրած խայտառակ պարտությունների պատճառով: «Թասֆիրի էֆքեարին» հակադրվելով՝ Իթթիլաֆին համակիր «Իկդամը» ձերբակալվածներին համարում էր հայրենադավներ, որոնք, երկրի համար ծանր վիճակից օգտվելով, ձգտում են տապալել օրինական կառավարությունը[4]: Թերթը գրում էր. «Մէկ ամիսէն աւելի է որ Բ. Դրան առջեւ տեղի ունեցաւ համալսարանական ուսանողներու կազմակերպած ցոյցը: Իսկապէս, այս ցոյցը դաւադրուած էր կարգ մը վտանգաւոր անհատներու կողմէ, որոնք ցոյցը ընել տուին համալսարանականներու ձեռքով, աւելի ցայտուն դարձնելու համար զայն, ամբաստանելով այն տեսակ դահլիճ մը որ խալիֆային ու ազգին վստահութիւնը կը վայլէ: Անոնք ապստամբութեան դրօշը պարզելով՝ կոտրեցին Բ. Դրան ապակիները եւ աշխատեցան իրարանցում առաջ բերել տագնապալի վայրկեանի

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 15 (1052), 7 (20) նոյեմբերի 1915 թ.:

մը մէջ։ Բնական է որ կառավարութիւնը ձեռնարկէր քննութեան մը, ձերբակալելու եւ պատժելու համար կազմակերպիչներն ու նախաձեռնողները։ Ամէնէն քաղաքակրթուած երկիրներուն մէջ անգամ ուրիշ կերպ չեն շարժիր»[1]։

Առայժմ Իթթիլաֆին մի կերպ հաջողվում էր վերահսկել իրավիճակը։

Երիտթուրքական գործիչների ծավալուն ձերբակալություններին զուգահեռ՝ Ֆյամիլ փաշայի կառավարությունը «երկիրը կազմաքանդողների» նկատմամբ ձեռնարկեց ուրիշ միջոցներ ևս։ Հատկապես ուժեղացվեց գրաքննությունը. խիստ վերահսկողություն սահմանվեց ոչ միայն երիտթուրքական մամուլի, այլև ողջ հրատարակչական գործի վրա։

«Ազատամարտը» ընթերցողներին տեղեկացնում էր. «Զինուորական իշխանութեանց վերջին կարգադրութեան հետեւանքով **Ազատամարտ**, ինչպէս Պոլսոյ միւս թերթերը, կը հրատարակուի գրաքննութեան ենթարկուելէ ետք։ Կը խնդրենք մեր ընթերցողներէն ներողամիտ ըլլալ այն անպատեհութիւններուն համար որոնք կրնան առաջ գալ գրաքննութեան հետեւանքով»[2]։

ՀՅ դաշնակցության օրգան «Առաջամարտ» թերթը՝ «Ազատամարտ» թերթի շարունակությունը, 1912 թ. նոյեմբերի 6 (19)-ից դադարեցրեց իր գործունեությունը։ Կ. Պոլսում լույս տեսնող դաշնակցության մյուս օրգանը՝ «Բութանիան», նոյեմբերի 7 (20)-ին տպագրել էր խմբագրության հետևյալ հաղորդագրությունը.

«Յաւով կը լսենք որ **Առաջամարտ** դադարման դատապարտուած է Պոլսոյ Զինուորական Իշխանութեան կողմէ։ **Առաջամարտի** տնօրէնութիւնը երէկ իրիկուն այս մասին ստացաւ հետեւեալ պաշտօնագիրը.

«**Առաջամարտ**» թերթին.

«Առաջին զօրաբանակի փոխ-հրամանատարութիւնը կը

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 15 (1052), 7 (20) նոյեմբերի 1915 թ.։

[2] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1034, 20 հոկտեմբերի (2 նոյեմբերի) 1912 թ.։

*հաղորդէ թէ՝ **Առաջամարտի** նոյեմբեր 6ի թիւին մէջ՝ «Պոլսոյ պաշտպանութիւնը» վերնագրին տակ հրատարակուած հատուածին այն մասը՝ որ կը վերաբերի Պոլսոյ ապահովութեան՝ դադարեցման արժանի տեսնուած է. ուստի կը հաղորդուի ձեզի թէ գոցուած է ձեր թերթը»:*

Մամուլի Վերատեսչութիւն

6 նոյեմբեր 912»[1]:

Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, հատկապես իթթիհադականներից եկող վտանգները հաշվի առնելով՝ իթթիլաֆական կառավարությունը Կ. Պոլիսը հայտարարեց պաշարողական դրության մեջ:

Ծանր իրականությունն այլևս կասկածի տեղ չէր թողնում, որ օսմանյան պետության համար սկսված է մի ճակատագրական շրջան:

Աչքի առաջ ունենալով Կ. Պոլսի և թուրքական մյուս քաղաքների լարված վիճակը՝ եվրոպական պետությունները ձեռք էին առնում լրացուցիչ նախազգուշական միջոցներ: Նրանք ռազմական նոր նավեր ուղարկեցին Կ. Պոլիս, Զմյուռնիա և ուրիշ ծովափնյա քաղաքներ: Բացի դրանից՝ պետությունները օսմանյան կառավարությանը դիմումներ էին հղում, որ նա հրամաններ արձակի սկսված անկարգությունների դեմ, որպեսզի եվրոպական զորքերի միջամտության առիթներ չստեղծվեն:

1912 թ. հոկտեմբերի 31-ին Կ. Պոլսի թերթերում լույս տեսավ իշխան Սաբահէդդինի բաց ուղերձը սուլթան Մուհամմեդ V-ին: Իշխանը սուլթանին կոչ էր անում կառավարությանը ստիպել գնալու օսմանյան կայսրության պահպանմանն ուղղված վերջին քայլին՝ ազդարարել, թե տվյալ պահին Բ. Դռան ներքին քաղաքականության գլխավոր նպատակը կայսրության տարածքների ապակենտրոնացումն է: «Եթե մեր վարչական կեանքը [ընթանար] ոչ թե ցեղային, այլ, ինչպես վաղուց ի վեր պաշտպանած ենք, տեղական ապակենտրոնացման ճանապարհով կենտրոնի և գավառների պահանջներին բավարարութիւն

---

[1] ***«Բութանիա»**, № 15 (1052), 7 (20) նոյեմբերի 1915 թ.:*

տալու միջոցով, ապա մեծ պետությունները պետք է հարկադրվեին մեզ մոտենալ հարգանքով»[1]:

Ուղերձում Սաբահէդդինը ցավով նկատում էր, որ օսմանյան կայսրության մեծագույն թշնամին ո՛չ Իտալիան է, ո՛չ Բալկանը և ո՛չ էլ Եվրոպան, այլ «մենք ենք, մենք՝ թուրքերս»: Թուրքիան կործանողը անգիտակից թուրքն է, նրա մոլեռանդությունը: Կայսրությունը կործանողը նրա կենսական հյութերը քամող աղետաբեր խտրականությունն է: Նա չեշտում էր, որ բալկանյան պատերազմն ավելի քան սթափեցնող ազդեցություն պետք է գործի թե՛ օսմանյան քաղաքագետների և թե՛ այն բոլոր անձերի ու պետությունների վրա, որոնք իրենց համարում են Թուրքիայի բարեկամներ[2]:

Սաբահէդդինի ուղերձում արտահայտված մտքերը պատահական չէին և ոչ էլ նորություն էին հասարակության համար: Իշխանը դեռ տարիներ առաջ գուշակում էր Թուրքիայի գլխին գալիք փորձանքները, եթե նրա ղեկավարները չփոխեին իրենց գործունեության աղետաբեր ընթացքը և չորդեգրեին խելացի ու հասարակաշեն քաղաքականություն: Նա վաղուց էր առաջ քաշել ապակենտրոնացման, ազգությունների և համայնքների համագործակցության խնդիրները՝ հիմնված տեղական ինքնուրույն, ազատ կյանքի վրա: Իշխանը և նրա համախոհները տարիներ շարունակ պնդում էին իրենց սկզբունքները, բայց նրանց խոսքն այդպես էլ չէր արժանանում լուրջ ուշադրության: Սաբահէդդինը, որը ո՛չ իթթիլաֆական էր և ո՛չ էլ իթթիհադական, կառավարությանը քննադատում էր սրտի ցավով՝ ռազմաճակատում թուրքական զորքերի կրած պարտությունները համարելով անձնական ողբերգություն:

Օսմանյան բանակի պարտությունները նշանակում էին ինչպես նախորդ Իթթիհադի, այնպես էլ Իթթիլաֆի վարած քաղաքականության ձախողում: Այս պայմաններում, բնականա-

---

[1] **«Արևելք»**, 31 հոկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

բար, առաջ էր եկել օսմանյան նոր կուսակցություն ստեղծելու պահանջ:

1912 թ. նոյեմբերի վերջերին նոր կուսակցություն ստեղծելու նախաձեռնությամբ հանդես եկավ Իթթիլաֆի ղեկավարներից «Թանզիմաթ» թերթի խմբագիր Լութֆի Ֆիքրի բեյը՝ թերթի նոյեմբերի 24-ի (դեկտեմբերի 7-ի) խմբագրականում, որը թարգմանաբար տպագրել է Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը: Այնտեղ մասնավորապես ասված էր.

«Իթթիհատը ո՞վ է, Իթթիլաֆը ի՞նչ է: Ասկէ աւելի արուեստակեալ, ասկէ աւելի չինծու բան մը չի կրնար ըլլալ: Իթթիլաֆի և Իթթիհատի ծրագիրներուն մէջ հիմնական տարբերութիւն մը չկայ: Ու մանաւանդ այս պահուս երկուքն ալ իրենց արժէքը կորսնցուցած են: Ներկայիս, ինծի համար իրարմէ ո՛ և է տարբերութիւն չունին Իթթիլաֆեան Օսմանցիները Իթթիհատեան Օսմանցիներէն: ... Նոյնիսկ, այս վայրկեանէն սկսելով կ'ուզեմ Իթթիհատի և Իթթիլաֆի անունները մոռանալ ... Այս երկրին մէջ երկու կուսակցութիւն պէտք է, մէկը «նորերու» կուսակցութիւն, կամ ուրիշ անունով բոլորովին Եւրոպայի հետեւող, միւսը «պահպանողական»: Ես պատրաստ եմ առաջին տեսակէ կուսակցութեան յարելու: Իթթիհատի և Իթթիլաֆի նախորդ կուսակցութեանց մէջ գտնուողներէն անոնք որ ուրիշ կուսակցութեան չեն անդամակցած ու ինծի գաղափարակից են, թող հաճին ինձ հետ յարաբերութեան մտնել, որպէս զի որոշ ծրագիրներ մէջտեղ հանենք»[1]:

Բայց, ինչպես և սպասելի էր, նոր կուսակցության ստեղծման գաղափարն ու նպատակը հետագա զարգացում չստացան:

---

[1] **«Ժամանակ»**, № 1288, 25 նոյեմբերի (8 դեկտեմբերի) 1912 թ.:

ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Եվրոպական ծերացած ու մգլոտած դիվանագիտությունն այլայլված էր մնացել այս կայծակնային դեպքերին ի տես: Իր հին status quo-ն ամբողջ 30 տարի պինդ գրկած այդ դիվանագիտությունն էր, որ պատրաստել էր բալկանյան պատերազմի արյունալի ավերները: Հիմա նա, մութ անկյուններում կծկված, ակնապիշ նայում էր, թե որքան անկար է «փոքրիկ հարևանների» խանդավառ հանդգնությանը դեմ հանդիման:

Տերությունները տագնապած էին հետագա զարգացումների հեռանկարով: Բուլղարների կողմից Կոնստանդնուպոլսի գրավումը առաջ կբերեր անկանխատեսելի խառնաչփոթ նրանց բոլորի հարաբերություններում: Ուստի Սոֆիան սպառնալից նախազգուշացումներ էր ստանում Պետերբուրգից ու Բեռլինից, Լոնդոնից ու Վիեննայից, Փարիզից ու Հռոմից: Այս մայրաքաղաքներում տագնապած էին, որ Կ. Պոլսի գրավման հետևանքով պատերազմը կարող է վերածվել համաեվրոպականի, ուստի ամեն ինչ անում էին այն սահմանափակելու Բալկանյան թերակղզով:

Թե համաեվրոպական պատերազմի վտանգը ինչպիսի լրջությամբ էր դրված պետությունների կառավարությունների առջև, բավական է թերթել այդ օրերի հայկական մամուլը, որը բոլոր կողմերով քննության էր առնում եվրոպական հնարավոր պատերազմի չանսերը, դրա անխուսափելի հետևանքները և առհասարակ դրա հետ կապված բազմազան հարցեր:

Մամուլի հրապարակումներից այն տպավորությունն է ստեղծվում, թե ամբողջ Եվրոպան հևհև վազում էր դեպի մեծ ու ճակատագրական փոթորիկ: Ուստի սկզբում չեզոքություն պահպանած եվրոպական պետությունները, երբ տեսան, որ Թուրքիան Եվրոպայի քարտեզից անհետանալու վրա է, «բարեկամական» միջնորդությամբ կռվող կողմերին առաջարկեցին կնքել զինադադար: Նրանց կառավարությունները Պուանկարեին արտոնեցին բալկանյան դաշնակիցներին համոզել կասեցնել կռիվը՝ բանակցությունների սեղանի չուրջ նստելու համար:

Լլոյդ Ջորջը, որը պատերազմի սկզբում Բալկաններում առկա դրությունը պահպանելու ամենաջերմ ջատագովներից էր, հոկտեմբերյան կռիվներից հետո ստիպված էր խոստովանել. «Ինչ էլ որ լինի ներկա պատերազմի վախճանը, ազատության սահմանները պիտի ընդարձակվեն, հետևաբար Թուրքիան պետք է պատրաստ լինի մեծ զիջումների»:

Այն բանից հետո, երբ նոյեմբերի 3-ին Փարիզում բուլղար դեսպանը համոզմունք էր հայտնել, թե բալկանյան զինակիցների համար Եվրոպական Թուրքիայի բաժանումը արդեն որոշված իրողություն է, և որ «մենք պիտի կարողանանք գտնել Արևելյան հարցի արմատական լուծում առանց Եվրոպային հարցնելու»[1], նույնիսկ գերմանական հայտնի զինվորական ֆոն դեր Հոլցը հայտարարեց, որ ներկայումս Թուրքիայի ռազմական կացությունը շատ տխուր է, և նա հաջողության որևէ չնչին հույս անգամ չպիտի ունենա կռվի որևէ ճակատում: Նա միանգամայն անհնար էր համարում, որ բալկանյան դեպքերի պատճառով Եվրոպայում պատերազմ ծագի, բայց Թուրքիայի շահերից ելնելով՝ նրան առաջարկում էր հնարավորինս շուտ լեզու գտնել իր թշնամիների հետ[2]:

Բալկանյան չորս երկրները, որոնց բանակները հաղթական էին բոլոր ռազմաճակատներում, այդ ժամանակ հակված չէին նստելու հաշտության սեղանի շուրջ: Դրա վկայությունն այն էր, որ այդ օրերին բալկանյան դաշնակից չորս երկրների Պետերբուրգի դեսպանները այցելել էին Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին և հայտնել, որ իրենց կառավարությունները և ժողովուրդները դեմ են մեծ պետությունների միջամտությանը պատերազմին, և որ իրենց պետությունները Թուրքիայի հետ չեն նստի հաշտության բանակցությունների, մինչև որ կատարված չլինեն իրենց ռազմական նպատակները, այն է՝ 1) Զաթալջայի մոտ թուրքական զորքերի ջախջախում, 2) Էդիրնեի գրավում, 3) Սալոնիկի ու Մանաստրի ազատագրում, 4) Շքոթրայի նվաճում[3]:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»**, № 1039, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

Ինչ խոսք, եթե չլիներ եվրոպական պետությունների միջամտությունը, ապա բալկանյան փոքր պետությունները, բացի Ռումինիայից, որը չեզոքություն էր պահպանում, կգրավեին նաև Պոլիսը:

Այնուամենայնիվ, Բուլղարիան և նրա զինակիցները մեծ պետություններին երաշխիքներ տվեցին, որ չեն գրավելու օսմանյան մայրաքաղաքը: Բուլղարները խոստացան, որ շարժվելու են մինչև Պոլսի դռները և կանգ են առնելու նրա արվարձաններում, մինչև որ Թուրքական կառավարությունն ուղղակի կամ տերությունների միջնորդությամբ ընդունի իրենց թելադրած պայմանները: Նրանք մասնավորապես հայտարարեցին, թե իրենք Պոլիսը կգրավեն միայն այն պարագայում, եթե քաղաքում տեղի ունենա կոտորած:

Իսկ մյուս բոլոր ռազմաճակատներում շարունակվում էին կատաղի կռիվները:

Արյունալի կռիվների այս պահին բալկանյան պատերազմի հետևողական հակառակորդ Պուանկարեն առաջ քաշեց մի նախագիծ, որով փաստորեն ընդունվել էին Եվրոպական Թուրքիան բաժանելու բալկանյան պետությունների պահանջները, բացառությամբ Սալոնիկի, որը թողել էր Թուրքիայի ինքնիշխանության տակ և պետք է ունենար նույն միջազգային կարգավիճակը, ինչ Պոլիսը: Պարզ էր, որ Պուանկարեն այս առաջարկությունը նախապես համաձայնեցրել էր Ռուսաստանի և Անգլիայի հետ:

Բայց Եոյակ զինակցության անդամները, հատկապես Ավստրիան, որին վճռականապես պաշտպանում էր Գերմանիան, հանդես եկան այդ նախագծի դեմ և տապալեցին այն: Դրանից անմիջապես հետո Ավստրիայի ղեկավար շրջաններում տեղի ունեցան քաղաքական տրամադրությունների կտրուկ փոփոխություններ: Կարճ ժամանակում բալկանյան դաշնակիցների տարած խոշոր հաղթանակներն այդ երկրի կառավարությանը մատնել էին խորը տագնապի, ուստի նա հետագա հաջող գործողությունների ելքեր էր որոնում: Ավստրիական կառավարությունը համոզվել էր, որ ստեղծված նոր իրավիճակում ինքը պետք է դիվանագիտական կտրուկ շրջադարձ կատարի, որքան

էլ այն լինի անկանխատեսելի: Դա ենթադրում էր ուղղակի հարաբերության մեջ մտնել բալկանյան դաշինքի ամենաազդեցիկ երկրի՝ Բուլղարիայի հետ և, եթե հնարավոր է, նրան գրավել իր կողմը կամ գոնե մղել չեզոքության:

1912 թ. հոկտեմբերի 27 (10)-ին Վիեննայում տեղի էր ունեցել Բալկանյան պատերազմին նվիրված գիտական կոնֆերանս: Զեկուցողներից մեկը՝ գերմանացի նշանավոր քաղաքական հրապարակագիր Մաքսիմիլիան Հարտեն, խոսելով ավստրո-բուլղարական առկա հարաբերությունների և դրանց հեռանկարների մասին, այն միտքն էր արտահայտել, թե քանի որ Ավստրիայի և Բուլղարիայի միջև պատմականորեն թշնամություն չի եղել, ապա դա կարող է երկու երկրների միջև սերտ հարաբերություններ հաստատելու հիմք հանդիսանալ: Ավելին, նա գտնում էր, որ Ավստրիային շատ ձեռնտու կլիներ, եթե Բուլղարիան չափազանց մեծացներ իր տարածքը՝ նույնիսկ գրավելով օսմանյան մայրաքաղաքը, որին վաղուց հավակնում է Ռուսաստանը: Եթե հնարավոր լիներ իրագործել այդ մտահղացումը, ասել էր Մ. Հարտեն, ապա սկիզբ կդրվեր ռուս-բուլղարական անգիջում հակամարտությանը, որին կհաջորդեր բալկանյան դաշնության արագ քայքայումը[1]:

Պուանկարեն նոր քայլեր արեց պատերազմը դադարեցնելու համար: Մի քանի օր անց մյուս տերություններին ներկայացրեց հաշտության նոր բանաձևի նախագիծ՝ կազմված հետևյալ երեք կետերից. 1) Մեծ տերություններն ընդունում են գրավված բոլոր տարածքներում քաղաքական և վարչական փոփոխություններ կատարելու բալկանյան դաշնակից պետությունների իրավունքը, 2) Պոլսի և նրա շրջակա տարածքների վրա պահպանվում է սուլթանի գերիշխանության իրավունքը, 3) Տարածքային փոփոխությունները որոշելու և հաստատելու համար ստեղծվում է վեց տերությունների դեսպաններից կազմված հատուկ խորհուրդ՝ պայմանով, որ այնտեղ իրենց ներկայացուցիչներն ունենան նաև բալկանյան պետությունները:

---

[1] Տե՛ս **«Ազատամարտ»,** № 1047, 2 (15) նոյեմբերի 1912 թ.:

Անտարակույս, Պուանկարեի այս նոր առաջարկը նույնպես ստացել էր Պետերբուրգի և Լոնդոնի համաձայնությունը: Իսկ դա նշանակում էր, որ Եոյակ համաձայնությունն ընդունելու է Եվրոպական Թուրքիան բաժանելու՝ բալկանյան պետությունների կողմից ներկայացվելիք պահանջները:

Այս երկրորդ բանաձևի նախագծում աչքի էր զարնում այն պարագան, որ Սալոնիկը տեղ չէր գտել տեքստում. հիշատակված էր միայն Պոլիսը՝ որպես սուլթանի գերիշխանությանը ենթակա քաղաք: Դրանից կարելի էր հետևություն անել, որ Եոյակ համաձայնությունը պատրաստ է Սալոնիկը ևս զիջելու բալկանյան դաշնակիցներին:

Պուանկարեի նախագծի վերջին մասը թույլ էր տալիս եզրակացնելու, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ուզում են նախ ապահովել օսմանյան մայրաքաղաքի պատկանելության հարցի լուծումը, ինչպես նաև վավերացնել բալկանյան պետությունների գրավումները, իսկ մնացած բոլոր վիճելի հարցերը թողնել խաղաղության բանակցություններին: Եոյակ համաձայնությունն այս անգամ Պուանկարեի միջոցով պահանջում էր բալկանյան բոլոր պետությունների մասնակցությունն այդ բանակցություններին՝ մտածելով, որ նրանք այնտեղ ձայնակցելու են Եոյակ համաձայնությանը՝ ծանրացնելով իրենց նժարը:

Ուստի նախապես կարելի էր ենթադրել, որ Պուանկարեի այս նոր բանաձևը նույնպես չի ընդունվի Եոյակ զինակցության կողմից: Այդպես էլ եղավ, թեև բալկանյան ցնցումն արդեն խախտում էր վերջինիս զորությունը և վտանգում նրա ապագան[1]:

Դաշնակիցների կատարյալ հաղթանակներն ամբողջովին կերպարանափոխեցին կացությունը: Անգլիական «Թայմզը» գրում էր, որ բացարձակ հիմարություն է ենթադրել, թե հաղթական բանակները, որոնք, տերությունների ծանուցագրերն ու «հայրական» խրատներն արհամարհելով, նետվել էին պատերազմի դաշտ, այդ նույն մեծերին ունկնդիր լինելով՝ վար կդնեն

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1040, 26 հոկտեմբերի (8 նոյեմբերի) 1912 թ.:*

զենքերը և կվերադառնան իրենց սահմանները: «Սվինի ծայրով նրանց անհնար է վերադարձնել իրենց տեղերը,- գրում էր Թերթը: - Այդպիսի փորձը առաջ կբերի ոչ միայն Ռուսաստանի, այլև ողջ եվրոպական հասարակական կարծիքի փոթորիկ»[1]:

Հիրավի, ինչպիսին էլ լինեին քաղաքական տեսակետները, բովանդակ Եվրոպան այլևս անկարող էր զսպել իր զմայլանքի զգացումը դաշնակիցների միացյալ բանակների նկատմամբ, որոնք, վտանգներին աներկյուղ ու անտարբեր, հերոսական խոյանքներով ջախջախել էին հակառակորդի զինական ուժերը:

Բոլոր ճակատներում կրած ջախջախիչ պարտությունները Թուրքական իշխանություններին ստիպեցին պատերազմը դադարեցնելու նոր տենդագին քայլեր ձեռնարկել: Լյուլե-Բուրգազի կռիվներից հետո Թուրքերին միանշանակ պարզ էր դարձել, որ հակառակորդին կանգնեցնելու միակ միջոցը զինադադարն է: Բայց դա հեշտ լուծվող խնդիր չէր, քանի որ պայմանավորված չէր միայն Թուրքական կառավարության ցանկությամբ ու ջանքերով:

Դա այն պահն էր, երբ պատերազմում դաշնակիցների տարած փայլուն հաղթանակների պայմաններում ինչպես Եոյակ համաձայնության, այնպես էլ մանավանդ Եոյակ զինակցության երկրներում տեղի էին ունենում հասարակական տրամադրությունների արագ փոփոխություններ՝ ի նպաստ բալկանյան ազգերի:

Ընթերցողին տարօրինակ կարող է թվալ, որ տրամադրությունների այդ փոփոխությունը հատկապես ակնհայտ էր Եոյակ զինակցության բլոկում և առանձնապես Ավստրո-Հունգարիայում: Բայց քաղաքականության մեջ զարմանալու ոչինչ չկա, քանզի բոլոր ժամանակներում այն առաջնորդվում է պահի նպատակահարմարությամբ և միշտ առաջնային է համարում սեփական երկրի կամ դասակարգի շահի գերակայությունը:

Արդեն հոկտեմբերի երկրորդ կեսի սկզբին Եոյակ երկրների կառավարող շրջանները, այդ թվում Ռուսաստանի արտգործ-

---

[1] **«Ազատամարտ»,** № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

նախարարությունը, անձամբ Սազոնովը բալկանյան երկրների մասին իրենց պաշտոնական հայտարարություններում արտահայտվում էին խիստ չափավոր համակրությամբ, այն աստիճանի չափավոր, որ թվում էր, թե ռազմաճակատներում տեղի ունեցած կտրուկ փոփոխություններն առանձնապես չեն ոգեշնչում նրանց: Գնալով թուլանում էին բալկանյան դաշնակիցների նկատմամբ Ավստրիայի և Ռուսաստանի կառավարությունների մոտեցումների միջև եղած խիստ տարբերությունները: Դրա վկայություններից էին հոկտեմբերի երկրորդ կեսին Սազոնովի արած երկու հայտարարությունները, որոնցով նա զգուշավորության հրավեր էր կարդում Բուլղարիային:

Տրամադրությունների նման փոփոխություն բարեբախտաբար նկատելի չէր համաձայնության մյուս երկու տերությունների՝ Անգլիայի և հատկապես Ֆրանսիայի կառավարությունների գործողություններում:

Այս ամենից տպավորություն էր ստեղծվել, թե Եոյակ համաձայնությունը վարանում է փոխված տեսնել բալկանյան տանջանքները: Դա չէր կարող իր բացասական տպավորությունը թողնել բալկանյան երկրների հանրային կարծիքի վրա: Ահա Եոյակ համաձայնության և հատկապես Ռուսաստանի այդ սխալն էր, որ Ավստրիան իր զինակիցների հետ ցանկացավ օգտագործել. միանգամից դուրս գալով իր վերապահ դիրքից՝ վճռականորեն անցավ բալկանյան ազգերի կողմը: Պարզ էր, որ Ավստրիան այս հանկարծական շեղումով նպատակ ուներ իր կողմը գրավելու բալկանյան երկրները՝ դրանով իսկ կտրելով Եոյակ համաձայնության ճամփան դեպի Բալկաններ:

Ինչպես տեսնում ենք, իրենց կայծակնային հաղթանակներով բալկանյան ազգերը չահել էին ոչ միայն Եոյակ համաձայնության, այլև Եոյակ զինակցության համակրանքը, որոնք այժմ հանդես էին գալիս բալկանյան ազգերին ամենալայն զիջումներ անելու, այսինքն՝ Եվրոպական Թուրքիան բաժանելու պահանջով: Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման համար այլևս ոչ ոք չէր ուզում զոհել բալկանյան ժողովուրդների ինչքն ու ոթել նրանց արյունը: Վկայակոչելով *“Neue Freie Presse”* թերթի համապատասխան հոդվածը՝ «Ազատա-

մարտը» գրում էր, որ Եվրոպական Թուրքիայի ամբողջականության բաժանումը պատմության հրամայականն է: «Սուլթանին վեհապետութեան պիտի թողնուի Պոլիսը՝ իր չրջակայքով: Եւ այսպիսի Թուրքիա մը ո՛չ պիտի կրնայ ապրիլ, ո՛չ ալ մեռնիլ, եւ իր գոյութիւնը ամբողջովին կախուած պիտի մնայ Ռուսիոյ Սեւ-Ծովու նաւատորմէն: Թուրքիա ամբողջովին լքուած է Երրեակ Համաձայնութենէն: Եւ որովհետեւ Թուրքիա ո՛չ բանակ եւ ո՛չ ալ բարեկամ ունի, կորսուած է իսպառ»[1]:

Թուրքիայի համար այդ բախտորոշ պահին՝ հոկտեմբերի վերջին օրը, Գաբրիել Նորատունկյանը բոլոր վեց մեծ տերություններին դիմում հղեց՝ ակտիվորեն միջամտելու և պատերազմը դադարեցնելու խնդրանքով: Պարզ էր, որ միայն զինադադարի միջոցով կարելի կլիներ խուսափել հետագա տարածքային կորուստներից:

Նոյեմբերի 1(14)-ին բոլոր 6 մեծ տերությունների՝ Սոֆիայում հավատարմագրված դեսպաններն իրենց երկրների կառավարությունների անունից առանձին-առանձին հետևյալ գրավոր հարցումն ուղղեցին բուլղար վարչապետ և արտաքին գործերի նախարար Գեչովին. «Օսմանյան կառավարությունը դիմած լինելով մեծ տերություններին՝ նրանց միջնորդությունը խնդրելու համար, լիազորված ենք հարցնելու Ձերդ Վսեմությանը, թե Բուլղարիան տրամադիր է ընդունելու այս միջնորդությունը և, եթե այո՛, խնդրելու, որ հաղորդի, թե ինչ պայմաններով կընդունի այն»[2]:

Վարչապետ Գեչովն անմիջապես գրավոր պատասխանեց, թե իր կառավարությունը Բ. Դռան խնդրանքը պիտի ներկայացնի բանակի հրամանատարության քննության, նաև խորհրդակցի զինակից երկրների կառավարությունների հետ: Գեչովի պատասխանը ցույց էր տալիս, որ Բուլղարիան որևէ մտադրություն չունի կասեցնելու իր զորքերի հաղթական հարձակումը:

---

[1] **«Ազատամարտ»,** № 1043, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) 1912 թ.:

[2] **«Ազատամարտ»,** № 1048, 3 (16) նոյեմբերի 1912 թ.:

Օսմանյան հեռագրական գործակալությունը հաղորդում էր, որ Բ. Դռան դեսպանները նմանօրինակ դիմումներ են կատարել նաև Բելգրադում և Աթենքում, բայց և՛ Սերբիան, և՛ Հունաստանը կտրականապես մերժել են՝ Բ. Դռան տերություններին ներկայացրած խնդրանքը[1]:

Բալկանյան դաշնակիցներից յուրաքանչյուրը մոտավոր պատկերացում ուներ հետագա գրավումների մասին, բայց արդեն այդ ժամանակ երևակվում էր որոշ տարբերություններ նրանց մոտեցումներում:

Նոյեմբերի 5-ին ռուսական "Речь" թերթի աշխատակիցը տեսակցություն էր ունեցել Պետերբուրգում Բուլղարիայի դեսպանության ներկայացուցչի հետ: Վերջինս այսպես էր ներկայացրել բալկանյան դաշնակիցների պահանջները Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելիս.

***Զերնոգորիան** պիտի ստանա Շքոթրայի վիլայեթը, **Սերբիան՝** ամբողջ Հին Սերբիան և ելք դեպի Ադրիատիկ ծով, **Հունաստանը՝** Թեսալիան, Էպիրոսի հարավային մասը և Էլբասանը, **Բուլղարիան՝** Սան-Ստեֆանոյի դաշնագրով գծած սահմանները, դրանից բացի՝ Սալոնիկը, Էդիրնեն, Դեդե-Աղաջը և Քալքիտիկ թերակղզին: Այսպիսով՝ Բալկաններում Թուրքիային պիտի մնար միայն մի հողակտոր, որի սահմանը պիտի անցներ Միտիայից սկսած Էրկինե գետի և Մարիցայի երկարությամբ մինչև Մարիցայի բերանը: **Ռումինիան** որևէ տարածք չէր ստանալու[2]:*

Ռումինիայի նկատմամբ անարդարացի վերաբերմունքն առաջ էր բերել ոչ միայն այդ երկրի կառավարության, այլև հասարակության վրդովմունքը: Բնակչության մեջ օրըստօրե ամրապնդվում էր պատերազմական ոգին: Բալկանյան դաշնակիցների և հատկապես Բուլղարիայի հաղթական առաջխաղացումը Ռումինիայի համար գնալով դառնում էր ավելի մտահոգիչ: Ռումին մամուլը չափազանց վերապահ էր և քիչ էր գրում բուլղարների հաղթանակների մասին: Թե՛ կառավարությունը և թե՛

---

[1] *Տե՛ս **«Ազատամարտ»,** № 1048, 3 (16) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Ազատամարտ»,** № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:*

չարքային ռումինները մտածում էին՝ եթե Բուլղարիան տիրանա Էդիրնեին, եթե բալկանյան դաշնակիցները ստանան այն ամենը, ինչ ուզում են, և եթե Ռուսաստանը կարողանա իրագործել բալկանյան համասլավոնական դաշնություն կազմելու իր ծրագիրը, ապա այդ դեպքում ի՞նչ պիտի աներ Ռումինիան: Եվրոպայից ամբողջովին մեկուսացած երկիրը ի վերջո կդառնա սլավոնական աշխարհի ձայնազուրկ սպասարկու: Այլ խոսքով՝ պահը վճռորոշ է ռումին ժողովրդի և պետության համար, տագնապ էր բարձրացնում մամուլը: Ստեղծվելու է այնպիսի դրություն, գրում էր «Ատվերուլը», որ եթե նույնիսկ ռուսական ցարը կամ արտգործնախարար Սազոնովը պատերազմից հետո ցանկանան ինչ-որ չափով հավասարակշռություն ստեղծել Բալկաններում, միևնույնն է, դա նրանց չի հաջողվի, քանզի սլավոնամոլ գաղափարներով տոգորված ռուս ժողովուրդը մշտապես կանգնած է լինելու բալկանյան սլավոնների թիկունքում՝ ընդդեմ ռումին ժողովրդի:

Տվյալ պահին Ռումինիայի զինակիցն Ավստրիան էր: Ռումինները միայն նրանից կարող էին օգնություն սպասել և իրենց հերթին օգնության հասնել նրան: Միայն Ավստրիայի ռազմական և դիվանագիտական աջակցությամբ Ռումինիան կարող էր գոհացում տալ իր հիմնական ձգտմանը, այն է՝ Բուլղարիայից գրավել հիմնականում ռումիններով բնակեցված Դոբրուջան, որը, սակայն, բալկանյան պատերազմում Բուլղարիայի վերջնական հաղթանակի դեպքում կարող էր երազային դառնալ:

Ուստի պատերազմի առաջին իսկ օրերից ռումինական կառավարությունը բազմաթիվ դիվանագիտական ջանքեր էր գործադրում Դոբրուջայի հարցը օրակարգում պահելու և դրա շուրջը տերությունների հետ համաձայնության գալու համար:

Այդ նպատակին էին ուղղված, օրինակ՝ Ռումինիայի արտգործնախարարության նախաձեռնությամբ հոկտեմբերի 24 (նոյեմբերի 6)-ին Բուխարեստում ռուսական դեսպան Սեպեգովի և ավստրիական դեսպան Ֆյուրստենբերգի հանդիպումը կամ Ռումինիայի Ֆերդինանդ իշխանի մեկնումը Վիեննա, որը նույն խնդրով Ավստրիայի Ֆրանց Յոզեֆ կայսրին էր հանձնել Ռումինիայի Կարոլ թագավորի նամակը: Դա պատասխան էր ավստ-

րական կայսրի կողմից պատերազմի սկզբից ի վեր գրած նրա չորս նամակների, որոնցով նա Ռումինիային կոչ էր արել որքան հնարավոր է շուտ մտնել պատերազմի մեջ՝ ընդդեմ Բալկանյան դաշնակիցների: Բայց Ռումինիայի կառավարությունը չէր շտապում, սպասում էր իրադարձությունների հետագա զարգացմանը[1]:

Տեղեկացված լինելով այդ ամենի մասին՝ ռուսական կառավարությունը Բեսարաբիայի սահմանագլխին կուտակեց մեծաքանակ զորքեր, և անմիջապես սկսվեցին խոշոր զորաշարժեր: Պետերբուրգից նորանոր հեռագրեր հասան Լոնդոն՝ ռուսական նավատորմի համար Կարդիֆից ածխի պաշարներ ձեռք բերելու համար: «Թայմսը» հաղորդում էր, որ ցարն անմիջապես շնորհավորական հեռագիր է ուղարկել Սերբիայի թագավորին՝ նրա բանակի տարած հաղթանակների համար, միաժամանակ զգուշացնելով հայտնել, որ այդ ամենը կատարվել է առանց արտաքին միջամտության[2]:

Իրական սպառնալիքներ ստեղծելով Ռումինիայի սահմանագլուխներին՝ Պետերբուրգը միաժամանակ չէր փակում նրա իշխանությունների հետ լարվածությունը թուլացնելու ուղիները: Այդ նպատակին էր ուղղված Նիկոլայ II ցարի հրամանով Ռումինիայի Կարոլ թագավորին ռուսական զորքերի մարշալի կոչում շնորհելը: Ռումինիայի նկատմամբ ռուսական կողմի այդ բացառիկ բարեկամական վերաբերմունքը բուլղարների մեջ առաջ էր բերել երկակի հակասական զգացումներ. ոմանք դա համարում էին իրենց երկրի նկատմամբ ռուսական կողմի բարեկամական վերաբերմունքի արտահայտություն, ուրիշները գտնում էին, որ իրենց թագավորի նկատմամբ ցուցաբերված բացառիկ վերաբերմունքը հոգեբանորեն անկարելի է դարձնում Ռումինիայի կողմից Բուլղարիայի դեմ զենք գործադրելը:

Մեծ տերությունների ղեկավար շրջաններում տրամադրությունների արագ փոփոխությանը նպաստում էին հակապատե-

---

[1] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1042, 28 հոկտեմբերի (10 նոյեմբերի) 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

բազմական չարժումները, որոնք ծավալվել էին եվրոպական համարյա բոլոր երկրներում:

Նոյեմբերի 4 (17)-ին Փարիզի Սեն-Ժերվեի մարգագետնին տեղի ունեցավ պատերազմի դեմ սոցիալիստների կազմակերպած մեծ հանրահավաք՝ 25 հազար ցուցարարներով: Ճառերով հանդես եկան ֆրանսիացի և օտար հայտնի գործիչներ, որոնք կառավարությանը կոչ էին անում գործուն միջամտությամբ նպաստել արյունահեղության դադարեցմանը բալկանյան ռազմաճակատներում[1]:

Նույն օրը Բեռլինում նույնպես տեղի ունեցավ պատերազմի դեմ ուղղված հանրահավաք: Այն բացեց և գերմաներեն ելույթ ունեցավ Ժորեսը, որը նաև հայտարարեց, որ եթե Բալկանյան պատերազմը վերածվի համաեվրոպականի, ապա ամբողջ Եվրոպայում անխուսափելի կդառնա բանվոր դասակարգի և աշխատավոր մյուս զանգվածների հեղափոխությունը՝ ուղղված կապիտալիստական կարգերի դեմ[2]:

Սոցիալիստները նախատեսել էին նոյեմբերի 7-ին ևս ընդդեմ պատերազմի բողոքի մեծ միտինգ կազմակերպել Բեռլինում, որի ընթացքում ելույթներ պետք է ունենային Ժորեսը, Մակդոնալդը և ուրիշ նշանավոր դեմքեր: Բայց ուստիկանությունն արգելեց նախատեսված միջոցառումը[3]:

Գերմանական կառավարության կողմից հակապատերազմական ցույցերի արգելումը մեծ բողոքներ էր առաջ բերել ամբողջ երկրով մեկ: Ուստի իշխանությունները ստիպված սոցիալիստներին կրկին արտոնեցին կազմակերպել ցույցեր ու հանրահավաքներ: Նոյեմբերի 8-ին գերմանական սոցիալիստական կուսակցության կողմից Բեռլինի տարբեր շրջաններում տեղի ունեցան հանրահավաքներ, որոնց մասնակցում էին տասնյակ-հազարավոր մարդիկ: Ելույթներով հանդես եկան նշանավոր դեմքեր, այդ թվում՝ Ժորեսը, Ավստրիայի պառլամենտի անդամ Ռընները, անգլիացի Օ'Գրեյը և ուրիշ քաղաքական գործիչներ:

---

[1] *Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.:*

Ավստրիայի պառլամենտի փոխնախագահ Պերնեսդորֆերն իր երկրի պրոլետարիատի և ավստրիական բոլոր ժողովուրդների անունից ողջույն հղեց ֆրանսիական սոցիալիստներին, որոնք հետևողականորեն հանդես են գալիս պատերազմի դեմ, և հույս հայտնեց, որ Ավստրիայի ողջ սոցիալիստները նույնպես պատերազմի նկատմամբ նույն դիրքը կբռնեն:

Գերմանացի սոցիալիստ Շայդեմանն իր ելույթում հայտարարեց, որ Բալկանյան պատերազմը կարող է առիթ դառնալ համաեվրոպական պատերազմի, և որ նման պարագայում ռազմաճակատներ նետված գերմանացի բանվորները երբեք չեն կրակի իրենց ֆրանսիացի եղբայրների վրա:

Ելույթ ունեցողներն իրենց ճառերը ավարտում էին «Պատերազմ պատերազմի դեմ» կոչերով[1]:

Պատերազմական գործողությունները չուտափույթ դադարեցնելու տրամադրությունների աճը խթանում էր նաև սլավոնասիրության աննախընթաց վերելքը: Աննախադեպ համակրանք էր վայելում հատկապես ռուսական սլավոնասիրությունը: Նոյեմբերի 4-ին Ռուսաստանի սլավոնասեր բոլոր ընկերությունները, պայմանավորվածության համաձայն, կայսրությունով մեկ անցկացրին բազմամարդ ժողովներ, որոնց նպատակն էր ռուս ժողովրդի լայն խավերում վերածնել սլավոնասիրության գաղափարները: Ժողովների ընդհանուր նշանաբանն էր. «Բալկանները՝ բալկանյան ազգերին, Պոլիսը՝ Ռուսաստանին»[2]:

ԶԻՆԱԴԱԴԱՐ

1912 թ. նոյեմբերի կեսերին համարյա ամբողջ Եվրոպական Թուրքիան արդեն գրավված էր: Բալկանյան դաշինքի բանակները հասել էին Կ. Պոլսի մատույցները: Կռիվների արդյունքները Թուրքերին համոզել էին, որ չեն կարողանալու դիմանալ հակա-

---

[1] **«Բութանիա»,** № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ազատամարտ»,** № 1041, 27 հոկտեմբերի (9 նոյեմբերի) 1912 թ.:

ռակորդի հետագա ճնշմանը, և իրենց վերջնական պարտությունն անխուսափելի է:

Դեռևս հոկտեմբերի 22-ին Թուրքական կառավարությունը դիմել էր պետություններին՝ խնդրելով միջամտել դեպքերի ընթացքին, միջնորդություն հարուցել հակառակորդին, որպեսզի դադարեցնի մարտական գործողությունները, և հայտարարվի զինադադար: Դրանից հետո բալկանյան դաշնակիցների հետ պետք է հաշտության բանակցություններ սկսվեին՝ խաղաղության դաշնագիր կնքելու համար[1]:

Միայն նոյեմբերի սկզբներին երևացին զինադադարի առաջին նշանները: Նախաձեռնողը դարձյալ Թուրքական կողմն էր: Այս անգամ Բ. Դուռը որոշել էր բուլղարների հետ ուղղակի բանակցությունների մեջ մտնել առանց միջնորդների: Թերթերը հաղորդում էին, որ Նազըմ փաշան կառավարությունից արդեն հրահանգ է ստացել բանագնաց ուղարկել բուլղար ընդհանուր բանակատեղին՝ հաղորդակցության մեջ մտնելու և զինադադար կնքելու համար[2]:

Իր հերթին Քեամիլ փաշան այդ օրերին անձամբ տեսակցում է Կ. Պոլսի բուլղար դեսպանատան Թարգման Պոպուկի հետ՝ չոշափելու համար զինադադարի և հաշտության հնարավորությունը: Այդ հանդիպումից հետո հատուկ բանագնաց է ուղարկում Սոֆիա՝ Ֆերդինանդ Թագավորի մոտ: Միաժամանակ ռազմական ընդհանուր հրամանատար Նազըմ փաշան զինադադարի համար դիմում է Բուլղարիայի պաշտպանության նախարարությանը[3]: Բայց բուլղարներն այնպիսի ծանր պայմաններ էին առաջարկում, որ Թուրքական կողմի բաղձանքը հազիվ թե գոհացում գտնելու լուրջ հույսեր ներշնչեր:

Բալկանյան պատերազմը հիմնովին սասանել էր եվրոպական դիվանագիտության բոլոր էական սյուները:

---

[1] Տե՛ս **П. Н. Милюков,** *Воспоминания, том второй (1859-1917), Москва, "Современник", 1990, էջ 104, 105:*

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 6 (1052), 7 (20) նոյեմբերի 1912 թ.:

Իրադարձությունների անսպասելի զարգացումից Ավստրիան, Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան, Անգլիան այն աստիճան էին չփոթված, որ նույնիսկ փորձ չարեցին քննարկելու Կ. Պոլսի առաջարկը և Թուրքիային նոր աղետներից ազատելու համար անմիջապես ողջունեցին Բ. Դոան քայլը: Առանց ժամանակ կորցնելու տերությունները բանակցություններ սկսեցին բալկանյան քաղաքի հետ, որպեսզի կանգնեցնեն նրա հաղթական ընթացքը դեպի Կ. Պոլիս: Պետությունները սարսափած էին այն մտքից, որ պատերազմի շարունակումը կարող է բևեռացնել եվրոպական երկրներին և որպես դրա հետևանք առաջ բերել համաեվրոպական մեծ պատերազմ: Պոլսի «Աւետաբեր» թերթը գրում էր. «Մինչ Լոնտոնի մէջ հաշտութեան բանակցութիւնները տեղի կ'ունենան, անդին մարդիկ անձկութեամբ կը բանան ամէն առաւօտ իրենց թերթերը տեսնելու թէ արդեօք Պալքանեան պատերազմին պիտի յաջորդէ՞ աւելի ահարկու Եւրոպական պատերազմը, ուր քսաներկու միլիոն կատաղի կտրիճներ պիտի խռնուին մահացու գիրկընդխառնումով»[1]:

Նշենք նաև, որ եվրոպական պետությունները փորձում էին կրկնել այն, ինչ կատարեցին 34 տարի առաջ, երբ ռուսաց հաղթական զորքը հասել էր Սան-Ստեֆանո, կանգնել Կ. Պոլսի դռանը, բայց ստիպված հետ էր քաշվել եվրոպական տերությունների ճնշման տակ:

Զուգենալով օսմանյան մայրաքաղաքի անկումը և իրադարձությունների հետագա անցանկալի զարգացում՝ պետությունները դիմեցին բալկանյան դաշնակիցներին՝ զինադադար գլուխ բերելու համար, բայց անհաջողության մատնվեցին, որովհետև Սերբիան և հատկապես Հունաստանը դեմ արտահայտվեցին զինադադարին և շարունակվեցին մարտական գործողությունները:

Թուրքական կառավարությունը երկյուղում էր, որ պատերազմը շարունակվելու դեպքում ոչ միայն թշնամուն կհանձնվեն Զաթալջան և նույնիսկ Պոլիսը, այլև, օգտվելով կայսրության

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 51, 21 դեկտեմբերի 1912 թ.:

ծանր վիճակից, ապստամբություն կբարձրացնեն արաբներն ու քրդերը, որոնք ալբանացիների նման պահանջում էին ինքնավարություն: Բ. Դուռը վախենում էր նաև հայերից, թեև նրանք ընդամենը Հայաստանի բարենորոգումներ էին ուզում: Վախ կար երիտթուրքերից նույնպես, որոնք ծարավի էին նորից իշխանության գալու[1]:

Պատերազմի սկզբից մինչև զինադադար տևել էր երեք շաբաթ: Զինադադարով հատկապես շահագրգռված էր ռազմաճակատում մարդկային ուժի հսկայական կորուստներ կրած Բուլղարիան:

Բուլղարական բանակներն այլևս ի վիճակի չէին նախկինի պես փայլուն արդյունքների հասնել, քանի որ գտնվում էին ծանրագույն պայմաններում: Զորքերի բարոյական վիճակի վրա մեծապես ազդում էր խոլերայի բռնկումը զորամասերում: Զորքերը տառապում էին սննդամթերքի պակասից, իսկ բժշկասանիտարական ծառայությունը չէր կարողանում ինչպես հարկն է կատարել իր պարտականությունները դեղորայքի ու վիրակապային պիտույքների խիստ պակասի պատճառով:

Գեներալներ Ֆիչևը և Սավովը իրենց թագավորին հղած գաղտնի գրության մեջ հաղորդել էին, որ թուրքերի հետ զինադադարի կնքումը առաջնահերթ անհրաժեշտություն էր, հակառակ դեպքում բանակի մարտունակության խիստ անկման պայմաններում պետությունը կկանգնի ծանրագույն փորձանքների առջև: Ուստի պատահական չէր, որ երբ զինադադարի առաջարկ արվեց, Բուլղարիայի Ֆերդինանդ թագավորն անմիջապես ընդունեց այն[2]: Սերբիան ու Զերնոգորիան նույնպես, հաշվի առնելով իրենց կրած մեծ կորուստները, ձգտում էին զինադադարի:

Պատերազմի պատճառով մեծապես կրճատվել էր արդյունաբերական ապրանքների և սննդամթերքի ներմուծումը արտասահմանյան երկրներից, որն առաջ էր բերել սոցիալական

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1072, 28 նոյեմբերի (11 դեկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1299, 6 (19) դեկտեմբերի 1912 թ.:

լարվածություն Բալկանյան բոլոր երկրներում: Համարյա դադարել էր գերմանական ապրանքների ներմուծումը, բայց դրա փոխարեն ավելացել էր Գերմանիայից թնդանոթների և դրանց արկերի, փամփուշտների, վառոդի, զանազան պայթուցիկ նյութերի արտահանումը[1]:

Հսկայական էին նաև Հունաստանի կրած կորուստները: Չնայած դրան՝ նա չհետևեց Բալկանյան դաշինքի մյուս երեք երկրներին և կրկին հրաժարվեց զինադադար հաստատելուց, որովհետև գտնում էր, որ Սերբիայի և հատկապես Բուլղարիայի համեմատությամբ իր գրավումները միանգամայն անբավարար են[2]: Հունական կառավարության այդ ժխտողական քայլն անշուշտ նշանակում էր առաջին լուրջ անհամաձայնություն բալկանյան զինակիցների միջև:

Հակասությունները հատկապես խորացել էին Հունաստանի և Բուլղարիայի միջև: Վերջինս չէր հաշտվում այն մտքի հետ, որ 1912 թ. հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8)-ին հույները գրավել էին Սալոնիկը, որի վրա աչք ուներ ինքը[3]:

Մյուս կողմից զինադադարից Հունաստանի հրաժարումը խիստ դժվարացնում էր Թուրքիայի դրությունը: Ստորագրելով զինադադարի արձանագրությունը՝ նա փաստորեն կապել էր իր ձեռքերը: Իսկ հույները, որ հրաժարվել էին ստորագրել զինադադարի համաձայնագիրը, շարունակում էին Էգեյան ծովի պաշարումը և խափանում էին պարենով բեռնված թուրքական նավերի երթևեկը, շարունակում կղզիների գրավման գործողությունները[4]: Դա նշանակում էր, որ ամբողջության մեջ զինադադարը Թուրքիայի համար վնասակար լինելով՝ նաև նվաստացուցիչ էր: Բայց նա այլ ելք չուներ:

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 16, 20 հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **А. Ф. Миллер**, Оттоманская империя (Султанская Турция), М., 1946, էջ 36, նաև՝ **Արամ Անտոնեան,** Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն պալքանեան պատերազմին, էջ 1029:

[3] Տե՛ս **А. А. Могилевич, М. Э. Айрапетян**, На путях к мировой войне 1914-1919 гг., стр. 127:

[4] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1074, 30 նոյեմբերի (13 դեկտեմբերի) 1912 թ.:

Վերջապես, մի ընդհանուր կարծիքի չուրջ համաձայնության գալուց հետո, բալկանյան դաշնակից երեք երկրները՝ Բուլղարիան, Սերբիան և Չերնոգորիան, ռազմաճակատում կարճ դադար առան և Բ. Դոանը ներկայացրին զինադադարի հետևյալ պայմանները.

1. *Զաթալջայի, Ադրիանուպոլսի (Էդիրնե), Շքոթրայի, Յանիայի և Մանաստրի ամրոցների հանձնում և թուրքական զորքերի նահանջ դեպի Ասիական Թուրքիա,*
2. *Բոլոր գրաված հողերը դաշնակիցներին անցնելու մասին հայտարարություն Բ. Դոան կողմից,*
3. *Կ. Պոլսի միջազգայնացում,*
4. *Նեղուցների բացում,*
5. *Թուրքիայի կողմից պատերազմական ծախսերի հատուցում դաշնակիցներին[1]:*

Նշված ամրոցներն ու քաղաքները զինակից բանակներին հանձնելուց անմիջապես հետո պիտի կնքվեր զինադադար, և սկսվեին հաշտության բանակցությունները:

Վերջապես, պատերազմը կանգնեցնելու թուրքական կողմի ներկայացրած պաշտոնական խնդրանքից մեկ ամիս անց՝ ***1912 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին), Զաթալջայում կնքվեց զինադադար*** *մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Բուլղարիայի, Սերբիայի և Չերնոգորիայի միջև: Պատերազմի սկզբից մինչև զինադադար տևել էր երեք շաբաթ:*

Զինադադարը կնքվեց 10 օրով, որը լրանալուց հետո երկարացվեց անորոշ ժամանակով՝ մինչև խաղաղության պայմանագրի կնքումը[2]: Միաժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ 1) Հաշտության բանակցությունների վայրը լինելու է Լոնդոնը, 2) Բանակցությունները սկսվելու են դեկտեմբերի 14-ին[3]:

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 3 (1050), 5 (18) նոյեմբերի 1912 թ.: Նույն տեղում, № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 235, 23 հոկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 9, 7 նոյեմբերի 1912 թ.:

Զինադադար կնքելուց հետո Կ. Պոլսում «Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակիցը տեսակցություն էր ունեցել Թուրքիայի արտգործնախարար Գաբրիել էֆ. Նորատունկյանի հետ, որը դրական էր գնահատել զինադադարի փաստը՝ չեշտելով, որ Թուրքիան չի ցանկանում շարունակել պատերազմը, որովհետև նորից «մեծ արիւնահեղութիւն պիտի ըլլայ եւ ահռելի թշուառութիւն պիտի պատահի, ինչ որ ծանր պատասխանատուութիւն յառաջ կը բերէ եւ անոր հետեւանքը կրնայ մեզի շատ սուղի նստիլ»[1]:

Կնքելով զինադադար՝ Թուրքական կառավարությունն առաջին հերթին հետապնդում էր իր բանակը կարգի բերելու, ապա և երկրում ծայր առած ներքին կրքերը հանգստացնելու* խնդիրները: Այնուհետև նա մտածում էր, որ նախքան Լոնդոնի խաղաղության կոնֆերանսի սկսելը ինքը կհասցնի անհրաժեշտ դիվանագիտական աշխատանք տանել եվրոպական մեծերի և առաջին հերթին Գերմանիայի ու Ավստրիայի կառավարությունների հետ՝ ակնկալելով՝ նրանց ներկայացուցիչները կոնֆերանսում ճնշում կգործադրեն բալկանյան դաշնակիցների և հատկապես Բուլղարիայի ներկայացուցիչների վրա՝ հրաժարվելու Թուրքիային անիրագործելի պահանջներ ներկայացնելուց:

Անշուշտ, օտար աջակցության անցյալի հաճելի օրինակներն այժմ էլ հույսեր էին ներշնչել Կ. Պոլսի արկածախնդիր կառավարությանը, թե պաշտոնական Եվրոպան աջակցելու է իրեն: Բայց հաղթական զենքն ունեցավ իր հատուկ տրամաբանությունը, որը տարածքային ամբողջականության մասին տարփողողներին հարկադրեց դեռ մինչև զինադադարն ուրիշ սրինգ փչել: Նույն Ավստրո-Հունգարիան, որ նախքան պատերազմը առաջինն էր

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1289, 26 նոյեմբերի (9 դեկտեմբերի) 1912 թ.:

* Թուրքական թերթերից մի քանիսը պնդում էին, թե զինադադարի պայմաններից մեկը վերաբերում է պաշարյալ քաղաքների պարենավորման իրականացմանը, բայց հակառակ կողմի աղբյուրները վճռականապես մերժում էին այդ կետի գոյությունը: Ովքեր ծանոթ էին Թուրք պաշտոնեության գործելաոճին ու մտածելակերպին, համոզված էին, որ նրանք ստում են, որպեսզի հանգստացնեն Թուրք հասարակության վրդովված մտքերը:

աղմկում Թուրքիայի տարածքային ամբողջականության քարացած սկզբունքի անզիջում պաշտպանության մասին, այժմ էլ առաջինը եղավ, որ, միացած դաշնակից Իտալիային, ամենայն եռանդով առաջ մղեց Ալբանիայի անկախության հարցը՝ իբր առաջնորդվելով ժողովուրդների ազգային ինքնորոշման սկզբունքով: Իրականում, սակայն, այդ երկու երկրները գործում էին Սերբիայի գրգռված ախորժակի կլանումներից կտորներ «փրկելու» հետին հաշիվներով:

Գնահատելով զինադադարը՝ Նիկոլ Աղբալյանը գրում էր. «Բալկանի թատերաբեմում վերջացել է բալկանյան արյունոտ դրամայի մի գործողությունը և զինադադարի վարագույրն իջել է հազարավոր դիակների, տասնյակ հազարավոր վիրավորների ... վրա»[1]:

Զինադադարի առաջին իսկ օրերը ցույց տվեցին, որ ոչ միայն Ավստրիան ու Իտալիան, այլև մյուս մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, նույնիսկ Գերմանիան և առաջին հերթին Ռուսաստանը, արդեն եկել են այն համոզման, որ այլևս անհնարին է Բալկաններում պահպանել տարածքային status quo-ն[2]:

Բալկանյան ազգերի հաղթանակներն էին մեծերի դիվանագիտությանը ստիպել հաշտվել այն մտքի հետ, որ Եվրոպական Թուրքիայի բաժանումն անհրաժեշտ է: Օսմանյան կայսրությունը կանգնել էր Եվրոպայում ունեցած իր վերջին տիրույթներից մեկընդմիշտ զրկվելու իրական հեռանկարի առջև:

Մեծ տերությունների սկզբունքային տեսակետի արմատական փոփոխությունը զայրույթի փոթորիկ առաջ բերեց Կ. Պոլսում:

Իթթիհադի պարագլուխները, որոնք Եվրոպական Թուրքիայում օսմանյան բանակների կրած պարտությունները վերագրում էին Ռուսաստանին, որը, ըստ նրանց հայտարարությունների, հիմա էլ ինտրիգներով է զբաղված Լոնդոնում[3], սուլթանից

---

[1] ***«Հորիզոն»,*** *№ 261, 1912 թ.:*

[2] ***А. А. Могилевич, М. Э. Айрапетян****, На путях к мировой войне, 1914-1918 гг., Москва, 1940, стр. 145.*

[3] ***Տե՛ս Г. Н. Милюков****, Воспоминания, том второй (1859-1917), стр. 104:*

կտրուկ պահանջեցին հրաման արձակել, որ Իթթիլաֆի կառավարության կողմից բանակցություններ վարելու լիազորված թուրք պատգամավորները չմեկնեն Լոնդոն, և վերսկսել պատերազմը՝ հակառակ դեպքում սպառնալով հարուցել նոր հեղաշրջում և ի գահ կանչել Աբդուլ Համիդին: Իրենց հերթին ուլեմները կրկին հրապարակ իջան «գյավուրների» դեմ սրբազան պատերազմի կոչերով:

Բալկանյան փոքր պետությունների դեմ մղած կռիվներում պարտության համար Թուրքիայում բոլորը մեղադրում էին իրար: Իթթիհադը դրա հիմնական պատճառը համարում էր Իթթիլաֆի արտաքին ու ներքին ապիկար քաղաքականությունը և պատերազմ վարելու անընդունակությունը՝ մոռանալով, որ Տրիպոլիտանի պատերազմը տանուլ էր տվել իր կառավարությունը: Իթթիլաֆը երիտթուրք պարագլուխներին մեղադրում էր քայքայիչ գործունեության, ծանր պահին աթոռակռիվ բորբոքելու համար, երկուսը միասին այպանում էին երկրի բարձր զինվորականությանը, որ անընդունակ եղավ մարտերը վարելու ժամանակի ռազմական արվեստի պահանջներին համապատասխան, իսկ զինվորական մասնագետները թուրք բանակի պարտության հիմնական պատճառը համարում էին Գերմանիայի հետ կապերի ոչ արդյունավետությունը հատկապես ռազմական ոլորտում: Կ. Պոլսի թուրք մամուլը քննադատության կրակի տակ էր առել ամենից առաջ ֆոն դեր Հոլցի գլխավորած գերմանացի ռազմական հրահանգիչ ու մարզիչ սպաների կողմից թուրքական բանակը վարժեցնելու ձևերը, գերմանական սպառազինության անբավարար որակը:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի օրգան «Ժեոն Թյուրք» թերթը գրում էր. «Հիմա արդեն ժամանակն է, որ մենք դասեր քաղենք մեր հայրենիքի վրա թափված ցավալի դեպքերից: Ֆոն-դեր-Հոլցի այնքան փառաբանված զինվորական մեթոդը և պրուսական մարզչական դպրոցը գլխովին վարկաբեկվեցին մեր աչքում: Գերմանական ռազմական արվեստի չոնդալից տապալման պատճառն այն էր, որ այն ամենևին չէր համապատասխանում օսմանյան զինվորի հոգեբանությանը: Կռիվը միանգամայն ուրիշ ընթացք ունեցավ, քան գծագրվում

էր թղթի վրա: Մենք ժամանակին պնդում էինք, որ չպետք է չափից ավելի հավատ ու վստահություն տածել Գերմանիայի պատերազմական զինատեսակներին: Ցավոք, այդ մտավախությունը հաստատվեց: Կրուպի թնդանոթներն անորակ գտնվեցին և ուղղակի ջարդուփշուր եղան Կրեզոյի գործարաններում արտադրված թնդանոթների հարվածներից: Պատերազմի օրերին լիովին երևան եկավ գերմանական ռազմական արվեստի կործանարար ազդեցությունը մեր հայրենիքի վրա»[1]:

Հատկանշական է, որ մարտական գործողություններից հետո գերմանական մամուլը նույնպես սկսել էր դժգոհել՝ գրելով, թե բալկանյան ճգնաժամի ընթացքում տապալվել է ոչ միայն Բեռլինի քաղաքականությունը, այլև գերմանական ռազմական արվեստը:

Ինչ խոսք, ճիշտ հասցեներով էին ուղղված այդ մեղադրանքները, բայց հավելենք, որ գլխավոր մեղավորները երկուսն էին, որ ծնունդ էին տվել արյունալի պատերազմին. 1) Եվրոպական մեծ տերությունները, որոնք ոչինչ չարեցին դադարեցնելու անիշխանությունը Թուրքիայում, բալկանյան ազգերի հեծեծանքներն ու աղաղակները չլսելու համար բամբակ խցկեցին իրենց ականջները: Հենց այդ պատճառով այդ ազգերը վճռեցին կենաց ու մահու կռվով իրենք լուծել իրենց սեփական խնդիրները, 2) Թուրքական իշխանությունները, որոնք իրենց անհեռատես, անխոհեմ ու նենգ քաղաքականությամբ հպատակ ժողովուրդներին ստիպեցին զենք վերցնել: Հիրավի, 1912 թ. օսմանյան պետությունը նույն խոշոր կայսրությունը կլիներ, ինչպես 100 տարի առաջ, եթե գոնե սահմանափակ չափերով բարենորոգումներ կատարեր երկրում: Այդ բանը նա չարեց և կորցրեց շատ բան:

Համակերպվե՞լ ստեղծված իրավիճակին և զրկվե՞լ եվրոպական տարածքներից, թե՞ շարունակել պատերազմը իր անխուսափելի նոր զոհերով ու ավերներով. այս հարցը հրամայա-

---

[1] Հոդվածի առանձին հատվածների հայերեն թարգմանությունը տե՛ս *"Новое Время"*, 21 ноября 1912 г.:

բար պատասխան էր պահանջում: Բ. Դուռը տատանվում էր, նախարարները երկյուղում էին ու դողում իրենց աթոռների վրա:

Թուրքիայի կառավարության տատանողական ընթացքին ի պատասխան՝ մեծ տերությունները դիմեցին համապատասխան քայլերի՝ ճնշում գործադրելով Բ. Դռան վրա: Անգլիան, Իտալիան և Ֆրանսիան ծովային նոր ցույց արեցին Կ. Պոլսի մատույցներում՝ այնտեղ գտնվող ռազմանավերի թիվն ավելացնելով մի քանիսով: Երեք մեծերը օսմանյան կառավարությանը սպառնում էին ուժ գործադրել, եթե նա հրաժարվի բալկանյան քառյակ դաշինքի հետ նստել հաշտության բանակցությունների սեղանի շուրջ և վերսկսի պատերազմական գործողությունները: Արդեն խոսում էին, որ եթե ծովային այդ ցույցը չազդի Թուրքիայի վրա՝ կնքելու հաշտություն, ապա մեծ պետություններն ըստ երևույթին մանդատ կտան Ռուսաստանին՝ գրավելու Հայաստանը: Բացի դրանից՝ մեծ պետությունները կազմեցին հավաքական վերջնագիր, որը պետք է հանձնվեր Բ. Դռանը: Ռուսաստանը պահանջել էր վերջնագիրը կազմել վճռական տոնով, այսինքն՝ եթե թուրքական կառավարությունը մերժեր այն, ապա դաշնակիցները չարունակելու էին պատերազմը: Բայց Գերմանիայի և Ավստրիայի ներկայացուցիչները հայտնել էին, որ եթե Թուրքիան նույնիսկ մերժի վերջնագիրը, միևնույնն է, հաշտության բանակցությունները պետք է չարունակել: Դա նշանակում էր, որ նրանք արդեն պատրաստվում էին պաշտպանության տակ առնել Թուրքիային: Իսկ դա վկայում էր, որ Հայաստանը գրավելու համար Ռուսաստանին մանդատ տալու մասին խոսակցությունները զուրկ էին որևէ հեռանկարից:

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Սկսված զինադադարը կողմերին հնարավորություն տվեց վաղօրոք նախատեսված հաշտության բանակցություններ սկսել Լոնդոնում՝ խաղաղության պայմանագիր կնքելու համար: Լոնդոնի դեսպանախորհուրդը կազմվեց Բեռլինի դաշնագիրը

(1878 թ.) ստորագրած 6 տերությունների՝ Լոնդոնում հավատարմագրված դեսպաններից: Շատերի համար պարզ էր, որ այստեղ հավաքվելու են մարդասիրության մասին չաղակրատող գիշատիչներ:

Թուրքիան նախապես հույս էր փայփայում, թե Լոնդոնի հաշտության բանակցությունների ընթացքում բալկանյան դաշնակից երկրների միջև կծագեն անհամաձայնություններ, որոնց շնորհիվ նրանք նվազ պահանջկոտ կլինեն, և դա կնպաստի իրենց օգտին արագ հաշտություն կնքելուն, մանավանդ որ տերությունները և առաջին հերթին Անգլիան ձգտում էին դրան[1]:

Բայց երբ պարզ դարձավ, որ բալկանյան հակառակորդ պետությունների դաշինքը տվյալ պահին անսասան է, Թուրքական կառավարությունն չտապեց Լոնդոնի խորհրդաժողովի քննարկմանը ներկայացնել իր նախապայմանները:

Քանի որ Թուրքիան, այնուամենայնիվ, փափագում է խաղաղություն, Եոյակ համաձայնության տերությունները դիմումներ կատարեցին բալկանյան զինակիցներին, որպեսզի նրանց համոզեն հաշտության բանակցությունների ընթացքում հանդես գալ չափավոր պահանջներով[2]:

Ռուսական "Новое Время" թերթի հաղորդումից հասարակայնությունը տեղեկացավ, որ Լոնդոնի խորհրդաժողովի նախօրյակին վարչապետ Քեամիլ փաշան տերություններին ներկայացրել է հաշտության հետևյալ պայմանները. 1) Թուրքիային է մնում շրջապատման մեջ գտնվող Էդիրնեն (Ադրիանուպոլիսը), 2) Բուլղարիան ստանում է Կըրկ-Քիլիսեն, Մուստաֆա փաշան, Գըրջալին, Նևրոքոփը և Ճումայի-Պալան. դրանից բացի՝ Բուլղարիայի համար ապահովվում է երկաթուղային ազատ ելք դեպի Էգեյան ծով՝ իրեն թողնելով, որ ընտրի Քավալա կամ Դեդե-Աղաջ նավահանգիստները, 3) Հունաստանը ստանում է Փրևեզան, Կրևենան, Էլասոնիան՝ մինչև Կատերինա, ինչպես նաև Կրետեն, 4) Սերբիային են անցնում Կումանովոն,

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1293, 30 նոյեմբերի (13 դեկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Բութանիա»**, № 1062, 14 (27) նոյեմբերի 1912 թ.:

Պրիշտինան, Միտրովիցան և Նովի Բազար սանջակի ամբողջ արևելյան մասը: Թուրքիան հանձն է առնում թույլ տալ, որ Սերբիան երկաթուղի կառուցի դեպի Ադրիատիկ ծով՝ նույնիսկ խոստանալով երկաթուղու կառուցման ծախսի մի մասը ինքը վճարել, 5) Զերնոգորիան ստանում է Նովի Բազար սանջակի մնացած մասը՝ Կոսինքեոյով և Պլավայով հանդերձ, ինչպես նաև ամբողջ Սկուտարի լիճը՝ առանց, սակայն, Սկյուտարի քաղաքի, 6) Ինքնավարություն կտրվի Ալբանիային, Մակեդոնիային և Արշիպելագոսի կղզիներին՝ վերջիններիս կենտրոն դարձնելով Սամոսը: Այս երեք ինքնավար շրջանները գտնվելու են Թուրքիայի վեհապետության տակ, և դրանց կառավարիչները նշանակվելու են Բ. Դռան կողմից, 7) Ստեղծվում է բալկանյան նոր դաշնություն, որը լինելու է մնայուն քաղաքական կազմակերպություն՝ ունենալով համաբալկանյան ընդհանուր մաքսային օրենսդրություն: Թուրքիան մտնելու է բալկանյան դաշնության մեջ՝ որպես նրա անդամներից մեկը: Առաջադրելով այս պայմանները՝ Քեամիլ փաշան հույս էր հայտնում, որ բալկանյան պետությունները կընդունեն իր այդ առաջարկները, որպեսզի Թուրքիան ստիպված չլինի դիմելու ծայրահեղ քայլերի[1]:

Բայց մեծ տերությունների կառավարությունները չարձագանքեցին Քեամիլ փաշայի այդ առաջարկներին՝ հասկացնել տալով, որ ամեն ինչ պետք է որոշվի առաջիկայում Լոնդոնում:

Կ. Պոլսի «Ստամպոլ» թերթը 1912 թ. նոյեմբերի 30-ին տպագրել էր իր թղթակցի հարցազրույցը Թուրքիայի արտգործնախարարի հետ: Այն հարցին, թե նա ինչպես է գնահատում Օսմանյան կայսրության համար ստեղծված վիճակը, Գաբրիել Նորատունկյանը պատասխանել էր. «Ընդհանուր կացութիւնը քիչ մի բարելաւեցաւ բայց դեռ չպարզուեցաւ: Կացութիւնը վտանգաւոր է չեմ կրնար ըսել, ասիկա չափազանցութիւն պիտի ըլլայ, միայն թէ վերջերս մէջտեղ եկած կարգ մը խնդիրներ տակաւին լուծումի կ'սպասեն: Գալով մեզի, մենք վերապահ ընթացքի կը հետեւինք: Ասիկա չնշանակեր թէ անգործ կը մնանք:

---

[1] Տե՛ս **«Բութանիա»** (Կ. Պոլիս), № 7 (1053), 8 (21) նոյեմբերի 1912 թ.:

Յուզուած խնդիրներէն չատը օսմ. կայսրութեան ապագային հետ կապ ունին եւ Թուրքիա ըսուածին պէս Երրեակ Համաձայնութեան եւ Երրեակ Զինակցութեան միջեւ չէ դրուած: Թուրքիա չուզեր ոեւէ խմբաւորումի կողմը բռնել: Մեզ համար Եւրոպան կազմողը Պերլինի դաշնագրին տակ ստորագրած վեց մեծ տէրութիւններն են եւ ոչ թէ Երրեակ Զինակցութիւնն ու Երրեակ Համաձայնութիւնը:... Թուրքիոյ ապագայ ընթացքին մասին բան մը չենք կրնար ըսել հիմակուընէ, որչափ ատեն որ Լոնտոնի բանակցութիւններուն արդիւնքը յայտնի չըլլայ»[1]:

Իրենց երկրներից աստիճանաբար Անգլիայի մայրաքաղաք մեկնեցին հաշտության ժողովի պատվիրակությունները, որոնք գլխավորում էին պետական ու քաղաքական նշանավոր գործիչներ: Պատվիրակությունների կազմերն էին. **Թուրքիա՝** առևտրի և երկրագործության նախարար Ռեշիդ փաշա (նախագահ), ծովային փոխնախարար Սուլիև փաշա և Բեռլինում օսմանյան դեսպան Օսման Նիզամի փաշա*, **Բուլղարիա՝** Սոպրանիի նախագահ դոկտ. Մ. Տանև (նախագահ), Լոնդոնում բուլղար դեսպան Մ. Մաջառով, նախկին արտաքին գործերի նախարար Բաբրիկով, **Սերբիա՝** Սկուպչինայի նախագահ Մ. Անտրա Նիկոլիչ (նախագահ), նախկին վարչապետ Մ. Ստոյան Նովակովիչ, Փարիզում Սերբիայի դեսպան Մ. Նեսիչ, բանակի սպարակույտի պետ գեն. Պոյովիչ և գնդապետ Պավլովիչ, **Հունաստան՝** վարչապետ էլ. Վենիզելոս (նախագահ), նախկին արտգործնախարար Մ. Սկոլուտիս, Վիեննայում հունական դեսպան դոկտ.

---

[1] «Ստամպոլ» թերթի թղթակցի հարցազրույցի թարգմանությունը տե՛ս **«Ժամանակ»**, № 1294, 1 (14) դեկտեմբերի 1912 թ.:

* Թուրքական պատվիրակության կազմում նախապես որոշված էր եղել ընդգրկել նաև Լոնդոնում Թուրքիայի դեսպան Թևֆիգ փաշային, բայց նա հրաժարվել էր: Մի առիթով արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանն ասել էր. «Թեվֆիգ փաշային երբ առաջարկեցինք մեր երեք պատուիրակներէն մէկը ըլլալ, պատասխանեց թէ անպատեհութիւն կրնայ առաջ գալ երբ պատուիրակներէն մէկը միեւնոյն ատեն դեսպան մը ըլլայ եւ այն ալ Լոնտոնի դեսպան: Մէկ անձի վրայ երկու պաշտօնի միացումը կարելի չէ: Այս առարկութիւնները մեզի արդարանալի թուեցան եւ ուրիշ պատուիրակ մը անուանեցինք» (Տե՛ս **«Ժամանակ»**, № 1294, 1 (14) դեկտեմբերի 1912 թ.):

Սթրայթ, Լոնդոնում դեսպան Մ. Կենատիուս, Փարիզի համալսարանում միջազգային իրավունքի դասախոս պրոֆ. Բոլիտիս և երկու զինվորականներ, **Զերնոգորիա՝** Մ. Մրուչեկովիչ[1]:

Վեհաժողովին Թուրքիան ձգտում էր ներկայանալ ոչ իբրև պարտված կողմ, իսկ Բալկանյան պետությունները ուզում էին այնտեղ ներկայանալ իբրև հաղթողներ՝ իրենց կամքը թելադրողի իրավունքով: Դեպքերի ընթացքը, սակայն, վերահսկում էին «չեզոք» մեծերը: Համենայն դեպս դաշնակից պետությունների զորքը չէր գրավել Պոլիսը, քանի որ այստեղ բախվում էին բոլոր մեծ պետությունների շահերը*:

Նախքան Լոնդոն հասնելը բոլոր պատվիրակությունների ղեկավարները Փարիզով մեկնելիս «Թան» թերթին տվել էին պաշտոնական հայտարարություններ: Ռեշիդ փաշան ասել էր, որ եթե Լոնդոնում բանակցող կողմերից մեկը փորձի մյուսին թելադրել անընդունելի պայմաններ, ապա անխուսափելիորեն կվերսկսվեն թշնամությունները: Եթե այսօր պատերազմ չկա, ապա դրա պատճառը անկայուն զինադադարն է միայն, նշել էր նա և ապա չեշտել, թե «Յունաստանի հետ չպիտի բանակցինք, մինչև որ զինադադարի պայմանները չստորագրե:... Զենք կրնար խօսակցիլ պետութեան մը հետ, որ իր դիւանագիտական դիրքը ամրացնելու համար պատերազմի բաղդին վրայ կը վստահի»[2]: Հունական պատվիրակության ղեկավարը վստահություն էր հայտնել՝ ասելով. «Բանակցութիւնները թէեւ յուզումնալից պիտի ըլլան, բայց վերջնական արդիւնքին վստահ ենք»[3]: Նույն տեսակետին էր էլ. Վենիզելոսը: Մ. Նովակովիչը պարզորոշ

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 3 (16) դեկտեմբերի 1912 թ.:

* Թուրքիայի համար գլխավոր անընդունելի պայմանը Էդիրնեի (Ադրիանուպոլսի) նկատմամբ բուլղարների պահանջն էր: Զուր չէ, որ օսմանյան պատվիրակության Լոնդոն մեկնելուց առաջ սուլթանը նրա անդամներին ասել էր. «Ամեն խնդրում կարող եք համաձայնել մեր հակառակորդների հետ, բայց չեմ ուզում, որ նրանց զիջեք Էդիրնեն, ուր հանգչում են ձեր նախահայրերը» (տե՛ս **«Ժամանակ»**, № 10 (1302), 9 դեկտեմբերի 1912 թ.):

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1297, 4 (17) դեկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

չեշտում էր, որ «Սերպիա որոշած է հաշտութեան բանակցութեանց մեջ սերպիական զորաց տարած յաղթանակի պտուղները պահպանումը պահանջել»: Մ. Մրուչեկովիչը հայտնում էր, թե «պահանջելու ենք մեր գրաված տարածքները մեզի մնան»[1]:

Բալկանյան բոլոր չորս պատվիրակությունները պայմանավորվել էին, որ Թուրքիայի հետ պիտի բանակցեն հետևյալ հիմնական կետերի շուրջ. 1) Թուրք և բուլղար, Թուրք և սերբ, Թուրք և հույն, Թուրք և գարաղաղյան սահմանագլուխների ճշտում, 2) Տնտեսական խնդիրներ, 3) Տարածքային խնդիրներ, որոնց թվում մեծ խնդիրները երեքն էին՝ Էդիրնե, Ադրիատիկ և կղզիներ[2]:

Լոնդոն հասած պատվիրակությունների ղեկավարները այս երեք հենակետային դիրքերից չարունակում էին պաշտոնական հայտարարություններ անել:

«Նոյե Ֆրայե պրեսե» թերթի թղթակցի հետ ունեցած հանդիպմանը բուլղար պատվիրակության ղեկավար Տանևն ասել էր, որ խորհրդաժողովը բացվելու է երկուշաբթի, և այդ օրն էլ «մեր պատվիրակներն անպայման պետք է պնդեն Ադրիանուպոլսի և Դեդե-Աղաջի հանձնման վրա: Եթե Թուրքերը մերժեն այդ պահանջը, արդեն երեքշաբթի կարելի կլինի հաշտության բանակցությունները ձախողված համարել և 48 ժամ հետո պատերազմական գործողությունները պետք է վերսկսվեն, որին կատարելապես պատրաստ ենք: Մենք, այնուհետև, հակառակ մեր նախկին փափագի, այլևս հաշվի չառնելով միջազգային շահերը, կքայլենք Կ. Պոլսի վրա: Դա ինքնին կարող է հասկանալի լինել»: Ապա՝ «Մենք հաշտություն ենք ուզում, բայց եթե դա հնարավոր չլինի, ապա մինչ այդ ցույց տված ոգևորությամբ կշարունակենք պատերազմը՝ մինչև ամբողջ Եվրոպական Թուրքիայի ոչնչացումը: Այս պայմաններում Ադրիանուպոլսից հրաժարվելը բացարձակապես անհնարին է»[3]:

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1297, 4 (17) դեկտեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, ինչպես նաև՝* ***«Բութանիա»****, № 11 (24) նոյեմբերի 1912 թ.:*

[3] *"Neue freie Presse" թերթի թղթակցի հարցազրույցի հայերեն թարգմանությունը տե՛ս* ***«Առաջամարտ»*** *(Կ. Պոլիս), № 20 (1078), 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:*

Գերմանական մի ուրիշ պարբերականի՝ *"Berliner Tagesblat"* թերթի աշխատակիցներից մեկը առիթ էր ունեցել հանդիպելու Լոնդոնում բուլղար դեսպան և զինվորական կցորդ Կանչևի հետ: Նա ասել էր. «Առանց Ադրիանուպոլսի հաշտություն կնքելը բացարձակապես անհնար է: Եթե կարճ ժամանակում այդ մասին համաձայնություն չկայացվի, ապա պատերազմի վերսկսումն անխուսափելի է»:

Թղթակցի այն հարցին, թե այդ բանը հնարավոր է, երբ լուրջ հակասություններ են ծագում Բուլղարիայի և Հունաստանի միջև Մակեդոնիայի խնդրում, բուլղարացին բավարարվել էր հակահարցեր տալով: «Ասե՛ք խնդրեմ,- ասել էր նա,- արդյո՞ք եվրոպական դիվանագիտությունը լավ տեղյակ է մեր միջև գոյացած համաձայնության: Մի՞թե կարելի է միայն գոյություն չունեցող վատ տեղեկություններով առաջնորդվել»[1]:

Թուրքական կառավարության ղեկավար շրջաններում սկսել էր խորանալ այն համոզումը, որ Ադրիանուպոլսի հանձնումը անխուսափելի է, իսկ վարչապետ Քյամիլ փաշան բացեիբաց ասում էր, որ դա հնարավորություն կտա խաղաղության կնքման, որի շնորհիվ հնարավոր կլինի փկել Եվրոպական Թուրքիայի դեռ թշնամիների կողմից չգրավված մասերը: Նա համոզված էր, որ հակառակ թուրք բարձր զինվորականության ինքնագոհ հայտարարությունների, Զաթալջայի գծերը չեն կարող երկար ժամանակ դիմադրել բալկանյան զինակիցների միացյալ և կազդուրված բանակներին:

Քյամիլ փաշայի բռնած դիրքն ընդհարվում էր երիտթուրքական կոմիտեի կատաղի դիմադրությանը: «Բութանիա» թերթի թղթակիցը Բալկաններից հաղորդում էր, թե երիտթուրքերը բանակում կազմել են մի ընդհատակյա մարմին, որը կրում է *"Providence de la Patrie"* անունը: «Այդ մարմնի կնիքով,- գրում էր թղթակիցը,- երկու սպառնական նամակներ ղրկած են՝ մեկը Քեամիլ փաշայի և մյուսը Նորատունկյանի: Այս պարագաները

---

[1] Սույն հարցազրույցը տե՛ս **«Առաջամարտ»** (Կ. Պոլիս), № 20 (1078), 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

ցույց կուտան, թե ինչպիսի ընդդիմութիւն կայ»[1],- գրում էր թղթակիցը:

Նոյեմբերի 25-ին Բ. Դուռը պաշտոնապես հայտնեց, թե արտգործնախարար Գաբրիել էֆ. Նորատունկյանը չի գնալու Լոնդոն, քանի որ նրա ներկայությունն անհրաժեշտ է համարվում Կ. Պոլսում:

Այդ պաշտոնական տեղեկությունն անհամապատասխան էր իրողությանը: Նորատունկյանն ինքն էր հրաժարվել պատվիրակի պաշտոնից՝ նկատի առնելով իր հայ լինելը և Լոնդոն հասած հայոց դիմումին պատասխանելու դժվարին հարցից խուսափելու համար: Պատվիրակության անդամ նշանակված ազգությամբ հայ Հրանտ Ապրոն նույնպես հրաժարվեց Լոնդոն գնալուց[2]:

Ընտրած թուրքական պետության նշված հայ պաշտոնյաները հրաժարվեցին մասնակցություն բերել հաշտության ժողովին, բայց Կ. Պոլսից Լոնդոն ուղևորվեցին հայազգի մի խումբ հասարակական գործիչներ՝ այնտեղ Հայաստանի ինքնավարության հարցը հարուցելու համար:

Արդեն դեկտեմբերի 2-ին բոլորը հավաքված էին Լոնդոնում:

1912 թ. դեկտեմբերի 3(16)-ի առավոտյան Լոնդոնի Սեյնթ Ջեյմս պալատում* բացվեց **հաշտության ժողովը****, և սկսվեցին բանակցությունները: Պատերազմող հինգ երկրների կառավարությունների ուղարկած պատվիրակները պիտի աշխատեին, փոխադարձ համաձայնությամբ հաշտություն կնքելով, վերջ տալ կռիվներին:

---

[1] **«Բութանիա»**, № 28 (1106), 9 (22) հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 276, 12 դեկտեմբերի 1912 թ.:

* Տե՛ս **«Ժամանակ»**, № 1314, 21 դեկտեմբերի 1912 թ. (3 հունվարի 1913 թ.):

** Տերություններից ոմանք (Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա) նախապես հակված էին հաշտության ժողովը հրավիրել Ֆրանսիայի Նիսի շրջանում՝ նկատի ունենալով Անգլիայում եղանակի անբարենպաստ լինելը, Լոնդոնում վրա հասած ուժեղ ցրտերը, բայց ի վերջո, այնուամենայնիվ, բոլորը կանգ առան Լոնդոնի վրա (տե՛ս **«Ժամանակ»**, № 1283, 20 նոյեմբերի (3 դեկտեմբերի) 1912 թ.:

Պատվիրակությունների կազմը՝ հաչված նաև խորհրդականներին, 30 հոգի էր: Անգլիայի արտգործնախարար Էդվարդ Գրեյը բարիգալուստի խոսքեր ասելուց հետո մեկնեց բանակցությունների համար հատկացված սրահից: Բուն բանակցությունները սկսվեցին հաջորդ օրվա՝ դեկտեմբերի 4 (17)-ի առավոտյան[1]:

Հաչտության ժողովի հետ համարյա միաժամանակ՝ դեկտեմբերի 4 (16)-ին, Լոնդոնում բացվեց մի ուրիշ ժողով ևս՝ ***Դեսպանաժողովը*** *(կամ Դեսպանախորհուրդը), որը գործնական առնչություն չուներ հաչտության ժողովի հետ, բայց ըստ էության լինելու էր նրան կից մի կոմիտե, որը պետք է քննության առներ եվրոպական տեսակետները հաչտության ժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ[*]: «Հիմնականում հենց այդտեղ էին տեղափոխվել բոլոր տարաձայնությունները, որոնք բորբոքվում էին ավստրիական դիվանագետների կողմից»:*

Դեսպանաժողովի անդամներն էին Լոնդոնում հավատարմագրված եվրոպական հինգ մեծ պետությունների, ինչպես նաև Իսպանիայի և Ռուսաստանի դեսպանները:

Հայերը և թուրքական կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդները տենչում էին, որ թուրք կառավարությունը հաչտության ձեռք մեկնի բալկանյան զինակիցներին: Հայկական մամուլը հույս ուներ, որ հաչտության ժողովը վերջ կդնի կայսրության բոլոր ժողովուրդների տառապանքներին: Դաշնակցության «Բութանիա» թերթը գրում էր. «Քաղաքական հորիզոնը, որ վերջին չաբթուն խիստ մռայլ եւ սպառնալից երեւոյթ մը ունէր, արդէն իսկ սկսած է պայծառանալ եւ յուսադրիչ դէպքերու նշանները բերել: Պալքանեան դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ խաղաղութեան եւ զինադուլի բանակցութիւնները կը կարծուի թէ գոհացուցիչ ելքի մը պիտի յանգին»[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1301, 8 (21) դեկտեմբերի 1912 թ.:*

[*] *Հարկ է նշել, որ ուսումնասիրողներից ոմանք Լոնդոնի հաչտության ժողովի և Դեսպանաժողովի միջև տարբերություն չեն տեսնում:*

[2] ***«Բութանիա»****, № 110 (1056), 11 (24) նոյեմբերի 1912 թ.:*

Հայերի մեջ հույս էր արթնացել հատկապես այն բանից հետո, երբ Կ. Պոլսի ռուսական դեսպանը Բ. Դոանը խորհուրդ էր տվել խոհեմություն հանդես բերել, մի կողմ ձգել ինքնասիրությունը, մոռանալ եվրոպական տերությունների հակասություններից օգտվելու, նրանց միմյանց դեմ հանելու վաղեմի սովորությունը և խոնարհվելով ուժեղի առջև՝ բանակցել իր նախկին վասալների հետ:

Անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթը տպագրել էր մի նշանավոր պրոֆեսորի հեղինակած հոդվածը, որը թարգմանաբար արտատպել էր Կ. Պոլսի «Բիւզանդիոնը»: Հոդվածում նշված էր, որ «Բրիտանական մայրաքաղաքին մեջ կսկսին զարմանալ թէ այն պահուն, երբ Մակեդոնիոյ ճակատագիրը վիճաբանութեան առարկայ կ'ըլլայ, կարծես թէ բոլորովին կ'մոռացուի տառապանքի եւ ցաւի անոր քոյրը՝ Հայաստանը, վասն զի ուրիշ կերպով կարելի չէ բացատրել անգլ. Խորհրդարանին, Մամուլին եւ քրիստոնեայ Եկեղեցիին լռութիւնը: Այս տեսակ տագնապալից ատեն մը ամէն անոնք որ արդարութեան, գթութեան ու ճշմարտութեան անունով կ'գործեն, իրապէս ոճրագործութիւն մը ըրած պիտի ըլլան երբ չխօսին ի նպաստ ժողովրդեան մը որ Անգլիոյ պաշտպանեալն է: Երբ Աւստրիա, առանց հրացան մը իսկ պարպելու եւ առանց պարտաւորիչ դաշնադրութեամբ մը կապուած ըլլալու Ալպանիոյ, կ'յաջողի անոր ինքնօրէնութիւնը ձեռք բերել, Անգլիա ի՞նչպէս պիտի չկրնայ յաջողացնել Հայաստանի ազատագրումը, որուն նկատմամբ հանդիսական ու ծանօթ յանձնառութիւններ ըրած է»[1]*:*

Հոդվածագիրն այնուհետև չեչտում էր, որ եթե դեսպանաժողովում Անգլիայի արտգործնախարարը օրինակ վերցնի Ավստրիայի արտգործնախարարից, որն ատամներով պաշտպանում է Ալբանիայի շահերը, ապա Հայաստանի խնդիրը նույնպես կարող է քննության առնվել: Հոդվածագիրը դեմ էր արտահայտվում այն պայմանագրին, որը չի ներառի «այնքան աշխատած ու Եվրոպային դիմած ժողովրդի մը ձայնը»[2]*: Դրա հետևանքն այն*

---

[1] ***«Բիւզանդիոն»,*** *18 հունվարի 1913 թ.:*

[2] *Նույն տեղում:*

կլինի, շարունակում էր հոդվածագիրը, որ նախկին հարստահարումները նոր թափ կառնեն՝ արյունով ողողելով Հայաստանը: «Այս թշուառ ու յուսահատ ժողովուրդը շատ անագորոյն փորձերու ենթարկուեցաւ եւ դեռ պիտի ենթարկուի: Նա խրոխտ պատմութիւն մը ունի, բայց արիւնալի: Զենք կրնար հաւատալ որ Եւրոպա այս անգամ ալ անողոք պիտի ըլլայ անոր նկատմամբ»[1]:

Հայերին հույսի շող էր երևացել: Հենց այդ օրերին ռուսական մամուլում հրապարակվել էին մի շարք հոդվածներ, որոնց հեղինակները իրենց կառավարությանը հուշում էին Լոնդոնի հաշտության ժողովում անպայման առաջ քաշել Թուրքիայի հայերին քուրդ ավազակախմբերից և թուրք ջարդարարներից պաշտպանելու խնդիրը: Հայկական հարցը լրջորեն սկսել էր հետաքրքրել նաև ռուսաց եկեղեցուն և կայսրության սլավոնամետ կազմակերպություններին:

Ավելորդ չէ հիշել, որ այդ օրերին «Սլավոնական քաղաքակրթություն» անվամբ ընկերությունը Մոսկվայում գումարել էր մի կարևոր նիստ, ուր հայտնի ռուս քաղաքական գործիչ, Պետական դումայի նախկին անդամ Եզերսկին զեկուցում էր կարդացել Արևելյան հարցին վերաբերող թեմայով՝ հատկապես կանգ առնելով Հայկական հարցի վրա: Նա չեշտել էր, որ Հայաստանի խնդիրն այնպիսի այժմեականություն է ստացել, որ չի կարող անտարբեր թողնել ոչ ռուսական մամուլին և ո՛չ էլ առավելապես ռուսական ղեկավար շրջաններին[2]:

Նախքան հաշտության ժողովում Թուրքիայի պատվիրակության հետ հանդիպելը բալկանյան դաշնակիցների ներկայացուցիչները առանձին խորհրդակցություն ունեցան, որտեղ որոշվեց Թուրքիային ներկայացնել միասնական պահանջ, որի գլխավոր կետերն էին դեռևս նրա ձեռքին գտնվող Ադրիանուպոլսի (Էդիրնե), Շքոթրայի (Սկյուտարի) և Յունիայի (Յանինա) հանձնումը: Հաստատաբար ու միաձայն հայտնելով այդ պահանջը՝ դաշնա-

---

[1] ***«Բիւզանդիոն»,*** *18 հունվարի 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ազատամարտ»****, № 1046, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:*

կիցները միաժամանակ համաձայնության եկան գրավված հողերի բաժանումը իրենց միջև թողնել հետագային[1]:

Դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ չորս դաշնակիցների ու Թուրքիայի ներկայացուցիչների առաջին հանդիպումը: Թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշիդ փաշան հայտարարեց, թե իրենք իրենց կառավարությունից լիազորված են բանակցելու միայն բուլղար, սերբ և գարադաղցի պատվիրակների հետ՝ բացառելով Հունաստանի պատվիրակությունը այն պատճառաբանությամբ, թե հունական կողմը չի ստորագրել զինադադարի արձանագրությունը: Դրան ի պատասխան՝ բալկանյան չորս պատվիրակությունները միաձայն հայտարարեցին, թե այդ դեպքում իրենք ընդհանրապես դադարեցնում են բանակցությունները[2]:

Բոլորը հասկանում էին, որ ծայրահեղորեն դժվար է լինելու հաշտության ժողովում համաձայնության հասնելը: Կասկած չկար, որ երկու բանակցող կողմերն առաջին հերթին սեղանին են դնելու ոչ թե չափավոր, այլ ծայրահեղ պահանջներ, որպեսզի վիճաբանություններից ու փոխադարձ սակարկություններից հետո կարողանան առավելագույնը ստանալ: Հատկապես տարած հաղթանակներով չլացած բալկանյան դաշնակից պետությունների կողմից լիազորված պատվիրակությունները անչեղորեն առաջնորդվելու էին իրենց կառավարությունների պատրաստած ծրագրերի ու հրահանգների համաձայն: Եվ դա բնական էր, քանզի ռազմաճակատում ստեղծված վիճակը ենթադրում էր, որ նվազ զիջող կողմը պետք է լիներ բալկանյան զինակցությունը, որի զորքերը եկել-հասել էին Զաթալջայի ամրությունների առջև: Ուրեմն, կամա թե ակամա, օսմանյան կողմն էր, որ բանակցությունների ընթացքում պետք է լիներ ավելի չափավոր[3]:

Իհարկե, այդ ամենը տրամաբանական էր, բայց մյուս կող-

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»** (Կ. Պոլիս), № 1087, 15 (28) դեկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Բութանիա»**, № 1053, 8 (21) նոյեմբերի 1912 թ.:

մից խիստ կասկածելի էր, որ դաշնակիցների պահանջները հնարավոր կլինի համաձայնեցնել Բ. Դոան հետ: Թուրքիան հեշտությամբ կթողնե՞ր արդյոք իր եվրոպական տիրույթները: Ալբանիայի խնդրում բալկանյան զինակիցներն անխուսափելիորեն բախվելու էին Ավստրիայի, Իտալիայի, Ռուսաստանի շահերին: Բուլղարիան հայտարարել էր, որ եթե իր զորքերով չրջապատված Ադրիանուպոլիսը (Էդիրնե) իրեն չթողնվի, ապա հաշտություն կնքելն անհնարին է*, իսկ եվրոպական հասարակական կարծիքն անարդար էր համարում Ադրիանուպոլիսը և Շքոթրան դաշնակիցներին հանձնելը, քանի որ այդ ամրոցները, թեև չրջապատված դաշնակիցների զորքերով, բայց դեռ թուրքերի ձեռքին էին[1]:

Հաշտության բանակցությունների ընթացքում յուրաքանչյուր պատվիրակություն ներկայացրեց իր պահանջները:

Առավել արմատական դիրքերից էր հանդես գալիս **Բուլղարիան**: «Թուրքիան պետք է ծովով բաժանել Եվրոպայից»[2],- այս էր բուլղարների հիմնական պահանջը: Նրանք նպատակ ունեին դուրս գալ Էգեյան ծով և հիմնավորվել նրա եզերքի մի մասում՝ դրանով իսկ իրենց երկրի համար մուտք բացելով դեպի Հարավային (Միջերկրական) ծով: Էգեյան ծովեզերքի այդ մասը պետք

---

* Բուլղարներն ինչո՞ւ էին պնդում Էդիրնեն իրենց հանձնել: Բուլղար պատվիրակներից մեկը այդ մասին Փարիզում հայտարարություն էր արել «Թան» թերթին, որը թարգմանաբար արտատպել էր «Ժամանակը»: «Ինքնասիրութեան կամ ձեռնունայն Սոֆիա չդառնալու դիմումով չէ, որ Էտիրնէի մասին կը պնդենք,- ասել էր նա: - Մեր տեսակէտներէն աւելի հեռուները կ'երթան: Ամէն բանէ առաջ թրքական լուծէն մեր քրիստոնեայ եղբայրները ազատելու համար է որ պատերազմեցանք, արդ, անոնց մեծ մասը այս լուծին տակ ձգելը ուրիշ պատերազմ մը պատրաստել կը նշանակէ, ինչպէս գիտէք, Էտիրնէի բնակչութեան մեծ մասը պուլկար է: Պէտք է որ Թուրքիոյ քրիստոնեայ հպատակներուն ազատագրումը կատարեալ ըլլայ, առանց որու նոր կնճռոտութիւններ պիտի ծագին» (Տե՛ս **«Ժամանակ»**, № 1308, 15 (28) դեկտեմբերի 1913 թ.):

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № , 3 (16) դեկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1313, 20 դեկտեմբերի 1912 թ. (2 հունվարի 1913 թ.):

է ներառեր Դեդե Աղաջի նավահանգիստը և Քավալան: Բայց ամենակարևորը. Բուլղարական թագավորությունը պիտի պարփակեր Բալկանյան թերակղզու սիրտը հանդիսացող Մակեդոնիա լեռներկիրը, որի արևելյան կողմի բնակիչների մեծ մասը բուլղարներ էին, արևմտյան մասում կային հույներ, ալբաններ, թուրքեր, քուցավալախներ:

Եռյակ համաձայնության տերությունները, մասնավորապես Ռուսաստանը և Ֆրանսիան բուլղարական կառավարությանը կոչ էին անում վերջնականապես հրաժարվել Կ. Պոլիս մտնելու գաղափարից, որի փոխարեն խոստանում էին պատերազմի ավարտից անմիջապես հետո նրան տալ մեծ փոխառություն: Բայց Բուլղարիայի կառավարության, բանակի և բուլղար ժողովրդի անզուսպ տենչանքը առայժմ մնում էր Կ. Պոլիս մտնելը:

Բուլղարական պահանջների դեմ վճռականորեն հանդես էր գալիս ***Ռումինիան****, որը թեև չէր մտնում բալկանյան դաշինքի մեջ, հետևապես մասնակցություն չուներ լոնդոնյան բանակցություններին, բայց իր կառավարության մակարդակով և մամուլով մեղադրանքներ էր ներկայացնում Բուլղարիային «ագահության համար»:*

Ավելին, 1912 թ. դեկտեմբերի 28-ին Ռումինիայի կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Բուլղարիայի կառավարությանը և պահանջեց քանդել Սիլիստրայի, Բալչիքի և Մեջիդիեի ամրությունները, որոնք սպառնալիք են իր երկրի անվտանգությանը: Վերջնագրի համաձայն՝ բուլղարական կողմը պարտավոր էր 48 ժամվա ընթացքում պատասխան տալ իր պահանջին, այլապես ռումին բանակը հրաման կստանար գրավել պահանջված ռումինաբնակ հողերը, ինչպես նաև կհայտարարվեր ընդհանուր զորահավաք[1]: Ռումինիայի ձեռնարկած քայլերին մեծապես աջակցում էր Ավստրիան, որը նրան թելադրում էր առանց հետաձգելու զորք մտցնել Սիլիստրիայի նահանգ և գրավել այն[2]: Ինչ խոսք, այդ ամենը թուլացնում էր բուլղարների դիրքը

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1322, 29 դեկտեմբերի 1912 թ. (11 հունվարի 1913 թ.):*

[2] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1334, 30 (26) հունվարի 1913 թ.:*

հաշտության բանակցություններում:

Հաշտության բանակցությունների ընթացքում մոտավորապես Բուլղարիայի չափ ընդարձակում էր պահանջում ***Սերբիան****: Նա ձգտում էր տիրել Նովի Բազար սանջակի մի մասը՝ Հին Սերբիան՝ Սկոպլե (Սկյուբ, Ուսկյուբ) և Ֆրիզրենտ մեծ քաղաքներով: Ավելին, նա երազում էր իրեն միացնել Ալբանիան[1], գոնե նրա հյուսիսային մասը: Սերբիայի համար բախտորոշ էր դեպի Ադրիատիկ ծով դուրս գալը, ուստի ձգտում էր Ալբանիայի վրայով ուղղվել դեպի Ալեսիո և Դուրացցո նավահանգիստները: Ավստրիան ամեն գնով փորձում էր խափանել Սերբիայի ձգտումը և այդ նպատակով արգելք էր հանդիսանում դեպի Ալբանիա սերբական բանակի առաջխաղացմանը: «Առաջամարտը» գրում էր, որ ինչ էլ որ լինի, Ռուսաստանը պաշտպանելու է Սերբիայի շահերը և ձգտելու է՝ Ադրիատիկում ունենալ նավահանգիստ[2]: Հաշտության ժողովում Սերբիայի ներկայացրած պահանջների շուրջ ծավալված վիճաբանությունների ընթացքում Ռուսաստանի ներկայացուցիչների բռնած դիրքը դա էր ապացուցում: Եվ եթե Ռուսաստանի սպառնալիքներն ուղղված չլինեին Ավստրիային, ապա վերջինս վաղուց իր թաթը երկարած կլիներ դեպի Մակեդոնիա և Ալբանիա: Ադրիատիկի ափին նավահանգիստ ունենալու սերբ կառավորության փափագը Եոյակ զինակցության և Եոյակ համաձայնության միջև հաշտության ժողովում դարձել էր կովախնձոր:*

Հունաստանը *պայքարում էր իրեն միացնելու Էպիրոսը, ինչպես և Խալկետիք թերակղզին: Նա պահանջում էր նաև իրեն հանձնել Կրետեն (որի համար նա շատ երկար տարիներ պայքարել էր) և Էգեյանի մի քանի կղզիներ: Նա իրենն էր համարում նաև Մակեդոնիայի գլխավոր քաղաք Սալոնիկը, որի ապագան, սակայն, կախված էր մեծ պետությունների վճռից, քանզի այն միջազգային կարևորություն ունեցող նավահանգիստ-քաղաք էր: Բուլղարիան ևս չէր ուզում այն զիջել Հունաստանին[3]: Թեր-*

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 1072, 28 նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

թերը հաղորդում էին, որ, ի վերջո, Թուրքիան նույնիսկ կարող է Հունաստանին զիջել Սալոնիկը, բայց Էգեյան ծովի կղզիները՝ երբեք: Այդ կղզիներում 500.000 հույնի դիմաց ապրում էր ընդամենը 24.000 Թուրք: Դրանք արդեն Թուրքիայի համար ներկայացնում էին որպես նոր Մակեդոնիա, այսինքն՝ մի հրաբուխ, որը սպառնում էր լայնածավալ ապստամբություններով[1]: Ռոդոս կղզու և չրջակա կղզիների հունական գյուղերում սկսվել էին ցույցեր՝ Հունաստանին միանալու օգտին[2]: Ոչ ոք չէր կասկածում, որ դրանք չուտով վերաճելու են զինված ապստամբության:

Զերնոգորիան մաքառում էր, որպեսզի ընդարձակվի Նովի Բազար սանջակի և Շքոթրա (Սկյուտարի) քաղաքի հաշվին, ինչպես նաև պայքարում էր դեպի Ալբանիա ընդարձակվելու համար[3]:

Ալբանիայի պահանջը ինքնավարությունը չէր՝ սուլթանի քաղաքական գերիշխանությանը ենթարկվելու պայմանով: Ալբանացիները կատարյալ անկախություն էին ուզում՝ Կ. Պոլսից բոլորովին բաժանված[4]: Նիկոլ Աղբալյանն իր մի հոդվածում («Հորիզոն», № 96, 1913) նշում էր, որ եթե բալկանյան ինքնիշխան երկրներին հաջողվի իրար մեջ բաժանել Ալբանիան (մի բան, որ նա համարում էր ճակատագրական սխալ), ապա դրանով իսկ կփակվի Ավստրիայի ճանապարհը դեպի ծով: Ահա թե ինչու Ավստրիան չահագրգռված է այնպես գծել Ալբանիայի սահմանները, որ Սերբիան հնարավորություն չունենա դուրս գալու Ադրիատիկ: Բացի դրանից՝ Ալբանիան եռյակ զինակցության ձեռքին գործիք կլինի «Բալկանի մանր տերութեանց»:

Քանի որ Բալկաններում **Ավստրիայի** հիմնական հակառակորդը Սերբիան էր, ուստի Լոնդոնում նրա գլխավոր հարվածներն ուղղված էին դաշնակիցներից հենց այդ երկրի դեմ: Նա իր

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 8, 11 հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 7, 10 հունվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1072, 28 նոյեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1308, 15 (28) դեկտեմբերի 1912 թ.:

ձեռքն ամուր դրել էր 1908 թ. Օսմանյան հեղափոխության օրերին գրաված Բոսնիա-Հերցեգովինայի վրա, որը Սերբիայի բնական ճամփան էր դեպի Ադրիատիկ ծով: Դեսպանաժողովում նրա ներկայացուցիչները հայտարարում էին, որ այդ տարածքով դեպի ծով դուռ բացելու Սերբիայի ամեն փորձ պատճառ կդառնա նրան պատերազմ հայտարարելու[1]: Օսմանյան կայսրությունից Ալբանիայի անկախությանն ի նպաստ հայտարարություններով նա Սերբիայի առջև միաժամանակ փակում էր նաև դեպի Ադրիատիկ այդ վերջին ճանապարհը[2]: Ալբանական խնդրում Ավստրիան առաջնորդվում էր ոչ թե ալբանացիների համար օգուտ փնտրելու բարի նկատումով, այլ այնտեղ իր համար կռվան ստեղծելու քաղաքական տենչով: Ավստրիան միաժամանակ վճռականապես դեմ էր Սալոնիկը դաշնակիցներից որևէ մեկի ձեռքն անցնելուն և ձգտում էր այն դարձնել միջազգային նավահանգիստ: Նա նաև կտրականապես դեմ էր Հոնիական կղզիները Հունաստանին տալուն:

Գերմանիան լիովին համերաշխ էր Ավստրիայի հետ. Լոնդոնի դեսպանաժողովում նրա ներկայացուցիչները մշտապես հանդես էին գալիս ավստրիացիների հետ սերտ գործակցությամբ: Բեռլինը չէր դադարում մշտապես հիշեցնել, որ եթե Ավստրիան ռազմական տեսակետից նեղ վիճակի մեջ հայտնվի, ապա Գերմանիան անմիջապես օգնության կչտապի նրան: "Die Zeit" թերթը հաղորդում էր, որ գերմանական ռազմական նավատորմը Միջերկրական ծովում է և այնտեղ պատրաստ սպասելու է մինչև Արևելյան տագնապի վերջը: Եվ եթե Ավստրիան Սերբիայի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկի, ապա այդ նավատորմը անմիջապես դրվելու է ավստրիացի ծովակալի հրամանի տակ[3]:

Ինչպես հաշտության ժողովում, այնպես էլ Դեսպանաժողո-

---

[1] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1080, 7 (20) դեկտեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Բութանիա»**, № 1054, 9 (22) նոյեմբերի 1912 թ.:

[3] "Die Zeit"-ի հոդվածի հաղորդումը տե՛ս **«Ժամանակ»**, № 1326, 2 (15) հունվարի 1913 թ.:

*վում ավստրո-գերմանական շահերը մշտապես բախվում էին **Ռուսաստանի** շահերին, քանի որ նրանք Բալկաններում հետապնդում էին տրամագծորեն հակառակ նպատակներ: Դա պատահական չէր, քանզի առաջինները Թուրքիայի ավանդական դաշնակիցներն էին, իսկ Ռուսաստանը՝ նույն Թուրքիայի ավանդական հակառակորդը:*

Լոնդոնում իրենց շահերին լարված հետամուտ էին նաև մյուս մեծերը՝ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան:

*Նախկինի պես **Անգլիան** շահագրգռված էր Թուրքիայում իր տնտեսական արտոնությունների պահպանմամբ, ուստի մշտապես Բ. Դոանը հավաստիացնում էր, թե ինքը ամեն ինչ անելու է, որպեսզի Թուրքիան պատերազմից դուրս գա նվազագույն կորուստներով:*

*Թուրքական իշխանություններին նման հավաստիացնումներ էր անում նաև **Ֆրանսիան**, թեև ավելի համեստ ձևակերպումներով: Ավելին, Փարիզը երբեմն-երբեմն Բ. Դոանը հասկացնել էր տալիս, որ թեկուզ անցանկալի կորուստներով, բայց Թուրքիան այլ ելք չունի, քան ընդառաջ գնալու դաշնակիցների հիմնական պահանջներին: Ֆրանսիայի նախագահ Մ. Պուանկարեն 1912 թ. դեկտեմբերի սկզբներին խորհրդարանում հայտարարություն էր արել ի նպաստ «Բալկանը բալկանյան ժողովուրդներին» սկզբունքի[1]:*

Ի տարբերություն իրենց կառավարությունների՝ անգլիական և ֆրանսիական մամուլը Թուրքիային խորհուրդ էր տալիս ընդունել բալկանյան զինակիցների ներկայացրած պայմանները, խնայել սեփական ժողովրդին, որի տված զոհերը բավական էին մի քանի պատերազմների համար:

*Թուրքիայի նկատմամբ ավելի արմատական էր տրամադրված **Իտալիան**, որը պահանջում էր օսմաններին լիովին դուրս մղել Բալկաններից, միաժամանակ փնտրում էր այնտեղ մուտք գործելու զանազան միջոցներ, մասնավորապես՝ ամեն կերպ ձգտում էր ամրանալ Տրիեստում: Միաժամանակ հանդես գալով*

---

[1] *Տե՛ս **«Ժամանակ»**, № 1308, 15 (28) դեկտեմբերի 1912 թ.:*

Ալբանիայի հարավային սահմաններն ընդարձակելու ցանկությամբ՝ նա իրականում նպատակ ուներ մեծապես զորացնել իր դիրքերը Ադրիատիկում:

Բանակցությունների ընթացքում եվրոպական դիվանագիտության այն հայտարարությունները, թե պատերազմի ելքը չպիտի որևէ փոփոխություն մտցնի Բալկանյան status quo-ում, հետզհետե ինքնաբերաբար հօդս ցնդեցին՝ տեղի տալով նորանոր բանաձևերի, որոնք սնկի պես սկսեցին բուսնել այն հաղթանակներից հետո, որոնք բալկանյան զինակից բանակները տարան՝ աստիճան առ աստիճան մոտենալով մինչև օսմանյան մայրաքաղաքի դռներին: Մյուս կողմից բալկանյան պետությունները ևս մոռացել էին նախկինում արած իրենց հայտարարությունները, թե իրենք նետվում են պատերազմի հորձանքի մեջ ոչ թե հողային գրավումների համար, այլ Մակեդոնիայի իրենց դժբախտ ցեղակիցների մարտիրոսությանը վերջ տալու, նրանց Թուրքական հոգի վարչության ժանիքներից ազատելու համար: Նրանցից յուրաքանչյուրի հավակնությունները մեծանում էին օր օրի: Զուր չէ, որ «Ժամանակ» թերթը գրում էր, թե «...արդեն կրնանք գուշակել որ Թուրքիան, իր Եւրոպական հողամասերէն մեծ մաս մը պիտի զիջի զինակից պետութիւններուն, քանի որ հաշտութեան բանակցութիւններու խնդրանքը իրմէ է որ կ՚ըլլայ, եւ հաշտութիւնը պիտի կնքուի առնուազն Զաթալճայի ամրութիւններուն ստորոտը, եւ ոչ թէ Սոֆիա»[1]:

Թուրքերը չէին հաշտվում status quo-ից եվրոպական կառավարությունների հրաժարվելու փաստին: Ահմեդ Ռիզա բեյը դա համարում էր միջազգայնորեն ընդունված կանոնների աննախադեպ դրժում[2]:

Անշուշտ, հայերի մտքում հարց էր ծագում, թե ո՞րն է իրենց ձեռնտու. Թուրքիայի եվրոպական մասի հողերը զինակիցներին անցնելը՞, թե՞ ստատուսքվոյի պահպանումը: «Տարակույս չկայ,- գրում էր «Ժամանակի» աշխատակից Աշոտ Պաղպազ-

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1280, 17 (30) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Հեռաձայն»**, № 14, 5 (18) փետրվարի 1913 թ.:

յանը,- որ իբրեւ օսմանցիներ, իբր այս երկրի իրաւահաւասար քաղաքացիներ, երբէք չպիտի ուզէինք բթաչափ մը հող իսկ պակսած տեսնել անոր սահմաններէն, սակայն եւ այնպէս այդ հարցումին մենք դրական պատասխան պիտի տանք, որովհետեւ մեզի այնպէս կը թուի թէ Օսմ. պետութիւնը միշտ կորսնցուցած է իր ընդարձակութեան պատճառով, եւ պիտի չահի՝ իր սահմանները նեղցնելով»[1]:

Այս միտքն առանձին մեկնաբանության կարիք չունի, քանի որ այն տրամաբանության մակերեսին է:

Ելնելով իրենց փորձից՝ հայերը համոզված էին, որ Լոնդոնի հաշտության ժողովը և Դեսպանաժողովը ի վիճակի չեն ընդունելու անկողմնակալ որոշումներ և արագորեն վերջ տալու պատերազմին: Եվրոպան իրականում չահագրգռված է պատերազմող կողմերի թուլացումով:

Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը, հավատ չտածելով եվրոպական կառավարությունների թափած կոկորդիլոսի արցունքների նկատմամբ, գրում էր. «Եւրոպա չահ ունի Պալքանեան ազգերը սնանկութեան վիճակի հասցնելուն մէջ. Եւրոպա չահ ունի Տաճկաստանը իրեն գերի ընելուն մէջ: Որքան աւելի պարտքերու մէջ մխրճուինք՝ թէ՛ մենք եւ թէ՛ մեր դրացիները, աւելի եղ կը քսենք Եւրոպացիներու հացին: Եւրոպացին կ'ուզէ ինչ արդիւնաւոր աղբիւր կայ Տաճկաստանի մէջ իր ձեռքը անցցնել, ճամբաներու, թիւնէլներու արտօնութիւններ կորզել մեզմէ, խաներ, պուրսեր, հրապարակներ առնել յաջող պայմաններով, եւ մեր վերջին ջիղերը կտրտել որ ապագային երբէք ի վիճակի չըլլանք ազատօրէն շարժելու: Եւրոպայի չահն է որ կը պահանջէ պատերազմին շարունակութիւնը, որովհետեւ քանի պատերազմը շարունակուի, մենք ալ, մեր դրացիներն ալ կը պարտաւորուինք խոշոր տոկոսներով ու տնաքանդ պայմաններով փոխառութեան դիմելու միշտ Եւրոպացւոց»[2]:

Իսկ ո՞րն է ելքը օսմանյան հայրենիքի համար, հարցնում էր

---

[1] ***«Ժամանակ»**, № 1280, 17 (30) նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Ժամանակ»**, № 1373, 19 փետրվարի (4 մարտի) 1913 թ.:*

թերթի խմբագրականի հեղինակը, և ինքն էլ պատասխանում. «Անհրաժեշտ է ուղղակի դիմել մեր թշնամիներին (բալկանյան դաշնակիցներին:- Հ. Ս.) և ամենահաջող պայմաններով խաղաղություն կնքել»[1]:

Հաշտության դեսպանաժողովում բանակցող կողմերի անզիջում վեճերը խափանում էին նրա առաջընթացը: Որպեսզի թուրքերը համաձայնություն տային ընդունելու հույն պատվիրակների լիազորությունները, պահանջվեց մի քանի նիստ: Դրա դիմաց նրանք պահանջեցին պարենավորել Ադրիանուպոլսի (Էդիրնեի) բնակչությանը: Բալկանյան պետությունների պատվիրակները հայտարարեցին, որ այդ հարցը դուրս է դեսպանաժողովի իրավասությունից, և որ այն արդեն կարգադրված է զինադադարի պայմանագրով: Այդ նոր կացության պայմաններում թուրքական պատվիրակությունն ընդունեց հունական կողմի լիազորությունները[2]:

Չնայած դրան՝ բանակցությունների ընթացքում թուրքական պատվիրակությունն ամեն կերպ ձգձգում էր հարցերի քննարկումը՝ նպատակ ունենալով առաջ բերել տարաձայնություններ զինակիցների միջև[3]: Թուրքերի այդ գործելակերպի դեմ բողոքում էին դաշնակիցների ներկայացուցիչները: Հույն պատվիրակության ղեկավար Վենիզելոսն անհանգստություն էր հայտնում, թե տասն օր է, ինչ իրենք գտնվում են Լոնդոնում՝ առանց մի քայլ առաջ անելու: Թուրքերի կողմից բանակցությունների ձգձգումը, ասում էր նա, նպատակ ունի ժամանակ շահել և առաջ բերել հակասություններ Բալկանյան միության մեջ[4]:

Դեկտեմբերի 24-ից դեսպանաժողովների նիստերը վերջապես դարձան արդյունավետ: Այդ նույն նիստում բալկանյան պետությունները թուրքական կողմին ներկայացրին հետևյալ միասնական ու ամբողջական պահանջները. 1) Բուլղարիայի և

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1373, 19 փետրվարի (4 մարտի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»** (Կ. Պոլիս), № 1083, 24 դեկտեմբերի 1912 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1313, 20 դեկտեմբերի 1912 թ.:

[4] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1083, 24 դեկտեմբերի 1912 թ.:

Թուրքիայի սահմանների ճշտում, 2) Էդիրնեից, Շքոթրայից, Հարավային Ալբանիայից և Էպիրոսից օսմանյան զորքերի արագ դուրսբերում և այդ տարածքների անձնատվություն, 3) Արշիպելագոսի կղզիների հանձնում, 4) Եվրոպայում և Ասիայում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների վիճակի բարելավում, 5) Զաթալջայի ամրությունների քանդում, 6) Բալկանյան երկրների հետ Թուրքիայի կողմից առևտրական նպաստավոր հարաբերությունների հաստատում, 7) Ռազմական տուգանքի վճարում Բալկանյան դաշինքի բոլոր չորս երկրներին[1]*:*

Քանի որ Լոնդոնի դեսպանաժողովը բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած կնճռոտ հարցերի քաղաքական լուծումներից բացի ստիպված էր շատ ժամանակ կորցնել՝ զբաղվելով նաև ֆինանսական և այլ կարգի հարակից հարցերով, ուստի նրա անդամ դեսպանները դիմեցին իրենց կառավարություններին՝ Փարիզում գումարելու մի ուրիշ՝ ***ֆինանսատնտեսական դեսպանաժողով*** *բալկանյան տագնապից գոյացած տնտեսական բոլոր խնդիրների քննարկման և լուծման համար: Տեղի ընտրությունը պատահական չէր. Փարիզն օսմանյան տնտեսական շահերի գլխավոր կենտրոնն էր, ֆրանսիական դրամագլուխը կայսրության բոլոր խնդիրներում ուներ գերակշիռ դեր: Ուստի այդ դեսպանաժողովը, չունենալով քաղաքական բնույթ, իր կազմում ընդգրկեց մեծ թվով առաջատար տնտեսագետների և ֆինանսիստների*[2]*:*

Եթե բանակցությունների ընթացքում դաշնակիցների առաջադրած յոթ պահանջներից Թուրքական կողմը վեցի չուրջ այնուամենայնիվ երկխոսության մեջ էր մտնում, ապա կտրականապես մերժում էր անգամ քննության առնել ***պատերազմական տուգանք*** *վճարելու պահանջը*[3]*:*

Բալկանյան զինակցության չորս երկրները Թուրքիային էին

---

[1] *Տե՛ս* ***«Առաջամարտ»****, № 1084, 25 դեկտեմբերի 1912 թ.:*

[2] ***«Հեռաձայն»****, № 11, 2 (15) փետրվարի 1913 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Բուլթանիա»****, № 9 (1055), 10 (23) նոյեմբերի 1912 թ.:*

ներկայացրել պատերազմում իրենց կատարած ծախսերը մարելու հարց: Նրանք պահանջում էին 800 միլիոն ֆրանկ պատերազմական տուգանք, որից 700 միլիոնը պահանջում էր Բուլղարիան[1]:

Եվրոպական մեծերը դեմ էին, որ Թուրքիան պատերազմական տուգանք վճարի դաշնակիցներին, և հատկապես Բուլղարիային[2]:

Թուրքիան, անշուշտ, ի վիճակի չէր իր կողմից որոշակի պայմաններ դնելու հակառակորդների առջև, քանի որ հոժար էր որևէ զիջումի՝ պայմանով, որ բուլղարները մայրաքաղաք չմտնեն, և գոնե այդ նվաստացումը չկրեն, ինչպես նաև երաշխավորվի գրավված տարածքների մուսուլման բնակչության անվտանգությունը: «Թուրքիոյ կողմէ իբրեւ գլխաւոր առաջարկ կը նկատուի գրաւուած գաւառներու միւսիլման հասարակութեան կրոնական իրաւասութեանց եւ ազատութեան պահպանումը...»[3],- գրում էր «Բութանիան»:

Քեամիլ փաշան գտնում էր, որ մեծ պետությունները պետք է դաշնակիցներին հետ պահեն պատերազմական տուգանք պահանջելու մտքից, այլապես իր երկրի ֆինանսատնտեսական դրությունը չի հաջողվի փրկել լիակատար քայքայումից[4]:

Եվրոպական մեծերի համար անցանկալի էր Թուրքիայի տնտեսության վերջնական փլուզումը, հետևապես դեմ էին դաշնակիցների պահանջած մեծածավալ ռազմատուգանքին: Այդ առթիվ Նիկոլ Աղբալյանը «Հորիզոնում» գրում էր. «Եվրոպան, որ մեծամեծ պահանջներ ունի Թուրքիայից, չէր կարող թույլ տալ, որ իր դիմացը իբրև պարտապան կանգներ պատերազմից ու հոռի վարչությունից քայքայված մի երկիր»[5]:

Թուրքիան, որը պատրաստ էր եվրոպական իր տիրույթներից դաշնակից երկրներին լայն տարածքներ զիջելու, բայց երբեք

---

[1] *Տե՛ս **«Բութանիա»**, № 1060, 25 նոյեմբերի 1912 թ.:*

[2] *Տե՛ս **«Ժամանակ»**, № 1287, 24 նոյեմբերի (7 դեկտեմբերի) 1912 թ.:*

[3] ***«Բութանիա»**, № 1056, 11 (24) նոյեմբերի 1912 թ.:*

[4] *Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 44, 26 փետրվարի 1913 թ.:*

[5] ***«Հորիզոն»**, № 56, 1913 թ.:*

չէր համաձայնի հաղթողներին վճարել պատերազմական տուգանք, քանի որ երկրում այլևս միջոցներ չկային. դատարկ էր պետական գանձարանը:

Պատերազմական տուգանք վճարելու դեմ հանդես էին գալիս կայսրության ազգային փոքրամասնությունները՝ հատկապես հույները, արաբներն ու հայերը: Հայկական մամուլը «չափը կորցրած» էր համարում բալկանյան դաշնակիցների պահանջները:

«ԲուԹանիա» թերթի հոդվածագիրը համոզված էր, որ «Թուրքիան չի կարող իր ատամների տակ դրված այդ դժվարին պատառը կուլ տալ, այլ ավելի պատվավոր կհամարի կռվել մինչև վերջին շունչը»[1]:

Կ. Պոլսի «Հեռաձայնը» գրում էր. «Մեծ անիրաւութիւն մը կ'ըլլայ պատերազմ[ական] տուգանք վճարելու բեռը Անատոլուի նահանգներուն վրայ բեռցնել:... [Թուրքիան] Եւրոպայի մէջ իր հողին մեծագոյն մասը պիտի տայ, ու շատ ծանր կ'ըլլայ, այդ կորուստէն զատ դրամական բեռ մըն ալ աւելցնել»[2]:

Նույն թերթը մի ուրիշ համարում նշում էր, թե Թուրքահայությունը հատկապես տագնապած է, որ մեջտեղ է հանվել պատերազմական տուգանքի հարցը, և եթե մեծ տերություններն ընդառաջ գնան Թուրքիայից տուգանք ստանալու Բուլղարիայի պահանջին, ապա անտանելի վիճակ կստեղծվի երկրի տնտեսության համար, մեծապես կծանրանա նաև քայքայման եզրին հայտնված հայության դրությունը: Թերթն անխղճություն էր համարում «կոտորակուած Թուրքիայէն ատանկ անիրաւ պահանջ մը ընել»[3]:

Վիճակը բարդանում էր հատկապես այն պատճառով, որ տերությունները, նրանց ֆինանսական հաստատությունները, այդ թվում նույնիսկ գերմանական խոշոր բանկերը հայտարարում էին, որ խուսափում են պատերազմը չարունակելու համար

---

[1] Տե՛ս **«ԲուԹանիա»**, № 10 (1056), 11 (24) նոյեմբերի 1912 թ.:

[2] **«Հեռաձայն»** № 8, 30 հունվարի (12 փետրվարի) 1913 թ.:

[3] **«Հեռաձայն»** № 24, 15 (28) փետրվարի 1913 թ.:

Թուրքիային ֆինանսական օգնություն ցույց տալուց[1]:

Պատերազմական տուգանք վճարելու բալկանյան դաշնակիցների պահանջը հունից հանել էր Թուրքական կողմին: Քեամիլ փաշան հայտարարեց, թե զինադադար կնքելուց ի վեր իր կառավարությունը կարողացել է վերագտնել իրեն, կարգի է բերել զինուժը, և «եթե մեր թշնամիներն ուզում են հաշտություն կնքել, չենք ենթարկվի մեզ ստորացնող որևէ ճնշման»[2]:

Օսմանյան պատգամավորական ժողովի նախագահ Խալիլ բեյի «Թան» թերթին արած հայտարարությունը նույնպես միանգամայն համապատասխան էր այն իրավիճակին, որ Թուրքիայի համար ստեղծվել էր 1912 թ. վերջավորությանը: «Էդիրնեն չենք ուզում տալ և չենք կարող տալ: Նմանապես չենք կարող տալ Փոքր Ասիայի եզերքի կղզիները,- ասել էր նա:- Եթե Եվրոպան կպնդի, որ Ասիա քաշվենք, այդ դեպքում թող մեզ տա այնտեղ ապրելու միջոցներ: Ֆրանսիայում մեզ պարսավում են, թե նետվել ենք Գերմանիայի գիրկը: Իրա՛վ է, որ Գերմանիան իր համակրանքը և դրամը չի զլացել մեզ և դեռ Աբդուլ Համիդի ժամանակներից մեր բանակի մարզումը կատարում են գերմանացի զինվորական հրահանգիչները: Բայց նոր Թուրքիան նաև Ֆրանսիայի բարեկամն է: Ես հուսահատ չեմ: Մենք պատերազմում 200.000 զինվոր կորցրինք, բայց տակավին ունենք 300.000 զինվոր լավ վիճակում: Ընդունում ենք պարտությունը, բայց ոչ երբեք նվաստացուցիչ հաշտությունը: Եվրոպան որևէ շահ չունի նպաստելու Թուրքիայի ոչնչացմանը»[3]:

"Berliner Tagesblat" թերթի թղթակիցը տեսակցություն էր ունեցել Թուրքիայի արտգործնախարար Գ. Նորատունկյանի հետ: Նախարարն ասել էր, որ եթե հաշտության բանակցությունները ձախողվեն, ապա Թուրքիան կատարելապես պատրաստ է շարունակելու պատերազմը, որովհետև Անատոլիայից նորանոր գնդեր են հասնում Պոլիս, և երկիրը պատրաստ է նոր փոր-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 13, 17 հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1072, 28 նոյեմբերի (10 դեկտեմբերի) 1912 թ.:

[3] «Թան»-ում Խալիլ բեյի հայտարարության թարգմանությունը տե՛ս **«Ժամանակ»**, № 1339, 17 (30) հունվարի 1913 թ.:

ձությունների: Թուրքիային պիտի մնան Էդիրնեն, Թրակիան, Սալոնիկը: Թուրքիան դեռ ապագա ունի, շարունակել էր Նորատունկյանը, Օսմանյան պետությունը լեցուն է անսպառ աղբյուրներով և օգնության միջոցներով: Ընդհակառակը, բալկանյան պետությունների ուժերը գրեթե մոտ են սպառվելուն, իսկ Թուրքիան տնտեսական անհաչիվ աղբյուրներ ունի իր տրամադրության տակ[1]:

Նույն մտքերը Գ. Նորատունկյանը զարգացրել էր «Թան» թերթում լույս տեսած հարցազրույցում՝ ասելով, որ իր համար Թուրքիայի վիճակը բնավ հուսահատական չէ, և որ Բ. Դուռը հարկադրված չէ կատարելու բալկանյան դաշնակիցների պահանջները և պատրաստ է «վերսկսելու թշնամությունները»[2]:

Ի պատասխան թուրքական կողմի դիրքերի կոչտացման՝ դեսպանաժողովի դեկտեմբերի 21-ի նիստում բալկանյան պատվիրակները համատեղ վերջնագիր ներկայացրին թուրքական պատվիրակությանը՝ առաջադրելով հետևյալ պահանջները. 24 ժամում պարպել Յանինան, Շքոթրան (Սկյուտարի), Էդիրնեն (Ադրիանուպոլիս) և Զաթալջայի գիծը, հակառակ դեպքում պատերազմական գործողությունները պետք է վերսկսվեն, և դաշնակիցները պետք է մտնեն Կոստանդնուպոլիս: Դա նշանակում էր, որ Թուրքիան ամբողջովին պետք է հրաժարվեր իր եվրոպական մասից՝ պահելով միայն Պոլիսը՝ փոքրիկ հողաբաժնով: Դաշնակիցները պահանջում էին պատասխանել մինչև դեկտեմբերի 25-ը՝ չեչտելով, որ ինչ էլ լինեն թուրքերի պատասխանառաջարկները, եթե թուրք կառավարությունը գոհացում չտա զինակիցների ներկայացրած վերջնագրի բոլոր պահանջներին, նրանք անմիջապես պիտի խզեն բանակցությունները և չորս օր անց վերսկսեն պատերազմական գործողությունները[3]: Դեկ-

---

[1] Սույն հարցազրույցի հայերեն թարգմանությունը տե՛ս **«Առաջամարտ»**, № 1069, 24 նոյեմբերի (6 դեկտեմբերի) 1912 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1312, 19 դեկտեմբերի 1912 թ. (1 հունվարի 1913 թ.):

[3] Տե՛ս **«Բութանիա»**, № 1095, 25 դեկտեմբերի 1912 թ. (7 հունվարի 1913 թ.):

տեմբերի 22-ին Բ. Դուռը՝ նախարարական խորհրդի նիստից հետո իր հերթին հեռագիր հղեց Լոնդոնում Թուրքաց պատվիրակությանը, որով հանձնարարում էր անմիջապես խզել բանակցությունները, եթե բալկանյան զինակիցները չարունակեն պնդել վերջնագրով հայտնած իրենց պայմանները: Նախարարների խորհուրդը պատերազմի վերսկսումը նկատել էր անխուսափելի, եթե եվրոպական մեծերի անակնկալ միջամտությունը չփոխեր իրերի դրությունը[1]:

Պետերբուրգի թերթերը հաղորդում էին, թե ռուսաց արտաքին գործերի նախարար Սազոնովը դրանից անմիջապես հետո Ռուսաստանում Թուրքիայի դեսպանին հայտարարել է, որ եթե իր երկիրը չհամաձայնի հաշտություն կնքել, այն ժամանակ Ռուսաստանն իր նավատորմը կչարժի դեպի Բոսֆոր, միաժամանակ կգրավի Հայաստանը[2]:

Զինակից պատվիրակների կողմից Բ. Դռանը ներկայացրած վերջնագիրը ի վերջո քննության առնվեց Թուրքաց նախարարների խորհրդի 1912 թ. դեկտեմբերի 23-ի նիստում, որը տեղի ունեցավ Քեամիլ փաշայի Սարաջհանե ապարանքում: Հիվանդության պատճառով նիստին բացակայում էր վարչապետը, բայց ներկա էին բոլոր նախարարները: Առաջինը հանդես եկավ արտաքին գործերի նախարար Գաբրիել էֆ. Նորատունկյանը: Նա ներկաներին ներկայացրեց օսմանյան պատվիրակությունից ստացված հեռագրերը, ապա արտահայտեց իր տեսակետը հետագա անելիքների մասին: Ահա նրա ասածի համառոտագրությունը. օսմանյան կառավարությունը հետևում է խաղաղասեր ուղղության, իսկ անձամբ ինքը պատերազմի վերսկսումը և նոր արյունահեղության համար դուռ բացելը համարում է հանցանք: Բայց եթե բալկանյան զինակիցները չընդունեն խաղաղություն հաստատելու Թուրքիայի պայմանները և վերսկսեն պատերազմական գործողությունները, այդ դեպքում իրենք

---

[1] Տե՛ս **«Ազդակ»** (Կ. Պոլիս), № 1094, 23 դեկտեմբերի 1912 թ. (5 հունվարի 1913 թ.):

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 9, 13 հունվարի 1913 թ.:

ստիպված կլինեն չարունակելու կռիվը, որի հետևանքով երկու կողմերից կկործանվեն հազարավոր նոր երիտասարդ կյանքեր[1]:

Նախարարների խորհրդի նիստում մտքերի լայն փոխանակություն չծավալվեց: Քվեարկության դրվեց արտգործնախարարի՝ ավելի մեղմ ձևակերպումներ պարունակող առաջարկությունը, որն ընդունվեց միաձայն: Նիստից անմիջապես հետո Գաբրիել էֆ. Նորատունկյանը հենց տեղում պատրաստեց Լոնդոնի օսմանյան պատվիրակներին ուղղված հրահանգ, ուր ցուցումներ էր տրված, թե ինչ պետք է անել, եթե ստիպված լինեն խզել հարաբերությունները: Միաժամանակ ասված էր, որ հարաբերությունների խզումով պատերազմն անմիջապես չի վերսկսվի, այլ միայն այն ժամանակ, երբ Բ. Դուռը ստանա մեծ պետությունների հավանությունը: Եվ որովհետև անկարելի բան էր, որ այդ պետությունները հավանություն տային պատերազմը չարունակելուն, հետևաբար հենց նրանք էլ վեճը լուծելու մի ձև պետք է գտնեին[2]:

Նախարարների խորհրդի դեկտեմբերի 23-ի նիստում Գ. Նորատունկյանի ելույթին և նրա առաջարկության մեջ տեղ գտած հավասարակշռված ու խոհեմ ձևակերպումների փաստին դրական անդրադարձ էր եղել եվրոպական մամուլում: Փարիզյան «Իլյուսթրասիոն» շաբաթաթերթը լույս էր ընծայել «Մաթեն» թերթի խմբագրապետ Ստեփան Լոզանի «Թուրքիայի սնարի մոտ» գրքի մասին գրախոսական, որում ճշգրիտ ուրվագծված էին Թուրքիայի բազմահմուտ նախարար Գաբրիել Նորատունկյանի մեծ ծառայությունը թուրքական տերությանը: Գրախոսականում աչքաթող չէր առնված նաև օսմանյան կայսրությանն անուրանալի մեծ ծառայություններ մատուցած թուրքահայությունը, որի արժանի զավակն էր Նորատունկյանը[3]:

Հակառակ այդ և նման գնահատականների՝ իթթիհադական

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1317, 24 դեկտեմբերի 1912 թ. (6 հունվարի 1913 թ.):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1338, 16 (29) հունվարի 1913 թ.:

«Թասվիրը էֆքյար» թերթը 1912 թ. դեկտեմբերի 31-ի համարում Ռուսաստանի կողմից Բուլղարիային ենթադրյալ աջակցություն ցույց տված լինելու կապակցությամբ շատ ծանր ամբաստանություններ էր ուղղում Նորատունկյանի հասցեին: Թերթը գրում էր. «Եթե մենք կառավարության տեղը լինեինք, մի քիչ կմտածեինք, թե ռուսական չոգենավով փոխադրված գնդակները հայրենիքի հարազատ զինվորների կրծքին պիտի ուղղվեն այն ժամանակ, երբ արտաքին գործոց նախարար Նորատունկյան էֆենդին ամեն օր տեսակցություն է ունենում ռուս դեսպանի հետ: Մի՞թե Նորատունկյան էֆենդուն պաշտոն են տվել, որ նա խանգարի մեր արտաքին գործերը, աղարտի երկրի փառքն ու արժանապատվությունը, առիթը ներկայանալիս հրապարակ բերի Արևելյան Անատոլուի խնդիրը: Թող մի քիչ էլ մտածի իսլամ ազգի իրավունքների մասին»[1]:

«Թասվիրը էֆքյարի» հոդվածագրին առարկում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը: Նրանք համոզված ասում էին, որ Գաբրիել Նորատունկյանը Թուրքիայի պետական պաշտոնեության շրջանակում միակ մարդն է, որ գիտի, թե ինչ է դիվանագիտությունը, և կարող է Թուրքիան արտաքին աշխարհում ներկայացնել արժանավորապես: Նրա կազմած պաշտոնագրերը պարզապես անթերի էին: Նրան գիտեին որպես արտակարգ սուր հիշողությամբ և հարուստ գիտելիքներով օժտված մարդու: Նա կենդանի հանրագիտարան էր բոլոր այն տնտեսական-քաղաքական վավերագիր-դաշնագրերի, որ Թուրքիան կնքել էր ուրիշ պետությունների հետ: Նորատունկյանը հնարիմացություն և ճարտարություն ուներ՝ միջազգային իրավունքի վրա հենվելով պաշտպանել իր ստանձնած դատերը: Դիվանագիտական նրա անժխտելի կարողություններն էին, որ թուրք պաշտոնեությանը հարկադրում էին պատկառանք տածել նրա նկատմամբ՝ առանց նրան հայ լինելու համար սիրելու[2]:

---

[1] «Թասվիրը էֆքյար» թերթի սույն հոդվածը թարգմանաբար արտատպված է «Մշակ» թերթի 1913 թ. հունվարի 30-ի համարում (№ 22):

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 22, 30 հունվարի 1913 թ.:

Այն բանից հետո, երբ Լոնդոնում ստացվեց Բ. Դոան պատասխանը, դեկտեմբերի 25-ին հաշտության ժողովը դադարեցրեց իր նիստերը[1]: Դա ոչ այլ ինչ էր, քան բանակցությունների խզում, որին ժամ առ ժամ բոլորը սպասում էին դեկտեմբերի 23-ից ի վեր: Իբրև հույսի վերջին խարիսխ տակավին մնում էր եվրոպական պետությունների միջամտության հավանականությունը:

Բայց դեսպանաժողովում ընթացող վեճերը պառակտում էին առաջ բերում մեծ պետությունների մոտեցումներում և դրանց չահերը նետում դիվանագիտական հակընդդեմ ճակատներ: Թրքաբալկանյան վեճում չկար հայացքների ներդաշնակություն, չկար փոխըմբռնում այդ պետությունների ղեկավարների հայացքներում, հետևապես չկար նաև միակամ ազդեցիկ միջամտության ցանկություն՝ փոթորկվող ալիքների մեջ տարուբերվող պատերազմանավի ղեկը ուղղելու դեպի խաղաղ հանգրվան:

Այդ անորոշ սպասողականության մեջ հուսատու նշան եղավ թերևս անգլիացի դիվանագետների առաջարկը՝ էդիրնեն վերածել չեզոք գոտու, այն դնել եվրոպական հակակշռի ու հսկողության տակ՝ դրանով իսկ հաղթահարելով բուլղարների և օսմանների անհամաձայնությունը գոնե այդ մի հարցում: Բայց այդ առաջարկն արձագանք չունեցավ ո՛չ բուլղարական և ո՛չ էլ թուրքական կառավարական շրջաններում:

Այսպես թե այնպես, համաձայն զինադադարի կանխավ ընդունած պայմանի, պատերազմը պետք է վերսկսվեր բանակցությունների խզումից չորս օր հետո:

Ուրեմն առաջիկա մի քանի օրերին Զաթալջայի չուրջ բանակած հարյուրհազարավոր զինվորների առջև ուրվագծվում էր նորից արյան ճապաղիքների մեջ նետվելու, կյանքի ու մահվան արանքում դեգերելու պատկերը: Վրա էին հասնում նոր արյունամած ժամանակներ հինգ երկրների բազմամիլիոն ժողո-

---

[1] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 1096, 26 դեկտեմբերի 1912 թ. (8 հունվարի 1913 թ.):

վուրդների համար, որոնք չարունակելու էին կրել պատերազմի նոր, ավելի ծանր հետևանքները:

Ահա այդքան խեղճ, այդքան անզոր էին մարդկային բանականությունը, երկրների դիվանագիտությունը:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի նախօրեին Լոնդոնի կոնֆերանսը բացահայտորեն տվեց մեծ տերությունների վերջնական բաժանումը երկու մեծ թշնամի ճամբարների, ավելի խորացրեց հակասությունները Եոյակ դաշինքի ու Եոյակ համաձայնության միջև և ցույց տվեց, որ աշխարհի իմպերիալիստական գիշատիչների միջև վճռական մենամարտը առաջիկա մեկ-երկու տարիներին դառնալու է անխուսափելի:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ՝ ՄՈՏ

Լոնդոնի հաշտության ժողովը չէր կարողանում համաձայնության բերել պատերազմող կողմերին:

Բալկանյան ռազմաճակատներում Թուրքիայի կրած պարտությունները, Լոնդոնի կոնֆերանսի անհաջող ընթացքը և վարչապետ Ֆյամիլ փաշայի կառավարության ձախողումներն ընդդիմության մեջ գտնվող երիտթուրքերին տալիս էին իշխանությունը զավթելու մեծ հնարավորություններ:

Թուրքական երկու հիմնական կուսակցությունների՝ իշխանության վրա գտնվող Իթթիլաֆի և ընդդիմադիր Իթթիհադի միջև ծայրաստիճան սրված հակասություններն ամեն րոպե մի նոր առիթի դեպքում կարող էին հանգուցալուծվել: Եվ այդ առիթը ներկայացավ: Իթթիլաֆի կառավարությունը տերություններին խոստացել էր բուլղարներին հանձնել Ադրիանուպոլիսը՝ որպես խաղաղության գին: Դա համարելով հայրենիքի դավաճանություն՝ երիտթուրքերը սկսեցին նախապատրաստել պետական հեղաշրջում:

Դեկտեմբերի 16-ին Կ. Պոլսում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցի ընթացքում մեկը մյուսին հաջորդած երիտթուրք ճառախոսները գործող իշխանություններին մեղադրում

էին, թե նա հայրենիքն արդեն ծախել է անհավատներին: Նրանցից մեկը՝ մի մոլլա, բարձրաձայն աղաղակում էր, թե Աբդուլ Համիդին հաջորդած բոլոր կառավարությունները դավաճաններ են: Իսկ օրվա իշխանությունը, անկարող լինելով իր ուզած ուղղությունը տալու ժողովրդի ազգասիրական զգացմունքներին, ընկնում էր այս ու այն կողմ, որպեսզի ապացուցի, թե ինքը չի կամենում հաշտություն կնքել, այլ դա անում է ժողովրդի թելադրանքով:

Իրենց երկրում ծայր առած զանգվածային դժգոհությունների և սպառնալիքների ճնշման տակ Լոնդոնի հաշտության ժողովի թուրք պատվիրակները հայտարարեցին, թե հրաժարվում են մասնակցել դրա նիստերին, մինչև որ դաշնակիցները ցույց չտան զիջման նշաններ, հրաժարվեն Էդիրնեի և Էգեյան ծովի կղզիների նկատմամբ ունեցած հավակնություններից: Բայց դաշնակիցները մերժում էին տեղի տալ:

Հակառակ Բ. Դոան և օսմանյան պատվիրակների պնդումներին՝ Էդիրնեի հարցը դեսպանների համար արդեն լուծված իրողություն էր, որոնք միաձայնությամբ վճռել էին դրանք հանձնել Բուլղարիային՝ Էդվարդ Գրեյի թելադրության հիման վրա: Միակ դժվարությունն Օսմանյան կառավարության վրա ճնշում գործադրելն էր, որպեսզի նա արիություն ունենար ստորագրելու Էդիրնեի հանձնումը: Ուստի դրա համար ամեն միջոց պիտի գործադրվեր՝ մեղմությամբ թե սպառնալիքով, այն ընդունելի դարձնելու համար:

Ոչ պակաս կարևոր էր Էգեյան կղզիների խնդիրը, որի չուրջը դեսպանաժողովում սկսվել էր անհամաձայնության նշաններ երևալ: Անգլիան և Ֆրանսիան բացարձակապես համաձայն էին դրանք ամբողջովին հանձնել Հունաստանին: Նույն կարծիքին էր նաև Ավստրո-Հունգարիան[1]: Անհամաձայն էին Ռուսաստանը և Իտալիան:

1913 թ. հունվարի 5 (18)-ին, վերջապես համախոհության գալով, վեց մեծ տերությունները՝ Ավստրիան, Անգլիան, Ֆրան-

---

[1] **«Բութանիա»**, № 25, 4 (17) հունվարի 1913 թ.:

սիան, Ռուսաստանը, Գերմանիան և Իտալիան, Կ. Պոլսի իրենց դեսպանների միջոցով Բ. Դռանը պաշտոնապես ներկայացրին ծանուցագիր, որով արդեն վերջնականապես ընդունվում էր Բալկանյան դաշնակիցների հաղթանակների իրողությունը և գրավյալ տարածքները նրանց թողնելու անխուսափելիությունը:

Ծանուցագրում ասված էր, որ փափագելով պատերազմի վերսկսման առաջն առնել՝ տերություններն օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրում են այն ծանր պատասխանատվության վրա, որի առջև նա կանգնած է: Պատերազմական գործողությունների դադարեցումը և խաղաղության հաստատումը հրամայական անհրաժեշտություն են, որոնք բխում են ինչպես Բալկանյան դաշնակիցների, այնպես էլ Թուրքիայի շահերից: Պատերազմի վերսկսումը նոր տառապանքներ կբերի երկու կողմերին, ասված էր ծանուցագրում, ավելին՝ այն սպառնում է նաև օսմանյան մայրաքաղաքին, ինչպես նաև թշնամությունն աննախընթաց ծավալների կհասցնի կայսրության օսմանյան տարածքներում: Ուստի առողջ տրամաբանությունը թելադրում է ամեն կերպ արգելել արյունահեղության շարունակումը: Դրա դիմաց մեծ պետությունները խոստանում էին հաշտություն կնքելուց հետո նյութական ու բարոյական մեծ օգնություն ցույց տալ Թուրքիային՝ դարմանելու պատերազմի վնասները, ամրապնդելու իր դիրքերը Պոլսում և պետության ընդարձակ հողերի վրա, մի բան, որը բխում է և՛ Եվրոպայի, և՛ Թուրքիայի ընդհանուր շահերից: Իսկ այդ ամենը հնարավոր կլինի, եթե Ադրիանուպոլիսը հանձնվի բալկանյան դաշնակիցներին՝ նրանց թողնելով նաև Էգեյան ծովի կղզիների բախտի որոշումը: Դրա փոխարեն հիշյալ պետությունները պիտի ապահովեին Ադրիանուպոլսի իսլամների շահերը, այդ քաղաքի մզկիթների և սուրբ վայրերի նկատմամբ հարգանքը: Միաժամանակ նրանք այնպես պետք է աներին, որ Արշիպելագոսի կղզիներին իրենց տված լուծումը որևէ կերպ չվնասի Թուրքիայի ապահովությանը[1]:

---

[1] Տե՛ս **«Բուլթանիա»**, № 27 (1105), 6 (19) հունվարի 1913 թ.:

Եռյակ համաձայնության երկրների կառավարությունների համար նկատելի էր, որ նույնիսկ խաղաղություն պարտադրող վեց տերությունների կողմից Բ. Դոանը ներկայացված համաձայնագրի պայմանները կարող էին հեշտությամբ խախտվել նրա ավանդական բարեկամ Գերմանիայի բռնած տատանողական դիրքի պատճառով: Դա մեծ վտանգ էր Բալկաններում խաղաղությունը վերականգնելու ճանապարհին:

Եվրոպական հավասարակշռության առանցքը չարունակում էր մնալ Գերմանիայի հետ Անգլիայի քաղաքական հակամարտությունը, որի նկատմամբ իրենց շահերի աստիճանով դիրքավորված էին մայրցամաքի մյուս քաղաքական ուժերը:

Գերմանիայում առաջ էր եկել քաղաքագետների մի խումբ, որի ներկայացուցիչները (Մաքսիմիլյան Հարտ, կոմս ֆոն Շլիֆֆեն և ուրիշներ), որոնք գտնում էին, որ այժմ արդեն խախտված է եվրոպական հավասարակշռությունը, և դա ամենից առաջ՝ հենց ի վնաս Գերմանիայի: Որպես դրա ապացույց Հարտը մատնացույց էր անում երեք պատճառ, որոնք ամենից առաջ ուժեղացնում էին իր գլխավոր թշնամի Անգլիայի միջազգային դիրքերը: Այդ պատճառներն էին. 1) Եվրոպական Թուրքիայի ոչնչացումը, որը գերմանականության բնական դաշնակիցն էր, և նրանք միասին կարողանում էին զսպել սլավոնականության տարածումը, 2) Բրիտանական բոլոր գաղութների վճիռը՝ մասնակցելու մետրոպոլիայի լայնամասշտաբ սպառազինմանը, որը մեծապես պիտի հզորացնի նրա ռազմական կարողությունը և նպաստի Բրիտանական համաշխարհային կայսրության ստեղծմանը, 3) Սլավոնական տարրի իշխանության քաղաքական կազմակերպումն ու զորացումը Արևելյան Եվրոպայում՝ ընդդեմ գերմանական առաջխաղացմանը դեպի Արևելք[1]:

Հարտի կարծիքով, կազմակերպված ու ներդաշնակ սլավոնականությունը չատ չուտով գերմանականությանը պիտի մղի երկրորդական-երրորդական դիրքեր: Եվ եթե Գերմանիան հենց հիմա չդիմի բռնի միջամտության և չզսպի ծառացող սլավոնա-

---

[1] *Տե՛ս* ***«Բուլթանիա»****, № 28 (1106), 9 (22) հունվարի 1913 թ.:*

կանությունն վտանգը, ապա արդեն մոտ ապագայում հնարավորություն չի լինի փրկելու գերմանականության վտանգված դիրքերը: Պետք է հնարավորինս չուտ ջախջախել նրա ճանապարհին ընկած բոլոր մեծ արգելքները: Եվ որքան ուշ գա պատերազմը, այնքան կղզիացած պիտի մնա Գերմանիան, այնքան ավելի կասկածելի կդառնան գերմանականության հաղթանակի հնարավորությունները:

Դա պատերազմի անմիջական թելադրությունն էր:

Նույնքան վտանգավոր էին երկար ժամանակ գերմանական զինվորական ուժերի չտարի պետ եղած կոմս Շլիեֆենի հայացքները: Նա զգուշացնում էր Եվրոպայի գործերից Գերմանիային մեկուսացնելու վտանգից և իր կառավարությանը չտապեցնում էր թշնամիներին հարվածել օր առաջ, և դրա սկիզբը պետք է լինի զինադադարի խախտումը Բալկաններում:

Իթթիհադի կառավարությունը, այլ ելք չգտնելով, ի վերջո որոշել էր ընդունել մեծ տերությունների կառավարությունների ներկայացրած պայմանները, մանավանդ որ ռազմաճակատի կործանարար պարտություններին գումարվել էր ներքին տնտեսական ճգնաժամը:

1913 թ. հունվարի առաջին իսկ օրերից Կ. Պոլսի թերթերը ողբալի գույներով էին ներկայացնում Թուրքիայի ֆինանսական վիճակը: «Բութանիան» գրում էր, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ կառավարությունը նույնիսկ մտադրություն ունի երկու ամսով հետաձգել պաշտոնյաների ամսականների վճարումը՝ հույս ունենալով, որ ազդու միջոցներով կկարողանա դրամ հայթայթել[1]: Բայց այդ դրամը կարելի էր հայթայթել միայն Եվրոպայում և առաջին հերթին Ֆրանսիայում, որն իր գործընկեր պետությունների հետ Բ. Դոանն էր ներկայացրել խաղաղության գնալու պարտադրանքը:

Բայց խաղաղություն հաստատելու կառավարության տված համաձայնությունը պետք է հաստատվեր պառլամենտում, որտեղ պատգամավորների մի մեծ խումբ կտրականապես դեմ էր

---

[1] ***«Բութանիա»**, № 28 (1106), 9 (22) հունվարի 1913 թ.:*

արտահայտվում կառավարությանը: Ի վերջո պառլամենտը նույնպես շատ դժվարությամբ տվեց իր համաձայնությունը:

Կայսրության համար այդ բախտորոշ պահին սուլթանն ու կառավարությունը չէին ուզում բավարարվել դրանով, ուստի որոշեցին հրավիրել հասարակության բոլոր լայն շերտերը ներկայացնող գործիչների բազմամարդ մի խորհրդաժողով, որը պետք է վերջնական վճիռ տար հարցի լուծմանը: Խորհրդաժողովը ստացավ «Օսմանյան երևելիների ժողով» անվանումը:

Սուլթանի իրադեով Տոլմա-Բախչե կայսերական պալատի մեծ դահլիճում 1913 թ. հունվարի 9 (22)-ին կայացավ օսմանյան երևելիների ժողովը: Մասնակցում էին 90-ի չափ անձինք՝ մեծ մասամբ պառլամենտի պատգամավորներ, զինվորականներ և ուլեմներ: Բացի վարչապետից և կառավարության անդամներից՝ հրավիրյալների մեջ էին նախորդ վարչապետներ Մուխթար և Սաիդ փաշաները, Ռումելիի գաղաքերը, Շերիի ժողովի նախագահը, նախորդ ծովային նախարար Խուրշուդ փաշան, ընդհանուր շտաբի պետ Իզզեթ փաշան, վճռաբեկ դատարանի նախագահ Ալի Հայդար բեյը, ընդհանուր դատախազ Իսմայիլ էֆենդին, Պոլսի քաղաքապետ Ջեմիլ փաշան, ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաներ, կայսերական ընտանիքի անդամներ և այլք: Հայերից ներկա էին չորս հոգի՝ Արամ Երամյանը, Զարեհ Տիլպերը, Մանուկ Ազարյանը և, իհարկե, Գաբրիել Նորատունկյանը[1]:

Վարչապետ Քեամիլ փաշան սուլթանի ողջույնները հաղորդելուց հետո անդրադարձավ երկրի ներքին ու արտաքին կացությանը, պարզեց Բ. Դռան և Եվրոպայի հարաբերությունների վիճակը, հանգամանորեն կանգ առավ այն պայմանների վրա, որոնց համաձայն օսմանյան կառավարությունը հոժարակամ էր հաշտություն կնքելու բալկանյան պետությունների հետ:

Ապա հանդես եկավ ռազմական նախարար Նազըմ փաշան, որը ներկայացրեց պատերազմական անցքերը առաջին օրերից սկսած, օսմանյան բանակի մղած կռիվների արդյունքը և կրած

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 29 (1107), 10 (23) հունվարի 1913 թ.:

ձախողանքների պատճառները, այնուհետև անդրադարձ կատարեց բանակի ընդհանուր վիճակին զինադադար կնքելուց հետո[1]:

Վարչապետի հրավերով ամբիոն բարձրացավ արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյանը, որը հանգամանորեն պարզեց քաղաքական կացությունը դիվանագիտական ասպարեզում, բացահայտեց բովանդակությունն այն հիմնական ծանուցագրերի, որոնք պատերազմի սկզբից ի վեր փոխանակվել էին տերությունների ու բալկանյան զինակիցների, մյուս կողմից Բ. Դռան միջև՝ հատկապես ներկայացնելով մեծ պետությունների վերջին հավաքական ծանուցագրին կառավարության կողմից տված պատասխանը:

Երկրի ֆինանսական կացության մասին զեկուցումով հանդես եկավ նախարար Աբդուլռահման բեյը: Նա չեշտեց, որ երկրի ֆինանսական համակարգը լիակատար փլուզման եզրին է, որից հնարավոր ելքը բազմամիլիոն նոր վարկերի ստացումն է հատկապես Ֆրանսիայից:

Այնուհետև սկսվեց մտքերի լայն փոխանակում, իսկ դրսում հազարավոր մարդիկ սպասում էին, թե ինչ որոշում է ընդունելու օսմանյան երևելիների ժողովը: Գրեթե բոլոր ելույթ ունեցողները իրենց համերաշխությունը հայտնեցին կառավարության անդամների արտահայտած տեսակետներին, օսմանյան շահերին մեծապես նպաստավոր համարեցին հաշտության չուտափույթ կնքումը, մանավանդ ողջունեցին մեծ պետությունների վերջին հավաքական ծանուցագիրը, որով նրանք խոստանում էին տնտեսական մեծ օժանդակություն օսմանյան կառավարությանը: Բացի մի քանիսից, մյուս բոլոր ելույթ ունեցողները, այդ թվում նախկին վարչապետ Սայիդ փաշան, արտահայտվեցին հաշտությանն ի նպաստ: Միաժամանակ երախտագիտություն հայտնեցին եվրոպական մեծ պետություններին մինչ այդ Թուրքիային ցուցաբերած բազմաբնույթ օժանդակության համար՝ ակնկալելով, որ այն կլինի չարունակական:

---

[1] Տե՛ս **«Բութանիա»**, № 29 (1107), 10 (23) հունվարի 1913 թ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԽԱՂԱՂ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄ

Իսկ հայկական վաշտը III բրիգադի կազմում շարունակում էր մնալ Մարմարա ծովի ափին, ուր հասել էր դեկտեմբերի 15-ին և հանգիստ էր առնում հունաբնակ Պանադոս գյուղի շրջակայքում Ռոդոսթո քաղաքից 8 կիլոմետրի վրա:

Դեկտեմբերի 30-ին Պանադոսում բրիգադի հրամանատարության կողմից կատարվում է վաշտի զինվորների հաշվառում և նոր ցուցակագրում: Արդյունքում պարզվել էր, որ այնտեղ մնացել է 131 մարդ[1]: Պատերազմական գործողությունների սկզբին, ինչպես տեսանք վերը, Հայկական վաշտում կար 273 զինվոր: Դա նշանակում էր, որ վաշտի անդամներից սպանվել կամ վիրավորվել է 142-ը[2]:

Այս տողերը գրելիս կրկին վերհիշեցի չուչեցի մտավորականի խորհրդատվությունները բալկանյան դաժան պատերազմի մասին: «Հեռագրերը բալկանյան պատերազմի թատերաբեմից աղետալի լուրեր են բերում այս կամ այն դիրքում ընդհարման ժամանակ սպանվածների թվի մասին, որ երբեմն հասնում է 3 կամ 5 հազարի: Դիակները թաղելու ժամանակ չի լինում, ուստի շատ հաճախ դրանք նավթով այրում, ոչնչացնում են: Կգա ժամանակ, իհարկե, որ ինչպես Բորոդինոյի դաշտում, այդտեղ էլ նույնպես նրանց հիշատակին մի-մի կոթող կկանգնեցնեն՝ անմահացնելու համար քաջարի զինվորների հիշատակը: Բայց այս ամենն ինչո՞ւ համար,- շարունակում էր իր մտորումները Հովնանը:- Ինչո՞ւ է կոտորվում ժողովրդի դեռահաս սերունդը: Ինչո՞ւ համար են թավալգլոր լինում հազարավոր զինվորները պատերազմի դաշտում, ինչո՞ւ համար է հազարավոր մայրերի ու քույրերի արտասուքը, ինչ կլինի հազարավոր որբերի և այրիների վիճակը: Չէ՞ որ պատերազմից հետո սկսվելու է երկրորդ ներքին անտանելի պատերազմը՝ հառաչանքի, ախերի, տնքոցների, հեծկլտոցի պատերազմը: Որքան զինվորներ կմնան

---

[1] *Държавен военноисторически архив Велико Търново, ф. 437, оп. 1, е. 1, л. 53, 56, 58, е. 2, л. 7, 8, 8[г], 9, 74, 22[а], 24[г], 26, 28[г], 29.*

[2] ***Տե՛ս "Походъ"**, София, № 59/63, 21 ապրիլի 1941, էջ 8:*

կաղ, խեղանդամ, կույր, աշխատելու անընդունակ, աղքատության ճիրաններում տանջվելիս: Պատերազմը սարսափելի էր և յուր բոլոր կողմերով: Երկրագունդը ողբում է այդ սարսափելի պատերազմը, որովհետև երիտասարդ տարիքում ոչնչանում է մի ահագին սերունդ»[1]:



№ 199.

Списъкъ

на отличилитѣ-чудодейци
отъ II Ермешска рота
при XII Лозенградска дружина.

с. Панадосъ 11. Януари 1913.

ДЪРЖАВЕН ВОЕННОИСТОРИЧЕСКИ АРХИВ
ВЕЛИКО ТЪРНОВО
ВЯРНО С ОРИГИНАЛА
ф. 437 оп. 1 а. е. 2 л. 70
Директор Изготвил:

Հայկական վաշտի թվակազմի վերջին ցուցակը

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 606, թ. 1–2:

Իհարկե, կարելի է հասկանալ չուչեցի մտավորականի հոգու տվայտանքները, պատերազմի՝ որպես բռնության դեմ նրա պացիֆիստական ընդվզումը: Հիրավի, Պոնտոսում 22 օր բանակելուց հետո Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի III բրիգադի Հայկական վաշտը 1913 թ. հունվարի 6-ին հրաման է ստանում ծովափով շարունակել առաջխաղացումը: Առջևում Ռոդոսթո քաղաքն էր:

Առջևից ձիավարում էր բրիգադի հրամանատար Պրոտոգերովը՝ իր շտաբի անդամների հետ, կողքից՝ Անդրանիկը: Նրանց հետևում էր Հայկական վաշտը՝ 270 մարտիկներով:

Առավոտյան վաշտը ծածանվող դրոշներով մտնում է Ռոդոսթո, որի բնակչության չուրջ կեսը հայեր էին: Ամբողջ հայ գաղութը տեղեկացված էր և ծայրից ծայր լցվել էր փողոցները: Բոլորը գերագույն ցնծության մեջ էին:

Քրիստոսի ծննդյան օրն էր, և քաղաքի հայկական եկեղեցում պատարագ էր: Պրոտոգերովը, Անդրանիկը և վաշտը՝ Նժդեհի գլխավորությամբ, մտնում են եկեղեցի: Ժողովրդի հոծ բազմությունն այլևս չէր լսում պատարագիչ հայսրբին. նրանց ուշադրությունն ամբողջովին կենտրոնացած էր դեպի վաշտը: Ցնծություն էր, աղմուկ, բացականչություններ:

Որոշ ժամանակ անց վաշտը դուրս է գալիս տաճարից և բակում շարվում: Այստեղ բրիգադի հրամանատար Պրոտոգերովը դիմում է հայ զինվորներին հետևյալ խոսքերով. «Դո՛ւք, հայերդ, բոլորդ էլ հերոսներ եք և բոլորդ կռվեցիք առյուծների նման՝ Ուզուն-Համիդբերում և Բալկան-Թերեսիում: Այսօր... «Քաջության խաչեր» են հանձնվելու ձեզ: «Քաջության խաչը» տրվում է ամենախիզախներին: Թող այս խաչերը, որոնք պիտի ստանան ձեր ընկերները, իբրև պարծանք հանդիսանան ամբողջ վաշտի համար և թող աստված տա, որ այս վաշտը լինի ապագա հայկական բանակի հիմքը»[1]:

Բրիգադի հրամանատարի խոսքերին հետևում է երկարաշունչ «ուռռա՜»-ն: Նվագախումբը հնչեցնում էր «Շումի Մարի-

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 10:

53

II Ерменска рота

437
1
1

Списъкъ

на отъленцитѣ по формуляра, указанъ въ § 2 отъ заповѣдь по III бригада на македоно-одринското отъличение подъ № 2

с. Панаудосъ 30 Декемврии 1912 год. – 6 ч. вечерта

ДЪРЖАВЕН ВОЕННОИСТОРИЧЕСКИ АРХИВ
ВЕЛИКО ТЪРНОВО
ВЯРНО С ОРИГИНАЛА
ф. 437 оп. 1 а. е. 53
Директор ..... Изготвил: .....

1912 թ. դեկտեմբերի 30-ին Պանաղոս գյուղում Հայկական վաշտի կազմի հաշվառման ցուցակի առաջին էջը:

ցա» հիմնը, որի հնչյունների տակ սկսվում է «Քաջության խաչերի» հանձնումը:

Պրոտոգերովը «Քաջության խաչով» առաջինը «զարդարում» է Անդրանիկի կուրծքը: Մանկական երգչախումբը կատարում է հայ ազգային հերոսին նվիրված «Իբրև արծիվ սավառնո՜ւմ ես...» երգը: Մի սրտառուչ տրամադրություն էր տիրում հայերի հոգիներում, որոնք բուռն ծափահարություններով չնորհավորում են հայոց զորավարին: Ժողովրդի ցնծությունը սահման չուներ: Շատերն արտասվում էին: Բրիգադի հրամանատարը, անչափ հուզված, հավաքվածներին դիմում է այս խոսքերով. «Մի ժողովուրդ, որ այսպես գնահատում և հարգում է իր հերոսներին, երբե՛ք չի մեռնի: Այս ժողովրդի ազատությունը մոտ է, նրա ապագան՝ պայծառ: Կեցցե՜ Անդրանիկը»[1]: Նորից մանկական երգչախումբը հնչեցնում է «Իբրև արծիվ սավառնում ես...» երգը, նորից ծափահարություններ, նորից երկարաչունչ «ուռռա՜...»:

Անդրանիկի անունն իսկ բավական էր թրթռացնելու հայկական հոգու ամենազգայուն լարերը: Բոլորը երջանիկ էին, որ իրենց կողքին է առասպելական հերոսը:

Նվագախմբի հնչյունների տակ պարգևատրվում են վաշտի առավել հերոսացած կամավորները: Պարգևատրվածներին չնորհավորում են նրանց մարտական ընկերները: Պարգևատրման արարողությունը վերջանալուց հետո Ռոդոսթոյի կառավարիչ դոկտ. Իվան Դմիտրովն իր մոտ ճաշկերույթի է հրավիրում Պրոտոգերովին, Անդրանիկին, Գարեգինին և ավագ աշխարհազորական Ղուկասին: Կառավարիչը հակիրճ ելույթ է ունենում՝ ասելով. «Եթե փողոցում հանդիպեք մի հայի, դուք նրան անմիջապես կճանաչեք. նրա աչքերում հանգած է ուրախության կրակը, իսկ դեմքին դրոշմված է անհուն վշտի կնիքը: Իսկ երբ խոսում է, նրա ձայնի մեջ զգացվում է ազատության ծարավը»: Եվ դոկտ. Դմիտրովը բոլորի համար անսպասելի հայերեն արտասանում է «Արաքսի արտասուքը» բանաստեղ-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 10:*

ծությունը, ապա ասում, որ Արաքս գետից լսվող աղմուկը հայ ժողովրդի հեկեկանքներն են, որ գետի ջրերն իրենց հետ բերում են, և որոնք կարծես վերջ չունեն: Բայց դա թվացյալ է, ասում է նա: Կգա օրը, երբ Բուլղարիայի մեծ բարեկամ ժողովուրդը նույնպես ձեռք կբերի իր փայփայած ազատությունը[1]:

Իսկ դրսում հարյուրավոր հայեր շրջապատել էին վաչտի մարտիկներին, և ամեն մեկն ուզում էր իր տուն հյուր տանել գոնե նրանցից մեկին: Փոթորկալից խանդավառ պահ էր: Մարդիկ պարզապես հափշտակում էին հայ կամավոր զինվորներին:

Մինչև ուշ գիշեր Ռոդոսթոյի հայերի տներում հայ զինվորները բերկրանք ու հիացմունք էին վայելում: Նրանց սիրում, փայփայում էին՝ չիմանալով է՛լ ինչպես արտահայտել իրենց փոթորկվող զգացմունքները:

Դրսում մինչև ուշ գիշեր շարունակվում էր Ռոդոսթոյի հայերի հոծ բազմության խրախճանքը՝ պարերը, երգերը, արտասանությունները: Արխիվային փաստաթղթում կարդում ենք. «Կատարյալ կռիվ էր, միմյանց ձեռքից խլում էին, վիճում, տաքանում: Ամենքն էլ ուզում էին այդ օրն իրենց տանը մի թանկագին հյուր ունենալ»[2]:

Մյուս օրը՝ վաղ առավոտյան, վաչտը կազմ ու պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Ռոդոսթոյի հայերը եկել էին ճանապարհելու Հայկական վաչտի ավագ հրամանատար, ազգային հերոս Անդրանիկին, վաչտի հրամանատար Գարեգինին և հերոս զինվորներին:

Հնչում է հրամանատար Գարեգինի ձայնը՝ «առա՜ջ, ... մա՛րշ»

Վաչտը քայլում է առաջ:

1912 թ. դեկտեմբերի 16-ին Հայկական վաչտը հրաման ստացավ պաշտպանել Մարմարա ծովի ափերի իրեն հատկացված հատվածը: Այստեղ մնալով մինչև 1913 թ. մարտի 22-ը՝ վաչտը միաժամանակ կատարում էր պարեկային ծառայություն:

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 11:

[2] ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 21, թ. 3:

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Երիտթուրքերի ղեկավարությունը քնած չէր: Օսմանյան երևելիների ժողովի ավարտին հաջորդած օրը՝ 1913 թ. հունվարի 10-ին, մոտ 200 հոգուց բաղկացած մի զինված խումբ Էնվեր բեյի և Թալեաթ փաշայի գլխավորությամբ շրջապատում է Բ. Դռան շենքը և առանց ժամանակ կորցնելու գրոհում: Էնվերն իր զինակիցներով խուժում է այն սրահը, որտեղ նախարարների խորհրդի հերթական նիստում քննարկվում էր վեց տերությունների հավաքական ծանուցագրին տրվելիք պատասխանի տեքստը, որը չափավոր տոնով կազմել էր արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը: Հեղաշրջման ընթացքում սպանվում է ռազմական նախարար Նազըմ փաշան, ձերբակալվում են վարչապետ Քեամիլ փաշան և կառավարության անդամները: Էնվեր և Թալեաթ փաշաների ձեռքն է անցնում Գաբրիել Նորատունկյանի գրած պատասխանի տեքստը:

Կազմվում է իթթիհադական կառավարություն՝ նախկին ռազմական նախարար Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորությամբ, ինչպես նաև 20 հոգուց բաղկացած Ազգային պաշտպանության կոմիտե:

Օրինական կառավարության բռնի տապալումից հետո նրա անդամները ձերբակալվում են կամ փախչում տարբեր ուղղություններով:

Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռապետությունը նոր կորովով ձեռնամուխ եղավ երկիրն իր «թշնամիներից մաքրելու» գործին: Շուրջ 1300 զորավարներ և սպաներ պաշտոնաթող եղան: Վարչական բոլոր պաշտոնները, նույնիսկ քիչ կարևորները, վստահվեցին միայն երիտթուրքերին: Ենթարկվելով անգութ ճնշումների՝ ընդդիմադիր նշանավոր գործիչների մեծ մասը ստիպված եղավ անցնել արտասահման և հաստատվել Փարիզում, Աթենքում, Սալոնիկում, Կահիրեում և այլուր[1]:

---

[55] *Տե՛ս* ***Անտրէ Մանտէլսթամ****, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս. Երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, թարգմ. Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 88:*

Իթթիլաֆի կառավարության անակնկալ անկման և իշխանությունը երիտթուրքերի կողմից հափշտակելու մասին Կ. Պոլսից ստացված տեղեկությունները ծանր տպավորություն էին թողել Եվրոպայի և Ռուսաստանի ֆինանսական ու քաղաքական շրջաններում: Լոնդոնի բորսայում գներն անմիջապես ընկել էին: Մամուլը միաբերան դատապարտում էր երիտթուրքերի հեղաշրջումը: «Թայմսը» գրում էր. «Երիտասարդ թուրքերը սխալվում են՝ հույսը դնելով մեծ տերությունների անհամաձայնությունների վրա: Թուրք ժողովուրդը շուտով կտեսնի, որ միակ ճիշտ ուղին Քեամիլ փաշայի ընտրածն էր: «Դեյլի Տելեգրաֆը», «Դեյլի Նյուսը», «Դեյլի Էքսպրեսը» և ուրիշ թերթեր մատնանշում էին, որ Թուրքիան ոտք է դնում վտանգավոր ուղու վրա»[1]:

Իտալական «Պոպոլո-Ռոմանո» թերթը գրում էր. «Եթե ճիշտ են [մեր] ռազմական և ֆինանսական նախարարների հաղորդած տեղեկությունները թուրքական զորքի և երկրի ֆինանսական ողբալի վիճակի մասին, ապա, ուրեմն, անկասկած է, որ երիտասարդ թուրքերի նոր հեղաշրջումը կարող է վերջանալ թուրքական պետության ոչնչացմամբ ոչ միայն նրա եվրոպական մասում»[2]:

Հեղաշրջումը միանգամայն անսպասելի էր Լոնդոնի դեսպանաժողովի մասնակիցների համար, որոնք, սակայն, համոզված էին, որ եթե կրկին վերսկսվեն պատերազմական գործողությունները, ապա իրենց երկրները համախորհուրդ կխափանեն պատերազմը:

Իշխանությունը զավթելով՝ երիտթուրք պարագլուխներն անմիջապես հայտարարեցին, որ մերժում են Լոնդոնյան բանակցություններում Բալկանյան երկրների կողմից ներկայացրած տարածքային բոլոր պահանջները: Միաժամանակ, հեղաշրջումն արդարացնելու համար երիտթուրք պարագլուխները երկրով մեկ սկսեցին ներկայացնել իրենց երկու գլխավոր նպատակները. 1) Էդիրնեն և Էգեյան կղզիները երբեք չզիջել բալկանյան

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 8, 13 հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

թշնամիներին, 2) չարունակել պատերազմը նրանց դեմ:

Ստեղծված հանգամանքներում, երբ թուրքերը ծայրահեղորեն ընկճված էին իրենց բանակի գլխին տեղացած անօրինակ հարվածներից և կարոտ էին մի խրախուսական կազդուրիչ խոսքի՝ իթթիհադականների մարտակոչը ոգևորություն էր առաջ բերում թուրքերի, քրդերի, չերքեզների և ընդհանրապես կայսրության մահմեդականների մեջ:

Հեղաշրջումից անմիջապես հետո երիտթուրքերը զանգվածների շրջանում լայն քարոզչություն ծավալեցին ցույց տալու համար, թե 1908 թվականին իշխանության գալուց հետո ընկած կարճ ժամանակում իրենք ինչպիսի հսկայական աշխատանք են տարել երկիրն աբդուլհամիդյան ռեժիմի ստեղծած ճահճից դուրս բերելու համար: Թվարկելով իրենց կատարած գործերը՝ նրանք հատկապես մատնացույց էին անում բանակում կատարած բարեփոխումները, աշխատավարձերի կանոնավոր վճարումը զինվորականությանը, սպայական կազմի և քաղաքացիական պաշտոնյաների շրջանում զտումը, կառավարական շատ բաժանմունքներում նոր կարգերի ներմուծումը, ճանապարհային հաղորդակցության բարելավումը, պետության եկամուտների աճը և այլն:

Երիտթուրքերը միաժամանակ ցույց էին տալիս, թե իթթիլաֆականների իշխանության գալուց հետո ինչպիսի ծանր կորուստներ են կրել երկիրը և հատկապես բանակը: Նրանք չեշտադրում էին, որ զինվորական կարգապահությունն ընկել է աներևակայելի չափերով, զորքի մեջ խարխլված է իշխանության հեղինակությունը, զինվորը չի վստահում իր հրամանատարին, իսկ դա նշանակում է, որ երկիրը կորած է: Հենց զինվորական կարգապահության անկումն է ռազմաճակատում կրած պարտությունների գլխավոր պատճառը[1]:

Շուքրի փաշան կառավարությունից հրաման ստացավ բնում խեղդել Ադրիանուպոլսի բնակչության, հատկապես քաղաքի ոչ թուրք բնակիչների ամենափոքր իսկ դժգոհությունն ու

---

[1] *Տե՛ս* ***«Հորիզոն»****, № 11, 16 հունվարի 1913 թ.:*

բողոքը և նրանց պատրաստել դիմագրավելու նոր փորձություն-ների:

Ադրիանուպոլսի քրիստոնյա բնակչության կողմից լիազոր-ված քաղաքի հույն մետրոպոլիտը, հայոց առաջնորդը և երկու անվանի քաղաքացիներ (մեկը հայ Լևոն Ֆունդուկչյանը, մյուսը՝ հույն) ներկայացան բերդապետ Շուքրի փաշային: Նկարագրե-լով սովից ու հիվանդություններից կոտորվող իրենց ազգակից-ների անել վիճակը՝ նրանք խնդրեցին սննդամթերքով ապահո-վել կամ իրավունք տալ դուրս գալու քաղաքից: Շուքրի փաշայի պատասխանը եղավ կտրուկ. նա հրամայեց կախել պատվիրակ-ներին: Երկու եպիսկոպոսները և երկու անվանի քաղաքացիներն անմիջապես կախաղան հանվեցին[1]:

Երիտթուրքական հեղաշրջումը ողջունած թուրքերը մտա-ծում էին, որ Իթթիհադի կոմիտեի կազմած կառավարության գլխավորությամբ օսմանյան բանակը ռազմաճակատում ան-պայման հաղթանակներ կտանի, որը թույլ կտա արմատական բեկում առաջ բերել պատերազմում և նպաստավոր հաշտու-թյուն կնքել: Իսկ թուրքերի այն շերտերը, որոնք ընկճված էին իրենց զորքերի ջախջախիչ պարտություններից, չէին հավա-տում երիտթուրք պարագլուխների արկածախնդրական ձեռ-նարկի հաջողությանը, ուստի հուսադրող խոսքի կարիք էին զգում: Ահա թե ինչու երիտթուրքերն ամենուրեք հնչեցնում էին հայրենասիրական մարտակոչեր՝ նրանց մղելով դեպի կռիվ:

Անցաղ էր արդյոք փոթորիկը՝ դժվար էր մարգարեանալ, քանզի դրությունն անորոշ էր: Թուրքական զորքը Զաթալջայի ամրություններում էր, իսկ բուլղարական զորքը՝ նրա դիմաց: Զինադադար էր, բայց երկու կողմերն էլ ժողովում էին ուժերը. հին զորքերի շարքերը համալրվում էին նորերով: Երկու կողմերն էլ տենդորեն շարունակում էին պատրաստություններ տեսնել:

Անդրադառնալով կայսրությանը սպասվող գալիք հավանա-կան վտանգներին՝ Կ. Պոլսի «Բութանիա» թերթը գրում էր, որ եթե իշխանության վերադարձած Իթթիհադը ցանկություն ունի

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 25, 31 հունվարի 1913 թ.:

վերսկսելու պատերազմական գործողությունները, ապա դա կարող է ճակատագրական լինել կայսրության գոյության համար: Տերությունները երիտթուրքերին տիրաբար համոզում էին հանձնել Ադրիանուպոլիսը՝ հանուն Եվրոպայի խաղաղության: Ադրիանուպոլսին կառչած մնալը վտանգում էր նաև կայսրության մայրաքաղաքը, որի պաշտպանությունն այլևս անկարելի էր, քանզի փաստորեն ջախջախված էր բանակը, խոշոր կորուստներ էր կրել նավատորմը:

Չնայած Եվրոպայի հորդորներին՝ Բ. Դուռը վճռական էր տրամադրված չհանձնել Ադրիանուպոլիսը՝ պատճառաբանելով, թե քաղաքը թուրքերի պատմության խոշոր այուներից մեկն է, մահմեդական անկախության վերջին մնացորդը, Թուրքիայի կյանքի ու մահվան խնդիրը:

Այլ կերպ էր մտածում «Բութանիա» թերթի խմբագիրը, որը գտնում էր, որ Թուրքիայի համար մնացած ամենամեծ արժեքը ոչ թե Ադրիանուպոլիսն է, այլ բանակը: Հետևապես պետք չէ հանուն այդ քաղաքի պահպանման զոհաբերել կայսրության իրական ամենամեծ արժեքը:

«Բանակը զոհել Ատրիանուպոլսին՝ թիւրիմացութիւն պիտի ըլլար,- գրում էր «Բութանիան»:- Թուրքիան այժմ ուրիշ բան չունի բանակէն զատ, ոչինչ աւելի քան ներկայ թնդանօթներու եւ վառօդի պաշարը, ոչինչ աւելի քան այժմ ունեցած զէնք կրելու կարողութիւնը, եւ Զաթալճայի ճակատամարտը ո՛չ թէ Ադրիանուպոլսի, այլ պետութեան գոյութեան համար պիտի մղուի»[1]:

«Բութանիայի» խմբագիրը չեչտում էր, որ կործանման եզրին կանգնած երկրի կառավարությունը պարտավոր է հաշվի նստել իրողությունների հետ, այլապես սպառնալիքի տակ կդրվեն նաև Փոքր Ասիայի օսմանյան տիրույթները: Եվ եթե Բ. Դուռն ուզում է, որ այդ տիրույթները մնան Օսմանյան կայսրության կազմում, ապա ամենից առաջ նա պետք է պահպանի իր զինված ուժերը: «Եթէ օսմանեան պետութիւնը կորսնցնէ իր բանակը, երբ դժբախտութիւնը հալածէ իր զօրավարները եւ

---

[1] ***«Բութանիա»**, № 130, 11 (24) հունվարի 1913 թ.:*

քայքայուած ամբողջ բանակը թափի մայրաքաղաքին վրայ, այն ատեն Վոսփորի ափերէն մինչեւ Եփրատի բերանը խռովութիւններ պիտի պայթին եւ արդէն ներքին չատ թոյլ կապերով միացած պետութիւնը կտոր-կտոր պիտի ըլլայ»[1]: Ապա՝ «Ո՞վ կրնար Թուրքիոյ երաշխաւորել թէ Զաթալճայի բանակին կռնակէն յանկարծ ապստամբութիւն պիտի չբռնկի, թէ Հայաստանի մէջ մթերուած ատելութիւնը պիտի չբորբոքի, թէ Արաբիան խալիֆայութենէն պիտի չզատուի»[2]: Այնուհետեւ՝ «Ադրիանուպոլիս չի կրնար փրկուիլ: Սուլթանին բանակը չաբաթներով ու ամիսներով կրնայ Զաթալճայի խրամներուն մէջ մնալ՝ թշնամիին յարձակումը արգիլելու համար. սակայն, պետութիւն մը, որ օտար գործարաններէն կ'օգտուի իր սպառազինութեան համար, եւ որուն վրայ Մեծ Պետութիւնները դրամական իշխանութիւն հաստատեր են, կը նմանի մարդու մը՝ որուն երակներէն արիւնը կը քամուի: Ամենամեծ պաշարն իսկ կը սպառի եւ Թուրքիոյ տկարութեան վայրկեանը անողոք կերպով կը մոտենայ»[3]:

Հեղաշրջումից հետո Էնվեր բեյը մեկնեց Զաթալջա: Դա նշանակում էր, որ ռազմաճակատի այդ հատվածը բախտորոշ դեր է ունենալու օսմանյան պետության ճակատագրում:

Հունվարի 14-ին իր աշխատանքներն ընդհատեց Լոնդոնի խաղաղության դեսպանաժողովը:

«Բութանիա» թերթի թղթակիցը 1913 թ. հունվարի 15-ին սերբական ռազմաճակատից հաղորդում էր, որ Սերբիայի և Զերնոգորիայի պատվիրակները նախորդ օրը հավաքվել են գաղտնի խորհրդակցության և ընդունել Թուրքիային ուղղված նախազգուշական խիստ վերջնագրի տեքստ: Մտքերի փոխանակության արդյունքում խորհրդակցության անդամները հանգել են այն եզրակացության, որ մեծ պետությունները, չնայած իրենց ամպագոռգոռ հայտարարություններին, բնավ տրամադիր չեն ճնշում բանեցնելու Թուրքիայի վրա, որպեսզի սա իր զորքերը դուրս բերի Էդիրնեից ու քաղաքը հանձնի դաշնակից-

---

[1] ***«Բութանիա»**, № 130, 11 (24) հունվարի 1913 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

ներին: Ըստ այդմ խորհրդակցությունը որոշել էր պաշտոնական հայտարարություն անել, որ զինադադարը ավարտված է, և խզված են համարվում բանակցությունները: Որոշման մեջ հայտարարվում էր, որ հակառակ մեծ պետությունների սպասումների՝ պատերազմական գործողություններն առաջինը վերսկսելու են Սերբիան ու Չերնոգորիան:

Բալկանյան երկու երկրների այս դեմարշը խիստ բացասական տպավորություն թողեց Եվրոպայում, որի մամուլի օրգանները այն որակեցին «տակտից զուրկ», «ոչ դիվանագիտական»: Բոլոր մեծ տերությունները, այդ թվում Ռուսաստանի կառավարությունը, բալկանյան քաղաքին խորհուրդ էին տալիս անխոհեմ քայլ չանել, հրաժարվել Բ. Դոանը զինադադարի խզման համար վերջնագիր տալուց:

Զինադադարի խզումը որևէ կարևորություն չուներ Եվրոպայի շահերի առումով, բայց բուլղարների կացության տեսակետից խիստ հատկանշական էր: Սրանք ասում էին, որ իրենց համար անտանելի է հաշտության կնքման երկարաձգումը, բայց թշնամության վերսկսումն ավելի անընդունելի է և աներևակայելի ծանր կնստի իրենց երկրին: Զինադադարի բուլղար պատվիրակները սպառնում էին պատերազմը վերսկսելու դեպքում ավելի պահանջկոտ դառնալ, այն է՝ սահմանագլուխը երկարացնել մինչև Մարմարա ծով և ավելացնել իրենց կողմից պահանջվող պատերազմական տուգանքի չափը: Վկայակոչելով, թե իրենց բանակը պատերազմում տվել է 25.000 սպանված, և այժմ երկիրը կես միլիոն զինվոր է պահում զենքի տակ, հետևաբար բուլղարները գտնում էին, որ Թուրքիան պարտավոր է վճարել իրենց կատարած ծախսերի մի մասը[1]: Ի պատասխան դրա՝ Թուրք մամուլը այդ ամենը համարում էր «պարապ խոսքեր»: «Բուլղարներն այլևս մի թիզ հող չեն երազի, չեն տեսնի այլևս օսմանյան ոսկու գույնը»[2],- գրում էր «Ժեոն Թուրքը»: Թերթն ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր այն բանին, որ Եվրոպան շահագրգռված չէ Թուրքիայի նոր պարտություններով:

---

[1] **«Հեռաձայն»**, № 2, 24 հունվարի (6 փետրվարի) 1913 թ.:

[2] «Ժեոն Թուրքի» հոդվածի թարգմանությունը տե՛ս նույն տեղում:

ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՀԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻ ՔԱՅԼ

Թեև Իթթիհադը դարձյալ երկրում դրության տերն էր, բայց վարկաբեկված էր և հեղինակազրկված: «Երիտթուրք» բառն այլևս ոգևորիչ և հուսադրող գաղափար չէր, և այդ պատճառով ժողովուրդն ամենևին վստահություն չուներ իշխանությունների նկատմամբ: Հրապարակը զբաղեցնող նշանավոր քաղաքական և պետական գործիչներն այլևս կորցրել էին իրենց երբեմնի հմայքը:

Ոչ միայն Իթթիհադն ու ընդդիմադիր դարձած Իթթիլաֆը, այլև մյուս կուսակցությունները եռանդուն մաքառում էին միմյանց դեմ, փոխադարձաբար վարկաբեկում իրար: Ամեն բոպե կարող էր բռնկվել ընդհարում և տեղի ունենալ իշխանափոխություն: Այս պայմաններում Թուրք հասարակության վերնախավում առաջ էին գալիս կարոտախտի դրսևորումներ սուլթան Համիդի ժամանակների նկատմամբ: Սուլթանական նախկին կարգերի վերականգնումը երազող ուժերը չարախնդում էին, խոսում այն մասին, որ կայսրության կործանման պատճառը 1908 թ. հեղափոխությունն էր, որ երիտթուրքերը, ապա նաև իթթիլաֆականները չկարողացան պահպանել այն հզոր կայսրության ամբողջականությունը, որի սահմաններն անխախտ էին մնացել Աբդուլ Համիդի երեսնամյա կառավարման տարիներին:

Օսմանյան գահի շուրջ նույնպես սկսել էին ծփալ դավադրական ալեկոծումներ, որոնք ամեն բոպե կարող էին ձեռնարկները փոխել:

Բռնի ուժով կատարված իշխանափոխության հետևանքն անխուսափելիորեն պիտի լիներ բռնապետությունը:

Հեղաշրջումից անմիջապես հետո ամբողջ ծավալով բախվել էին օսմանյան սահմանադրությունը՝ իր բազմաթիվ զուտ մերկապարանոց դրույթներով, և այդ դրույթների հետ բացարձակապես հաշվի չնստող նորաստեղծ դիկտատուրան:

Թուրքիայի սնանկ վիճակի պայմաններում բռնապետության կողմից սահմանադրությունը մի կողմ նետելը համեմատաբար առաջադեմ թուրք տարրերը դիտում էին որպես համիդյան

մղձավանջի վերականգնման նախերգանք, իսկ ազգային պահ-պանողական շրջանակների կարծիքով ելքը տվյալ երերուն դրության պայմաններում երկրի փրկության դիկտատորական ռեժիմ հաստատելը, հաստատակամություն դրսևորելը և ուժ ցուցադրելն էր, բոլոր պաշտոնյաներին ու զորքը հնազանդության մեջ պահելը:

Հաշվի առնելով Թուրքերի շրջանում իշխող այս երկու հակադիր տեսակետները՝ երիտթուրք պարագլուխները ձգտում էին անել անհնարինը՝ միաձուլելու դիկտատուրան սահմանադրությանը, այսինքն՝ հանդես էին գալիս թե՛ մեկի և թե՛ մյուսի կողմնակից, որպեսզի սահմանադրական երևային Եվրոպայի աչքում և միաժամանակ դիկտատոր լինեին երկրի ներսում: Տակնուվրա անելով քաղաքական, իրավական և բարոյականության բոլոր հասկացությունները՝ Իթթիհադը հայտարարում էր, թե երկրում միաժամանակ հաստատված են սահմանադրական դիկտատուրա և դիկտատորական սահմանադրություն:

Իրականում, սակայն, իրողությունն այն էր, որ Մահմուդ Շևքեթ փաշան և Էնվեր բեյն իրենց ձեռքն էին վերցրել պետական բոլոր գործերը՝ հետին դիրքեր մղելով թե՛ սուլթանի գերիշխանությունը և թե՛ պառլամենտի իրավասությունները:

Սուլթանը հայտնվել էր կալանավորի վիճակում:

Ներքին անլուծելի կնճռոտ խնդիրները «հարթելուն» զուգընթաց՝ Շևքեթ փաշայի կառավարությունը չհապաղեց հանդես գալ ռազմատենչ հայտարարություններով և պատերազմը վերսկսելու պատրաստություններով:

Հունվարի 11-ին Շևքեթ փաշայի և Էնվեր բեյի ուղեկցությամբ սուլթանը գնաց մզկիթ և կատարեց սելամլիքի արարողություն: Հանդիսությանն առաջին անգամ մասնակցում էր Մերձավոր Ասիայից եկած քրդական հեծելազունդը: Այդ օրերին Կ. Պոլսում էին գտնվում օսմանյան բանակի 4-րդ և 5-րդ դիվիզիաները, որոնց անձնակազմերը բաղկացած էին քրդերից: Հենց քրդերի շրջանում էին մեծ հաջողությամբ քարոզչություն մղում պատերազմի կողմնակիցները: Հավաքվելով միտինգների՝ քուրդ զինվորները համառորեն պահանջում էին չարունակել պատերազմը: Սկյուտարին մոտակա Սելիմիե զորանոցում բանակած

քրդական գնդերի զինվորների հուզումն այնպիսի սաստկության էր հասել, որ սուլթանն իր թիկնապահներից մի քանիսին ուղարկել էր նրանց հանգստացնելու:

Կատարելով կորցրածը կռվով հետ բերելու մասին հեղաշրջումից առաջ տված խոստումները՝ երիտթուրքերը հեղաշրջման հաջորդ օրվանից իսկ սկսեցին անխտիր զորակոչել 35-45 տարեկան տղամարդկանց: Հայ և հույն պատրիարքների բուռն բողոքները նշանակություն չունեցան[1]:

«Դեպի Ադրիանուպոլիս», «Դեպի Զաթալջա»,- աղաղակում էին Կ. Պոլսում:

Դեպի աշխարհագրական այդ կետերն էին ուղղված օսմանցի հայրենասերների հայացքները:

Պետական հեղաշրջումից 3 օր հետո Էնվերը այցելեց Զաթալջայի ամրությունները՝ ստուգելու օսմանյան բանակի մարտունակությունը: Պատերազմի փափագով բռնկված զորքերի մի մասը հունվարի 13-16-ը Կ. Պոլսից անցավ Դարդանել, իսկ մյուս մասը՝ Զաթալջայի գիծը: Պատերազմաբեմ գնացող զորքերի թվում էին նաև կայսրության ասիական մասից եկած քրդական գնդերը՝ հիմնականում հեծյալ: Ճակատ գնացող զորքերի տեղ հասնելուն պես այնտեղից մայրաքաղաք էին բերվում նոսրացած և վերազինման կարոտ զորամասերը:

Շևքեթ փաշայի կաբինետը իրեն հռչակեց ազգային պաշտպանության կառավարություն և հրապարակ նետեց օսմանյան զենքի հեղինակության խնդիրը: «Զենք կարող զիջել Ադրիանուպոլիսը և պատրաստ ենք ամեն զոհողության», - ասում էին նորանշանակ նախարարները:

Իթթիհադի նոր կառավարությանը զբաղեցնող առաջնահերթ գործը, բնականաբար, պետք է լիներ տերությունների հավաքական վերջնագրին պատասխան տալը, որը առանց այն էլ այդքան հապաղել էր:

Պատասխանի տեքստը կազմելիս կառավարության անդամները դեմ առան իրենց համար անլուծելի խնդրի: Նախարարնե-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 14, 20 Հունվարի 1913 թ.:*

րից ոչ մեկը գրչի մարդ չէր, և ոչ ոք չգիտեր, թե ինչպես է նման փաստաթուղթ կազմվում: Շվարած նախարարները վարչապետին խնդրեցին նվաստություն չհամարել նորից դիմելու պաշտոնաթող Գաբրիել Նորատունկյանին, որպեսզի նա գոնե խորհուրդներով օգնի կազմելու վերջնագրի տեքստը[1]:

Ի վերջո Գ. Նորատունկյանի օգնությամբ հունվարի 14-ին կազմվեց պատասխանը, որը հաջորդ օրը՝ հունվարի 15-ին, հանձնվեց տերությունների Կ. Պոլսի ներկայացուցիչներին:

Հաշտության բանակցությունների դրական լուծման ամենամեծ խոչընդոտն Ադրիանուպոլիսը այս կամ այն պատերազմող կողմին պատկանելու հավակնությունն էր: Բուլղարները համարում էին, որ Ադրիանուպոլսին տիրանալը բուլղար ժողովրդի մեծագույն տենչանքն է եղել և կմնա այդպիսին, ուստի առանց այդ քաղաքն ստանալու ինքը կզրկվի հաղթանակների էական արդյունքից, և ապագա պատերազմների հիմնական պատճառն այդ քաղաքն է լինելու:

Իսկ Թուրքիան տրամադիր չէր զիջելու Ադրիանուպոլիսը: Դա նշանակում էր, որ անխուսափելի է դառնում պատերազմի վերսկսումը:

Եվրոպական պետությունները ստիպված նոր վերջնագիր ներկայացրին Թուրքիային՝ հորդորելով գնալ վերջին զիջումների և բանը չհասցնել պատերազմի վերսկսման:

Միաժամանակ հունական նավատորմն առանձին վճռականությամբ հետամուտ եղավ թուրքական նավատորմի շարժումներին և աշխատում էր ծանր հարվածներ հասցնել նրան: Հունական ծովային ուժերի այդօրինակ գործողությունների ամենամեծ շարժառիթներից մեկն այն էր, որ Թուրքիայի կառավարությանը թույլ չտան երկրի ասիական մասից չոգենավերով զինվորներ փոխադրել կայսրության եվրոպական ցամաք:

Դրությունը սպառնագին էր դառնում և հղի էր անակնկալներով: Արդյո՞ք երիտթուրք կառավարությունը լրջորեն որոշել էր պատերազմել, թե՞ ցուցադրական այդ աղմուկով սակարկում

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 21, 29 Հունվարի 1913 թ.:*

էր բալկանյան պետությունների և Եվրոպայի հետ:

Մի բան ակներև էր. Թուրք իշխանությունը իր հազար ու մի խաղերից հերթական աճպարարությունն էր անում՝ այն տարբերությամբ սակայն, որ այս մեկը տեղի էր ունենում ճգնաժամային օրերում, երբ ամեն մի սխալ կարող էր ճակատագրական լինել: Երիտթուրքերը լավ էին հասկանում այդ բանը: Իթթիհադը Քեամիլ փաշայի դահլիճից տարբերվելու նպատակով չէր զավթել իշխանությունը, այլ պետական հեղաշրջում էր կատարել պարզապես կառավարության պաշտոններ գրավելու համար: Միևնույնն է, նա ստիպված անելու էր այն, ինչ իր նախորդն էր պարտադրված անելու: Եթե Թուրքիայի արտակարգ ծանր վիճակը և տվյալ պահին պետության նկատմամբ մեծ տերությունների դիրքը լավ ըմբռնելով հանդերձ՝ Մահմուդ Շևքեթ փաշան պատերազմը չարունակելու տխմարությունը գործեր և դրանով իսկ անբուժելի հարված հասցներ իր երկրին, ապա նա դրանով իր կամքից անկախ մարդկությանը կմատուցեր մեծ ծառայություն՝ մեկընդմիշտ վերջ տալով արևելյան խնդրին:

Բայց այդպես չեղավ, քանի որ երիտթուրք պարագլուխները շատ լավ էլ հասկանում էին, որ բալկանյան ճգնաժամի հետևանքները Տրիպոլիսի պատերազմի համեմատությամբ կարող են շատ ավելի ծանր լինել: Իսկ ո՞վ կարող էր երաշխավոր լինել, որ Ասիական Թուրքիայի խնդիրը պետության համար չէր դառնալու ավելի ահարկու, քան Եվրոպական Թուրքիայի հարցը:

Բալկանյան ազգերը միացյալ ուժերով միանգամից փոխել էին Թուրքիայի քարտեզը: Օսմանյան մայրաքաղաք Պոլիսը գրեթե դարձել էր սահմանակից քաղաք: Գլուխները կորցրած թուրքերը խիստ խուճապահար էին: Անխուսափելի էին դարձել Թուրքիայում նոր հեղափոխության բռնկումը և սուլթանի գահընկեցությունը:

Պատահական չէ, որ երիտթուրքերի՝ հեղաշրջման առաջին օրերի խանդավառությունն ու հոխորտանքները չորս-հինգ օր հետո նախ փոխվեցին վհատության, ապա՝ զգաստության:

Հենց երիտթուրքերի մտավախությունն էր պատճառը, որ տերությունների նոտայի պատասխանում Շևքեթ փաշայի կառավարությունը նաև ցանկություն էր հայտնել չուտափույթ

հաշտություն կնքելու և վերջ դնելու պատերազմին: Ընդգծելով, որ օսմանյան կառավարությունը մինչև այժմ իբր խաղաղասիրության անհրաժեշտ ապացույցներ է տվել, Բ. Դուռը չեշտում էր, որ Ադրիանուպոլիսը հանձնելու մասին լուրերն անգամ զայրույթի փոթորիկ են առաջ բերում ողջ երկրում, քանի որ այնտեղի բնակչությունը մահմեդական է, և փաստորեն այն Թուրքիայի երկրորդ մայրաքաղաքն է և նրա անբաժանելի մասը: Քեամիլ փաշայի կառավարության անկման հիմնական պատճառը հենց Ադրիանուպոլիսը Թուրքիայից օտարելու փորձն էր, ասված էր փաստաթղթում:

Պատասխան-ծանուցագրում այնուամենայնիվ նշված էր, որ չնայած դրան՝ Թուրքիան խաղաղասիրության գերագույն ապացույց տալու նպատակով համաձայն է զիջելու Ադրիանուպոլսի մի մասը, որն ընկած է Մարիցա գետի աջ ափին՝ պայմանով, որ գետի ձախ ափին գտնվող թաղամասերը, ուր գտնվում են հինավուրց մզկիթները, դամբարաններն ու հուշարձանները, թողնվեն Թուրքիայի իշխանության ներքո[1]:

Էգեյան ծովի կղզիների հարցով Բ. Դուռը հայտնում էր, որ Զանաքկալեի (Դարդանելի) շրջակայքում գտնվող, զինվորական բերդերի վերածված կղզիները անհրաժեշտ են մայրաքաղաքի պաշտպանության համար, իսկ մնացածները երկրի ասիական նահանգների անբաժան մասն են: Բայց կառավարությունը համաձայն էր այդ հարցի լուծումը նույնպես թողնել մեծ պետություններին՝ հավատալով, որ նրանք հաշվի կառնեն վերոհիշյալ պատճառաբանությունները:

Թուրքական այս ծանուցագիր-պատասխանը բալկանյան դաշնակիցները չընդունեցին:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 13, 19 հունվարի 1913 թ.:*

Իթթիհադի կառավարությունը տենդագին աշխատանք ծավալեց ռազմաճակատի ամրացման, զորքերի համալրման ուղղությամբ: Կայսրության արևելյան նահանգներից մեծ թվով զինվորական ուժեր ռազմաճակատ նետվեցին: Նախարարների խորհրդի որոշման համաձայն՝ մեծ վեզիր Շևքեթ փաշան Անատոլիայում և կայսրության արևելյան նահանգներում տեղաբաշխված բոլոր զորքերի հրամանատարներին մի շրջաբերական ուղարկեց, որով պատվիրում էր տեղի զինվորական ուժերի մեծ մասը ուղարկել ռազմաճակատ[1], միաժամանակ քրդերից ու արաբներից և առհասարակ մահմեդականներից կազմել առանձին կամավորական զորախմբեր և դրանք ուղարկել ռուս-թուրքական սահմանագլուխ՝ հարկ եղած դեպքում այն պաշտպանելու համար[2]:

Մզկիթներում խոջաներն անդադար ճառեր էին արտասանում՝ մուսուլման բնակչության մոլեռանդությունը գրգռելու համար[3]: Երիտթուրք ագիտատորները ամեն տեղ էին՝ պաշտպանական խրամատներում ու բերդապահ զորքերի մեջ, զորանոցներում ու պահեստայինների հավաքներում, ռազմական գործարաններում և այլուր: Բայց արդյունքները գոհացուցիչ չէին: Թուրք հրամանատարներից ոմանք խոստովանում էին, որ զորքն այլևս անընդունակ է շարունակելու պատերազմը: Այդ հողի վրա թուրքական բանակում տիրում էր պառակտում: Սպաները, բաժանված լինելով քաղաքական խմբավորումների, գործում էին իրենց վերադասների կարգադրությունների համաձայն: Զորքի մի մասը, երկար ժամանակ անգործ մնալուց հոգնած, կամենում էր տուն վերադառնալ: Հատկապես արաբական զորամասերը նեղվում էին ցրտից:

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 8, 22 փետրվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 19, 26 հունվարի 1913 թ., նաև՝ **«Կովկասի լրաբեր»**, № 21, 26 հունվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 20, 25 հունվարի 1913 թ.:

Մյուս կողմից Բալկանյան պատերազմը ուժեղացրել էր մեծ տերությունների տարաբնույթ նկրտումները: Գերմանիան Փոքր Ասիայի կողմերում ավելի ամուր հաստատվելու բուռն ձգտումով հանկարծ հայոց մեջ «նշմարել էր» առաքինություններ և նրանց նկատմամբ սիրալիր էր դարձել: Ռուսաստանը պատերազմի շնորհիվ ողջ սլավոնական աշխարհում անսահմանորեն բարձրացրել էր իր հեղինակությունն ու վարկը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Անգլիան Քուվեյթի կողմից եռանդուն գործունեություն էր ծավալել՝ Միջագետքում մասնավոր առավելություններ ձեռք ձգելու համար: Ֆրանսիան աչքը սևեռել էր Սիրիայի վրա: Եվ որ հատկանշական է, այդ տերություններից ամեն մեկը համոզված էր, որ մարդասիրության ու առաջադիմության մասին իր քարոզների ու գործելակերպի միջև չկա որևէ հակասություն:

Հաշվի չառնելով այդ ամենը՝ իթթիհադական կառավարությունը 1913 թ. հունվարի 29-ին խզեց 1912 թ. դեկտեմբերին սկսված հաշտության բանակցությունները:

Բարձրաստիճան հրամանատարները վճռական էին պատերազմի վերսկսման դեպքում կռվել մինչև արյան վերջին կաթիլը: Թուրքական գլխավոր բանակը եռանդուն պատրաստություններ էր տեսնում[1]:

Նախքան պատերազմի երկրորդ շրջանի սկսվելը բուլղարական հետախուզությանը հայտնի էր դարձել, որ թուրքական բանակի գլխավոր շտաբի մշակած ռազմական պլանի համաձայն՝ Գալիպոլիում կուտակված մեծաքանակ զորքը պետք է ճակատային հարվածով խփեր բուլղարական զորախմբին ու ջախջախեր, ապա ուղղություն վերցնելով դեպի Ադրիանուպոլիս՝ պարտության մատներ քաղաքը շրջապատած բուլղար ու սերբ զորքերին և օգնության ձեռք մեկներ թուրքական կայազորին:

Բայց, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ ծրագիրը տապալվեց պատերազմը վերսկսելու հենց սկզբին:

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 18, 23 հունվարի 1913 թ.:

Թուրքական բանակի դեմ այժմ կազմուպատրաստ կանգնած էին գերազանցապես բուլղարական զորքեր: Մակեդոնական և ալբանական ճակատների փաստացի վերացումը հանգեցրել էր այն բանին, որ սերբական և հունական զորքերի մեծ մասն արդեն զբաղված էր գրաված տարածքների պաշտպանությամբ. նրանք ռազմակալել էին Մակեդոնիայի մեծ մասը, որտեղ արդեն չկային Թուրքական զորքեր:

1913 Թ. հունվարի 17 (30)-ին Բուլղարիան Թուրքիային հայտարարեց զինադադարը չեղյալ հայտարարելու մասին: Պատերազմը վերսկսվեց 1913 Թ. հունվարի 22 (փետրվարի 3)-ին: Հունվարի 24-ին գեներալ Սավովը իր Դեմոտեկս բանակատեղիից հրաման ուղղեց բանակի զինվորներին ու սպաներին: Հրամանում մասնավորապես ասված էր. «Այժմ, երբ մենք արդէն լիովին պատրաստ ենք, աւելի պատրաստ, քան պատերազմից առաջ, մեզ հարկաւոր է կրկին ջարդել չուտափոյթ հաւաքած անվարժ խուժանը եւ հաշտութեան պայմանները թելադրել կուի դաշտում: Թոյլ կը տա՞ք արդեօք դուք, որպէս զի թշնամուն մնայ ձեր ընկերների արիւնով թրջւած հողը: Յիշեցէ՛ք, որ Լոզենգրադի, Կոչանի, Բունար-Հիսարի, Լիւլէ-Բուրգասի, Զաթալջայի եւ Օդրինի մօտ ընկած մարտիկների հոգիները նայում են ձեզ երկնքի բարձունքից: Թոյլ կը տա՞ն արդեօք մեր հայրերը, մայրերը, ամուսինները եւ զաւակները, որ մենք տուն դառնանք առանց թշնամուն ծովի այն կողմը վանելու ... Ուրեմն Աստուծոյ օգնութեամբ եւ զէնքը ձեռքին յառաջ դէպի նոր եւ աւելի պանծալի գործեր»[1]:

Պատերազմի վերսկսման առթիվ պատասխանելով իրեն ուղղած հարցին՝ բուլղար զորավար Բոբրիկովն ասել էր, որ մինչև Զաթալջա ընկած տարածության վրա բուլղարական բանակն ունի 280.000 զինվոր, որից 100.000-ը զորավար Իվանովի հրամանատարությամբ պաշարել է Էդիրնեն, 25.000-ը Դիմիտրիևի հրամանատարությամբ գտնվում է Դերկոս-Զաթալջա գծին, և 50.000 զինվոր զորավար Կուտինչևի հրամանատարու-

---

[1] **«Կովկասի լրաբեր»,** № 21, 26 հունվարի 1913 Թ.:

թյամբ դիրք է բռնել Մարմարայի եզերքներից մինչև Էգեյանի ափերը: Դրանից բացի՝ բուլղարներն իրենց տրամադրության տակ ունեին 70.000 պահեստային և 15.000 մակեդոնացի կամավոր: Այդ բոլոր բանակների ընդհանուր հրամանատարը զորավար Սավովն էր[1]:

Պատերազմը վերսկսվելուց հետո առաջին մեկ-երկու շաբաթներին ոչ մի կողմ չկարողացավ որևէ էական հաջողության հասնել: Սակայն 1913 թ. հունվարի 23-ին բուլղարական ուժերը Կավաք-սուի մոտերքում ջախջախեցին թուրքական գալիպոլական զորքը, որը հալածվելով մեծ արագությամբ նահանջեց դեպի Բուլաիր: Այստեղ նույնպես հունվարի 26-27-ին տեղի ունեցան դաժան կռիվներ, որոնք թուրքերի համար ավարտվեցին ջախջախիչ պարտությամբ՝ խոր մտատանջության մեջ գցելով Մահմուդ Շևքեթ փաշայի կառավարությանը[2]: Այս հաղթության շնորհիվ՝ այժմ բուլղարների ձեռքում էր Մարմարա ծովից մինչև Բուլաիր ընկած գրեթե ամբողջ ծովափը[3]:

Անհետևանք անցան Մարմարա ծովի եզերքը՝ Շարքո, Ռոդոսթո և Սիլիվրիա, զորքեր հանելու փորձերը: Թուրք զորավարները հանգեցին այն համոզման, որ անկարելի է ափ դուրս գալ բուլղարների գրաված ծովեզերքներում: Ուստի թուրք և քուրդ զորամասերը, հատկապես Շարքոյի մոտ մեծամեծ կորուստներ կրելով, ստիպված եղան փախչել նավահանգիստներ և մտնել փոխադրող նավերը:

Սև ծովից Միդիայի վրա կատարած հարձակման փորձը նույնպես հարյուրավոր թուրք զինվորների կորստյան պատճառ դարձավ, և գործողությունը վերջացավ անարդյունք:

Այդ կատաղի կռիվներում թուրքերը տվեցին մեծ կորուստներ՝ ավելի քան 15 հազար սպանված ու վիրավոր[4]: Բուլղարնե-

---

[1] Զորավար Բոբրիկովի հարցազրույցը տե՛ս **«Ժամանակ»**, № 1345, 21 հունվարի (3 փետրվարի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 21, 26 հունվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 54, 9 մարտի 1913 թ.:

[4] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 26, 1 փետրվարի 1913 թ.:

րի ձեռքն էին անցել թնդանոթներ, մեծ թվով այլ զինատեսակներ:

Զաթալջայի ուղղությամբ թուրքերը մի քանի հարձակումներ ձեռնարկեցին՝ նավերից արձակած թնդանոթային կրակների աջակցությամբ: Մարտի 7-ին նրանք առաջ շարժեցին հետևակային հինգ դիվիզիա՝ հրանոթային համակարգերով հանդերձ: Կռվի մեջ մտան նաև հեծելազորային զորամասեր: Այստեղ էին նետվել նաև Փոքր Ասիայից նավերով բալկանյան ռազմաճակատ հասած մի քանի տասնյակ քրդական հեծելազորային հարյուրակներ: Քրդերը, նաև չերքեզներն ու լազերը երդվել էին Զաթալջայում ցույց տալ իրենց խիզախությունը և կռվելու հմտությունները: Բայց նրանց մասնակցությունը չփոխեց ընդհանուր կացությունը: Հատկապես քրդերը, մեծ կորուստներ տալով, նահանջեցին: Բուլղարների հաղթանակները առանձնապես տպավորիչ էին ճակատի ձախ հատվածում: Միայն ճակատի աջ թևում բուլղար բանակը հետ քաշվեց Զաթալջայից՝ ուժերը համալրելու և վերադասավորելու համար:

1912-1913 թթ. ձմեռը սաստիկ էր, և ռազմաճակատի դաշտերին տեղացել էր առատ ձյուն: Գալիպոլիում սառել էին մեծ թվով քրդեր և արաբներ: Վերջիններիս զորամասերը համարյա լիովին չարքից դուրս էին եկել՝ այլևս չկարողանալով մասնակցել մարտերին: Ամենուրեք նկատելի էին թուրքական բանակի մատակարարման անկանոնությունը և վատ հանդերձավորումը[1]: Չնայած այդ ամենին՝ թուրքերը շարունակում էին Բուլաիրի և Գալիպոլիի մոտ նոր ճակատներ բացելու պատրաստություններ տեսնել:

Հունվարի 26-ին Դերկոսի մոտ տեղի ունեցած երեքօրյա կռվում բուլղարներն անհաջողություն կրելով նահանջում են՝ տալով զգալի թվով զոհեր ու մարտի դաշտում թողնելով 10 թնդանոթ[2]:

Դերկոսից ու Ադրիանուպոլսից բացի՝ ռազմաճակատի մյուս

---

[1] *Տե՛ս* ***Н. Сокольский****, Очерки современной Турции,* ***էջ*** *3-4:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 20, 27 հունվարի 1913 թ.:*

հատվածներում բուլղարները հաղթական էին:

Պատերազմի սկզբից բալկանյան զինակիցների զորքերի կողմից չրջապատված էին նաև Շքոթրա և Յանինա բերդաքաղաքները: Հատկապես վերջինը, որը գտնվում էր գլխավոր թատերաբեմից չատ հեռու, կտրվել էր հաղորդակցության բոլոր միջոցներից, նույնիսկ անթել հեռագրով չէր կարողանում հաղորդակցվել Կ. Պոլսի հետ, սակայն ինքնուրույն կարողանում էր առաջ տանել դիմադրության գործը՝ հրամանատար Էսադ փաչայի գլխավորությամբ: Այնուամենայնիվ, այլևս չդիմանալով հույների վճռական հարձակմանը, Յանինան ընկավ[1]:

Նախկին արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը Թուրքիայի նոր պարտությունների համար մեղադրում էր մեծ տերություններին, որոնք «նախընտրեցին մեզի մինակ թողուլ պալքանեան զինակիցներուն հետ»[2]:

Ռազմաճակատներում Թուրքերի կրած ջախջախիչ պարտությունները հուզումների նոր ալիք էին բարձրացրել մահմեդական երկրներում՝ Եգիպտոսում, Լիբիայում, Միջագետքում և այլուր:

Թուրքիայի ջերմ պաչտպանությամբ առաջվա պես աչքի էին ընկնում Հնդկաստանի մահմեդականները, որոնք դիմում էին զանազան հակաքրիստոնեական գործողությունների: Հնդկաստանում լույս տեսնող անգլալեզու թերթերը դրությունն այդ երկրում համարում էին չափազանց լուրջ[3]. տեղի մուսուլմանական ծայրահեղ տարրերը բալկանյան ազգերի դեմ իրենց թշնամանքն ուղղում էին անգլիացի գաղութարարների վարչակազմի դեմ, իրականացնում ահաբեկչական գործողություններ՝ սպանություններ ու պայթյուններ:

Անվերապահորեն Թուրքիայի կողմն էր ճապոնացիների համակրանքը: Օսմանյան թերթերը տպագրել էին Թուրքիայի

---

[1] ***«Ժամանակ»,*** *№ 1381, 22 փետրվարի 1913 թ., նաև՝ նույն տեղում, № 1382, 28 փետրվարի (13 մարտի) 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ժամանակ»,*** *№ 1380, 26 փետրվարի (11 մարտի) 1913 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»,*** *№ 32, 8 փետրվարի 1913 թ.:*

համալսարանականներին ուղղած Տոկիոյի համալսարանի դասախոսների և ուսանողների հեռագիրը, ուր ասված էր, թե իրենք ցույց են կազմակերպել՝ ի պաշտպանություն Թուրք ժողովրդի և ընդդեմ բալկանյան դաշնակիցների, իրենց կառավարությանը խնդրել են անտարբեր չմնալ Թուրքիայի դժվարությունների հանդեպ: Միաժամանակ նրանք Թուրք համալսարանականներին կոչ էին արել ակտիվ մասնակից լինել երկրի թշնամիների դեմ գնալով ծավալվող դյուցազնական պայքարին[1]:

Այդ օրերին ինչպես եվրոպական, այնպես էլ Թուրքական մամուլի զանազան օրգաններում հաճախ էին տպագրվում հոդվածներ ու բողոքներ, որոնցով Թուրք հայրենասերները, գրական, հասարակական, քաղաքական գործիչները դիմումներով փորձում էին շարժել Եվրոպայի քաղաքակիրթ երկրների մարդասիրական վեհ զգացմունքները, բողոքում, թե բուլղարներն ու սերբերը անմարդկային արարքներ են ցուցաբերում մահմեդականների նկատմամբ: Միևնույն ժամանակ նրանք զարմանք էին հայտնում, որ եվրոպական երկրների պետական մարմիններն անտարբեր են Թուրքերի հանդեպ, որոնք զոհ են գնում բալկանյան երկրների զինվորների ոճրագործ արարքներին: Իթթիհադի կառավարությունը այդ ամենը որակում էր որպես միջազգային համապատասխան դաշնագրերի և մարդասիրական չգրված օրենքների խախտում:

Թուրքերի՝ եվրոպական կառավարություններին ուղղված բողոքները տպագրվում էին նաև Կ. Պոլսի «Բյուզանդիոն», «Լուսարձակ», «Արևելք», «Ժամանակ» և այլ, Կովկասի «Մշակ», «Հորիզոն», «Բաքու» և ուրիշ հայկական թերթերում: Հայկական մամուլում այդ բողոքները մեկնաբանվում էին միանգամայն այլ կերպ:

Հայ մամուլը խիստ դատապարտելի էր համարում բուլղարների, սերբերի, հույների կողմից գերի Թուրք զինվորների և խաղաղ բնակիչների նկատմամբ բռնի արարքները, եթե, իհարկե, դրանք համապատասխանում էին իրականությանը: Միաժամա-

---

[1] Տե՛ս **«Հեռաձայն»,** № 2, 24 հունվարի (6 փետրվարի) 1913 թ.:

նակ հայկական թերթերը հիշեցնում էին հայերի դեմ թուրքերի, քրդերի, չերքեզների կատարած ոճրագործությունները, որոնք տեւել են տասնամյակներ և այժմ էլ շարունակվում են:

«Մշակը» գրում էր. «Այսօր գթություն, արդարություն հայցող և աղաղակող, Եվրոպայի անտարբերությունը դատապարտող թուրքերը թող չմոռանան, որ Թուրքիայում գտնվում է մի ժողովուրդ, որ տասնյակ տարիներով ենթարկվեց անխնա, անգութ կոտորածների, ջարդերի, սոսկալի կեղեքումների իրենց իսկ՝ թուրքերի, մահմեդականների կողմից, որ այդ ժողովուրդը օգնության, գթության աղերսներ, կոչեր, աղաղակներ էր արձակում՝ ուղղված քաղաքակիրթ Եվրոպային, լուսավոր թուրքերին, որ այդ ժողովուրդը հիմնվում էր նույնպես միջազգային ակտերի ու դաշնագրերի հոդվածների ու տրամադրությունների վրա: Տասնյակ տարիներ այդ ժողովուրդը արյունաքամ էր լինում, կրում անտանելի տանջանքներ, աղերսում էր թեթևացումն, ամոքումն իր ցավերի, և սակայն ոչ ոք նրան օգնության չէր հասնում, ոչ ոք նրա լացին ու կոծին ականջ չէր դնում, ոչ ոք միջամտություն չէր գործում»[1]:

Իսկ ինչո՞ւ ոչ ոք չէր մտահոգվում հայերի անտանելի վիճակով, և այսօր էլ շարունակվում են նրանց տանջանքները, հարց էին տալիս հայ հոդվածագիրները, և իրենք էլ պատասխանում. որովհետև իրենք՝ թուրքերը, սաստիկ զայրանում և ընդդիմանում էին, երբ Եվրոպայում որևէ թեթու խոսք էր ասվում իրենց հասցեին, հերքում, ուրանում էին իրենց կատարած ոճիրները, մերժում կեղեքումների և սպանությունների փաստերը, սպառնում էին՝ ասելով, թե ոչ ոք իրավունք չունի միջամտելու իրենց երկրի ներքին գործերին: Նրանք հայերի դրությունը ավելի քան բարօր ու նախանձելի էին համարում, ծաղրուծանակի էին ենթարկվում նրանց բարձրացրած աղիողորմ բողոքները:

Եվ ահա հիմա թուրքերն են ստիպված օգնություն հայցում և պահանջում Եվրոպայի միջամտությունը, բայց ոչ ոք չէր արձագանքում նրանց պահանջին ու խնդրանքներին:

---

[1] **«Մշակ»,** № 34, 13 փետրվարի 1913 թ.:

Բալկանյան պատերազմի երկրորդ շրջանում դաշնակիցների տարած նոր հաղթանակները սուգի էին մատնել Թուրքերին, իսկ Եվրոպայի հակաթուրք տարրերի մեջ առաջ էին բերել ոգևորության մեծ ալիք: Վերջիններս հույս ունեին, որ շուտով Թուրքիան կդառնա երկրորդական-երրորդական պետություն: Ավելին, նրանց մեջ եղան ոչ քիչ թվով լավատեսներ և երազողներ, որոնք համոզված էին, թե հաղթական դաշնակիցները Թուրքիային Եվրոպայից արտաքսելուց հետո կանգ չեն առնի կես ճանապարհին և, ներխուժելով Փոքր Ասիա, օսմանյան անարգ լծից կազատագրեն նաև հայերին:

Այդ կարծիքին էր նաև, օրինակ, ֆրանսիացի հայտնի հրապարակախոս Հանրի Ռոշֆորը, որը հայերի օգտին գրած իր կրակոտ հոդվածներից մեկում հետևյալ անկարելի հեռանկարն է գծում. «Ինձ անհնարին է թվում, որ այնպիսի անձինք, որպիսիք հունաց, բուլղարական և սերբական թագավորներն են, կարող են թույլ տալ, որ շարունակվեն հայ ժողովրդի սարսափելի տանջանքները: Նրանց փառավոր հաղթանակները հույս են ներշնչում, որ դրանից հետո նրանք թուրքական լծից ազատելու են այդ դժբախտ ազգին»[1]:

Նման երազային, սին մտքերն արձագանք և հավանություն էին գտնում հայկական սահմանափակ շրջաններում միայն, իսկ հայ գործիչների մեջ, հայ մամուլի էջերում առաջացնում զարմանք ու տարակուսանք:

«Կովկասի լրաբեր» թերթը, օրինակ, գրում էր, թե բալկանյան ազգերն ինչո՞ւ պետք է հայերի համար Թուրքիայի խորքերում արյուն թափեն: Չէ՞ որ այդ ազգերը «ո՛չ ցեղով, ո՛չ կրոնով, ո՛չ լեզվով և ո՛չ էլ քաղաքական շահերով որևէ առնչություն չունեն հայերի հետ ... Դաշնակից երկրների ղեկավարները չեն, որ իրենց առանց այն էլ ուժասպառ բանակները պիտի առաջ շարժեն, որպեսզի վերջ տան Ասիայի խորքերում տվայտող մի փոքր ժողովրդի տանջանքներին:

---

[1] **«Կովկասի լրաբեր»** (Թիֆլիս), № 33, 9 փետրվարի 1913 թ.:

Բանաստեղծությունը լավ է իր տեղում, բայց ծիծաղելի է քաղաքականության մեջ»[1]:

Ամեն օր ռազմաճակատից լուրեր էին հասնում, որ թուրքական բանակի հայ զինվորները, որոնք մարտի դաշտերում շարունակում էին անձնազոհության նորանոր օրինակներ տալ, թուրք հրամանատարների ու մահմեդական զինվորների կողմից առաջվա պես ենթարկվում են հալածանքների ու ծաղրուծանակի, զուրկ են գոյատևելու տարրական պայմաններից: Պակաս դժոխային չէր պատերազմի ընթացքում թուրքական բանակների շարքերում կռված և բալկանյան երկրների զորքերին գերի ընկած հայ երիտասարդների վիճակը:

Դա էր վկայում, օրինակ՝ Բելգրադ այցելած դաշնակցական հայ գործիչներից մեկը, որը ՀՅԴ Արևմտյան բյուրոյին ուղարկած 1913 թ. փետրվարի 1 (14) թվակիր նամակով նկարագրել էր չորս ամիս ի վեր Սերբիայի մայրաքաղաքի քեմպերում գտնվող 134 գերի հայ զինվորների անտանելի վիճակը: Նա մեջբերում էր այդ գերիներից մեկի պատմածը: «Բացի շաբաթ և կիրակի օրերին,- ասել էր նա,- ամեն օր, օրական 7-8 ժամ, առանց ձյուն-ձմեռի նայելու, առանց մեր կեանքին քչիկ մը խնայելու, անասուններու նման կաշխատեցնեն մեզի, մեր առողջութիւնը..., մեզմե շատեր առանց կոշիկի և նույնիսկ առանց շապիկի մնացած ըլլալով, շարժիլու կարողութիւն չէ մնացած»: Նա պատմել էր, որ իրենք ամբողջ օրը շալակով քար ու կիր են կրում, որի դիմաց ամեն մեկը ստանում է մի կտոր կորեկի հաց և պղտոր ջուր[2]:*

Բալկանյան դաշնակիցների զորքերին գերի ընկած թուրքական բանակների հայ զինվորների դժնդակ վիճակի մասին ժամանակի հայկական մամուլում նույնպես կան բազմաթիվ վկայություններ:

Առաջվա պես թուրքական զորամասերի հայ զինվորները

---

[1] **«Կովկասի լրաբեր»,** *№ 34, 10 փետրվարի 1913 թ.:*

* *Մի բառ չի հասկացվում:*

[2] *ՀՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 6, թ. 4-5:*

ռազմաճակատում բիրտ հալածանքների էին ենթարկվում Թուրք, քուրդ, չերքեզ, լազ և մահմեդական հավատի ուրիշ ազգերի զինվորների կողմից:

Նման պայմաններում նույնիսկ կային հայ գործիչներ, որոնք Հայաստանում մնացած հայ երիտասարդներին նախկին խանդավառությամբ կոչ էին անում «վազել ռազմաճակատ»՝ «հանուն օսմանյան միասնական հայրենիքի»: Դրանիցից էր Խարբերդի հայոց առաջնորդ Պսակ վարդապետը: Նահանգապետարանի պաշտոնաթերթ «Մամուրեթ-իլ-Ազիզ»-ում հանդես գալով հոդվածով՝ իր ազգակիցներին կոչ էր արել է՛լ ավելի մեծ եռանդով մասնակցություն ունենալ «Հայրենիքի պաշտպանությանը»: Նա գրել էր. «Մեկ սիրտ ըլլանք: Անցեալը թողելով, մեր բոլոր սրտով դեպի ապագան վազենք: Պատերազմի դաշտ երթանք, կուրծք տանք թշնամիին: Փրկութիւննիս մեկ մեկու կապուած է, մեր ապագան ալ նորէն իրարմէ կախուած է: Թուրք, քիւրտ եւ հայ Անատօլուի մեջ մինչեւ այս վայրկեանս եղբոր պէս ապրած են եւ ասկե վերջն ալ մէկ սիրտ ապրելու իրաւունք վաստկեր են:... Թշնամին երբ մեր մեջի ցրտութիւնը զգայ, բերդը ներսէն առնել կուզէ: Մեր փառահեղ նախնեաց ապրած հայրենիքը պաշտպանենք: ... Աչքերնիս բանանք: Չի թողունք որ թշնամիին աղտոտ ոտքերը այս մաքուր հողը կոխկրտեն... Բաւական է որքան իրար ինկանք: Կուսակցութիւններու խնդիրներով իրարու թշնամի եղանք: Ժամանակը փափուկ եւ խիստ կարեւոր է: Հայրենիքը մեղք է: ... Զինուորութենէ չի փախչինք: Մեր պետական տուրքերը կանոնաւորութեամբ վճարենք, եւ մեր նախահայրերուն փառահեղ գաւակները ըլլալնիս ապացուցանենք»[1]:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցության Խարբերդի նահանգային վարչության 1913 թ. փետրվարի 22-ի հայտարարության մեջ ասված էր, որ Պսակ վարդապետը խեղաթյուրում է իրականությունը և դրանով ծառայություն է մատուցում թուրքահայ ժողովրդի թշնամիներին: «Իրականութեան բոլորո-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 42, թ. 2:*

վին հակառակ է այն հաւաստումը թէ Անատօլուի մեջ Թուրքն ու քիւրտը մինչեւ այսօր եղբօր պէս ապրած են հայերուն հետ: Այս հաւաստումը սուտ կը հանէ Թրքահայ արիւնոտ պատմութիւնը, սուտ կը հանե 95-96ի եւ Կիլիկիոյ ահաւոր ջարդերը..., հայերի ներկայիս անտանելի վիճակը»: Մինչդեռ հայը կայսրության մեջ «հանդիպում է միշտ միայն թշնամութեան, ատելութեան, որը շատ անգամ քաջալերւում, հրահրւում է կառաւարութենէն... Մենք մեր բոլոր ոյժովը կը բողոքենք այդ յոդուածին հեղինակին դէմ, կենսական ճշմարտութիւններ այսպէս խեղաթիւրելու համար...»[1]:

Պատերազմը վերսկսելուց ի վեր ռազմաճակատում թուրքական բանակի նոր խոշոր պարտություններից հետո երիտթուրք կառավարությունը համոզվեց, որ այլ ելք չի մնացել, քան հաշտության աղերսանքներ ուղղել և առաջարկներ անել: Այն ամբարտավան և խրոխտ խոսքերը, որ շռայլում էին Մահմուդ Շևքեթ փաշան և Էնվեր բեյը սկզբում՝ կամենալով ազդեցություն գործել թուրք ժողովրդի վրա, չուտով չքացան: Բ. Դուռը դարձյալ զինադադարի էր ձգտում:

Տերությունները միայն մի դեպքում կարող էին առաջարկել իրենց միջնորդությունը, այն է՝ եթե Թուրքիան բացեիբաց հայտարարեր, թե պատրաստ է Ադրիանուպոլիսը զիջելու բուլղարներին, իսկ Էգեյան կղզիները՝ հույներին: Այլապես մեծ պետությունների կառավարությունները կորցրած կլինեին իրենց արժանապատվությունն ու հեղինակությունը, քանզի նրանք Թուրքիային չարունակ խորհուրդ էին տվել կատարել այդ զիջումները, բայց Կ. Պոլսում նրանց չէին լսել, ավելին՝ առաջ էին բերել պետական հարված՝ որպես բողոք այդ խորհուրդների դեմ: Իբրև դրա հետևանք՝ բալկանյան դաշնակիցները ստիպված կրկին մերկացրել էին սուրը և հայտարարել, թե իրենք հաշտություն կարող են կնքել միայն պատերազմի դաշտում:

Այս իրադրության մեջ իշխանությունը բռնությամբ զավթած երիտթուրքերի կառավարության դրությունը դարձել էր

---

[1] *ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 42, թ. 2:*

աննախանձելի. գնալով արագորեն աճում էին նրա թշնամիների շարքերը երկրի ներսում: Սպայությունը կառավարությունը տապալելու բացահայտ կոչեր էր անում: Հակահեղեղական «Զինվորական միության» սպաները սպառնացել էին նոր զինադադար կամ հաշտություն կնքելու դեպքում անմիջապես գալ Կ. Պոլիս և իրենց ձեռքով դատաստան տեսնել երիտթուրք պարագլուխների հետ: Իշխանությունները լրագրողներին արգելել էին գրել նախարարական տագնապի, ինչպես նաև նյութեր տպագրել «Զինվորական միությանը» անդամակցելու համար կասկածվող սպաների ձերբակալությունների և արտաքսումների մասին: Պնդումներ կային, թե Իթթիհադի կոմիտեն Կ. Պոլսում զենք է բաժանել իր բոլոր ակումբներին: Նա երկյուղում էր, որովհետև ամեն տեղ, նույնիսկ ոստիկանության մեջ, բացահայտվել էին կառավարության դեմ ուղղված դավադրություններ: Չնայած այդ ձեռնարկումներին՝ Մահմուդ Շևքեթ փաշայի կաբինետի անկումը դարձել էր օրվա խնդիր: Այդ էր պատճառը, որ «Միություն և Առաջադիմություն» կոմիտեն, մի քանի օր շարունակ քննելով ստեղծված վիճակը, հանգել էր այն եզրակացության, որ անհրաժեշտ է շարունակել պատերազմը: Թալեաթ բեյը և գրող Բաբան-զադեն՝ իբրև կոմիտեի պատվիրակներ, գնացին Բ. Դուռ և հաղորդեցին կոմիտեի վճիռը[1]:

Բայց որոշում ընդունելը մի բան է, այն կատարելը՝ ուրիշ բան: Ռազմաճակատից նորանոր տագնապալի լուրեր էին հասնում մայրաքաղաք: Բոլոր ճակատներում նախաձեռնությունը բալկանյան դաշնակիցների ձեռքին էր: «Թիւրքիոյ զինուորական ոյժին վրայ հիացողները մնացին բոլորովին ապշած՝ Պալքանեան դաշնակցութեան տարած փառաւոր յաղթանակներու եւ Թրքական բանակի կրած ջախջախիչ պարտութեան առաջ»[2]: Թուրքերն արդեն պարզ գիտակցում էին, որ հեռու չէ այն ժամանակը, երբ թշնամական բանակները կարող են հաղթական լինել և՛ Ադրիանուպոլսում, և՛ Զաթալջայում, իսկ դա նշանակում

---

[1] *Տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»****, № 47, 1 մարտի 1913 թ.:*

[2] ***«Հնչակ»****, № 1, հունվար, 1913, էջ 9:*

էր Կ. Պոլսի հանձնում և կայսրության մայրամուտի սկիզբ: Այժմ թուրքական իշխանությունների գլխավոր խնդիրն էր դառնում գոնե բավարար չափով հողեր պահպանել Թրակիայում՝ ապահովելու համար Մարմարա ծովի, Դարդանելի, Կ. Պոլսի և Փոքր Ասիայի անվտանգությունը[1]:

Վարչապետ Շեքեթ փաշան ստիպված դիմեց Անգլիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին և բանակցությունները վերականգնելու համար խնդրեց նրա միջնորդությունը: Սակայն Գրեյը պատասխանեց, թե թուրքական կառավարությունը նախ և առաջ պետք է մոտավորապես ձևակերպի այն զիջումները, որ նա մտադիր է անելու բալկանյան դաշնակիցներին, որպեսզի հնարավոր լինի նրանց համոզել նորից զինադադար հայտարարել և վերսկսել հաշտության բանակցությունները:

Այլևս ոչ մի կասկած չկար, որ թուրքերը Էդուարդ Գրեյին ամենից առաջ հայտնելու են, թե ընդմիշտ զիջում են Ադրիանուպոլիսը և կղզիները, որպեսզի բալկանյան դաշնակիցները համաձայնեն թուրքերի հետ հաշտության բանակցություններ սկսել: Այդ դեպքում պետք կլիներ, իհարկե, նոր զիջումներ ևս անել, որովհետև այն պահանջները, որոնցով դաշնակիցները բավարարվում էին բանակցություններն սկսվելուց առաջ, այժմ, երբ նրանք ստիպված նորից զենքի էին դիմել և ահագին կորուստներ կրել, բնականաբար, այլևս չէին կարող գոհանալ նախկին ակնկալածով:

Ջնայած իրենց նկատմամբ Անգլիայի ցուցաբերած կոշտ վերաբերմունքին՝ երիտթուրքերը հույս էին փայփայում, թե, այնուամենայնիվ, իրենց կհաջողվի վերսկսվելիք բանակցությունների ընթացքում Թուրքիայի ավանդական դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրիայի օգնությամբ պահպանել Ադրիանուպոլիսը և կղզիների գոնե մի մասը: Նրանց մեջ այդ հույսն արթնացրել էին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհեյմը և Ավստրիայի դեսպան մարկիզ Պալավիչինին՝ իրենց խրախու-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 35, 12 փետրվարի 1913 թ.:

սական զրույցներով, ինչպես նաև գերմանական մամուլի օրգանները՝ հուսադրական բնույթի հոդվածներով: Թուրք կառավարությունը նաև մեծ հույսեր էր կապել ստացված հետախուզական տվյալների հետ, ըստ որոնց՝ բալկանյան դաշնակիցների շարքերում կարծես թե սկսված են անհամաձայնություններ, որոնք պատերազմը շարունակվելու դեպքում կարող են խորանալ:

Մանավանդ հույս էր ներշնչում Ռումինիայի բռնած բացասական դիրքը բալկանյան դաշինքի և հատկապես իր անմիջական հարևան Բուլղարիայի նկատմամբ: Ռումինիան չէր կարողանում ձեռքերը ծալած հանգիստ նստել ու դիտել, թե հաշտությունից հետո ինչպիսի մեծ փոփոխություններ է կրելու Բալկանյան թերակղզու քարտեզը, որի հետևանքով բալկանյան մյուս պետությունները կունենային ընդարձակ նվաճումներ, իսկ ինքը կմնար ձեռնունայն: Անկասկած, Թուրքիայի դեմ պատերազմը վերսկսվելու դեպքում Ռումինիան նույնպես իր պահանջները կդներ բալկանյան պետությունների սեղանին: Ամենից առաջ նա անվերապահորեն իրենն էր համարում Սիլիստրիան, ապա նաև պահանջներ ուներ դաշնակիցների բանակների կողմից գրավված թուրքական ուրիշ տարածքների հանդեպ: Ռումինական կառավարությունը հատկապես թշնամանքով էր տրամադրված Բուլղարիայի նկատմամբ: Կանխատեսելով առաջիկա շաբաթներին իր համար ստեղծվելիք տեսանելի անբարենպաստ դասավորումները՝ նա հայտարարեց, թե Բուլղարիայի դեմ պատերազմելու համար ինքն արդեն զենքի տակ է դրել 300.000 մարդ[1]:

Վերջապես տվյալ պահին Թուրքիայի համար չափազանց շահեկան էր, որ Ռուսաստանը նույնպես խիստ շահագրգռություն էր հանդես բերում պատերազմական գործողությունները դադարեցնելու հարցում, թեև պատերազմի սկզբին դեմ չի եղել, որ բուլղարները գրավեն ոչ միայն ամբողջ Ռումելիան, այլև Կ. Պոլիսը: Բայց այժմ նրա վերաբերմունքը փոխվել էր: Ռուսական

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 37, 14 փետրվարի 1913 թ.:

կառավարությունը կտրականապես դեմ հանդես եկավ Կ. Պոլիսը և նեղուցները Բուլղարիային հանձնելուն: Նա մտահոգ էր, որ բուլղարների կողմից Կ. Պոլսի գրավումը կարող է պատճառ դառնալ համաեվրոպական պատերազմի բռնկման, որին իր երկիրը այդ պահին պատրաստ չէր[1]: Նրա այդ վճռական միջամտության շնորհիվ, ինչպես նաև բուլղարական բանակում սկսված խոլերայի պատճառով կանխվեց Կ. Պոլսի գրավումը[2]: Ավելին, հաշվի առնելով պատերազմում Թուրքիայի համար ստեղծված ծանրագույն վիճակը՝ ռուսական մամուլը Պետերբուրգի կառավարությանը խորհուրդ էր տալիս ուղղակի բանակցություններ սկսել Բ. Դռան հետ Օսմանյան կայսրությունը Եոյակ համաձայնության դաշինքի մեջ ընդգրկելու հարցի շուրջը[3]:

Մարտի վերջերին Պետերբուրգն արդեն հակվել էր այդ մտքին: Հավանություն տալով Ռուսաստանի մտադրությանը՝ Ֆրանսիան նույնպես Բուլղարիային խորհուրդ էր տվել հրաժարվել Կ. Պոլիս մտնելուց և փոխարենը խոստացել էր, ինչպես վերը նշվել է, պատերազմից անմիջապես հետո մեծ փոխառություն բացել նրա համար:

Կ. Պոլսի նկատմամբ բուլղարների պահանջի դեմ հանդես եկող ռուսական կողմի դիրքը ջերմ պաշտպանություն էր գտնում Հունական կառավարությունում և հասարակայնության մեջ: Սրանք գտնում էին, որ Հունաստանը բարոյաքաղաքական և հատկապես պատմական ավելի մեծ իրավունք ունի տերը լինելու Կ. Պոլսին, քան Բուլղարիան:

Հայկական «Հեռաձայն» լրագրի փոխանցմամբ՝ Կ. Պոլսում հրատարակվող «Նեոլոգոս» հունարեն թերթը, վճռականապես հանդես գալով օսմանյան մայրաքաղաքը նվաճելու բուլղարների մտադրության դեմ, դեռևս հունվարի վերջերին գրել էր.

---

[1] Տե՛ս **«Հեռաձայն»**, № 14, 5 (18), փետրվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **А. Ф. Миллер**, Оттоманская империя (Султанская Турция), М., 1946, էջ 36:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1346, 21 հունվարի (3 փետրվարի) 1913 թ.:

«Յայտնի է թէ Պուլկարիա դարերէ ի վեր Պոլիսը իրեն մայրաքաղաք կ'երազէ, եւ անհիմն չէ ***Զարիկրատ է նոս*** *(Պոլիսը մերն է:- Հ. Ս.) պուլկարական հայրենաւանդ յանկերգին իրականանալու վախը»*[1]*:*

Բուլղարների և հույների միջև խմորվող հակասություններն արդեն պարզ երևում էին նաև Մակեդոնիայի գլխավոր քաղաք Սալոնիկի խնդրում: Նրանցից ամեն մեկն այդ քաղաքը իրենն էր համարում: Ավելի վճռական էր Հունաստանը, թեև նա Միջերկրական ծով դուրս եկող բազմաթիվ նավահանգիստներ ուներ[2]*: Իր հերթին Բ. Դուռն անհնարին էր գտնում քաղաքի հանձնումը նրանցից որևէ մեկին՝ պատճառաբանելով, որ եթե այն անցնի Բուլղարիայի կամ Հունաստանի ձեռքը, ապա այնտեղի իսլամ, հրեա և հայ բնակչությունը կգաղթի Իզմիր ու Միջերկրականի ուրիշ վայրեր, ուստի լավագույն լուծումն է օսմանյան գերիշխանության կազմում այն դարձնել միջազգային քաղաք՝ նրան կցելով որոշ տարածք: Նրա այդ առաջարկը պաշտպանում էին ոչ միայն Ռուսաստանը, այլև եվրոպական տերությունները:*

Բալկանյան պատերազմն իր երկրորդ շրջանն էր բոլորում, այսպես ասած, կատարյալ մթության մեջ: Երկու կողմերն էլ արգելել էին թղթակիցների մուտքը կռվի դաշտ, ուստի չկային քիչ թե շատ բավարար տեղեկություններ, թե ինչ է կատարվում Բալկաններում պատերազմը վերսկսելուց հետո: Պատերազմական գործողություններն այս երկրորդ շրջանում ևս թուրքերի համար նույնքան անհաջող էին անցնում, որքան և առաջին փուլում:

Բուլաիրի անկումից հետո ոչ մի նշան չկար այլևս կարծելու, թե պատերազմի աստվածը կժպտա թուրքերին: Ընդհակառակը, գործերի ընթացքը ցույց էր տալիս, որ «հայրենիքի պատիվը փրկելու» նշանաբանով հրապարակ նետված երիտասարդ թուրքերը այդ պատիվը պիտի ծախեին շատ ավելի մեծ գնով, քան Քեամիլ փաշայի հեռատես կաբինետը:

[1] *Տե՛ս* ***«Հեռաձայն»****, № 12, 21 հունվարի (3 փետրվարի) 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1420, 7 (20) ապրիլի 1913 թ.:*

«Կովկասի լրաբերը» տպագրել էր բուլղարական նախարարներից մեկի հետևյալ խոսքերը. «Մենք կանգ կառնենք միայն այն ժամանակ երբ Թուրքերը կստորագրեն հաշտությունը հէնց պատերազմի դաշտում եւ գոհացում կրտան մեր բոլոր նոր պահանջներին, որ մենք կառաջադրենք մեր նոր յաղթություններին համապատասխան: Լոնդոնի պայմանները պէտք է մոռացուեն»[1]:

«Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, իհարկէ»[2],- մեկ այլ առիթով հավելում էր Թերթը:

Բայց օսմանյան զորքերի այդ ծանր պարտություններից հետո էլ երիտթուրքական կառավարությունը չէր ընկճվել: Բ. Դոան հրամանով փետրվարի սկզբներին ռազմաճակատի Գալիպոլիի հատված նետվեցին Անատոլիայից չտապ բերված նոր ուժեր: Ծավալված կռիվներում նրանք ավելի մեծ կորուստներ ունեցան՝ կորցնելով իրենց կազմի չուրջ 75 տոկոսը[3]: Այդ ուժերին օգնության չտապած ուրիշ զորամասեր չէին կարողանում ափ իջնել, որովհետև բուլղարական դաշտային թնդանոթները փոթորկալի կրակ էին տեղում առափնյա ջրերում երևացող թուրքական նավերի վրա: Շոգենավերում գտնվող և դեռևս ափ չհանված զորքերը մեծ զրկանքներ էին կրում, մանավանդ սաստիկ տառապում էին ցրտից: «Շիրքեթ» ընկերության փոքր շոգենավերի մեջ զինվորներն ստիպված էին քնել կանգնած, որովհետև պառկելու տեղ չկար: Կովի գնացող թուրք զորքերին միացած գերմանացի շատ սպաներ հետ էին դարձել՝ չկարողանալով դիմանալ զրկանքներին[4]: Թերթերը հաղորդում էին, որ սով է տիրում Գալիպոլիի և Դարդանելի թուրք զորքերում: Դրությունը գնալով դառնում էր հուսահատական:

Թուրքերի կրած ջախջախիչ պարտությունների հանրապատկերի վրա բացառություն էին երեք քաղաքների բերդերը,

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1420, 7 (20) ապրիլի 1913 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 37, 14 փետրվարի 1913 թ.:

[4] **«Կովկասի լրաբեր»**, № 37, 14 փետրվարի 1913 թ.:

որոնց հերոսական դիմադրության շնորհիվ տպավորություն էր ստեղծվել, թե դրանք միշտ անառիկ են մնալու: Այդ բերդաքաղաքներն էին Ադրիանուպոլիսը, Շքոթրան և Էպիրոս թերակղզու ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող **Յանինա** քաղաքը:

Հունական զորամասերը Թեսալիայից ներխուժեցին Յանինայի հյուսիսային տարածքներ: Թուրքերը չտապ ամրացրին քաղաքի պաշտպանական գիծը, որի վրա ունեին 100-ից ավելի տարբեր տեսակի թնդանոթներ: Էսադ փաշայի գլխավորած թուրքական զորքը չորս ամիս տևած կատաղի դիմադրությունից հետո ընկրկեց: Հունական զորամասերը խուժեցին քաղաք և 1913 թ. փետրվարի 22-ից 24-ը գրավեցին այն: Հակառակորդը տվել էր մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ: Անձնատուր էր եղել 32-հազարանոց բանակը՝ Էսադ փաշայի գլխավորությամբ[1]: Յանինայի և շրջակայքի հույն բնակչությունը ցնծում էր:

Լայնամասշտաբ գործողություններ էին ծավալվել **Զաթալջայի** ռազմաճակատում:

Նախորդ ամիսներին թուրքական իշխանությունների ձեռնարկած բազմաբնույթ միջոցառումները նպաստել էին այս հատվածում դրության ժամանակավոր կայունացմանը: Սակայն Կըրկ-Քիլիսեի, Լյուլե-Բուրգազի, Քարաղաջի հաղթական կռիվներից հետո այդ տարածքներում գտնվող զորքերի պատկառելի մասը բուլղար հրամանատարությունը կենտրոնացրել էր Զաթալջայի ճակատում:

1913 թ. փետրվարին Զաթալջայի ամբողջ գծի երկայնքով թուրքերի ու բուլղարների միջև կատաղի ընդհարումները փոփոխակի հաջողություններով հաջորդում էին իրար, բայց մարտի սկզբին ամրությունների աջ թևի վրա բուլղարական զորքի հարձակումը թուրքերը կարողացան հետ մղել՝ հակառակորդի համար զգալի կորուստներով: Դրանից հետո օսմանյան զորքն ամբողջ ճակատով հակահարձակման անցավ և գրավեց Սրվազ-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 44, 26 փետրվարի 1913 թ.:

քեռ, Քալֆա-քեռ և Աք Ալան բարձունքները: Թուրքական ուժերը հարձակվեցին նաև նշված դիրքերի արևելյան կողմի վրա փորված բուլղարական խրամատների վրա: Կենտրոնի զորամասերն իրենց հերթին առաջացան և գրավեցին Գատը-քեռյի արևելյան բարձունքները: Այդ արյունալի ընդհարումներից հետո երկու կողմերի զորքերը դադար առան՝ պատրաստվելով վճռական ճակատամարտի[1]:

1913 թ. մարտի 9-ին մեծ պետությունների լոնդոնյան կոնֆերանսի ներկայացուցիչները Բուլղարիայի վարչապետ Գեչովին հանձնեցին մի գրություն, ուր գոհունակություն էր հայտնված այն կապակցությամբ, որ բալկանյան դաշնակից պետությունների կառավարությունները համաձայնություն են տվել իրենց արած միջնորդական առաջարկությանը, այն է՝ մտնել բանակցությունների մեջ Թուրքիայի հետ՝ հաշտություն կնքելու նպատակով: Միաժամանակ տերությունների ներկայացուցիչներն անհրաժեշտ էին համարել նախապես ձևակերպել իրենց հայացքներն այն հիմունքների մասին, որոնք պետք է ընդունվեին բանակցությունների ընթացքում: Դրանք էին.

1) Օսմանյան կայսրության սահմանը Եվրոպայում պետք է անցնի Էնոսից՝ Մարիցա և Էրգենո գետերի հոսանքով և վերջանա Մեդիայով. այդ գծից դեպի արևմուտք գտնվող բոլոր հողերը Թուրքիան զիջում է բալկանյան դաշնակիցներին, բացի Ալբանիայից, որի որպես պետության կազմավորումը և սահմանների որոշումը պիտի վերապահվի մեծ պետություններին, 2) Էգեյան կղզիների խնդիրը վճռելու են պետությունները, 3) Թուրքիան բոլորովին հրաժարվում է Կրետեի նկատմամբ իր իրավունքներից, 4) Մեծ պետությունները չեն կարող համաձայնություն տալ Թուրքիայի կողմից պատերազմական տուգանք վճարելու մասին բալկանյան դաշնության պետությունների պահանջին:

Սույն հայտարարության հետ միաժամանակ մեծ պետությունները պահանջեցին չտապ դադարեցնել պատերազմական գործողությունները: Գեչովը չնորհակալություն հայտնեց, ապա

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1389, 7 (20) մարտի 1913 թ.:*

չեչտեց, որ նշված առաջարկության պաշտոնական պատասխանը կտրվի դաշնակիցների հետ խորհրդակցելուց հետո: Դա տեղի ունեցավ, որից հետո Բուլղարիայի կառավարությունը Լոնդոնի կոնֆերանսի իր ներկայացուցչի միջոցով հայտարարեց, որ բալկանյան կոալիցիան համաձայն չէ արված առաջարկին և չարունակելու է պատերազմը[1]:

Մարտի երկրորդ տասնօրյակի սկզբներից Զաթալջայի բոլոր ճակատներում ծավալվեցին բուռն կռիվներ: Մարտի 12-ին 60.000 զինվոր ունեցող բուլղարական ուժերը հարձակում գործեցին Ինջեիզի չրջանում դիրքավորված օսմանյան զորքի վրա: Տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, որի ընթացքում զոհվեց մոտ 800 բուլղար զինվոր: Այս ուղղությամբ կռիվը չարունակվեց նաև հաջորդ օրը:

Մարտի 13-ին գրեթե 4.000 զինվոր ունեցող բուլղարական երկու զորաբաժիններ հարձակում սկսեցին Զաթալջայի օսմանյան բոլոր դիրքերի վրա: Թուրքերի հրետանին բուռն կրակով մեծ կորուստներ պատճառեց հարձակվողներին, իսկ հետևակը, հակահարձակման անցնելով, նրանց ստիպեց դադարեցնել առաջխաղացումը[2]:

Զաթալջայի վրա բուլղարական զորքի չդադարող գրոհները և թուրքերի կրած մեծ կորուստները առաջ էին բերել զայրույթի ալիք, որը փոխարկվում էր դաժան բռնությունների հատկապես քաղաքի բուլղար և հայ փոքրամասնությունների դեմ: «Կովկասի լրաբերը» հաղորդում էր, որ բուլղարական կառավարությունն այնտեղի մետրոպոլիտից հեռագիր է ստացել, որ թուրք զինվորներն ամեն տեսակ վայրագություններ են կատարում, նույնիսկ առանց որևէ պատճառի սպանում են միանգամայն անմեղ մարդկանց: «Դրությունը խիստ ողբալի է»[3],- հաղորդել էր նա:

Չնայած թուրքերին հաջողվել էր կանգնեցնել Զաթալջայի վրա գրոհող բուլղարական ուժերին, բայց այդ հզոր ամրու-

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 56, 12 մարտի 1913 թ.:
[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1396, 14 (27) մարտի 1913 թ.:
[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 43, 23 փետրվարի 1913 թ.:

թյունը պաշտպանող զորքը դաժան ձմռան պայմաններում կրում էր անասելի զրկանքներ: Շարունակվող արյունալի պատերազմը թուրք զինվորների ու սպաների մեջ դժգոհության ու բողոքի ալիք էր բարձրացրել[1]: Նրանցից շատերը չէին ենթարկվում զինվորական հրամաններին, պահանջում էին իշխանափոխություն Կ. Պոլսում: Ընդհանուր առմամբ այդ ռազմաճակատի օսմանյան զորքը երիտթուրքերի նկատմամբ թշնամաբար տրամադրված «Զինվորական միության» ազդեցության տակ էր:

Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով և հաշվի առնելով, որ Զաթալջան Կ. Պոլսի դուռն է, թուրք հրամանատարությունը շարունակում էր խիստ միջոցներ կիրառել վիճակից դժգոհողների նկատմամբ, իսկ Էնվեր բեյի հրամանի տակ գտնվող դիվիզիան չղթա էր կազմել մայրաքաղաքից մի քանի ժամվա հեռավորությամբ գտնվող Սան-Ստեֆանոյի առաջ, որպեսզի թույլ չտա Զաթալջան պաշտպանող զորքերին նահանջել Կ. Պոլիս[2]:

Բայց դժգոհությունների առաջն առնել չէր հաջողվում: Զաթալջայում թուրքական մի քանի զորամասերի հրամանատարներ հայտարարել էին, որ չեն ընդունում Իթթիհադի կառավարությունը: Դրությունն այնքան էր լարվել, որ Կ. Պոլսից չտապ այնտեղ էր մեկնել Մահմուդ Շևքեթ փաշան՝ հարթելու զորամասերի հրամանատարների միջև եղած տարաձայնությունները[3]:

Զինվորների խռովությունները Եվրոպական Թուրքիայից թափանցում էին Մարմարա ծովի ասիական ափը: Կ. Պոլսի ասիական մասի զորանոցներում 1913 թ. փետրվարի կեսերին զինվորները խռովություն էին բարձրացրել՝ պահանջելով երիտթուրքերի կառավարության հրաժարականը: Սուլթանն անհապաղ իր ավագ թիկնապահին ուղարկել էր զինվորների մոտ՝

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 43, 23 փետրվարի 1913 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, № 36, 13 փետրվարի 1913 թ.:

խնդրելով դադարեցնել ընդվզումը: Նա նաև խոստացել էր, որ պատերազմը վերջանալուց անմիջապես հետո երիտթուրքերի կառավարությունն անպայման հրաժարական է տալու: Լարված բանակցությունների շնորհիվ զորամասը դադարեցրել էր խռովությունը՝ պայմանով, որ ոչ մի զինվոր կամ սպա չի հետապնդվելու[1]:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի հրամաններով բանակից ազատվում էին մեծ թվով սպաներ: Աճում էին դժգոհությունները նաև ավելի բարձր հրամանատարական կազմում, բայց դրանք հատկապես սուր բնույթ էին ստացել շարքային զինվորների մեջ: «Կովկասի լրաբեր» թերթը հաղորդում էր, որ Էսկիշեհիր քաղաքում տեղակայված զորամասերի զինվորների շրջանում մեծ խռովություն է ծագել երիտթուրքական հրամանատարության կողմից իրենց ռազմաճակատ ուղարկելու կապակցությամբ: Նրանք հայտարարել էին, թե չեն ճանաչում դավադրությամբ իշխանության եկած կառավարությունը: Իշխանությունների դեմ հանդես էին գալիս մանավանդ արաբներից կազմված զորամասերը, որոնք չէին կարողանում դիմանալ խիստ ցրտերին[2]:

Ի պատասխան այդ խռովության՝ կառավարությունը պաշտոնական հաղորդագրություն տարածեց այն մասին, որ դավադիրների մի խումբ 5000 օրինակով տպագրել է մի կոչ՝ ուղղված ժողովրդին ու բանակին: Այդ խումբը մտադիր է եղել զանգվածային հանրահավաք գումարել Բ. Դռան առջև, ապա հոծ շարքերով շարժվել դեպի սուլթանի պալատ և նրան խնդրել իթթիհադական բոլոր նախարարներին ձերբակալել ու Կ. Պոլսից նրանց հեռացնելու մասին հրաման արձակել: Հաղորդագրության մեջ ասված էր, որ գլխավոր դավադիրները ձերբակալված են և հանձնված զինվորական դատարան[3]:

Հակակառավարական ելույթները զորքերում է՛լ ավելի հա-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 36, 13 փետրվարի 1913 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 40, 19 փետրվարի 1913 թ.:

ճախակի դարձան 1913 թ. մարտին: Երկյուղ կրելով, թե միգուցե հաշտություն կնքելուց հետո կծագի ապստամբություն, Իթթիհադի կոմիտեն ձեռք առավ ծայրահեղ նախազգուշական միջոցներ: Նրա հրամանով ձերբակալվում էին այն անձինք, որոնք բացահայտորեն թշնամի էին իր կառավարությանը: Կոմիտեն միայն ներքին գործերի նախարարին տվել էր մոտ 3000 հոգու անվանացուցակ, որոնցից 300-ը արդեն ձերբակալված էին: Բարձրաստիճան 70 զինվորականների թվում էր նշանավոր գեներալ Ջալիլ Օսման փաշան[1]:

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՈՒՄԸ

Պատերազմը վերսկսվելուց հետո ամենաարյունալի կռիվները ծավալվեցին Ադրիանուպոլսի (Էդիրնե) նահանգում և հատկապես նրա կենտրոն Ադրիանուպոլիս բերդաքաղաքում:

Ադրիանուպոլսի նահանգը, որ բաժանված էր հինգ սանջակի, եզերված էր երեք ծովերով՝ Սև, Մարմարա և Էգեյան: Գլխավոր նավահանգիստներն էին Դեդե Աղաջը, Էնոսը, Մաքրին, Ռոդոսթոն, Բուրգազը[2]:

Բ. Դուռը գտնում էր, որ անհնարին է ապահովել Մարմարա ծովի, Դարդանելի և Կ. Պոլսի անվտանգությունը առանց բավարար չափով հողեր պահելու Թրակիայում[3]:

Թուրքերը վճռել էին երբեք թշնամուն չհանձնել Թրակիայի գլխավոր քաղաքը՝ Ադրիանուպոլիսը, որը նվիրական սրբատեղի էր իրենց համար: Այնտեղ էին թաղված թուրքաց պատմության բազմաթիվ կերտողներ: Քաղաքն ուներ շատ մզկիթներ, 12 կամուրջ, ամրակուռ բերդեր:

Ադրիանուպոլիսը թշնամուն հանձնելը Բ. Դուռը բացառում էր՝ նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոնդոնի դես-

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 57, 13 մարտի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»,** № 4, 5 ապրիլի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 35, 12 փետրվարի 1913 թ.:

պանախորհուրդը դեռ 1912 թ. դեկտեմբերի կեսերին որոշել էր այդ քաղաքը թողնել Թուրքիայի տիրապետության տակ[1]:

Թրակիան իրենց պահելու համար Թուրքերը բերում էին երկու հիմնական պատճառաբանություն. 1) Ադրիանուպոլիսը դեռ չի գրավված, հետևապես բուլղարները իրավական հիմք չունեն Թրակիան անջատված համարելու Թուրքիայից, 2) Ադրիանուպոլսի նահանգն ունի 1 միլիոն 180 հազարի հասնող բնակչություն, որից 600 հազարը իսլամ են, մյուս ազգություններից են՝ հույն՝ 357 հազար, բուլղար՝ 125 հազար, հայ՝ 27 հազար, այլ ազգեր՝ 21 հազար: Կազմելով նահանգի բնակչության ընդամենը 1/10 մասը՝ բուլղարներն, ըստ նրանց, իրավունք չունեին տիրանալու սույն նահանգին[2]: Պատկերը Թուրքերի համար ավելի չահեկան էր. Ադրիանուպոլիս քաղաքն իր արվարձաններով միասին ուներ 124 հազար բնակիչ, որից 58 հազարը իսլամ էին, 36 հազարը՝ հույն, 14 հազարը՝ հրեա, 9 հազարը՝ բուլղար, 4500-ը՝ հայ: Այսինքն՝ քաղաքի բնակչության հարյուրից միայն չորսն էին բուլղար[3]:

Ադրիանուպոլիսը, բնականաբար, խիստ կարևոր արժեք էր Թուրքիայի համար: Թուրք քաղաքական չրջանակներում մտածում էին, որ այդ քաղաքից հրաժարվելով՝ օսմանյան պետությունն ամբողջովին կզրկվի եվրոպական չփումներից և կդառնա զուտ ասիական մի պետություն:

Հարկավ ճիչտ էր այս տեսակետը, գրում էր Կ. Պոլսի «Ազդակը»: «Բայց արդեօ՞ք միայն էտիրնեն պահելով՝ օսմանեան երկիրը կրնայ դառնալ եւրոպական... եւրոպական կամ ասիական պետութեան մը էական յատկանիչը արդեօք եւրոպական կամ ասիական հողին վրայ նահանգ մը աւելի կամ պակաս ունենալուն մէջ կը կայանայ՝ թէ պետական կազմակերպութեան եւ անոր մէջ ապրող ժողովուրդներուն քաղաքակրթական

---

[1] *Տե՛ս **«Առաջամարտ»**, № 1093, 22 դեկտեմբերի 1912 թ. (4 հունվարի 1913 թ.):*

[2] *Տե՛ս **«Ժամանակ»**, № 1311, 18 (31) դեկտեմբերի 1912 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

աստիճանին մէջ: Ճաբոնցին ասիական պետութիւն մըն է, բայց իր էութեամբ նոյնքան եւրոպական է՝ որքան ոեւէ եւրոպական այլ պետութիւն»[1]:

Բայց Ադրիանուպոլսի հարցում ոչ պակաս, եթե ոչ ավելի, վճռական էին բուլղարները: Նրանք գտնում էին, որ այդ բերդաքաղաքն անփոխարինելի նշանակություն կունենա իրենց պետության համար: Հրաժարվել դրանից մանավանդ այնքան զոհողություններից և աննախադեպ հաջողություններից հետո ուրիշ բան չէր նշանակի, եթե ոչ պարզապես պարտություն: Դա նման կլիներ այն բանին, որ այրել մի ամբողջ անտառ՝ միայն մի թուփ մացառ ձեռք բերելու համար:

Բուլղարների վճռականությունն ի վերջո կատարեց իր դերը: Լոնդոնի դեսպանաժողովում երկար բանակցություններից հետո 1913 թ. հունվարի կեսերին Բ. Դուռը համաձայնել էր զիջել Մարիցայի աջ ափը՝ իրեն վերապահելով Ադրիանուպոլսի այն թաղերը, ուր գտնվում էին հին դամբարաններն ու մզկիթները[2]: Բայց չատ չանցած՝ թուրքական կողմը, խախտելով ձեռք բերած պայմանավորվածությունը, հետ էր առել իր առաջարկությունը: Դրան ի պատասխան՝ բուլղարական կողմը կոչտացրել էր իր դիրքը և հայտարարել, թե ինքը պահանջում է Մարիցայի երկու ափերը: Դրանից հետո դեսպանաժողովի թուրքական պատվիրակությունը առաջարկել էր Ադրիանուպոլսի գրավումից հետո քաղաքի գերեզմանատները, մզկիթներն ու դամբարանները տրվեն օտար հպատակության: Բուլղարական պատվիրակությունը հայտարարել էր, թե իր կառավարությունը դրական է վերաբերվում այդ առաջարկին[3]:

Թուրքերը այս անգամ էլ դրժեցին պայմանավորվածությունը և հայտարարեցին, որ Ադրիանուպոլսի համար իրենք

---

[1] **«Ազդակ»**, № 1094, 23 դեկտեմբերի 1912 թ. (5 հունվարի 1913 թ.):

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 15, 19 հունվարի 1913 թ., տե՛ս նաև **«Հեռաձայն»**, № 2, 24 հունվարի (6 փետրվարի) 1913 թ.: Տե՛ս նաև **А. И. Могилевич**, **М. Э. Айрапетян**, *На путях к мировой войне 1914-1918 гг.*, էջ 142:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1320, 27 դեկտեմբերի 1912 թ. (9 հունվարի 1913 թ.):

կռվելու են մինչև վերջին չունչը: Ադրիանուպոլսի (Էդիրնեի) նահանգի կուսակալ Խալիլ բեյը հայտարարել էր, որ թշնամու ոչ մի զինվոր չի անցնի քաղաքի պարիսպներից ներս, քանի որ նրա պաշտպաններն ունեն ամեն ինչ՝ անսահման զենք-զինամթերք, պարեն և կենցաղային անհրաժեշտ պարագաներ: Բայց հակառակ դրա՝ ինքը՝ բերդաքաղաքի պաշտպանության ղեկավար Շուքրի փաշան*, գանգատվում էր, որ իր զորքի պարենը բավարար չէ երկարատև պաշտպանության համար: «Կովկասի լրաբերն» ավելացնում էր, որ իրեն հասած հավաստի տեղեկություններով բերդաքաղաքի զինվորների մեջ խիստ ընկած է կարգապահությունը, իսկ նրանցից շատերը, չբավարարվելով սննդի չափաբաժնով, ուտելիք են փնտրում մասնավոր տներում[1]:

Ադրիանուպոլսի անկումը կասկած չէր հարուցում մեծ տերությունների շրջանում: Լոնդոնի կոնֆերանսը Թուրքիային հայտարարեց, որ ոչինչ չեն կարող անել նրան օգնելու համար: Դեսպանների լոնդոնյան կոնֆերանսը Թուրքիային հարցում արեց՝ արդյոք նա համաձայն է ընդունելու մեծ տերությունների միջնորդությունը՝ առանց որևէ նախապայմանի: Մեծ տերությունների ճնշման տակ Թուրքիան ստիպված էր համաձայնել: Մշակվեցին նախաստորագրվելիք հաշտության պայմանները, և Թուրքիան ընդունեց դրանք: Սակայն բալկանյան դաշնակիցները չէին շտապում:

1913 թ. հունվարի 21-ից (փետրվարի 3-ից) սկսվեց Ադրիանուպոլսի ուժգին ռմբակոծումը: 40.000-անոց բերդապահ զորքը պարիսպները պաշտպանում էր համառությամբ՝ տալով մեծաթիվ զոհեր: Մեկ շաբաթ անց հրանոթային կրակը ուղղվեց նաև

---

* Շուքրի փաշան դաղստանցի էր, մոր կողմից՝ քուրդ: Ծնվել էր 1854 թ.: Կ. Պոլսի ամրություններ կառուցողների վարժարանն ավարտելուց հետո ուսանել էր Գերմանիայում և Ֆրանսիայում: Պանկալթիի զինվորական վարժարանում եղել էր հրետանու և ֆրանսերենի ուսուցիչ: 12 տարի պաշտոնավարել էր Էդիրնեում, որի ամրությունների մեծ մասը կառուցվել էր իր ժամանակ (տե՛ս **«Աւետաբեր»,** № 14, 5 ապրիլի 1913 թ.):

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 37, 14 փետրվարի 1913 թ.:

քաղաքի թաղեր՝ հասցնելով մեծ ավերածություններ, ոչնչացնելով նաև զենք-զինամթերքի և սննդի պահեստները[1]: Բուլղարական և հատկապես սերբական պաշարողական թնդանոթները զարհուրելի ավերածություններ էին տարածում Ադրիանուպոլսով մեկ: Ռմբակոծությունը չէր դադարում օրեր շարունակ:

Հունվարի 28-ին և 29-ին թուրքերը փորձեցին ճեղքել շրջապատումը և դուրս գալ բերդից, բայց ստիպված եղան նահանջել՝ տալով 1000-ից ավելի սպանված[2]:

Առանց այն էլ մեծ կորուստներ կրած բուլղար զորքը հետաձգում էր ընդհանուր գրոհը քաղաքի բերդապարիսպների վրա՝ նպատակ ունենալով առայժմ հրանոթային հեռահար կրակով ճնշել թշնամու կրակակետերը, որքան հնարավոր է կենդանի ուժի մեծ կորուստներ պատճառելով նրան՝ նախապատրաստել ընդհանուր հարձակումը: Անդադար հրետակոծություններին ամեն օր զոհ էին գնում ոչ միայն մեծ թվով թուրք բերդապահ զինվորներ, այլև քաղաքի տասնյակ խաղաղ բնակիչներ:

Զնայած դրան՝ Ադրիանուպոլիսը պաշտպանող թուրքական զորքը շարունակում էր համառ դիմադրությունը, որը չէր թուլանում նույնիսկ այն բանից հետո, երբ սերբական բանակի մեծաքանակ ստորաբաժանումներ օգնության էին եկել բուլղարներին: Թուրքական զորքի շարունակվող հաջող դիմադրությունը մեծապես պայմանավորված էր նրա հրամանատար Շուքրի փաշայի զորավարական տաղանդով ու համառությամբ: Ամիսներ տևած շրջապատման ընթացքում կարճահասակ ու նիհար այդ մարդը իր զորքերին ոգեշնչում էր նաև անձնական օրինակով: Նրա զորավարական արտակարգ շնորհքի և քաջ պահվածքի մասին զրույցներ էին շրջում ռազմաճակատով մեկ: Զուր չէ, որ թե՛ յուրայինները և թե՛ թշնամիները նրան անվանում էին «էդիրնեի առյուծ»[3]:

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 19, 24 հունվարի 1913 թ., № 39, 17 փետրվարի 1913 թ.: Տե՛ս նաև **В. А. Жебокрицкий**, Болгария во время балканских войн 1912-1913 гг., էջ 112:

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 27, 2 փետրվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1403, 21 մարտի (3 ապրիլի) 1913 թ.:

Ադրիանուպոլսի պաշտպանների հերոսական դիմադրությունը բացառություն չէր: Վերը հիշատակած «Համիդիե» հածանավը չարունակում էր ակոսել Միջերկրականի արևելյան ավազանը: 1912 թ. դեկտեմբերից մինչև 1913 թ. մարտի վերջը «Համիդիեն», տարբեր երկրների դրոշներ պարզած[1], խորտակել էր 10 նավ՝ հիմնականում հունական, որոնցից չորսը՝ մարտանավեր[2]: Դրանցից էին մեծ տարողության «Մակեդոնիան»[3] և «Ախելրոսը»: Հույները մարտանավեր էին ուղարկում թուրքական ռազմանավին հալածելու, բայց հաջողության չէին հասնում[4]: «Համիդիեն» հարձակվում էր, ավերներ գործում և անհետանում[5]:

Ադրիանուպոլիսը կամովին հանձնելու պահանջը Բ. Դոան կողմից մերժվելուց հետո բուլղարական զորքը վերսկսեց մարտական գործողությունները և շատ շուտով հասավ քաղաքի ամրությունների մերձակայքը՝ կտրելով դեպի Պոլիս նահանջի ուղիները, միաժամանակ սպառնալով շրջապատել թուրքական կենտրոնական զորախումբը:

1913 թ. մարտի 12 (25) լույս 13 (26)-ի գիշերը նշանավոր է Բալկանյան պատերազմի տարեգրության մեջ: Բուլղարական 100-հազարանոց զորքերը սերբական զորամիավորումների հետ առաջացան դեպի շրջապատված Ադրիանուպոլսի ամրությունները[6]: Քաղաքի թուրքական զորքն ուներ 72 հազար զինվոր[7], որոնք ընդգրկված էին 7 զորաբաժիններում[8]:

---

[1] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 50, 5 մարտի 1913 թ., **«Ժամանակ»,** № 1414, 1 (14) ապրիլի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1333, 10 (23) հունվարի 1913 թ., նույն տեղում, № 1371, 17 փետրվարի (2 մարտի) 1913 թ., **«Հեռաձայն»**, № 16 (1361), 7 (20) փետրվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1422, 9 (22) ապրիլի 1913 թ.,

[4] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1331, 8 (21) հունվարի 1913 թ.:

[5] Տե՛ս **«Ժամանակ»,** № 1384, 2 (15) մարտի 1913 թ.:

[6] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 58, 14 մարտի 1913 թ.:

[7] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1403, 21 մարտի (3 ապրիլի) 1913 թ.:

[8] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:

Գիչերվա ժամը 3-ին բուլղար-սերբ զորքերը հարձակման անցան: Առաջին հերթին գործի դրվեցին ֆրանսիական «Կրեզո» տիպի պաչարման խոշոր թնդանոթները: Հատկապես անվրեպ էր գործում սերբերի հրետանին: Սերբ հրետանավորները կրակի հեղեղ էին թափում պաչարման 38 և դաշտային 60 թնդանոթներից, որոնք զետեղվել էին ուղիղ բերդապարիսպների դիմաց՝ քիչ հեռավորության վրա[1]: Հենց թնդանոթները վճռեցին բերդաքաղաքի ճակատագիրը՝ տարբեր կողմերից քանդելով բերդապարիսպները, պատճառելով սարսափելի ավերներ: Արկերի բացած ճեղքերով սվինային հարձակումով քաղաք մտան բուլղարական և սերբական ստորաբաժանումները[2]: Միաժամանակ, հրետանին կրակն ուղղեց բնակելի թաղամասերի վրա, վասն զի հարկ էր խորտակել ու քանդել պաշտպանական պատնեշները՝ բացելու զորքի առաջխաղացման ճամփան[3]:

Քաղաքում անասելի խուճապ առաջացավ՝ իսկական Սոդոմ-Գոմոր: Ժամ առ ժամ թուլանում էր թուրքական ստորաբաժանումների դիմադրությունը, որոնք ռազմամթերքի մեծ կարիք ունեին[4]: Արկերի պակասության պատճառով բերդապարիսպների վրա և քաղաքում տեղադրված ավելի քան 500 թնդանոթներից գործում էր միայն 180-ը:

Չնայած ձեռնարկած բոլոր գրոհներին՝ բերդաքաքը այդ օրը արագ գրավելու բուլղար բանակի հրամանատարության հույսերն ի դերև ելան, քանզի թուրք կայազորը չէր հանձնվում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ քաղաքում դեռևս կային սննդի և զինամթերքի պաչարներ:

Մարտի 13 (25)-ի ամբողջ օրվա ընթացքում կատաղի կռիվներ էին մղվում բերդապարիսպների վրա ու քաղաքի թաղամասերում: Երկուստեք կրում էին հսկայական կորուստներ, բայց թուրքական կողմի զոհերի թիվը անհամեմատ մեծ էր:

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1408, 26 մարտի (8 ապրիլի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1401, 19 մարտի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 14, 5 ապրիլի 1913 թ.:

[4] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 53, 8 մարտի 1913 թ.:

Մարտի լույս 14-ի գիշերը բուլղարները բուռն հարձակում սկսեցին բերդապարիսպների արևելյան ճակատի ամրությունների վրա, ուր մաքառում էր թուրքական մի բազմաքանակ զորամաս: «Խլացուցիչ ռմբակոծում մը ամէն կողմէ կը պայթեր՝ սարսափ սփռելով քաղաքին մէջ»[1],- հաղորդում էր «Ժամանակ» թերթի թղթակիցը:

Մարտի 16-ին՝ բերդաքաղաքի արևելյան ամրությունների անկումից հետո, Շուքրի փաշան համոզվեց, որ կռիվը տանուլ է տրված: Առավոտյան ժամը 8-ին անթել հեռագրով նա հաղորդեց Պոլիս, որ բերդաքաղաքն այլևս հնարավոր չէ պաշտպանել: Դրանից անմիջապես հետո նրա հրամանով օդ հանվեցին սննդապաշարի և ռազմամթերքի պահեստները, պետական շենքերը, ոչնչացվեցին բոլոր ձիերը: Լայնածավալ բռնությունների էին ենթարկվում քաղաքի քրիստոնյաները: Եղան սպանությունների բազմաթիվ դեպքեր: Շուքրի փաշայի հրամանով ռազմական դրություն հայտարարված քաղաքում «կարգը խախտելու համար» կախաղան հանվեցին մի հույն և մի հայ եպիսկոպոսներ[2]:

Երբ պարզ դարձավ, որ մոտ է Ադրիանուպոլսի անկումը, եղավ մի պահ (մարտի 17), երբ «Միություն և Առաջադիմություն» կուսակցության կոմիտեն, դրությունն այլևս անհուսալի համարելով, մտադիր էր իշխանությունը հանձնել ուրիշների՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով[3]:

Մարտի 13 (26)-ի առավոտյան ժամը 10-ին բուլղարական առաջապահ զորամասերը մոտեցան Ղազի Շուքրի փաշայի զորակայանին: Այդ ժամանակ նա հրամայեց դադարեցնել կրակն ամբողջ գծով մեկ և պարզել սպիտակ դրոշակ: Զորակայան մուտք գործած բուլղար զինվորները փաշային ձերբակալեցին այն պահին, երբ նա իր սենյակում փաստաթղթեր էր այրում: Ձերբակալման ժամանակ նրա անձնապահ գունդը, որը կազմ-

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 26, 1 փետրվարի 1913 թ.:

[3] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»**, № 38, 16 փետրվարի 1913 թ.:

ված էր բոսնիացիներից ու ալբանացիներից, փորձեց դիմադրել, բայց փաշան կանխեց մինչև վերջ իրեն հավատարիմ մնացած թիկնազորի մտադրությունը[1] և հայտարարեց, որ անձնատուր է լինում զորավար Իվանովին[2]: Նա հանձնվեց քաղաքի պաշտպան զորքի մնացորդների հետ:

«Ժամանակ» թերթը մեջբերել էր բուլղարական «Միր» թերթի թղթակցի թռուցիկ հարցազրույցը Շուքրի փաշայի հետ: Այն հարցին, թե ինչպես և ինչու անձնատուր եղան, Շուքրի փաշան պատասխանել էր. «Կը սխալիք, ես անձնատուր չեղայ, այլ ձերբակալուեցայ: Պուլկարները ինձմէ աղէկ գիտեն ատիկա: Պուլկարներու գլխուն հրեղէն լաներ տեղացուցի: Կարելի եղածին չափ դիմադրեցի, սակայն ճակատագիրը այսպէս է եղեր»[3]:

Շուքրի փաշան ոչինչ ավելին չէր ասել:

Այսպիսով, հինգ ամիս (151 օր) տևած պաշարումից և երեք օրվա արյունալի կռիվներից (45 ժամ) հետո բալկանների ամենաամուր բերդաքաղաք Ադրիանուպոլիսը (Էդիրնե) ընկավ[4]:

Պատերազմների պատմության մեջ չի հիշատակված գեթ մի դեպք, երբ այս կամ այն, նույնիսկ անառիկ համարվող բերդը, ի վերջո, չընկնի:

Բերդերի կառուցման նպատակն ամենևին այն չէ, որ հարատև կանգուն մնան հաղթական բանակների առաջ: Դրանք միայն մի նպատակ ունեն՝ կարելիության չափ երկար ժամանակ կասեցնել թշնամու առաջխաղացումը և անգործության մատնել նրա բանակը:

Ադրիանուպոլիսը գերազանց հաջողությամբ կատարեց այդ խնդիրը և ընկավ պատվով՝ տասնապատիկ ավել կյանքեր խլե-

---

[1] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»****, № 60, 16 մարտի 1913 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:*

[4] *Տե՛ս* ***«Աւետաբեր»****, № 14, 5 ապրիլի 1913 թ., տե՛ս նաև* ***«Կովկասի լրաբեր»****, № 59, 15 մարտի 1913 թ.,* ***В. А. Жебокрицкий,*** *Болгария во время балканских войн 1912-1913 гг., с. 112:*

լով հակառակորդից: Եվ եթե նա կարողացավ այդքան երկար ժամանակ դիմանալ, ապա դրա համար Թուրքերն անչուշտ պարտական էին բերդապետ Շուքրի փաշայի երկաթյա կամքին և ռազմական հազվադեպ ընդունակություններին, որոնց համար նա իրավամբ իր սուլթանի կողմից արժանացել էր «Ղազի» («Անհաղթ») տիտղոսին:

Պատերազմում Ադրիանուպոլսի բերդապահ զորքի կատարած դերը Թուրքերի համար հսկայական էր: Այն իր շուրջն էր կենտրոնացրել բուլղարական բանակի մի շատ խոշոր մասը և նրան դատապարտել անգործության: Եթե Ադրիանուպոլիսը Կըրկ-Քիլիսե և մյուս բերդերի պես չուտ ընկած լիներ, ապա բուլղարները վաղուց մտած կլինեին Կ. Պոլիս:

Ադրիանուպոլիսը կիսեց ու թուլացրեց բուլղարական հաղթական բանակը, և դրանով իսկ Թուրքերը ժամանակ ստացան այն աստիճան ամրացնելու մայրաքաղաքի նախադուռը համարվող Զաթալջան, որ բուլղարներն իրենց առաջ ունեին գրեթե անխորտակելի մի պատնեշ:

Մեծ կորուստներ տալուց զատ ամբողջապես գերի ընկավ Ադրիանուպոլսի Թուրքական կայազորը՝ հրամանատար Շուքրի փաշայի հետ: Գերվեցին ուրիշ 14 փաշաներ ևս: Հաղթողների ձեռքն անցած ավարը, որը գնահատվում էր 150 միլիոն ֆրանկ, հավասարապես պիտի բաժանվեր սերբերի և բուլղարների միջև:

Ադրիանուպոլիսն ընկնելուց հետո Թուրքերը չէին ուզում այդ մասին խոսել անգամ, շատերը սին հույսեր էին փայփայում, իսկ անմիտ զանգվածը կերակրվում էր հետին նպատակով հերյուրված ստերով: Նույնիսկ լուրեր էին տարածվում, թե «հերոսական Թուրք բանակը գրավել է Բելգրադը»:

Ադրիանուպոլսի այդ մեծ հաղթանակի առթիվ Սոպրանիեում բուլղար վարչապետ Մ. Գեչովը հետևյալ հայտարարությունն էր արել. «Պուլղար զինուորը, իր սերպ եղբօր միացած, իր արիւնով, Պալքանեան պատմութեան մէջ գրեց փառաւոր էջ մը, որ համաշխարհային պատմութեան մէջ յիշատակելի պիտի մնայ: Էտիրնէ, Թրքական երկրորդ մայրաքաղաքը, Պալքաննե-րու առաջին բերդաքաղաքը, երէկ գրաւուեցաւ: Այն աւանդութիւնը թէ պուլկար զինուորները ամրութեանց դէմ չեն կրնար

պայքարիլ, հիմա օդը ցնդեցաւ: Երէկի յաղթանակը մեծ ուրախութեամբ մը կը լեցնէ պուլկար ազգը, որուն ցաւը մեծ է՝ խորհելով այն հերոսներուն՝ որոնք ինկան ճակատամարտի դաշտին վրայ»[1]:

Շուքրի փաշայի անձնատրութեան ժամին ձերբակալվեցին նաև քաղաքի պաշարման ժամանակ մեծ դեր խաղացած Ռիֆաթ, Իբրահիմ, Նազըմ, Հյուսամեդդին, Ազիզ փաշաները, Ռիզա, Քյազիմ, Ռեմզի, Էյուբ, Ադիլ, Ջեմալ բեյերը[2]:

Գերի վերցվեց 51 հազար զինյալ, որոնց թվում՝ չորս զորաբաժնի և 8 զորագնդի հրամանատարներ, 1200 սպա: Գերված սպաների մեջ կար 64 գերմանացի, որոնց թվում էին գնդապետներ Լեմանը և Տորչևսկին[3], 18 ռումինացի, 6 բելգիացի[4]:

Մեծ էին մարդկային կորուստները: Եթե հաշվի առնենք, որ Ադրիանուպոլսի պաշարման ժամանակ այստեղ թուրքական զորքի թիվը հասնում էր 72 հազարի, իսկ քաղաքը գրավելուց հետո այդ թիվը իջել էր 50 հազարի, դրանից հետևում է, որ թուրքերը տվել էին 22.000 սպանված ու վիրավոր[5]:

Հաղթողների ձեռքն անցավ հարուստ ավար: Գրավվել էր 460 թնդանոթ, որոնցից չուրջ 300-ը հետագա օրերին ուղարկվեց Զաթալջայի գիծը[6]: Շուքրի փաշայի հրամանով թուրք զինվորները հասցրել էին պայթեցնել զինամթերքի ու սննդի պահեստների մի մասը միայն. մնացածը անխաթար անցավ բուլղար զորամասերի ձեռքը: Քաղաքում թուրքերն ամբարել էին մեծ քանակությամբ սննդամթերքի պաշարներ՝ հատկապես աղ դրած և սառեցրած մսի զգալի պաշար[7]: Պահեստներից հանվեց չուրջ 18 հազար զինվորական վերնահագուստ, այդ թվում՝ 10 հազարից ավելի վերարկու[8]:

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1401, 19 մարտի (1 ապրիլի) 1913 թ.:
[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:
[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1401, 19 մարտի (1 ապրիլի) 1913 թ.:
[4] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 14, 5 ապրիլի 1913 թ.:
[5] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1403, 21 մարտի (3 ապրիլի) 1913 թ.:
[6] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 14, 5 ապրիլի 1913 թ.:
[7] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1326, 2 (15) հունվարի 1913 թ.:
[8] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1401, 1 ապրիլի 1913 թ.:

Քիչ չէին դաշնակից զորքերի կորուստները: Քաղաքի գրավման ժամանակ բուլղարների կորուստները կազմել էր 11 հազար մարդ[1], սերբերինը՝ 1167 սպանված և 1715 վիրավոր[2]:

Քաղաքի անկումից հետո այնտեղ մեծ չփոթ էր ու իրարանցում. փողոցներում ու հրապարակներում խոնված էին բոլորը՝ թուրքեր, բուլղարներ, հույներ, սերբեր, հայեր[3]: «Ժամանակ» թերթը հաղորդում էր, որ քաղաքում ժամ առ ժամ բազմապատկվում է բուլղարական զրոշների թիվը: Մահմեդականներից ոմանք էլ կրծքներին կախում էին խաչ[4]: Միաժամանակ չարունակվում էր բնակիչներից չատերի փախուստը քաղաքից, թեև բուլղարական զինվորական հրամանատարությունը խստիվ արգելել էր խտրական վերաբերմունքը մահմեդականների նկատմամբ: Եթե պատերազմից առաջ Ադրիանուպոլսի բնակիչների թիվը նրա կենտրոնական մասում (առանց արվարձանների) 75.000 էր, ապա 1913 թ. հունվարի դրությամբ իջել էր 50.000-ի, իսկ ապրիլի դրությամբ՝ մոտ 42.000-ի[5]:

Քաղաքի բնակչության կրած բոլոր դժվարությունները կիսում էր բերդաքաղաքի հայ բնակչությունը: Անցած ամիսների ռմբակոծությունների ընթացքում նա մեծ կորուստներ էր կրել: Ադրիանուպոլսում հայերը հիմնականում ապրում էին Աթ-Մեյդան թաղում, որը ռմբակոծության ժամանակ մեծ ավերածությունների էր ենթարկվել: «Հայ այրեր, կիներ ու տղաքներ ինչ տառապանքներու տոկացին, ինչ հերոսութիւններ ցուցուցին, ինչ անձնուիրութեամբ ապրեցան և մեռան...»,- գրում էր Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի Ադրիանուպոլսի թղթակիցը: Տեղի հայոց թեմի առաջնորդ Ղևոնդ վրդ. Դուրյանը գերազանց էր կատարում հայ համայնքի գոյապահման կազմակերպման գործը: «Եւ հպարտութեամբ կը յիշենք,- նշում էր «Աւետաբերը»,-

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 14, 5 ապրիլի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1408, 26 մարտի (8 ապրիլի) 1913 թ.:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1410, 28 մարտի (10 ապրիլի) 1913 թ.:

[4] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1409, 27 մարտի (9 ապրիլի) 1913 թ.:

[5] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1326, 2 (15) հունվարի 1913 թ.:

թե այս բազմաթիվ ոչ-պատերազմի հերոսներուն մէջ կը գտնուի նաեւ Հայ եկեղեցական մը, տեղւոյն Առաջնորդ Ղեւոնդ վարդ. Դուրեան: Մեր լսածին նայելով այս համակրելի եկեղեցականը հրաւիրուած է պաշարումէն առաջ թողուլ իր թեմը եւ Պոլիս գալ, սակայն ան ընդունած չէ այդ հրաւէրը՝ նախապատիւ համարելով իր հօտին մէջ մնալ, ինչ որ ալ ըլլայ արդիւնքը: Եւ պաշարման եւ սովի եւ տառապանքի երկար օրերուն մէջ իր ժողովուրդին հետ ապրող, անոնց զրկանքի եւ վիշտի ընկեր ըլլալու յօժարող: Յիսուսի արժանաւոր այս աշակերտին մեր եղբայրական ձեռքը կ'երկարենք, անոր վրայ մեր հիացումը կը յայտնենք եւ Աստուծոյ օրհնութիւնը կը հայցենք»[1]:

Պաշարման ամիսներին հայ և քրիստոնյա մյուս բնակիչներին անմոռանալի աջակցություն ցուցաբերեց քաղաքում ռուսական հյուպատոս Կլիմենկոն: Նրա ջանքերով հյուպատոսարանն իր պաշտպանության տակ էր վերցրել քաղաքի ռուսաց գաղութը և քրիստոնյա ազգաբնակչությանը: Կլիմենկոյի կարգադրությամբ հյուպատոսարանը սովամահության չենթարկվելու համար մթերք և դրամ էր բաժանում իր պաշտպանության տակ առած բնակչությանը:

Ռմբակոծությունից սպանված կամ վիրավոր հայ բնակիչների թվին գումարվել էին թուրքական կայազորում ծառայող հայ զինվորների կորուստները:

Քաղաքը գրավելիս թուրքական բանակի հայ զինվորների մի մասը ապաստանել էր հայկական եկեղեցում և հայերի տներում: Շուքրի փաշայի և գերի ընկած բոլոր թուրք զինվորականների նկատմամբ հսկողություն սահմանվեց, իսկ գերված հայ, հույն և հրեա զինվորներն ազատ արձակվեցին: Տեղի առաջնորդի կարգադրությամբ հայ գերյալները տեղավորվեցին հայկական վարժարանի շենքում: Այստեղ մի քանի օր կիսաքաղց վիճակում մնալուց հետո նրանք հեռացան տարբեր կողմեր՝ յուրաքանչյուրն իր գլխի ճարը տեսնելու:

Բուլղար և սերբ կառավարությունների հրահանգով Ադրիա-

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»**, № 14, 5 ապրիլի 1913 թ.:

նուպոլսի գրավման ժամանակ թուրքական կայազորի կազմում գերի ընկած հայ զինվորները չատ չուտով ազատ արձակվեցին և ստացան որոշ գումար, ապա նրանց թույլատրվեց վերադառնալ հայրենիք:

Գերությունից ազատված հայ երիտասարդների մի մասը՝ հիմնականում բրուսացիներ և սասունցիներ, անցավ Կովկաս և հավաքվեց Թիֆլիսում՝ հայրենիք վերադառնալու համար: Բայց այնտեղ նրանց խորհուրդ տվեցին առայժմ չմեկնել Թուրքահայաստան՝ զգուշացնելով, որ թուրք իշխանություններն անպայման կբռնեն և նորից կուղարկեն պատերազմի դաշտ:

Բայց հայրենիքի կարոտն ուժեղ էր ամեն խոչընդոտից, ուստի նրանց մի մասը մեկնեց Երևան, Ալեքսանդրապոլ և Կարս՝ սահմանին մոտ լինելու, որպեսզի հարմար պահի մեկնեին հայրենիք՝ պաշտպան կանգնելու իրենց հարազատների կյանքին և ունեցվածքին:

Գերված Շուքրի փաշան Ադրիանուպոլսից ուղարկվեց Սոֆիա: Նրա հետ էին թնդանոթաձիգների հրամանատար Իսմայիլ փաշան և Էդհեմ փաշան, նաև՝ ուրիշ 10 բարձրաստիճան զորահրամանատարներ[1]:

Մարտի 29-ի վաղ առավոտյան Շուքրի փաշան հասավ Սոֆիայի երկաթուղային կայարան: Նա միայն սուր էր կրում: Բուլղարական կառավարությունը նրան ընդունեց հաղթողին վայել վեհանձնությամբ: Հանգստանալու և կազդուրվելու համար զորավարին տրամադրվեց մայրաքաղաքի ամենաչքեղ ապարանքներից մեկը[2]:

Ադրիանուպոլսի ակնումը թուրքերին խորը հուսահատության մատնեց, մյուս կողմից ծնում էր վրեժխնդրության անհագ զգացումներ: Թուրքական մամուլի համարյա բոլոր օրգանները թուրք բնակչության մեջ ատելություն էին բորբոքում բոլոր քրիստոնյաների, հատկապես կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ:

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1406, 24 մարտի (6 ապրիլի) 1913 թ.:

[2] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1409, 21 մարտի (3 ապրիլի) 1913 թ.:

Ադանայում Թուրքերեն լույս տեսնող «Բաբաղան» թերթը 1913 № 30-ում բոլոր Թուրքերին կոչ էր անում ոխակալության. «Հայրենակիցնե՛ր, իմացա՞ք, որ Թշնամին հազարավոր մարդկային կորուստներ կրելուց և միլիոններ ծախսելուց հետո, վերջապես, գոհացրեց իր ախորժակը Էդիրնեն նույնպես գրավելով: Վաղը այնտեղ, ինչպես ամեն տեղ, մեր մզկիթների վրա պիտի տնկվեն խաչեր և մեր մինարեթների վրա զանգեր պիտի կախվեն: Մեր աղջիկների պատիվը պիտի բռնաբարվի, միաժամանակ Ղուրանի էջերը պիտի պատառ-պատառ արվեն: Թշնամին իր խմելիք գինին ներկելու է իսլամական արյան մեջ: Ո՞վ գիտե, թե իր սուր ատամներով նա որչա՞փ Թուրքերի միս պիտի ծամի: Հայրենակիցներ, չորս ամսից ի վեր չկարողացանք ազատվել այդ գայլերից, որոնք մեզ չրջապատել են: Մեր նահանգից (Ադանայի – Հ. Ս.) 6-7 անգամ մեծ մի երկիր (նկատի ունի եվրոպական Թուրքիայի մեծ մասը՝ Ռումելիան – Հ. Ս.) արդեն գտնվում է Թշնամու ձեռքում»[1]:

Այնուհետև «Բաբաղանը», այլազգիների նկատմամբ Թուրք տարրի դարերով կատարած անմարդկային արյունալի արարքները վերագրելով եվրոպացիներին՝ որպես նրանց հատուկ չարիքներ, գրում էր. «Սովալլուկ Թշնամին իսլամական միս կերավ և իր ծարավը հագեցրեց Թուրքական արյուն խմելով: Նրա հրամանատարները մեր աղջիկներին ստիպեցին պարել մեր [Էդիրնեի] մզկիթներում, իսկ մեր գերեզմանատները վերածեցին տոնավաճառների: Հայրենակի՛ց այս բոլորը չմոռանաս»:

Երբ բալկանյան ռազմաճակատներում չարունակվում էին արյունալի կռիվները, երբ պատերազմող կողմերի ներկայացուցիչներից յուրաքանչյուրն այդ նույն ժամանակ Լոնդոնում առավելագույնն էր անում իր երկրի համար ավելի շահեկան արդյունքներ ձեռք բերելու նպատակով, այդ նույն ժամանակ իրենց ազգի հոգսերով ու ապագայով մտահոգ հայ գործիչները, ինչպես նաև Հայաստանի եվրոպական և ռուսաստանյան բարեկամները չարունակում էին մեծ ջանքեր Հայկական նահանգ-

---

[1] ***«Ժամանակ»**, № 1409, 21 մարտի (3 ապրիլի) 1913 թ.:*

ներում նոր զանգվածային կոտորածների առաջն առնելու համար:

Մահմեդականների վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ այնքան սպառնալից էր դարձել, որ մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպանները իրենց կառավարություններին հուշում էին Բոսֆորի ջրերում խարիսխ ձգած իրենց ռազմանավերից պահակազորք մտցնել օսմանյան մայրաքաղաք:

Եթե այսպես սպառնալից էր դրությունը Պոլսում՝ եվրոպացիների աչքի առաջ, ապա կարելի էր պատկերացնել, թե ինչպիսին էր վիճակը հայաբնակ խուլ վայրերում, ուր հայկական մեծ կոտորածների հիշողությունը դեռ թարմ էր ամենքի մեջ:

Այժմ հարց էր ծագում, թե Ադրիանուպոլսի անկումով վերջանալու է արդյոք պատերազմը, թե՞ բուլղարները ստիպված պիտի լինեն իրենց բոլոր ուժերը հավաքել՝ խորտակելու նաև Զաթալջան և մտնելու օսմանյան մայրաքաղաք:

Ադրիանուպոլսի անկումով և Զաթալջայի ակնկալվող գրոհով անհանգստացած Ռուսաստանը բուլղարներից պահանջեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները: Մտածելով, որ բուլղարները կարող են հիմնավորվել նեղուցներում, Ռուսաստանը մարտական պատրաստության բերեց սևծովյան նավատորմը և պատրաստվեց դեսանտ իջեցնել Կոստանդնուպոլսում:

Ինչպես 1912 թ. նոյեմբերին, այնպես էլ հիմա Ռուսաստանը ձգտում էր այն բանին, որ բուլղարական բանակի Կոնստանդնուպոլիս մտնելու դեպքում Բոսֆորի ջրերում հզոր ռուսական ուժեր կենտրոնացած լինեին, որոնք ընդունակ կլինեին իրենց ներկայությամբ իսկ անհրաժեշտ ճնշում գործադրելու, եթե Կոստանդնուպոլսի և նեղուցների վերաբերյալ հարցը ընթանար Ռուսաստանի համար ոչ ցանկալի ուղղությամբ: Ուստի նա Բուլղարիային առաջարկեց չնախաձեռնել Զաթալջայի գրոհը և բավարարվել Էնոս-Միդիա գծով: Փոխարենը նա խոստացավ սատարել Բուլղարիայի պահանջները ռազմատուգանքի հարցում:

Թուրք-բալկանյան պատերազմը չարունակվում էր:

Դաշնակից բալկանյան երկրների տարած հաղթանակները մի պահ մոայլվեցին մակեդոնացի մի հույն անարխիստի կողմից 1913 թ. մարտի 5-ին Հունաստանի Գեորգ I թագավորի սպանությամբ[1]: Դա կարճատև հույս ներշնչեց Թուրքերին, թե դա կարող է ռազմաճակատի հունական հատվածում նոր բարդությունների պատճառ դառնալ: Բայց այդ սպանությունը ոչ մի փոփոխություն առաջ չբերեց կռվի դաշտում, և դաշնակից զորքերը չարունակեցին իրենց հարձակողական գործողությունները:

1913 թ. մարտ ամսին խոշոր հաջողությունների հասան հունական զորքերը: Նրանք ծանր մարտերով առաջացան Էգեյան ծովի հարակից եզերքներով և վերջապես գրավեցին Սալոնիկը[2]:

Բալկանյան դաշնակիցների նոր հաղթությունները եվրոպական տերություններին ստիպեցին նորից դիմումներ անել պատերազմող կողմերին՝ վերջ տալու պատերազմին և հաշտություն կնքելու:

Բայց այդ միջոցին տեղի ունեցավ մի ուրիշ դեպք, որը մթագնեց քաղաքական հորիզոնը և սպառնում էր առաջ բերել միջազգային նոր բարդություններ: Չերնոգորցիներն սկսել էին ռմբակոծել Սկյուտարի (Շքոտրա) բերդը, որին տիրանալ էր հավակնում Ալբանիան: 1913 թ. ապրիլի 11 (24)-ին չերնոգորյան զորքերը ուժգին գրոհով մտան Սկյուտար[3]: Գործին խառնվեց Ավստրիան և առաջարկեց բերդը հանձնել իր հովանավորյալ Ալբանիային: Նա գտնում էր, որ Սկյուտարը ապագա անկախ Ալբանիայի ավանդական մայրաքաղաքն է: Բոլորը գիտեին, որ Ավստրիան աչք ունի Ալբանիայի վրա, որը իր ազդեցության

---

[1] Տե՛ս **K. Рот**, *История христянских государств Балканского полуострова, С.-Петербург, 1914, էջ 118:*

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Еджидио Иветич**, *Балканските войни, էջ 181:*

տակ գցելով՝ նա այդ երկրի տարածքով նույնպես ելք կունենար դեպի ծով: Այն բանից հետո, երբ Զերնոգորիան անուշադրություն մատնեց այդ պահանջը, ավստրիական կառավարությունը վերջնագիր ներկայացրեց նրան՝ սպառնալով գործնական միջոցների դիմել, եթե վերջինս համառի չկատարել Սկյուտարի նկատմամբ իր պահանջը:

Սակայն Զերնոգորիան շարունակում էր պաշարած պահել Սկյուտարը՝ իր հույսը կապելով Ռուսաստանի աջակցությանը, որը, սակայն, պատրանքային եղավ: Թեև Ռուսաստանի հասարակական կարծիքը պահանջում էր անվերապահ աջակցել Զերնոգորիային, բայց կառավարությունը բռնել էր չափազանց զգուշավոր դիրք:

Զերնոգորիայի կողմից կտրական մերժում ստանալուց հետո Ավստրիան դիմեց Լոնդոնի դեսպանախորհրդին և առաջարկեց պետությունների միացյալ ծովային ցույց կազմակերպել: Առաջարկն ընդունվեց:

Սկզբում ենթադրվում էր, որ Ռուսաստանն այնուամենայնիվ չի մասնակցի Զերնոգորիայի դեմ ուղղված ծովային ցույցին, մանավանդ որ երկրի հասարակական կարծիքը սաստիկ վրդովված էր Ավստրիայի դեմ: Բայց կառավարությունը հայտարարեց, որ Ռուսաստանը միանում է եվրոպական մեծերի որոշմանը, թեև իր նավերը չեն ուղարկվելու Զերնոգորիայի ափերը:

Ռուսական դիվանագիտությունը քաջ գիտակցում էր, որ ծովային ցույցը ոչ միայն ուղղված է Զերնոգորիայի, այլև նրա դաշնակիցներ Սերբիայի, Բուլղարիայի և Հունաստանի, լայն առումով սլավոնական աշխարհի, հետևաբար՝ անուղղակի հենց Ռուսաստանի դեմ:

Ռուսական կառավարության այդ զիջողականությունը թելադրված էր համաեվրոպական ընդհանուր աղետալի պատերազմ առաջ գալու վախով, պատերազմ, որին երկիրը դեռ պատրաստ չէր:

Այսպիսով, Եոյակ դաշնություն կազմող պետությունները (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա) ապացուցեցին, որ Եոյակ համաձայնության պետությունների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) համեմատ իրենց ձայնը հնչում է ավելի բարձր:

Ամբողջ քրիստոնյա աշխարհի առաջ նրանք մեկ միլիոն հետամնաց, եվրոպական քաղաքակրթությանը համարյա անհաղորդ ալբանացիների համար ստեղծեցին առանձին պետություն, թեև պետք է նշել, որ մյուս կողմից ալբանացիները արժանի էին այդ մեծ երջանկությանը, քանզի թուրքական բռնակալական լծից իրենց ազատությունը նրանք նվաճել էին զենքի ուժով:

1913 թ. մարտը պատմության մեջ մտավ որպես Եվրոպական Թուրքիայում օսմանյան վերջին հենակետերի ջախջախման ամիս: Մեկը մյուսի հետևից ընկան մի չարք քաղաքներ: Ադրիանուպոլսի անկումից հետո բուլղարները նետվեցին Կոստանդնուպոլսի վրա և կանգ առան նրանից ոչ հեռու՝ Զաթալջայի ամրությունների դիմաց[1]:

Բուլղարական բանակի հրամանատարության կողմից մշակված ռազմական պլանի համաձայն՝ Զաթալջայի ամրությունների գրավմանը պիտի մասնակցեր 225 հազար բուլղար զինվոր: Այդ ճակատի հրամանատար Բոբրիկովը հայտարարել էր, որ իր բանակի պահպանման օրական ծախսը մեկ միլիոն ֆրանկ է, և որ արդեն ծախսվել է 60 միլիոն[2]: Մարտի 11 (24)-ից մինչև մարտի 19 (ապրիլի 2)-ը Զաթալջայի համար ճակատամարտում թուրքերը հերթական սոսկալի պարտություններ կրեցին:

Հարց էր ծագում. Ադրիանուպոլսի անկումով արդյո՞ք վերջանալու է պատերազմը, թե՞ բուլղարները ստիպված պիտի լինեին հավաքել իրենց վերջին ուժերը, խորտակել նաև Զաթալջան և մտնել Կ.Պոլիս:

---

[67] Տե՛ս **К. Рот**, *История христянских государств Балканского полуострова, էջ 127:*

[67] Տե՛ս **«Ժամանակ»**, *№ 1345, 21 հունվարի (3 փետրվարի) 1913 թ.:*

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Հսկայական էր Թուրք-բալկանյան պատերազմում երկու կողմերի զոհերի թիվը:

Թուրքիան տվել էր 200.000 սպանված: Միայն Կըրխ-Քիլիսեի, Լյուլե-Բուրգազի և Զաթալջայի մոտ զոհվել էր 50.000 մարդ, որից 30.000-ը՝ Զաթալջայում: Սովից ու տարափոխիկ հիվանդություններից օրական մեռել էր 600-700 մարդ: Գերվել էր 15.000 զինվոր ու սպա: Միայն Մակեդոնիայում ու Թրակիայում անհետ կորել էին 15.000 կին, երեխա, ծեր:

Բալկանյան դաշնակիցների զոհերի թիվը մոտավորապես նույնն էր, որքան Թուրքիայինը:

Այդպիսով, բալկանյան առաջին պատերազմում երկու կողմերից միայն սպանվածների թիվը կազմում էր մոտավորապես 500.000 մարդ: Բազմապատիկ էր վիրավորների թիվը[1]:

Կարելի էր պատկերացնել, թե մարդկային անչնչացած մարմինների ի՞նչ հսկայական կուտակում էր դա: Պետք է նաև երևակայել, թե պատերազմում ամուսինների, եղբայրների, ազգականների ու մերձավորների մահվամբ քանի՞-քանի միլիոնավոր մարդիկ էին նետվել դժբախտության գիրկը:

Ընդամենը մի քանի ամսում Թուրքիան կորցնում էր եվրոպական գրեթե բոլոր տիրույթները: Ադրիանուպոլսի և Զաթալջայի անկումը կատարելապես սարսափի էր մատնել Թրքությանը, որն այլևս ոչ մի ուժ չուներ կոթնելու եվրոպական մասին:

Այնպես որ՝ երբ եվրոպական տերությունների ներկայացուցիչները կրկին հաշտության առաջարկ ներկայացրին Բ. Դռանը, վերջինս առանց վարանման անմիջապես ընդունեց այն և 24 ժամը չբոլորած՝ հաղորդեց հաշտության տրամադիր լինելու և պետությունների ներկայացրած պայմաններն ընդունելու մասին:

Շատ զարմանալի էր. անչափ նվաստացած Թուրք ժողո-

---

[1] Տե՛ս **«Նոր մամուլ»** (Երևան), № 23 (81), 12 մայիսի 1913 թ.:

վուրդն առանց այլևայլության համակերպվում էր ստեղծված նոր դրությանը և ցույց չէր տալիս ոչ մի ըմբոստություն: Բայց հատկապես զարմանալին այն էր, որ նշված իրողություններին համակերպվել էր նաև Իթթիհադը: Հաշտության պայմանագիր կնքելով՝ Կ. Պոլսի երիտթուրքական կառավարությունն ավելի մեծ պատասխանատվություն էր ստանձնում, քան դրանից առաջ հանձն էր առել Քեմիլ փաշայի իթթիլաֆական կաբինետը, որը ժամանակին ընդունել էր պետությունների միջնորդությունը՝ Թուրքիային ապահովելով տնտեսական և քաղաքական առավելություններ:

Թուրքիայի պարտությունը միանգամից լուծում էր երկու մեծ՝ մակեդոնական և ալբանական հարցերը: Դրանով տարօրինակ զուգադիպությամբ լուծվում էր նաև 18-րդ դարի վերջին քառորդից սկսած և ամբողջ 19-րդ դարի ընթացքում տևած միջազգային դիվանագիտության ամենակնճռոտ հարցերից մեկը՝ արևելյան հարցը, հենց այն ազգերի ձեռքով, որոնք այդ հարցի գլխավոր տարրերն էին:

Ահա այս պայմաններում էր, որ եվրոպական մեծ պետությունները բալկանյան դաշնակիցներին հասկացրին, որ իրենք մտադիր չեն Թուրքիային թողնել բախտի քմահաճույքին, թույլ տալ, որ սկսվի օսմանյան կայսրության փլուզումը:

Իբրև հաղթողներ՝ բալկանյան դաշնակից երկրները Թուրքիայից պահանջում էին պատերազմական տուգանք, բայց մեծ պետությունները դեմ էին դրան: Դաշնակիցները դեռ ուժեր ունեին արշավելու Կ. Պոլսի վրա և կատարելու պատմական առաքելություն՝ վերջ տալով Թուրքական վայրագ և բարբարոս իշխանությանը, որի գոյությունը հակառակ էր 20-րդ դարի քաղաքակրթական արժեքներին: Բայց մեծ պետությունները փրկում էին նրան:

Ապրիլի 10 (23)-ին դեսպանների Լոնդոնի կոնֆերանսը դաշնակիցներին առաջարկեց դադարեցնել ռազմական գործողությունները և հաշտության բանակցություններ սկսել Թուրքիայի հետ: Կոնֆերանսը նաև կովող կողմերին առաջարկեց հաշտության պայմանագրի նախագիծ: Բայց բալկանյան դաշնակիցները դանդաղում էին այն ընդունել: Բուլղարիան

պահանջում էր, որ պայմանագրում նշվեր այն սահմանագիծը, որն իրեն ավելի կմոտեցներ Կոստանդնուպոլսին: Սերբիան ազատ ելք էր պահանջում դեպի Ադրիատիկ ծով: Հունաստանը չէր ցանկանում տերություններին վստահել կղզիների և Ալբանիայի հարավային սահմանների ճակատագրի լուծումը: Բուլղարիայի պահանջները մերժվեցին Լոնդոնի կոնֆերանսի կողմից: Սերբիային դեպի Ադրիատիկ ազատ առևտրային ելք տրամադրելու հարցը որոշվեց ոչ թե ընդգրկել պայմանագրում, այլ՝ Ալբանիայի ստատուսի մեջ: Հունաստանը հատկապես եռանդով էր ներկայացնում իր պահանջները՝ վախենալով, որ կղզիների և Ալբանիայի սահմանի մասին հարցը լուծելու ժամանակ մեծ տերությունները հաշվի չեն նստի իր շահերի հետ:

Այդ ամենին միանում էին Ռումինիային վերաբերող խնդիրները:

Դեսպանների Լոնդոնի կոնֆերանսը բուլղարա-ռումինական հակամարտությունը քննարկելիս որոշեց հարցը տեղափոխել Պետերբուրգում կայանալիք դեսպանների խորհրդակցություն: 1913 թ. մայիսի 9-ին դեսպանների խորհրդակցությունը Պետերբուրգում որոշում կայացրեց, որով Սիլիստրիան անցնում էր Ռումինիային: Ռումինիայի մնացած տարածքային պահանջները մնացին չբավարարված: Բուլղար-ռումինական հակամարտության սրացման ընթացքում Ավստրո-Հունգարիան և Իտալիան Բուլղարիային առաջարկեցին Սալոնիկը՝ որպես հատուցում Սիլիստրիայի դիմաց՝ դրանով ցանկանալով Բուլղարիային իրենց կողմը քաշել, սրել հակասությունները նրա ու Հունաստանի միջև և այսպիսով քայքայել Ռուսաստանի ստեղծած բալկանյան բլոկը, որն առաջին հերթին ուղղված էր Եռյակ դինակցության դեմ: Պետերբուրգի խորհրդակցությունում Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի դեսպանները հանդես եկան Սալոնիկը Բուլղարիային հանձնելու առաջարկությամբ, բայց վճռական դիմադրության հանդիպեցին Սազոնովի և Ռուսաստանի մյուս երկու դաշնակիցների կողմից[1]:

---

[1] *Տե՛ս* ***А. А. Могилевич, М. Э. Айрапетян****, На путях к мировой войне 1914-1918 гг., стр. 155:*

Տերությունները, հատկապես Անգլիան, 1913 թ. մայիսի կեսերից Լոնդոնի կոնֆերանսում մեծ ակտիվություն էին հանդես բերում դադարեցնելու ռազմական գործողությունները և պատերազմող կողմերին ստիպելու կնքել հաշտության պայմանագիր: Բայց պայմանագրի ստորագրումը ձգձգվում էր: Վերջապես Անգլիան վճռականապես ասպարեզ իջավ: Արտգործնախարար Էդուարդ Գրեյը կտրականապես հորդորեց բալկանյան դաշնակիցներին, որ եթե նրանք չստորագրեն տերությունների մշակած հաշտության նախապայմանների փաստաթուղթը, ապա ինքն այլևս անիմաստ է համարում նրանց ներկայացուցիչների ներկայությունը Լոնդոնում: Նա համանման առաջարկ արեց նաև կոնֆերանսի օսմանյան պատվիրակության ղեկավարին: Բուլղարական և օսմանյան պատվիրակություններն անմիջապես արձագանքեցին Գրեյի առաջարկությանը, իսկ մյուսները հրահանգ ստանալու համար դիմեցին իրենց կառավարություններին, որոնց դրական պատասխանը չուշացավ: Բոլորի արձագանքը եղել էր դրական:

1913 թ. մայիսի 17 (30)-ին ստորագրվեց հաշտության նախնական պայմանագիր դաշնակիցների և Թուրքիայի միջև:

Այսպես ավարտվեց 8 ամիս՝ 5 (18) հոկտեմբերի 1912 թ. մինչև 1 (30) մայիսի 1913 թ. տևած առաջին Բալկանյան պատերազմը:

Պայմանագիրը ստորագրելուց հետո Սեյնթ Ջեյմսի պալատում ներկա գտնվող Էդուարդ Գրեյը ֆրանսերեն ճառով Անգլիայի թագավորի ու կառավարության անունից գոհունակություն հայտնեց բոլոր պատվիրակներին՝ հաշտության թուղթը ստորագրելու պատրաստակամություն դրսևորելու համար: Հաշտության պայմանագրի կնքումից հետո Գրեյը մի ուրիշ ճառով կատարյալ խաղաղություն ու բարգավաճում մաղթեց պատերազմի բովով անցած բոլոր երկրներին[1]:

Բալկանյան առաջին պատերազմի թողած ավերներն ու մարդկային կորուստները հսկայական էին մասնակից բոլոր երկրների համար:

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 23, 7 հունիսի 1913 թ.:

Տարածքային և կենդանի ուժի մեծ կորուստներ էր կրել Թուրքիան:

Ինչպես Եվրոպական, այնպես էլ Ասիական Թուրքիայի բաժանումը Եվրոպան համարում էր միայն հեռավոր ապագայի խնդիր: Բայց դիվանագիտությունը սխալվեց. նա չէր նկատել այն պատճառները, որոնք խարխլում էին Թուրքական պետության հիմքերը: Դա թույլ էր տվել կարճ ժամանակում ծնկի բերել ահարկու կայսրությունը: Բոլոր այն ծրագրերը, որոնք մշակված էին Թուրքիան միայն հեռավոր ապագայում բաժանելու ենթադրության վրա, Բալկանյան պատերազմի արդյունքում քանդվեցին:

Տրիպոլիտանական պատերազմում իր աֆրիկյան, իսկ բալկանյան պատերազմում իր եվրոպական երկրները կորցնելուց հետո Օսմանյան կայսրությունը դառնում էր սոսկ ասիական մի պետություն: Բալկանյան պատերազմից առաջ Թուրքիան Եվրոպայում տեր էր 170.000 քառակուսի կիլոմետր կազմող մի երկրամասի: Միայն Եվրոպայում Թուրքիան ուներ այնքան տարածություն, որքան ունեին Բուլղարիան և Հունաստանը միասին վերցրած: Ըստ հաշտության համաժողովին ներկայացրած դաշնակիցների առաջարկի, Եվրոպայում Թուրքիային մնացած հողամասը պիտի պարունակեր Զաթալջայի շրջանը, այսինքն՝ մոտավորապես Ադրիանուպոլսի կուսակալության կեսը, որը կազմում էր 20.000 քառ. կմ: Եվրոպայում Թուրքական այդ տարածքը վերածվեց Ասիական Թուրքիայի հավելվածի: Հավելենք նաև, որ ըստ «Պահակ» (Բոստոն) թերթի հաղորդած տվյալների, Օսմանյան կայսրության եկամուտների մեկ քառորդը ստացվում էր Եվրոպական Թուրքիայից, որի կորուստը մեծ հարված էր կայսրության տնտեսության համար[1]:

Կտրուկ տեղաշարժեր էին կատարվել նաև Օսմանյան կայսրության բնակչության թվական կազմում: Մեկ տարի դրանից առաջ նրա բնակչությունը հաշվվում էր 20 միլիոն մարդ, որի 8 միլիոնը՝ Եվրոպայում, 2 միլիոնը՝ Աֆրիկայում: Այժմ այդ կայս-

---

[1] Տե՛ս **«Պահակ»**, № 28, 21 օգոստոսի 1913 թ.:

բությունն ուներ միայն 11 միլիոն ժողովուրդ, որից մեկ միլիոնը Կ. Պոլսում և նրա շրջակայքում: Մինչև պատերազմը Թուրքիայի եվրոպական մասի բնակչությունն իր թվով ավելին էր Բուլղարիայի և Հունաստանի բնակչությունից միասին վերցրած, իսկ այժմ այնտեղ Թուրքիային մնացած 20.000 քառ. կիլոմետրի վրա հաշվվում էր 2 միլիոնից էլ պակաս բնակչություն:

Մարդկային հսկայական կորուստներ էին ունեցել բոլոր պատերազմող կողմերը: Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը, Չերնոգորիան և Թուրքիան միասին վերցրած տվել էին ոչ պակաս 400.000 սպանված և պատերազմի վրա ծախսել էին 2.6 միլիարդ ռուբլի[1]:

Գնահատելով Թուրքիայի դեմ 1912 թվականին մղված բալկանյան պատերազմի արդյունքները՝ Լենինը գրել է. «Չնայած Բալկաններում կազմակերպվել է միապետությունների դաշինք և ոչ թե հանրապետությունների դաշինք, չնայած դաշինքը գոյացել է պատերազմի շնորհիվ և ոչ թե հեղափոխության,- չնայած դրան, խոշոր առաջընթաց քայլ է արված ամբողջ Արևելյան Եվրոպայում միջնադարի մնացորդները կործանելու համար»[2]:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

Հայկական վաշտը աշխարհազորի կազմում մասնակցեց բուլղարական առաջին պատերազմի ավարտական փուլի մի շարք մարտերի: Պատվով կատարելով Մարմարա ծովի ափերի պաշտպանությունը՝ նա 1913 թ. հունվարի 22-ին մասնակցում է Մերեֆտի քաղաքի ազատագրմանը: Վաշտի հարձակման տեղամասում թուրքերը մեծ կորուստներ կրեցին, հարյուրավոր ենիչերիներ գերի հանձնվեցին:

Հունվարի 23-ին Շար-Քեո շրջանում վաշտը մարտի բռնվեց

---

[1] *Տե՛ս* ***«Պահակ»****, № 28, 21 օգոստոսի 1913 թ.:*

[2] ***Վ. Ի. Լենին****, ԵԼԺ, հատ. 22, էջ 189:*

թուրքական մեծաքանակ դեսանտի հետ և իր համարձակ գործողություններով նպաստեց նրա արագ ջախջախմանն ու թուրքական զորքի մնացորդներից քաղաքի մաքրմանը: Այդ շրջանում շրջապատված թշնամու ոչնչացմանն ուղղված դաժան մարտերը շարունակվեցին հինգ օր՝ մինչև 1913 թ. հունվարի 28-ը:

Այդ խոշոր ռազմական գործողության ավարտի ընթացքում վաշտը հունվարի 29-ին նորից սկսեց ծովափերի պաշտպանությունը և նվիրված ծառայեց մինչև 1913 թ. մարտի 22-ը ներառյալ: Մի քանի անգամ նա հաջողությամբ խափանեց թուրքերի՝ դեսանտ իջեցնելու փորձերը:

Դրանից հետո գերազանց ծառայության և մարտական վաստակների համար բուլղարական բանակի հրամանատարությունը Անդրանիկ Օզանյանին շնորհեց փոխտեղակալի սպայական կոչում, 8 կրտսեր հրամանատարների՝ կրտսեր ենթասպայի կոչում և 16 զինվորների՝ եֆրեյտորի կոչում:

1913 թ. մարտի 23-ին վաշտն սկսեց անցնել մի երկար ճանապարհ՝ Մարմարա ծովի ափերից մինչև Սոֆիա: Նա անցավ Շչերն, Սակլե (ապրիլի 23-ին), Կեչան (ապրիլի 25-ին), Դեդե-Աղաչ (ապրիլի 29-ին), Գյումյուրջին (մայիսի 1-ին), Պետրի (մայիսի 14-ին), Ստրումիցա (մայիսի 16-ին), Ռադովիչ (մայիսի 18-ին), Շչիպ (մայիսի 19-ին) քաղաքներով և դադար առավ Կոչանում (մայիսի 26-ին):

Բուլղարիայի գերագույն ռազմական հրամանատարության հրամանով ջոկատի հրամանատարը հայ կամավորների առջև հարց առաջադրեց՝ ցանկանում են արդյոք նրանք շարունակել ծառայությունը բուլղարական բանակում, թե ուզում են վերադառնալ տուն: Վաշտի անձնակազմը միաձայն պատասխանեց, որ իր եղբայրական պարտականությունը կատարել է և կուզենար վերադառնալ հայրենիք:

Թուրքիայի հետ Լոնդոնում 1913 թ. մայիսի 17 (30)-ին բալկանյան դաշնակիցների կնքած հաշտությունից մեկ օր անց՝ մայիսի 28-ին, հայկական վաշտը կազմացրվեց: Հաջորդ օրը, ծածանելով իր մարտական դրոշը, վաշտը շարժվեց դեպի Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիա, որտեղից էլ նրա զինվորները

ցրվեցին իրենց տները:

Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի շտաբը հայկական վաշտի հրամանատարությանը տվեց № 3483 1913 թ. օգոստոսի 1-ին վկայական, որը սկսվում է այս բառերով. «Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորն ստեղծելիս, հաշվի առնելով հայերի համակրանքը Բուլղարիայի նկատմամբ, երկու ժողովուրդների անցյալը և հայերի կողմից առանձին զորամասով պատերազմի մեջ մտնելը, թույլատրվեց կազմավորել առանձին հայկական վաշտ իր հայկական ազգային դրոշով, հայ սպաների և զորապետների հրամանատարությամբ»: Այնուհետև փաստաթղթում համառոտ ներկայացվում է վաշտի կազմավորման, նրա մարտական ուղու, առավել աչքի ընկած զինվորների ռազմական քաջագործությունների և ստացած պարգևների մասին[1]:

[1] *Държавен военноисторически архив Велико Търново, ф. 423, оп. 1, е. 1, л. 193.*

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հազիվ էր վերջացել Թուրք-բալկանյան պատերազմը, արդեն Լոնդոնում ստորագրվել էին խաղաղության նախապայմանները, երբ Բալկաններում նորից սկսեցին որոտալ թնդանոթները:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թուրքիայի դեմ մղած պատերազմում Բալկանյան դաշինքի տարած հաղթանակները միանգամայն նոր վիճակ էին ստեղծել Եվրոպայում:

Եթե բալկանյան պատերազմում հաղթանակ տանելուց հետո դաշնակիցներին հաջողվեր առաջիկայում նույնպես պահպանել միասնությունը, ապա հնարավոր էր, որ Բալկաններում ծնունդ առներ մի նոր հզոր դաշնակցային պետություն, որը կլրացներ վեց մեծ տերությունների շարքերը՝ սպառնալով դառնալ յոթերորդը: 1913 թ. ապրիլ-մայիս ամիսներին ուրվագծվում էր այդպիսի պետություն ստեղծելու հնարավորությունը:

Վերը նշել ենք, թե բալկանյան դաշնակիցները պատերազմի արդյունքում որքան հողերի էին տիրացել: Ընթերցողին հիշեցնենք, որ այդ տարածքը ձգվում էր Սև ծովից մինչև Կրետե՝ Էգեյան ծովը դարձնելով միջերկրյա:

Այդ հսկա տարածքի վրա հնարավոր դաշնակցային պետություն ստեղծելու դեպքում այն կկանգներ Ասիայի դռների մոտ, աղեղնաձև կպատեր Փոքրասիական թերակղզին արևմուտքից,

կսպառնար գրավել Գալիպոլի թերակղզին, և դրանով իսկ Դարդանելի նեղուցը կդրկվեր իր կարևոր նշանակությունից: Նման պետությանը պատկանող մի զորեղ ռազմական նավատորմ կարող էր միահեծան վերահսկել Կրետեից հյուսիս ընկած Արշիպելագոսի ջրերը և այդ նոր պետությանը ծանրակշիռ դեր վերապահել Միջերկրականում:

Արևմուտքում այդ ենթադրյալ պետությունը կհասներ Ադրիատիկին՝ դառնալով Ավստրիայի և Իտալիայի հզոր մրցակիցը: Նա ի վիճակի կլիներ ավստրիական նավատորմի առաջն առնել Ադրիատիկ ծովում և նոր առևտրական ուղիներ բացել Սերբիայի համար, միաժամանակ հօդս ցնդեցնել Սալոնիկին մի օր տեր դառնալու Ավստրիայի տենչանքը: Նոր պետությունը կարող էր սպառնալ մինչև իսկ Ավստրիայի՝ որպես պետության գոյությանը, քանի որ վերջինիս սահմաններից ներս բնակչության մի ստվար մասը սլավոններ էին:

Այդ նոր պետության առաջ իրեն անզոր պիտի զգար հարևան Ռումինիան՝ սեղմված լինելով Ռուսաստանի և դաշնակցային նոր պետության արանքում:

Այս պայմաններում Ռուսաստանի հեղինակությունը Բալկաններում անհունորեն կաճեր, քանի որ հենց սկզբից նա էր եղել Բալկանյան դաշնության գաղափարի պաշտպանը, նրա խրախույսով ու համակրանքով էին բալկանյան ազգերը հասել փայլուն հաջողությունների ռազմադաշտերում: Հեռանկարում երևում էին ավստրիական ազդեցության չքացումը և Ռուսաստանի հեղինակության աննախընթաց ամրապնդումը Բալկանի վրա: Այսպիսի հեռանկարն արդեն կարող էր սպառնալ համաեվրոպական շահերին: Իր ստեղծած դաշնակցային պետության հետ ձեռք ձեռքի՝ Ռուսաստանը կարող էր տեր ու տիրական դառնալ ուժասպառ Թուրքիայում, ուր այնքան մեծ շահեր ունեին Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան:

Բայց յոթերորդ մեծ պետության գաղափարը կոչված չէր իրականություն դառնալու:

Թուրքերի պարտություններին զուգընթաց՝ դաշնակիցների շարքերում դեռ պատերազմի առաջին շաբաթներին մարտավարական խնդիրների շուրջ առաջ էին գալիս տարբեր տարաձայ-

նութիւններ, որոնք, դառնալով հաճախակի, հետագա ամիս-ներին այս ու այնտեղ վերաճում էին սուր հակասութիւնների:

Դեռևս 1912 թ. նոյեմբերյան համարներից մեկում Կ. Պոլսի «Ժամանակ»-ը, վկայակոչելով «Ուեստմինստեր գազեթ» թերթի մի հրապարակումը, «Թուրքերի վերջին հույսը» հոդվածում գրել էր, թե իրերի ներկա վիճակում բալկանյան դինակիցներին հանուն ամբողջ աշխարհի շահի անհրաժեշտ է, որ իրենց և դրացի մեծ տերությունների միջև որևէ վեճ գոյություն չունենա: Զինակիցները չպիտի մոռանան, որ Թուրքիայի վերջին հույսը իր հակառակորդների միջև ծագած գժտությունն է: «Երբ Թուրքիան իրեն վտանգի մեջ կըզգա, իր հակառակորդներու միջեւ գժտութեան որոմ կցանե եւ այդ գործում չատ վարպետ մըն է»[1]:

Իսկ Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտոնաթերթ «Հնչակը», այդ սպառնալիքը միանգամայն հնարավոր համարելով, գրում է. «Իր գոյութիւնը փրկել երեւակայելով, այսօր Թիւրքիան յուսադրում է ինքն իրան նրանով, որ բալկանեան չորս յաղթական դաշնակիցները կը պառակտուեն այս կամ այն կուսածաղիկի պատճառով: Լօնդօնում ներկայումս տեղի ունեցող խաղաղութեան բանակցութիւնների սեղանի վրայ նա գլորում է մերթ այս, մերթ այն թելակծիկը, յուսալով որ նա կը խճճուէ»[2]:

Նույն կարծիքին էր նաև «Բուլթանիա» (Կ. Պոլիս) թերթի խմբագիրը, որը դեռևս 1913 թ. հունվարի 11 (24)-ին «Բնական բախտակիցները» վերտառությամբ հոդվածում կանխատեսել էր, որ եթե բալկանյան դաշնակիցների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագիր կնքվի, դա դեռ չի նշանակում, թե բոլոր հարցերը լուծված են համարվելու: «Դաշնակիցներն իրենց բանակցութիւնները օսմ. պետութեան հետ վերջացնելէ եւ իրենց ստանելիքը ստանալէ յետոյ,- կանխատեսում էր հոդվածագիրը,- կը մնայ դեռ ստացածնին իրենց մէջ բաժանելու՝ սահմանագծման խնդիրը՝ որ կ'երեւի թէ չա՛տ ալ հեշտութեամբ լուծելի

---

[1] ***«Ժամանակ»,*** *№ 1279, 16 (29) նոյեմբերի 1912 թ.:*

[2] ***«Հնչակ»,*** *№ 1, հունվար, 1913, էջ 3:*

*խնդիր չէ՛: Ասոր հետ միասին ո՛չ մէկ կասկած որ **միջնորդ** պետութեանց, կամ ըսենք, **հաշտարար** պետութեանց **անմիջական** կամ **ապառիկ** վարձատրութեանց հարցն ալ պիտի որոշուի, ինչ որ գուցէ աւելի դժուարինն է քան դաշնակիցներու բաժնեյարդարութիւնը:*

Բաժնեյարդարութեան եւ վարձատրութեան հարցերը այնքան սերտօրէն կապուած են իրարու հետ՝ որ սահմանները ճշտել դժուարին է, որովհետեւ, ինչպէս Պերլինի մեր թղթակիցն ալ դիտել տուած էր, Դաշնակից պատերազմող պետութիւններու հաւաքարար եւ անոնցմէ իւրաքանչիւրին ուրոյն ստանալիքը՝ Մեծ Պետութեանց մէն մի խմբակցութեան անդամի համար մասնաւորաբար ներկայ կամ ապագայ շահ ու վնասի հաշուին կ՚արձանագրուի:

Այդ կարգի շահ ու վնասի հաշիւները անել բաւիղ մը են, որովհետեւ պետութեանց խմբակցութիւններն ալ իրենց մէջ հակադիր շահեր ունին, ու իրենցմէ ո՛չ մէկին համար կարելի է վճռել թէ այս օրուան շահ համարածը՝ վաղը վնասի շարքին չպիտի անցնի, եւ կամ այս օրուան դաշնակիցը վաղը թշնամի չպիտի ըլլայ:

Քաղաքական աշխարհի բաժնեյարդարութիւնն ու վարձատրութիւնը էապէս արդարութեան հիմերու վրայ դրուած չըլլալով՝ աւելի ճիշտը մէկ անարդարութիւն ուրիշ անարդարութեամբ սրբագրել ըսել է, եւ կամ ուժեղներու ուժի իրաւունքի անունով ստեղծած յափշտակութիւնն է, հետեւաբար, անոնց արժէքներն ալ կը փոխուին ժամանակի ընթացքին՝ ուժերու ստացած փոխյարաբերութեանց համեմատութեամբ»[1]:

1913 թ. մայիսի 17 (30)-ին դաշնակիցների և Թուրքիայի միջև Լոնդոնում կնքված հաշտության նախապայմանագիրը, որով Թուրքիան հրաժարվում էր իր բոլոր տիրույթներից Էնոս-Մեդիայա գծով, անկարող եղավ լուծելու բոլոր հակասությունները հաղթանակած պետությունների միջև:

Դրա հիմնական պատճառն այն էր, որ Օսմանյան կայսրու-

---

[1] ***«Բութանիա»,*** *№ 130, 11 (24) Հունվարի 1913 թ.:*

թյան դեմ մղած պատերազմում տարած հաղթանակները, այդ հողի վրա առաջ եկած ազգային խանդավառությունն ու գինովությունը դաշինքի բոլոր երկրներում արթնացրել էին նոր նվաճումների, ցեղային մեծության ու հեգեմոնիայի ցնորքներ:

Դեռևս 1913 թ. փետրվարին Սերբիան Բուլղարիայից պահանջեց վերանայել Լոնդոնի կոնֆերանսում սահմանված գոտուց հարավ ընկած տարածքները զիջելու հարցը: Այս պահանջը Բուլղարիան մերժեց:

Թուրքիայի դեմ պատերազմի մեջ մտած **Սերբիան** հաստատ համոզմունք էր ունեցել, որ վերջապես իրականանալու է դարավոր երազը՝ Բալկաններում Մեծն Դուշանի կայսրության վերահաստատումը: Սերբական պահանջները տարածվում էին Բոսնիա-Հերցեգովինայից մինչև Կ. Պոլիս:

Հսկայական էին Բալկանյան պատերազմի զոհասեղանին դրված Սերբիայի կորուստները: Բավական է միայն ասել, որ Ադրիանուպոլսի պաշարմանը նա մասնակցում էր 50-հազարանոց բանակով, և առաջինը սերբերը մտան անառիկ համարվող ամրոցը: Բայց հիմա այս երկիրը հայտնվել էր աղքատ ազգականի դերում, և բալկանյան դաշնակիցներից ամենից նվազ ձեռքբերումներ ուներ հենց նա: Մոնաստիր, Պրիլիպ, Իշտիր և մի քանի ուրիշ քաղաքներ, որոնք Թուրքիայից նվաճել էր Սերբիան, եվրոպական մեծերի ծրագրով պետք է անցնեին Բուլղարիային: Սերբ-բուլղար վեճ բորբոքվեց հատկապես Մոնաստիրի շուրջ: Տերությունների խոստումով Սերբիային պետք է անցներ Այբանիան, այնինչ Ավստրիայի կողմից վերջինիս ինքնավարությունն ամուր սատարելու պատճառով նա զրկվում էր արևմուտքից ծով հասնելու հնարավորությունից: Դա պարտություն էր նաև Ռուսաստանի համար, որը հույս ուներ սլավոնական Սերբիայի վրայով դուրս գալ Ադրիատիկ ծով, այնտեղից՝ Միջերկրական ծով: Սերբիան զրկվում էր նաև հարավից Միջերկրական ծով դուրս գալու հնարավորությունից, որովհետև Սալոնիկն ընկել էր հույների ռազմակալման տակ և Թուրքիայի հետ պայմանագրով անցնելու էր նրան: Բացի դրանից, Հունաստանի և Սերբիայի արանքում ընկած Մակեդոնիայի բուլղարաշատ վայրերը Բուլղարիային էին անցնելու՝ ըստ նրանց միջև նախապես կապած

պայմանի: Իսկ դա նշանակում էր, որ Սերբիայի համար ընդհանրապես առմիշտ վերանում էր Սալոնիկ դուրս գալու հնարավորությունը, որովհետև նրան սահմանակից էր դառնում ոչ թե թույլ Հունաստանը, որի նավատորմը պատերազմի դեպքում անկարող էր Սերբիային որևէ վնաս հասցնելու, իսկ ցամաքային ռազմուժերը սակավաթիվ էին, այլ Բուլղարիան՝ իր օրինակելի և հզոր բանակներով:

Այդպիսով, Սերբիան մնում էր առանց նավահանգստի: Պետությունները «խոստանում էին» Ադրիատիկի ափին Սերբիային տալ մի նավահանգիստ, բայց այդ խոստումը հաստատող կետ չէին մտցնում խաղաղության դաշնագրի մեջ: Բացի դրանից՝ երկաթուղին Սերբիայից այդ ենթադրյալ նավահանգիստ հասնելու համար պետք է անցներ ալբանական հողերով՝ միշտ ենթակա Ավստրիայի կողմից սաղրանքների և արգելման վտանգի:

Բայց Սերբիայի չահերի ոտնահարումը դրանով չվերջացավ: Բուլղարիան Սերբիայի հետ պայմանավորվել էր պատրաստ պահել հարյուր հազար զինվոր և հարկ եղած դեպքում օգնության ուղարկել նրան՝ ընդդեմ Ավստրիայի: Բուլղարիան, սակայն, հակում չէր ցուցաբերում կատարելու իր ստանձնած պարտավորությունը:

Եվ ահա այժմ 1913 թ. հունիսի 11 (24)-ի նոտայով Սերբիան Բուլղարիայից տարածքային հատուցում պահանջեց նրա կողմից գրավված Հարավարևմտյան (Անդրվարդարյան) Մակեդոնիայի չրջանում[1]:

Սերբական կառավարությունը Սոֆիային հիչեցնում էր, որ Բուլղարիայի հետ նախնական համաձայնությամբ ինքը պետք է կռվի դաչտ հաներ 150 հազար մարդ, բայց իրականում տվել է չատ ավելին՝ 400 հազար: Հետևապես պատերազմի հիմնական ծանրությունն ընկել է ոչ թե Բուլղարիայի, այլ իր երկրի վրա, որը մարդկային վիթխարի կորուստներ է կրել՝ հօգուտ Բալ-

---

[1] *Տե՛ս* ***«Նոր մամուլ»****, № 27, 16 հունիսի 1913 թ.:*

կանյան դաշինքի: Ըստ այդմ դրանից անմիջապես հետո Սերբիան և Հունաստանը բանակցություններ սկսեցին Բուլղարիայի դեմ համատեղ հանդես գալու վերաբերյալ: Նրանք գաղտնի համաձայնություն կնքեցին, որով իրենց միջև բաժանում էին գրաված երկրների մեծ մասը: Այդ դաշնագրով երկու պետությունների՝ Սերբիայի և Հունաստանի սահմանները պիտի անցնեին Վարդարի հարավային մասով: Մոնաստիրն ու Ջևդելին պիտի պատկանեին Սերբիային, իսկ Սերեսը, Կավալան, Թասոս կղզին՝ Հունաստանին: Դա նշանակում էր, որ սերբերը տեր էին դառնալու մակեդոնական հողերի մեծ մասին: Այդ համաձայնագիրն ինքնին մի թշնամական քայլ էր Բուլղարիայի դեմ, քանի որ այն ստորագրելու պահին բալկանյան դաշինքը դեռ խախտված չէր:

Սերբ-հունական համաձայնագիրը կնքելուց հետո Բելգրադը Սոֆիայից պահանջեց վերաքննել դեռևս Բալկանյան առաջին պատերազմի նախօրյակին կնքված սերբ-բուլղարական պայմանագիրը: Դրանից հետո Սերբիան և Հունաստանը Ռումինիային առաջարկեցին միանալ իրենց: Այդպես էլ եղավ: Բյուզանդիան իր հերթին չտապեց հաշտություն կնքել Թուրքիայի հետ՝ իր բանակը երեկվա դաշնակիցների դեմ նետելու համար: Հիմա նա նույնիսկ հակառակվում էր Ալբանիայից թուրքական զորքերի մնացորդների դուրսբերմանը՝ դրանով իսկ ցանկանալով սերբական բանակի մի մասը գամել ալբանական սահմանին:

Մակեդոնիայի բաժանման հարցում դաշինք կնքելով Սերբիայի հետ՝ **Հունաստանը**, սակայն, մեծ երկյուղ ուներ Բուլղարիայի չափից ավելի հզորացումից, հանդես էր գալիս ժամանակին կնքած սերբ-բուլղարական պայմանագրի վերանայման օգտին, վճռականապես պահանջում էր Մակեդոնիայի հարավարևելյան շրջանները չհանձնել Բուլղարիային, որովհետև այդ դեպքում ինքը կզրկվեր Եվրոպայի հետ երկաթուղային կապից: Պատմական իրավունքների հիմամբ՝ հույները ցանկանում էին իրենց երկրին միացնել ամբողջ Էպիրոսը, Մակեդոնիան, Թրակիան, Կոստանդնուպոլիսը, Արշիպելագոս կղզիները և Փոքր Ասիայի ափերը (Իզմիր և այլն): Ցանկությունը՝ ցանկություն, բայց Հունաստանը արդեն մատնվել էր անձկության Ալբանիայի հարավային սահմանագլուխը դեռ գծված չլինելու պատճառով:

Դեռևս Թուրքիայի դեմ պատերազմի ամենաթեժ պահին իսկ հույների և բուլղարների միջև մեկ այստեղ, մեկ այնտեղ տեղի էին ունենում կարճատև, բայց կատաղի բախումներ: Ժամանակի հայկական մամուլը հանգամանորեն անդրադարձել է Սերեսի, Դրամայի, Կավալայի և այլ բնակավայրերի շուրջ ծագած վեճերին և ընդհարումներին: Հունական պաշտոնական շրջանները երբեմն-երբեմն դժգոհում էին իրենց պատմական տարածքներում բուլղարական զորքերի «չափից ավելի եռանդուն» գործողությունների համար:

1912 թ. նոյեմբերի սկզբին Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը իր խմբագրականում մեջբերել էր "Berliner Tacesblatt"-ի հետևյալ տողերը. «Պուլկար եւ հելլեն վերին հրամանատարութիւններուն միջեւ կարեւոր անհամաձայնութիւն մը ծայր տուած է: Այլեւս կասկածելի է Պալքանեան տերութիւններուն եղբայրական համագործակցութիւնը: Յունաստան պատերազմէն առաջ իրեն խոստացուած հողային խոստումներով չի բաւականանար եւ նոր պահանջներ դրած է, ինչ որ լուրջ անհամաձայնութիւններու տեղի կուտայ»[1]:

Զերնոգորիայի բանակը քաշվել էր Շքոթրայից, և այնտեղ տեղաբաշխվել էր միջազգային զորքը, բայց դրանով խնդիրը վերջնականապես չէր լուծվել:

Նվաճելու ու տիրակալելու այդ ընդհանուր տենչի մեջ **Բուլղարիան** ամենից հախուռն ու ամենից հանդուգն գտնվեց՝ շնորհիվ Բալկանյան առաջին պատերազմի ընթացքում իր փառավոր հաղթանակների: Նա Էգեյան ծով էր դուրս գալիս Կավալայի ծոցում և Մարիցա գետաբերանի մոտ, իր սահմաններն առնում Մակեդոնիան և Թրակիան, արևմուտքում հասնում էր մինչև Օխրիդա լճի ափերը՝ ձեռք ձգելով Վարդար գետի արգավանդ հովտի մեծագույն մասը՝ ապագայում Սալոնիկին տիրանալու սպառնալիքով: Նրան էին անցնում Ադրիանուպոլիսը և շրջակա գավառները[2]: Իր և իր կողմից գրավված տարածքների

---

[1] **«Ժամանակ»**, № 1264, 1 (14) նոյեմբերի 1912 թ.:

[2] Տե՛ս **«Նոր հոսանք»** (Թիֆլիս), № 3, մայիս, 1913 թ., էջ 659, 661:

բնակչության թվով Բուլղարիան գերազանցում էր Հունաստանի, Սերբիայի և Չերնոգորիայի բնակչության ընդհանուր թիվը:

«Աւետաբեր» թերթի թղթակիցը նախօրերին հանդիպել էր մի բարձրաստիճան սերբ պաշտոնյայի, որը զրույցի ժամանակ շահեկան տեղեկություններ էր տվել բալկանյան պետությունների տարածքային գրավումների մասին և դժգոհություն հայտնել բուլղարների «չափից ավելի մեծ ակնկալությունների» համար: Նա ասել էր, որ պատերազմից առաջ Եվրոպական Թուրքիան ուներ 159.000 քառ. կմ տարածք, Բուլղարիան՝ 96.000, Սերբիան ու Չերնոգորիան միասին՝ 57.000, Հունաստանը՝ 65.000 քառ. կմ: Հաղթական պատերազմում զինակիցները Եվրոպական Թուրքիայից գրավել են 127.000 քառ. կիլոմետր, որից Բուլղարիան իրենն է համարում 96.000 քառ. կիլոմետրը: Դա իրականանալու բան չէ, ասել էր սերբ պաշտոնյան[1]:

Պատերազմում թափած արտակարգ ճիգերը, հսկայական տարածությունների գրավումը Բուլղարիային տվել էին առաջնակարգ դիրք: Նա ունակ էր իրեն թշնամի դարձած երեկվա երեք դաշնակիցների դեմ հավասար զորություն հանելու կռվի դաշտ: Զինվորական անօրինակ հաջողությունները գլխապտույտ էին առաջացրել Բուլղարիայի ղեկավար շրջաններում և պատճառ դարձել երկրի իշխող վերնախավի քաղաքական լիակատար կուրության: Նրան մի պահ թվացել էր, թե կարող է ուզել այն ամենը, ինչ փափագում է, կարող է տեր կանգնել այն ամենին, ինչ ուզում է:

Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդը, որ, մի համեստ դուքս լինելով, դարձել էր իշխան, հետո՝ ցար, անակնկալ հաջողություններից հետո հիմա էլ երազում էր դառնալ Մեծ Բուլղարիայի կայսր: Նրա ձգտումներին տոն էին տալիս ազգայնական շրջանները, որոնց երազանքն էր վերստեղծել Սիմեոն ցարի հիմնած Մեծ Բուլղարիան:

Մի խոսքով, Բալկաններում ստեղծվում էր պրուսական տիպի մի մինի կայսրություն՝ մի պատկառելի ուժ, որի կողքին

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 29, 19 Հուլիսի 1913 թ.:

հազիվ կարողանային հանգիստ կյանք ունենալ նրա հարևանները:

Բնական է, որ զինակցության մյուս անդամները, հատկապես սերբերն ու հույները չէին կարող հաշտվել բուլղարների անօրինակ ձեռքբերումների ու ապագայի ծրագրերի հետ: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր տարած հաղթանակների պտուղներն ինքը ճաշակել:

Եվ այսպես, երեկվա դաշնակիցների հարաբերություններում ծագած հակասությունները, քաղաքական մոլորություններն ու մոտակա անելիքների անորոշությունը նրանց մղեցին ընթանալու տարբեր ուղղություններով՝ նախանշելով նոր աղետներ:

Ընդամենը մի քանի ամիս առաջ էր, որ աղմուկ-թմբուկին հաջորդել էին սրի չաչյունը և թնդանոթի որոտը՝ ի սեր Թուրքիայի լծի տակ տառապող քրիստոնյա եղբայրների ազատագրության: Այդ սուրբ գաղափարն անձնազոհ կռվի էր ոգեշնչել բալկանյան դաշնակիցների զինվորներին: Նրանց փառավոր հաղթանակները մեծ հրճվանք էին պատճառում ոչ միայն քրիստոնյա ժողովուրդներին, այլև բոլորին, ովքեր գնահատում էին սրբազան պատերազմը ազգերի ազատագրության համար:

Այժմ, երբ ընդհանուր թշնամին ծնկի էր եկած, բուլղար, սերբ, չերնոգորցի, հույն զինվորները տենչում էին օր առաջ տուն վերադառնալ և հանգիստ առնել: Իսկ դաշնակից պետությունների կառավարություններն ու թագավորները այդ նույն ժամանակ բոլորովին ուրիշ նպատակներ էին հետապնդում: Նրանք ուղղակի հարբել էին իրենց զորքերի անակնկալ հաջողություններից: «Իսկ ով չգիտե, թե հարբածն ինչեր կարող է անել»[1],- գրում էր Մոսկվայում լույս տեսնող «Մարտ» թերթի քաղաքական մեկնաբանը:

Բալկանյան երկրների կառավարություններն անընդունակ գտնվեցին զսպելու իրենց իսկ կողմից չղթայազերծված ազգայնամոլական ախորժակները՝ ձեռք բերածը բաժանելու խաղաղությամբ: Նրանցից ամեն մեկն աշխատում էր ավելի մեծ բա-

---

[1] **«Մարտ»**, № 9, 15 օգոստոսի 1913 թ.:

ժին ստանալ, իսկ երեկվա դաշնակցին որքան հնարավոր է թողնել փոքրը:

Ռազմաճակատում տարած փայլուն հաղթանակները հատկապես գլխապտույտ էին առաջացրել բուլղարների՝ առաջին հերթին՝ նրանց իշխանությունների շրջանում:

Այդ վտանգավոր մոլորությունն առաջիններից մեկը նկատել էին հայկական վաշտի զինվորները և առաջին հերթին՝ հրամանատար Անդրանիկը: Նրանք իրենց բուլղար զինակիցներին նախազգուշացնում էին, որ դա հղի է անկանխատեսելի հետևանքներով: Իրենց իսկ փորձով տեղյակ լինելով օսմանյան դիվանագիտության խարդավանքներին՝ հայերը տագնապում էին ու վախ հայտնում, որ դիվանագիտության մեջ անփորձ բուլղարները չափից ավելի են գնահատում իրենց ուժերը, ուստի հնարավոր է, որ չկարողանան պահպանել այն ամենը, ինչը նվաճել են ժողովրդի տասնյակ հազարավոր զավակների արյան ու տառապանքների գնով: Եվ իրենց զգացածի մասին ունեցած տագնապալի մտքերը նրանք կիսում էին բուլղար հրամանատարների հետ, խորհուրդ տալիս չափավորել ռազմատենչության եռանդը:

Բայց Անդրանիկի և մյուս հայ գործիչների բարեկամական խորհուրդները Բուլղարիայի իշխանությունները հաշվի չառան: Երեկվա դաշնակիցների հակամարտ ձգտումները գրգռեցին ու բորբոքեցին կրքերը: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ սերբ-բուլղարական համաձայնագրով նախապես չէր արձանագրվել, թե Թուրքիայի դեմ տարած հաղթանակի դեպքում դաշնակիցներից յուրաքանչյուրն ազատագրված Բալկանների որ մասին պիտի տիրանար: Ծագած անհամաձայնությունների պատճառով նրանցից ամեն մեկը ելավ զենքով «պաշտպանելու իր իրավունքները»:

Պատերազմը Մակեդոնիայում դարձավ անխուսափելի:

Աթենքից, Բելգրադից, Սոֆիայից, Բուխարեստից խելահեղ ժխոր էր բարձրանում: Մինչև վերջին վայրկյանը խաղաղություն տենչող հասարակ մարդիկ հույս ունեին, թե բալկանյան պետությունները միջոց կգտնեն իրենց միջև ծագած իրական կամ մտացածին խնդիրները լուծելու՝ առանց տեղիք տալու ամոթալի արյունահեղության: Բայց այդպես չեղավ:

Ռոմելիայից Կ. Պոլիս եկած ճամփորդներն աղեխարշ նկարագրություններով պատմում էին այնտեղ տիրող ցեղային անհանդուրժողականության, ժողովուրդների իրար նկատմամբ այրող ատելության մասին: Նրանք պատմում էին, որ ինչպես բալկանյան չորս դաշնակիցների զինվորները 1912 թ. հոկտեմբերին բնաջնջում էին քաղաքների ու գյուղերի իսլամ ժողովրդին, այնպես էլ 1913 թ. ամռանը Թուրքերն առաջնալով գլխովին կոտորում էին հույներին, սերբերին, բուլղարներին:

Բուլղարիայի, Սերբիայի և Հունաստանի ժողովուրդների բախտը տնօրինողները իմաստնություն և առաքինություն չունեցան իրենց բանակները ցրելու, սրերը պատյան դնելու: Ընդհակառակը՝ գերադասեցին դարձյալ արյան ու արհավիրքի մեջ նետել իրենց տարաբախտ քաղաքացիներին. թե՛ հաղթողը և թե՛ պարտվողը այդ նոր գեհենից դուրս պիտի գային ուժասպառ ու արյունաքամ, նյութապես ու բարոյապես սնանկացած, կորցրած ամեն արժանապատվություն:

Հուլիսի սկզբներից ինչպես բուլղարական, այնպես էլ սերբհունական զորքերն արագորեն դիրքեր գրավեցին սահմանային ռազմավարական կետերում: Բուլղարիան, Զաթալջայի մոտ թողնելով ընդամենը երկու դիվիզիա, այնտեղից Սերբիայի և Հունաստանի դեմ ուղղեց 292 գումարտակ՝ կազմելով 13 դիվիզիա, որոնք միավորվել էին 5 բանակներում: Մյուս կողմից՝ Բուլղարիայի հակառակորդները նրա դեմ կենտրոնացրին՝ Սերբիան 13 դիվիզիա (200 գումարտակ, այդ թվում՝ 16-ը Զերնոգորիան), որոնք միավորվել էին 3 բանակների մեջ, իսկ Հունաստանը՝ 100 հազար զինվորներից բաղկացած 8 դիվիզիա[1]:

Աներևակայելի կարճ ժամանակամիջոցում երեկվա դաշնակից երկրների հակաթուրքական ռազմական բլոկի լուծարումը և դրանում բուլղարական կառավարող վերնախավի թույլ տված կոպիտ սխալները մեծ ցավ էին պատճառել Բալկանների հայությանը:

---

[1] ***Տե՛ս Айрапетян М.**, На путях к мировой войне 1914-1918 гг., ОГИЗ, Госполитиздат, 1940, стр. 176:*

Բուլղար գործիչ, Ռոդոսթո-Գալիբոլու նահանգի վերջին նահանգապետ Իվան Դիմիտրովը 1934 թ. օգոստոսի 18-ին "Яворовъ листъ" թերթում տպագրած հոդվածում վերհիշում էր, որ Լոնդոնի հաշտության դաշնագիրը ստորագրելուց հետո բալկանյան հայ գործիչները իրենց արժեքավոր տեղեկագրերով բուլղարական կառավարությանը հորդորում էին ամեն ինչ անել՝ դաշնակիցների հետ լեզու գտնելու և Լոնդոնի դաշնագրով վավերացված Էնոս-Միդիա սահմանագիծը պահելու համար:

«Այսօրվա պես հիշում եմ, թե հայերը որքան շատ էին ուզում, որ այլևս պահպանվի բուլղարական զենքով շահված սահմանն արևելքում և վախենում էին դեպքերի հավանական մի հեղաշրջումից»[1],- գրում էր Դիմիտրովը: Այնուհետև նա վերհիշում էր, որ հայերի բուռն ցանկությունն էր, որ միջդաշնակցային պատերազմ չծագի՝ իր բոլոր անցանկալի հետևանքներով[2]: Այդ ցանկությունը մարմնավորված էր այն բազմաթիվ տեղեկագրերում, որ հայերը ուղարկում էին բուլղարական իշխանություններին՝ խորհուրդ տալով չափավոր լինել և արդեն նվաճած հաղթանակները վտանգի տակ չդնել: Իվան Դիմիտրովը շարունակում էր. «Հայերը մեզ օգտակար էին իրենց թանկագին խորհուրդներով... Եթե դրանք ժամանակին մեր պատկան իշխանությունների ուշադրության կենտրոնում լինեին..., հնարավոր կլիներ խուսափել միջդաշնակցային պատերազմից, ինչպես նաև մեր կրած աղետից: Եվ Բուլղարիան կկարողանար պահպանել արևելքում Լոնդոնի դաշնագրով վավերացված իր Էնոս-Միդիա սահմանագիծը և ամբողջ Բելոմորեի (Էգեյան ծովի) եզերքը՝ մինչ և Խալկիդիկա: Մեծ օգուտներ կունենայինք, և բացի առաջնակարգ զինվորական ուժի հմայքից, մենք կշահեինք նաև բալկանյան ամենամեծ պետության անունն ու պատիվը»[3]:

---

[1] *"Яворовъ листъ" թերթի նշված համարը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 3:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

Առաջին բալկանյան պատերազմի հետևանքները ոչ միայն չմեղմեցին եվրոպական մեծ տերությունների և Ռուսաստանի կրքերը, այլև է՛լ ավելի ուժեղացրին հակասությունները նրանց միջև: Ապագայի անորոշությունը նրանց մղում էր ռազմական աննախադեպ պատրաստությունների: Խորանում էին նաև հակամարտությունները իմպերիալիստական տերությունների միջև:

Մեծ տերությունները վաղուց էին յուրացրել խարդախ ու դաժան գործելակերպ. միմյանցից վրեժ լուծելու համար հաճախ ոչ թե իրենք էին իջնում պատերազմի դաշտ, այլ ուրիշներին էին մղում արյան բաղնիքներ՝ ականատես լինելով մահացու գոտեմարտերի:

Երեկվա դաշնակիցների մեջ առաջ եկած ցեղային անպարտելիության ցնորքներին մեծ պետություններից ամեն կերպ տոն էր տալիս հատկապես ***Ավստրո-Հունգարիան****:*

Այս կայսրության իշխանությունները գործում էին երկու ուղղությամբ: Վիեննան կատաղի մրցակցություն էր սկսել նախ Հռոմի դեմ՝ Ալբանիան բաժանելու համար: Ավստրիան ձգտում էր լիակատար իշխանություն ձեռք բերել այդ տարածքի վրա, որպեսզի անհնարին դարձնի Սերբիայի դուրս գալը Ադրիատիկ ծով, միաժամանակ խոչընդոտի Իտալիայի թափանցումը Բալկաններ: Այդ իսկ պատճառով նա ստիպված իր զինված ուժերի մեծ մասը կենտրոնացրել էր Սերբիայի սահմանագլխին:

Ավստրիական էքսպանսիայի մյուս ուղղությունը թուրքական լծից ազատագրված տարածքներն էին: Սլավոնական ազգերից կազմված մի նոր հզոր պետության հնարավոր ստեղծումը մեծագույն անհանգստություն էր պատճառել նրան, քանի որ վտանգն ամենից առաջ կարող էր իրեն սպառնալ: Նա չէր համարձակվի պատերազմ հայտարարել բալկանյան հաղթած պետություններին՝ առանց մյուս մեծ պետությունների համաձայնության: Մնում էր դիվանագիտական ճանապարհը, մանավանդ որ Եվրոպան, օգտվելով իր ռազմական և նյութական անհամեմատ գերազանցությունից, իր ձեռքն էր առել պարտված Թուրքիային և հաղթական դաշնակիցներին հաշտեցնելու «մարդասիրական» գործը:

Եվ Ավստրիան սկսեց գործել՝ հրապարակ բերելով իր ավանդական հղկված դիվանագիտությունը, նպատակ ունենալով վերջնականապես քանդել բալկանյան զինակցությունը: Նա Բուլղարիային գրգռեց Թուրքիայից գրված տարածքներից ոչինչ չզիջել Սերբիային և Հունաստանին՝ միաժամանակ խոստանալով նրան ցույց տալ ամեն տեսակի դիվանագիտական աջակցություն: Դրանով Ավստրիան ամենից առաջ փորձում է մահացու հարված հասցնել Բալկաններում Ռուսաստանի ծրագրերին, գրում էր «Աւետաբեր» թերթի քաղաքական մեկնաբանը[1]:

Ավստրիական դիվանագիտության հիմնական գիծը հանգում էր Բուլղարիային Սերբիայի դեմ հանելուն:

Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունները հանգիստ չէին տալիս ***Գերմանիային****: Օսմանյան կայսրությունը տասնամյակներ շարունակ նրա համար եղել էր անգնահատելի դաշնակից, որն ամեն կերպ նպաստել էր Ասիայում սփռելու իր տնտեսական ու քաղաքական ազդեցությունը: Հիմա նա կորցնում էր իր ամուր հենարաններից մեկը՝ փոխարենը ձեռք բերելով վտանգավոր հարևաններ՝ հանձինս բալկանյան պետությունների, որոնց նկատմամբ Վիլհելմի կառավարությունը պատերազմի ողջ ընթացքում ցույց էր տվել թշնամական վերաբերմունք: Նա ուշադիր հետևում էր Բալկաններում իրադարձությունների ընթացքին, գաղտնի աջակցում էր իր դաշնակից Ավստրիային և շահագրգռված էր, որ բալկանյան դաշնակիցներն արյունալի նոր կռիվների մեջ մտնեն՝ այս անգամ միմյանց դեմ: Այդ տեսակետից Գերմանիայի գլխավոր հույսը, ինչպես Ավստրիայի պարագայում, մնում էր Ռումինիան, որը վճռականապես անընդունելի էր համարում Բուլղարիայի աննախադեպ հզորացումը:*

Գերմանիան միաժամանակ մեծագույն ջանքեր էր գործադրում բազմապատկելու իր ռազմական ուժը, որը մեծ անհանգստություն էր առաջ բերում Անտանտի երկրներում: Ի պա-

---

[1] *Տե՛ս* ***«Աւետաբեր»****, № 29, 19 հուլիսի 1913 թ.:*

տասխան Գերմանիայի պատերազմական ձեռնարկների՝ Անգլիան դրան հակադրեց իր ռազմածովային ուժերի հզորացումը: Ֆրանսիական կառավարությունն անհապաղ որոշում ընդունեց 1908 թվականից գործող երկամյա զինվորական ծառայությունը նախկինի պես դարձնել եռամյա: Նախատեսվեց բանակի մեծամասշտաբ հզորացում: Ռուսաստանն իր հերթին ձեռնարկեց դեպի Եվրոպա տանող երկաթուղիների կառուցում՝ պատերազմի դեպքում զորքերն արագորեն առաջագիծ հասցնելու համար:

Եռյակ զինակցության մյուս անդամը՝ **Իտալիան**, ինչպես արդեն նշել ենք, մրցակցության մեջ էր Ավստրիայի հետ՝ Ալբանիայի վրա լիակատար իշխանություն հաստատելու, ինչպես նաև նրանից հարավ ընկած տարածքները գրավելու համար: Նա նաև ամեն ինչ անում էր՝ խոչընդոտելու Ադրիատիկ ծով դուրս գալու Սերբիայի ձգտումները: Այդ ամենը ուղղված էր նաև նրա վաղեմի երազի իրականացմանը՝ Ադրիատիկ ծովն ամբողջովին իրենով անելուն:

Այս պայմաններում **Ռուսաստանը** բոլոր ջանքերը գործադրում էր Բալկանյան դաշինքի վերջնական քայքայումը կանգնեցնելու համար: Նա Սերբիայից պահանջեց պահպանել Բուլղարիայի հետ դաշնային պայմանագիրը՝ միաժամանակ Բուլղարիային համոզելով զիջումներ անել նրան:

Նիկոլայ II ցարի բերանով Ռուսաստանը Բուլղարիայի կառավարությանը նախազգուշացնում էր եղբայրասպան պատերազմի հետևանքների մասին: Բայց Սոֆիան բացեիբաց անտեսում էր Պետերբուրգից եկող խորհուրդները:

Այս պայմաններում Ռուսաստանը պնդեց հույն-բուլղարական վեճը փոխանցել Եռյակ համաձայնության տերությունների դատին: Զբավարարվելով դրանով՝ նա բալկանյան չորս պետությունների վարչապետներին հրավիրեց ժամանել Պետերբուրգ՝ վիճելի հարցերը համատեղ քննարկելու համար: Բայց նոր պատերազմը խափանելու ուղղությամբ Ռուսաստանի ձեռնարկած բոլոր ջանքերը ապարդյուն անցան: Ավելին, բուլղարական միապետի հանձնարարությամբ հունիսի 1 (14)-ին կազմվում է Դանևի «անզիջող» կառավարությունը:

Մեկը մյուսի հետևից թույլ տալով կոպիտ վրիպումներ՝ բուլ-

ղար ղեկավարությունն իր դեմ տրամադրեց նաև Ռուսաստանին:

Ավարատենչ Ավստրիայի խոստումներից չլացած Բուլղարիան նետվեց նրա գիրկը ճիշտ այն պահին, երբ Բալկանյան զինակցության և Ռուսաստանի հզոր պաշտպանության չնորհիվ պիտի վայելեր անակնկալ հաջողությունների պտուղները:

Դա բուլղարական դիվանագիտության աններելի սխալն էր:

Պետերբուրգից եկող ձայնին ականջալուր չեղան նաև Սերբիան և Հունաստանը:

Եվ այսպես, Գերմանիայի գլխավորած ռազմաքաղաքական բլոկի անդամ տերությունները, ի հեճուկս Ռուսաստանի, կարողացան փոխնիփոխ տկարացնել և աներևակայելի կարճ ժամանակամիջոցում միմյանց դեմ հանել Բալկանյան դաշինքի երեկվա զինակիցներին:

Թուրքիայի հետ հաշտություն կնքելու պահին Բալկանյան դաշինքն արդեն լիովին քայքայված էր:

ՄԻՋԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստեղծված պայմաններում, երբ ակնհայտ էին Սերբիայի և Հունաստանի մտադրությունները, բուլղարացիք սխալ որոշում ընդունեցին՝ նոր պատերազմում նախաձեռնությունը վերցնել իրենց վրա՝ հույս կապելով Ավստրիայի աջակցությանը:

Հունիսի 16 (29)-ին բուլղարական բանակի գլխավոր չտաբը որոշում է ընդունում հարձակում սկսել Մակեդոնիայում տեղակայված սերբական և հունական զորքերի վրա:

1913 թ. հունիսի 17 (30)-ին բուլղարական բանակները հանկարծակի հարձակման անցան սերբական զորքերի դեմ[1]: Վերջիններիս միացել էին չերնոգորյան փոքր բանակի մնացորդները[2]:

---

[1] *Տե՛ս* ***Х. З. Габидуллин,*** *Младотурецкая революция, с. 162.*

[2] *Տե՛ս* ***«Աւետարեր»,*** *№ 28, 12 հուլիսի 1913 թ.:*

Սկսվեց Բալկանյան միջդաշնակցային (կամ երկրորդ) պատերազմը (1913 թ. հունիսի 19-ից 1913 թ. օգոստոսի 10-ը): Բալկաններում յոթերորդ նոր մեծ պետություն ստեղծելու գաղափարը հօդս ցնդեց, և Ավստրիան հանգիստ չունչ քաշեց:

Հունիսի 22-ին (հուլիսի 5-ին) Հունաստանը պատերազմ է հայտարարում Բուլղարիային:

Թեև այդ նողկալի պատերազմի սկզբնապատճառը Բուլղարիան էր, բայց նրա դեմ կռվի դուրս եկած երեք պետությունները՝ Սերբիան, Հունաստանը և Չերնոգորիան, հենց դրան էլ սպասում էին: Իսկ քաղաքակիրթ Եվրոպան այդ բոլորին նայում էր իբրև ցլամարտի հանդիսատես:

Բուլղարիան ստիպված էր կռվել երկու ճակատով՝ արևմուտքում (Վերին Մակեդոնիայում)՝ սերբերի և հարավում (Ստորին Մակեդոնիայում)՝ հույների դեմ: Նրան միաժամանակ վտանգ էր սպառնում երկու կողմից. հյուսիսից զորահավաք էր կատարում Ռումինիան, իսկ հարավից չարժվել էր ուզում պարտված Թուրքիան: Տվյալ պահին Բուլղարիայի համար մեծ վտանգ էր ներկայացնում հատկապես Ռումինիան, որն ամեն կերպ նպաստում էր սերբ-հունական համագործակցության ամրապնդմանը, որպեսզի նրանց հակաբուլղարական գործողություններից օգտվելով՝ լուծի Բուլղարիայի հետ իր տարածքային վեճերը: Ռումինական զորքը կազմ ու պատրաստ էր իր և հակառակորդի արյունը ոթելու:

Սկզբնական շրջանում դժվար էր կանխատեսել, թե նոր պատերազմում ով է լինելու հաղթական, քանզի թե՛ բուլղարները և թե՛ սերբերն ու հույները կռվում էին եռանդուն ազգասիրությամբ: Նրանք սանձարձակ կատաղությամբ ու չտեսնված վայրագությամբ կոտորում ու ջարդում էին միմյանց՝ ազատագրված բալկանյան տարածքները իրար ձեռքից հափշտակելու համար:

Քրիստոնյա երկրների միջև ծագած այս պատերազմը նույնպես ցույց տվեց, թե որքան սնանկ էր բալկանյան առաջին պատերազմի նախօրերին Բուլղարիայի թագավորի առաջ քաշած արհեստածին տեսակետը, թե՛ այն իր բնույթով կրոնական է, պատերազմ է խաչի ու մահիկի միջև:

«Բիւզանդիոնը» գրում էր, որ բոլոր պատերազմները թելադրված են երկրների քաղաքական և տնտեսական շահերով: Նույն պատճառներով է, որ Եվրոպայի քրիստոնյա երկրները միմյանց դեմ դարեր շարունակ պատերազմներ են մղել, մինչև որ ճշտել են իրենց ազգային սահմանները: Նույն պատճառներով է, որ իսլամ Թուրքերն ու պարսիկները բազում պատերազմներ են մղել իրար դեմ, միևնույն Դուրանյան գերդաստանից սերած սելջուկներն ու Թուրքերը միմյանց կոտորել են Անատոլիային տիրանալու համար, արյունալի են եղել արաբների ու Թուրքերի դարավոր կռիվները: Սխալ է կռիվների ու պատերազմների հիմնական պատճառները փնտրել կրոնների տարբերության մեջ[1]:

«Խաչն» ու «Ազատության դրոշակը» մի կողմ էին չպրտված: Այն, ինչ կարելի էր լուծել ուղեղով, հիմա պիտի լուծեին թնդանոթները:

Ուրիշների բախտը տնօրինողները տաքացնում էին ձեռքերը մարդկային նոր կյանքեր լափող կրակին:

Երկրի՝ Մեծ Բուլղարիա ստեղծելու հավակնություններով տարված ղեկավարների խենթ արկածախնդրությունը նրանց դեմ հանեց եվրոպական հասարակական կարծիքը: Եղբայրասպան կռիվներն ու կոտորածը հուսախաբության դառը զգացումով ընդունեցին բալկանյան ժողովուրդների բոլոր բարեկամները, քանզի խորտակվում էր կնքված միությունը, և տկարանում էին Բալկանյան դաշնության բոլոր երկրներն առանձին-առանձին: Զէ՞ որ նույն բարեկամներն էին, որ անհուն ոգևորությամբ ու հիացմունքով էին դիմավորել Բալկանյան պետությունների եղբայրական դաշինքի ստեղծումը, նրանց ձեռք բերած աննախադեպ հաղթանակները Թուրքական բանակների դեմ մղած արյունահեղ կռիվներում:

Հունիսի 24 (հուլիսի 7)-ին բուլղարները Պիրոտում հասնում են կարճատև հաջողության: Հունիսի 26 (հուլիսի 9)-ին հույները մտնում են Ստրումիցա: Հաջորդ օրը Ռումինիան պատերազմ է

---

[1] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»,*** *№ 5083, 29 հունիսի (12 հուլիսի) 1913 թ.:*

հայտարարում Բուլղարիային և ռազմակալում Դոբրուջան, իսկ հունիսի 28 (հուլիսի 11)-ին հույները գրավում են Կավալան:

Հունիսի 30 (հուլիսի 13)-ին հրաժարական է տալիս Տանևի բուլղարական կառավարությունը: Սոֆիայում ձևավորվում է Ռոդոսլավովի վարչակազմը:

Մինչ Սերբիան և Հունաստանը պատրաստվում էին ըմբոշխնել իրենց հաղթանակների պտուղները, Ռումինիան, օգտվելով դրացի Բուլղարիայի ծանր վիճակից (անընդհատ կռիվներում նա ուժասպառ էր եղել), միացավ Սերբիային և Հունաստանին[1]:

Բուլղարական բանակը ձախողված նահանջում էր ահագին կորուստներով, իսկ Սերբիայի և Հունաստանի ռազմուժը նույնքան և գուցե ավելի մեծ կորուստներով առաջանում էր՝ հակառակորդին պարտության մատնելով ամենուր:

Կարծես դա բավական չէր. ռումինական բանակն էլ պատրաստվեց խուժել հյուսիսից և տարածվել բուլղարական հողերի վրա:

Սոֆիայում Ռումինիայի դեսպանը 1913 թ. հուլիսի 10 (23)-ին բուլղարական կառավարությանը հանձնեց ծանուցագիր, որում ասված էր, թե Բուլղարիան պատերազմ է գրգռել միջազգային օրենքի բոլոր կանոններին հակառակ, ուստի Ռումինիան անհրաժեշտ է գտնում ռազմական գործողություններ ձեռնարկել և բանակին հրամայել մտնել Բուլղարիայի սահմաններից ներս:

Հուլիսի 11 (24)-ին հունական և սերբական բանակներին հաջողվեց միանալ Սթրումջայում: Բուլղարիայի պարտությունն այլևս անուրանալի էր, և նա խնդրեց հաշտության բանակցություններ սկսել:

Նույն օրը ռումինական բանակն անցավ Բուլղարիայի սահմանը և գրավեց Սիլիստրիան՝ չրջակա ամրություններով: Հուլիսի 12 (25)-ին բանակը տարածվեց սահմանագլխի ամբողջ գծով մեկ, իսկ հուլիսի 13 (26)-ին առաջացավ դեպի հարավ: Բուլղարական կառավարությունը հրամայել էր որևէ դիմադրություն

---

[1] Տե՛ս **Х. З. Габидуллин**, *Младотурецкая революция*, с. 162.

ցույց չտալ ռումինական բանակին: Վեց օրվա ընթացքում ռումինացիները գրավեցին այն բոլոր տարածքները, որ նախատեսել էին ռազմական պլանով[1], և ընդհուպ մոտեցան Վառնային:

Այդ օրերին հույները իրենց հերթին գրավել էին Դոյրան, Կևկելի, Ավրաթ Հիսար, Դեմիր Հիսար, Լահանա, Սերեզ և Դրամա մեծ ու փոքր քաղաքները:

Հուլիսի 10 (23)-ին ռումինական զորքերը հայտնվում են համարյա Սոֆիայի մատույցներին:

Հուլիսի 12 (25)-ին հույները գրավում են Ալեքսանդրուպոլը (Դեղեաղաջ): Նույն օրը սերբական և ռումինական զորքերը Վիդինի մոտ (Բուլղարիա) արդեն հանդիպում են իրար և միավորվում: Այդ օրը նրանք անցնում են Բուլղարիայի պետական սահմանը և ներխուժում երկիր: Հուլիսի 16 (29)-ին հայտարարվում է Մակեդոնիան Սերբիայի և Հունաստանի միջև բաժանելու մասին:

Վերահաս վտանգին ի տես՝ բուլղարական կառավարությունը ձեռնարկում էր միջոցներ՝ ամրացնելու Սոֆիայի մատույցները և բուն մայրաքաղաքը:

Լիովին ուժասպառ եղած Բուլղարիան 1913 թ. հուլիսին ստիպված էր հանձնվել հաղթողների դատին և խաղաղություն խնդրել[2]: Հուլիսի 16 (29)-ին ռազմական գործողությունները դադարեցին:

Բալկանյան պետությունների եղբայրասպան պատերազմից օգուտ քաղեց ընդարձակ հողատարածքներ, մարդկային մեծ զանգվածներ և հսկայական հարստություններ կորցրած, ընկճված և հուսահատ ոսոխը: Զնայած նա գլխովին ջախջախվել էր, բայց բախտի մի խաղով նրան վիճակվել էր հասնել անկանխատեսելի հաջողությունների:

1913 թ. հուլիսի 16-ին Բ. Դոանը տեղի ունեցած արտակարգ նիստում վարչապետը հայտարարեց, թե Թուրքիան ավելի չուտ կհամաձայնի կորցնել Հայաստանը, քան Ադրիանուպոլիսը:

---

[1] ***Համբարձում Երամեան***, *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատոր Բ, էջ 158:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»***, *№ 3, 5 Հունվարի 1914 թ.:*

Որոշվեց վերագրավել կորցրած տարածքների գոնե մի մասը:

Զաթալջայի բանակը հրաման ստացավ առաջ ընթանալ: Ուրիշ ուղղություններով (հատկապես Գելիբոլուից և Մարմարայի եզերքից) հարձակման անցան Թուրքական այլ զորամասեր:

Հուլիսի 19-ին Բ. Դուռը եվրոպական պետություններին մի ծանուցագրով հայտնեց, որ ինքը չեղյալ է հայտարարում Թուրք-բուլղարական Էնոս-Միեդիա սահմանագիծը, որը հաստատված է 1913 թ. մայիսի 17 (30)-ի հաշտության պայմանագրով, միաժամանակ առաջ քաշեց նոր սահմանագծի պահանջ, որը սկսվում է Էնոսից և, հետևելով Մարիցայի հոսանքին, բարձրանում է դեպի հյուսիս՝ Ադրիանուպոլիսը թողնելով Թուրքիային: Միայն այդ սահմանագիծը կարող է ռազմավարական արժեք ունենալ ու ապահովել Կ. Պոլսի և Դարդանելի պաշտպանությունը, ասված էր Թուրքիայի կառավարության ծանուցագրում:

Վերջին օրերին բուլղարները նույնիսկ փորձ չարեցին պաշտպանելու Ադրիանուպոլսի (Էդիրնեի) վիլայեթը:

Ավելի քան չորս հարյուրամյակ շարունակ օսմանյան բռնակալներն իշխել էին Բալկաններում: Հիմա նրանց կրկին ներկայացել էր պահը՝ նորից տեր դառնալու 19-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի միջոցով և Ռուսաստանի աջակցությամբ անկախության հասած բալկանյան երկրներին: Թվում էր, թե Եվրոպական ցամաքամասի վրա վերստին ընդարձակվելու Թուրքերի հույսերն արդեն չքացել էին: Բայց այս անգամ էլ Թուրքերը գերազանց օգտագործեցին հանգամանքներն ու պահը:

Թուրքական իշխանությունները չատ լավ գիտեին, թե ինչ ասել է եվրոպական կոնֆերանս, կոնֆերանսի վճիռներ, դիվանագետների խրոխտանքներ: Այդ ամենի արժեքը նրանց լավ հայտնի էր: Նրանք քաջ գիտեին նաև, որ դիվանագիտության գլխավոր փաստարկը բռնի ուժն է, ուստի համոզված էին, որ տերությունների դիվանագետները երբեք մի ընդհանուր համոզմունքի չեն գալու, իսկ զատ-զատ ի վիճակի չեն լինելու խանգարելու իրենց գործողությունները:

Երիտթուրքերը ամենից առաջ նպատակ էին դրել վերստին գրավել Ադրիանուպոլիսը, այնուհետև անցնել Մարիցա գետը, իրենց հաղթական դրոշը պարզել բուլղարական հողերի վրա, ապա պատժիչ գործողություններ ձեռնարկել Սերբիայի, Չերնոգորիայի և Հունաստանի նկատմամբ:

Ոգեշնչված հակառակորդի պարտություններից՝ օսմանյան զորամասերը Էնվեր փաշայի գլխավորությամբ հարձակման անցան Ադրիանուպոլիս (Էդիրնե) քաղաքի ուղղությամբ և առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավեցին Ռոդոսթոն, Չորլուն, Սիլիվրին, Մալգարան, Կըրխ-Քիլիսեն և մեծ ու փոքր ուրիշ բնակավայրեր, համարյա ամբողջ Թրակիան:

Բուլղարական զորքն այլևս անկարող էր լուրջ դիմադրություն ցույց տալու: Թուրքական թերթերը գրում էին, թե Բ. Դուռը մտադիր է Օսմանյան հեղափոխության առաջիկա տարեդարձը մեծ շուքով նշել Ադրիանուպոլսում[1]:

Առանց ճակատամարտ տալու բուլղարները թողեցին բերադաքաղաքը: Էնվերը չահեց ձրի հաղթանակի պսակը:

Դաշնակցության «Դրոշակը» ցավով պիտի նշեր, որ «քրքջացող և գոռոզ տևտոնը (գերմանացին – Հ. Ս.) բերկրանքով դիտում էր իր օսմանցի հովանաւորեալի վերադարձը դեպի Էտիրնե»[2]:

Թուրքական հրամանատարությունը վերատիրված Ադրիանուպոլսում տեղակայեց մեծաթիվ զորք, տենդագին աշխատանքներ սկսվեցին էլ ավելի ամրացնելու բերդապարիսպները:

Ադրիանուպոլսի վերագրավումը երիտթուրքական իշխանությունների համար հրաշալի առիթ էր իրենց խիստ ընկած վարկը վերստին բարձրացնելու համար:

Թուրքական բանակի հետագա առաջխաղացումը դեպի Մարիցայի աջ ափը նոր տագնապ էր առաջացրել ողջ Բալկաններում և լուրջ մտահոգություններ՝ Եվրոպայում, քանզի արդեն խախտվել էր Լոնդոնի դաշնագրով սահմանված սահմանագիծը Թուրքիայի և Բուլղարիայի միջև:

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»,** № 29, 19 Հուլիսի 1913 թ.:

[2] **«Դրօշակ»,** № 1, Հունվար, 1914, էջ 1:

Ի՞նչ պիտի լիներ եվրոպական պետությունների դիրքը Լոնդոնի դաշնադրության այս բոնաբարման հանդեպ: Արդյո՞ք նրանք պիտի ընդունեին կատարված իրողությունը, թե՞ ոչ:

Նախ Ադրիանուպոլսի և Թրակիայի կորուստը Բուլղարիայի համար ստեղծում էր մի չափազանց լուրջ կացություն, որովհետև դրանով անպայման խախտվում էր բալկանյան հավասարակշռությունը, այսինքն՝ այն հիմնական սկզբունքը, որ Բուխարեստի դաշնադրության անկյունաքարն էր:

Հուլիսի 17 (30)-ին Բուխարեստում բացվեց հաշտության կոնֆերանսը, և հայտարարվեց կրակի դադարեցում: Հաջորդ օրը՝ հուլիսի 18 (31)-ին, կնքվում է հաշտության պայմանագիր բալկանյան երկրորդ պատերազմի մասնակից բոլոր կողմերի միջև:

Հաշտության պայմանագրով Թուրքիային վերադարձվեց նրա եվրոպական տիրույթների մի մասը՝ Ադրիանուպոլիս քաղաքով հանդերձ: Սուլթանի իշխանության տակ եղած օսմանյան տերության եվրոպական մասի 185.700 քառ. կմ տարածությունից Թուրքերին տրվեց իրենց վերագրված 29.200 քառ. կիլոմետրը, այսինքը՝ նախկին ունեցածի հազիվ 1/6 մասը[1]:

Թուրքիայի կորցրած տարածքները բաժանվեցին հետևյալ կերպ. ամենից չատ ստացավ Հունաստանը՝ 56.000 քառ. կմ, Սերբիային բաժին ընկավ 39.000 քառ. կմ, Ալբանիան, որը վերածվել էր անկախ նոր պետության, վերահսկում էր 30.300 քառ. կիլոմետրը: Չերնոգորիան ձեռք բերեց միայն 5.100 քառ. կիլոմետր[2]:

Ինչ վերաբերում էր Բուլղարիային, որը պատերազմի ընթացքում Թուրքիայից նվաճել էր 57.000 քառ. կմ տարածք, ստացավ միայն դրա 26.100 քառ. կիլոմետրը, այսինքն՝ իր կողմից գրաված տարածքներից կեսից էլ պակասը[3]: Բայց դա դեռ ամբողջը չէր. նա ստիպված եղավ նաև իր ազգային տարածք-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 3, 5 հունվարի 1914 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

ներից Ռումինիային զիջել 8340 քառ. կմ տարածություն[1]:

Բուխարեստի պայմանագիրը ծայրահեղ ստորացուցիչ էր Բուլղարիայի համար: Երեկվա հաղթական բուլղարական պետությունը հիմա մնացել էր ձեռնունայն ու գլխիկոր: Բուլղարացիները ստացել էին մի վերք, որը բուժելու համար չատ տարիներ էին պետք:

1913 թ. հուլիսի 24-ին Պետերբուրգի հայկական խմբակի անդամներ Ա. Սարուխանյանը և Ս. Տիգրանյանը այցելեցին Պետերբուրգի բուլղարական դեսպանատուն և ռուսաց մայրաքաղաքի հայերի անունից դեսպան Բոբչևին հավաստեցին իրենց բարեկամությունը, միաժամանակ բուլղար ժողովրդին ցավակցություն հայտնեցին Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ նրան բաժին ընկած ծանր փորձությունների համար: Ապա պատվիրակությունը չնորհակալություն հայտնեց եղբայրական բուլղար ժողովրդին՝ Բուլղարիայում ապրող հայերի նկատմամբ ցուցաբերած սիրալիր վերաբերմունքի համար: Դեսպանը, զգացված այդ այցելությունից, չեչտեց, որ երկու ժողովուրդների բարեկամությունն ավելի ամրապնդվեց պատերազմական փորձությունների օրերին[2]:

Բուլղարների պարտությունը ծանր էր նստել հայության վրա: Առաջին և երկրորդ պատերազմներում հայերը կրել էին մարդկային մեծ կորուստներ ու նյութական հսկայական վնասներ: Փոխվել էր բալկանյան երկրներում նրանց տեղաբաշխման պատկերը:

Եթե 1912 թ. Հունաստանի հայերը մի պատկառելի թիվ էին կազմում, ապա երկրորդ պատերազմի հետևանքով մոտ 1000 հայ անցել էր հունական տիրապետության տակ՝ Թրակիայում: Իսկ Բուլղարիայի և Ռումինիայի հայերի թիվն ավելացավ Թուրքական բանակում ծառայող հայ ռազմագերիների և Եվրոպական Թուրքիայից դեպի այդ երկրներ փախուստ տված հայ ընտանիքների հաշվին:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 3, 5 հունվարի 1914 թ.:

[2] Տե՛ս "Протоколы заседаний Петербургского армянского кружка", том I, էջ 294:

Դեռևս հուլիսի 12-ին Բ. Դուռը հրաման էր արձակել Թուրքիայի կողմից վերագրավված բոլոր շրջաններից հայերին արտաքսելու մասին՝ առանց բացատրության և հիմնավորումների: Եվ դա այն դեպքում, երբ երկու պատերազմների ողջ ընթացքում Կ. Պոլսի հայկական թերթերն առանց բացառության կանգնած էին կառավարության կողքին: Հայ հարուստներն իրենց թվի համեմատ բանակի հիմնադրամին ավելի շատ նվիրատվություններ էին արել, քան իսլամները: Ոչ մի Թուրք իր փողի քսակն այնքան առատաձեռն չէր բացել, ինչպես մեծահարուստ Հովհաննես բեյը, որը բանակին տվել էր 175 հազար ռուբլուն համարժեք օսմանյան ոսկի:

Այդ ամենի դիմաց ի՞նչ չահեցին հայերը:

Նույնիսկ ամենաարյունահեղ կռիվների ժամանակ, երբ Թուրք զորամասերում ծառայող հայերը հերոսության ու անձնազոհության օրինակներ էին ցույց տալիս մուսուլման զինվորներից շատերին, վերջիններս չէին դադարում ատել նրանց, ամեն առիթով զազրախոսում ու այպանում էին «գյաուրների» անձը, հավատն ու պատիվը:

Պատերազմից դարձող հայերը, տեսնելով իրենց նկատմամբ իշխանությունների և մուսուլման բնակչության բիրտ վերաբերմունքը, Պոլսից փախան Ռուսաստան և Ամերիկա: Ինչպես տեսանք, Ռոդոսթոյում հայ բնակիչները խմբովին կոտորվեցին: Հայերը նորանոր հալածանքների ենթարկվեցին բուն Հայաստանում:

Հայերի ակնհայտ ու իրական ծառայությունների հանդեպ Թուրքիայի ցուցաբերած այս ապերախտ վերաբերմունքից հետո հայ մարդը կարո՞ղ էր այլևս ուրիշ անգամ, եթե պահանջեր պահը, կրկին իր կյանքն ու դրամը տալ այն երկրի կառավարությանը, որ իրեն մերժում էր մարդկային ամենատարրական իրավունքները, նույնիսկ կյանքի ապահովությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Բալկանյան առաջին պատերազմին մասնակցած հայ կամավորական զորամասի մարտիկները Անդրանիկի, Նժդեհի, Թորգոմի գլխավորությամբ Դանուբի վրայով անցան Անդրկովկաս և ձեռնարկեցին հայ կամավորական զորամասերի ստեղծմանը, կռվեցին ռուսա-

կան բանակների չարքերում՝ ներդնելով իրենց ռազմական փորձն ու հմտությունը:

Եղբայրասպան պատերազմը ողջ հայությունը ճակատագրական զանցանք համարեց: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այդ հիմար պատերազմի երեսից անհուն նոր տառապանքներ պիտի կրեին բալկանյան ազգերը և առաջին հերթին իրեն չատ հոգեհարազատ բուլղար ժողովուրդը, այլև այն պատճառով, որ դրանից նորանոր աղետներ էին սպասվում նաև իրենց հայրենիքին՝ Հայաստանին:

Եվ օրինաչափ էր, որ հայկական վաչտը մասնակցություն չունեցավ Բալկանյան երկրորդ պատերազմին: Անդրանիկն այն համարել էր անմիտ ու դատապարտելի: Մանկամտություն համարելով Սոֆիայի անհեռատես քաղաքականությունը՝ նա կանխատեսել էր բուլղարական բանակի ջախջախիչ պարտությունը: Իր տեսակետը նա հայտնել էր նաև բանակի հրամանատարությանը: Շատ տարիներ հետո բուլղար ռազմական գործիչներից ոմանք խոստովանում էին, որ եթե իրենց կառավարությունն ունկնդիր լիներ հայ ժողովրդի ազգային հերոսին, ապա չէր կանգնի ամոթալի պարտության իրողության առջև:

Վերը նշել էինք, որ Ռոդոսթո-Գալիպոլու նահանգի վերջին նահանգապետ Իվան Դիմիտրովը 1937 թ. օգոստոսի 18-ին "Яворовъ листъ" թերթում տպագրած հոդվածում վերհիշել էր երկրորդ պատերազմի նախօրյակին հայ գործիչների կողմից իրենց արած նախազգուշացումներն ու խորհուրդները, այն է՝ չմտնել նոր արյունահեղության մեջ, քանի որ դա կարող է կործանարար լինել իրենց երկրի համար: Ցավոք, այդ խորհուրդներին բուլղար պատկան մարմիններն ունկնդիր չեղան[1]:

Եվ հիմա, երբ երկրորդ պատերազմը սկսված էր, և բուլղարները մեկը մյուսի հետևից պարտություններ էին կրում, հայերը կրկին դիմել էին բուլղարական իշխանություններին:

Իվան Դիմիտրովը վկայում էր. «Լոնդոնի հաշտության պայ-

---

[1] **Տե՛ս Айрапетян М.**, *На путях к мировой войне 1914-1918 гг., ОГИЗ, Госполитиздат, 1940, стр. 194.*

մանագրից հետո, երբ այլևս հայտնի էր, որ մեր արևելյան սահմանը կլինի Էնոս-Միդիան, առանց դեպի Մարմարա ելքի և առանց Ռոդոսթոյի-Թրակիայի, հայերը, նրանց հայտնի ներկայացուցիչները ինձ, որպես նահանգապետի, առաջարկեցին թույլ տալ Ռոդոսթոյի և ամբողջ արևելյան Թրակիայի հայերից կազմել ջոկատներ, որոնք կմիավորվեն 20-հազարանոց մի բանակի մեջ: Այդ բանակը, որը պիտի ունենար իր հրամանատարն ու հրահանգիչները, սպաներն ու ենթասպաները, կոչված պիտի լիներ պաշտպանելու Զաթալջա-Բուլայիր սահմանագիծը, արգելք հանդիսանալու թուրքերի առաջխաղացմանը Բուլղարիայի, հետևապես նաև՝ Եվրոպայի ուղղությամբ: Դա հնարավորություն կտար պահպանել այն հողատարածքը, որը Միդիա-Էնոս և Մարմարայից մինչև Բուլայիր ու Զաթալջա գծից ներս է: Դրանով իսկ այդ տարածքը կհոչակվեր չեզոք գոտի, որը Բուլղարիան կբաժաներ Թուրքիայից: Արդյո՞ք Թրակիացի հայերի ներկայացուցիչները այս առաջարկն ինձ արել էին, հայ ուսոյցիոներ Գարեգին Նժդեհի և զորավար Անդրանիկի կողմից, չգիտեմ: Բայց անկասկած նրանք մեծ հմայք ունեին Ռոդոսթոյի հայկական շրջանակներում և ամբողջ Թրակիայի հայ բնակչության մեջ»[1]:

Ի. Դիմիտրովը համոզված էր, որ, այդ ձեռնարկը պիտի լիներ զգայացունց ամբողջ Եվրոպայում և ամբողջ աշխարհում: «Մեր ազգային աղետը,- գրում էր նա,- միաժամանակ աղետն էր նաև ոչ միայն Բալկանյան թերակղզում ապրող հայ ազգաբնակչության, այլև ամբողջ հայ ժողովրդի: Նա այնքան ջերմորեն նվիրված էր մեր դատին, որ այդ տարվա մեր անմոռանալի ողբերգական կործանումը նրանն էր նաև»[2]:

Այնուհետև, վերհիշելով անցած-գնացածը, Դիմիտրովը սրտի ցավով եզրահանգում էր, որ եթե Բուլղարիայի ղեկավարները ականջալուր լինեին միջդաշնակցային պատերազմից խուսափելու հայ գործիչների հորդորներին, ապա «Բուլղարիան

---

[1] Իվան Դիմիտրովի հոդվածը տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 3 (թերթի պատճենը):

[2] Նույն տեղում:

կկարողանար պահպանել արևելքում Լոնդոնի դաշնագրով վավերացված իր Էնոս-Միդիա սահմանագիծը և ամբողջ Բելոմորեի ծովեզերքը՝ մինչև Խալկիդա: Մեծ օգուտներ կունենայինք և, բացի առաջնակարգ զինվորական ուժի հմայքից, մենք կշահեինք նաև բալկանյան ամենամեծ պետության անունն ու պատիվը»[1]:

Իսկ Թուրքիան խրախճանքի օրեր էր ապրում: Արբեցած անակնկալ, երկնառաք հաջողությունից (առանց մի կաթիլ արյուն թափելու նա տիրացել էր կորցրած երկրների մի մասին) և օգտվելով անհեռատես բալկանյան դաշնակիցների միջև տեղի ունեցած արյունալի դրամայից և չարունակվող թշնամությունից՝ մտածում էր ավելի առաջ գնալ:

«Հնչակը» աղեկեղ գրում էր. «Անշուշտ, թրքական կայսրութեան ճակատագիրը աւելի չուտ եւ բոլորովին այլ կերպ կտօրինուէր, եթէ Բալքանեան պետութիւնները իրարու հետ մի ընդհանուր համաձայնութեան կամ դաշնակցութեան յանգած լինէին, բայց որովհետեւ նրանք բոլորն էլ առանձին առանձին վեր առած մեծամոլական ձգտումներով են տոգորուած, ուստի եւ միմեանց նկատմամբ հակամարտական ձգտումներ ունեն, քան համերաշխական, եւ հէնց այդ առիթից մեծապէս օգտւում է ինքը տաճիկը իր տիրապետութիւնը [Բալկաններում] պահելու...»[2]:

1913 թ. հունիսի 16 (29) -ից մինչև օգոստոսի 10 տևած[3] երկրորդ Բալկանյան պատերազմի հետևանքները երիտթուրքերին հիմք տվեցին պատերազմում թուրքական բանակի պարտության պատասխանատվությունը բարդել իթթիլաֆական Մուխտար և Քեամիլ փաշաների կառավարությունների վրա, իսկ հաղթության պատիվը վերագրել իրենց:

Բալկանյան դաշինքի քայքայումով, դեպի Ավստրիա Բուլղարիայի կողմնորոշումով և ազատագրված տարածքների մի

---

[1] *Իվան Դիմիտրովի հոդվածը տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 93, թ. 3 (թերթի պատճենը):*

[2] ***«Հնչակ»,*** *№ 7, հուլիս, 1907, էջ 80:*

[3] ***Տե՛ս Х. З. Габидуллин****, Младотурецкая революция, с. 162.*

մասի՝ Թուրքիայի կողմից վերագրավումով տեղի ունեցավ պան-սլավոնիզմի գաղափարախոսության վիժումը, ձախողվեց Բալկաններում ռուսական քաղաքականությունը:

Այսպիսով՝ մի ամբողջ տարի տևած նախճիրներին ու մոլեգնություններին, որոնց «Բալկանյան պատերազմ» էին անվանում, փոխարինելու էր գալիս այսպես կոչված «խաղաղությունը»՝ խուլ ատելությունների ու անդադար դավերի ժամանակաշրջանը: Խաբուսիկ է այդ խաղաղությունը, գրում էր «Աւետաբերը»: Մարդկությանն անհրաժեշտ է «իրական խաղաղութիւնը՝ հիմնուած ազգերու իրաւունքին եւ ճշմարիտ արդարութեան վրայ»[1]:

Բալկանյան երկու պատերազմներից հետո Թուրքիան չհաշտվեց իր կրած պարտությունների հետ, բայց թվում էր, թե գոնե ինչ-որ տեղ պետք է բավարարված լիներ, որ ճակատագրի մի խաղով վերատիրացել էր իր կորցրած տարածքների մի շատ կարևոր ու շատ արժեքավոր մասին: Բայց այդպես չեղավ: Ընդհակառակը՝ կայսրությունով մեկ ծայր առավ ազգայնամոլական մի աննկարագրելի նոր ալիք: Ամենուր բորբոքվում էր թշնամանքը բուլղարների, ինչպես նաև նրանց աջակից եղած հայության նկատմամբ:

Պատերազմից անմիջապես հետո Իթթիհադի տեղական կոմիտեների պատասխանատու քարտուղարներն այդ օրերին Թուրք ժողովրդին դիմում էին մարդատյաց կոչերով՝ թուրքերի հարյուրամյակների գազանությունների մեղքերը բարդելով քրիստոնյաների վրա:

Ահա այդ դիմում-կոչերից մեկում տեղ գտած «մտքի գոհարները».

«Դաժան թշնամին սպանդանոց է դարձրել մեր հայրենիքը: Նա անգթորեն սպանում էր մեր հայրենակիցներին, կտրատում սպիտակամորուս ծերունիների ձեռքերն ու ոտքերը, չիկացած երկաթով խանձում նրանց աչքերը, հալած կապար լցնում հոգևորականների բերանը..., կտրատում է կանանց կուրծքը,

---

[1] **«Աւետաբեր»,** № 39, 27 սեպտեմբերի 1913 թ.:

պատռում նրանց արգանդը և դուրս բերում հասունացող պտուղը: Մանուկներին, մուսուլմանների հեզ փոքրիկներին սվինի ծայրն առած խորովում է խարույկի վրա: Մարդկային այրված մսի մուխն ու գարշահոտը բռնել է երկինքը: Գետնի վրա քայլելու տեղ չկար, ամեն տեղ թափված էին դիակներ, կտրված գլուխներ, մարդկային փորոտիք: Թշնամին հրկիզում էր գյուղերն ու ագարակները, ծառերից կախում մեր պատանիներին, հափշտակում մեր ջրի նման մաքուր աղջիկներին: Թշնամին հրճվում էր ավերածության ու բռնության տեսարաններով և հանգիստ ծխում է իր ծխամորճը... գետերը կարմրեցին մուսուլմանական արյունով...:

Բավ է քնել: Բաց արեք ձեր աչքերը, արթնացեք անհոգ քնից: Պատերազմ է: Դա երկու ազգի պատերազմ չէ: Ո՛չ, դա խաչի և կիսալուսնի, քրիստոնեության և մահմեդականության պատերազմ է: Եվ եթե մենք մտածենք, որ պատերազմը վերջացել է, և անհավատները հանգիստ են թողել մեզ, ապա չարաչար կսխալվենք... Մեր թշնամիները գաղտնի պատրաստվում են... Բայց մենք ոչխարներ չենք: Մենք թույլ չենք տա, որ նրանք կապեն մեր ձեռքերն ու ոտքերը, թույլ չենք տա, որ մեզ խեղդեն...

Թող հայրենասիրական սրբազան հուրը վառվի մեր սրտերում և այրի Եվրոպան... Մեր մեծ ազգն արդեն բաց է արել իր աչքերը: Եվ հասկացել է, թե ո՛վ է մեր բարեկամը և ո՛վ է մեր թշնամին: ***Եվ եթե քրիստոնեական Եվրոպան հավաքել է խաչակիրների բանակ****, ապա մենք կկազմենք կիսալուսնի մուսուլմանական բանակ.....»*[1]*:*

Այս հորինովի սարսափելի տեսարանները նկարագրելուց հետո կոչի հեղինակները դիմում էին կայսրության թուրք բնակչությանը՝ վրեժխնդիր լինել այդ բոլորի համար: Բալկանյան ժողովուրդները, նրանց զինվորները 1912–1913 թթ. գազանություններ չեն գործել, դա թուրքերի ավանդական գործելաոճն էր: Քանի որ այդ ժամանակ Իթթիհադի ձեռքը չատ կարճ էր Եվրոպայից կամ բալկանյան ժողովուրդներից վրեժխնդիր լինելու համար, մնում էր եզրակացնել, որ կոչ-դիմումը անմիջակա-

---

[1] ***Рашид Нури Гюнтегин****, Зеленная ночь, Москва, 1963, стр. 60-61.*

նորեն հետապնդել էր հայության համատարած կոտորած նախապատրաստելու գաղափարը: Նման կոչ-դիմումներ տարածվում էին Անատոլիայի բազմաթիվ բնակավայրերում:

1913 թ., երբ նմանօրինակ սադրիչ ահազանգերի պակաս չկար, Իթթիհադի կոմիտեի ցուցումով հայ առևտրականների և արհեստավորների ապրանքների դեմ բոյկոտ հայտարարվեց: Այն սկսվեց Սեբաստիայում և շուտով տարածվեց ամբողջ Անատոլիայում: Բոյկոտը, սակայն, էական արդյունք չտվեց, որովհետև ապաշնորհ և միանգամայն անընդունակ թուրք արհեստավորները ի վիճակի չէին բավարարելու թուրք հարուստ վերնախավի արդեն նրբացած ճաշակը, իսկ թուրք առևտրականները, որոնք մասնագիտացել էին միայն անասունների, արմտիքի ու չոր մրգի մեծածախ առևտրի մեջ, շատ ապաշնորհ էին մանուֆակտուրայի և պերճանքի առարկաների գծով չուկայի պահանջը հաշվի առնելու և բավարարելու համար: Կոմպրադորական կապիտալը գերազանցապես քրիստոնյաների, հատկապես հայերի ձեռքին էր, և կապը արտասահմանյան ֆիրմաների հետ նրանք էին պահպանում: Բոյկոտի՝ որպես «Ազգային նախաձեռնության» վրա առաջին հերթին ծիծաղում էին մեծահարուստ թուրքերը, որոնք քմծիծաղելով վիժեցրին այդ նախաձեռնությունը: Բայց ապարդյուն անցած բոյկոտն է՛լ ավելի զայրացրեց թուրք ազգային թույլ բուրժուազիային:

Թեև Ադրիանուպոլսի և չրջակա տարածքների վերագրավումը անցողիկ հույսեր ու ոգևորություն էին առաջ բերել թուրքերի մոտ, բայց բոլորը գիտակցում էին, որ ընդամենը երկու տարում աֆրիկյան տիրույթներում և Բալկաններում իրենց կրած կորուստներն այնքան մեծ են ու անդառնալի, որ այլևս խոսք լինել չի կարող օսմանյան հզոր կայսրության մասին, քանզի այն վերածվել է միջին կարողության պետության:

Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմներում (1911-1913 թթ.) Թուրքիայի կրած տարածքային կորուստներին լույս է սփռում ստորև բերած աղյուսակը (1914 թ. հունվարի 1-ի դրությամբ)[1]:

---

[1] Տե՛ս **Н. Сокольский,** *Очерки современной Турции,* էջ 3:

	1911 թ. Հունվարի 1	1914 թ. Հունվարի 1	Կորուստներ
	Քառակուսի կիլոմետրերով		
Եվրոպական Թուրքիա	169.317	27.206	150.729
Ասիական Թուրքիա	1.766.800	1.766.800	–
Աֆրիկյան Տրիպոլի	1.051.000	–	1.051.000
Ամբողջ օսմանյան կայսրություն	2.987.117	1.794.006	1.201.729

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, 1914 թ. պատերազմից առաջ՝ սկսած 1911 թ., Թուրքիան կորցրել էր իր նախկին տարածքի 1/3-ից ավելին. զրկվել էր ամբողջ Բալկաններից՝ բացառությամբ Ադրիանուպոլսի ու Կոստանդնուպոլսի միջև ընկած տարածքի, կորցրել էր նաև իր աֆրիկյան բոլոր տիրույթները:

ՌՈԴՈՍԹՈՅԻ ԵՎ ՄԱԼԳԱՐԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՋԱՐԴԸ

«Բիւզանդիոն» թերթի խմբագիրը հույս ուներ, որ Թրակիա վերադարձած թուրքերը տեղացիներից վրեժ չեն լուծի: Նա համոզված էր, որ Բ. Դուռը Պոլսին մոտ գավառներ կուղարկի կարող և լուսամիտ կառավարիչներ, արդարասեր և ուղղամիտ դատավորներ՝ «օսմանյան արդարութիւնը» անխտիր բաշխելու և՛ իսլամին հետևողին, և՛ քրիստոնյային ու հրեային: «Հետեւաբար այս կամ այն տարրի կողմէ այս կամ այն տարրէն վրէժ լուծելու խօսքեր չեն կրնար ըլլալ, եւ նոյն իսկ պուլկարներէն վրէժ հանելու համար անոնց վրայ բանակ մը ղրկելու տաքգլուխ խորհուրդները այսուհետ խոհական մտածութեան մի կողմ թողուած կրնան սեպուիլ այլեւս: Ռուսիա սպառնալիք ըրած ըլլայ թէ ոչ, Բ. Դրան հեռատես իմաստութիւնն կը բաւեր այնպիսի ձեռնարկի մը բոլոր վտանգներն աչքի առջեւ բերելու»[1]:

[1] **«Բիւզանդիոն»,** № 5083, 29 Հունիսի (12 Հուլիսի) 1913 թ.:

Հակառակ այդ լավատեսության՝ Բալկաններում հայերի կացությունը 1913 թ. հուլիս–օգոստոս ամիսներին գնալով ծանրացավ նորանոր անակնկալ աղետներով:

Վերագրավված տարածքներում թուրքերը՝ թուրք զինվորականությունը և տեղացի թուրք ամբոխը, վրեժխնդրության թույնով լի, սկսեցին քրիստոնյաների նկատմամբ արյունալի հաշվեհարդար տեսնել: Նորից պրկվեց դարավոր ոսոխի սպանիչ ձեռքը, նորից կենդանանում էր մահաբեր հիդրան, որին կյանքի կոչողը եղան երեկվա դաշնակիցների բիրտ ագահությունը և քաղաքական տհասությունը:

Առաջին հարվածն այս անգամ էլ ստացան հայերը, որոնք բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերել բուլղար զորքերի հանդեպ: Եվ հիմա, «Աւետաբերի» թղթակցի խոսքերով, նրանք «ո՛չ ազգակից և ո՛չ կրոնակից պետութիւն մը ունին, որուն պաշտպանութեան հոյս ունենան...»[1]:

Հարվածը նախ հասավ Ռոդոսթոյի (Թեքիրդաղ) հայերին:

Ռոդոսթոյի բուլղարական կարճատև ռազմակալման օրերին հայերից ոչ ոք մահմեդականների նկատմամբ որևէ վատ արարք թույլ չէր տվել[*]: Բայց ահա այժմ թուրքերը և ուրիշ մահմեդականներ մտնում էին հայերի տները և, անտեղի ոխակալությամբ ու ցասումով լի, նրանց վերագրում էին այնպիսի արարքներ, որոնցից բոլորովին անտեղյակ էին:*

Ուստի հայերը կազմեցին մի պատվիրակություն, որը երկարատև տեսակցություն ունեցավ մյութասերիֆի (գավառապետի) հետ: Հանդիպման ժամանակ պատվիրակությունը ջանաց նրան համոզել, որ հայերը բուլղարների քաղաք մուտք գործե-

---

[1] ***«Աւետաբեր»,*** *№ 31, 2 օգոստոսի 1913 թ.:*

[*] *Ինչպես դրան՝ դեռ 1912 թ. նոյեմբերի կեսերին Օսմանյան կառավարությունը Կ. Պոլսում կազմել էր մի հանձնախումբ, որին հանձնարարված էր տեղեկություններ հավաքել Ռումելիայի մուսուլմանների ջարդի մասին: Հանձնաժողովը, կատարելով ուսումնասիրություններ, իր եզրակացության մեջ ջարդերի հիմնական մեղավորներ էր համարել նաև հայերին, որոնք, իբր, դրանով առնում էին Ասիայում ապրող իրենց եղբայրների վրեժը (տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»,*** *№ 22, 27 հունվարի 1913 թ.):*

լուց հետո՝ անցած 7-8 ամիսների ընթացքում, որևէ թուրք բնակչի խեթ աչքով չեն նայել: Ավելին, պատվիրակությունը պատրաստակամություն հայտնեց մի տեղեկանք կազմել ու ներկայացնել, որում թվարկված կլինեին այն ծառայություններ-ը, որ Ռոդոսթոյի հայերն այդ ժամանակամիջոցում ցույց էին տվել քաղաքի թուրքերին:

Բուլղարական զորքն արդեն հեռացել էր քաղաքից՝ այնտեղ թողնելով քաղաքացիական իշխանությունը և մի փոքր զորա-մաս՝ քաղաքը պաշտոնապես թուրքերին փոխանցելու համար:

Հուլիսի 1-ին՝ երկուշաբթի առավոտյան, նավահանգիստ մտավ անգլիական «Իմոջեն» պահականավը: Հայերը չունչ առան՝ մտածելով, թե անգլիացիները գուցե մի քանի օր մնան քաղաքում: Բայց նավը չուտով մեկնեց: Նրանք վախից փակեցին խանութները և տուն գնացին: Մինչ իրիկուն խուժանը, պտտվե-լով հայերի թաղերով, խուժում էր նրանց տները և զենք փնտրե-լու պատրվակով կատարում ամեն անօրենություն՝ աշխատելով ընդհանուր ջարդ սկսելու համար գտնել հարմար առիթ: Թեև դա տեղի չունեցավ, բայց ծայր էին առել ծեծն ու ջարդը[1]:

Թուրքական զորքերը առաջանալով մոտեցան Ռոդոսթո քաղաքին: Բուլղարական զորքերը և քաղաքի բուլղար իշխա-նությունները հունիսի 30-ին նախապես հեռացել էին քաղաքից: Այնտեղ մնացել էին միայն մի քանի պահակ բուլղար զինվորներ ու ժանդարմներ, գայմագամը (նահանգապետը) և կոմիսար Մկրտիչ Թաքիրդաղլյանը՝ քաղաքի հանձնման արարողությունը կատարելու համար:

Նույն օրը՝ հուլիսի 1-ին, Խազ-Օղլուի կողմից երևաց երեք չոգենավ: Նրանցից մեկը լեցուն էր զինվորներով, մյուս երկուսը մարտանավեր էին: Ամենքը նավամատույց իջան՝ թուրքերին դիմավորելու: Այնտեղ գնացին նաև բուլղար գայմագամը և կոմիսարը, որպեսզի ժամանածներին առաջնորդեին քաղաք, այն պաշտոնապես հանձնեին թուրքերին և մեկնեին: Սակայն բուլ-ղար պաշտոնյաներին անակնկալ էր սպասվում: Զինվորները նավից դուրս գալուն պես, դրոշակ բարձրացրած, սկսեցին քա-ղաքը գրավելու գործողությունը:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 158, 16 հուլիսի 1913 թ.:

Առաջինը սպանվեց քաղաքի հայազգի կոմիսարը՝ Մկրտիչ Էֆենդին, որը պատրաստվում էր հանձնել քաղաքը: Թուրք բնակչությունը այդ գործողություններին արձագանքում էր ուրախությամբ: Նույն պահին տեղացի Թուրքերի կողմից սպանվեցին մի քանի բուլղար ժանդարմներ, հայ և հույն քաղաքացիներ[1]:

Երբ ցերեկվա ժամը 1-ին, նավահանգիստ մտան Թուրքական ականակիր նավեր՝ չորս հարյուր զինվորով՝ հիմնականում ազգությամբ լազեր, որոնք ցամաք իջնելուն պես սկսեցին հրացանային կրակ տեղալ իրենց դիմավորելու եկած բուլղար զորամասի վրա[1]:

Նկատելով փախչող բուլղարական բանակի ժանդարմին, որն ազգությամբ հայ էր, լազերն ընկան նրա հետևից և կրնկակոխ մտան տունը, ուր փորձում էր թաքնվել ժանդարմը: Լազերը, առանց ժամանակ կորցնելու, գնդակահարեցին նրան և տանը գտնվող երկու հայ կանանց: Դա ազդանշան եղավ, որ հայերի թաղում սկսվի կոտորածը[2]:

Կոտորածին մասնակցում էին ոչ միայն զինվորականները, այլև քաղաքի Թուրքերը, որոնք չէին մոռացել այն օրը (1913 Թ. հունվարի 6), երբ հայկական կամավորական վաշտը Անդրանիկի գլխավորությամբ մտել էր Ռոդոսթո, և տեղի հայերը նրան դիմավորել էին ցնծությամբ[3]:

Իրենց հերթին շրջակա գյուղերից քաղաք խուժած Թուրքերը որոնում էին թաքնված հայերին, լրացնում պակասը՝ կողոպտելով և սպանելով նրանց:

Այդ վայրկյանից խուճապը տիրեց ժողովրդին: Հայերն անմիջապես փակեցին խանութներն ու փախան տները: Շատերը, զենքերի ձայնից անակնկալի եկած, չկարողացան փախչել: Ընդհանուր ջարդի վտանգը դառնում էր իրական: Հայերն ու հույները լցվեցին իրենց տները:

Մինչև իրիկուն մահմեդական խուժանը շարունակում էր իր ոճրագործությունները՝ առանց, սակայն, համատարած ջարդ կատարելու: Դրա պատճառը տեղի հայերի ողջամտությունն էր. նրանցից ոչ մեկը ինքնապաշտպանական գործողության չդիմեց:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 158, 16 հուլիսի 1913 Թ.:

Նրանց մի անխոհեմ քայլը կարող էր մեծ աղետների առջև կանգնեցնել քաղաքի ողջ ոչ թուրք բնակչությանը:

Հայերի խանութները չարունակում էին փակ մնալ: Քաղաքի իշխանությունները նրանց կարգադրում էին դրանք բացել, իսկ խանութպանները չէին համարձակվում: Հենց կարգադրության օրը մի հայ փողոցում հարձակման էր ենթարկվել և մահացու վիրավորվել:

Կառավարչությունը քաղաքի քրիստոնյա և հրեա բնակչությանը ազդարարություն ուղղեց՝ պահանջելով, որ բոլոր նրանք, ովքեր բուլղարական գրավման ժամանակ զենք են ունեցել, անմիջապես հանձնեն թուրքական իշխանություններին՝ հակառակ պարագայում սպառնալով ամենախիստ պատիժներով:

Հուլիսի 2-ին՝ երեքշաբթի, օսմանյան զինվորները, բաժանված խմբերի՝ յուրաքանչյուրում՝ 4-5 հոգի զինյալ բաշիբոզուկներ, հարձակվում են չուկայում գտնվող հայերի վրա և սպանում նրանցից հինգին: Քանի որ թուրք զինվորները անհամբեր ձեռնարկել էին թալանի գործը, ուստի հայերը ժամանակ են ունենում փախչել տները:

Շուկայում թալանն ավարտելուց հետո թուրք զինվորները և նրանց չուրջը համախմբված խուժանը տեղի հրեա և թուրք հարևանների ցուցումներով թաքնված բուլղարներ և զենք փնտրելու պատրվակով մտնում են հայերի տները՝ չորթելու ոսկեղեն ու դրամ:

Նույն ժամանակ թուրք խուժանը խմբերով հարձակվում է դաշտում աշխատող հայերի վրա և սպանում նրանց: Սպանվածների մեծ մասը Ադրիանուպոլսի պաշտպանությանը մասնակցած նախկին զինվորներ էին[1]:

Ջնայած խստիվ արգելված էր քաղաքից դուրս գալը, բայց հայ կանայք ու այրեր, գնալով հրամանատարի մոտ, խնդրել էին հանձնել իրենց զավակների մարմինները, բայց մերժում էին ստացել:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 158, 16 հուլիսի 1913 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

Հայ բնակչության մեծ մասն ապաստան էր գտել տեղի օտար հյուպատոսարաններում: Նրանց մի մեծ խմբի պաշտպանություն էր տվել անգլիական հյուպատոսը: Ավստրիահպատակ Մովսես բեյի տանը հաշվվում էր ավելի քան 300 մարդ[2]:

Հուլիսի 3-ի (չորեքշաբթի) կեսօրից հետո Ռոդոսթո հասան քաղաքային և զինվորական թուրք պաշտոնյաներ, որոնց հետ՝ նաև 320 ոստիկաններ և մոտ 150 զինվորներ:

Հայերի նոր գնդակահարություններ տեղի ունեցան ուղղակի փողոցներում: Այդ օրը սպանվեց հինգ տասնյակից ավելի մարդ: Նրանց թվում էին Մովսես բեյը, Եղիա Պետրոս Սագրզլեանը, բուլղարական բանակի՝ գերի ընկած 15 հայ զինվորներ, որոնց թվում Եղիա Ճյուպարյանը, Սարգիս Մահմուզլյանը, Գաբրիել Սարգսյանը, Սիմոն Կարապետյանը, Հովհաննես Մանուկյանը և այլք[3]:

Նույն օրը քաղաք եկավ նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պատվիրակությունը: Գավառապետին չնորհավորական այցելություն տալուց և առաջնորդարանում հանդիպում ունենալուց հետո պատվիրակներն այցելեցին գերեզմանատուն, ուր ամփոփված էին քաղաքում նահատակված հայերի մարմինները: Մինչ նրանք գերեզմանատանն էին, կառքերով այնտեղ բերվեցին բազմաթիվ կացնահարված դիակներ: Զարհուրելի տեսարանը խուսափում էին նայել հյուպատոսարանների այնտեղ գտնվող աշխատակիցները: Հայ տղամարդիկ, մի կողմ քաշված, արտասվում էին, իսկ կանանց արձակած ճիչերը, լացն ու կոծն ականջ էին խլացնում:

Ռոդոսթոյում սպանված ու վիրավոր հայերի թիվն անցել էր 700-ից: Դեռևս բուլղարների կողմից Ռոդոսթոն գրավելու ժամանակ թուրք զինվորների հետ գերի էին ընկել նաև թուրքական բանակի չուրջ 100 հայ զինվորներ: Եվ ահա այժմ, երբ Ռոդոսթոն թուրքերի կողմից վերստին գրավվեց, բուլղարներին

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 150, 11 հուլիսի 1913 թ.:

[2] Տե՛ս **Հ. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, էջ 355-359:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 190, 30 հուլիսի 1913 թ.:

գերի ընկած հայ զինվորները զատվեցին գերի ընկած թուրք զինվորներից, ձերբակալվեցին ու հանձնվեցին ռազմադաշտային դատարանին: Վերջինս որոշեց նրանց աքսորել Էրզրումի վիլայեթ և բանտարկել, իսկ բանտարկության ժամկետը լրանալուց հետո կրկին զինվորական ծառայության ուղարկել: Ռազմաճակատում կռված երեկվա հայ զինվորները, շրջապատված հեծյալ թուրք զինվորներով, հետիոտն քշվում էին դեպի Էրզրում: Շաբաթներ շարունակ նրանք առաջ էին գնում քաղցած ու վհատ: Ականատեսը վկայում է, որ նրանցից մի քանիսի ոտքերին վերքեր էին առաջացել, որի պատճառով դժվարանում էին քայլել: Ձիավոր թուրք զինվորները նրանց հրմշտում էին և մտրակի հարվածներով առաջ քշում: «Քյաֆիր հայեր, – ասում էին թուրքերը, – դուք եք Ռումելին բուլղարների ձեռքը մատնողները: Ա՛յ ձեր ...»:

Քայլում էր խումբը նախատինքների տարափի տակ, լուռ համբերությամբ, ցավին ու տանջանքին ենթակա: Այդ ստորացուցիչ տեսարանի հայ ականատեսը ցավով ու զայրույթով շարունակում էր. «Հայո՛ց ազգ, ջահել զավակներիդ արյունն իսկ նվիրեցիր անհագ Մոլոքին-օսմանյան պետության – ու էլի նա արհամարհեց քեզ, թքեց մարալներիդ երեսին ու արյունին, ոտնակոխ արեց քո բոլոր սրբությունները»[1]:

Մարմարա ծովի մոտ՝ Ռոդոսթո ու Քեչան քաղաքների միջև, կար **Մալգարա** անունով մի գյուղ (գյուղաքաղաք): Դա դրախտանման բնակավայր էր՝ հայախոս ու ժրաջան ազգաբնակչությամբ, հայ, հույն և թուրք խառը բնակիչներով: Գյուղի բացարձակ մեծամասնությունը հայեր էին: Բացի հողագործներից՝ գյուղն ուներ մեծ թվով արհեստավորներ:

Հունիսի 14 (27)-ին՝ բուլղարական զորքի հեռանալիս, նրա հետ գյուղը լքեցին մոտ 50 հայ ընտանիքներ՝ հաստատվելու համար Բուլղարիայում[2]: Հուլիսի սկզբին թուրքական մի զորամաս՝ հիմնականում արաբներից բաղկացած, Ալի փաշայի հրա-

---

[1] Տե՛ս **Վարդան Ց. Խաչիկեան**, Մալկարայի հայ գաղութը (1610-1922 թուականներ), էջ 82:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 158, 16 հուլիսի 1913 թ.:

մանատարությամբ մտնում է Մալգարա: Ժողովուրդը հեզ ու խաղաղ պատրաստ էր հպատակվելու օսմանյան բանակին, ինչպես առաջ հպատակություն էր հայտնել բուլղար բանակին:

Երեք օր գոնե արտաքնապես հանգիստ մնալուց հետո չորրորդ օրը Թուրք զորքը հարձակման անցավ գյուղի հայ բնակչության վրա: Առաջին խոշտանգվածներից էին Սիմոն աղան, Պետրոս Սագզյան աղան, որոնք Մալգարայի հայոց երևելիներից էին: Գյուղացիները սարսափահար փակվեցին տներում: Շուկան հրդեհելուց և այնտեղ գտնվող հայերի խանութները նախապես կողոպտելուց հետո Թուրք զինվորները ձեռնամուխ եղան նրանց բնաջնջմանը: Նախ Թալանի ենթարկեցին տները, որից հետո այնտեղից դուրս բերեցին հայ ընտանիքներին և, առանց մեծ ու փոքր հաշվի առնելու, բոլորին գնդակահարեցին հենց տների շեմին, սանդուղքների վրա, բակերում: Հայերին սպանելու ժամանակ Թուրք զինվորները ատելությամբ գոչում էին. «Բուլղարների՞ն էիք ուզում, դե հիմա ստացե՛ք»: Նրանք, ովքեր կարողացել էին գյուղից փախչել, իրենց վախճանը գտան դաշտերում: Սպանդը իրագործելուց հետո Թուրք զինվորները, որոնց միացել էին գյուղի Թուրք բնակիչները, կրակի ճարակ դարձրին հայկական բոլոր Թաղերը[1]:

Ականատեսը վերհիշել է, որ ջարդարարները հարյուրավոր տակառներ նավԹ էին բերում, լցնում էին հայերի տների ու խանութների վրա և կրակի մատնում: «Սկսվեց հսկայական մի հրդեհ: Բնակավայրի ամենահարուստ մասը վառվում էր: Ահավոր բոցերը վերահաս գիշերվա խավարի միջից բարձրանում էին երկինք և լուսավորում իրենց չորս կողմը: Հայերը լքեցին իրենց տները և ապաստանեցին մոտակա այգիներում: Ամբողջ գիշերը հրդեհը շարունակվեց, իր բոցերի մեջ առնելով նորանոր տներ ու խանութներ: Մեր բնակարանների մեծ մասը տախտակաշեն էր, չորացած ատաղձը մարխի նման վառվում էր՝ բարձր բոցեր արձակելով»[2]:

---

[1] ***Մշակ»,*** *№ 176, 11 օգոստոսի 1913 Թ.:*

[2] ***Ոնիկ Փանիկյան****, Մահից դեպի կյանք, «Հայաստան» հրատ., Երևան, 1965, էջ 88, 89:*

Զինվորների և գյուղացիների ոճրագործություններին ակտիվ մասնակցում էին հարևան Թուրք գյուղացիները:

Թուրք կանոնավոր բանակը, այսպիսով, մայրաքաղաք Պոլսից ոչ շատ հեռու արդեն խաղաղ ժամանակ ստոր վրեժխնդրության դիմեց անմեղ հայերի նկատմամբ՝ այն խժդժությունների համար, որ բուլղարական բանակը կատարել էր Թուրք բնակչության նկատմամբ Մալգարան գրավելուց հետո:

Ռոդոսթոյի և Մալգարայի ջարդը սաստիկ հուզում էր առաջ բերել Կոնստանդնուպոլսի հայ ազգաբնակչության մեջ: Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի կողմից մի պատվիրակություն ներկայացավ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին և նրան հանձնեց հիշատակագիր նշված վայրերում հայերի ջարդի առիթով[1]: Հիշատակագրով պատրիարքարանը խնդրում էր. 1) Խստիվ պատժել կոտորածի բոլոր պատասխանատուներին, 2) Թույլ չտալ, որ տեղական իշխանությունները խուզարկեն կենդանի մնացած հայերի տները, 3) Արձակել ձերբակալված հայերին, 4) Հրամայել, որ դյուրություններ տրվեն հավաքելու սպանված հայերի՝ դաշտերում թափված դիակները և թաղել գերեզմանատներում, 5) Ձեռնարկել հարկ եղած միջոցներ նոր աղետների առաջն առնելու համար:

Սակայն Թուրք կառավարությունը ոչ միայն միջոցներ չձեռնարկեց ջարդերի պատճառները քննելու և մեղավորներին պատժելու համար, այլև, ինչպես միշտ, մեղքը բարդեց զոհերի վրա[2]: Մալգարա ուղարկած հանձնաժողովը, փոխանակ հայտնաբերելու մարդասպաններին, ձերբակալել տվեց կենդանի մնացած 24 հայերի, որոնք նետվեցին բանտեր, իսկ նրանցից մի քանիսն անհետ կորան:

---

[1] Տե՛ս **«Նոր մամուլ»** (Երևան), № 31, 14 հուլիսի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 31, 2 օգոստոսի 1913 թ.:

Բուլղարիան, որ իր ազգային անկախությունը ձեռք էր բերել՝ շնորհիվ ռուսական ազատարար զորքերի, ապա ռուսական պետության հովանավորությամբ ու աջակցությամբ դարձել Բալկանների ամենազորեղ պետությունը, իր քաղաքական ու զինվորական սխալների հետևանքով աներևակայելի կարճ ժամանակում ոչ միայն կորցրեց գրաված տարածքների ամենակարևոր մասը ու սեփական երկրի կենսական հատվածը (Սիլիստրիա և այլն), այլև փլուզեց իր զինվորական փառավոր համբավը:

Հայերը սրտի խոր ցավով էին հետևում բուլղարական զորքերի նահանջին: Չէ՞ որ փառքով պսակված Բալկանյան պատերազմը վերջանում էր անփառունակ: «Դրօշակը» դառնությամբ գրում էր, որ Բուլղարիայի բախտի անիվը չուռ եկավ՝ ցնծություն պատճառելով նրա թշնամիներին և խոր վիշտ՝ բարեկամներին[1]:

Անդրադառնալով անօրինակ ճգնաժամի մեջ ընկած Բուլղարիայի ծանրագույն վիճակին՝ «Դրօշակն» իր մի ուրիշ համարում հիշեցնում էր, որ այդպիսի ցնցումներ երկիրը չէր տեսել 1876-ի զարհուրելի օրերից ի վեր, երբ Բատակը՝ բուլղարական Սասունը՝ արյունալվա և անօգնական, հազարավոր խողխողված դիակների միջից Եվրոպայի ականջներին էր ուղղել իր աղիողորմ կանչերը...[2]: Այն ժամանակ հանդես եկավ մի Գլադստոն, որն իր պերճ ու հեղինակավոր լեզվի ողջ ուժով խարանեց սուլթանական բռնապետությունը և պաշտպան կանգնեց կոտորվող ժողովրդին, իսկ քիչ հետո հյուսիսից հնչեց մեծ ցեղակցի՝ Ռուսաստանի օգնության աղաղակը: Իսկ հիմա բախտի մի անողորմ դիմադարձությամբ Եվրոպան երես էր թեքել «բուլղար» անունից, և նա այլևս չուներ որևէ պաշտպան: Նույնիսկ նրա ազատարար ազգականը՝ հզոր Ռուսաստանը, մի կողմ էր քաշվել[3]:

Իսկ «Աւետաբեր» թերթի հոդվածագիրը նկատում էր, որ

---

[1] Տե՛ս **«Դրօշակ»**, № 1, Հունվար, 1914, էջ 1:

[2] Տե՛ս **«Դրօշակ»**, № 7-8, Հուլիս-օգոստոս, 1913, էջ 121:

[3] Տե՛ս նույն տեղում:

երբ Բուլղարիան հարձակում սկսեց իր զինակիցների դեմ, պետք է իմանար՝ որքան էլ լավ բանակ, որքան էլ քաջամարտիկ զինվորներ ու զորավարներ ունենար, դարձյալ իր ուժերը չպիտի ներեին հաղթող դուրս գալու նոր պատերազմից: Զորավար Սավովը որքան մեծատաղանդ ռազմական, նույնքան կարճատես քաղաքական գործիչ դուրս եկավ: Ռուսատյաց Ստամբուլովյան կուսակցությունը, շարունակում էր «Աւետաբերի» հոդվածագիրը, նեղ ազգայնական ձգտումներով իր հպարտ հայրենիքը ծանր ճգնաժամի ենթարկեց: Եվ եթե չլիներ Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջամտությունը, Բուլղարիան, անշուշտ, որպես պետություն կկործանվեր, քանի որ ուժ չուներ շարունակելու կռիվը միաժամանակ մի քանի ճակատներով[1]:

Բուլղարական մամուլը բուռն քննադատության տակ էր առել երկրի դիվանագիտությունը, որ «քանդեց բուլղար զենքով չինված գործը»: Մամուլը դատափետում էր սեփական դիվանագիտությունն ամենից առաջ այն պատճառով, որ նա, անհեռատեսություն հանդես բերելով, բալկանյան զինակցությունը կնքելու ժամանակ դաշինքի անդամների հետ նախապես չէր համաձայնեցրել, թե գրավելիք որ տարածքները որին պետք է անցնեին: Բայց այդ հարցում աններելի անհոգություն էին հանդես բերել դաշինքի բոլոր անդամները: Դեռևս զինակցությունը կնքելուց չատ չանցած՝ 1912 թ. դեկտեմբերի սկզբին, «Կովկասի լրաբերը» զարմանքով գրել էր, թե ինչու դաշինքի անդամները չեն քննարկել պատերազմի արդյունքների և տարածքային բաժանումների հարցը, այլ իրենց առջև դրել են միայն մի խնդիր՝ պատերազմ սկսել Թուրքիայի դեմ և այն պսակել հաղթությամբ: Թերթի մեկնաբանը դա համարում էր բուլղար դիվանագիտության աններելի խոտորում[2]:

Բալկանյան երկրորդ պատերազմից ամենից չատ օգտվել էին Թուրքիան և Ռումինիան (վերջինիս Բուլղարիայից անցել էր հարավային Դոբրուջան), իսկ ամենից չատ տանուլ էր տվել Բուլղարիան՝ Բալկանյան առաջին պատերազմի հաղթական հերոսը:

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»,** № 30, 26 հուլիսի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Կովկասի լրաբեր»,** № 29, 1 դեկտեմբերի 1913 թ.:

Բուլղարական մամուլի և հասարակայնության քննադատության կենտրոնում երկրի ղեկավարությունն էր, որը չափազանց խստապահանջ եղավ իր նախկին դաշնակիցների նկատմամբ, որոնք իրենց հերթին նախանձով էին լցվել նրա նկատմամբ և ամեն առիթից օգտվում էին վերջինիս ուժաթափ անելու համար[1]:

Իսկ կոնկրետ ովքե՞ր էին մեղավոր ու պատասխանատու մահառիթ վրիպումների համար՝ Դանևը, Սավո՞վը, Ֆերդինա՞նդը... Բոլորը միասին, բայց առավել ևս՝ զորավար Սավովը, որը, նոր պատերազմի նախօրյակին ռազմաճակատից Սոֆիա գալով, պահանջել էր ամենայն խստությամբ վարվել Սերբիայի հետ, ոչ մի դեպքում տեղիք չտալ նրա նկրտումներին, այլապես ինքը չի անսա ոչ մեկի խորհրդին, նույնիսկ թագավորի հրամանին և ինչպես հարկն է դաս կտա Բելգրադին:

Խիստ քննադատության տակ էին նաև դոկտ. Դանևը և նույնիսկ Ֆերդինանդ թագավորը, որոնք, զորավար Սավովի հետ միասին տուրք տալով հիմար փառասիրությանը, մի քանի շաբաթների ընթացքում կորցրել էին այն ամենը, ինչ ամիսների ու տարիների հետևողական աշխատանքով և անհամար կյանքերի գնով ձեռք էին ձգել: Իսկ հիմա՞:

«Դրօշակը» սրտի խոր ցավով գրում էր, որ հազարավոր բուլղար գյուղացիներ ու արհեստավորներ իրենց գլուխը դրեցին այդ եղերական սխալների համար: Բանակը՝ ջարդուփշուր, մարտադաշտերում՝ 30.000 ամենաընտիր երիտասարդների կոտորած, 50.000 վիրավորներ ու հաշմանդամներ*, իսկ արդյունքը՝

---

[73] Տե՛ս **«Աւետարեր»,** № 30, 26 հուլիսի 1913 թ.:

* Իսկ եթե այդ ամենին գումարվում են Բալկանյան առաջին պատերազմում բուլղարների կրած մարդկային կորուստները, ապա պատկերը լինում է սոսկալի: Երկու պատերազմներում Բուլղարիայի կրած մարդկային կորուստների մասին պատմական գրականության մեջ բերվում են տարբեր թվեր: Օրինակ՝ Ա. Մ. Շնիտմանը բուլղար սպանված զինվորականների թիվը հաշվում է 70 հազար, վիրավորներինը՝ Է՛լ ավելի շատ (տե՛ս **А. М. Шнитман**, Большевикская газета "Правда" и болгарское рабочее движение (1912-1914 гг.), Мурманск, 1962, էջ 10): Թեոդիկը զոհերի թիվը ներկայացնում է 52.716, վիրավորները՝ 102.853 (տե՛ս **Թեոդիկ**, Ամենուն տարեցոյցը. Ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, Կ. Պոլիս, 1914, էջ 324):

այնքան չնչին: Մակեդոնիան՝ նրա տիրապետությունից խուսափած, Ադրիանուպոլիսը՝ ձեռքից հանած, բուն բուլղարական հողերի մի պատկառելի տարածություն՝ անցած ռումինի ձեռքը: Այնինչ հույներն ու սերբերը գրեթե կրկնապատեցին իրենց հողերն ու բնակչությունը[1]: Իսկ ժողովուրդը՝ այդ հավիտենական նահատակը և քավության նոխազը, այդպես էլ չիմացավ, թե ինչու և ինչպես կատարվեց այդ հրեշավոր ու անպատիվ ողբերգությունը:

Բալկանյան երկրորդ պատերազմից հետո ի՞նչ մնաց Բուլղարիային: Մնացին մի փորձառություն միայն, դառը մի դաս, մի մեծ վիշտ և մի փոքր հույս:

Այդ պատերազմի հետևանքով Բալկաններում առաջ եկան նոր հակասություններ և խորացան թշնամությունները: Դեռ Բալկանյան առաջին պատերազմի սկզբներին Կ. Պոլսի «Աւետարեր» թերթի խմբագիրը, հետևելով մեծ տերությունների կառավարությունների դիվանագիտական խաղերին և վերլուծելով միջազգային գործընթացները, եզրահանգել էր. «Կրնանք ըսել, թե ներկայ պատերազմը իր հետեւանքներով եւրոպական մեծ տրամի մը առաջին գործողութիւնն է»[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Դրօշակ»,*** *№ 7–8, հուլիս–օգոստոս 1913 թ., էջ 123:*

[2] ***«Աւետարեր»,*** *№ 46, 16 նոյեմբերի 1912 թ.:*

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՄԵԾ ԱՂԵՏՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թեև Թուրքիայի հայկական նահանգները չատ հեռու էին Բալկաններից, բայց այնտեղ ընթացող արյունալի ռազմական գործողությունները ծանր հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար:

Տիրապետող ազգերը, տարված իրենց գերակայության իդեալներով, սովորաբար անցնում են սեփական ուժերի սահմանները և հետո անկարող են լինում պահպանելու իրենց գրաված հողերը: Նույնը կրկնվեց նաև Բալկանների մեծ մասը զավթած Թուրքիայի պարագայում:

ՀԱՅԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ՄՈՒՀԱՋԻՐՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ

Պատերազմի ընթացքում օսմանյան բանակի կրած ջախջախիչ պարտությունների հետևանքով Ռումելիայի հարյուրավոր գյուղերի Թուրք բնակչությունը, երկյուղ կրելով մոտեցող բուլղարական զորքերից և հարևան քրիստոնյաների վրեժխնդրությունից, թողած տուն ու տեղ, ուղղություն վերցրեց դեպի Անատոլիա: Թուրքական իշխանությունները և թերթերը Ռումելիայի Թուրք բնակչությանը կոչ էին անում չլքել իրենց բնակավայրերը, չգաղթել և նոր խնդիրներ չստեղծել իրենց և կառավարության համար, բայց դա չէր հաջողվում. 250 հազար Թուրք գաղթականները կամ մուհաջիրները Թրակիայի սահմանագլխից հեղեղի նման չարունակում էին թափվել Կ. Պոլիս: Բալկաններից մայրաքաղաք հասնող գաղթականների թվում կային մեծ թվով

գնչուներ: Աստիճանաբար մայրաքաղաք էին վերադառնում նաև ջարդուփշուր եղած օսմանյան զորքերի մնացորդները:

Եվրոպայում Թուրքիայի տիրապետության օրերը հաշվված են: Ավելին, շատերը նույնիսկ կարծում էին, որ շուտով Թուրքերը քաշվելու են նաև Կ. Պոլսից, օսմանյան պետությունը պարփակվելու է Փոքր Ասիայում, նրա մայրաքաղաքը փոխադրվելու է Բուրսա՝ խալիֆայության նախկին աթոռանիստը:

Եվրոպական և ռուսական քաղաքագետներին ու մամուլի օրգաններին հետաքրքրում էր, թե այդ նոր սահմաններում կայսրությունը կթուլանա՞ այն աստիճանի, որ բռնի երկրորդական պետություն դառնալու ճանապարհը, թե՞ ընդհակառակը՝ նա իր մեջ ուժ կգտնի վերածնվելու և կրկին հզորանալու:

Ոմանք կարծիք էին հայտնում, թե Եվրոպայից հեռանալն ու այլևս մակեդոնական, ալբանական, կրետեական խնդիրներից ձերբազատվելը շահավետ են լինելու Թուրքիայի համար, քանի որ իրենից թոթափելով տնտեսական որևէ օգուտ չբերող բալկանյան վիլայեթները՝ կտնտեսի հսկայական գումարներ, որ նա ծախսում էր այդ տարածքներում տեղաբաշխված զորքերը պահպանելու: Ահա այդ տնտեսված գումարները նոր պայմաններում Թուրքիային հնարավորություն կտային բարելավել տնտեսությունը և մեծապես ուժեղանալ:

Թվում էր, թե Բալկանյան առաջին պատերազմում քրիստոնյա պետությունների տարած հաղթանակը նպաստելու է Թուրքահայաստանի հարցի լուծմանը: Բայց շատ շուտով պարզ դարձավ, որ Ադրիանուպոլսի և Զաթալջայի անկումը բացասական հետևանքներ ունեցավ Թուրքահայերի վրա՝ դժբախտության մի նոր դուռ բացելով նրանց համար:

Թուրքերի տիրապետության վերջին դարը քայքայման, անկման, ավերումի, ջարդերի մի այնպիսի քստմնելի տարեգրություն էր, որ զարմանալի չէր լինի, եթե նրա պատմության այս նույն էջերը հարստանային նմանը չունեցող նոր ոճրագործություններով: Իսկ այդ պահին դրա համար ոչինչ չէր պակասում՝ և՛ հոգեվարքի հասած հուսահատություն, և՛ պարտվածի կատաղություն:

Ռումելիայից Թուրք գաղթականության (մուհաջիրների)

*չարժը դեպի օսմանյան մայրաքաղաք և ավելի հեռուներ սկսել էր դեռևս պատերազմի սկզբից՝ բուլղարական բանակների կողմից այնտեղի հարյուրավոր թուրքաբնակ գյուղերը գրավելու նախօրերին և հետո: Թուրք բնակչությունը նախօրոք փախչում էր՝ երկյուղ կրելով մոտեցող բուլղարական զորամասերի մարտիկներից և իրենց հարևան քրիստոնյաների վրեժխնդրությունից**:

Թեև Հայաստանը շատ հեռու էր Բալկաններից, բայց այնտեղ ընթացող արյունալի ռազմական գործողությունները ծանրագույն հետևանքներ ունեցան թուրքահայության համար:

Բալկանյան պատերազմներն ավելի խորացրին առանց այն էլ օսմանյան ռազմաբռնապետական կարգերի ճնշման տակ աղքատության եզրին հասած հայության տնտեսության քայքայումը: Ռազմաճակատ ուղարկվեցին հազարավոր հայորդիներ, որոնցից շատերն ընկան կռվի դաշտերում կամ դարձան հաշմանդամ:

Դեռ մինչև մուհաջիրների գալը՝ պատերազմի առաջին ամիսներին, հայերի տնտեսությունն արդեն փլուզման եզրին էր հասել: Օրինակ՝ չհաշված քրդերի կողմից իրականացվող մշտական հափշտակումները՝ հայ գյուղացուն մնացած խոշոր եղջերավորների մեծ մասը իշխանությունների կողմից բռնագրավվել էր որպես բանակի համար մսացու կամ բանակում օգտագործվում էր որպես փոխադրամիջոց: Ռազմաճակատի կարիքների համար բռնագրավված էին նաև հայերի բոլոր ձիերն ու ջորիները:

1912 թ. դեկտեմբերի 4 (17)-ին «Իկդում» թերթում թուրք գրագետ Համդուլլա Սուբհի բեյը տպագրել էր «Հայերը և մենք» խորագրով հոդված, ուր անդրադարձել էր նաև մուհաջիրների

---

* *Կ. Պոլսում 1912 թ. նոյեմբերի կեսերին օսմանյան կառավարությունը կազմել էր մի հանձնախումբ, որին հանձնարարված էր տեղեկություններ հավաքել Ռումելիայի մուսուլմանների ջարդի մասին: Հանձնաժողովը իր եզրակացության մեջ ջարդերի մեղավորներ էր համարել նաև հայերին, որոնք, իբր, Ասիայում ապրող իրենց եղբայրների վրեժն էին լուծել (տե՛ս* ***«Կովկասի լրաբեր»,*** *№ 22, 27 հունվարի 1913 թ.):*

խնդրին՝ նշելով, որ սրանք, գաղթելով Ասիական Թուրքիա, իրենց գայրույթն ամենից առաջ թափելու են հայերի գլխին: Հոդվածագիրը գաղթող թուրքերին հիշեցնում էր, որ Ռումելիայի հայերը հարևան ու դրկից թուրքերին խորհուրդ են տվել չլքել իրենց բնակավայրերը և իրենց նոր փորձանքների չենթարկել: «Գաղթող իսլամ հայրենակիցներուն տուները երթալով,- վկայում էր Սուբհի բեյը,- անոնք (հայերը:- Հ. Ս.) կ'ըսէին (թուրք հարևաններին:- Հ. Ս.)... Մի գաղթէք, մինչեւ որ այս օրերը անցնին: Միասին նստինք, մի՛ քանդեք ձեր բոյնը...»[1]: Սուբհի բեյը, սակայն, համոզված չէր, որ Ռումելիայից գաղթող թուրքերը Անատոլիայում նման մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերելու հայերի հանդեպ:

"Gazette de Lausanne" թերթը (Լոզան) 1913 թ. ապրիլի 19-ին գրում էր. «Թուրքերի և բալկանյան դաշնակիցների միջև խաղաղության մոտալուտ կնքումը ավելի հրատապ է դարձնելու հայկական խնդիրը: Երկյուղ կա, որ պարտությունից հուսահատ թուրք զինվորները իրենց բնակության վայրեր վերադառնալուց հետո պիտի փորձեն վրեժխնդիր լինել բոլոր ժողովուրդներից ամենադժբախտ այս անզեն ժողովրդից»:

Երբ մուհաջիրական շարժումը դեռ նոր էր սկսվել, ռուսական "Речь" թերթը նախազգուշացնում էր. «Իրապես Փոքր Ասիան Թուրքիոյ սիրտն է, բուն իսկ Թուրքիան է: Եւրոպական Թուրքիայէն թուրք ժողովուրդին գաղթումը դէպի Փոքր Ասիա, աւելի պիտի բարդացնէ հոն ոչ-թուրք ազգութիւններու վիճակը, որոնք վաղուց կը կարօտին գոյութիւն ունեցող պայմաններու բարւոքման: Եթէ հիմա իսկ ձեռք չառնուին անհրաժեշտ միջոցներ, այն ատեն լուրջ բարդութեանց երեւան գալը Փոքր Ասիայի մէջ՝ անխուսափելի է»[2]:

Հողազրկված ու տնազրկված մուհաջիրները իրենց ընտանիքներով ժամանակավոր դադար էին առնում մայրաքաղաքի

---

[1] *Համդուլլա Սուբհի բեյի սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս* ***«Ժամանակ»,*** *№ 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:*

[2] *"Речь"-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս* ***«Բութանիա»,*** *№ 1097, 27 դեկտեմբերի 1912 թ. (9 հունվարի 1913 թ.):*

մերձակա տարածքներում: Այստեղ նրանք կառավարությունից ստանում էին ճանապարհածախս, ինչպես նաև նշանակված վայրերում հիմնավորվելու համար բավականաչափ գումար: Բայց դա բոլորը չէր: Նրանք նաև խոստումներ չէին ստացել, որ Անատոլիայում ունենալու են և՛ հող, և՛ անասուններ, և՛ տուն:

«Բուլթանիա» թերթը գրում էր, որ հարյուրհազարավոր մուհաջիրները չեն կարող երկար ժամանակ մնալ օսմանյան մայրաքաղաքում և նրա մերձակայքում, քանի որ բացառապես երկրագործներ են: Ուստի «ասոնք կ'անցնին Պոլսէն իրենց ընտանիքներով ու իրենց անասուններով և եզան կառքերով՝ ճիշդ այնպես, ինչպես կ'անցնեին 500 տարի առաջ դեպի Եվրոպա»[1]:

Մուհաջիրական շարժումը պատերազմի առաջին իսկ օրերից տագնապի էր մատնել Կ. Պոլսի հայկական իշխանություններին: Նրանք համոզված էին, որ քրիստոնյաների դեմ կատաղի ատելությամբ լցված մուհաջիրները բարբարոս հորդաների պես պիտի հեղեղեն Հայաստանը: Բոլոր հայ գործիչները հասկանում էին, որ մուհաջիրական շարժման դեմն առնելու համար հայերը որևէ ազդու միջոց չունեն: Նրանք սարսափում էին այն մտքից, որ Թուրք և քուրդ վիրավոր զինվորները ռազմաճակատում քրիստոնյա պետությունների զորքերից կրած ծանր զրկանքների համար դիմելու են լայնածավալ խժդժությունների Անատոլիայի քրիստոնյաների հանդեպ:

Մուհաջիրներն ուղղություն վերցրին դեպի Անատոլիայի խորքերը: Համարյա միաժամանակ իրենց տներն էին վերադառնում բանակի 400 հազար Թուրք, քուրդ, արաբ զինվորներ, որոնցից վիրավորներին Թույլատրված էր տուն տանել իրենց զենքը: Զորացրված զինվորների պատկառելի մասը Հայաստանցի Թուրքեր ու քրդեր էին կամ այլազգի մուսուլմաններ:

Բալկաններից հեռացած 250-հազարանոց Թուրք զանգվածից 150 հազարը դեգերելով 1913 Թ. գարնանը հասավ Հայաս-

---

[1] "Речь"-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Բուլթանիա»**, № 1097, 27 դեկտեմբերի 1912 Թ. (9 հունվարի 1913 Թ.):

տան: Շաբաթների ընթացքում մուհաջիրները հաստատվեցին քաղաքամերձ արվարձաններում կամ խմբերով ուղղվեցին գավառներ[1]: Քրիստոնյաների դեմ գրգռված՝ նրանք որոճում էին ջիհադ՝ սպառնալով «փոչու վերածել» նրանց:

Հայաստան թափանցած հազարավոր թուրք ընտանիքներ զենքի ուժով յուրացնում էին հայերի հողերը որպես նոր սեփականատերեր՝ ավելի ստվարացնելով կեղեքիչների ու տզրուկների արդեն իսկ ստվար բանակը: Նրանք տեր էին դառնում՝ տեր դառնալով ունեզրկվածների ողջ ունեցվածքին՝ տանը, անասուններին, այգիներին ու վարելահողերին: Նախկին տնատերերը դառնում էին եկվորների ճորտերը:

Պատրիարք Արշարունին բողոքներ էր ներկայացնում Բ. Դռանը՝ հիշեցնելով, որ Հայաստանում կան լայնատարած պետական ազատ հողեր, որոնք կարելի է բաժանել թուրք գաղթականներին և նրանց համար պայմաններ ստեղծել[2]: Պատրիարքի բողոքները ոչ մի արձագանք չունեցան: Եվ եթե միջոցներ չձեռնարկվեին ժամ առաջ ստանալու Ռուսաստանի պաշտպանությունը՝ նրա կողմից Հայաստանը գրավելու սպառնալիքով, ապա մեկ-երկու տարի հետո հայ գյուղացիների հողերից կմնային լոկ պատառներ[3]: Պատճառաբանությունը մեկն էր. վերջին տարիներին Հայաստանից հեռացել են 250.000 հայեր, և հողերը մնացել են անտեր, անմշակ[4]:

Բալկաններից գաղթած թուրք ընտանիքներին բնակեցնելով Հայաստանում՝ երիտթուրք իշխանությունները գլխավորապես նպատակ ունեին այնտեղ լուծել իրենց համար չատ կարևոր ժողովրդագրական հարցեր: Անատոլիա եկած հարյուրհազարավոր մուհաջիրներին Իթթիհադը ոչ թե դժբախտություն էր համարում, այլ մեծագույն բարիք: Նրանց գալով Փոքր Ասիայի թրքությունը և՛ թվաքանակով, և՛ որակապես պիտի աճեր:

---

[1] *Տե՛ս* ***Վահան Մինախորեան****, 1915 թվականը: Արհավիրքի օրեր, Թեհրան, 2006, էջ 64-65:*

[2] *Տե՛ս* ***«Բուլթանիա»****, № 29 (1107), 10 (23) հունվարի 1913 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ժամանակ»****, № 1311, 18 (31) դեկտեմբերի 1912 թ.:*

[4] *Տե՛ս* ***«Աշխատանք»*** *(Վան), № 43-139, 7 սեպտեմբերի 1913 թ.:*

Կստեղծվեր մի մեծ ու համասեռ ընդհանուր զանգված:

1913 թ. գարնան վերջերին Իթթիհադը եկել էր վերջնական եզրակացության, որ կայսրության հետագա գոյության պահպանման համար անհրաժեշտ է երկիրը դարձնել միատարր, այսինքն՝ թուրքացնել, որը հնարավորություն կտար կայսրությունը մեկընդմիշտ զերծ պահելու ներքին հակասություններից, իսկ հայերի դեպքում՝ վերացնել Եվրոպայի կողմից պարբերաբար կրկնվող միջամտությունները՝ Հայաստանի նահանգներում բարենորոգումներ կատարելու և բնակչության վիճակը բարելավելու պահանջներով: Եվ առաջ եկավ հայ ժողովրդին սեփական հայրենիքից դուրս մղելու կամ տեղում ոչնչացնելու անմարդկային գաղափարը:

Ժամանակը սուղ էր, և երիտթուրքերը չտապում էին:

ՔՐԴԵՐԻ ՆՈՐ «ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Հայաստանում քրդերի մեծ մասը բնակվում էր գավառներում: Ամեն մի աշիրեթապետի ազդեցությունը որոշակի էր. իբրև տարածքի տեր՝ իշխում էր տեղի հայ և քուրդ բնակչության վրա: Նա կարող էր իր ուզած տուրքը գանձել, պատժել կամ սպանել ցանկացածին, պետք եղած ժամանակ հավաքել իր աշիրեթի տղամարդկանց և, առանց կառավարության հավանությունը նախապես առնելու, կռվի գնալ իր ցեղակից աշիրեթների կամ ուրիշների դեմ: Քաղաքներից հեռու բնակվող աշիրեթները պետությանը ո՛չ տուրք էին տալիս, ո՛չ զինվոր և ոչ էլ գիտեին, թե իրենց գլխին կա արդյոք կառավարություն:

Քաղաքներում ապրող քրդերը բաժանված էին կաբիլների և նույնպես ունեին իրենց պետերն ու աղաները: Սրանք անում էին այն, ինչ ուզում էին՝ մնալով անպատիժ, չնայած իրենց մտքի անկարողությանն ու տգիտությանը՝ առատ ամսականներով պաշտոնավարում էին տեղական կառավարչություններում՝: Քաղաքներում ապրող քրդերը, որոնք արդեն համարյա թուրքացել էին, միջնորդի դեր էին կատարում կառավարության և աշիրեթապետների միջև:

Հենց այս երեք ուժերն էին՝ աշիրեթ-կաբիլ-կառավարություն, որ հիերարխիա կազմած՝ քանդում էին Հայաստանը:

Կառավարությունն ամեն ինչ անում էր, որ քուրդ աղան և նրա ծառաները դպրոցի երես չտեսնեն: Սրանց կրոնական զգացումները վառ պահելու համար նա իր ծախսով քրդական գյուղերում մզկիթներ էր սարքում, կրոնապետներին տալիս էր առատ ամսականներ և այլն:

Այսպիսով, վիլայեթի ամբողջ քուրդ բնակչությունը, կախված լինելով աշիրեթապետներից ու քաղաքների աղաներից, դյուրացնում էր Հայաստանում Թուրք կառավարության գործը: Շատ ավելի խելացի լինելով քուրդ վերնախավից՝ իշխանությունը ուղղություն էր տալիս նրանց գործողություններին, որոնք կոչված էին իր դարավոր երկրից հային վերացնելու նպատակին:

Այդ քաղաքականությունը չարունակվում էր նաև Բալկանյան պատերազմի օրերին:

Պատերազմը վերջանալուց հետո քուրդ հեծելախմբերը, որոնք նույնպես Բալկաններում կռվել էին բուլղարների դեմ, աստիճանաբար վերադարձան իրենց բնակության վայրերը: Հասնելով Հայաստան՝ նրանք, ինչպես միշտ, կատաղած ու վայրագ մոլեռանդությամբ, իրենց դիվահարության մոլուցքը թափեցին հայերի վրա: Չպետք է մարգարե լինել պատկերացնելու, թե ռազմադաշտերից վերադարձած քրդերը ինչ տիրական իրավունքով էին վարվում հայերի հետ: Պատերազմական արհավիրքների ազդեցության տակ նրանք ավելի էին վայրենացել և դարձել լիովին անկառավարելի: Տեղական իշխանությունները հատուկ ուշադրության էին արժանացնում նրանց, փայփայում ու փառաբանում էին՝ իբրև հայրենիքի անդավաճան զինվորների: Իսկ որ քրդերից ոչ պակաս Բալկաններում կռվել էին Թուրքական բանակի հայ զինվորները, դա կառավարությունը հաշվի չէր առնում:

Եթե նույնիսկ պատերազմը հաջող ավարտվեր Թուրքերի համար, սրանք, միևնույնն է, ամենևին չէին արգելի հայերի նկատմամբ քրդերի «սխրագործությունները», մանավանդ միմյանց հաջորդող պարտություններն ավելի ու ավելի էին գրգռում

նրանց ամբոխային կրքերը քրիստոնյաների հանդեպ:

Թուրքահայաստանից օրեցօր ստացվում էին նորանոր մղձավանջային լուրեր: Թե ինչ էին անում այնտեղ Թուրքերն ու քրդերը, չէին կարող պատմել հայ կանանց ու երեխաների արցունքները, իսկ անասելի սարսափ և տառապանքներ ապրող խաղաղ հայ բնակչության տանջանքը, նրա կատարյալ տառապանքը օտարներին միայն հեռավոր պատկերացում էին տալիս հայոց ողբերգական վիճակի մասին:

Սոսկում ու ցնցում: Մեկ այստեղ, մեկ այնտեղ հոսում էր խոնարհված ցեղի արյունը: Վայրագ բռնությունները, ունեցվածքի կողոպուտը, անմեղ մարդկանց սպանությունները, բռնաբարություններն ու մյուս վայրագությունները փոխարինել էին աշխատանքին և խղճին:

Արմեն Գարոն իր հուշերում նկարագրել է հայ գյուղացու անտանելի դրությունը: «Ես ինքս,- վկայում էր նա,- անձամբ գնացի այդ շրջանը (Մշո դաշտը:- Հ. Ս.) մօտէն տեսնելու մեր ժողովրդի նիւթական դրութիւնը: Մշեցիք ինձ պատմեցին իրենց քաշած նեղութեանց մասին եւ այն հսկայական զոհողութեանց, որ իրենք ըրեր էին մեր ազատագրական շարժմանց համար: Ամբողջ Մշոյ դաշտին մէջ միայն չորս ձի էր մնացեր հայերուն մօտ: Եւ այդ հարիւր հազարի հասնող գիւղացիութեան մէջ միայն Մուշաղշէնի Գասպար աղային տանը կարելի էր քանի մը ձեռք անկողին գտնել, իսկ մնացածները թաղիքի մէջ կը պառկէին: Քիւրտերն ու թուրք զինուորները տարեր էին ամէն բան ...»[1]:

Վասպուրականի զարդը՝ Վանա լիճը, չորս կողմից շրջապատված բազմաթիվ լեռներով, սուր-սուր գագաթներով և պճնազարդ բլուրներով, իր գեղանի ափերի վրա ուներ բազմաթիվ հայաբնակ գավառներ՝ Վանը, Արճեշը, Ալջավազը մի կողմից, մյուս կողմից՝ Հայոց Ձորը, Խոշապը, Գեավաշը, Կարճկանը, Շատախը, Նորդուզը, Մոկսը, Կարկառը: Այստեղի հայությունը, ավա՜ղ, այժմ տվայտում էր սովից, հարստահարումներից ու

---

[1] **«Հայրենիք»,** № 2, դեկտեմբեր, 1922, էջ 40:

բոնություններից: Այդ բոլոր գավառներն իսկական դժոխք էին դարձել հազարամյակներ շարունակ այդ հողի վրա ապրած բնակչության համար:

Կյանքի ու ինչքի ապահովությունից կատարելապես զուրկ էր Տարոնը: Տեղի քրդերի կողմից հայ բնակչության սոսկաձիթ ու քաջալերված հալածանքն ու ճնշումները՝ միացած չցանված արտերի պատճառով մոլեգնող սովին, անտանելի կացություն էին ստեղծել:

Վիճակը նույնն էր հայկական մյուս տարածքներում:

«Ներկան հուսահատական» վերնագրով հրապարակման մեջ «Բութանիան» գրում էր. «Այս օրերս առեւանգումներ ու սպանութիւններ այնքան ընդհանրական դարձած են, որ ո՛չ մէկ հայ կը համարձակի առանձին ճամբորդել: Ամեն օր լուրեր կը հասնին ոչխարներու եւ անասուններու յափշտակման: Միմիայն մէկ գավառին մէջ 5000 ոչխար յափշտակուած է: Աղթամարի դպրոցին քննիչը իր ընկերներով միասին սպաննուած եւ իրենց մարմինները անգթօրեն յօշոտուած էին: Տեղեկագրութիւնները ո՛չ թե մեկ, այլեւ իրարմէ այնքան հեռու բոլոր գաւառներէն կուգան, ինչպէս Վան, Ատանա, Պիթլիս ու Հաճըն»[1]: Քրդերին լիակատար սանձազերծել էր հարևան հայերի ունեցվածքն ամենատմարդի եղանակներով հափշտակելու մոլուցքը: Զղաղարող ոճրագործություններով նրանք հայերին ստիպում էին հեռանալ իրենց բնակության վայրերից:

Թեև քրդերն արյունակցական և ազգակցական կապ չունեին Թուրքերի հետ, բայց պատմական տվյալ ժամանակահատվածում վերջիններս նրանց ամենուր օգտագործում էին Օսմանյան կայսրության լիակատար Թուրքացման գործընթացն արագացնելու համար:

«Դրոշակը» ցավով նշում էր, որ կառավարությունը շարունակում է զինել ու կազմակերպել քրդական հրոսակներին, որոնք անպատիժ ավերում են հայի տնտեսությունը, խլում նրա ապրուստի վերջին միջոցները[2]:

---

[1] **«Բութանիա»,** № 29 (1107), 10 (23) հունվարի 1913 թ.:

[2] Տե՛ս **«Դրօշակ»,** № 4, ապրիլ, 1913, էջ 50 :

Սոֆիայում լույս տեսնող «Բուլղարիա» թերթը գրում էր, որ «չի կարելի հաշտվել այն մտքի հետ, որ քրդերը չարունակում են սրել իրենց ատամները: Հազարավոր նոր հայեր պիտի մորթոտվեն»[1]:

Թուրքահայոց Ազգային ժողովում պատգամավոր Վահան Փափազյանը բերում էր տագնապալից թվեր ու փաստեր: Նա ասում էր, թե սովորական բան է դարձել, որ որևէ քուրդ բեկ իր ղուլամներին ուղարկում է այս կամ այն հայ գյուղացու արդեն հասունացած արտը հնձելու, վերջինիս սիրտը ճմլվում է, բայց լռում է վախից: Հետագա օրերին ու շաբաթներին նույն բեկը նույն արտի կամ հայ գյուղացու պարտեզի մասին արդեն խոսում է որպես իր սեփականություն: Հայը ստիպված հաշտվում է այդ վիճակին նույնպես: Ուրիշ թուրքեր ու քրդեր, կաշառելով կալվածքների դիվանատան պաշտոնյաներին, ձեռք են բերում կեղծ կալվածագրեր և դրանց ուժով տիրանում հայերի հողերին:

ԳԱՂԹ

«Դրօշակը» գրում էր, որ Իթթիհադը «բացարձակ կերպով հետապնդում է մի նպատակ՝... չտապով հրով ու սրով դատարկել Հայաստանը հայերից... Քաղաքական այդ նենգ նպատակին հասնելու համար են կոտորում, թալանում հայերին, իսլամացնում հայ կանանց»[2]:

Ազգային ժողովի պատգամավորները ցավով նշում էին, որ թուրքահայը բառիս բուն իմաստով անտարբեր է դարձել մայր եկեղեցու նկատմամբ, որովհետև նրա առաջին հոգսը դարձել է իր ֆիզիկական գոյության պահպանումը:

Կրոնապաշտ հայը դյուրությամբ պատրաստ էր կրոնափոխ լինելու, միայն թե ապրեր: Դավանափոխությունն ընդարձակ

---

[1] *Թերթի հոդվածի թարգմանությունը տե՛ս* ***«Առաջամարտ»*** *(Կ. Պոլիս), 11 դեկտեմբերի 1912 թ.:*

[2] ***«Դրօշակ»,*** *№ 4, ապրիլ, 1913, էջ 50:*

ծավալներ էր ընդունում: Հյուպատոսական տեղեկությունների համաձայն՝ հազարավոր հայեր խնդրագրերով պատրաստակամություն էին հայտնում ընդունելու ուղղափառություն, կաթոլիկություն կամ բողոքականություն:

Բայց դա դեռ բոլորը չէր. փոխելով կրոնը՝ Թուրքահայերի մի մասը կորցնում էր նաև մայրենի լեզուն: Հայ լեզուն դադարում էր հնչել հայ մանուկների ու պատանիների շուրթերից: Եվ այդ կորստաբեր ու կործանարար երևույթը կատարվում էր հետզհետե նոսրացող ժողովրդի մեջ:

Այլևս անտանելի էր կացությունը: Զրկված ապրուստի միջոցներից և զզված իր կյանքից՝ հայը վերցնում է գաղթականի ցուպը: Նա փախչում էր նզովյալ «սահմանադրական» երկրից: Լքելով պապերի՝ հազարավոր տարիների մշակած հողերը, ամբողջ գյուղեր ու գավառներ՝ գաղթողների երկար շարքերը ստիպված էին իրենց բախտը որոնել օտար ափերում:

Թուրքահայոց Ազգային ժողովը մի քանի անգամ քննության առավ հայերի գաղթը մեղմելու հնարավորությունների հարցը, բայց անօգուտ: Պատգամավորները բերում էին այսպիսի թվեր. Քղի փոքր գյուղաքաղաքից մեկ օրում գաղթել է չուրջ 100 հայ, Երզնկայից մեկ շաբաթում՝ 1000 հոգի: Նշելով, որ համիդյան ռեժիմի ամենադաժան օրերին անգամ հայերի գաղթը այսպիսի ծավալներ չէր ունեցել, նրանք կոնկրետ տվյալներով ցույց էին տալիս, որ եթե 1903–1907 հինգ տարիների ընթացքում Հայաստանից միայն Ամերիկա էր գաղթել 10.000 հայ, ապա հաջորդ հինգ տարիներին՝ չուրջ 20.000 հոգի[1]: Դեպի Ամերիկա գաղթը գնալով ավելի աղետալի ընթացք էր ստանում: Մեծ էր նաև և Եվրոպա մեկնողների թիվը:

Միայն Պոլսից ամեն շաբաթ տարբեր երկրներ էր մեկնում 200 անձ[2]: Օտար երկրներ մեկնողները գնում էին ընտանիքներով՝ կին, ծեր, երեխա, ինչը նշանակում էր, թե մեկնում են անդարձ:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 148, 9 օգոստոսի 1914 թ.:

[2] **«Վէմ»** (Փարիզ), № 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 86:

Նրանք Կաղզվանի և Սարիղամիշի վրայով դիմում էին դեպի Ռուսաստան: Թեև դեռ շատ տեղերում ձյուն ու սառնամանիք էր, բայց դա արգելք չէր գաղթողների համար:

Գաղթողների մի մասը, նախազգալով, որ գարնան բացվելուն պես սկսելու են հին զուլումները, ավեր ու թալան, խոհեմություն էին համարում իրենց ձգել ռուսական հողը: Իսկ մյուս մասը, գլխավորապես զինապարտության տուրքի երիտասարդները, չցանկանալով զինվորության գնալ և սպանվել հեռավոր Զաթալջայում, այլևս չկարողանալով տանել բռնություններն ու տուգանքները, գրոչներով ծախում էին ամեն ինչ և անցնում ռուսական սահմանը: Գաղթող հայերին ռուսական իշխանությունները տալիս էին Ռուսաստանում ապրելու ժամանակավոր վկայականներ[1]:

Ռուսաց հյուպատոսների վիճակագրության համաձայն՝ միայն 1913 թ. ապրիլին Խարբերդի շրջանից գաղթել էր ավելի քան 1000 հայ, Էրզրումի վիլայեթից դարձյալ մի ամսում՝ 1276 հոգի[2]: Միայն Բիթլիսի վիլայեթը ամեն տարի լքում էր 30 հազար հայ[3]:

Գաղթին նպաստում էր նաև ռազմաճակատից վերադարձած թուրքական բանակի հայ զինվորների համար ստեղծված անտանելի դրությունը: Պատերազմի ժամանակ հայ զինվորներին միշտ կանգնեցնում էին առաջին շարքերում, որպեսզի թշնամու գնդակների առաջին զոհերը նրանք լինեին: Հիմա նրանք, ինչպես արդեն նշվել է, թուրքական զորանոցներում ենթարկվում էին ծաղրուծանակի ու կտտանքների: Զորացրվելուց անմիջապես հետո նրանք նույնպես գաղթում էին: Նրանց հետ գնում էին նաև զինակոչի տարիքի երիտասարդները:

Փախչում էին խորտակվող ժողովրդի ամենակենսունակ ուժերը: Գաղթային հոսանքը սպառնում էր դատարկել Հայաստան աշխարհը:

---

[1] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1311, 18 (31) դեկտեմբերի 1912 թ. :

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 116, 30 մայիսի 1913 թ.:

[3] Տե՛ս **Ариадна Тыркова**, Старая Турция и младотурки. Год в Костантинополе, էջ 71:

Էրզրումի ռուսական հյուպատոսության խորհրդական Վիչինսկին, շրջագայելով Թուրքահայաստանում, իր նոթագրության մեջ չոչափելով հայերի արտագաղթի հարցը, նշում էր, որ դա վերջին ժամանակներին այնպիսի լայն չափերի է հասել, որ կարելի է վստահորեն ասել՝ եթե մոտ ապագայում լուրջ միջոցներ չձեռնարկվեն արևմտահայերի դժբախտությունը թեթևացնելու և ընդհանրապես հայկական հարցը լուծելու համար, ապա դա անխուսափելիորեն կհանգեցնի հայերի զանգվածային վտարմանը Թուրքիայից: «Այդ հարցի նկատմամբ մենք (Ռուսական իշխանությունները:- Հ. Ս.) չենք կարող անտարբեր լինել»[1],- եզրահանգում էր Վիչինսկին:

Այդ կործանարար ընթացքը կանխելու մղումով հայ մամուլը տագնապ էր հնչեցնում: Բայց ասողին այլևս լսող չկար:

Իրենց հերթին Հայոց ազգային ժողովը, ապա և Վարչությունը 1913 թ. հունիսին հանդես եկան հայությանն ուղղված կոչով՝ ոչ մի դեպքում չգաղթել: Գաղթը սպառնում է դատարկել Հայաստան աշխարհը: Հիշեցում էր արվում, թե հայ ազգը ներկայումս, առավել քան երբեք, պետք է կառչած մնա իր հողին, շարունակի ապրել իր պապերի երկրում և պահպանի ազգի գոյությունը[2]:

Հմայակ եպիսկ. Դիմաքսյանը Ազգային ժողովի նիստերից մեկում ունեցած ելույթում ասում էր. «Մենք ապրելու համար այն վիճակին ենք հասած, որ կեանք մը կը մուրանք: Խեղճ հայ ժողովուրդը արցունքով կը թողու հայրենի օջախները, դիմելու համար օտարութեան: Գաղթականութեանը ջարդն ավելի սոսկալի է և մեր գոյութեան կը սպառնա: Ազգային ժողովը պետք է հույս տա այս ժողովրդին և խրախուսե, որ պահ մը ևս համբերատարութեամբ սպասեն և պինդ փարին իրենց հայրենի ավանդութեանց: Մամուլն ալ կրնայ օգտակար ըլլալ, խրախուսելով որ գեթ այս օրերուն չգաղթեն և սպասեն հայոց խնդրանքներուն նկատի առնելուն: Մեր խնդրանքները շատ*

---

[75] *ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 991, лл. 432-433.*

[75] *Տե՛ս **«Տաճար»**, №18, 29 հունիսի 1913 թ.:*

* *Նկատի ուներ Հայաստանի բարենորոգումների ծրագրի գործադրումը Թուրքահայաստանում:*

չափավոր են. կեանքի, պատվի ու ինչքի ապահովություն միայն կը պահանջենք, ինչ որ եթե տրուի, արդեն գաղթող չըլլար»[1]:

Դիմաքսյանն ինչ իմանար, որ համաշխարհային վերահաս ավերիչ պատերազմի ժամանակ հայերը նզովելու են իրենց՝ օր առաջ հայրենիքն ազգովին չլքելու համար:

Հարություն Շահրիկյանը, Ազգային ժողովում հանդես գալով, նշում էր, որ Թուրքահայաստանի նահանգներից «Սև ծովէն (Պոլիս) եկող բոլոր չոգենավերը գրեթե լեցուն են հայ գաղթականներով, որոնք արտասահման կերթան: Այս կերպով, սակայն, հայ ժողովուրդը պարզապես անձնասպանության կը դիմե, փճացնելով իր պահանջները և իրավունքները»[2]: Նա նշում էր, որ ազգը՝ իբրև իրավական միություն, իրավունք չունի բռնությամբ պահելու այն անհատին, որն այս կամ այն պատճառով ուզում է փոխել իր ազգությունը: Հազիվ թե որևէ ազգ օգուտ ունենա այդպիսի մարդուց, որը միայն ստիպողաբար է մնում այդ հավաքականության մեջ: Մի՞թե, օրինակ՝ հայերին ձեռնտու է իրենց մեջ ունենալ այնպիսի անհատներ, որոնք իրենց համարում են ռուս, ամերիկացի, թուրք կամ վրացի և այդ մասին բացեիբաց հայտարարում են: Որքան ազգի մեջ քիչ լինեն այդպիսի անհատներ, այնքան լավ, քանզի նրանք ունակ չեն մասնակցելու ազգի ստեղծագործական կյանքին: Բայց երբ հայ կյանքով ապրած, հայեցի դաստիարակություն ստացած, իր ազգն ու երկիրը սիրող հայորդին թողնում ու հեռանում է անծանոթ հորիզոններ՝ այնտեղ ձուլվելու հեռանկարով, ապա «այդպիսի հայը դրուժան է», եզրահանգում էր Շահրիկյանը[3]:

Վահան Թեքեյանը, որը գաղթը մասնակի կոտորածից ավելի աղետաբեր էր համարում, ասում էր, որ Ամերիկա մեկնողներն ընդմիշտ կորած են հայության համար, որ գաղթողները գոնե պետք է ժամանակավոր ապաստան գտնեն հայրենիքից ոչ հեռու, նախընտրելի է ռուսական Անդրկովկասը, որտեղից վե-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 41, վավ. 65, թ. 19:*

[2] *Տե՛ս նույն տեղում, թղթ. 35, վավ. 3, թ. 27:*

[3] *Տե՛ս նույն տեղում, թ. 31:*

բաղառնալը դյուրին կլինի, եթե իրավիճակը Թուրքիայում փոխվի:

Ռուսաստան մեկնելը թերևս չարիքի փոքրագույնն էր, բայց դա նույնպես փրկություն չէր, քանզի նրանք, այնտեղ էլ անարգված, անպատված, աղքատության դուռը հասած, թափառում էին մի երկրամասից մյուսը՝ ապաստան փնտրելով:

Մեծ չարիքի առաջն առնելու համար հայ քաղաքական ու հասարակական գործիչները հորդորում էին ժողովրդի զանգվածներին՝ չգաղթել, տեղալ ու մնալ պապերի երկրում ու սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը՝ հույս ունենալով, որ միգուցե Հայաստանում ստեղծվեն տանելի պայմաններ:

Տվյալ բախտորոշ պահին Թուրքահայոց ղեկավարությունը կարող էր իրական ու չոչափելի միայն մի բան անել. աջակցել տերությունների և ամենից առաջ Ռուսաստանի դիվանագետների ջանքերին մինչև վերջ հասցնելու Հայաստանի բարենորոգումների սկսած գործը:

Հայերը մեծ հույսեր էին կապում հատկապես Ռուսաստանի հետ: Հենց նրա թափած դիվանագիտական ջանքերով մեծ տերություններն առաջին անգամ համախոհությամբ որոշել էին լրջորեն զբաղվել Հայաստանի բարենորոգումներով: Հայկական շրջանակները խանդավառված էին, թե, վերջապես, եվրոպացիների թափած ջանքերը դժբախտ հայկական նահանգներին հանգստություն կբերեն: Իսկ Ռուսական կառավարությունը չէր կորցնում հույսը, որ, այնուամենայնիվ, մեծ տերությունների հետ միասին հնարավոր է լինելու ավարտին հասցնել Հայաստանի բարենորոգումների սկսված գործը և գոնե տարրական կարգուկանոն հաստատել հայկական նահանգներում:

Կ. Պոլսի «Աւետաբերը» հույս էր հայտնում, որ մեծ տերությունների ձեռնարկած բարենորոգումները լույս են բերելու տառապյալ Հայաստանին: «Ինչ որ ալ ըլլա սակայն,- գրում էր թերթը,- հայոց համար ներելի չէ յուսահատիլ եւ յուսահատական միջոցներու դիմել լքելով հայրենի հողը: ... Միջոցներ կը ծրագրուին համոզելու համար գաղթել ուզողները քիչ մըն ալ համբերեն, քիչ մըն ալ դիմանան, քիչ մըն ալ տառապին այն

յոյսով որ այս կամ այն կերպով օր մը անչուշտ աւելի ապահով եւ աւելի երջանիկ կեանք մը պիտի կրնան վարել իրենց պատմական պատուական հայրենիքին մէջ: Գիտնալով հանդերձ խոստումներու եւ քաղաքական երեւոյթներու իսկական արժէքը՝ չմոռնանք թէ հողը մշակողն է հողին տէրը եւ գիշերուան ամէնէն խաւար ժամը կարապետն է Արշալոյսին»[1]:

Բայց հայութեան համար արշալույսը չբացվեց: Մոտենում էր հայ ժողովրդի հազարամյակների պատմության ամենաողբերգական էջը՝ 1915 թվականը:

---

[1] ***«Աւետաբեր»,*** *№ 28, 12 հուլիսի 1913 թ.:*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբդուլլահ փաշա (Թուրքական բանակի հրամանատար) – 106, 155

Աբդուլռահման բեյ (Թուրքիայի ֆինանսների նախարար) – 338

Աբդուլ Գատեր (քուրդ հայտնի չեյխ) – 203

Աբդուլ Համիդ II (սուլթան Համիդ) – 31, 68, 84, 112, 253, 300, 326, 333, 352

Աբդուլ Մեջիդ (օսմանյան սուլթան) – 84

Ադիլ բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391

Ադարյան Բարունակ (հայկական վաչտի մարտիկ) – 132

Ադարյան Մանուկ – 337

Ազիզ փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391

Ազիզբեկով Մեչադի բեկ (Բաքվի 26 կոմիսարներից) – 109, 110

Աթանասով Նիկոլա (բուլղար գրող) – 89

Ալի Ռիզա փաշա (Թուրքական բանակի հրամանատար) – 106, 446

Ալլահվերդի (հայ բժիշկ) – 266

Ալպոյաճյան Արշակ (պատմաբան) – 467

Ախունդով Բ. (բժիշկ) – 110

Ակնունի Էդուարդ (Խաչատուր Մալումյան, հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, ՀՅԴ անդամ) – 216, 262, 263

Ահարոնյան Ավետիս (գրող, ՀՅԴ գործիչ) – 216

Ահմեդ Մուխտար փաշա (Օսմանյան կայսրության մեծ վեզիր) – 141, 149, 254, 337, 436

Աղայան Ծատուր (խորհրդային պատմաբան) – 4, 119, 123

Աղասիեան Սէյլպի (Թուրքական բանակի հայ զինվոր) – 219

Աղասիեան Ստեփան (Թուրքական բանակի հայ զինվոր) – 219

Աղբալյան Նիկոլ (Նիկողայոս) – 28, 39, 199, 204, 299, 317, 324

Ամրուլլա բեկ (Թուրքիայի լուսավորության նախարար) – 273

Անդրանիկ Օզանյան – 4, 122–126, 128, 129, 133–137, 223, 224, 226, 228–230, 234, 240, 242, 246–248, 341, 343, 344, 406, 418, 433–435, 445

Անտինյան Կարապետ (հայկական վաչտի մարտիկ) – 132

Անտոնյան Արամ (գրող, պատմաբան, հրապարակախոս) – 4, 11, 61, 63, 64, 71, 72, 76, 77, 93, 145, 158, 167, 169, 207, 296

Աչբքյան Հովհաննես (բժիշկ) – 213

Ապրո Հրանտ բեյ (Թուրքիայի արտգործնախարարության աշխատակից) – 309

Ասադուլաև Ահմեդ (Թուրք նավթարդյունաբերող) – 110

Ասլան (հայ կամավոր բուլղարական բանակում) – 238

Ասլանյան Արմենակ (հայկական վաչտի մարտիկ) – 236

Ասլանյան Հովհաննես (հայկական վաչտի մարտիկ) – 132
Ասկերյան Փոլ (Բուլղարիայում ՀՅԴ գործիչ) – 125
Ավետիսյան Հովհաննես (հայկական վաչտի մարտիկ) – 236
Ավետիքյան Գրիգոր (հայկական վաչտի մարտիկ) – 132
Ավերով Գեորգիոս (հույն ձեռնարկատեր, բարեգործ) – 104
Արամ (հայ կամավոր բուլղարական բանակում) – 238
Արզումանյան Մակիչ (խորհրդային պատմաբան) – 4
Արթինի որդի Հովհաննես (թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Արշարունի Հովհաննես Խթանպուլցի (Կ. Պոլսի հայոց պատրիարք) – 81, 211, 220, 222, 267, 270, 458
Աքչուրան Յուսուֆ (թաթար գործիչ, թուրքականության տեսաբան) – 72

Բ

Բաբախանյան Առաքել (Լեո, պատմաբան) – 199
Բարան-զադե (թուրք գրող) – 370
Բաբրիկով Ստեփան (Բուլղարիայի արտգործնախարար) – 305
Բալբխչի (հայ կամավոր բուլղարական բանակում) – 238
Բաղդասարյան Մուշեղ (հայկական վաչտի մարտիկ) – 132
Բաղրամյան Հովհաննես (ԽՍՀՄ մարշալ) – 235
Բերար Վիքտոր ("Pour les Peuples d'Orient" թերթի տնօրեններից) – 250
Բերբերյան Ռուբեն (տնտեսագետ) – 45, 66
Բերթիսոլդ կոմս (Բերտհոլդ, Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար) – 154
Բլամենաց (Կ. Պոլսում Զերնոգորիայի ներկայացուցիչ) – 92-94
Բոբչև Ստեփան (Ռուսաստանում Բուլղարիայի դեսպան) – 432
Բոբրիկով (բուլղարացի հրամանատար) – 360, 361, 399
Բոյաջյան Հակոբ Էֆենդի (պառլամենտի պատգամավոր Ռոդոսթոյից) – 72
Բոլիտիս (Փարիզի համալսարանի միջազգային իրավունքի դասախոս) – 306
Բուչիչ (Սերբիայի վարչապետ) – 189

Գ

Գազասքեր Ռումելի (Շերիի ժողովի նախագահ) – 337
Գալրյան Գրիգոր (թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Գասպար աղա (Մուշաղչենի աղա) – 461
Գավրոչ (հայ կամավոր բուլղարական բանակում) – 238
Գարիբալդի Ջուզեպե (Իտալիայի ազգային հերոս) – 104
Գարիբալդի Ռիչոտի (Ջուզեպե Գարիբալդիի որդին, Իտալիայից բալկանյան պատերազմում կամավորների հրամանատար) – 104, 197
Գարո Արմեն (Փաստրմաճյան Գարեգին, ՀՅԴ գործիչ, Թուրքիայի պառլամենտի անդամ) – 461
Գենադիև Նիկոլա (Բուլղարիայի նախարար) – 45
Գենև Նիկոլա (Մակեդոնա-Օդրինյան

աշխարհազորի հրամանատար) – 119, 129, 228, 242
Գեչով Իվան (Բուլղարիայի վարչապետ) – 40, 41, 67, 83, 151, 178, 287, 377, 390
Գեորգիևիչ Վլադալեն (Սերբիայի վարչապետ) – 30-32
Գիրս Միխայիլ Նիկոլաևիչ (Թուրքիայում Ռուսաստանի դեսպան) – 77, 261
Գլադստոն Ուիլյամ (Մեծ Բրիտանիայի վարչապետ) – 33, 449
Գրեյ Էդուարդ (Անգլիայի արտգործնախարար) – 25, 310, 333, 371, 403
Գևորգ I (Հունաստանի թագավոր) – 27, 43, 196, 397
Գևորգյան Մարգար (Հայկական վաշտի մարտիկ) – 132
Գևորգյան Մթեմեն (Թուրքական բանակի հայ զինվոր) – 266

Դ

Դանիլո Պետրովիչ (Զերնոգորիայի գահաժառանգ) – 104
Դանիշ Ալի բեյ (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար) – 59
Դանև (Բուլղարիայի Առաջադիմական կուսակցության ղեկավար, Ազգային ժողովի նախագահ) – 243-245, 305, 307, 423, 427, 451
Դամյանով Միլան («Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի միության» նախագահ) – 230, 233
Դավթյան Գրիգոր (Թուրքական բանակի հայ զինվոր) – 208, 219
Դերվիշ Հիմա բեյ (Թուրք քաղաքական գործիչ) – 71, 75
Դիմաքսյան Հմայակ եպիսկ. – 466, 467
Դիմիտրիև Ռադկո (Բուլղարիայի երկրորդ բանակի հրամանատար) – 102, 140, 141, 155, 170, 360
Դիմիտրով Իվան (Ռոդոսթո-Գալիբոլուի նահանգապետ) – 120, 121, 123, 245, 343, 420, 434-436
Դորոշևիչ Վլաս (ռուս լրագրող, հրապարակախոս) – 108
Դրվինգով Պետար (մայոր, Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի շտաբի պետ) – 129, 242
Դուրանյան գերդաստան (գերդաստան, որից ծագել են սելջուկներն ու թուրքերը) – 426
Դուրյան Եղիշե Իսթանպուլցի արք. (Կ. Պոլսի հայոց պատրիարք, Հայ կարմիր խաչ ընկերության նախագահ) – 267
Դուրյան Ղևոնդ վարդ. (Ադրիանուպոլսի հայոց թեմի առաջնորդ) – 392, 393

Ե

Եզերսկի (Ռուսաստանի Պետական դումայի անդամ) – 312
Եղիայան Գարեգին (Թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Երամյան Արամ – 337
Երամյան Համբարձում (մանկավարժ, պատմաբան) – 206, 428
Երանոսյան Երանոս (Բալչըկ քաղաքի հեռագրատան պետ) – 88
Եփրեմ խան (Եփրեմ Դավթյան, հայ ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, պարսկական հեղափոխության ղեկավարներից) – 214, 215

Զ

Զավարյան Սիմոն (ՀՅԴ հիմնադիրներից) – 251
Զարդարյան Ռուբեն (գրող) – 176, 198
Զեքի փաշա (Թուրքական բանակի հրամանատար) – 185
Զիվկովիչ (սերբ զորավար) – 185
Զոհրաբյան Հովհաննես (հայկական վաչտի մարտիկ) – 238
Զոհրապ (հայ բժիշկ) – 267

Է

Էդհեմ (օսմանյան սենատի քարտուղար) – 274
Էդհեմ (բարձրաստիճան զորահրամանատար) – 394
Էլմասճյան Պողոս (Պլովդիվ քաղաքի փոստի հեռագրավար) – 88
Էմանուելիտին (Թուրքական պառլամենտի հույն պատգամավոր) – 72
Էմիրզե (հայ բժիշկ) – 266
Էյուբ բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Էնգելս Ֆրիդրիխ – 9, 21, 26, 39
Էնվեր բեյ (ապա՝ փաշա, երիտթուրքերի առաջնորդներից, ռազմական նախարար) – 345, 350, 353, 354, 369, 379, 430
Էոմեր Նաջի բեյ (իթթիհադական ազդեցիկ գործիչ) – 71
Էսադ փաշա (Յանիա բերդաքաղաքի Թուրքական զորքերի հրամանատար) – 159, 363, 376
Էրենթալ Ալոիս ֆոն (Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար) – 31, 36
Էքմեքչյան Պարույր (հայկական վաչտի մարտիկ) – 132

Թ

Թագվորյան Գաբրիել (հայ գրող, հրապարակախոս) – 218
Թագվորյան Կարապետ (Պլովդիվ քաղաքից իրավաբան) – 88
Թագվորյան Նչան (Պլովդիվ քաղաքից բժիշկ) – 88
Թալեաթ բեյ (ապա՝ փաշա, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար) – 63, 72–74, 275, 345, 370, 448
Թաչճյան Ադնիվ (Անդրանիկ Օզանյանի կնոջ՝ Վերոնիկայի քույրը) – 248
Թաքիրդաղլյան Մկրտիչ էֆենդի (Ռոդոսթոյի կոմիսար) – 442, 443
Թեոդիկ (Թէոդիկ, Թեոդորոս Լապճինյան, գրող) – 105, 451
Թերզյան Մինաս (Թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Թեփեյյան Գալուստ (հայկական վաչտի մարտիկ) – 236
Թեքեյան Վահան (բանաստեղծ, խմբագիր, ՌԱԿ գործիչ) – 91, 467
Թոթովենց Վահան (գրող, արձակագիր) – 123
Թորգոմ Արսեն Խարիտոնի (երրորդ վաչտի հրամանատար) – 119, 122, 238, 433
Թոփչիբաշիև Ալի Մարդան բեկ (Ադրբեջանի պառլամենտի խոսնակ) – 109
Թոքաթյան Մկրտիչ (ձեռներց, բարեգործ) – 265
Թևֆիգ փաշա (Լոնդոնում Թուրքիայի դեսպան) – 305

Ժ

Ժիվկովիչ Միխայիլ (գեներալ, Սերբիայի չորրորդ բանակի հրամանատար) – 103

Ժորես Ժան (Ֆրանսիայի սոցիալիստների պարագլուխ, Ազգային ժողովի անդամ) – 250, 251, 291

Ի

Իբրահիմ (Էդիրնեի համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախոս) – 274

Իբրահիմ փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391

Իզզեթ փաշա (Թուրքական ընդհանուր շտաբի պետ) – 337

Իզվոլսկի Ալեքսանդր (Ռուսաստանի արտգործնախարար, ապա՝ Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան) – 34

Իսահակյան Ավետիք – 199

Իսմայիլ Ալի փաշա (Մաքրիգյուղի հիվանդանոցների ընդհանուր բժշկապետ) – 267

Իսմայիլ բեյ (Թուրք հրանոթաձիգների հրամանատար) – 71, 394

Իսմայիլ բեյ (Լոնդոնում Թուրքիայի դեսպան) – 206

Իսմայիլ Էֆենդի (Թուրքիայի ընդհանուր դատախազ) – 337

Իսմայիլ փաշա (1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ռուսական բանակի հրամանատար) – 79

Իվանով Նիկոլա (Բուլղարիայի երկրորդ բանակի հրամանատար) – 102, 139, 146, 170, 360, 389

Իփեկչի (օսմանյան սենատի քարտուղար) – 274

Իփլիքչյան (հայ անվանի վիրաբույժ) – 267

Լ

Լեման (գերմանացի գնդապետ) – 391

Լենին Վլադիմիր – 235, 405

Լիոնել (գնդապետ, «Թայմսի» զինվորական տեսաբան) – 156, 167

Լյապոչևիչ (Սերբիայի Ազգային ժողովի պատգամավոր) – 116

Լոզան Ստեֆան («Մաթեն» թերթի խմբագրապետ) – 329

Լոթի Պիեռ (ֆրանսիացի բանաստեղծ) – 214, 215

Լուկաչ Լ. (Հունգարիայի հայազգի վարչապետ) – 182

Խ

Խալիլ բեյ (Ադրիանուպոլսի նահանգի կուսակալ) – 384

Խալիլ բեյ (իթթիհադական, Թուրքիայի խորհրդարանի նախագահ) – 326

Խանջյան (հայ բժիշկ) – 266

Խաչատրյան Արամ (հայկական վաշտի մարտիկ) – 132

Խաչատրյան Զաքար (հայկական վաշտի մարտիկ) – 132

Խաչիկյան Կարապետ (Թուրքական բանակի հայ զինվոր) – 219

Խոյսկի Ֆաթալի խան (Ադրբեջանի վարչապետ) – 109

Խրիմյան Մկրտիչ (Ամենայն հայոց կաթողիկոս) – 79

Խոշիկեան Վարդան – 241, 446

Խուրշուդ փաշա (Թուրքիայի ծովային նախարար) – 337

Կ

Կանչև (Լոնդոնում բուլղար դեսպան և զինվորական կցորդ) – 308

Կասլերովիչ (Սերբիայի Ազգային ժողովի պատգամավոր) – 116

Կավինճյան Գասպար (Թուրքական բանակի հայ զինվոր) – 208

Կարապետյան Արշակ (Մակեդոնա-Օդրինյան վաշտի հայ մարտիկ) – 236, 238

Կարապետյան Գառնիկ (հայկական վաշտի մարտիկ) – 236

Կարապետյան Համբարձում (խորհրդային շրջանի պատմաբան) – 4

Կարապետյան Նիկողայոս (հայկական վաշտի մարտիկ) – 132

Կարապետյան Սիմոն (բուլղարական բանակի հայ զինվոր) – 444

Կարաջորջիիչ Ալեքսանդր (Սերբիայի թագաժառանգ) – 103

Կարոլ I (Ռումինիայի թագավոր) – 289, 290

Կենատիուս (Լոնդոնում Հունաստանի դեսպան) – 306

Կերճիկով Միխայել (մակեդոնական նշանավոր հեղափոխական) – 142

Կլիմենկո (Ադրիանուպոլսում Ռուսաստանի հյուպատոս) – 393

Կոեչլմար ֆոն դեր Գոլց փաշա (ֆոն դեր Կոլց, ֆոն դեր Հոլց, գերմանական ռազմական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ, Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավարը) – 254-256, 281, 300

Կոնև («Լոգենդրադյան» անվանյալ 12-րդ դրուժինայի հրամանատար) – 129, 131, 241, 242

Կոստանտին (Հունաստանի թագաժառանգ) – 103

Կոստանտինով Դիմիտր (հայկական վաշտի սանիտար) – 242

Կորովյան Միհրան (հայկական վաշտի մարտիկ) – 236

Կրիփարիս (Թուրքիայում Հունաստանի դեսպան) – 148

Կունդիրիոտիս Պավլոս (ծովակալ, Հունաստանի ռազմածովային ուժերի հրամանատար) – 104

Կուտինչև Վասիլ (Բուլղարիայի առաջին բանակի հրամանատար) – 102, 140, 170, 360

Հ

Հալաճյան Օսկան Էֆենդի (օսմանյան պատգամավոր՝ ընտրված Կ. Պոլսից) – 212, 273

Հակոբ (Թուրքական բանակի հայ զինվոր) – 208

Հակոբյան Զատիկ (Թուրքական բանակի հայ զինվոր) – 266

Համիտ – տե՛ս Աբդուլ Համիդ II

Հայդար Ալի բեյ (վճռաբեկ դատարանի նախագահ) – 337

Հայրապետյան Գառնիկ (հայկական վաշտի մարտիկ) – 132

Հայրի բեկ (Թուրքիայի վակուֆների նախարար) – 273

Համբարձումյան Կարապետ (բուլղարական բանակի 26-րդ վաշտի հայ մարտիկ) – 238

Համդուլլահ Սուբհի բեյ (հոդվածագիր) – 208, 455, 456

Հանոտո Գաբրիել (Ֆրանսիայի արտգործնախարար) – 112

Հաջի Ադիլ (Իթթիհաթ կոմիտեի գլխավոր քարտուղար) – 273

Հաջինակի Մեհթի բեյ (լրագրող) – 110
Հասրաթյան Սիմոն (Մակեդոնա-Օդրինյան վաչտի հայ մարտիկ) – 238
Հարթվինգ Ն. (Սերբիայում Ռուսաստանի դեսպան) – 25
Հարտե Մաքսիմիլիան (գերմանացի նշանավոր քաղաքական հրապարակագիր) – 181, 283, 335
Հարությունյան Կարապետ (թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Հարությունյան Մանուկ (հայկական վաչտի մարտիկ) – 132
Հիլմի փաշա – 96
Հինդլյան Ստեփան (բուլղարահայ իրավաբան և հասարակական գործիչ) – 91
Հյուսամեդդին փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Հովհաննես բեյ (մեծահարուստ) – 433
Հովնան (Հովհան, չուչեցի մտավորական)– 100, 339

Ղ

Ղասաբյան Զոհրապ (խորհրդային շրջանի պատմաբան) – 4
Ղարաբեկյան Արամ (հայկական վաչտի մարտիկ) – 132
Ղարիբջանյան Գևորգ (խորհրդային պատմաբան) – 4
Ղուկաս (հայկական վաչտի ավագ աչխարհազորական) – 343

Ճ

Ճանքյան Պողոս (թուրքական բանակի հայ զինվոր) – 219
Ճապիր փաշա (Վանի զինվորական հրամանատար) – 206
Ճյուպարյան Եղիա (բուլղարական բանակի հայ զինվոր) – 444

Մ

Մաղլխոհ Նեսիմ (պառլամենտի հրեա պատգամավոր) – 72
Մակարյան Աստուր – 230
Մակդոնալդ (Ֆրանսիայի նշանավոր քաղաքական գործիչ) – 291
Մահմուդ Մուխտար փաչա (թուրքական բանակի ռազմածովային հրամանատար) – 106, 141, 143, 208
Մամիկոնյան Հ. («Ավետարեր» թերթի տեսաբան) – 139
Մանգասարյան Սարգիս (հայկական վաչտի մարտիկ) – 132
Մանդելչտամ Անդրեյ (Կ. Պոլսում ռուսական դեսպանատան առաջին թարգման) – 345
Մանուկյան Հովհաննես (բուլղարական բանակի հայ զինվոր) – 444
Մանուկյան Սամվել (թուրքական բանակի հայ զինվոր) – 266
Մաչառով Մ. (Լոնդոնում բուլղար դեսպան) – 305
Մարգարյան Մկրտիչ (հայկական վաչտի մարտիկ) – 132
Մարմարյանց Ա. (Վ. Թոթովենցի կեղծանունը) – տե՛ս Թոթովենց Վահան
Մարտինովիչ Միտար (չերնոգորցի զորահրամանատար) – 104
Մարտիրոսյան Բարկեն (բուլղարական բանակի 26-րդ վաչտի հայ մարտիկ) – 238
Մարտիրոսյան Գրիգոր (հայկական

վաշտի մարտիկ) – 236
Մարտիրոսյան Սողոմոն (հայկական վաշտի մարտիկ) – 132
Մարքս Կարլ – 9, 21, 26, 39
Մեծն Դուշան (Ստեփան Ուրոշ IV, Սերբիայի թագավոր) – 412
Մեկասյան Սարգիս (ՀՅԴ գործիչ Բուլղարիայում) – 125
Մեհմեդ II (օսմանյան սուլթան) – 5, 72, 74, 75
Մեհմեդ Ալի բեյ (Իթթիլաֆի նշանավոր գործիչ) – 209
Մեհմուզյան Սարգիս (բուլղարական բանակի հայ զինվոր) – 444
Միլովանովիչ Միլովան (Սերբիայի վարչապետ) – 40, 41
Միխայլովսկի (ռուս նշանավոր ռազմագետ-գրող) – 108, 183
Մինախուրյան Վահան (էսէռ գործիչ) – 458
Մինասյան Արտաշես (հայկական վաշտի մարտիկ) – 132
Մինասյան Ղուկաս (հասարակական գործիչ) – 122
Միրզոյան Գեղեոն (բուլղարական բանակի 26-րդ վաշտի հայ մարտիկ) – 238
Մկրտիչյան Հայկ (թուրքական բանակի հայ զինվոր) – 219
Մոճիկյան Գրիգոր (թուրքական բանակի պահեստի սպա) – 266
Մովսես բեյ (Ռոդոսթոյի բնակիչ) – 444
Մրուչեկովիչ Մ. – 306, 307
Մութուֆյան (հայ բժիշկ) – 267
Մուխտար բեյ (Զերնոգորիայում Թուրքիայի ներկայացուցիչ) – 93
Մուհամմեդ Ռիշադ V (Մեհմեդ Ռեշադ, օսմանյան սուլթան) – 60, 95, 277
Մուրադ III (օսմանյան սուլթան) – 84
Մուրադյան Ասլան (հայկական վաշտի մարտիկ) – 132

Յ

Յան Սորեսկի (Լեհաստանի թագավոր) – 7
Յանկովիչ Բոժիդար (Սերբիայի երրորդ բանակի հրամանատար) – 103
Յավեր Մեհմեդ փաշա (գեներալ) – 228, 230, 234, 235
Յավորով (Պեյո Կրաչկալով, բուլղարացի բանաստեղծ) – 89-91, 121, 245, 246
Յովանովիչ Լյուբոմիր (Սերբիայի Ազգային ժողովի նախագահ) – 188
Յովսէփեան Արշակ Յովսէփ (թուրքական բանակի հայ զինվոր) – 219
Յուվան (բուլղար զինվոր թուրքական բանակում) – 205

Ն

Նազարյան Լիպարիտ (Լեոիյան Ռ., Կ. Պոլսի «Բագինի» խմբագիր) – 122
Նազըմ փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Նազրմ փաշա (Թուրքիայի ռազմական նախարար) – 105, 112, 149, 163, 166, 168, 197, 211, 212, 272, 293, 337, 345
Նազիֆ Սուլեյման (Տրապիզոնի կուսակալ, իթթիհադական «Հագգ» թերթի խմբագրապետ) – 274
Նայիլ բեյ (օսմանյան բանակի զորավար) – 161

Նապոլեոն Բոնապարտ – 160
Նաջիբ Ֆազլը (կենտրոնական հեռագրատան վարիչ) – 274
Նաջին Էմիր (իթթիհադական նշանավոր գործիչ) – 72
Նեսիմ Ահմեդ (օսմանյան պատգամավոր) – 274, 275
Նեսիմ Մազլիահ (օսմանյան պատգամավոր) – 274
Նեսիչ Մ. (Փարիզում Սերբիայի դեսպան) – 305
Ներատովիչ (Թուրքիայում Սերբիայի դեսպան) – 149
Ներսիսյան Վարդան (հայկական վաչտի մարտիկ) – 132
Նժդեհ Գարեգին – 122, 124, 129, 131, 133–136, 233, 234, 246, 341, 343, 344, 433, 435
Նիզամի Օսման փաշա (Բեռլինում Թուրքիայի դեսպան) – 305
Նիկոլա I Պետրովիչ (Պետրո իշխան, Զերնոգորիայի իշխան, ապա՝ թագավոր) – 37, 43, 83, 92, 95, 104
Նիկոլայ II – 25, 41, 52, 290, 423
Նիկոլիչ Անտրա Մ. (Սերբիայի Ազգային ժողովի նախագահ) – 305
Նիկովիչ (Սերբիայի արդարադատության նախարար) – 188
Նիքոլով (մայոր Դրվինգովի համհարզ կապիտան) – 242
Նշանյան Յակոբ (թուրքական բանակի հայ զինվոր) – 219
Նշանյան Տրդատ (հայկական վաչտի մարտիկ) – 132
Նովակովիչ Ստոյան (Սերբիայի վարչապետ) – 305, 306
Նորատունկյան Գաբրիել էֆենդի (Օսմանյան կայսրության արտգործնախարար) – 59, 61–64, 74, 75, 77, 78, 82, 92, 93, 149, 153, 154, 175, 176, 261, 274, 287, 298, 304, 305, 308, 309, 326–330, 337, 338, 345, 355, 363

Շ

Շահրիկյան Հարություն (Ատոմ, ՀՅԴ անդամ) – 467
Շամտանճյան Միքայել (թարգմանիչ) – 345
Շայդեման (գերմանացի սոցիալիստ) – 292
Շերբեթճյան Հակոբ (իթթիհադական գործիչ) – 255
Շերիտճյան (հայ բժիշկ) – 267
Շլիեֆեն ֆոն կոմս Ալֆրեդ (գերմանական ռազմական տեսաբան, գեներալ-ֆելդմարշալ) – 335, 336
Շնիտման Ա. Մ. (բուլղարացի պատմաբան) – 451
Շուքրի փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության ղեկավար) – 159, 347, 384, 385, 388–391, 393, 394
Շևգաթի էֆենդի (օսմանյան պատգամավոր) – 274
Շևքեթ Մահմուդ փաշա (Թուրքիայի ռազմական նախարար, օսմանյան պատգամավոր) – 106, 275, 345, 353, 354, 356, 358, 361, 369–371, 379

Զ

Զարիկով Ն. (Թուրքիայում Ռուսաստանի դեսպան) – 25
Զաուշ Հովհաննես (բուլղարական բանակի հերոս մարտիկ) – 238
Զաքրյան Հովսեփ (թուրքական բանակի հայ զինվոր) – 219

Զիլյան (հայ բժիշկ) – 267
Զոպանյան Անիկտոս (հայ բժիշկ) – 213
Զոպանյան Արշակ (գրող, գրականագետ) – 208
Զորմիդյան Դանիել (բուլղարական բանակի 26-րդ վաշտի հայ մարտիկ) – 238

Պ

Պազպազյան Աշոտ («Ժամանակ» թերթի աշխատակից) – 320, 321
Պալավիչին Յոհան ֆոն (Կ. Պոլսում Ավստրիայի դեսպան) – 261, 371
Պալաքյան Գրիգորիս վրդ. (եկեղեցական, ազգային, հասարակական գործիչ) – 220
Պալթազար (հայ բժիշկ) – 266, 267
Պասիչ Նիկոլա (Սերբիայի վարչապետ) – 83, 188
Պավլովիչ (Սերբիայի բանակի գնդապետ) – 305
Պաուման (Կ. Պոլսի թուրք ժանդարմների գերմանացի հրամանատար) – 260
Պետար I (Պետեր, Սերբիայի թագավոր) – 43, 188
Պետիկյան Աստուր (հասարակական գործիչ Բուլղարիայում) – 122
Պետրոսյան Գևորգ (հայկական վաշտի մարտիկ) – 132
Պետրոսյան Հովհաննես (հայկական վաշտի մարտիկ) – 132
Պերնեսդորֆեր (Ավստրիայի պառլամենտի փոխնախագահ) – 292
Պլավա Լեոն (բուլղար մեծ մտածող) – 89
Պողոս (հայ կամավոր Ռոդոսթոյից) – 234
Պողոսյան Կարո (հայկական վաշտի մարտիկ) – 236
Պոման (ֆրանսիացի զինվորական, թուրքական ոստիկանական զորքերի հրամանատար) – 172
Պոմոն Մ. Ա. («Դեյլի Տելեգրաֆի» չրջիկ թղթակից) – 208
Պոյովիչ (գեներալ, Սերբիայի բանակի սպայակույտի պետ) – 305
Պոնբառ Մ. (Ֆրանսիայի դեսպանը Կ. Պոլսում) – 220
Պոպուկ (Կ. Պոլսում Բուլղարիայի դեսպանատան թարգման) – 293
Պսակ ծ. վարդապետ (Խարբերդի հայոց առաջնորդ) – 368
Պրեսանս Ֆրանսիս դը (ֆրանսիացի հայասեր) – 250
Պրոտոգերով Ալեքսանդր (բուլղարական գեներալ) – 54, 119, 123, 124, 129, 223, 341, 343
Պուանկարե Ռայմոնդ (Փուանքարե, Ֆրանսիայի վարչապետ, արտգործնախարար) – 25, 114,115, 153, 280, 282-284, 319
Պուտնիկ Ռադոմիր (գեներալ, սերբական բանակի հրամանատար, Սերբիայի գլխավոր չտաբի ղեկավար) – 103

Ջ

Ջալալեդդին չելեբի (քուրդ համբավավոր չելեբի) – 79
Ջամփոլադ Իսմայիլ բեյ (օսմանյան պատգամավոր) – 274, 275
Ջավիդ բեյ (Թուրքիայի ֆինանսների նախարար) – 274
Ջավիդ Հուսեին բեյ («Թանին» թերթի խմբագիր) – 274, 275
Ջեմալ Ահմեդ փաշա (իթթիհադական

եռապետության անդամ, Թուրքիայի ծովային նախարար) – 345
Ջեմալ բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Ջեմալեդդին Արիֆ բեյ (փաստաբանների ընկերության նախագահ) – 72
Ջեմալեդդին էֆենդի (չեյխ ուլ իսլամ) – 149
Ջեմիլ էֆենդի (օսմանյան սենատի քարտուղար) – 274
Ջեմիլ Թոփուզլու փաշա (Կ. Պոլսի քաղաքապետ) – 337
Ջիմջոզ Սելահ («Գալեմ» երգիծաթերթի խմբագիր) – 274
Ջիվանչիր Բեյբութ խան (Ադրբեջանի ներքին գործերի նախարար) – 110
Ջորջ Լլոյդ (Մեծ Բրիտանիայի վարչապետ) – 281
Ջևդեթ Աբդուլլահ (հրապարակագիր) – 274

Ռ

Ռաուֆ բեյ («Համիդիե» մարտանավի հրամանատար) – 159
Ռենենկամպֆ Պավել (ռուսական բանակի զորավար) – 58
Ռեմզի բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Ռեչիդ փաշա (Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար)– 149, 305, 306, 313
Ռըներ (Ավստրիայի խորհրդարանի անդամ) – 291
Ռիզա Ահմեդ փաշա (օսմանյան պատգամավոր, օսմանյան ներկայացուցիչների պալատի նախագահ) – 274, 275, 320
Ռիզա բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Ռիֆաթ Մևլան Զադե (նշանավոր երիտթուրքական գործիչ) – 272, 273
Ռիֆաթ փաշա (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Ռոդոսլավով Վասիլ (Բուլղարիայի վարչապետ) – 427
Ռոշֆոր Հանրի (ֆրանսիացի հրապարակախոս) – 366
Ռոտ Ժան Մ. – 213

Ս

Սարահեդդին իշխան – 277, 278
Սագդյան Պետրոս (Մալգարայի երևելի հայերից) – 447
Սագըզյան Եղիա Պետրոս (Ռոդոսթոյի բնակիչ) – 444
Սագըզով (Բուլղարիայի Ազգային ժողովի պատգամավոր) – 116
Սազոնով Սերգեյ (Ռուսաստանի արտգործնախարար) – 25, 33, 34, 51, 52, 85, 281, 286, 289, 328, 402
Սալիհ փաշա (Թուրքական բանակի հեծելազորային ուժերի հրամանատար) – 155
Սայիդ փաշա (Օսմանյան կայսրության վարչապետ)– 63, 337, 338
Սանդանսկի Յան (բուլղարական հեղափոխական) – 58
Սապունտզակիս Կոստանտինոս (հունական բանակի գեներալ) – 103
Սավով Միխայիլ (բուլղարական բանակի գեներալ, զորահրամանատար) – 45, 102, 173, 295, 360, 361, 450, 451

Սարաֆով (Բուլղարիայի դեսպանը Թուրքիայում) – 149
Սարաֆով Բորիս (մակեդոնական ազատագրական շարժման նշանավոր գործիչ) – 123
Սարգսյան Գաբրիել (բուլղարական բանակի հայ զինվոր) – 444
Սարուխանյան Ա. (Պետերբուրգի հայ քաղաքական գործիչ) – 432
Սեպեգով (Բուխարեստում Ռուսաստանի դեսպան) – 289
Սերթյան (հայ բժիշկ) – 267
Սթրայթ (Վիեննայում Հունաստանի դեսպան) – 306
Սիրանյան Հովսեփ (հայ կաթոլիկ վարդապետ) – 77
Սիմեոն ցար (Բուլղարիայի թագավոր) – 416
Սիմոն աղա (Մալգարայի երևելի հայերից) – 447
Սիմոնյան Հրաչիկ – 123, 126, 175, 179, 216, 234, 250, 268, 322, 374, 395, 430, 445, 456, 461, 466
Սիրունի (Ճոլոյան) Հակոբ (բանաստեղծ, խմբագիր) – 47, 49, 204
Սկոլուտիս Մ. (Հունաստանի արտգործնախարար) – 305
Սյունի Արմեն (Արշակ Մնացականյան, բալկանյան առաջին պատերազմի մասնակից) – 4, 124, 128, 136, 137, 223, 224, 228–230, 234, 241
Սոխրապյան Հակոբ (հայկական վաշտի մարտիկ) – 236
Սվաճյան Երվանդ Մ. (հայ բժիշկ) – 213
Սվաճյան Հովհաննես (Բազարջիկ քաղաքի հեռագրատան պաշտոնյա) – 88
Ստեպանովիչ Ստեպա (սերբ զորահրամանատար) – 103, 189
Ստեփանյան Արթին (թուրքական բանակի հայ զինվոր) – 219
Ստեփանյան Գառնիկ (հայկական վաշտի մարտիկ) – 132
Ստրուվե (ֆրանսիացի զինվորական) – 172
Սուլիև փաշա (Թուրքիայի ծովային փոխնախարար) – 305

Վ

Վագներ (“Reichspost” թերթի ռազմաճակատային թղթակից) – 163
Վայիան (ֆրանսիացի քաղաքական գործիչ) – 250
Վանգենհայմ Հանս (Գերմանիայի դեսպանը Կ. Պոլսում) – 371
Վարանդյան Միքայել (ՀՅԴ գործիչ, պատմաբան) – 122, 250
Վարդազարյան Կարապետ (բուլղարական բանակի սպա) – 122
Վեխտեր (Կիդերլեն-Վիխտեր, Ալֆրեդ ֆոն, Գերմանիայի արտգործնախարար) – 154
Վենիզելոս Էլեֆտերիոս (Հունաստանի վարչապետ) – 43, 45, 305, 306, 322
Վերոնիկա (Անդրանիկ Օգանյանի կինը) – 248
Վիլքոքս (անգլիացի գործարար) – 16
Վիլհելմ II (Գերմանիայի կայսր) – 17, 25, 112, 422
Վիչինսկի Եվգենի (Էրզրումի ռուսական հյուպատոսության խորհրդական, հետագայում՝ գեներալ-մայոր, 1917 թ.՝ Հայկական կորպուսի շտաբի պետ) – 466
Վրացյան Սիմոն (ՀՀ վարչապետ, ՀՅԴ գործիչ) – 176, 198, 199
Վուկոտիչ Յանկո (չերնոգորական

արևելյան դիվիզիայի հրամանատար) – 104, 192

Տ

Տանև Ստոյան տե՛ս Դանև
Տիգրան էֆենդի – 207
Տիգրանյան Սիրական (ՀՅԴ գործիչ, Պետերբուրգի հայկական խմբակի բյուրոյի անդամ) – 432
Տիլպեր Զարեհ – 337
Տորչևսկի (գերմանացի գնդապետ) – 391
Տրոցկի Լև (Բրոնշտեյն, նշանավոր հեղափոխական) – 128, 133-136, 234, 236

Ու

Ուբահդուլահ (Ուբեյդուլլահ, քուրդ գործիչ, շեյխ) – 72, 79
Ուրխան (օսմանյան սուլթան) – 35

Փ

Փանիկյան Օնիկ (Օնիկ Զարմունի, բանաստեղծ, փիլիսոփա, արձակագիր, թարգմանիչ) – 447
Փաշայան դոկտ. (ՀՅԴ գործիչ) – 72, 73
Փափազյան Մ. («Ազատամարտի» թղթակիցը Բալկաններում) – 204
Փափազյան Վահան (Կոմս, ՀՅԴ գործիչ, Թուրքիայի պառլամենտի անդամ) – 463

Ք

Քամպոն (Ֆրանսիայի արտգործնախարար) – 154
Քարասու էֆենդի (օսմանյան պատգամավոր) – 275
Քեազիմ բեյ Հուսեին (Քյազիմ բեյ, Սալոնիկի կուսակալ) – 274, 275
Քեամիլ փաշա (Քյամիլ փաշա, Օսմանյան կայսրության վարչապետ)– 63, 82, 149, 173, 261, 272, 274, 276, 293, 303, 304, 308, 324, 326, 328, 332, 337, 345, 346, 356, 357, 374, 401, 436
Քելեկյան Տիրան էֆենդի (ռամկավար, խմբագիր) – 70
Քեմալ, Ալի բեյ (խմբագիր, լրագրող) – 63, 71, 256, 257
Քեչեյան Բյուզանդ («Բիւզանդիոն» թերթի խմբագիր) – 203
Քեռի (Արշակ Գավաֆյան, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ) – 215
Քյազիմ բեյ (Ադրիանուպոլսի պաշտպանության մասնակից) – 391
Քյուրքչյան Գարեգին (հայ բժիշկ) – 267

Օ

Օ'Գրեյ (անգլիացի քաղաքական գործիչ) – 291
Օզանյան Գագիկ (գրականագետ, Անդրանիկ Օզանյանի հորեղբոր որդին) – 248
Օհանես էֆենդի (պահեստի հայ սպա) – 207
Օսման Ջալիլ փաշա (Թուրք նշանավոր գեներալ) – 381
Օսման փաշա (Երզնկայի զորամիա-

վորման հրամանատար) – 206
Օտտո Անտրիդ (Տրոցկու կեղծանունը)– տե՛ս Տրոցկի Լև

Ֆ

Ֆազիք (սերբ գնդապետ) – 59
Ֆաթիհ սուլթան Մեհմեդ– տե՛ս Մեհմեդ II
Ֆայիգ բեյ (օսմանյան պատգամավոր) – 275
Ֆեհմի Հասան (արաբ իթթիհադական գործիչ) – 72
Ֆեներճյան Լևոն (հասարակական գործիչ Բուլղարիայում) – 122
Ֆերդինանդ (Ռումինիայի իշխան) – 289
Ֆերդինանդ I (Բուլղարիայի թագավոր) – 25, 43, 45, 54, 102, 108, 110-112, 151, 293, 295, 416, 451
Ֆիլիպով Ս. (բուլղարական բանակի գնդապետ) – 121, 235
Ֆիլոսոֆով (ռուս լրագրող) – 108, 109
Ֆիչև Իվան (բուլղարական բանակի գեներալ) – 43, 45, 101, 103, 295
Ֆիցմորիս Ջ. (Կ. Պոլսում Անգլիայի դեսպանության առաջին թարգման, Էրզրումում նախկին հյուպատոս) – 261
Ֆիքրի Լութֆի բեյ (Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Դերսիմից) – 279
Ֆյուրստենբերգ Կարլ Էմիլ (Բուխարեստում ավստրիական դեսպան) – 289
Ֆնտզյան (հայ բժիշկ) – 267
Ֆրանց Յոզեֆ (Ավստրիայի կայսր) – 184, 289
Ֆուադ բեյ (Թուրքիայի ռազմական նախարարության խորհրդական)– 62, 70
Ֆունդուկչյան Լևոն (Ադրիանուպոլսի անվանի քաղաքացի) – 348
Ֆուրնեի Տարթիժ դը (ֆրանսիական ռազմական նավատորմի ծովակալ) – 172

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ագարակ (Ագրակ, բնակավայր Մեղրու շրջանում) – 124

Ագրումիցա (քաղաք Բալկաններում) – 189

Աղանա (Ատանա, նահանգ, գավառ և քաղաք Կիլիկիայում) – 167, 214, 245, 395, 462

Աղրբեջան – 109

Աղրիանուպոլիս (Էդիրնե, Էտիրնէ, Օդրին, Օդրինե) – 53, 55, 102, 119, 138–141, 143–148, 150, 152, 156, 158, 160–166, 169, 170, 224, 248, 274, 275, 281, 288, 289, 297, 303, 306–308, 312, 314, 322, 323, 326, 327, 331–334, 346–350, 354, 355, 357, 359, 360, 362, 369–371, 376, 381–386, 388–396, 399, 400, 404, 412, 415, 428–431, 439, 440, 444, 452, 454

Աղրիական – տե՛ս Աղրիատիկ ծով

Աղրիատիկ ծով – 5, 11, 12, 28, 36, 37, 104, 159, 180, 181, 183, 184, 190, 191, 288, 304, 307, 316–318, 320, 402, 409, 412, 413, 421, 423

Աթենք – 71, 85, 197, 220, 288, 345, 418

Աթինատա (Թուրքերեն՝ Աթենքը) – տե՛ս Աթենք

Աթ-Մեյդան (Թաղամաս Աղրիանուպոլսում) – 392

Ալաչկերտ (գավառակ Բայազետի գավառում) – 80

Ալբանիա (Ալպանիա) – 11, 12, 28–30, 53, 105, 180, 181, 238, 244, 262, 299, 304, 311, 314, 316–318, 320, 323, 377, 397, 402, 412, 414, 421, 423, 431

Ալեսիո (նավահանգիստ Աղրիատիկի ափին, նախկին Լիեչ) – 36, 316

Ալեքսանդրապոլ – 394

Ալեքսանդրիա – 159

Ալեքսանդրուպոլիս – տե՛ս Դեդե-Աղաջ

Ալթայ – 27

Ալժիր – 6, 7, 179

Ալջավազ (գավառակ Վանի նահանգում) – 461

Ախչա-Կումայի (ավազուտներ Թուրքմենիայում) – 110

Աղթամար – 462

Ամերիկա – 58, 198,199, 222, 433, 464, 467

Այաչ (նավահանգիստ Աղրիատիկի ափին, նախկին Տիրացցոն) – 36, 181

Այդումուչ (Թուրքաբնակ գյուղ բուլղար-թուրքական սահմանին) – 224

Անատոլիա (Անատոլու) – 20, 148, 150, 151, 164, 239, 240, 255, 257, 325, 326, 358, 368, 369, 375, 426, 439, 453, 456–458

Անգլիա – 8–10, 13, 14, 16, 19, 21, 25, 46, 50, 51, 62, 85–87, 117, 128, 153, 172, 184, 282, 284, 286, 294, 299, 302, 303, 305, 309–311, 319, 333, 335, 359, 371, 398, 403, 409, 423

Անդրկովկաս – 81, 110, 433, 467

Անխիալո (ծովափնյա գյուղաքաղաք

Բուլղարիայում) – 90
Անկարա – 274
Առնաուտքեռ (բնակավայր Ադրիանապոլսի մոտակայքում) – 147, 165
Ասիա – 8, 12, 64, 236, 263, 323, 326, 366, 408, 422, 441, 455
Ավստրիա – տե՛ս Ավստրո-Հունգարիա
Ավստրո-Հունգարիա – 7, 10–14, 17, 20–25, 27–29, 31–39, 44, 46–51, 57, 83, 85, 86, 97, 98, 107, 117, 154, 181–184, 190, 195, 282, 283, 285, 286, 289, 291, 292, 294, 298, 299, 302, 311, 314–318, 333, 371, 397, 398, 402, 409, 412, 413, 421–425, 436
Ավրաթ Հիսար (բնակավայր Սոֆիայի մատույցներում) – 428
Ատլանտյան օվկիանոս – 7
Արաբական թերակղզի – 8
Արաբստան (Արաբիա) – 76, 350
Արարատ (լեռ) – 241, 242, 244
Արաքս (գետ) –343, 344
Արդա (գետ Բուլղարիայի հարավում և Հունաստանի հյուսիս-արևելքում) – 224, 228
Արճեշ (գավառ Վանի նահանգում) – 461
Արմենիա – տե՛ս Հայաստան
Արշիպելագոսի կղզիներ – 304, 323, 334, 409, 414
Արտա (քաղաք Հունաստանում) – 103
Արևելյան Անատոլու – 330
Արևելյան Եվրոպա – 335, 405
Արևելյան Ռոդոպներ (չրջան Սոլունի վիլայեթում) – 53
Արևելյան Ռումելիա տե՛ս Ռումելիա
Արևելք – 79, 112, 244, 257, 335, 364
Արևմտյան Լիբիա – 8
Արևմտյան Հայաստան տե՛ս Հայաստան
Արևմտյան Սերբիա – տե՛ս Սերբիա
Արևմուտք տե՛ս նաև Եվրոպա– 7, 79, 112, 257, 409
Աք Ալան (բարձունք Զաթալջայի մոտակայքում) – 377
Աֆրիկա – 8, 404
Աֆրիկյան Տրիպոլի – 440

Բ

Բարանեսքի – 138
Բազարջիկ (Պազարճիկ, քաղաք Բուլղարիայում) – 88
Բաթում – 8
Բալթիկ ծով – 14
Բալթյան նավահանգիստներ – 11
Բալկան-Դերեսի (Բալկան-Թերեսի) – 230, 341
Բալկանյան թերակղզի – 3, 9, 22, 26, 29, 31, 33, 39, 44, 45, 53, 87, 120, 122, 127, 162, 180, 238, 280, 315, 372, 397, 399, 435
Բալկաններ (Բալկան, Պալքաններ) – 8, 11, 12, 17–20, 23, 25–28, 30, 32, 33, 38–40, 42, 44–47, 49, 51, 53, 54, 58, 64–66, 68–70, 82, 84, 86, 97, 99, 101, 107–109, 112, 115–117, 125, 128, 133, 134, 154, 189, 204, 240, 248, 249, 262, 278, 281, 286, 288, 289, 292, 299, 308, 317, 319, 335, 336, 374, 390, 405, 408, 409, 412, 416, 418, 419, 421, 422, 425, 429, 430, 436, 437, 439–441, 449, 452, 453, 455, 457, 458, 460
Բալչիկ (քաղաք Բուլղարիայի հյուսիս-արևելքում) – 88, 315

Բաղդադ – 16, 18, 19
Բայազետ – 79
Բանիա – 223
Բանսկո (քաղաք Բուլղարիայի հարավ-արևմուտքում) – 240
Բասրա (վիլայեթ Թուրքիայում) – 16, 18
Բավարիա – 31
Բատակ (քաղաք Բուլղարիայի հարավում) – 449
Բաքու – 4, 109, 110, 124, 364
Բելգրադ – 25, 57, 71, 73, 85, 181, 184, 188, 189, 191, 288, 367, 390, 414, 418, 451
Բելոմորե – տե՛ս Էգեյան ծով
Բեյրութ (Պէյրութ) – 11, 16, 199, 251
Բենդեմքեն (բնակավայր Ադրիանուպոլիս-Պոլիս մայրուղու վրա) – 164
Բեռլին (Պերլին, Պէրլին) – 16–18, 20, 25, 68, 81, 84, 87, 97, 154, 243, 244, 254, 280, 291, 301, 302, 305, 318, 411
Բեսարաբիա – 32, 47, 290
Բերա (Թաղամաս Կ. Պոլսում) – 63, 74, 76, 258, 259, 265
Բերանա (քաղաք Զերնոգորիայում) – 56, 191
Բիթլիս (Պիթլիս) – 462, 465
Բիտոլի (Բիտոլիա, նահանգ Մակեդոնիայում) – 40, 53, 190
Բյուզանդիոն (հունական գաղութ, հետագայում քաղաք Բոսֆորի եվրոպական ափին) – 426
Բյուզանդիա – 5, 13, 35, 37, 172, 174, 414
Բոսնիա – տե՛ս Բոսնիա-Հերցեգովինա
Բոսնիա-Հերցեգովինա – 5, 8, 24, 28, 31, 35, 84, 107, 318, 412
Բոսֆորի նեղուց (Բոսֆոր, Վոսֆոր, Վոսփոր) – 23, 85, 174, 176, 177, 182, 260, 263, 328, 350, 396
Բորոդինո (գյուղ Մոսկվայի մատույցներում) – 339
Բրիտոլիա – տե՛ս Մոնաստիր
Բութանիա (նահանգ Փոքր Ասիայում) – 23, 34, 38, 48, 165, 168, 170, 171, 181, 195, 200, 201, 260, 264, 275–277, 292, 293, 303, 304, 307–310, 313, 318, 323–325, 327, 331, 333–338, 348–350, 410, 411, 456–458, 462
Բուլաիր (քաղաք Գալիբոլուի շրջանում) – 361, 362, 374, 435
Բուլղարիա (Բուլղարական պետություն, Բուլղարական թագավորություն, Մեծ Բուլղարիա, Պուլկարիա, Պուլկարի) – 3, 4, 8, 11, 23–25, 27–30, 32–43, 45–49, 51–59, 64, 65, 67, 74, 81–84, 86–90, 96, 101–109, 111, 116, 119–128, 133, 135, 140, 148, 150, 160, 162, 169, 172–175, 177, 178, 190, 204, 222, 225, 231, 243–246, 248, 254, 255, 282, 283, 286–290, 293, 295–298, 303, 305, 308, 314–316, 322, 324, 325, 330, 333, 344, 360, 372–374, 377, 378, 385, 389, 396, 398, 401, 402, 404–407, 412–416, 418–420, 422–428, 430–432, 435, 436, 446, 449–452, 463
Բուխարեստ – 48, 49, 289, 418, 431, 432
Բունար Հիսար – տե՛ս Փունար Հիսար
Բուրգաս (Բուրգազ, քաղաք Բուլղարիայում) – 150, 164, 381
Բուրսա (խալիֆայության նախկին աթոռանիստը) – 35, 454

Գ

Գալիբոլու (Գալիպոլի, քաղաք Եվրոպական Թուրքիայում)– 120, 359, 362, 375, 409, 420, 429, 434

Գալֆաքեո (Քալֆա-քեո, բնակավայր Ադրիանուպոլսի մոտակայքում) – 165, 377

Գանտիլլի (թաղամաս Կ. Պոլսում) – 219

Գատը-քեո (բարձունք Զաթալջայի մատույցներում) – 377

Գարահիսար – տե՛ս Շապին Գարահիսար

Գարաճաքեո (բնակավայր Զաթալջայի մատույցներում) – 162

Գարաֆերիա (Վերիա, քաղաք Հունաստանում) – 193, 194

Գերմանական Արևելյան Աֆրիկա – 17

Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկա – 17

Գերմանա-հռոմեական կայսրություն – 6

Գերմանիա – 10, 13, 14, 16-21, 31, 33, 36, 46, 48-51, 85, 86, 97, 107, 117, 154, 156, 180, 182-184, 235, 260, 282, 294, 296, 298-302, 309, 318, 326, 334-336, 371, 384, 398, 409, 422-424

Գըրջալի (Գյավաչ, Գեավաչ, բնակավայր Զաթալջայի մատույցներում) – 303, 461

Գյումուչսու (թաղամաս Կ. Պոլսում) – 266

Գյումյուրջինե (Գյումուրչինե, Գյումուրջի, քաղաք Մարիցա գետի ափին)– 230, 240, 406

Գոնիա (քաղաք, գավառ և նահանգ Թուրքիայում) – 274

Գումգաբու (թաղամաս Կ. Պոլսում) – 219, 260

Գևգել (բնակավայր Կ. Պոլսի մոտ) – 264

Դ

Դալմաթիա (պատմական տարածք Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմուտքում) – 36

Դամասկոս – 16

Դանուբ (գետ) – 5, 70, 433

Դարդանելի նեղուց (Դարդանել, Զանաքկալե) – 23, 159, 172, 177, 182, 221, 259, 354, 357, 371, 375, 381, 409, 429

Դեղե-Աղաջ (Դեղե-Աղաչ, Դեղեաղաջ, Տետե-Աղաճ, նավահանգիստ Բալկաններում) – 247, 288, 303, 307, 315, 381, 406, 428

Դերկոր (բնակավայր Մարմարա ծովի ափին) – 164

Դեմիր Հիսար (քաղաք Մակեդոնիայում) – 428

Դերկոս – 360, 362

Դեչիչ – 191

Դիմոթեքա (Դիմոթեկս, Դեմոտեկ, Դեմոտկես) – 139, 165, 240, 360

Դոբրուջան (պատմական չրջան Բալկանյան թերակղզում, այժմ՝ Բուլղարիայի և Ռումինիայի տարածքում) – 289, 427, 450

Դոլն-Բանիա (քաղաք Սոֆիայի չրջանում) – 223

Դոյրան (բնակավայր Մակեդոնիայում) – 428

Դրամա (քաղաք Հունաստանում) – 415, 428

Դուրացցո (նավահանգիստ Ադրիատիկ ծովի ափին) – 316

Ե

Եգիպտոս – 5, 8, 16, 84, 159, 363
Եմեն – 263
Ենի-Գափու (թաղամաս Կ. Պոլսում) – 260
Ենիջե (քաղաք Սալոնիկի մոտակայքում) – 193, 194
Ենի-քեո (արվարձան Կ. Պոլսում) – 158
Եվրոպա – 5, 8–10, 12, 15, 16, 20, 21, 23, 26, 27, 31, 32, 37, 39, 44, 46, 53, 61, 64, 68, 69, 71, 75, 77–79, 88, 92, 96, 98–100, 102, 106, 112–115, 117–119, 135, 141, 160, 172, 173, 176, 177, 197, 240, 243, 245, 250, 257, 260, 262, 263, 274, 278–281, 285, 289, 291, 298, 299, 305, 311, 312, 314, 321, 323–326, 334, 336, 337, 346, 349, 351, 353, 356, 364–366, 377, 404, 408, 414, 421, 423, 425, 426, 430, 435, 438, 449, 454, 457, 459, 464
Երզնկա (գավառ Էրզրումի նահանգում) – 206, 464
Երուսաղեմ – 16, 112
Երևան – 79, 123, 129, 228, 235, 273, 394, 400, 447, 448
Եփրատ գետ – 350

Զ

Զմյուռնիա – 16, 76, 79, 167, 274, 275, 277, 374, 414

Է

Էգեյան ծով (Բելոմորե) – 28, 36, 96, 97, 159, 170, 182, 184, 190, 193, 238, 296, 303, 314, 316, 317, 333, 334, 357, 361, 381, 397, 408, 415, 420, 436
Էգեյան կղզիներ – 32, 316, 333, 334, 346, 369, 377
Էգեյան Մակեդոնիա (շրջան Սոլունի վիլայեթում) – 53
Էգեն տե՛ս Էրգենո գետ – 144
Էդիրնե տե՛ս Ադրիանուպոլիս
Էլասոնիա (բնակավայր Հունաստանում) – 196, 303
Էլբասան (շրջան Ալբանիայում) – 288
Էլդաս-Լոթարինգիա – 10
Էյուպ (բարձրունք Կ. Պոլսի մոտ) – 175
Էնկյուրի տե՛ս Անկարա
Էնոս (նավահանգիստ-քաղաք) – 238, 377, 381, 396, 411, 420, 429, 435, 436
Էպիրոս (Եպիրոս, պատմաշխարհագրական շրջան՝ բաժանված Հունաստանի և Ալբանիայի միջև) – 43, 53, 105, 288, 316, 323, 376, 414
Էջմիածին – 79
Էսկիշեհիր (քաղաք Թուրքիայի Հյուսիս-արևմուտքում) – 380
Էսկի-պապա (բնակավայր Լյուլե-Բարգազի մատույցներում) – 158
Էտիրնե տե՛ս Ադրիանուպոլիս
Էրգենո գետ (Էգեն, Էրկինե) – 144, 288, 377
Էրեյլի – 151
Էրզրում – տե՛ս Կարին

Թ

Թաթավալա (թաղամաս Կ. Պոլսում) – 258
Թալիմհանե (թաղամաս Կ. Պոլսում) – 258

Թաման (Թամանյան թերակղզի) – 7
Թասոս կղզի (կղզի էգեյան ծովի հյուսիսում) – 414
Թարապոչ (բերդ) – 95, 96
Թաքսիմի հրապարակ (հրապարակ Կ. Պոլսում) – 74
Թեթովո (քաղաք Մակեդոնիայի հյուսիս-արևելքում) – 188
Թեհրան – 458
Թեսալիա (մարզ Հունաստանում) – 288, 376
Թիֆլիս – 13, 22, 28, 125, 243, 366, 394, 415
Թուխանե (թաղամաս Կ. Պոլսում) – 259
Թոքաթ (քաղաք Փոքր Ասիայում) – 265
Թրակիա (Արևելյան Թրակիա, Արևմտյան Թրակիա)– 38, 53, 101, 102, 105, 119, 121, 129, 140, 144, 163, 166, 172, 183, 230, 233, 238, 245, 327, 371, 381, 382, 400, 414, 415, 430–432, 435, 440, 453
Թրակիական թերակղզի (Թրակիական-Իլլիրիական թերակղզի) – 9, 26
Թուզի – 96
Թունիս – 6, 8
Թուրքիա (Օսմանյան կայսրություն, Օսմանյան պետություն, Օսմանյան տերություն, Ասիական Թուրքիա, Եվրոպական Թուրքիա, Տաճկաստան) – 3, 5–9, 12, 15–27, 29–43, 46–53, 55, 56, 59, 60–62, 65–68, 72, 77, 78, 81–87, 93, 94, 96–101, 103–108, 110, 113, 117, 118, 120–122, 125–128, 133, 144, 145, 147–149, 156, 157, 162, 166, 176, 177, 179, 180, 188, 195, 197–199, 201–204, 206, 215, 216, 218, 234, 219, 238–240, 243, 245–247, 249, 250–258, 260–264, 271, 274, 277, 278, 280–282, 284, 286–288, 292, 294, 296–308, 310, 312–314, 317–321, 323–330, 332, 334–336, 338, 345, 346, 349–352, 355–357, 360, 362–366, 369–373, 377, 379, 382, 384, 395, 399–401, 403–406, 408–412, 414–418, 421, 422, 424, 425, 428–433, 435–437, 439, 440, 450, 453, 454, 456, 462, 465, 466, 468
Թուրքմենիա – 110

Ի

Իզգետին-քեո – 157
Իզմիր – տե՛ս Զմյուռնիա
Իկարիա (կղզի Հունաստանում, էգեյան ծովում) – 39
Ինջեիզ – 378
Իշխանաց կղզիներ (կղզեխումբ Կ. Պոլսի մոտ՝ Մարմարա ծովում) – 259
Իշտիր – 412
Իոնիա – 185
Իսպանիա – 310
Իտալիա – 10, 11, 14, 19, 29, 51, 60, 97, 98, 103, 106, 154, 183, 184, 190, 196, 197, 278, 294, 299, 302, 309, 314, 319, 333, 334, 398, 402, 409, 421, 423
Իփեկ – 192

Լ

Լահանա – 428
Լայպցիգ – 160
Լարիսա (քաղաք Հունաստանում) – 196
Լապ գետ (գետ Կոսովոյի հյուսիս-

արևելքում) – 186
Լեհաստան – 6, 7
Լեմնոս (կղզի Էգեյան ծովում) – 193
Լիբանան – 5, 33, 243
Լիբիա – 106, 363
Լիեչ – տե՛ս Ալեսիո
Լիմին (Լեմնոս կղզու կենտրոնը) – 193
Լյուլե-Բուրգազ (քաղաք և շրջան Կրկլարելիի նահանգում), (տե՛ս նաև Բուրգաս, Բուրգազ) – 144, 154, 150, 155–158, 162–164, 169, 214, 285, 360, 376, 400
Լոզան – 106, 216, 456
Լոզենգրադ – տե՛ս Կրկլարելի
Լոնդոն – 51, 85, 128, 146, 153, 172, 175, 206, 280, 284, 290, 294, 297–300, 302–310, 312, 317–319, 321–323, 328, 329, 331–333, 346, 350, 375, 378, 381, 383–395, 398, 401–403, 406, 408, 410–412, 420, 430, 431, 434, 436

Խ

Խազ-Օղլու – 442
Խալկետիք Թերակղզի – տե՛ս Քալքիտիկ Թերակղզի
Խասգյուղ (Թաղամաս Կ. Պոլսում) – 258
Խասքովո (քաղաք Բուլղարիայում) – 124, 223, 224, 240
Խարբերդ – 368, 465
Խիոս (կղզի Հունաստանում) – 238
Խոչապ (գավառ Վանի նահանգում) – 461
Խոտին (քաղաք Ռեչ Պոսպոլիտայում, այժմ՝ Ուկրաինայում) – 7
Խորհրդային Միություն – 235

Ծ

Ծայրագույն Արևելք – 18, 19

Կ

Կալկաթա (քաղաք Հնդկաստանում)- 179
Կահիրե – 345
Կաղզվան – 465
Կամերուն – 17
Կավալա (քաղաք Հունաստանում) – 414, 415, 427
Կավալայի ծոց – 415
Կավաք-սու – 361
Կատերինա – 303
Կարամանի բեյլիկություն (ֆեոդալական իշխանություն Կիլիկիայում) – 5
Կարաբուրուն (բերդ Իզմիրի նահանգում) – 196
Կարդիֆ (քաղաք Ուելսում) – 290
Կարին -76, 107, 167, 217, 274, 446, 465, 466
Կարկառ (շրջան Վանի նահանգում) – 461
Կարճկան (գավառակ Վանի նահանգում) – 461
Կարմիր ծով – 159
Կարս – 8, 79, 394
Կեչան – տե՛ս Քեչան
Կեսարիա (քաղաք) – 76
Կէտիկ-Փաչա (Թաղամաս Կ. Պոլսում) – 219
Կիլիկիա – 20, 240, 369
Կիպրոս – 8
Կիրենեյիկա (Ղարբ Թարապուլուս-Տրիպոլիս կամ Տրիպոլիտանիա, պատմական մարզ Հյուսիսային Աֆրիկայում, ներկայիս՝ Լիբիա) –

8, 16, 300, 356, 440
Կյուստենդիլ (քաղաք Հարավարևմտյան Բուլղարիայում) – 103, 185,188
Կոչանա (բնակավայր Զերնոգորիայում) – 56, 360, 406
Կոսթիվար (քաղաք Մակեդոնիայում) – 188
Կոսինքե – 304
Կոսովո – 40, 53-55, 76, 103-105, 185, 186
Կոսովոպոլիե – տե՛ս Կոսովո
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, Պոլիս, Պօլիս, Ստամբուլ) – 4, 8, 9, 16, 19, 23, 25, 29, 31, 34, 35, 37, 47, 49, 50, 59, 61-63, 65, 69-71, 75-79, 82, 84, 92-94, 105, 106, 110, 123-125, 127, 138, 144-150, 152, 157, 162, 164-166, 171-179, 189, 191, 197, 198, 202, 204, 205, 209, 214, 216, 218-222, 239, 240, 243, 246-249, 252, 253, 256, 258-262, 264-266, 268-271, 273, 275-277, 279, 280, 282-284, 287, 292-294, 297-300, 302, 304-309, 311, 313, 315, 317, 321, 322, 325-328, 332, 334, 336, 337, 345, 346, 348, 353-356, 363, 364, 369-374, 379-382, 384, 386, 388-390, 392, 393, 396, 399, 401, 402, 405, 410, 412, 414, 415, 419, 429, 433, 440, 441, 444, 448, 451-455, 457, 463, 465, 467, 468
Կոստենեց (քաղաք Սոֆիայի մերձակայքում) – 240
Կովկաս – 13, 48, 110, 121, 125, 127, 135, 159, 175, 178, 198, 204, 210, 215, 271, 296, 297, 364, 394
Կոջալի (քաղաք Արդա գետի ափին) – 224, 228, 235, 240
Կրալևո (քաղաք Բուլղարիայում) – 103
Կրատովո (քաղաք Կոսովոյում) – 185
Կրետե (կղզի) – 8, 32, 37, 84, 103, 238, 303, 316, 377, 408, 409
Կրկլարելի (Կրրխ-Քիլիսե, Գրրգ Քիլիսե, Քրրք Քիլիսե, սանջակ, քաղաք Թուրքիայի Հյուսիս-արևմուտքում) – 138-143, 155, 156, 191, 210, 214, 247, 303, 360, 376, 390, 400, 430
Կուբան (պատմաչխարհագրական շրջան Հյուսիսային Կովկասում) – 7
Կուլինա (բնակավայր Սալոնիկի մոտակայքում) – 193
Կումանովա (քաղաք Մակեդոնիայում) – 186, 187, 303
Կևկելի (բնակավայր Սոֆիայի մոտակայքում) – 428

Հ

Հալեպ – 16, 167
Հաճրն (քաղաք Կիլիկիայում) – 462
Համբուրգ – 126
Համզալու (քաղաք Շապին-Գարահիսարի մոտ) – 248
Հայաստան (Արևմտյան Հայաստան, Թուրքահայաստան, Տաճկահայաստան, Երկիր) – 4, 6, 13, 18, 19, 21, 27, 68, 77, 79, 81, 123, 127, 203, 216, 217, 221, 222, 229, 236-238, 242, 244, 245, 250, 295, 302, 309, 311, 312, 328, 350, 368, 394, 395, 420, 428, 433, 434, 447, 454, 455, 457-461, 463-466
Հայոց Ձոր (գավառ Վասպուրականում) – 461
Հաջի-Ֆաքրլ (բնակավայր Թուրքիայում) – 157
Հատրմքեո (բնակավայր Թուրքիա-

յում) – 139, 165, 258
Հարավային Ալբանիա – տե՛ս Ալբանիա
Հարավարևմտյան (Անդրվարդարյան) Մակեդոնիա – տե՛ս Մակեդոնիա
Հեռավոր Արևելք – 13
Հյուսիսային ծոց – 14
Հյուսիսարևմտյան Ալբանիա – տե՛ս Ալբանիա
Հնդկաստան – 16, 19, 179, 363
Հոնիական կղզիներ (կղզիախումբ Հոնիական ծովում, Բալկանյան թերակղզու արևմտյան ափերի մոտ) – 318
Հռոմ – 280, 421
Հունաստան (Յունաստան, Հին Հունաստան) – 3, 5, 7, 12, 27–29, 32, 36, 37, 40, 42, 43, 45, 57, 59, 83, 84, 87, 96, 101, 102, 105–107, 148, 164, 169, 172, 174, 175, 192, 195, 196, 219–222, 255, 288, 294, 296, 303, 305, 306, 308, 313, 316–318, 333, 373, 374, 397, 398, 402, 404, 405, 412–416, 419, 422, 424, 425, 427, 428, 430–432
Հունգարիա – 6, 7, 182

Ղ

Ղալաթիա (թաղամաս Կ. Պոլսում) – 76, 259
Ղարադաղ (Ղարատաղ, բնակավայր Զերնոգորիայում) – 92, 93
Ղրիմ – 5, 7, 78

Ճ

Ճավա (կղզի Ինդոնեզիայում, որի վրա է Ջակարտա մայրաքաղաքը) – 179
Ճումայի-Պալա – 303

Մ

Մալգարա (քաղաք և շրջան Թուրքիայի Թեքիրդաղի նահանգում) – 430, 440, 446–448
Մալթա – 159
Մալկարա (հայաբնակ գյուղ Եվրոպական Թուրքիայում) – 240, 241, 446
Մալկուչի – 192
Մակեդոնիա (Վերին Մակեդոնիա, Ստորին Մակեդոնիա) – 3, 5, 19, 32, 37–41, 43, 53–58, 62, 67, 68, 70, 75–77, 81, 87, 101, 103, 105, 111, 119, 121, 142, 154, 163, 177, 182, 184, 193, 195, 196, 199, 230, 233, 238, 245, 304, 308, 311, 315–317, 320, 360, 374, 386, 400, 412–415, 418, 424, 425, 428, 452
Մանաստիր (Մանասթր, Մանաստր) – 193, 281, 297
Մանասթրը-դաղ – 157, 193
Մաստանլու (Մաստանլյու, քաղաք Բուլղարիայում) – 224, 229, 232, 240
Մարաշ – 166
Մարիցա (գետ Բալկանյան թերակղզում) – 230, 234, 238, 288, 341, 343, 357, 377, 383, 415, 429, 430
Մարմարա ծով – 34, 162, 164, 165, 170, 173, 224, 241, 339, 344, 351, 361, 371, 379, 381, 405, 406, 429, 435, 446
Մարոկկո – 6, 7, 199
Մաքրիգյուղ (թաղամաս Կ. Պոլսում) – 258, 266, 267, 381
Մեզիրե (քաղաք Թուրքիայում) – 209, 211
Մեդիա (Մեդիայա, Միդիա, Միտիա, քաղաք Եվրոպական Թուրքիայում,

Սև ծովի ափին) – 238, 288, 361, 377, 396, 411, 420, 429, 435, 436
Մեդուա – 192
Մելինիքի (բնակավայր Էդիրնեի մերձակայքում) – 164
Մեհրամլի գյուղ (բնակավայր Եվրոպական Թուրքիայում) – 230, 231, 235
Մեղրի (քաղաք Սյունիքում) – 124
Մեջիդիե – 315
Մերեֆտի (քաղաք Մարմարա ծովի ափին) – 405
Մերձավոր Արևելք – 23, 46, 51, 214, 263
Մերձավոր Ասիա – 262, 353
Մերտադ – 185
Մեցովո (քաղաք Հունաստանի Էպիրոսի շրջանում) – 196
Մեքքա – 263
Միջագետք – 16–18, 20, 240, 359, 363
Միջերկրական ծով (Միջերկրական, Հարավային ծով) – 8, 9, 14–17, 19, 46, 159, 314, 318, 374, 386, 409, 412
Միջին Ասիա – 26, 27
Միջին Արևելք – 18
Միտիլենա (կղզի Հունաստանում) – 238
Միտրովիցա (քաղաք Կոսովոյում) – 304
Մչո դաշտ – 461
Մոլդավիա – 5
Մոխաջ (քաղաք Հունգարիայում) – 5
Մոկս (շրջան Վանի նահանգում) – 461
Մոմչիլգրադ (քաղաք Բուլղարիայի հարավում) – 228
Մոնաստիր (Մանաստր, քաղաք Մակեդոնիայի Բիտոլի նահանգում) – 40, 53, 103, 190, 194, 297, 412, 414
Մոնտենեգրո (բնակավայր Չերնոգորիայում) – 92
Մոսկվա – 34, 38, 58, 92, 101, 105, 128, 133, 134, 147, 293, 196, 299, 312, 373, 417, 438
Մոտաւոր Արևելք – տե՛ս Մերձավոր Արևելք
Մորավա գետ (գետ Կենտրոնական Եվրոպայում) – 186
Մորավիա (պատմական շրջան Չեխիայում) – 103, 190
Մուկդեն (քաղաք Չինաստանի Հյուսիս-արևելքում) – 105
Մուշաղչէն (գյուղ Բիթլիսի նահանգում) – 461
Մուստաֆա-Փաշա – 152, 164, 303

Յ

Յամբոլ (քաղաք, մարզ Բուլղարիայում) – 102
Յոանիսանա (Յանինա, Յանիա, Յանիյա, Յանիցա, Յունիա, Եանինա, Եպիրոս, քաղաք Հունաստանի Հյուսիս-արևմուտքում) – 43, 53, 159, 194, 196, 206, 207, 297, 312, 327, 363, 376
Յունաստան – տե՛ս Հունաստան

Ն

Նեապոլիս (քաղաք Հունաստանում) – 220
Նիչ (քաղաք Բալկաններում) – 103, 188
Նիս (շրջան Ֆրանսիայում) – 309
Նյու Յորք – 222
Նովի Բազար (Նովո-Բազար, պատմական շրջան Սերբիայի և Չերնոգորիայի սահմանին) – 20, 35, 36, 54, 58, 59, 98, 104, 185, 186, 189,

304, 316, 317
Նորդուզ (գավառակ Վանի նահանգում) – 461
Նևրոքոփ – 303

Շ

Շապին-Գարահիսար (քաղաք Արևմտյան Հայաստանում) – 248, 275
Շատախ (գավառակ Վանի նահանգում) – 461
Շար-Քեռ – 405
Շարքո – 361
Շեպչանիկ – 191
Շիչլի (թաղամաս Կ. Պոլսում) – 258, 259, 265
Շիպ (Շչիպ, Իստիբ) – 189, 406
Շկոդրա (Շքոթրա, Թուրքերեն Իսկոդրա, քաղաք, վիլայեթ Ալբանիայում) – 53, 96, 169, 185, 281, 288, 297, 312, 314, 317, 323, 327, 363, 376, 397, 415
Շկոդրա լիճ (Շքոթրա, լիճ Ալբանիայի և Զերնոգորիայի սահմանին) – 104, 192
Շչերն – 406
Շչիպ – տե՛ս Շիպ
Շվեյցարիա – 106, 199, 239
Շուչի – 100

Զ

Զաթալջա (Զաթալճա, չրջան Եվրոպական Թուրքիայում, Սև ծովի ափին) – 153, 162–167, 169–171, 174, 178, 281, 294, 297, 308, 313, 320, 323, 327, 331, 348–350, 354, 360, 362, 370, 376, 378–391, 396, 399, 400, 404, 419, 429, 435, 454, 465
Զանաքկալեի նեղուց – տե՛ս Դարդանելի նեղուց
Զեթինե – տե՛ս Ցետինե
Զեթինետե – տե՛ս Ցետինե
Զեխիա – 28
Զեկմերդչե – 164
Զերնոգորիա (Գարադաղ, Ղարադաղ, Մոնտենեգրո, Սև լեռ) – 3, 11, 20, 25, 27, 36, 37, 40, 42, 43, 45, 55–57, 83, 84, 86, 87, 92–97, 104–107, 172, 191, 192, 255, 288, 295, 297, 304, 306, 317, 350, 351, 398, 405, 415, 416, 419, 425, 430, 431
Զիրպան (քաղաք Բուլղարիայում) – 91
Զորլու (քաղաք և չրջան Եվրոպական Թուրքիայում) – 139, 163–165, 167, 171, 430

Պ

Պալքաններ – տե՛ս Բալկաններ
Պաղեստին – 5, 99
Պանադոս (հունարնակ գյուղ Մարմարա ծովի ափին) – 241, 339, 342
Պանկալթի (թաղամաս Կ. Պոլսում) – 259, 384
Պապը Ալի (հրապարակ Կ. Պոլսում) – 64, 92, 259
Պարմարալ – 25
Պարսից ծոց – 7, 16, 18
Պարսկաստան (Հարավային Պարսկաստան) – 6, 16, 19, 121, 125, 199, 215
Պելկրատա (արևմտահայերեն Բելգրադը) – տե՛ս Բելգրադ
Պեչիկթաչ (Կ. Պոլսի թաղամաս) – 63
Պետերբուրգ – 12, 24–26, 35, 38, 40, 49, 50, 52, 101, 124, 128, 133, 134, 153, 173, 280, 281, 284, 288, 290,

328, 373, 402, 423, 424, 432
Պետրի – 406
Պիթլիս – տե՛ս Բիթլիս
Պիրեա – 221, 222
Պիրոտ (քաղաք Սերբիայում) – 426
Պլավա (քաղաք Չերնոգորիայում) – 192, 304
Պլովդիվ (Փլովդիվ) – 88, 101, 122, 240, 241
Պոդոլիա (պատմաաշխարհագրական տարածաշրջան Արևելյան Եվրոպայում) – 6, 7
Պոնտոս – 341
Պորտ-Սայիդ (քաղաք Եգիպտոսի Հյուսիս-արևելքում) – 159
Պրիզրեն (քաղաք Կոսովոյում) – 104
Պրիլիպ – 412
Պրիշտինա (Պրիշչինա, քաղաք Կոսովոյում) – 185, 304
Պրուսիա – 33, 105
Պուլկարիա – տե՛ս Բուլղարիա

Ջ

Ջևզելի – 414

Ռ

Ռադովիչ – 406
Ռիգա – 126
Ռիլո (քաղաք Բուլղարիայում) – 151
Ռիլսկի վանք (գտնվում է Բուլղարիայի Կյուստենդիլի շրջանում) – 122, 129
Ռոդոպյան շրջան (շրջան Հունաստանում) – 224
Ռոդոս կղզի (կղզի Էգեյան ծովի Հարավարևելյան մասում) – 317
Ռոդոսթո (Թեքիրդաղ, քաղաք Եվրոպական Թուրքիայում, Մարմարա ծովի ափին) – 72, 120, 151, 152, 234, 240, 241, 339, 341, 343, 344, 361, 381, 420, 430, 433–435, 440–442, 444–446, 448
Ռումելիա (Արևելյան Ռումելիա, Ռումելիա, Ռումելի, Ռոմելի, Ռումէլի, տարածաշրջան Եվրոպական Թուրքիայում, որը ներառում էր Թրակիան և Մակեդոնիայի մի մասը) – 48, 52, 60, 69, 70, 76, 87, 158, 240, 372, 395, 419, 441, 446, 453–456
Ռումինիա – 7, 25, 28, 32, 44, 47–49, 51, 58, 65, 84, 99, 128, 262, 282, 288–290, 315, 372, 402, 409, 414, 422, 425–427, 432, 450
Ռուսաստան (Մեծ Ռուսիա, Ռուսական կայսրություն) – 4, 7–14, 19, 20, 23–25, 27, 31–34, 38, 39, 44–47, 49–52, 57, 58, 75, 78, 79, 82, 84–86, 94, 96, 97, 102, 104, 108–110, 114, 117–119, 125–127, 133, 150, 154, 173, 174, 176–178, 181–183, 190, 213, 241, 243, 244, 250, 281–287, 289, 292, 299, 302, 309, 310, 314–316, 319, 328, 330, 333, 334, 346, 351, 359, 372–374, 396, 398, 402, 409, 412, 421–424, 429, 433, 440, 449, 450, 458, 465, 468

Ս

Սակլե – 406
Սալոնիկ (Սալոնիկներ, Սոլուն, Սելանիկ) – 16, 24, 40, 43, 46, 53, 99, 103, 152, 193–195, 230, 264, 274, 275, 281, 282, 284, 288, 296, 316–318, 327, 345, 374, 397, 402, 409, 412, 413, 415

Սամաթիա (թաղամաս Կ. Պոլսում) – 260
Սամկով – 223
Սամոս (կղզի Հունաստանում, Էգեյան ծովում) – 39, 238, 304
Սանջակ (շրջան Սերբիայի և Զերնոգորիայի միջև) – 104, 105
Սան-Ստեֆանո (Կ. Պոլսի արվարձան) – 24, 172, 260, 288, 294, 379
Սասուն – 449
Սարիղամիշ – 465
Սաքսոնիա – 31
Սեբաստիա – 439
Սելիմիե (զորանոց Սկյուտարի մոտ) – 353
Սեյմեն – 223, 240
Սենթ Ջեյմս (թաղամաս Լոնդոնում) – 403
Սեն-Ժերվե (մարգագետին Փարիզում) – 291
Սենիցա (քաղաք Արևմտյան Սլովակիայում) – 186
Սերայ – 162
Սերբիա (Մեծ Սերբիա, Փոքր Սերբիա, Արևմտյան Սերբիա, Հին Սերբիա, Սերբիայի Թագավորություն) – 3, 5, 8, 11, 20, 23, 27–31, 33, 35–37, 39–43, 46, 54–59, 65, 81, 83, 84, 86, 87, 96, 97, 101, 103, 105–107, 115, 148, 169, 172, 174, 180–184, 188–190, 204, 222, 238, 262, 263, 288, 290, 294–297, 299, 303–305, 307, 316–318, 350, 351, 367, 398, 402, 405, 409, 412–414, 416, 419, 421–425, 427, 428, 430, 431, 451
Սերես (Սերեզ, քաղաք Հունաստանում) – 414, 415, 428
Սերֆիչե – 193, 196
Սթրանջա (Սթրանճա, Սթրումջա, լեռներ Բուլղարիայում և Թուրքիայում) – 162, 165, 427
Սիլիստրիա (Սիլիստրա, նավահանգստային քաղաք Բուլղարիայի Հյուսիս-արևելքում) – 48, 315, 372, 402, 427, 449
Սիլիվրին (բնակավայր Թրակիայում) – 361, 430
Սիմֆերոպոլ – 109
Սիրիա (Սուրիա, Հյուսիսային Սիրիա) – 5, 20, 167, 240, 359
Սլովենիա – 28
Սկյուբ – տե՛ս Սկոպլե
Սկյուդ – 157
Սկյուպե – տե՛ս Սկոպլե
Սկյուտար (Կ. Պոլսի թաղամաս) – 18, 259, 273, 304, 312, 317, 327, 353, 397, 398
Սկոբելևո (կայարան Բուլղարիայում) – 90
Սկոպլե (Սկյուպե, Սկյուբ) – 40, 53, 189, 316
Սկուտարի լիճ – 304
Սյունիք – 124
Սոդոմ Գոմոր (ըստ Հին կտակարանի՝ հնագույն քաղաքներ Սիդդիմի դաշտում) – 387
Սոմակով (քաղաք Բուլղարիայում) – 240
Սոֆիա – 34, 38, 41, 42, 54–56, 58, 64, 67, 71, 73, 75, 85, 101, 103, 104, 119, 121–125, 128, 129, 132–134, 136, 160, 162, 166, 170, 174, 177, 219, 223, 230, 233–236, 240, 262, 280, 287, 293, 314, 320, 339, 394, 406, 413, 414, 418, 423, 427, 428, 434, 451, 463
Սոֆիատա (Թուրքերեն Սոֆիան) – տե՛ս Սոֆիա
Սոֆլու – 235, 240
Սվազքեո – 376

Ստարա-Զագորա (քաղաք Բուլղարիայի կենտրոնական մասում) – 211
Ստրալջա (կիսակայարան Բուլղարիայում) – 90
Ստրումիցա (քաղաք Մակեդոնիայում) – 164, 406, 426
Սուդան – 8
Սուեզի ջրանցք – 16, 159
Սուլթան Ահմէտի հրապարակ (հրապարակ Կ. Պոլսում) – 74
Սուր (գյուղ Ֆարշըն գավառում) – 266
Սուրբ Խաչ հիվանդանոց (հայկական հիվանդանոց Կ. Պոլսում) – 265
Սև լեռ – 37, 92
Սև ծով – 15, 150, 164, 287, 361, 381, 408, 467

Վ

Վալախիա (չրջան Ռումինիայի հարավում) – 5
Վան – 6, 206, 428, 458, 461, 462
Վանա լիճ – 80, 461
Վառնա (նավահանգստային քաղաք Բուլղարիայում) – 120, 123, 126, 150, 428
Վասպուրական – 206, 428, 461
Վարդար գետ – 41, 185, 187, 188, 194, 414, 415
Վարդարյա – տե՛ս Մակեդոնիա
Վելիա-Կլավար – 185
Վելիկո Տրնովո (քաղաք Բուլղարիայում) – 129, 225, 227, 231, 232, 238, 407
Վենետիկ – 7
Վերիա – տե՛ս Գարաֆերիա
Վիեննա – 5, 6, 7, 25, 118, 181, 280, 283, 289, 305, 421
Վիդին (քաղաք Բուլղարիայում) – 428
Վիդուչ (լեռնադանգված Բուլղարիայում) – 241, 242
Վիզա (քաղաք Կրկլարելի նահանգում) – 152, 163
Վիկե – 156
Վոդեն (բնակավայր Կ. Պոլսի մոտ) – 264
Վոսֆոր – տե՛ս Բոսֆորի նեղուց
Վոտինա – 193
Վրանիա (Վրանյա) – 103, 184, 185

Տ

Տարոն – 462
Տեչիչ (բերդ) – 95, 96
Տետե-Աղաճ – տե՛ս Դեղե-Աղաջ
Տերքոս (Տերքոզե, գյուղ Կ. Պոլսի մոտ) – 162, 164, 170, 258
Տոգո – 17
Տոլմա-Բախչե (սուլթանի կայսերական պալատ) – 337
Տոկիո – 364
Տոմսկ (քաղաք Ռուսաստանում) – 109
Տրապիզոն – 274
Տրիեստ (քաղաք Հյուսիսային Իտալիայում) – 17, 319
Տրնովո (քաղաք Բոսնիա-Հերցեգովինայում) – 223, 240
Տուզի (բնակավայր Զերնոգորիայում) – 191

Ր

Ռումէլի – տե՛ս Ռումելիա

Ց

Ցետինե (Զեթինե, Զեթինեթե, Զերնո-

գորիայի պատմական մայրաքաղաք) – 71, 94, 95
Ցյուրիխ (քաղաք Շվեյցարիայում) – 199

Ու

Ուեսթմինսթեր (Ուեստմինստեր, Լոնդոնի պատմական շրջաններից) – 410
Ուզուն Կեպրու – տե՛ս Ուզուն Քյուփրի
Ուզուն-Համիդլեր – (լեռնաշղթա Ռոդոպյան շրջանում) – 224-226, 228, 341
Ուզուն Քյուփրի – 235, 240
Ուկրաինա (Աջափնյա Ուկրաինա) – 6, 7
Ուչի (Լոզան քաղաքի թաղամաս) – 106
Ուսկյուբ – տե՛ս Սկոպլե

Փ

Փարիզ – 34, 114, 145, 153, 154, 255, 280, 281, 291, 305, 306, 314, 319, 323, 345, 464
Փեշավար (քաղաք Հնդկաստանում, այժմ Պակիստանում) – 179
Փերևազա – 194
Փերլեփե (քաղաք Մակեդոնիայում) – 189
Փոքր Ասիա – 5, 8, 16-19, 21, 26, 27, 99, 166, 257, 261, 265, 326, 349, 359, 362, 366, 371, 414, 454, 456, 458
Փոքրասիական Թերակղզի – 408
Փրևեզա – 303
Փունար Հիսար (քաղաք Կրկլարելիի նահանգում) – 143, 144, 154, 157, 158, 163, 169, 360

Ք

Քալքիտիկ Թերակղզի (Խալկիդիկա, Խալկիդի Թերակղզի, Թերակղզի Հունաստանի հյուսիս-արևելքում) – 288, 316, 420, 436
Քալֆա-քեո – 377
Քավալա – 303, 315
Քարաղաջ – 376
Քեաղրտհանե – 258
Քեչան (Կեչան, քաղաք Էդիրնեի շրջանում) – 235, 240, 241, 406, 446
Քեստենջե (քաղաք Ռումինիայում) – 25
Քըրք-Քիլիսե – տե՛ս Կրկլարելի
Քղի (գյուղաքաղաք, գավառ Էրզրումի նահանգում) – 464
Քոզանիա – 196
Քուվեյթ – 359
Քուրդիստան – 22

Օ

Օդեսա – 58, 125, 126
Օղրին (Օղրինե) – 53, 119, 145, 360
Օխրիդ (Օխրիդա, լիճ Մակեդոնիայի և Ալբանիայի սահմանին) – 190, 415

Ֆ

Ֆարչըն (գավառ Արևմտյան Հայաստանում) – 266
Ֆերա – 230
Ֆերե – 240
Ֆեներ (Թաղամաս Կ. Պոլսում) – 259
Ֆէրիտիէ (Թաղամաս Կ. Պոլսում) – 219
Ֆիլիպոպոլ (քաղաք Բուլղարիայում) – 236

Ֆլորին (բնակավայր Կ. Պոլսի մոտ) – 264
Ֆրանսիա – 7–10, 13, 14, 16, 19, 21, 25, 46, 50, 51, 75, 85–87, 105, 112, 114, 115, 117, 144, 153, 154, 184, 220, 284, 286, 294, 299, 302, 309, 315, 319, 326, 333, 334, 336, 338, 359, 373, 384, 398, 409
Ֆրիզրենտ (քաղաք Սերբիայում) – 316

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՄՔ **3**

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՑԸ **5**

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ԱՌԱՋ 5
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ 10
ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ 15
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ 21
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ 30
ՍԵՐԲ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 39
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ» ՍՏԵՂԾՈՒՄԸ 43
ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԴԻՐՔԸ 47
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ 50
ԲԱԽՏԱԿԻՑ ՀԱԼԱԾՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ 88

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ **92**

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՌՆԿՈՒՄԸ 92
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 119
ԴԱՇՆԱԿԻՑ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 137
ԿՈՒԻՎՆԵՐԸ ՄՅՈՒՍ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ 180
ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ 200
ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ 222

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒՄ 222
ՀԻԱՑԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ 241
ՀԱԿԸՆԴԴԵՄ ԿԱՐԾԻՔՆԵՐ 246
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ....251
ՊՈԼԻՍԸ ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ՄԵՋ 258
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՂԵԿԱՎԱՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 280
ԶԻՆԱԴԱԴԱՐ 292
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՆԴՈՆՈՒՄ 302
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ՝ ՄՈՏ 332
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԽԱՂԱՂ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄ 339
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ 345
ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՀԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻ ՔԱՅԼ....352
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ....358
ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՈՒՄԸ....381
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆՈՐ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 397
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ....400
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ
ՓՈՒԼՈՒՄ 405

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 408

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 408
ՄԻՋԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԸ 424
ՌՈԴՈՍԹՈՅԻ ԵՎ ՄԱԼԳԱՐԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՋԱՐԴԸ 440
ԿՈՏՐԱԾ ՏԱՇՏԱԿԻ ԱՌԱՋ 449

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՄԵԾ ԱՂԵՏՆԵՐԸ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻՆ....453
ՀԱՅԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ՄՈՒՀԱՋԻՐՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ 453
ՔՐԴԵՐԻ ՆՈՐ «ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»....459
ԳԱՂԹ 463

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ....470
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ....484

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

1912–1913 ԹԹ. ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպագր. 31.4 մամուլ: Տպաքանակ՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան 1

502